A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark
www.a-pdf.com

Գիրքը ստացվել է
"Համահայկական էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կոդից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՈՒՂԱՐԿԵԼ ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆՎԱԾ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅՆ ԳՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

Գրեք մեզ՝ freebooks@rambler.ru

www.a-pdf.com

www.a-pdf.com



Сборник древней и средневековой армянской прозы

Selection of old and medieval Armenian prose

ЕРЕВАН, "НАИРИ", 1997

www.a-pdf.com



ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԱՐՁԱԿԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ, «ՆԱԻՐԻ», 1997

www.a-pdf.com

ԴՏՀ 891.981.0
ԳՄԴ 82-32
Ռ 469

Կազմեցին
ԱՐՇԱԿ ՄԱՂՈՅԱՆԸ և
ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ

Ռ 469 Ոսկեփորիկ: Հայ հին և միջնադարյան արձակի ժողովածու: /Կազմեցին՝ Ա. Մաղոյան, Վ. Ներսիսյան.- Եր.: Նաիրի, 1997.- 416 էջ:

Ժողովածուում ամփոփված են միջնադարյան տարբեր գրական տեսակների գործերի՝ առակների, զրույցների, մանրավեպերի լավագույն նմուշներ:

4702080103 (180)
Ռ ---------- 97
705 (01) 97

ԳՄԴ 82-32

ISBN 55-550-01034-8

© «Նաիրի» հրատարակչություն, 1997

www.a-pdf.com

ԱՒԱՋԱԲԱՆ

V դարի սկզբից Հայաստանում բուռն թափով ծաղկեց ու բարգավաճեց գրավոր մշակույթը: Ի հայտ եկան տաղանդավոր պատմիչներ ու գիտնականներ, թարգմանիչներ ու մեկնիչներ, բանաստեղծներ ու երաժիշտներ:

Բոզմաբովանդակ ու ճոխ իմաստուրյուն մատենագրության կողմից ստեղծվեց հարուստ թարգմանական գրականություն: Աստվածաբանական, փիլիսոփայական և ուրիշ բնույթի աշխատանքների հետ շուտով հայերենի վերածվեցին նաև «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն» ու համաշխարհային գրականության այլ նշանավոր աշխարհիկ հուշարձաններ:

Հայ հին և միջնադարյան մատենագրության յուրահատկություններից մեկը աշխարհիկ, որոշ առումով նույնիսկ հակաեկեղեցական կամ հակակրոնական միտում ունեցող ճյուղերից չխորշելն էր, երևույթ, որ նկատելի էր նրա ծագումից սկսած: Հենց դա է հիմնագիրդ դարի հայոց պատմագրության էական արժանիքներից մեկը: Բավական է հիշել միայն Մովսես Խորենացու (V դ.) «Հայոց պատմության» մեջ հեթանոսական շրջանի առասպելներին ու երգերին զգալի տեղ հատկացնելու հանգամանքը և Փավստոս Բուզանդի (V դ.) ավանդած զրույցները Հոհան եպիսկոպոսի մասին: Ավելին, աշխարհիկ ճյուղը հետզհետե ներթափանցում է նաև առավել պահպանողական շրջանակներ, մտնում նույնիսկ հոգևոր բանաստեղծության՝ շարականների մեջ:

Հայոց հին և միջնադարյան արձակը ազգային մատենագրության հարուստ, իմաստալից ու հետաքրքրական մի բաժինն է, որ ներկայանում է տեսակներով՝ պատմագրություն ու ժամանակագրություն, վարք ու վկայաբանություն, ճառ, խարոզ, թուղթ, մեկնություն, առակ, զրույց, մանրավեպ, խրատ, հիշատակարան և այլն:

Տպագրության սկզբնավորումից (1512 թ.) ի վեր հսկայական աշխատանք է կատարվել հին և միջնադարյան արձակի հրատարակության ուղղությամբ: Որոշ երկեր մի քանի տասնյակ տպագրություն են ունեցել: Շատ հուշարձաններ լույս են տեսել նաև ֆնեական բնագրերով: Համեմատաբար լավ վիճակում է պատմագրական հուշարձանների և առակների գիտական հրատարակության գործը:

Հայ հին արձակի ուսումնասիրության ու հրատարակության աշխատանքը բավականին արդյունավետ է եղել ներկա դարի երկրորդ կեսին: Արձակի ժանրերի տեսական բնութագրության պահանջից ելնելով՝ վերջին տասնամյակների ընթացքում լուրջ հետազոտություններ են կատարվել զրույցների, խրատական արձակի, վարքերի, վկայաբանությունների, հին թարգմանական հուշարձանների և գրական մյուս տեսակների վերաբերյալ:

www.a-pdf.com

Չնայած այս ամենին, հայ հին արձակը միչ է ծանոթ ընթերցող լայն հասարակությանը: Աշխարհաբար թարգմանությամբ լույս են տեսել հիմնականում առավել նշանավոր մատենագիրների երկերը (Կորյուն, Խորենացի, Եղիշե, Բուզանդ, Փարպեցի, Կաղանկատվացի, Լաստիվերտցի, Դավրիժեցի, Գանձակեցի, Դրասխանակերտցի, Ղևոնդ և այլն): Իսկ արձակի մյուս տեսակներից թարգմանվել են սակավաթիվ էջեր:

Այսպես, Խ. Միրզաբեգյանը Բաֆվում, 1893 թվականին աշխարհաբար թարգմանությամբ լույս է ընծայել Մխիթար Գոշի, Ոդիմպիանոսի և Եզովպոսի ընտիր առակների ժողովածուն: Հաջորդ ֆայլը կատարվել է բավական մեծ ընդմիջումից հետո՝ 1935 թվականին, մեծատաղանդ արձակագիր Ակսել Բակունցի ձեռով: Վերջինս թարգմանել է Վարդան Այգեկցու առակներից մի փունջ և հրատարակել «Աղվեսագիրք» խորագրով: Բակունցյան սույն թարգմանությունը հետագայում ունեցել է վերահրատարակություններ, այդ թվում նաև 1951 թվականին, երբ «Պիոներական գրադարան» մատենաշարով լույս տեսավ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու «Առակներ» ժողովածուն: Եթե ավելացնենք, որ նրանց առակներից մի քանիսը տարբեր տարիներ տեղ են գտել նաև դպրոցական դասագրքերի ու ընթերցարանների մեջ, թերևս սպառած կլինենք այն ամենը, ինչ արված էր միջնադարյան հայկական առակները ընթերցող լայն հասարակությանը աշխարհաբար ներկայացնելու ուղղությամբ:

Մեր թվարկումից արդեն երևում է, որ ընթերցող լայն շրջաններին, այդ թվում նաև սովորողներին մատչելի է եղել միայն պատմական արձակի և առակների մի մասը, իսկ մնացած տեսակները մնացել են անծանոթ:

Այդ բացը մասամբ լրացնելու նկատառումով 1977 թ. Երևանում լույս տեսավ մեր կազմած «Ոսկեփորիկ» ժողովածուն, որի 20000 տպաքանակը սպառվեց մի քանի օրում: Այժմ ընթերցողին ենք հանձնում գրքի երկրորդ համալրված և վերամշակված հրատարակությունը, որն ամփոփում է նմուշներ հայոց հին և միջնադարյան արձակի ամենատարբեր տեսակներից:

Ժողովածուի նպատակն է՝ ներկայացնել միջնադարյան արձակի առավել ընդհանուր պատկերը, ընդլայնել ընթերցողի պատկերացումը հայոց միջնադարյան գրականության մասին, օգնել նրան ըմբռնելու այդ գրականության արժանիքները, հնարավորություն ընձեռել ծանոթանալու ժամանակի գրական նաշակին, նախասիրություններին, հասարակական, բարոյական ըմբռնումներին, հակումներին ու հոգեբանությանը: Այս իսկ պատճառով կազմողները ձգտել են հատորի մեջ ընդգրկել հնարավորին չափ շատ գրական տեսակներ ու երկեր:

Ներկայացվող նյութերի գեղարվեստական բարձր մակարդակը, լավի, գեղեցիկի, բարու ջատագովությունը, դաստիարակչական նկատառումով՝ մարդկային արատների երգիծական արտացոլումները, իմաստուն մտքերի, առածների ու ասացվածքների հարուստ բովանդակությունը չեն կորցրել իրենց նշանակությունը և այսօր էլ կարող են օգտակար լինել պատանիներին ու երիտասարդությանը:

Նկատի ունենալով նյութերի բնույթը, ինքնատիպությունը, արժեքն ու օգտակարությունը՝ նպատակահարմար դիտվեց պահպանել առաջին հրատարակության «Ոսկեփորիկ» խորագիրը, որ բավականին տարածված ու հարգի էր միջնադարում:

www.a-pdf.com

***

Հայ ժողովրդի միջնադարյան պատմությունը նրա մղած դարավոր անդուլ պայքարի պատմությունն է, պայքար՝ հանուն ազատության, բաղաքական ինքնուրույնության, հայրենիքի միասնականության: Եվ տարօրինակ կլիներ, եթե այդ պայքարը կամ, ինչպես Մ. Աբեղյանը պիտի ասեր, մաքառումը, արձագանք չգտներ հայ մշակույթի, մասնավորապես՝ մատենագրության մեջ: Վերջինիս սկզբնավորման շրջանում առաջատարի դերը կատարել է պատմագրությունը, որի նշանակությունը վաղուց դուրս է եկել ազգային մշակույթի սահմաններից և դարձել օտար գիտնականների ուշադրության առարկա:

Պատմագրությունը ժողովրդի գլխով անցած հավաստի իրադարձությունների սոսկ հայեցողական արձանագրությունը չէ, այլ նաև՝ դարաշրջանի գրական բարձր ճաշակի արտահայտությունը: Քերթողահայր Մովսես Խորենացին, ժողովրդական խոսք ու զրույցի գիտակ և փայլուն ոճաբան Փավստոս Բուզանդը, «ոսկեծոիկն» Եղիշեն, իրապաշտ Ղազար Փարպեցին ստեղծել են հարուստ ու ինքնօրինակ մի մատենագրություն, որ նաև ժամանակի գեղարվեստական մտածողության բարձրակետն է: Նրանց լավագույն ավանդների հետևողությամբ գեղարվեստական մնայուն շատ էջեր են թողել նաև հետագա ժամանակների պատմագիրներ Սեբեոսը (VII դ.), Հովհան Մամիկոնյանը (VIII դ.), Անանուն Ջրուցագիրը (X դ.), Թովմա և Անանուն Արծրունիները (X դ.), Արիստակես Լաստիվերտցին (XI դ.), Մաթեոս Ուռհայեցին (XII դ.), Ղուկաս Սեբաստացին (XVIII դ.) և ուրիշներ: Այս է պատճառը, որ «Ոսկեփորիկի» ծավալուն մասն են կազմում հայ պատմիչների երկերից ընտրված հատվածները (Ա. բաժին):

Ստեղծելով իրենց գործերը՝ հայ պատմիչները ձգտել են անցյալի ու ներկայի դեպքերը նկարագրել գրողի հարուստ երևակայությամբ, պատմական անձնավորություններին վերամարմնավորել կենդանի ու արտահայտիչ գույներով, գործողությունների ու բնորոշ հանգամանքների մեջ ցուցադրել նրանց վարքի, հոգեբանության գծերը, պատկերված երևույթների նկատմամբ դրսևորել որոշակի վերաբերմունք: Սույն մտեցմամբ նրանք ամենից առաջ նպատակ են հետապնդել ներազդել ընթերցողի զգացմունքների վրա, բարձրացնել նրա ազգային ինքնագիտակցությունը, հայության ճանաչել տալ իր փառավոր, հերոսական անցյալը, ժողովրդի մեջ արմատավորել հայրենասիրության և ազատագրական պայքարի գաղափարներ: Եվ այս էական կողմը հեղինակները հաճախ նշել են բացահայտ: Օրինակ, նկարագրելով Տիգրան Մեծի ռազմական սխրանքներն ու հայրենաշեն գործերը՝ Խորենացին ավելացրել է. «Եվ ո՞ր իսկական մարդը, որ սիրում է արիության բարքն ու խոհեմությունը, չի ուրախանա նրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել»:

Պատմական արձակի այս հատկանիշները, որ տարբեր չափերով ու ձևերով առկա են նրա գրեթե բոլոր էջերում, հաճախ տռավել խտացած դրսևորվել են առանձին հատվածների մեջ: Եվ պատահական չէ, որ դրանք աչքի են ընկնում թե՛ գեղարվեստական արժանիքներով և թե՛ արծարծած նյութի ավարտվածությամբ: Այդ կտորները հայ հին բանահյուսությունից եկող աշխարհիկ զրույցների գրական մշակումներ են, պատերազմական գործողությունների, առանձին իրադարձությունների ու տեսարանների ոգեշունչ նկարագրություններ կամ իրականության ինչ-ինչ կողմերի նկատմամբ հեղի-

www.a-pdf.com

նակների խորհրդածությունների, ճնարտկան տրամադրությունների պատկերավոր ու գեղեցիկ դրսևորումներ:

Այդ հատվածներում արտացոլվել է ժամանակի մարդն իր ամենաբազմազան կողմերով: Հերոսականությամբ ու խոչությամբ, հայրենասիրական գծերով են օժտված Հայկ Նահապետի, Արշակ Երկրորդի, Վասակ և Վարդան Մամիկոնյանների, Սմբատ Բագրատունու, Դավիթ Բեկի կերպարները: Մարդկային խոր տառապանքով, ազնիվ վշտով են աչքի ընկնում Արշակ Երկրորդը, Խորենացու Ողբի ճնարական ճերոսը, Ավարայրում սիրեցյալ հարազատներին կորցրած հայոց փափկասուն աիկնայք, Արծրունյաց Սոփի իշխանուհին: Հետաքրքիր բնավորություններ են Մուշեղ և Մանվել Մամիկոնյանները, Հոհան եպիսկոպոսը, Գայլ Վահանը, Վանի Դերեն իշխանը: Սրանցից առաջին երկուսը մարմնավորում են զորական մարդու ասպետականությունն ու պատվախնդրությունը, երրորդը՝ ագահությունն ու չարությունը, չորրորդը՝ ռազմական խորամանկությունն ու ճնարագիտությունը, իսկ վերջինը՝ ձեռնբացությունը, կենսասիրությունն ու խիզախությունը:

Դասական պատմագրության ականավոր ներկայացուցիչներ Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու երկերում տեղ գտած գեղարվեստական հատվածները այսօր էլ շարունակում են մեծ հաճույք ու բավականություն պատճառել ընթերցողին: Այդպիսիք են նաև Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Անանուն Ջրուցագրի, Արիստակես Լաստիվերացու, Ղուկաս Սեբաստացու և ուրիշների ստեղծագործություններում գրական ճշմարիտ ներշնչանքով ճեղինակված կտորները:

***

«Ոսկեփորիկի» մեջ հատուկ տեղ է տրվել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակներին (Գ բաժին), որոնք բովանդակությամբ, ճորինվածքի ճպատակասլացությամբ ու գեղարվեստական կատարելությամբ հասատում են հայ միջնադարյան արձակի այդ ճյուղի բարձր զարգացածությունը:

Առակը, իբրև գեղարվեստական խոսքի հատուկ տեսակ, որն աշքի է ընկնում սեղմ պատումով, այլաբանական կառուցվածքով ու խրատական բովանդակությամբ, նախապես ծագել ու զարգացել է ժողովրդական բանահյուսության մեջ, իսկ այնուհետև անցել գրականությանը: Իճնին ճասկանալի է, որ առակի տեսակին հայերը ծանոթ են եղել ճնագույն ժամանակներից: «Աստվածաշնչի» թարգմանությամբ, որ կատարվեց V դ. սկզբին՝ գրերի գյուտից անմիջապես ճետո, հայ իրականության մեջ մուտ են գործում սուրբգրային բազմաթիվ առակներ: VI—VII դարերում հունարենից թարգմանվում են «Բառլաոխոս» կոչված տոակտգիրքն ու «Առակք Ողիմպիանու» ժողովածուն: Հաջորդ դարերում առակախոսությունը այնքան տարածված երևույթ է դառնում Հայաստանում, որ IX դարի նշանավոր մատենագիր ու պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսը մի նամակում պատվիրում է բերականության ու ճարտասանության ճետ մեկտեղ դպրոցներում սովորեցնել «առոսպելավարժություն», այսինքն՝ աշակերտներին հմտացնել իճնուրույն կերպով առակներ մեկնելու կարողության մեջ:

Բայց առակի ժանրը հայ իրականության մեջ իր զարգացման բարձրակետին է հասնում XII—XIII դարերում և դառնում գեղարվեստական արձակի առաջատար տեսակներից մեկը: Հայ գրողներից առաջինը, որ լրջորեն ուշադրություն դարձրեց այդ ժանրին և խթանեց դրա զարգացումը, Մխիթար Գոշն էր (XII դ.):

www.a-pdf.com

Գոշը հսկայական դեր է կատարել և՛ Արևելյան Հայաստանի, և՛ Կիլիկիայի մշակութային ու հասարակական կյանքում: Մինչև Գոշը հայ իրականության մեջ չկար աշխարհիկ իրավական հարաբերությունների հաստատուն օրենսգիրք: Նա գրեց «Դատաստանագիրքը», որով ղեկավարվում էր հայկական արդարադատությունը ընդհուպ մինչև XV—XVI դարերը:

Մեծ է Գոշի առակների ճանաչողական և գեղարվեստական արժեքը: Իր ժողովածուով նա դարձավ հայ գրողներից առաջինը, որ ոչ միայն մշակեց ժողովրդական առակները, այլև դրանց ճմանողությամբ ստեղծեց նորերը: Մխիթար Գոշի առակներն այլաբանորեն արտացոլում են դարաշրջանի հասարակական-քաղաքական, դասակարգային հարաբերությունները, քաղաքային բնակչության կենցաղն ու ըմբռնումները, ազգային գիտակցության զարթոնքը: Առակագիրն իր հայացքներով կենտրոնացած միապետության կողմնակից է: Ըստ նրա՝ պետության գլուխ կանգնած թագավորը պետք է լինի արդարադատ, թույլ չտա կամայականություններ, հարգի նպաստակների իրավունքները, պաշտպանի նրանց արատաֆիճ հարձակումներից: Հպատակներն իրենց հերթին պետք է հնազանդվեն թագավորին, իշխաններին: Տարբեր դասակարգերի նման հարաբերության պայմաններում, Գոշի կարծիքով, ամուր ու անսասան կմնան պետության հիմքերը, արտաքին թշնամին չի կարողանա վնասել երկրին:

Ելակետ ունենալով այս գաղափարախոսությունը՝ իր առակներում Գոշը ձգտում է խրատներ տալ հասարակության բոլոր խավերին:

Եթե երկրի ներքին կարգն ու կանոնը պաշտպանող թագավորը, չարաշահելով իր անսահմանափակ իրավունքները, նեղում է նպատակ իշխաններին, յուրացնում նրանց ունեցվածքը, իշխաններն իրենց հերթին, օրինակ վերցնելով թագավորից, ճնշություն պիտի պատճառեն աշխատավորներին: Առակներից մեկում ձկները մեղադրվում են իրենց թագավորից՝ «Ինչո՞ւ ես ուտում մանր ձկներին»: Սրանք պատասխանում են. «Որովհետև ինձանից սովորեցիր. շատերը եկան ինձ երկրպագելու, և կլանելով՝ ինձ կերակուր դարձրիր»: Հեղինակը եզրափակում է. «Գործով պիտի խրատող լինել և ոչ թե խոսքով»:

Թագավորներին ու իշխաններին Գոշը միաժամանակ խրատում է չարհամարհել փոքրավորների ուժը: Ճիշտ է, նրանք տկար են, բայց միանալով կարող են հզորանալ և հաղթել ուժեղին: Այս միտքը հատկապես դրսևորվել է «Արջը և մրջյունը» առակում: Մյուս կողմից առակագիրը հորդորում է, որ նպատակները ճանաչեն տերերի իրավունքները, չապստամբեն նրանց դեմ:

Գոշը խոսում է հայացքի ունի կյանքի մասին: Նրա կարծիքով՝ «հասարակության համար օգտակարն» է գնահատելի, ուստի առանձնապես հարգանքի է արժանի աշխատավորի վաստակը («Ոսկին և ցորենը»): Ոսկին թագավորելիս պահանջում է, որ բոլոր ճյուղերը գան իրեն երկրպագելու: Չի գնում միայն ցորենը, ասելով՝ թող նախ ինքը գա ինձ երկրպագի: Առակագիրը հուշում է, որ աշխատավորն է նյութական բարիք ստեղծողը, երկիր պահող ու շենացնող ուժը: Մեծ մտածողի այս հայացքը համընկնում է աշխատավորության պատկերացմանը և համահունչ է նշանավոր ժողովրդական երգի տողերին.

Աշխարհի շեն վըր գութին էր,
Գութան չեղներ՝ աշխարհն ի՞նչ էր...

www.a-pdf.com

Գոշի մարդասիրական ըմբռնումների լավագույն արտահայտություններն են «Դեղձը և սերկևիլը», «Անմիտ մարդն ու հունապի ծառը», «Բամբակենին և սոսին», «Նշենին և շագանակենին», «Առյուծը և կենդանիները», բազմաթիվ այլ առակներ:

Մխիթար Գոշի ժողովածուն պարունակում է 190 առակ: Յուրաքանչյուր ստեղծագործություն բաղկացած է երկու մասից՝ բուն պատմվածքից և բարոյախոսական եզրակացությունից: Վերջինս, որ աչքի է ընկնում արտակարգ հստակությամբ, անմիջականորեն բխում է պատմվածքի բովանդակությունից: Նրա առակները սեղմ են, գրելաոճը՝ արտահայտիչ: Բազմազան են առակների այլաբանական հերոսները՝ երկնային մարմիններ, բուսական աշխարհի ամենատարբեր տեսակներ, կենդանիներ, մարդիկ:

Մխիթար Գոշից հետո ևս զարգանում է առակագրությունը՝ հիմնականում կապվելով Վարդան Այգեկցու (XII—XIII դդ.) անվան հետ:

Վարդան Այգեկցու անունով պահպանվել են բազմաթիվ առակներ: Առակի նկատմամբ հեղինակի ստեղծագործական հետաքրքրությունը նախապես ծագել է քարոզչական գործունեության ընթացքում: Վերամշակելով ժողովրդական առակները՝ նա դրանք նախ օգտագործել է իր ճառերի ու թղթերի մեջ՝ գրավիչ պատմություններով մատչելի դարձնել մտքերը: Իսկ այնուհետև կազմել է առակների մի առանձին ժողովածու, որտեղ ամփոփել է թե՛ ժողովրդական ծագում ունեցող և թե՛ սեփական ստեղծագործությունները: Այդ ժողովածուն, որ կրել է «Առակք Վարդանայ վարդապետի» վերնագիրը, լինելով շատ սիրված գիրք, շարունակ արտագրվել ու տարածվել է նաև հետագա դարերում, համալրվել նորանոր գործերով:

Թեպետ Այգեկցու գեղարվեստական երկերը կոչվում են առակներ, բայց դրանք իրենց բնույթով միատարր չեն: Իսկական առակների կողքին հանդիպում են նաև այնպիսի գործեր, որոնք զերծ են այլաբանությունից, հետևաբար դուրս են մնում առակ հասկացության սահմանից: Դրանք առօրյա կյանքն ու կենցաղը պատկերող լուրջ կամ ծիծաղական մանրապատումներ են, որ արդի գրական չափանիշներով՝ մոտենում են կարճ պատմվածքի տեսակին:

Այգեկցու ստեղծագործություններում ըստ ամենայնի արտացոլվել են միջնադարյան կյանքի հիմնական կողմերը, գերազանցապես աշխատավորության դիրքերից են պատկերվել հասարակական ներհակությունները: Սա նշանակում է, որ Վարդան Այգեկցու առակների մեծ մասը բանահյուսական ծագում պիտի ունենա:

Մարդիկ ապրում են դառն չքավորության մեջ և մտածում իրենց վիճակի թեթևացման մասին, բայց գնալով՝ ավելի է ծանրանում նրանց դրությունը: Սա է «Իշխանը և այրի կինը» հանրահայտ առակի գլխավոր միտքը, որ առկա է նաև ուրիշ գործերում՝ երևան հանելով դառն իրականության վերաբերյալ հասարակ ժողովրդի դարավոր կենսափորձն ու պատկերացումը:

Այգեկցու ստեղծագործություններում հանդիպում ենք պետական և հոգևոր գործիչների դատապարտելի արարքների քննադատության: «Կաշառառու դատավորն ու բղուղով յուղը» առակի մեջ ծաղրվում է կաշառքով կամայականորեն դատ վարող դատավորը: Նույն բանը տեսնում ենք նաև հոգևորականների շրջանում («Կաշառառու քահանան»): Առակագիրը թերևս ամենից շատ ծաղրել է եկեղեցու սպասավորների պաշտպանած դավանանքի և կատարած գործերի հակասությունը, ճգնավորների ու երեցների ընչաքաղցությունը, բարոյական մյուս արատները: Քրիստոսի ծառաները ոչ միայն կա-

շատ են առնում, այլև զբաղվում են գողությամբ, նույնիսկ ջնջում են: Ընդ որում, նրանք պատրաստ են իրենց հանցագործությունը արդարացնել Ավետարանի հեղինակությամբ: Այդ առակներից են «Գող Բահանան և այրի կինը», «Միայնակյացը և գամփռ շունը», «Ճգնավորն ու իշխանը» և այլն: Վերջին առակում պատմվում է, որ մի ճգնավոր գողանում է արաբ իշխանի ձին և փոխում մի հացի հետ: Երբ իշխանը իմանում է այդ մասին, հարցնում է նրան, թե ինչո՞ւ է մեծագին ձին վաճառել մի հացով, ճգնավորը պատասխանում է. «Որովհետև Քրիստոսն ասել է՝ ձրի առեք և ձրի ավեք»:

Վարդան Այգեկցու որոշ առակներից երևում է, որ մարդիկ սկսել էին թերահավատությամբ վերաբերվել կրոնական ծեսերին, կասկածանքի ենթարկել քրիստոնեական բարոյախոսության սկզբունքները: Գլխավոր այն էր, որ աշխարհիկ մտածողությունը հետզհետե տիրապետող էր դառնում, մարդիկ ձգտում էին զվարճանալ, ման՝ աղոթել ու բարոզ ունկնդրել: Այգեկցու ավագ ժամանակակից Ներսես Շնորհալին «Հաւատով խոստովանիմ» աղոթքի նախաբերության մեջ դժգոհում էր, թե աղոթավայրերից դուրս ժողովուրդը բնավ չի հիշում Աստծուն և ավելի շատ սիրում է «դաւաւրկաբանությունը», զվարճախոսությունները:

Առակներում արտահայտվել է նաև ժողովրդի աշխատասիրությունը, այն բարձր գիտակցությունը, որ և՛ հոգևորականները, և՛ պետական պաշտոնյաները ապրում են աշխատավորի դառն վաստակի, նրա բրտինքի հաշվին («Ծղը և ձին», «Ծկեղեցին ու ջրաղացը»):

***

Հատորում տեղ է հատկացվել նաև մանրավեպին, ծիծաղական պատմություններին (Գ բաժին), որոնք գրույց անվամբ լայն տարածում են ունեցել միջնադարյան Հայաստանում, պատմվել են այլևայլ առիթներով, բավարարել մարդկանց մտավոր ու գեղագիտական պահանջմունքները: Իրենց կառուցվածքով, գեղարվեստական պատկերման եղանակներով գրույցներն աղերսվում են մերթ առակի, մերթ պատմվածքի ու նորավեպի, մերթ իրապատում հեքիաթի ու անեկդոտի հետ: Այդ գրույցները մեր օրերն են հասել տարբեր գրառումներով ու աղբյուրներով, մեծ մասամբ՝ անհեղինակ: Որոշ ձեռագրերում, սակայն, սրանցից մի քանիսի տարբերակները վերագրված են Վարդան Այգեկցուն:

Սրանք խրատական-ուսուցական բնույթի ստեղծագործություններ են, որ ժամանակաշրջանի բարոյական ըմբռնումների դիտակետից արձագանքում են կյանքի խնդիրներին, շոշափում շարի ու բարու, խելքի և իմաստության, հասարակության տարբեր դասակարգերին պատկանող մարդկանց վարքի, հոգեբանության, ապրելակերպի հարցերը, բացահայտում իրականության, հասարակական հարաբերությունների նշմարտացի պատկերը: Գրույցներում այս ամենը մեծ մասամբ արտացոլված է ժամանակի առաջադեմ աշխարհայեցության դիրքերից՝ խոհափիլիսոփայական, դրամատիկ կամ գավեշտական լուծումներով:

Ակներև է, որ շատ ստեղծագործություններ ունեն ժողովրդական ծագում, հորինվածքով և գաղտփարտկան բովանդակությամբ արտահայտում են իրականության նկատմամբ ժողովրդական լայն խավերի վերաբերմունքը, արտացոլում նրա հայացքն ու համոզմունքը: Այս կարգի գրույցներում ճնշադատվում են իշխող դասակարգի հոռի բարքերը, պալատական կյանքի, պե-

www.a-pdf.com

տական պաշտոնյաների երեսպաշտությունը, չարաշահումները, մարդկային ցածր կրքերը, ընչաքաղցությունն ու նախանձը:

Ահա «Թագավորի նախանձոտ իշխաններ» վերնագրով զրույցը, որ տարբեր փոփոխակներով գոյություն ունի նաև ուրիշ գրականությունների մեջ: Պալատում ծառայող երկու իշխաններ առում էին միմյանց: Գիտենալով այդ՝ մի անգամ թագավորը նրանց ասում է. «Խնդրեցե՛ք ինձանից ինչ որ ուզում եք: Բայց իմացե՛ք, մեկի խնդրածի դիմաց մյուսին կրկնակի պիտի տամ»: Իշխաններից ավագը մաածում է. «Եթե ես մի բաղաք ուզեմ, կառ: Բայց իմ ընկերոջը երկուսը կհասնի, սիրտս կպայթի»: Նա խնդրում է, որ իր մեկ աչքը հանեն, որպեսզի ընկերը ամբողջովին կուրանա: «Գարզ է, որ նախանձոտն իր անձին ավելի թշնամի է, քան՝ ուրիշների»,— եզրակացվում է զրույցի վերջում:

«Երեք ճշմարիտ խոսք» ստեղծագործության մեջ արտահայտվել է ժողովրդական այն գիտակցությունը, որ պալատներում թագավորում են կեղծիքն ու ընչաքաղցությունը, անհավատարմությունն ու սուտը: Այս ամենն է չարիքի աղբյուրը, դժբախտությունների պատճառը:

Թագավորն ու թագուհին երկար ժամանակ զավակ չէին ունենում: Վերջապես ծնվում է մի տղա: Բայց երեխան ո՛չ աչքեր ուներ, ո՛չ լեզու և ո՛չ ոտքեր: Հավաքված բազմությունից խորհուրդ են խնդրում՝ ի՞նչ անել: Մի ճգնավոր հայտնում է, որ իրը խրատ կտա, և երեխան կառողջանա:

«— Թագավորը, թագուհին և մեծ իշխանը՝ յուրաքանչյուրը մի-մի ճշմարիտ խոսք ասի,— խոսեց ճգնավորը,— տղան կլավանա:

— Թեև տասներկու թագավորների վրա իշխանություն ունեմ,— ասաց թագավորը,— բայց երբ մարդ է գալիս մոտս, դարձյալ ձեռքին եմ նայում, թե ինչ ճվեր է բերում:

Երբ թագավորն այս ասաց, երեխայի աչքերը բացվեցին:

— Ես մի աղքատ մարդու աղջիկ էի,— խոսեց թագուհին,— դարձա թագուհի ու հասա այս ողջ իշխանությանը: Բայց երբ մի սիրուն երիտասարդ եմ տեսնում, մոռանում եմ՝ ճար լինե՞ր, թագավորիս թունավորեի, որ ետ ամուսնանայի:

Տղան անմիջապես սկսեց խոսել:

— Թագավորության երկորդ դեմքն եմ,— ասաց մեծ իշխանը:— Ես աղքատ մարդ էի, և գրագիտությանս պատճառով թագավորը ինձ այս իշխանությունը: Բայց երբ նա մի փորձ բարկանում է վրաս, մոռանում եմ՝ ճար լինե՞ր, թագավորիս սպանեի, նրա կինն ու թագավորությունը առնեի ինձ:

Երբ իշխանն ավարտեց խոսքը, տղան վազեց և գնդակ ու մահակ ուզեց, որ խաղա»:

Սա սոսկ վերացական ճշմարտախոսություն չէ, այլ պալատական միջավայրին բնորոշ երևույթների բացահայտում, որ արտահայտում է որոշակի հայացք ու համոզմունք: Այդ հայացքը առավել արտահայտիչ, առավել համոզիչ ներկայացնելու համար օգտագործված է իճճաբացահայտման ձևը: Զրույցի մանրամասներն ու կառուցվածքը նույնպես պայմանավորված են այդ իճճաբացահայտման պահանջով: Մանկանը փրկելու պահանջն է ստիպում, որ ծնողներն ու մեծ իշխանը ճշմարիտ խոսք ասեն: Զրույցը հորինված է ժողովրդական այլաբանական մոտածողության ու չափազանցության ճնարանքի զուգորդմամբ, հրաշապատում լուծումով, դրանց նպատակային կիրառությամբ: Նորածին մանուկը խորհրդանշում է պալատական անարդար

www.a-pdf.com

ու երեսպաշտ միջավայրի ապագան: Այդ ապագան առողջ ու հուսալի կդառնա այն ժամանակ միայն, երբ այնտեղ թագավորեն ճշմարտությունն ու ազնվությունը:

«Պատանին և անարդար դատավորը» ստեղծագործության մեջ պատկերված է հայրական ժառանգությունը խնջույքներում վատնած, բայց ի վերջո մոլորությունից դարձի եկած ճարպիկ ու հնարամիտ մի պատանու հետևողական վրիժառությունը անազնիվ ու խաբեբա դատավորի նկատմամբ:

Շատ զրույցներում հանդիպում ենք հոգևոր և աշխարհիկ ամենատարբեր խավերի բարոյական նկարագրի, կյանքի, ապրելակերպի պատկերմանը:

Աղոթասեր ու ճգնակենցաղ հոգևորականների կողքին կան նաև այնպիսիները, որոնք այլևս չունեն երբեմնի բարեպաշտությունը: Մի զրույցում հիվանդացոցի փափուկ միջավայրին ընտելացած կրոնավորը առողջանալուց հետո նեղսրտում է, որ հարկադրված է կրկին վերադառնալ վանք («Դժվարությամբ վանք վերադարձող կրոնավորը»): Հոգևոր դասի ներկայացուցիչներից ոմանք դիրքի, պաշտոնի կամ հարստության հասնելու համար երբեմն բռնում են հանցագործության ուղին («Աբեղան և թույնը», «Թե ինչպես մի սատանա խաբեց կրոնավորին»), դրսևորում են արատավոր հակումներ, գող են ու շնացող («Գող կրոնավորը», «Աբեղային խաբող կինը»): Դժվար չէ նկատել, որ սրանք նյութի և գաղափարի առումով ընդհանուր եզր ունեն վարդանյան ժողովածուների որոշ առակների հետ: Այս զրույցներն, իհարկե, հորինվել են խրատական-դաստիարակչական նպատակներով, միաժամանակ ունեն ճանաչողական արժեք և արտացոլում են ժամանակի իրական բարքերն ու հարաբերությունները:

Զգալի բանակ են կազմում այն ստեղծագործությունները, որոնք պաշտպանում ու պանծացնում են խելքի և իմաստության, մարդասիրության, արդարության, բարեգործության գաղափարները: Դրանցից են «Մեռելն ու այգեգործը», «Երկու ընկեր», «Արդար վաստակը», «Երկու արդար մարդիկ», «Բարեգործության պտուղը», «Կողոպտված կույրը» և այլ գործեր:

Հայրենասիրական բովանդակությամբ է տոգորված «Բազեն և ընտանի հավը» առակ-զրույցը, որն այլաբանորեն արտացոլում է օտար տիրապետության և նրա վարձկան զորքերի նկատմամբ ճնշյալ ժողովրդի հակակրանքն ու զգուշավորությունը:

Կան զավեշտական բնույթի մանր պատմություններ ու սրամիտ զրույցներ: Առանձին հիշատակման են արժանի «Բարի գործը», «Աղվեսը և սագերը», «Շինականի որդին՝ թագավոր», «Տգեղ կինը», «Կամակոր կինը», «Շահ-Աբբաս ու հարբած հայը», «Գյուղացին ու ազնվականը», «Ժլատ հարուստն ու նրա արձանը», «Գեր խոհանան ու սրամիտ գյուղացին», «Օգոստոս կայսրն ու օտարականը» ստեղծագործությունները:

Զավեշտական ստեղծագործությունների մի մասը, ինչպես ակնհայտորեն երևում է հորինվածքից և այլ հատկանիշներից, ստեղծվել է բուն հայկական միջավայրում, մյուսները հայ իրականության մեջ մուտք են գործել պատմվելով, երբեմն նաև՝ թարգմանաբար[1]:

---

[1] Օրինակ՝ «Միջնադարյան պատմություններ» շարքի գործերը (ինչպես նաև այլ ստեղծագործություններ, որոնք տեղ չեն գտել սույն գրքում) իտալերենից գրաբար է թարգմանել Պետրոս Կոստանդնուպոլսեցին: Մաշտոցի անվան մատենադարանի № 1178 ձեռագրում այդ նյութերը զետեղված են «Յաղագս ծիծաղական պատմութեանց...» բնդհանուր խորագրի տակ (տե՛ս Արմենուհի Սրապյան, Հայ միջնադարյան զրույցներ, Երևան, 1969, էջ 382—383):

www.a-pdf.com

Այս, ինչպես նաև նախորդ զրույցների գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք օժտված են պատմողական ստեղծագործության անհրաժեշտ հատկանիշներով. դեպքերի և իրադարձությունների փոխկապակցված ընթացք, որ պայմանավորված է ընդհանուր մտահղացմամբ և ծառայում է դրա բացահայտմանը, պատկերվող երևույթների ու հանգամանքների հեղինակային նկարագրություն, հերոսներին բնութագրող արամախոսություններ ու պատկերավոր մտածողություն, անհատականացման տարրեր և ընդհանրացնող բնույթ: Այստեղ ընթերցողը կգտնի և՛ պատմական ու հրաշապատում նկարագրություններ, և՛ իրապատում պատկերներ ու բնութագրումներ: Այս ստեղծագործությունների պատմելաոճը, նյութի կառուցման եղանակներն ու մտածողությունը տարբեր են ու այլազան, ինչպես բազմաբովանդակ ու բազմազան է կյանքը: Զրույցները գեղարվեստական որոշակի մակարդակ ներկայացնող ամբողջական ստեղծագործություններ են, որ նպաստել են հայ արձակի մի շարք տեսակների՝ առակի, հեքիաթի, պատմվածքի ձևավորման գործին, հող նախապատրաստել այդ տեսակների վերջնական ձևավորման ու հետագա զարգացման համար:

Հայտնի է, որ առհասարակ միջնադարյան գրականության յուրահատկություններից մեկն էլ թարգմանվող նյութի ստեղծագործական իրացումն է, մշակումը, տեղայնացումը: Ըստ էության դա երբեմն թարգմանություն չէ, այլ՝ փոխադրություն: «Հին ու միջին դարերում,— գրել է ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը,— միայն բիբլիական գրքերն ու դավանաբանական երկասիրություններն են, որ թարգմանվում էին համարյա բառացի ու հարազատ: Ոչ կրոնական, աշխարհիկ նյութերը, էլ չեմ ասում մանրապատումները, առակները և այլն, թարգմանվում էին շատ ազատ: Դրանք ավելի շուտ վերապատումներ կամ փոխադրություններ են, քան թարգմանություններ: Շատ հաճախ օտար նյութը հայ «թարգմանչի» գրչի տակ ազգայնանում էր, երբեմն նոր միջադեպեր ներմուծվում, երբեմն էլ գործողության վայրը Հայաստան տեղափոխվում»[2]:

Ճշմարիտ ընկերության վերաբերյալ զրույցը («Սուտ և ճշմարիտ բարեկամություն»), օրինակ, բազմաթիվ տարբերակներով կարելի է գտնել ինչպես եվրոպական, նույնպես և արևելյան միջնադարյան շատ ժողովածուներում: Թե որքանով է հայկական խմբագրությունը հեռու հիշյալ տարբերակներից՝ թերևս կարելի է պարզել այդ բոլորի հանգամանալի համեմատությունից ու քննությունից: Սակայն բացառված չէ, որ այն հայ իրականության մեջ թափանցած լինի բանավոր ճանապարհով: Գուցե սույն ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ մեզ հետաքրքրող զրույցի նյութը պահպանվել է հայկական բանահյուսության մեջ ևս: Ուշագրավ է հատկապես համշենցիների պատմած «Նեղ օրվա ընկերը» հեքիաթը, որը միայն մեկ (գրեթե աննշան) հարցում զիջում է գրավոր փոփոխակին, բայց և ունի արժեքավոր տարբերություններ[3]:

Միջնադարյան արձակի առանձին ստեղծագործությունների ծագումն ու

---

[2] «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից», խմբագրությամբ և առաջաբանով Կ. Մելիք-Օհանջանյանի, ժողովածուի նյութերը ընտրեցին, տեքստը պատրաստեցին և ծանոթագրեցին Ավդալբեգյան Մ., Մկրտչյան Մ. և Սրապյան Ա., Երևան, 1957, էջ XXVII: Հմմտ. նաև «Պատմութիւն Փարէզի և Վիեննայի. Պատմութիւն Վէնետիկ քաղաքին», աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1966, էջ 52:

[3] Տե՛ս «Հայն համշենական», Երևան, 1971, էջ 109—111 (գրի է առել սոչիաբնակ բանահավաք Բարունակ Թոռլաքյանը):

www.a-pdf.com

տիպաբանությունը ուսումնասիրելու ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան, շատ հարցեր սպասում են պատասխանի: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ «Ոսկեփորիկում» արտացոլված են ինչպես ինքնուրույն, բուն ազգային արձակի շերտերը, նույնպես անտիկ ու հելլենիստական մշակույթի, հրիտոնեական դարաշրջանի արևմտաեվրոպական ժողովուրդների, նաև՝ հնդկական, պարսկական, արաբական և արևելյան մյուս գրականությունների հետ հայոց մշակույթի շփումները:

***

«Ոսկեփորիկում» գետեղված են նաև միջնադարի մտավոր շրջանակներում լայնորեն գործածված խրատներ ու թևավոր խոսքեր, դարերի փորձով հաստատված իմաստուն ասույթներ: Սրանք, հին և միջին դարերի մտածողության արտահայտություն լինելով, այդ ժամանակների բարոյակրթական կանոններն ու ըմբռնումները արտացոլելով հանդերձ, այսօր ևս չեն կորցրել իրենց իմացական արժեքն ու դաստիարակչական նշանակությունը: Թևավոր խոսքերը, խրատներն ու ասույթները, որոնց մի զգալի մասը վերագրվում է անտիկ և միջնադարյան նշանավոր մտածողներին (Սոկրատ, Պլատոն, Արիստոտել, Հիպոկրատես, Պլուտարքոս, Մենանդրոս, Խիկար Իմաստուն, Եզնիկ Կողբացի, Անուշիրվան և ուրիշներ), աչքի են ընկնում մտահարուստ և համոզկեր բովանդակությամբ, կուռ և արտահայտիչ հորինվածքով:

Ժամանակակից ընթերցողին հին և միջնադարյան արձակի տեսակների վերաբերյալ լայն պատկերացում տալու նպատակով գրքում տեղ է տրվել նաև վարքագրական, վկայաբանական և այլ կարգի մի շոկի գործերի (Բ բաժին): Մասնավորապես հոգևոր-մշակութային նշանավոր գործիչների վարքերի մեծ մասը, ազգությունից և հայրենի դավանանքից չհիրաժարվելու համար նահատակված անձանց վկայաբանություններից շատերը, գրված լինելով կենսական նյութի հիման վրա և գեղարվեստական անուրանալի շնորհով, ժամանակին գրեթե նույն դերն են ունեցել, ինչ գեղարվեստական արձակն այսօր: Դրանք արդի վիպակի կամ վեպի նախատիպերն են՝ ամփոփ ու կոկ կառուցվածքով, հերոսի բնավորության բացահայտմամբ, նրանց կյանքի, գործի ու նպատակի վարպետ պատումով, հոգեբանական հետաքրքրական դիտումներով: «Ըստ էության, ըստ հոգեբանական խորության, ըստ մարդկային հոգեկան պայքարի, այդ պատմություններն բոլորն էլ հրաշալի նիւթ են և՛ վէպի, և՛ դրամայի»,— նկատում է Լևոն Շանթը և ավելացնում, որ նրանց հերոսներից «ամէն մէկը կեանքի ու մահուան, մարդկայինի ու աստուածայինի, աշխարհային վայելքի և հանդերձեալ տիեզերութիւնեան մէջտեղը ինկած պայքարողներ են»[4]: Մ. Աբեղյանը, խոսելով Շուշանիկի վկայաբանության մասին, գրում է. «Այդ տիպի երկերն բնդհանուրապես տնծանոթ են մեր գրագետներին, իսկ դրանք մեր հին գրականության վեպերն են, գեղեցիկ արվեստով հորինված»[5]: Այս բնագավառի լավագույն ստեղծագործությունները, որոնցից մի քանիսը ներկայացվում են սույն ժողովածուի մեջ, իրոք հորինված են «գեղեցիկ արվեստով»:

Ձեռագրերում զանազան պատճառներով չեն պահպանվել գրական որոշ գործերի հեղինակների անունները: Այս խնդրում դեր է խաղացել ինչպես

---

[4] Լևոն Շանթ, երկեր, հտ. 9, Պէյրութ, 1946, էջ 131, 133—134:

[5] Մ. Աբեղյան, երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 390.

www.apdf.com

պատահականությունը (օրինակ՝ հեղինակային կամ գաղափարագիր ձեռագրի վնասվածությունը, գրչագրական բացթողումը և այլն), այնպես էլ հեղինակի իմքնության անհետումը: Բանն այն է, որ հատկապես արարողական գործառնության համար սահմանված գրական որոշակի տեսակներ, ինչպիսիք են շարականը, վարքը, վկայաբանությունը և այլն, կարևորվում էին լոկ տարփողվող գաղափարով, տոնի նպատակն իմաստավորող գլխավոր հերոսի՝ սրբի հոգևոր առաքինությամբ ու սխրանքով, իսկ հեղինակի իմքնության փաստը, որ սրա համեմատությամբ ակնհայտորեն անկարևոր էր, ծիսակատարության հանդիսավոր մթնոլորտում լինելով միանգամայն ավելորդ, մատնվում էր անհետման: Եվ քանի որ տոների համար վստահելի ընթերցվածքներ էին ծառայում «Շարակնոց», «Հայսմավուրք», «Ճառընտիր» և այլ ժողովածուներ, որոնցում ամփոփվում էին հիշյալ տեսակները, ուստի և նույն մոտեցումը հաճախ փոխանցվում էր ձեռագիր:

«Ոսկեփորիկում» զետեղված վարքերից ու վկայաբանություններից ստուգապես ավանդված է «Վարք Մաշտոցի» գրողի անունը: Որոշ գրվածքների հեղինակները դեռ մնում են անհայտ կամ չհաստատված, իսկ մի քանիսը բանասիրության կողմից պարզաբանվել է զանազան ուղղակի և կողմնակի փաստերի ճշտությամբ:

Քանի որ Վահան Գողթնացու և Խորով Գանձակեցու կենսագրությունները այստեղ հրատարակվում են իրենց հեղինակների անունով, անհրաժեշտ ենք համարում երկու խոսքով անդրադառնալ այդ հարցին:

Վահան Գողթնացու կենսագրությունը գրվել է VIII դարում: «Սոփերքի» հրատարակիչը (Վևոնդ Ալիշան), սույն բնագրում եղած ակնարկություններից ելնելով, ենթադրել է, թե Ողբ և վկայաբանությունը գրած պիտի լինի Արծկեի Սուրբ Խաչ վանքի առաջնորդ Աբրահամ-Առաքելյանը և ափսոսանք է հայտնում, որ գրչագրում հիշված չէ հեղինակի անունը[6]: Ղ. Ալիշանի ենթադրությունը հաստատվում է Մաշտոցի անվան մատենադարանի մի ձեռագրով (№ 1520, Ճառընտիր, հին համարը՝ 934)[7]:

Երկրորդը նույնպես դեպքերի ժամանակակցի գրչի արգասիք է: Գ. Տեր-Մկրտչյանը, որ առաջին անգամ հրատարակել է «Խորով Գանձակեցի» բնագիրը, դիտում է, թե վկայաբանությունը մի շարք բնդհանրություններ ունի Մխիթար Գոշի՝ նույն Խորովին նվիրված Ներբողի հետ («Մխիթարայ վարդապետի կոչեցեալ Գոշ, Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խորով»): Նաև մի քանի այլ հանգամանքներ նկատի ունենալով՝ Գ. Տեր-Մկրտչյանը կարծում է, որ Ներբողյանը և վկայաբանությունը միևնույն հեղինակի գործն են, ինչպես լինում է սովորաբար[8]: Այս ենթադրությունը ևս այժմ ընդունված է[9]:

Ժողովածուի մեջ ընդգրկված վարք-վկայաբանությունները, ինչպես նաև «Դիզափայտը», գրված են իրապաշա գրչով և այդ առումով սերտորեն կապված են հայ պատմագրության ավանդներին: Այս գործերը ուսումնասիրողին ճշտավորություն են ընձեռում հետևելու նաև մատենագիրների աշխարհա-

---

[6] «Սոփերք հայկականք», ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 99—100:

[7] Այս մասին մանրամասն տե՛ս Մ. Աբեղյան, երկեր, հատ. Գ, էջ 513:

[8] «Արարատ», 1896, էջ 590:

[9] Տե՛ս «Հայոց նոր վկաները (1153—1843)», աշխատությամբ Ց. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 21—31, «Հայ մշակույթի նշանավոր գործիչներ. Ե—ԺԸ դարեր», երևան, 1976, էջ 280:

գրական պատկերացումներին, հետազոտելու գեղարվեստական ժամանակի պոետիկայի հարցերը:

www.a-pdf.com

Կազմողները անհրաժեշտ համարեցին «Ոսկեփորիկի» մեջ զետեղել հազարավոր ձեռագրերի հիշատակարաններից մի քանի նմուշ:

Որևէ ծավալուն աշխատանքի կամ ձեռագրի ընդօրինակման ավարտի կապակցությամբ գրված հիշատակարաններում արժեքավոր տեղեկություններ էին հաղորդվում ոչ միայն տվյալ մատյանի ստեղծման հանգամանքների, այլև գրի հեղինակի, պատվիրատուի, գրչի, ծաղկողի, սրանց մերձավորների ու գործընկերների և, որ առավել հետաքրքիր է, ժամանակի անցուդարձերի վերաբերյալ: Սա հայկական հիշատակարանների յուրահատկություն է: Ռուս գրագետ Լ. Կիսելյովան, օրինակ, այդ մասին գրում է. «Կարելի է որոշակիորեն ասել, որ արևմտաեվրոպական երկրներում գրիչներ պարտադիր ավանդույթ չունեին արձանագրելու աշխատանքի ավարտի հետ կապված ժամանակը, վայրը կամ որևէ անցուդարձ, ինչպես կար հայոց ձեռագրական ավանդույթի մեջ, ուր գրիչների նոթերը (հիշատակարան) գրեթե պարտադիր բաղադրիչ էին ձեռագիր մատյանի: Հիշատակարաններում գրիչը հաճախ շատ ընդարձակ հաղորդում էր, թե ինչպես է ստեղծվել գիրքը, ով է ընդօրինակել, ինչ եղանակ էր: Եվրոպական ձեռագրերում որպես կանոն նշումները հակիրճ են. արձանագրվում է ձեռագրի գրության ավարտը, երբ և ով է ընդօրինակել»[10]: Բայց հայկական հիշատակարանները չեն սահմանափակվում նաև դրանով: Թեև զուտ գրական տեսակ չէ հիշատակարանը, այնուամենայնիվ, շարադրված լինելով ներհուն և օժտված մատենագրի ձեռքով, շատ հիշատակարաններ պատմական-հանճարեղական արժեքի հետ նաև անժխտելի գրական արժանիքներ են ունենում:

Ի վերջո, հարկ է նշել, որ միջնադարյան արձակի բազմաթիվ ստեղծագործություններ արժանացել են նոր գրականության դասականների ուշադրությանը և ներշնչանքի աղբյուր են ծառայել. հայտնի են Մեհենցի, Րաֆֆու, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Նորագույն շրջանի գրողների մշակումները: Ուշագրավ է, օրինակ, որ հայ պատմավիպագրության ամենաաշխի ընկնող դեմքերից մեկը՝ Մուրացանը, 1904 թվականի ապրիլին Վահան Գողթնացու վկայաբանության հիման վրա սկսել է գրել պատմավեպ, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով մնացել է անավարտ[11]...

Ընդհանուր գծերով ներկայացնելով հին արձակի տեսակները, բնույթն ու տիպաբանական նկարագիրը՝ հուսանք, «Ոսկեփորիկը» իիչ թե շատ ամբողջական պատկերացում կտա ընթերցողին միջնադարյան գեղարվեստական արձակի մասին:

ԿԱԶՄՈՂՆԵՐ

---

[10] **Л. И. Киселева.** О чем рассказывают средневековые рукописи, Л., 1978, стр. 40—41.

[11] Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 8, էջ 144, «Մուրացանի անտիպ նամակները»:

www.a-pdf.com

Ա

Կ Ո Ր Ց Ո Ի Ն

(Ե ԴԱՐ)

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

(Հատվածներ)

[Ա]

Ասքանազյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարգև գրի մասին, թե երբ, ո՛ր ժամանակ տրվեց և ինչպիսի մարդու ձեռքով եղավ այդ աստվածային նորապարգև շնորհը, նաև այդ մարդու լուսավոր ուսման և հրեշտակակերպ առաքինի կրոնավորության մասին մտածում էի մի առանձին մատյանի մեջ հիշատակարաններ ծաղկեցնել։ Եվ մինչ ես իմ մտքի խորհրդարանում ջանում էի միայնակ վերհիշել [եղածը], եկավ, ինձ հասավ Հովսեփ անունով պատվական մարդու՝ նրա աշակերտի հրամանը, դրա հետ նաև ուրիշների՝ մեր ուսումնական դասընկերների քաջալերությունը։ Ուստիև ես, որ բախտ էի ունեցել [նրա] մանկավոր աշակերտը լինելու, թեպետ բոլորից կրտսերագույնն էի, հակառակ մեր կարողության ստանձնելով ինձ հասած անաչառ հրամանը, սկսում եմ շտապով և անհապաղ գրի անցնել առաջադրանքը։ Եվ մենք նրանց բոլորին աղաչում ենք, որ աղոթքով մասնակից լինեն մեր աշխատությանը՝ հանձնելով մեզ աստվածային շնորհին, որպեսզի հաջողությամբ և ուղիղ նավենք վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով։

[Գ]

Մաշտոց էր անունն այն մարդու, որին հիշեցինք մեր խոսքի սկզբում և որի մասին հոգ ենք տանում պատմելու։ Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին։ Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, (ապա) եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, մնացել արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի արձակած հրամանների ծառայող՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ։ Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին։ Եվ հենց այնտեղ եռանդագին կերպով հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորված՝ ներթափանցում, խորամուխ էր լինում աստվածային պատվիրանների հանգամանքների մեջ և, անթերի պատրաստությամբ զարդարված՝ կատարում էր իշխանների ծառայությունը։

www.a-pdf.com

[Դ]

Եվ դրանից հետո նա, ըստ ավետարանական կանոնի, նվիրվեց մարդասեր Աստծու ծառայությանը։ Այնուհետև մերկացրեց (իրենից) իշխանական ցանկությունները և պարծանքի խաչն առած՝ հետևեց ամենափրկիչ խաչվածին։ Եվ ընդունելով (հավատքի) պատգամները՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ։ Բազում և տեսակ-տեսակ վշտակեցություններ կրեց ըստ Ավետարանի. ամեն բանով, հոգևոր բոլոր վարժություններով իրեն հանձնեց միանձնության, լեռնակեցության, քաղցի ու ծարավի և բանջարաճաշակության, անլույս արգելարանների, խարազնազգեստ ու գետնատարած անկողիններին։ Շատ անգամ էլ գիշերվա հեշտալի հանգիստն ու քնի պահանջը ոտի վրա տքնությամբ վերջացնում էր մի ակնթարթում։ Եվ այս ամենն անում էր նա ոչ սակավ ժամանակ։ Մի քանիսին ևս գտնելով՝ մոտեցրեց իրեն, աշակերտ դարձրեց նույն ամենօրյա ավետարանական ուսման։

Եվ այսպես կամայական քաջությամբ տանելով վրա հասած բոլոր փորձությունները և պայծառանալով՝ նա ծանոթ ու հաճելի դարձավ Աստծուն և մարդկանց։

[Բ]

Այնուհետև առնելով իր հետևորդներին՝ երանելին գնաց, իջավ Գողթնի անկարգ և անխնամ տեղերը։ Նրան ընդառաջ ելավ Գողթնի իշխանը՝ մի աստվածավախ և աստվածասեր մարդ, որի անունը Շաբիթ էր։ Սա, հյուրընկալ, հյուրամեծար հանդիսանալով, բարեպաշտությամբ սպասարկեց (նրան) Քրիստոսի հավատքի աշակերտների (կարգի) համաձայն։ Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնականությամբ սկսեց (քարոզել) գավառում և ամենքին իրենց հայրենական ավանդություններից ու սատանայական դիվապաշտ ծառայությունից գերեց, շուռ տվեց Քրիստոսի հնազանդությանը։

...Նա նաև շատ ավելի մտատանջության մեջ ընկավ իր համերկրացիներին օգուտ տալու համար։ Ուստիև ավելացրեց Աստծուն ուղղված մշտնջենական աղոթքը, բազկատարած պաղատանքներն ու անդադրում արտասուքները։ Եվ վերհիշելով առաքյալի խոսքը՝ ասում էր մտահոգ.

— Տրտմություն է ինձ, և անպակաս են իմ սրտի ցավերը իմ եղբայրների և ազգակիցների համար։

Եվ այսպես տրտմագին հոգսերով պաշարված ու կաշկանդված՝ ընկել էր մտածմունքների ծփանքների մեջ, թե ինչպիսի ելք գտնի այդ բանի համար։

[Գ]

Եվ շատ օրեր նույն խնդրով զբաղվելուց հետո նա վեր կացավ գնաց Մեծ Հայքի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ էր, որը նույնպես մտահոգված էր նույն խնդրի վերաբերմամբ։ Նրանք լիովին հոժարակամությամբ մեկտեղ գալով՝ առավոտ կանուխ մեծ աղոթքներով Աստծուն էին դիմում, որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը։ Եվ այդ անում էին շատ օրեր։

www.a-pdf.com

Ապա ամենաբարի Աստծուց նրանց՝ երանելի համախոհներին շնորհվեց հանգելու աշխարհաշեն գաղափարի և հայ ազգի համար նշանագրեր գտնել։

Շատ հարցուփորձով ու որոնումով զբաղվեցին և շատ նեղություններ կրեցին։ Ապա իրենց փնտրտուքի մասին հայտնեցին Հայոց թագավորին, որի անունն էր Վռամշապուհ։

Այն ժամանակ արքան նրանց պատմեց Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որը հանկարծ գտել էր հայերեն լեզվի ալփաբետի նշանագրերը։ Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գտածի մասին, արքային համոզեցին, որ հոգա ձեռք բերելու այդ պիտույքը։ Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մտերիմն էր։

Իսկ Հաբելը, լսելով այդ, շտապ հասավ Դանիելի մոտ և նախ ինքը տեղեկացավ նշանագրերի մասին և ապա, նրանից վերցնելով, ուղարկեց Հայոց երկիր՝ արքային։ ...Իսկ արքան սուրբ Սահակի և սուրբ Մաշտոցի հետ միասին, նշանագրերն ստանալով Հաբելից, ուրախացան։

Հանկարծագյուտ ուղածն առնելով՝ երանելի խնամածուներն արքայից խնդրեցին նաև դեռահաս մանուկներ, որպեսզի կարողանան նշանագրերը գործադրել։ Եվ երբ նրանցից շատերը գրաճանաչ դարձան, թագավորը հրամայեց ամեն տեղ նույն (նշանագրերով) կրթել։ Երանելին նույնիսկ հասավ վարդապետական գեղեցիկ աստիճանի և մոտ երկու տարի այդ գրերով իր ուսուցչությունն արեց։

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայոց լեզվի *հիղոբաններն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ ուրիշ դպրություններից թազված և հարություն առած ճանաչվեցին, դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան՝ որոշ ժամանակ դրա համար ելք փնտրելով։*

[Է]

Ուստի երանելի Մաշտոցը, արքայի հրամանով ու սուրբ Սահակի համաձայնությամբ մի խումբ մանուկներ հետն առած և սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո, ճանապարհ ընկավ, ...գնաց, հասավ Արամի կողմերը՝ Ասորիքի երկու քաղաքները, որոնցից առաջինը Եդեսիա է կոչվում, և երկրորդի անունն է Ամիդ։ Ներկայացավ սուրբ եպիսկոպոսներին, որոնցից առաջինի անունը Բաբիլաս էր և երկրորդինը՝ Ակակիոս։ (Նրանք) հոգևորականության և իշխանների հետ միասին դիմավորեցին ժամանողներին և շատ մեծարանքներ ցույց տալով՝ հոգատարությամբ ընդունեցին նրանց՝ քրիստոնյաների կարգի համաձայն։

Իսկ աշակերտասեր ուսուցիչը, իր հետ տարածներին երկու խմբի բաժանելով, ոմանց (Եդեսիա քաղաքում) ասորական դպրության կարգեց և ոմանց, հունական դպրության կարգելով, այնտեղից ուղարկեց Սամոսատ քաղաքը։

[Ը]

Եվ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տքնությունները, արտասվալից պաղատանքները, խստակեցություններն ու դառնահեծ մտածմունքները՝ հիշելով մարգարեի ասածը, թե՝ «Երբ որ հեծեծես, այն ժամանակ կապրես»։

www.a-pdf.com

Եվ այսպես նա շատ տանջանքներ կրեց իր ազգին մի բարի օգուտ գտնելու համար։ Ամեն բան պարգևող Աստծուց իսկապես շնորհվեց նրան այդ բախտը։ Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր։ Այնտեղ էլ իսկույն նշանակեց, անվանեց ու դասավորեց գրերը...

Ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին՝ իր օգնականների հետ իջավ Սամոսատ քաղաքը, ուր պատվականորեն մեծարվեց եպիսկոպոսից ու եկեղեցուց։

Եվ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրիչ, Հռոփանոս անունով, որի ձեռքով նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկարը, առանձինն ու կրկնավորը, ամբողջապես որոշելուց և վերջացնելուց հետո ձեռնարկեց թարգմանություն անելու իր երկու աշակերտների հետ։ Նրանցից մեկի անունը Հովհան էր, եկեղյաց գավառից, իսկ երկրորդինը՝ Հովսեփ, Պազնական տնից։ Եվ սկսեց թարգմանել սուրբ Գիրքը՝ նախ ընտրելով Սողոմոնի առակները, որը հենց սկզբում հանձնաբարում է ծանոթ լինել իմաստության, առելով, թե՝ «Ճանաչել իմաստություն և խրատ, իմանալ հանճարի խոսքերը»։ Սա նույնպես գրվեց այն գրչի ձեռքով՝ տեղնուտեղը աշակերտներին սովորեցնելով գրչության գործը։

[Թ]

...Այնուհետև, ավետագիր թղթեր առնելով ու բաժանվելով նրանցից՝ շնորհատուր պարգևներով և բոլոր յուրայիններով Աստծու օգնությամբ ճանապարհ ընկավ, օթևաններ անցավ հաջողությամբ և հոգեկից ուրախությամբ եկավ, հասավ Հայաստան աշխարհը, Արարատյան գավառի կողմերը, Նոր քաղաքի սահմանների մոտ, Մեծ Հայքի արքա Վռամշապուհի (թագավորության) վեցերորդ տարում։

Մեծ Մովսեսն էլ այնքան ուրախ չէր Սինա լեռնից իջնելու ժամանակ...

Եվ արդ, երբ հիշելին եկավ, մոտեցավ թագավորական քաղաքին, այդ մասին հայտնեցին թագավորին և սուրբ եպիսկոպոսին։ Նրանք, առած իրենց հետ նախարարական ավագանու ողջ բազմությունը, դուրս ելան քաղաքից և Ոհմ գետի ափին դիմավորեցին երանելիին։ Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո՝ այնտեղից ցնծության ձայներով, հոգևոր երգերով ու բարձրաձայն օրհնություններով վերադարձան քաղաք և տոնական ուրախությամբ անցկացրին օրերը։

[ԺԱ]

Այնուհետև անցնելով աստվածային գործի մշակությանը՝ սկսեցին ավետարանական արվեստը՝ թարգմանել, գրել և սովորեցնել, մանավանդ որ աչքի առաջ ունեին Տիրոջ բարձր հրամանները, ավանդված աստվածային բարձր պատգամները, որ տրվել էին երանելի Մովսեսին բոլոր եղած բաների մասին մատյանի մեջ գրել՝ գալիք հավիտենականությանը պահ տալու համար, այլև ուրիշ մարգարեներին տրված նույնպիսի հրամանները։...

Ուստի և մեր երանելի հայրերը, թուլտվություն ստանալով, իրենց գործունեությունը հուսալի ջանքերով դարձրին երևելի և արդյունարեր՝ ըստ Ավետարանին։

www.a-pdf.com

Այն ժամանակ անտարակույս սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասով, և առաջադեմ Պողոսը՝ բովանդակ առաքելական գնդով ու Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին միանգամից եկան, հայաբարբառ, հայերենախոս դարձան։

Ի՞նչ սրտալիր ուրախություն էր այնտեղ այնուհետև և ի՞նչ հաճելի տեսարան աչքի համար։ Որովհետև մի երկիր, որ նույնիսկ չէր լսել այն կողմերի անունը, ուր բոլոր աստվածային սքանչելի գործերը կատարվեցին, շատ շուտով, իսկույն իմացավ բոլոր եղած բանները, ոչ միայն այդ ժամանակ կատարվածները, այլև ավելի առաջ հավիտենականության և հետո հաջորդածների՝ սկզբի և վերջի աստվածապարգև բոլոր ավանդությունները։

[ԺՐ]

Իսկ երբ իրերի ճշմարտությունը հաստատվեց, ապա ավելի համարձակ և ավելի շատ էին նորագյուտ ուսման համար աշակերտներ ժողովում՝ սովորեցնելու, կրթելու և անգետ մարդկանց ավետարանելու համար քարոզիչներ պատրաստելու։ Նրանք իրենք էլ հենց Հայաստան աշխարհի զանազան կողմերից ու գավառներից բազմությամբ վեր կենում, գալիս, հասնում էին աստվածային գիտության բացված աղբյուրը։ Որովհետև Արարատյան գավառում, թագավորների ու քահանայապետների նստավայրում հայերի համար բխեց Աստծու պատվիրանների շնորհքը։...

Եվ իսկապես՝ եկեղեցու սյուներն սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու այլևայլ տեղերը խումբ-խումբ ուղարկել ճշմարտության աշակերտներիս՝ գիտության մեջ կատարելության հասածներիս, որ կարող էինք ուրիշներին էլ սովորեցնել։...

Եվ իրենք աստվածային իմաստությամբ կրթեցին հենց իրենց մոտ եղած արքունիքը՝ ազատագունդ բանակով հանդերձ։ Երանելի Սահակն ուսման վարժությամբ ավելի զբաղեցնում էր Մամիկոնյան մարդկանց, որոնցից առաջինի անունն էր Վարդան, որը նաև Վարդկան էր կոչվում։ Նույնպես և ամեն մարդու նա աշխատում էր կրթել, հասկացնել ճշմարտության գիտությունը։

www.a-pdf.com

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

(Ե ԴԱՐ)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Առաջաբան

1. Նավարկողների բուռն ու բաղձալի իղձն է խաղաղությամբ հասնել նավահանգիստ: Ահա թե ինչո՛ւ ընչաքաղց և օգտածարավ մարդիկ ընդոստ ալիքների վրա և մրրկածին օդին ընդդեմ մարտի են պատրաստվում. նրանց ի մի հավաքված բազմությունը, միացյալ ուժերով, թիավարում է փայտաշեն և երկաթե բեռներով ամրացված սրընթաց նավերը. քաջալերելով միմյանց, սրտերը լի կասկածով ու երկյուղով, ձիարձակ արշավում են կապույտ դաշտում, անքաշ երթով և չընթացող ոտքերով թռչում են ծովի կուտակադեզ ալիքների և ջրերի հորձանքների վրա: Ուր բարկացայտ ալիքները կուտակվում են լեռնաձև, խոնարհվում ելևէջներով, ըստ քանքարավոր քնարահար Դավթի երգի՝ «Ելնում են՝ լեռնանում և իջնում են— դաշտանում»: Ապա ծփանքներից ազատվելով յուրաքանչյուրն շտապում է իր գավառը: Մերձավոր սիրելիներին պատմում են այս զրույցը՝ ճանապարհին պատահած տաժանակիր անցքերը, անհանգիստ ալիքների հոսանքի վրա փոփոխական ելեէջները, թե ինչպես շահութաբեր օգտի համար վտանգի ենթարկվելով և մահվան դեմ մաքառելով՝ իրենց անձերը գրավ են դնում ի սեր բարեհաջող վաճառականության: Քանզի թեպետ տեսնում են հողակոծ տատանվող ալիքների ահեղ ոստյունը, որոնք ըստ ծփանքի ուժգնության երփներանգ գույներ են ստանում, փոփոխական կարգով ու փրփրադեզ հաջորդում են իրար, ավազով շրջագծված ափը դիմելով՝ [նավարկողները] հրճվում են, որ ցամաք են հասել:

2. Իսկ նրանք, որ ընդերքից խոխոջացող խոր անդունդի դիմաց ահաբեկված օրհասական վախճան են կանխատեսում, թեպետև տեսնում են, որ շարժվում են ահարկու, սարսափելի, բազմածուփ ջրերի վրա, այնուամենայնիվ հիշելով իրենց հաջողությունը՝ ջանում են դիմագրավել ահավոր ծովի ալեկոծությունը, որպեսզի թերևս հարստությամբ վերադառնալով՝ յուրաքանչյուրը խնդությամբ իր ընտանիքին ցույց տա ձեռք բերածը, իսկ դրացիներին՝ պարծանքի արժանի վաստակը: Կամենում են, ուր հարկն է, իրենց վրայից թոթափել աղքատ անունը և իրենց տառապյալ մերձավորներին ազատել գրավով հարկ պահանջող իշխանների բռնությունից. իրենց բերած շահույթից վճարում են նրանց պարտքերը, որպեսզի թագավորների հարկատվության լծից ազատվելով՝ թեթևանան: Այսպիսով նրանք բարություն են անում ընկերներին, պատվավոր ու հարգալի անուն վաստակում թշնամիների մոտ և ուրախություն պատճառում իրենց սիրողներին:

3. Սրա համար դաժան պայքարով մարտնչում են բարձրացող ջրեղեն լեռների ու իջնող ծովային ձորերի մեջ, ջանում են իրենց անձերի փրկության միջոց գտնել, որպեսզի ազատվելով խռովահույզ ծանր բքախառն փո-

www.a-pdf.com

թորիկների պատյաններից՝ կարողանան հասնել խաղաղ նավահանգիստ։ Քանզի արգարև շատ են այնպիսիները, որոնք ոչ թե ազահությունից են մահվան [վտանգի] ենթարկում իրենց, այլ աղքատության, կարիքի և հետին տնանկության պատճառով չեն տատանվում վտանգի առջև, շտապում են իրենց պարտականությունը կատարել, թերևս կարողանան գլուխները փրկել և պարտքերից իրենց ազատել։ Պարտքերի տակ ընկած լինելով՝ երազում են, որ թերևս կարողանան երկպատիկ օգուտ քաղելու ելքը գտնել, միաժամանակ գոհացնելով պարտապաններին, իսկ իրենց համար էլ առավելագույն շահ ապահովել։

4. Քանզի շատը նրանք են, որ այսպիսի սարսափելի աղետների գեպքում հոժարում են չարչարանքներով վաճառականական գործի մեջ մտնել։ Շատերն էլ կան, որոնք իրենց հարստությունը երկրի օգտին են գործածում, թագավորներին զարգարում են ծանրագին մարգարիտներով, զանազան պատվական քարերով և երփներանգ գունագեղ կերպասներով։ Նաև բարձրացնում են աղքատներին, փոքր-ինչ հարգանքի արժանացնելով, և երկիրը զարգարում են նոր ու չքնաղ բարիքներով։ Նրանք բավարարում են կարիքները՝ մեծամեծ օգուտներ տալով, կարիքավոր մարդկանց պետքերն են հոգում, շատերին սնում են։ Նրանք բժիշկների տները լցնում են տեսակ-տեսակ անուշահոտ խնկերով, օգտակար գեղերով, բժշկական տենչալի օգտակար արմատներ բերելով, կարիքավորներին գոհացնում են։ Քաղաքների զարդ են նրանք և գավառների հպարտություն, երկար ճանապարհների չափարարներ են, աշխարհի ճամփորդներ և օտարություն ճաշակողներ։ Նրանք ամենքին խնդացնում են և շատերին ուժ տալիս, իսկ աշխարհին՝ կարողություն, մերկերին հագցնում են, քաղցածներին հագեցնում, ծարավներին արբեցնում են և հարուստների համար գանձեր հավաքում։

5. Թեպետև նրանք բռնությամբ են հարկի տակ ընկած, սակայն սովոր են, վշտին դիմանալով, իրենց անձերը փրկել և այլոց ևս օգտակար կարող են լինել։ Այնուհետև հենց նույն սովորական իմաստությունը հաճելի դարձավ նրանց համար։ Երթևեկողները, սովորաբար ճանապարհորդելով և վաճառականությամբ շրջելով, փոքր գործեր անելով՝ հազարապատիկ ու բյուրապատիկ են գարձնում։ Ահա թե ինչու խոյանալով համատարած ծովի հուզված բազմաթիվ ալիքների մեջ՝ գրոհում են ոչ թե իրենց կամքով, այլ փչող քամու հոսանքով, բռնի քշվելով լայնատարած հորձանքի վրա՝ տարուբերվում են օգուտ գտնելու համար. իրենց անձերը մահու և կենաց մեջ են դնում, անձամբ խորքերի [վտանգներին] են մատնվում, ընտրություն են կատարում մահու և կենաց միջև և երկուսից մեկն է նրանց բաժին ընկնում։

6. Նույն այս ձևով տեսնում ենք, որ նման մի հարկադրանք, մեզ էլ հասնելով, առավել ստիպում է նավարկել իմաստության ծովի վրա, քանզի մարդկանցից ոչ ոք չի կարող ամենևին հանձն առնել նման քրտնաջան աշխատանք, եթե հասած իշխանական հրամանը՝ ստիպելով այս բանը շուտափույթ անել չտա։ Ով ո՞վ կարող է խրոխտանալ ծովի անդունդ խորքերը քննելու, այլ [մարգիկ] պարզապես երկար ճանապարհորդությունների մեջ վաճառքի անձնական շահն են միայն կամենում ձեռք բերել։ Սույն օրինակով և մենք ոչ թե հանդգնությամբ, երեխայաբար և անմտորեն առաջ նետվեցինք, այլ ակամա ընթանալով, ըստ հարկադրող իշխանների բռնի հրամանների, նավարկեցինք պատմության մատյանների այս ծովի վրա։

7. Քանզի թագավորական հրամանը հարկ դրեց մեր մտավոր աղքատ գանձարանի վրա, պահանջելով մեզանից՝ անցած գեպքերի նկարագրությու-

www.a-pdf.com

նը տալ և մատենագրել մեզանում կատարված հայտնի պատմություններ։ Սակայն չափազանց ջանք ենք թափել՝ մեր հետնորդներին թողնելու դեպքերի շարքի դար առ դար հիշատակումը։ Ոչ թե մեր կամքով հոժարեցինք, հանձն առանք այն գործը կատարել, այլ չկարողանալով ընդդիմանալ արքայատուր հրամաններին, պատմելու ենք ըստ [այդ] հրամանների, որչափ մեր ուժն է ներում։ Հանձն առնելով այդ աշխատանքը՝ սկսեցինք խոսքի վաճառականությունը, երկյուղածությամբ տանք պատմության գեղեցիկ շարադրանքը։ Ուստի կատարված դեպքերը և մահկանացուների մատենագրությունը քննելով, մանրակրկիտ զննելով՝ մեկ առ մեկ, ըստ պատմության կարգի, օրենքի, ժամանակի և մեր ստացած հրամանների՝ շարադրենք։

8. Իսկ հոգևոր արժեքների վեհությունը, որ աստվածասերների համար մեծություն է, նման է թանկագին մարգարիտի, նուրբ բոլորակաձև, լուսավոր, հազվագյուտ, որը չունի բիծ կամ արատ իր ճաճանչավոր փայլի մեջ, այլ առատորեն զարդարում է թագավորների վայելուչ թագերը և կամ Հընդկաց աշխարհից բերված թանկագին քարերի [նման], որոնք վայելուչ զարդով, խույրով ու պսակով զարդարում են թագավորներին։ Իսկ արդյոք այս բոլորը ինչպե՞ս կարող է ուրիշ մեկի կողմից հեշտորեն գտնվել, եթե ոչ երկայն ուղիներ անցնող վաճառականների կողմից, որոնք, մեծ չարչարանքով երկար ճանապարհներում բավականաչափ պաշար օգտագործելով, մեծ ջանքերով գտնում են դրանք և զարդարում թագավորներին։ Իսկ սրանց լույսի ճաճանչը, որ մենք վաճառքի ենք հանում, ոչ միայն թագավորի գլուխն է զարդարում, ի տես այլոց, այլև ամենքին է զարդարում, լուսավորում, ճոխացնում, ամենքին է գոհացնում, մխիթարում, բժշկում, թագավորներին շքեղացնում է փողփողուն վերջավորությամբ արտախույր պսակի նման, աղքատներին ճոխացնում է, թոթափում, բարձրացնում աղբակույտից և հավասարեցնում իշխաններին, ինչպես նաև երկրները լցնում է օրհնությամբ, իսկ տարին բոլոր՝ քաղցրությամբ։

9. Սրանք նաև կարիքներն են բավարարում երկնային առատությամբ, չարչարվածներին հանգիստ են բերում, առատ դարման են տալիս չի ամենայն բարիքներով, նրանք կարող են բժշկություն տալ առանց դեղերի, խունկերի, արմատների, շենություն կարող են շնորհել քաղաքներին իրենց Տիրոջ մարդասիրությամբ, մեծացնել երկիրը՝ իրենց նահատակության աղոթքներով և ցույց տալ երկնային ճանապարհների ելքը՝ առ Աստված բարձրանալու համար։ Ուղեցույց են Աստծու արքայության ճանապարհների։ Նրանք են, որ իրենց Տիրոջ համար չարչարված մեռան, անմահացան և իրենց անունն ու խիզախության պտուղները աշխարհին թողեցին։ Կյանք են նրանք ու փրկություն նրանց համար, որոնք մեղքերով են աղքատացած, նրանք երկնավոր արքայի մեծության գանձ են՝ երկրում ծածկված, իրենց հավատքով խնդացնում են և ուրախացնում այնպիսիներին, որոնք Աստծով ճոխացած գանձում են։ Նրանք հագցնում են մերկերին և նրանց, որ Ադամի նման մեղքերով մերկացած են, լուսավոր պատմուճաններով զգեստավորում են, հագեցնում են քաղցածներին, որոնք անգիտության մեղքերի պատճառով սովյալ են, ծարավներին արբեցնում են առաքինության բաժակով և երկնային գանձը տալիս են նրանց, որոնք առավելագույնն ունեն, քանզի «ով որ ունի, կտրվի նրան և կավելացվի»։ Նրանք մարդասեր Քրիստոսի գթության դռները բաց են անում ամենքի համար։ Հենց սրա համար էլ սիրեցին իրենց Տիրոջը ու սիրվեցին նրանից և բարեխոսությամբ բավարարում են բոլոր կարիքները։

www.a-pdf.com

10. Այսպիսի մարգարիտը ոչ միայն հոգիների, այլև մարմինների զարդ ու պայծառություն է: Նման մարդկանց բարեխոսությամբ է, որ Աստված աշխարհին շենություն է պարգևում, քանզի աստվածային գութը, նրանց վրա իջնելով, ողորմություն և քավություն է շնորհում աշխարհին: Ահա թե ինչու աշխարհիկ մեղքերի մրրկահույզ ծովի վրա նավարկողները իրենց վտանգեցին՝ համբերությամբ պատերազմելով ալիքների դեմ, սահեցին [ծովի] խորությունների վրա, հասնելու համար երկնային նավապետի խաղաղության նավահանգիստը: Ազատվելով դաժան բքից և հասնելով քաղաք՝ նրանք պարծանքի պսակ մատուցեցին լուսավոր Թագավորին, պատրաստվելով հավիտենական ուրախության, թանկագին մարգարիտով առևտուր և պսակված հոգևոր լույսի թանկարժեք քարերով: Նրանք իրենց կյանքը վաճառքի հանեցին իրենց տանջանքի մատնողների համար, մեծացան անանց հարստությամբ և աշխարհի շինությունը կանգուն, անվթար ու անշարժ են պահում իրենց հավատքի նավերի վրա:

11. Իսկ այսպիսի ապրանքին ո՞վ արդյոք ի՞նչ գին կարող է տալ. այո՛, այո՛, չափազանց լավ. միայն [պետք է] հոժար կամքով, սիրով լսելիքը տրամագրել, հավատքով սրել ականջները, որպես պատգամների ընդունարան, և իսկույն պատվական ծանրագին մարգարիտը, սրտի [բարի] կամքով, զարդ կդառնա, որպես ականջից կախված գինդ: Միայն խոնարհիր գլուխդ, և հոգևոր պսակը անմիջապես կդրվի գլխիդ ու դա կզարդարի քեզ առավել, քան թանկագին քարերը: Միայն համաձայնվիր արքայական կոչունքին և այն ժամանակ խորտիկների քաղցր անուշությունը քո բիմքը կպարարի: Միայն ծարավ եղիր սիրո, և իսկույն կենդանության աղբյուրը կհագեցնի քո տոչորուն ծարավի երաշտը: Միայն մաքրիր քեզ աղտից, և իսկույն անթառամ ու լուսավոր զգեստը կզարդարի քեզ, առավել քան անուշահոտ շուշան ծաղիկը:

12. Արդ՝ չանք հանձն առնելով մտնել պատմության մատյանների խորության մեջ, խոսքը կուղղեմ նրանց, որ կամենում են իմաստությամբ ունկընդիր լինել օգտակար պատմությանս: Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս, որ մեծ Հռոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությամբ, տովորել եմ լատիներենն (հռոմայերեն) ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ [մնացել] նշանագրերի արվեստին: Սրա հետ մեկտեղ եկել եմ Արշակունու արքունիք, քաջ և առաքինի, ուժեղ և պատերազմող Տրդատի տարիներին, որը, բոլոր նախնիներից կորովի լինելով, արիությամբ գերազանցել է նրանց, եղել է ըմբշամարտիկ և պատերազմների մեջ հսկային վայել քաջություններ է գործել: Մեզ հրամայեց ոչ իր քաջագործությունները սուտ վիպասանել և ոչ էլ արժանիքներից ավելի քմազարդ առասպելները չափազանցել, այլ շարադրել եղած դեպքերը՝ [տալով նկարագրությունը] հարափոփոխ ժամանակների հանգամանքների, մարտամբոխ պատերազմների, սրակոխ կոտորածների բազմահեղ արյան, իրար բախվող անթիվ զորքերի, երկրների, [ժողովուրդների] գերության, գավառների ավերածության, քաղաքների կործանման, ավանների ավերման, մարդկային բազմությունը կոտորելու՝ քինախնդիր վրիժառության քաջության համար:

13. Արդ՝ ինձ հրաման է հասել Տրդատ մեծ արքայից՝ կարգով գրի առնել ժամանակների դեպքերը, պատմելով նախ քաջ Խոսրովի հայրենական պատերազմների ժամանակ կատարած քաջությունները, տերության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ամեն կողմ ուղղված հարձակումները, ազգե-

www.a-pdf.com

րի խռովությունը, քաջ Խոսրովի մահը, թե որտեղից, ինչու կամ ինչպես այդ պատահեց և կամ ինչ անցուդարձ կատարվեց. ազնվահայր Տրդատի քաջության մասին, իր թագավորության ժամանակ արած գործերը: Եվ Աստծու սիրելի նահատակների մասին, թե ինչպես կամ ինչու եկան, ծագեցին իբրև լուսատուներ՝ փարատելու համար մեզը մեր Հայաստան աշխարհից, թե ինչպես իրենց անձերը նվիրաբերեցին Աստծու ճշմարտությանը, կամ ինչպես Աստված գթալով այցելեց մեր Հայոց աշխարհը, մեծամեծ հրաշքներ ցույց տվեց մի մարդու ձեռքով, որը համբերությամբ և հաղթությամբ տարավ բազում ու տեսակ-տեսակ փորձություններ և կաշկանդող վշտի մեջ Արտաշատ քաղաքում մենամարտիկ եղավ երկպատիկ բռնության դեմ, Հանուն Քրիստոսի հաջողությամբ դիմացավ և նահատակի անուն ժառանգեց: Հասավ մինչև մահ և Աստծու կամքով ետ դառնալով այնտեղից՝ մեր Հայոց երկրում վերակացու դարձավ: Մտավ մահվան դուռը, ապա Աստծու կամքով վերադարձավ՝ դառնալով Քրիստոսի վարդապետության պատգամավորը, Աստծու մարդասիրական հրաշագործ պատժից հետո: Իսկ երախտավոր Տրդատը, կամովին դժվարին կյանք ընտրելով, ամենքին ցանկալի գարձավ, Աստծու շնորհներով իր բնաշխարհիկ հայրենիքի որդին եղավ և հավիտենական կյանքին մերձավոր դարձավ:

14. Արդ, մեր այս գրված օրինակի մեջ, ոչ թե հին ավանդություններից տեղեկանալով այս [բոլորը] կարգով մատենագրել ենք, այլ մենք ինքներս ականատես ենք եղել անձնավորություններին և ներկա՝ հոգևոր գործերին և լուսավոր շնորհապատում վարդապետությանը, ավետարանական հրամանների համաձայն, և թե ինչպես լուսավոր վարդապետությունը, Աստծու շնորհիվ, բոլորից վեր դասվեց: Այս աստվածակարգ լծին հնազանդեցրեց թագավորը իր ամբողջ [ժողովրդին], մանավանդ ոչ թե նա էր [այդ անում], այլ մեծազոր Քրիստոսի կամքը: [Կնկարագրենք] թե ինչպես մեհյաններին տիրելով՝ հիմնահատակ կործանեցին և եկեղեցու սուրբ հիմքերը կանգնեցրին: Կամ ինչպես իրեն [Գրիգորին] երկրի հովիվ նշանակելով՝ վայելեցին նրա վարդապետությունը: Թե ինչպես Տրդատը կրկին գնաց Հունաց աշխարհը աստվածասեր Կոստանդիանոսի ժամանակ, որը Հունաց և Հռոմայեցոց երկրի թագավորն էր, ուխտ դրեց նրա հետ հաստատ մնալու աստվածապաշտության մեջ և այնտեղից վերադարձավ մեծ պարգևներով, բազում փառքով և շատ վայրեր Տրդատը նվիրեց Աստծո [պաշտամունքին]: Այս ամենը մեկ առ մեկ, կարգով կպատմենք, նաև Վարդապետությամբ սրբի, որն արժանի եղավ հասնելու եպիսկոպոսական մեծ աթոռին, ժառանգեց հայրապետական անունը և առաքինության մեծ մարտիկը եղավ: [Կպատմենք], թե որտեղի՛ց էր, որոնցի՛ց, ո՛վ կամ ո՛ր տոհմից էր նա, որ արժանի եղավ աստվածատուր շնորհքով այս բոլորը գործելու:

15. Արդ, կհեծնեմ մտքի երիվարը և կանցնեմ հանճարի ասպարեզը, կուղղեմ մտքի նպատակը: Թափ կտամ բազուկներիս ուժին ու կորովի մատներովս կսեղմեմ գրիչը, լեզվովս կարտահայտեմ մտքերս, և թող իմ շուրթերը կարողանան իմաստուն խոսքեր շշնջալ: Հաստատորեն կարգավորելով կպատեհցնեմ, կդարձնեմ խոսքերի պատմության անիվը, որպեսզի տիրաբար նավեմ ժամանակագրության ծովի ալիքների վրա: Կպատմեմ այս բաները ստացող մարդկանց և մեր ժամանակներից հետո եկող ազգերին, որոնք օրհնելու են տիրոջը, և հայրենի մատյանները պրպտելիս թող այս ամենը պատմվի նրանց և հաղորդվի կարգավորված ծրագիրը:

www.a-pdf.com

16. Ընթեռնելով Ավետարանի աստվածապարգև ավետիսները և կենաց խոսքը մեր Թորգոմյան ազգին և մեր Հայաստան աշխարհում քարոզելու, թե ինչպես կամ ինչպիսի մարդու կողմից ընդունվեց այն և կամ ո՛վ էր նա, որ այս նորոգատուր առաքելական շնորհները իր վրա վերցնելով՝ երևան եկավ այսպիսի աստվածեղեն շնորհքով, [կպատմենք] նրա լուսավոր վարդապետության և հրեշտակակրոն առաքինի վարք ու բարքի, աղնվական համբերության մասին այն շնորհալի մեծազոր նահատակի, որը Քրիստոսի խոստովանողը եղավ և ճշմարտության վկան։ Թե ինչպես դրանից հետո նրա աղոթքներով շենության ու խաղաղության, լիության, պտղաբերության ու բժշկության շնորհեց Աստված, եվ թե ինչպես նրա աստվածասիրության և Քրիստոսի պարգևած զորության շնորհիվ ընկավ փշրվեց ունայնության պաշտամունքը, և աստվածապաշտությունը տարածվեց ամբողջ մեր Հայոց երկրում, կամ թե ինչպես եկեղեցիներ շինվեցին մեր Հայաստան աշխարհում, և ջնջվեցին անոտի պաշտամունքները, որոնք նախնիների սովորական մոլորության հետևանքով իզուր ընդունված և մոլորեցուցիչ, կեղծ քարերի ու փայտերի հիմարություններն էին և անզգայության կռապաշտ թմրությունը։ Այս բոլորը անմտություններով արբեցած, մեղքերի ջրայնությամբ զարհուրած, դիվահար մրուրով ընթանում էին չար ու ծովացած մեղքերի մեջ։ Իսկ [ս. Գրիգոր] Քրիստոսի կամքով արդարուսույց քարոզ կարգաց մեր ամբողջ Հայաստան աշխարհին, որ չկապվեն մեղքերի գարշապարին այս ծովանման աշխարհում, այլ հասցնելով Աստվածահոր շինության հողմախաղաղ անդորր նավահանգիստը՝ նրանց այնտեղ մշտնջենական կյանքի օթևաններ պատրաստեց։

17. Իսկ ես, անցնելով, սահելով, պտտվելով, հորձանախոր, լայնանիստ, հարաճոճ, անդնդապատույտ, սարսռասեր, անհանգիստ, արշավասույր, հողմավար, ջրակուտակ, խռովահույզ և մոլեգնած սրընթաց ալիքների վրա ձգտել եմ հասնել կղզիներ, քաղաքներ և հեռարնակ երկրներ՝ գտնելով, լցնելով մեծաբեռ ծանր ապրանքներ, թանկագին ու հարգի իրեր, որպես զարդ և օգուտ, ու եկել ապահով տեղ եմ հասցրել ձեր օգտի համար։ Փութանք բացել մեր վաճառականական խանութների առևտուրը, վաճառենք ունկնդիրներին մեր աշխատանքի արդյունքները՝ ստանալով նրանց ունկընդրությունը և տալով մեր այս պատմությունը։ Մանավանդ քո հրամանի համար, ով քաջ այր՝ Մեծ Հայքի Տրդատ արքա, բերելով մեր առևտրի շահը ի նպաստ երկրի շենացմանը՝ ավելացնենք քո գանձը մեր՝ նավաստիներիս ծովի վաստակով։

125. ԺԲ. Սրանից հետո հրաման տվեց Տրդատ արքան հրովարտակ տանել իր իշխանության բոլոր երկրները հետևյալ օրինակով՝

126. «Մեծ Հայքի Տրդատ արքայից՝ մեծամեծներին, իշխաններին, նախարարներին, գործակալներին և այլ մարդկանց, որոնք իմ իշխանության ներքո են գտնվում՝ ավաններում, շեներում, գյուղերում ու ագարակներում, ազատներին ու շինականներին՝ աղջույն՝ բոլորին միաժամանակ։

127. Թող աղջույն և խաղաղություն հասնի աստվածների օգնականությամբ, պարարտ լիություն՝ արի Արամազդից, խնամակալություն՝ Անահիտ տիկնոջից, քաջություն ամենայն Հայոց աշխարհիս՝ քաջն Վահագնից։ Թող Հունաց իմաստությունը հասնի կայսերական գաստակերտիդ և հոգատարություն լինի մեր դիցախառն պարթևներից, թագավորների փառքից և քաջ նախնիներից։

www.a-pdf.com

128. Ամեն ոք թող գիտենա ձեզ ուղարկած մեր հրամաններից, որ հոգացող ենք ձեր շենության համար, քանզի երբ մենք Հունաց աշխարհում էինք, այնտեղ տեսանք թագավորների հոգացողությունը իրենց երկրի շենության նկատմամբ, աստվածների բագինները պատվելը՝ շինվածքներով ու զոհեր մատուցելով, երևելի զոհաբերություններով, տեսակ-տեսակ նվերներով ու ընծաներով, ամեն ինչից ընտիրը նրանց մատուցելով, [տեսանք] պաշտամունքի մեջ ջերմեռանդությունը շքեղացնելով ու զարդարելով և երեվելի, հոյակապ, աննեղծ աստվածներին մեծարելով։ Այն ևս տեսանք, որ նրանց աստվածների շնորհիվ բազմամբոխ, հոծ, խաղաղ, մարդաշատ շենություն կա՝ առատ լիությամբ, [քանզի] աստվածներն իրենց կողմից փոխադարձելով խաղաղություն են շնորհում, [ուստի] ամենալի բարությամբ մեծարված՝ խաղաղորեն վայելում էին բարիքները։

129. Այս բանի համար թագավորները, պատվիրելով ահաբեկել, մարդկանց վախեցնում են, որ շատացնեն աստվածների պաշտամունքը, և չինի թե խառնիճաղանջ, բազմամբոխ, խաժամուժ մարդիկ իրենց տգիտությամբ արհամարհեն, կամ թե որևէ մեկը հանկարծ խելագարությամբ համարձակվի արհամարհել աստվածների պաշտամունքը։ Թագավորների կողմից խիստ հրաման է տրված, որ իշխանները՝ յուրաքանչյուրն իր գործակալության մեջ, [դրանց] արմատախիլ անեն, որպեսզի աստվածների շնորհիվ շենությունը ավելանա, և եթե հանկարծ որևէ մեկը աստվածներին արհամարհի, աստվածների ցասումից մեծ վնաս հասնի նրան։ Այդպիսիք իրենց անձերը կորցնում են և մեծ պատուհաս են հասցնում իրենց երկրին։ Ահա թե ինչու Հունաց թագավորները իրենց երկրում սաստիկ հրաման են տվել՝ այդպիսիներին մահ սպառնալով։

130. Արդ՝ մենք ևս կամեցանք շենություն ապահովելու հրաման տալ, որ ձեզ ևս աստվածներից ամեն տեսակ առատություն և բարիք հասնի, որ դուք երկրպագեք նրանց ու փառավորեք, իսկ նրանք ձեզ շնորհեն շենություն, լիություն ու խաղաղություն, և ինչպես ամեն տանուտեր հոգ կտանի իր տանն ու ընտանիքին, նույնպես և մենք կհոգանք մեր Հայոց աշխարհի շենության համար։

131. Ուստի և բոլորդ՝ նախարարներ, մեծամեծներ, ազատներ, գործակալներ և մեր թագավորության սիրելիներ, շինականներ, բնիկներ և մեր Արշակունյաց տան ձեռքի տակ սնված ու դաստիարակվածներ, որոնց փայփայել ու սնուցել ենք, խնայել ու առաջնորդել, հոգալով մեր ընդհանուր օգտի մասին, [հրամայում ենք], որ պատվեք աստվածներին։ Արդ՝ եթե հանկարծ գտնվի որևէ մեկը, որ աստվածներին անպատվի, և այդպիսին հայտնաբերեն, ոտքերը, ձեռքերն ու պարանոցը կապած պետք է նրան բերեն արքունի դուռը, իսկ նրա տունը, կյանքը, ինչքը, ստացվածքն ու գանձերը ամենը թող լինեն նրանց, որ այդպիսիներին հայտնաբերում են։ Ողջ եղեք բոլորդ օգնականությամբ աստվածների և մեր թագավորներիս, որոնց հրամանը կատարում եք և թող բոլորդ բնակվեք շենության մեջ, քանզի մենք ինքներս իսկ ողջ ենք»։

132. Իր իշխանության բոլոր տարիներին Տրդատ թագավորը, սպասելով պարսից տերությանը, կամենում էր վրեժ լուծել պատերազմներով։ Իսկ այն տարիների ընթացքում, երբ Գրիգորը վիրապում էր՝ գրեթե տասներեք տարի, Տրդատը սաստիկ մարտ էր մղում պարսից թագավորի դեմ իր կյանքի բոլոր օրերում։

www.a-pdf.com

133. Մի այլ հրովարտակ ևս հրամայեց գրել իր իշխանության տակ եղած երկրներին ու գավառներին սույն օրինակով.

134. «Մեծ Հայքի Տրդատ արքայից՝ երկրներին, գավառներին, նախարարներին, զորքերին, շինականներին և ամենքին ողջույն։ Ողջ եղեք, իսկ մենք ինքներս իսկ ողջ ենք։

135. Դուք ինքներդ գիտեք, թե ինչպես աստվածների օգնականությամբ սկզբից՝ մեր նախնիների օրերից, բազում հաղթություն, խաղաղություն էր շնորհված և կամ թե ինչպես բոլոր ազգերը նվաճված և մեզ հնազանդ էին։ Սակայն երբ չկարողացանք աստվածներին պաշտամունքով հաճեցնել, նրանց կամքը մեր նկատմամբ քաղցրացնել, ցասումով մերժեցին մեզ, զրկեցին մեծ տերությունից։ Մանավանդ քրիստոնյա աղանդի մասին պատվիրում եմ ձեզ, որ եթե գտնվի այնպիսին, որ հազար և բյուր դեպքից մեկ անգամ խափանարար լինի աստվածների պաշտամունքին, այդպիսին եթե գտնվի, [պետք է] շուտափույթ հայտնաբերվի, և արքունիքից պարգևներ ու պատիվներ շնորհվի հայտնաբերողին։ Իսկ եթե որևէ մեկը չհայտնի կամ թաքցնի այդպիսին, և ապա գտնվի, մահապարտ կհամարվի, արքունի հրապարակը բերվելով՝ կսպանվի, և նրա տունը արքունիքին կտրվի։

136. Արդ՝ ինչպես որ ես չխնայեցի իմ վաստակավոր Գրիգորին՝ իմ սիրելիին, որին հենց նման պատճառներով չարաչար ու սաստիկ տանջանքներով տանջեցի և դրանից հետո նրան անմատչելի խոր վիրապ նետել տվեցի, որպեսզի իսկույն օձերին կերակուր դառնա, նույնիսկ նրա մեծ վաստակը նկատի չունեցա ի սեր աստվածների ու նրանց ահու, ապա թող ձեզ էլ ահ լինի և մահվանից երկյուղ, ուստի մնացեք աստվածների հովանավորության տակ և մեզանից բարին կգտնեք։ Ողջ եղեք, իսկ մենք ինքներս ողջ ենք»։

137. ԺԳ. Այդ ժամանակներում պատահեց, որ Դիոկղետիանոս կայսրը կամեցավ իր համար կին առնել, և այնուհետև իր տերության բոլոր կողմերը սկսեցին շրջել նմանահան ճարտար նկարիչներ, և դեմքի գեղեցկությունը, մրազարդ հոնքերը ճշգրտորեն, հաճակին հարմար, համապատասխան ներկերով նկարում էին տախտակների վրա, որպեսզի դեմ ցիմաց ցույց տան թագավորին՝ ի հաճույս նրա։

138. Այդ ժամանակ գալով Հռոմ քաղաքը՝ գտան կույսերի մի արգելավանք, որոնք լեռներում մեկուսացած, բուսակեր, ժուժկալ, պարկեշտ և սրբանվեր կանայք էին, քրիստոնեական հավատքով լի, որոնք գիշեր ու ցերեկ և ամեն ժամանակ փառավորությամբ ու օրհնությամբ իրենց աղոթքը արժանավորապես դեպի վեր՝ առ Աստված էին առաքում։ Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի ասան՝ աստվածապաշտ մարդու դուստրից՝ թագավորական տոհմից, որի անունն էր Հռիփսիմե։

139. Երբ եկան հասան, բռնությամբ մտան առաքինի կանանց սուրբ կայանը, տեսնելով պարկեշտագեղ Հռիփսիմեին, սքանչելի տեսիլքով ապշած, զարմացած՝ նկարը տախտակի վրա նկարեցին և թագավորին հասցրեցին։

140. Երբ թագավորը տեսավ Հռիփսիմեի կերպարանքի նկարի հիասքանչ վայելչությունը, կատաղի ցանկության տուփանքով լցվեց, քանզի հիմար, մոլեգին, անկարգ ցանկությունը ստիպում էր. [և նա] հարսանիքի ուրախության ժամ որոշելով՝ տագնապով շտապեց հարսանեկան ուրախությունն անել։ Այդ ժամանակ շուտափույթ դեսպաններ ու պատվիրակներ ուղարկեց բոլոր երկրները, որ ամենքը օժիտներ ու ընծաներ բերեին մեծ

www.a-pdf.com

հարսանիքին և քաղում ուրախությամբ ամենքը առհասարակ պային աքքայական փեսայի կարգը կատարելու՝ ըստ թագավորական օրենքների։

141. Երբ առաքինի [կույսերը] տեսան Քշնամու գաղտնածիգ նետերը, որով սովոր էր քրիստոսասեր սրբերին ծածուկ հարվածել, [հասկացան որ] թագավորը չարի գործիք է դարձել։ Ինչպես այնտեղ դրախտում օձին միջոց դարձնելով, պատվիրանը մոռացնել տալու համար, [սատանան] մտավ առաջին կնոջ անզգամ ականջը, նույնպես և այստեղ անօրեն թագավորին դիմակ դարձնելով՝ նրա միջոցով մարտնչում էր աստվածաշեն եկեղեցիների դեմ։

142. Իսկ որոգայթադիր Քշնամին թագավորին հպարտացնելով, ամբարտավանացնելով, գրգռում էր նրան հալածանք հարուցելու Աստծու եկեղեցիների դեմ, խելացնորեցնելով նրան, ստիպելով երկրպագել մեռելոտի ուրվականներին, սնոտի աստվածների ոսկեղեն ու արծաթեղեն, փայտեղեն ու քարեղեն և պղնձակերտ արձաններին ու պիղծ պաշտամունք կատարել։ Ամբարտավանորեն բարձրանում էր՝ եկեղեցու հավատքի հաստատուն վեմը հարվածելու, [սակայն] վեմին ոչինչ չկարողանալով անել, ինքը վեմի վրա խորտակվեց։ Այնուհետև մոլեգին ամբարտավանությանն ապավինելով՝ բազում և անչափ վնասներ էր հասցնում Աստծու եկեղեցիներին։

143. Բայց երանելի, պարկեշտասեր Գայանեն սրբասնյալ Հռիփսիմեի և իրենց այլ ընկերների հետ, հիշելով սուրբ ուխտը, իրենց ընտրած օրինավոր կրոնի գգաստության սրբությունը, ողջում էին իրենց անձերը նկարագույց հրամանի պատճառով, քանի որ պիղծ և անօրեն թագավորը տեսնելու էր իրենց պատկերները։ Ճգնությամբ աղոթք մատուցեցին՝ օգնություն խընդրելով բազումողորմ Տիրոջից՝ փրկելու այն փորձությունից, որ հասել էր իրենց։ Նվ աղաչանքի մեջ այսպես էին ասում նրանք.

144. «Տեր տերանց, Աստված աստվածոց, հավիտենական Աստված, Աստված երկնքի, Աստված անճառ լույսի, որ ամեն ինչը հաստատեցիր քո խոսքերով, ստեղծեցիր երկինքն ու երկիրը և նրանց բոլոր զարդերը, մարդը կերտեցիր երկրի հողից ու իմաստուն դարձրիր, բազմացրիր նրան երկրի վրա և բոլոր դարերում օգնական եղար նրանց, որ քեզ հուսացին։

145. Արդ՝ մեզ ևս օգնիր, Տեր, այն պատերազմի մեջ, որով դու նեղում ես մեզ, որպեսզի հաղթենք սատանայի նենգություններին և թող փառավոր լինի քո անունը, Տեր, և քո եկեղեցու զորությունը բարձրանա, որ մենք ևս արժանի լինենք քո պատվիրանապահների արքայության օթևանները հանելու։ Թող մեր լապտերների մեջ ձեթի պակասություն չլինի և մեր սուրբ ուխտի հավատքի ճրագները չհանգչեն։ Մեր լուսավոր ճանապարհների վրա թող չհասնի կորստյան գիշերվա տխուր մթացուցիչը, մեր ոտքերը չդեղվեն քո լուսագնաց շավիղներից և մեր աչքերի բիբերը չկուրանան քո ճշմարտության զվարթարար ճառագայթներից։ Թող մահատարած թռչունը չհափշտակի կենաց բույսի սերմերը, որ մեր մեջ սերմանել է քո միածին Որդին՝ տեր մեր Հիսուս Քրիստոսը, ապստամբ գազանը չխլի քո սուրբ հոտի զգաստությունը, ապականիչ գայլը չհաղթի քո հոտի գառներին, և թող մեր ուխտի Քշնամին չցրի քո առաքելության սուրբ եկեղեցու ոչխարներին։

146. Տեր Աստված մեր, որ առաքեցիր քո միածին Որդուն, որ եկավ և ամբողջ աշխարհը լցրեց քո իմաստուն Հոգով, որպեսզի ամենքին Իսրայելում աստվածատես դարձնի։ Մենք լսեցինք, որ նա ասել է. «Թեպետ հա-

www.a-pdf.com

լածեն ձեզ քաղաքից քաղաք, դուք փախչելով չեք սպառի Իսրայելի քաղաք-ները մինչև իմ վերստին գալուստը»։

147. Արդ՝ խնայիր, Տեր, մեր անձերին, որ ապավինեցինք քո սուրբ անվանը, որպեսզի չհայտառակվենք հեթանոսների պղծության անարգան-քով և մեր սուրբ զգաստությունը մի հանձնիր նրանց վավաշոտ, անօրեն ու շնաբարո լկտիությանը և մեր հավատքի կուսության մարգարիտը նրանց ամբարշտության խոզագնաց շուվիզներին մի տուր։ Քող մոլորահողմ խաբեու-թյան և պղտոր ու վարար շրերի անհագ հորձանուտը չշարժի քո սուրբ եկեղեցու հիմքերը, որոնք բազմապատիկ աբդար վիմերով շինվել են այն հաստատուն քարի վրա, որի ավաբանման անկյան գլուխը եղավ մեր Տեր Հիսուս Քրիստոսը իր մարմնանալով, խաչի վրա մահվամբ, արյունը թա-փելով, հարությամբ և երկինք վերանալով ու նստելով քո աստվածության աջ կողմը, ուր կաս առաջ։

148. Արդ՝ Տեր, նայիր երկնքից՝ քո սրբությունից, որպեսզի չլինենք ավազի վրա շինված այն տան նման, որը խարխլեցին պես-պես փորձու-թյունների նեզիլ խառվաթյունները, այլ հաստատիր մեզ խաղաղության Ավե-տարանի ճշմարտությամբ և տուաշնորդիր մեզ ըստ քո կամքի։ Արժանի արա լույսի հարստանիքի դիշերին, երբ գիշերը ցերեկվա նման լուսավոր կգարձ-նես քս փառքի ճառադայթների ծագման ժամանակ։ Ապրեցրու մեզ քո թևերի տակ, և մենք կհասնենք քո կամքի նավահանգիստը։ Տուր մեզ հնա-րավորություն նահատակության բաժակը խմելու, որպեսզի փոխարենը առ-ևենք պսակը արդար դատաստանի օրը, երբ քո փառքը հայտնվի»։

149. Սրանից հետո սուրբ Գայանեն Հռիփսիմե սանով ու մյուս պար-կեշտ բնկերներով հանդերձ գնացին, հեռացան՝ փախուստ տալով, որպեսզի իրենց անձերը սրբությամբ պահպանեն հողաթափալ, մեղսաթաթավ, մեղան-չական, անօրեն ու դիվական մարդկանց խառնակությունից և արժանի լի-նեն հույսի կենդանության և լույսի հարության լիությանը հասնելու, առա-քելական սահմաններով անվախճան ապրելու հանդերձյալ դատաստանի ժամանակ և գահի աջ կողմը մտնելով՝ խոստացյալ բարիքներին հասնելու։ Անթառամ պսակներով զարդարված հինգ աստվածահաճո կույսերի հետ, բարի գործերով լուսավորված դրախտի նորոգ վայելչության հանգստությամբ աստվածային փեսայի հետ արդարների բազմաժողովին Աբրահամի սեղա-նակիցների անպակաս ուրախություններին լինել ժառանգորդ։ Ինչպես և Տերը Ավետարանի մեջ ասաց. «Ով իր բնակությունը թողնի իմ անվան համար, իմ մյուս անգամ գալստյան ժամանակ նրան հավիտենական կյանքի ժա-ռանգորդ կդարձնեմ»։ Նրանք ոչ թե սոսկ ժամանակավոր մահվանից էին փախչում, այլ անտանելի կատաղի և անօրեն ցանկություններից էին ճողոպ-րում։ Ոչ թե [ուզում էին] սոսկ իրենց մարմինները երկրայինների տան-ջանքներից, զրպարտությունից ազատել, այլ իրենց հոգիները սրբությամբ, առանց աղտեղության պահել անօրեն կրոնի մարդկանց անառակ, պիղծ ու աղտեղի խառնակությունից։ Իրենց անձերը պատրաստել էին բանտի կա-պանքների ու պատիժների, մահվան ու սաստիկ նեղությունների, Տիրոջ ան-վան համար սահմանված, որպեսզի արժանի լինեն՝ արդարության պսակին հասնելու։ Այս պատճառով, ի սեր աստվածային հրամանի, թողել էին իրենց ծննդավայրը, ինչքն ու ունեցվածքը, մերձավոր ազգականներին ու տոհմա-կիցներին և իրենց անձերը հրեշտակային զվարթ կարգով լուսավորել էին առաքինի վաքքով, որպեսզի կարողանան տեսնել Աստծուն։

www.a-pdf.com

150. Այն ժամանակ նրանք եկան-հասան Հայոց երկիրը, Այրարատ դավառը, Վաղարշապատ քաղաքը, որը նաև Նորաքաղաք է կոչվում՝ Հայոց թագավորների նստավայրը։ Այնուհետև եկան-մտան այգեստանների հընձանները, որոնք շինված էին հյուսիս-արևելյան կողմում։ Սնվում էին՝ իրենց ունեցվածքը քաղաքում վաճառելով, չունեին իրենց հետ ապրուստի միջոցներ, միայն թե նրանցից մեկը գիտեր ապակեգործության արհեստը, ապակյա ուլունքներ էր պատրաստում և իրենց օրական ապրուստի ու պարենի դրամն էին ճարում։

151. ԺԴ. Այդ ժամանակ սակավ խռովություն չբարձրացավ Հունաց աշխարհում. ամեն կողմերում լարված որոնում էին, սուրհանդակներ ուղարկում, որ թերևս կարողանան նրանց գտնել։ Դեսպան եկավ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ և ներկայացավ նրան Վաղարշապատ քաղաքում։ Երբ հրովարտակը մատուցեց նրան, սա վերցրեց այն ուրախությամբ։ Հրովարտակի պատճենն այս էր։

152. «Ինքնակալ կայսր Դիոկղետիանոսը մեր սիրելի եղբայր և աթոռակից Տրդատին, ողջույն։

153. Թող ի գիտություն լինի ոք եղբայրությանը և մեր նիզակակցին այն չարիքների մասին, որ ամեն օր հասնում են մեզ քրիստոնյաների խաբեբա աղանդից, քանզի ամեն բանում անարգվում է մեր տերությունը նրանց ուխտի կողմից, մեր թագավորությունը արհամարհվում է նրանցից և ոչ մի համեստություն չկա նրանց մեջ։ Մի ոմն խաչյալ մեռյալի են պաշտում, փայտին երկրպագում, սպանվածների ոսկորները հարգում և իրենց Աստծու սիրուն մահը փառք ու պատիվ են համարում։ Մեր արդար օրենքներով դատապարտվում են, որովհետև մեր նախնիներին՝ առաջին թագավոր հայրերին, դառնացնելով ձանձրացրին։ Մեր օրերը բթացան, իսկ նրանք չզարհուրեցին մեռնելուց, քանզի մոլորված են՝ ոմն խաչյալ հրեայի հետևելով։ Ուսուցանում են թագավորներին անպատվել, իսկ բուն աստվածների կուռքերը՝ անարգել։

154. Նաև լուսավորների՝ արեգակի ու լուսնի զորությունը աստղերով հանդերձ արհամարհում են և համարում են նույնիսկ այդ խաչյալի ստեղծածը։ Աստվածների կուռքերը անարգել սովորեցրին և ամբողջ աշխարհը նրանց պաշտամունքից հեռացրին, մինչև անգամ կանանց տղամարդկանցից ու տղամարդկանց կանանցից ողջ-ողջ հեռացնում են։ Թեպետև տեսակ-տեսակ տանջանքներ տվեցինք նրանց, առավել ևս բորբոքվեց ու տարածվեց նրանց աղանդը, և թեպետ բյուրապատիկ սաստիկ արհավիրքների ենթարկեցինք նրանց, սակայն նրանց արյան հեղումից առավել ևս ծաղկեց ու բազմացավ նրանց աղանդը։

155. Պատահեց, որ տեսա նրանց ուսմունքի աղանդից մի գեղեցիկ կույս օրիորդի և կամեցա նրան կնության առնել, սակայն հանդգնեցին նրան ևս ինձանից խորամանկորեն Հեռացնել։ Նրանք ոչ ցանկությամբ փափագեցին ինձ իբրև թագավորի, ոչ էլ իմ սաստիկ սպառնալիքներից որևէ վախ ունեցան, այլ իրենց աղանդի պատճառով ավելի ևս աղտեղի, պիղծ ու գարշելի համարեցին ինձ և սնուցիչ դայակի հետ նրան թաքուն ուղարկեցին ձեր տերության կողմերը։

156. Արդ՝ փութաջան եղիր, եղբայր մեր, որպեսզի ուր էլ լինեն այդ կողմերում, կարողանաս նրանց հետքը գտնել և նրա հետ եղածներին դայակով հանդերձ վրիժառությամբ մահվան արժանացնես, իսկ խաբված չքնաղագեղ կույսին այստեղ ինձ ուղարկես։ Իսկ եթե նրա գեղեցկությունը քեզ հաճո

www.a-pdf.com

թվա, այդտեղ մատդ կպահես, քանզի նրա նմանը երբեք չգտնվեց մեր Հունաց աշխարհում։ Ողջ եղիր աստվածների պաշտամունքով ամենայն պատվով»։

157. ԺԸ. Երբ ընթերցեցին սույն հրովարտակի թուղթը, արքան խիստ հրաման տվեց՝ պատվիրելով, որ իր իշխանության բոլոր վայրերը մանրակրկիտ խուզարկումով փութաջան որոնեն։ Շուտափույթ սուրհանդակներ ուղարկեց տարբեր կողմեր, որպեսզի ուր էլ գտնեն, անմիջապես մեջտեղ բերեն, իսկ ով որ գտնի նրանց, խոստանում էր մեծամեծ պարգևներով հատուցել։

158. Մինչդեռ Հայոց աշխարհի սահմաններում քննության իրարանցման մեջ էին, այն սուրբ վկաները եկան թաքնվեցին արքայական նստավայրի մոտ, նույն թագավորական Վաղարշապատ քաղաքում։ Այն օրերից քիչ անց, շուտով որոնումներով մեջտեղ բերվելով, հայտնի դարձան։

159. Սակայն ճշմարտությունը և առաքինության նահատակները երբեք չէին կարող թաքնված մնալ, և ոչ լույսի ճրագը [կարող է] ամանի տակ ծածկվել, ոչ էլ նստարանի ստվերի ներքո աներևույթ դառնալ, այլ ոսկով զարդարված աշտանակների վրա և պարարտ անուշահոտ յուղերով լի ոսկե կանթեղները, որպես արդարության հավատքի նշան, պետք է վառվեն և համապայծառ լույս [տան]։ Որպես և հենց իրենք իրենց առաջին աղոթքների մեջ աղաչում էին, ինչպես և Տերն էր ասել իր սիրելիներին, թե «Տեսնեն ձեր բարի գործերը և փառաբանեն ձեր Հորը, որ երկնքում է»։

www.a-pdf.com

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

(Ե ԴԱՐ)

ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՀ

...Պարսից Շապուհ թագավորը մեծ աղաչանքներով, ընծաներով և հրովարտակներով՝ Արշակ թագավորին սիրով իր մոտն էր կանչում, որ այնուհետև իրար մեջ սեր և խաղաղություն և մեծ բարեկամություն հաստատեն։ Իսկ Արշակ թագավորը թեպետև ուզում էր պատերազմ տալ, բայց Հայոց աշխարհի ողջ զորքը այս բանին չէր համաձայնում։ Ուստի նա կամա ակամա սիրտ արավ խոնարհությամբ հրովարտակ ուղարկել պարսից Շապուհ թագավորին՝ ինչպես հպատակն իր տիրոջը։ Իր կողմից էլ նրան հաշտության ընծաներ էր ուղարկում։

***

Սրանից հետո պարսից Շապուհ թագավորը դարձյալ [պատգամ] ուղարկեց հայոց Արշակ թագավորին և ասաց.

— Եթե ես և դու իրար հետ հաշտ ենք՝ ապա եկ, միմյանց հետ տեսություն անենք և այնուհետև իբրև հայր և որդի լինենք միմյանց, իսկ եթե չես գա՝ ուրեմն պատերազմ ես ուզում մեր երկուսի միջև։

Արշակը նրանից խնդրեց ուխտի հավատարիմ երդում, որ անկասկած լինելով գնա։ [Շապուհը] պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով՝ բերել տվեց աղ, կնքեց վարազագիր մատանիով և ուղարկեց [Արշակին, ասելով], որ եթե այդ երդումից հետո էլ չգա, ապա թող պատրաստվի պատերազմի։

Երբ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ այս տեսան ու լսեցին, ապա ստիպեցին, բռնադատեցին, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա, գնա, ներկայանա պարսից Շապուհ թագավորին։ Այնուհետև Արշակ թագավորը կամա ակամա վեր կացավ, վերցրեց իր հետ հայոց զորավարսպարապետ [Վասակին]՝ իր դայակին, ճանապարհ ընկավ Հայոց աշխարհից Պարսից աշխարհը, պարսից Շապուհ թագավորի մոտ. գնաց ներկայացավ պարսից Շապուհ թագավորին։ Երբ նրանց տեսան, երկուսին էլ՝ Արշակ թագավորին և Վասակ սպարապետին արձակ պահեցին ազնվական թիկնապահ զորքերի մեջ։

***

Ապա պարսից Շապուհ թագավորը կանչում է վհուկներին, աստղահմաներին ու քավդյաներին, նրանց հետ խոսում է ու ասում.

— Ես շատ անգամ կամեցա սիրել հայ Արշակ թագավորին, բայց նա

www.e-pdf.com

ինձ միշտ անարգեց: Ես նրա հետ խաղաղության դաշն կապեցի, և նա երդվեց քրիստոնեական կրոնի գլխավոր [սրբության] վրա, որին Ավետարան են ասում. նա այն երդումը ստեց: Ես բյուր բարիքներ կամեցա նրան անել՝ ինչպես հայրը որդուն, իսկ նա բարիքի դեմ չարիք ինձ հատուցեց: Ես Տիզբոն քաղաքի եկեղեցու երեցներին կանչեցի. կարծելով, թե նրանք նենգությամբ նրան երդվեցրին և ստել տվին: Երբ ես նրանց նախատում էի ինչպես մահապարտներին, ինձ ասաց նրանց գլխավորը՝ Մարի երեցը. «Մենք նրան արդարությամբ երդվեցրինք, իսկ եթե նա իր երդումը ստեց, ապա նույն Ավետարանը նրան էլի ձեր ոտքը կբերի»: Ես նրանց չլսեցի, և հրամայեցի նրանց... շլինքները կտրել մի գբի մեջ... Այն Ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց, շղթաներով կապեցի և այսպես մնում է իմ գանձարանում: Բայց միտքս եկան Մարի երեցի խոսքերը. հիշեցի, որ նա ասում էր. «Մեզ մի սպանիր. ես գիտեմ, որ նույն Ավետարանը Արշակ թագավորին կբերի, քո առաջ ծունկ կչոքեցնի»: Ահա նրա ասած խոսքերն հիրավի կատարվեցին: Որովհետև հայոց Արշակ թագավորը ահա երեսուն տարի է, որ արյաց հետ պատերազմ է մղում, և ոչ մի տարի մենք չկարողացանք հաղթել, իսկ այժմ ինքն իր ոտով ելել եկել է ինձ մոտ: Բայց եթե գիտենայի, թե այսուհետև նա ինձ հետ դաշնը կպահի հնազանդության անկեղծ ուխտով, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կարձակեի, որ գնա իր աշխարհը:

Քավդյաները նրան պատասխան տվին և ասացին.

— Այսօր մեզ ժամանակ տուր, վաղը քեզ կպատասխանենք:

Հաջորդ օրը բոլոր քավդյաներն ու աստղահմանները ժողովվեցին եկան և ասացին թագավորին.

— Հիմա, երբ հայոց Արշակ թագավորը եկել է քեզ մոտ, ինչպե՞ս է քեզ հետ խոսում, ի՞նչ լեզու է բանեցնում կամ ինչպե՞ս է իրեն պահում:

Թագավորն ասաց.

— Նա իրեն համարում է ինչպես մեկը իմ ծառաներից, ուզում է իմ ոտքի հողը դառնալ:

Նրանք ասացին թագավորին.

— Արա՛, ինչ որ քեզ ասում ենք, նրանց այստեղ պահիր, մարդ ուղարկիր Հայոց աշխարհը, բերել տուր այնտեղից, Հայաստանի սահմաններից մոտ երկու բեռ հող և մի ամանով ջուր: Հետո հրամայիր, որ խորանի հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը, ապա դու ինքդ հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած նախ տա՛ր խորանի այն տեղը, որտեղ բնական գետին է, և նրան հարցմունքներ արա: Հետո նրա ձեռքերը բռնած հայկական հող շաղ տված տեղը տար և լսի՛ր, թե ինչ կխոսի, և այն ժամանակ կգիտենաս, թե երբ նրան արձակելու լինես Հայաստան, քո ուխտն ու դաշինքը կպահի, թե ոչ: Որովհետև եթե հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի, իմացիր, որ Հայոց աշխարհը հասնելուն պես հենց նույն օրը նույն լեզուն կբանեցնի, նույն պատերազմը կնորոգի քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամությունը կշարունակի:

Պարսից թագավորը, քավդյաներից այս լսելով, մարդիկ ուղարկեց Հայաստան՝ ուղտերով՝ հողի և ջրի, որ գնան այդ հմայության նյութերը բերեն: Քիչ օրերից հետո եկան ու բերին... Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր խորանի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և ջուրը վրան ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնական հողով: Եվ հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ և մյուս մարդկանց հրամայեց հե-

www.a-pdf.com

ռանալ, և նրա ձեռքից բռնած ճեմելով շրջում էր։ Խորանում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան.

— Արշակ թագավոր հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար, ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ, իսկ դու իմ դեմ խստացար, ինքդ քեզանից, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր։

Արշակ թագավորը ասում է.

— Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալու, բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին։ Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առջև բերեց, ես հիմա քո առջև եմ, քո ծառան քո ձեռքի տակ է, ինչպես ուզում ես՝ վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես՝ քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ։

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում է ճեմելով և, իբրև միամտաբար, բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա։ Իսկ երբ [Արշակը] այն տեղն է հասնում, հայկական հողի վրա ոտք է դնում, սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով լեզուն փոխում է, սկսում է խոսել և ասել.

— Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը։ Որովհետև այժմ դուք, ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք։

[Շապուհը], դարձյալ նրա ձեռքից բռնած, տանում է պարսկական հողի վրա. այն ժամանակ [Արշակը] զղջում է ասածների համար, խոնարհվում է, նրա ոտքերն է ընկնում, սաստիկ ափսոսում, զղջում է ասածների համար։ Իսկ երբ ձեռքից բռնած տանում է հայկական հողի վրա, առաջինից ավելի խիստ է խոսում։ Նորից հեռացնում է այդ հողի վրայից՝ սկսում է խոսքերով ապաշխարել։ Առավոտից մինչև երեկո շատ անգամ փորձեց նրան, որ երբ հայկական հող շաղ տված հատակի վրա էր տանում, [Արշակը] խստանում էր, ամբարտավանանում էր, իսկ խորանի բնական հողի վրա յալխս էր, զղջում։

Երբ երեկո եղավ, պարսից թագավորի ընթրիքի ժամը հասավ, սովորություն այնպես էր, որ հայոց թագավորի համար բազմելու տեղ էին պատրաստում միևնույն տախտի վրա, իրար մոտ. օրենք էր, որ պարսից թագավորն ու հայոց թագավորը մի տախտի վրա էին բազմում, մի գահի վրա, իսկ այդ օրը նախ պատրաստեցին այնտեղ գտնված բոլոր թագավորների բազմելու տեղերը, և ամենից վերջը, բոլորից ներքև, Արշակի բազմելու տեղը պատրաստեցին, որի հատակում հայկական հող էին շաղ տվել։ Նախ բոլորը բազմեցին ըստ իրենց աստիճանների, հետո բերին... Արշակին։ Նա մի կարճ ժամանակ բազմեց, մնաց մուրթները կախած, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուհ թագավորին.

— Իմն է այդ տեղը, որտեղ դու բազմել ես։ Վեր կաց այդ տեղից, որ ես բազմեմ, որովհետև մեր (Արշակունյաց) ազգի տեղն է եղել այդ, իսկ եթե ես իմ աշխարհը դառնամ՝ քեզանից վրեժխնդիր կլինեմ։

Այն ժամանակ պարսից Շապուհ թագավորը հրաման է տալիս բերել երկաթե շղթաներ, կապել Արշակի պարանոցը, ոտքերն ու ձեռքերը, տա-

www.a-pdf.com

նել նրան Անդմըշն բերդը, որին ասում են Անհուշ բերդ, և կապած պահել այնտեղ մինչև մեռնի։

Հաջորդ օրը Շապուհ թագավորը հրամայեց իր առաջ բերել Վասակ Մամիկոնյանին, Մեծ Հայքի զորավար-սպարապետին։ Որովհետև Վասակը փոքր էր մարմնով, պարսից Շապուհ թագավորը ասաց նրան.

— Աղվե՜ս, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ և քաջերին չարչարեցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին, հիմա ի՞նչպես պետք է իմ ձեռքից ազատվես, ես քեզ աղվեսի մահով պիտի սատկեցնեմ։

Վասակ սպարապետը, պատասխան տալով, ասաց.

— Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա։ Բայց երբ ես դեռ Վասակ էի, ես հսկա էի. մի ոտս մի լեռան վրա էր, մյուսը՝ մյուս լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ կողմի լեռը գետինն էի կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էի գետին կոխում։

Շապուհ թագավորը հարցրեց և ասաց.

— Ջի՞ լինի ասես, այդ ի՞նչ լեռներ են, որ դու տափն էիր կոխում։

Վասակն ասաց.

— Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ հունաց թագավորը, քանի դեռ Աստված հաճ էր մեզ հետ, քեզ էլ էի գետին կոխում, հունաց թագավորին էլ... Հիմա ինչ ուզում ես՝ արա։

Ապա Պարսից թագավորը հրամայեց՝ հայոց Վասակ զորավարի մորթը հանել, խոտով լցնել և տանել նույն Անդմըշն բերդը, որ Անհուշ է կոչվում, որտեղ բանտարկեցին և Արշակ թագավորին։

ՋՎԻԹ ԵՐԵՑԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Երբ Հայաստանի գերիներին տարան-հասցրին Պարսից աշխարհը, Արտաշատ քաղաքի Ջվիթ երեցին էլ կապկպած բերին պարսից Շապուհ թագավորի առաջ։ Նայեց Շապուհ թագավորը և տեսավ, որ Ջվիթ երեցը բարձրահասակ ու բարեկազմ տղամարդ է, երիտասարդ հասակով, բայց գլխի մազերը արդեն ալևորել՝ են, իսկ մորուքը դեռ սև է։ Ապա սկսեր հոսել և ասաց.

— Տեսնո՞ւմ եք այս մարդու չարությունը։ Հենց մազերից արդեն երեվում է, որ նա կախարդ է, որովհետև գլխի մազերն սպիտակ են, մորուքը՝ սև։

Իսկ երեցը պատասխան տվեց և ասաց.

— Եթե խոսել ես ուզում՝ խոսիր ինչ որ կամենում ես, բայց մազերիս մասին գիտցի՛ր, որ նրանք իրավացի են սպիտակել. որովհետև տարիքով շատ ավելի մեծ են, գոնե տասնհինգ տարի վաղ են բուսել, քան՝ մորուքս։

Թագավորը հրամայեց պահել նրան մինչև հաջորդ առավոտը։ Մյուս օրը նրան շղթայակապ հրապարակ բերին։ Եկան արքունական ոստիկաններն ու հայտնեցին, որ եթե հանձն առնի պաշտել մոգության օրենքը, այդ դեպքում չի մեռնի։ Իսկ նա հանձն չառավ, այլ կամեցավ ուրախությամբ մեռնել Աստծու համար։ Իր մահվան վերակացուներից խնդրեց թույլ տալ մի քիչ աղոթել։ Եվ առաջ անցնելով՝ ծունկի եկավ ու ասաց.

www.a-pdf.com

— Ո՛վ մեր Արարիչ, որ ոչնչից ստեղծեցիր երկինքն ու երկիրը և ծովը, դու ստեղծեցիր մեզ հողից և հողեղեններիս այսպես իմաստուն, բանական և կենդանի արարեցիր։ Դու մեզ շնորհեցիր քո գիտությունը, որ մարդկային ազգերին հայտնիր քո սուրբ մարգարեների՝ քո համբավաբերների միջոցով։ ...Եվ ինձ, անարժանիս, արժանավոր դարձրիր քեզ սպասավորելու, տառապյալիս հնարավորություն տվիր ուսանել և դաստիարակվել քո պաշտոնյայի՝ քո սուրբ Ներսես Մեծ քահանայապետի ձեռքի տակ, նրա ձեռքով երեց օծվել, նրա ձեռքով նվիրաբերվել քեզ՝ քահանայության։ Եվ այդ ժամանակվանից պատրաստեցիր ինձ ըմպելու նահատակության փրկարար բաժակը, որը ես կխմեմ՝ Աստծու անունը տալով, իմ աղոթքը ես Տիրոջը կուղղեմ նրա ամբողջ ժողովրդի առաջ։ Փա՜ռք և զորությո՛ւն և իշխանությո՛ւն քեզ, քո սիրելի միածին Որդի Հիսուս Քրիստոսին և քո կենդանարար մշտընջենական սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Եվ երբ խոսքն ավարտեց, ժողովված բազմամարդ ամբոխն ասաց՝ «ամեն»։ Ապա դահիճները զայրացան, թե ինչո՛ւ թողեցին այնքան երկար խոսել, ուստի շտապեցնելով՝ նրան մահվան տեղը հասցրին։ Իսկ նա, մեծ ուրախությամբ պարանոցը մեկնելով, վախճանվեց սրի հարվածից։

ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՐՁԱԿՎԵՑ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻ ՎՐԱ ԵՎ ՍՈՍԿԱԱՒ ՁԱՐԴ ՏՎԵՑ ՆՐԱՆ

Ապա Վասակի որդի Մուշեղը՝ Մեծ Հայքի սպարապետը, ընտրեց քառասուն հազար ընտիր, հավատարիմ ու ազատազարմ մարդիկ, միաբան և միակամ, պատրաստեց նրանց համար ձի, զենք և ուտեստ և, իր հետ առնելով, գնաց Ատրպատականի սահմանում նստեց Հայոց աշխարհը պահպանելու համար։ Նույն ժամանակ պարսից Շապուհ արքան էլ իր զորքով ամենայն պատրաստությամբ եկավ Ատրպատական երկիրը։ Նրա բանակի մի գնդի առաջնորդը Մերուժանն էր, իսկ թագավորի բուն գունդը մնացել էր Թավրեշում։

Եվ հայոց զորավար սպարապետ Մուշեղը վրա է հասնում, իր քառասուն հազարով հարձակվում է [Շապուհի] բանակի վրա և սկսում է կոտորել։ Պարսից Շապուհ թագավորը մի ձիով ճողոպրում է, իսկ Մուշեղը հայոց զորքի հետ նրա ողջ զորաբանակը սրի է մատնում, քանդի շատերին կոտորում են, պարսից ավագներից շատերին ձերբակալում, ավար են առնում թագավորի գանձերը, բռնում են նաև տիկնանց տիկնոջը՝ մյուս կանանց հետ միասին, [մի խոսքով]՝ ամբողջ մաշկավարդանը անցնում է Մուշեղ սպարապետի ձեռքը։ [Պարսից] ողջ ավագանուն՝ մոտ վեց հարյուր մարդու, Մուշեղ զորավարը հրամայում է մորթազերծ անել և մորթերը խոտով լցնել... Այսպես է նա անում իր հոր՝ Վասակի վրեժն առնելու համար։

Բայց պարսից Շապուհ թագավորի կանանց Մուշեղ զորավարը որևէ անարգանք հասցնել թույլ չտվեց, այլ հրամայեց բոլորի համար պատգարակներ պատրաստել և նրանց ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից։ ...Իսկ պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարեբարության, քաջության և ազնվության վրա, որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ։ Այդ ժամանակ Մուշեղը մի ճերմակ ձի ուներ։ Պարսից թագավորը, երբ գինու [գավաթը] ձեռքն էր առնում, երբ ուրախության ժամանակ իր զորքին հյուրասիրում էր՝ ասում էր.

www.a-pdf.com

Պատահեց մի հարմար ժամանակ. Պապ թագավորի բանակը գտնվում էր Բագրեւանդ գավառում, Խու կոչված մի դաշտում և հայոց մեծամեծներն ու զորքը այնտեղ չէին, իսկ հունաց զորքերի բանակը գտնվում էր հայոց թագավորի բանակի մոտ։ Երբ հունաց զորավարներ Տերենտն ու Ադեն իմացան, թե հայոց Պապ թագավորը մենակ է, փառավոր հացկերույթ սարքեցին և հայոց մեծ թագավոր Պապին ընթրիքի հրավիրեցին մեծ պատվով՝ համաձայն նրա արժանավորության, ինչպես թագավոր մարդու հրավիրում են փառավոր հացկերույթի։ Ամեն բան կազմել, պատրաստել էին։

Պապ թագավորը, գալով ընթրիքի, մտավ ու բազմեց կերուխումի։ Իսկ երբ թագավորը մտնում էր հունաց Տերենտ զորավարի խոբանը, [տեսավ], որ լեգեոնի ասպարակիր զինվորները՝ ձեռներին վահան, գոտիներում սակր, ներսը՝ խորանի պատերի մոտ, [սեղանի] շուրջը պատելով, պահպանում էին. դրսում նույնպես պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վրայից սովորական զգեստ հագած [զինվորներ]։

Իսկ Պապ թագավորն իր խելքով այնպես էր կարծում, թե իրեն պատվելու համար են այդպես արել։ Եվ մինչ ընթրիքի ժամանակ նա ուտում էր, սակրավոր զորքը նրա ետևը կանգնած նրան ամեն կողմից շրջապատել էր։ Երբ սկսեցին խմել, ուրախության առաջին բաժակը մատուցեցին Պապ թագավորին, և իսկույն իրենց ներդաշնակ ձայներով հնչեցրին թմբուկներն ու սրինգները, քնարներն ու փողերը։ Եվ մինչ Պապ թագավորը ուրախության գինին բռնած էր մատներով և նայում էր գուսանների խմբին, մինչ ձախ ձեռքը արմունկին հենած՝ բռնած ուներ ոսկե թասը, իսկ աջ ձեռքը դրել էր նրանի կոթին, որ կապած էր աջ ազդրին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմի, հունաց զորքին աչքի ակնարկով նշան տվին, և երկու սակրավոր զինվորներ, որ ետևից կանգնած էին սպասավորության ոսկեպորտ վահաններով, հանկարծակի միասին սակրերը բարձրացնելով, զարկեցին Պապ թագավորին։ Մեկը ուղիղ վզին է հարվածում, մյուս սակրավորը զարկում է աջ ձեռքի թաթին, որ դրված էր նրանի կոթի վրա, կտրում և դեն է գցում։ Պապ թագավորը աջն ու տեղը ընկնում է բերանքսիվայր, թասով գինին և պարանոցից հոսող արյունը թափվում են սեղանին։ Պապ թագավորն անմիջապես մեռնում է։

Սեղանատանը աղմուկ և շփոթություն ընկնելուն պես՝ Անձևացյաց գավառի տեր Գնելը վեր է կենում բազմած տեղից, սուրը քաշում է ու սպանում է զինվորներից մեկին, որ խփել էր թագավորին։ Այն ժամանակ հունաց Տերենտ զորավարը, իր սուրը հանելով, խփում է և Գնելի գլխից սկավառակը կտրելով՝ աչքերի վրա է շուռ տալիս։

Եվ ուրիշ ոչ ոք ոչինչ չհանդգնեց ասել նրանց և ոչ մի խոսք։

ՀՈՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Այս Հոհան եպիսկոպոսը, եթե կարելի է նրան եպիսկոպոս կոչել, մի կեղծավոր մարդ էր, մարդկանց աչքում իրեն ձևացնում էր սրբակենցաղ և քրձազգեստ, մինչև անգամ կոշիկներ չէր հագնում, այլ ամառը [ոտներին] հեսկ էր փաթաթում, իսկ ձմեռը՝ կեմ։ Բայց չափից դուրս ընկղմված էր ագահության մեջ, Աստծո ահն էլ մոռացել էր ագահության պատճառով այն աստիճան, որ անարժան և անհավատալի բաներ էր անում։

Մի անգամ նա ճանապարհ էր գնում, նստել էր գրաստի վրա ու գնում

էր։ Նրան հանդիպեց մի անծանոթ աշխարհական պատանի, ձի հեծած, մեջքին սուր կապած, գոտուց թուրը կախած, թիկունքին՝ աղեղ ու կապարճ, մազերը՝ լվացած, օծած, կոկած, գլխին վարսակալ դրած, ուսին՝ լոպիկ դցած։ Նա գալիս էր ճանապարհով, գուցե ավազակությունից։ Իսկ ձին, որ նա հեծել էր, մեծ էր, գունավոր և արագոտն, այնպես որ, երբ Հոհան եպիսկոպոսը հեռվից ձին տեսավ, զարմացավ ու աչքը վրան մնաց։ Երբ հեծյալը եկավ, նրան մոտեցավ, Հոհանը, նրան սպասելով, հանկարծ բռնեց ձիու սանձից և ասաց.

— Իսկույն իջի՛ր ձիուդ, հետդ խոսելիք ունեմ։

Մարդն ասաց.

— Ո՛չ դու ինձ ես ճանաչում, և ո՛չ ես՝ քեզ, այդ ի՞նչ բան է, որ ուզում ես ինձ հետ խոսել։

Մարդը հարբած էր և շատ համառեց, չկամենալով ձիուց իջնել։ Բայց Հոհանը նրան բռնադատեց, ձիուց ներքև իջեցրեց և ճանապարհից դուրս տեղ հանեց։ Այնտեղ մարդուն հրամայեց խոնարհվել և ասաց.

— Քեզ երես եմ ձեռնադրում։

Իսկ նա պատասխանելով ասաց իր մասին.

— Ես մանկությունից ի վեր եղել եմ ավազակ, մարդասպան, չարագործ, խառնակ վարքի տեր և այժմ էլ նույն գործի մեջ եմ, ես արժանի չեմ այդ բանին։

Մարդը շատ համառեց ու վիճեց, բայց Հոհանը ավելի խիստ ստիպեց։ Վերջը Հոհանը, նրան բռնությամբ գետին գլորելով, ձեռքը դրեց նրա վրա երես դարձնելու համար և հետո ոտքի կանգնեցնելով, հրամայեց վերևի հագուստը հանել և հոգևորականի վերարկու գցել վրան, ասելով.

— Գնա՛ քո գյուղը և այդ գյուղի երեցը եղիր։

Նա նույնիսկ չգիտեր, թե ո՞ր գյուղից էր այդ մարդը։ Հետո Հոհանը մոտեցավ, բռնեց ձիուց և ասաց.

— Այս ձին էլ ինձ աշխատավարձ լինի, որ քեզ երես ձեռնադրեցի։

Մարդը ձիու համար համառեց, չէր ուզում տալ։ Բայց նա բռնությամբ ձին խլեց ու մարդուն ճանապարհ դրեց։ Այս բոլորը նա արավ ձիու համար։

Մարդը ճարահատյալ վերարկուն վրան գցած՝ դառնում է տուն, ներս է մտնում ընտանիքի մոտ և ասում կնոջն ու ընտանիքին.

— Վեր կացեք, աղոթք անենք։

Իսկ նրանք ասում են.

— Գժվե՞լ ես, ի՞նչ է, հո չե՞ս դիվահարվել։

Իսկ նա ասում է.

— Վեր կացեք, աղոթք անենք, ես երես եմ։

Նրանք զարմացել էին. որը կարմրում էր, որը ծիծաղում։ Շատ հակառակելուց հետո, վերջապես համաձայնեցին նրա հետ աղոթք անել։ Հետո կինը մարդուն ասաց.

— Չէ՞ որ դու դեռ մկրտված չես։

Մարդն ասաց կնոջը.

— Խելք թողե՞ց գլուխս, ես էլ մոռացա այդ բանը նրան ասել, նա ինձ երես դարձրեց ու ձին սանձով, թամբով առավ, գնաց։

Կինը մարդուն ասաց.

— Վեր կա՛ց, նորից գնա այդ եպիսկոպոսի մոտ և ասա. «Ես մկրտված չէի, դու ինձ ո՞նց երես դարձրիր»։

Նա էլ վեր կացավ, գնաց եպիսկոպոսի մոտ ու ասաց.

www.a-pdf.com

— Ես մկրտված չէի, դու ինձ ո՞նց երեց դարձրիր։

Հոհանը ասաց.

— Մի սափորով ջուր բերեք։

Ջուրը առավ, լցրեց նրա գլխին ու ասաց.

— Գնա՛, ահա քեզ մկրտեցի։

Եվ այսպես իսկույն նրան իր մոտից հեռացրեց։

***

Մի անգամ այս Հոհանը անցնում էր մեկի այգիների մոտով, այգիները էտելու ժամանակն էր։ Մի մարդ այգու ներսից ձայն տվեց նրան ու ասաց.

— Տե՛ր եպիսկոպոս, օրհնի՛ր մեզ ու մեր այգիները։

Հոհանը ասաց.

— Փուշ ու տատասկ բուսնի։

Մարդը ասաց.

— Փուշ ու տատասկը թող քո մարմնի վրա բուսնի, որ մեզ անմեղ տեղը անիծում ես։

...Երբ եպիսկոպոսը իր կացարանը հասավ, նա հարվածի ենթարկվեց, նրա [մարմնի] բոլոր անդամներն սկսեցին ծակծկվել կարծես փշից։ Շատ օրեր սաստիկ ցավերից տանջվելով՝ նա մեծ տագնապի մեջ էր գտնվում։ Վերջը մարդ ուղարկեց, կանչեց այգեպանին և աղաչեց, որ իր վրա աղոթք անի, որպեսզի ազատվի ցավերից։ Իսկ այգեպանն ասաց.

— Ես ո՞վ եմ, որ կարողանամ մեկին օրհնել կամ անիծել, այն էլ եպիսկոպոս մարդու։

Իսկ Հոհանը բռնադատեց նրան այն աստիճան, որ նա վեր կացավ աղոթքի և ասաց.

— Տե՛ր Աստված, դու գիտես, որ ես մեղավոր եմ, անարժան մարդ եմ, չգիտեմ ինչպես ընկա այս փորձանքի մեջ, դու ինձ փրկի՛ր այս չարից, որովհետև ասում են, թե դու եպիսկոպոս մարդուն անիծեցիր, և քո խոսքով այս բանը եղավ։ Ավելի լավ էր՝ մեռնեի, չգիտեմ ի՞նչ են ասում իմ մասին։

Երբ նա այս ասաց, եպիսկոպոսն իսկույն բժշկվեց, և ողջ մարմնից սկսեց դուրս թափվել փուշը, որ նման էր խոտերի փշի։ Նա անմիջապես ցավից բժշկվեց և վեր կացավ առողջ։

***

Այս Հոհան եպիսկոպոսը, երբ գնում էր հայոց թագավորների մոտ, նրանց խեղկատակն էր դառնում։ Խազալիք դառնալով՝ նա ագահության էր ձգտում, որին անհագաբար ծարավ էր, և [այդ խեղկատակությունները] նրան իբրև միջոց էին ծառայում։ Թագավորների առջև ձեռների ու ոտների վրա ընկնելով՝ նա չորեքթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր, ուղտի նման

www.a-pdf.com

քայլում։ Կառաչելու ժամանակ մի-մի խոսք էր խառնում կառաչելու ձայնով ու ասում.

— Ուղտ եմ, ուղտ եմ, թագավորի մեղքերը բառնում եմ, վրաս դրեք թագավորի մեղքերը, որ բառնամ։

Իսկ թագավորները, գյուղերի կամ ագարակների պարգևագրեր գրելով ու կնքելով, դնում էին Հոհանի կռնակի վրա իրենց մեղքերի փոխանակ։ Եվ այսպես, ուղտ լինելով ու մեղքեր բառնալով, նա հայոց թագավորներից ձեռք բերեց գյուղեր, ագարակներ ու գանձեր։ Այսպիսի մարդ էր այս Հոհանը, որն իր ողջ կյանքում վարակված էր ագահությամբ ու ժլատությամբ և այս իսկ պատճառով անարժան գործեր էր կատարում։

www.a-pdf.com

ԵՎԻՇԵ

(Ե ԴԱՐ)

ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԳԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(Հատվածներ)

Երբ Արշակունյաց ցեղը վերացավ, Հայոց աշխարհին տիրեց պարսից Մահանի ցեղը, որ իր իշխանությունը վարում էր մոգերի կրոնի համաձայն և շատ անգամ կռիվ էր մղում նրանց հետ, ովքեր չէին ընդունում նույն կրոնը. սկսելով Տիրանի որդի Արշակ թագավորի օրերից՝ կովում էր մինչև Վռամշապուհի որդի հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին։ Եվ երբ սրան էլ զրկեց թագավորությունից, իշխանությունն անցավ հայոց նախարարներին, որովհետև Քեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ։ ...Վռամի որդի արքայից արքա Հազկերտին սատանան իրեն գործակից գտավ և հավաքված ամբողջ թույնը դուրս թափեց և լցրեց նրան ինչպես թունավորված նետերով լի կապարճ։ Եվ սկսեց նա հոխորտալ անօրենությամբ, գոռոզանում էր և աղմկելով քամի էր բարձրացնում աշխարհի չորս կողմերը, և մեզ՝ Քրիստոսի հավատացյալներիս, իրեն թշնամի և հակառակորդ էր ներկայացնում և նեղվում ու տագնապում էր անխաղաղասեր կյանքով։

Որովհետև նրան շատ սիրելի էր խռովությունն ու արյունահեղությունը, այդ պատճառով էլ ինքն իր մեջ ալեկոծվում էր, թե ո՞ւմ վրա թափեմ դառն թույներս կամ ո՞ւր արձակեմ բազմաթիվ նետերս։ Եվ սաստիկ հիմարության պատճառով ինչպես կատաղի գազան հարձակվեց հունաց երկրի վրա, հարվածեց մինչև Մծբին քաղաքը և ասպատակ սփռելով՝ ավերեց հռոմների շատ գավառներ և հրդեհեց բոլոր եկեղեցիները, ավար ու գերի հավաքեց և ահաբեկեց երկրի ամբողջ զորքը։

Իսկ երանելի Թեոդոս կայսրը, որովհետև խաղաղասեր քրիստոնյա մարդ էր, չկամեցավ նրա դեմ պատերազմի դուրս գալ, այլ Անատոլ անունով մի մարդու, որ Արևելքի նրա սպարապետն էր, շատ գանձերով նրա մոտ ուղարկեց... Եվ այն ամենը, ինչ որ ասաց [Հազկերտը] ժամանակին, [Թեոդոսը] կատարեց նրա կամքի համաձայն և իջեցրեց նրա մեծ բարկությունը և այսպիսով նա վերադարձավ իր քաղաքը՝ Տիզբոն։

Երբ անօրեն իշխանը տեսավ, որ իր չարությունը հաջողվեց, սկսեց մի այլ խորհուրդ էլ մտածել, ինչպես մի մարդ, որ բորբոքված կրակի մեջ շատ վառելափայտ է ավելացնում։ Որովհետև որտեղ՞ մի քիչ կասկած ուներ, այնտեղից լիովին ապահովվեց, այդ պատճառով էլ քրիստոնյաների ուխտից շատերին խախտեց՝ մեկին սպառնալի խոսքերով, մյուսին շղթաներով ու տանջանքներով, երրորդին չարաչար մահով սպանելով։ Հափշտակում էր նրանց ստացվածքն ու կալվածքները և մեծ անարգանքով տանջում էր բոլորին։

www.a-pdf.com

...Օրհասական արջերն էլ շնչները հատելիս ավելի ուժգին են կռվում, և իմաստունները, խույս տալով, փախչում են նրանցից։ Այսպիսի մի վախճան է եկել-հասել այդ տերությանը. երբ նրանց խփում են՝ չեն զգում, և երբ իրենք են խփում՝ չեն հասկանում, իսկ երբ արտաքին թշնամի չի գտնըվում, իրենք իրենց հետ են կռիվ սկսում, մարտնչում...

Արդ, ի՞նչ ես ծեծկվում, ի՞նչ ես կռիվ տալիս, ի՞նչ ես այրվում, ի՞նչ ես բորբոքվում,... ի՞նչ ես խորհրդի կանչում նրանց, ովքեր ձեր հոգիները ձեզնից խլել՝ ձեր անապականը ապականություն են դարձրել, իսկ ձեր ապականացու մարմինը զազրելի դիակի նման քարշ են տվել ու դեն գցել։ Չէ՞ որ այդ ես կամենում, որ ամբարիշտ խորհուրդդ ծածկվի. կտեսնես՝ երբ կհայտնվի, հետո կիմանաս դրա վերջը։

Մոգերն ասում են.

— Քա՛ջ թագավոր, աստվածները տվին քեզ այս տերությունը և հաղթություն. նրանք ամենևին մարմնավոր հարստության կարոտ չեն, միայն թե մի կրոնի դարձնես քո տերության մեջ գտնված բոլոր ազգերին ու ժողովուրդներին։ Այն ժամանակ հույների երկիրն էլ հնազանդվելով՝ կենթարկվի քո իշխանությանը։ Արդ, մեր մի խոսքը շուտով կատարի՛ր, արքա՛, զորք հավաքի՛ր և գունդ կազմիր, վեր կաց գնա քուշանների երկիրը և բոլոր ազգերին ժողովիր և անցկացրու Պահ դռնից ներս, և այնտեղ շինիր քո բնակությունը։ Երբ բոլորին արգելես ու պահես հեռավոր օտարության մեջ, քո կամքն ու խորհուրդները կկատարվեն և, ինչպես երևում ես մեր գուշակություններին մեջ, դու կտիրես նաև քուշանների երկրին, և մինչև անգամ հույները քո իշխանության դեմ դուրս չեն գա։ Միայն թե քրիստոնյաների կրոնք մեջտեղից վերացրու։

Այս խորհուրդը հաճելի եղավ թագավորին ու իրեն համամիտ մեծամեծներին։ Հրովարտակներ գրեց, արագագնաց սուրհանդակներ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը, Եվ այս է հրովարտակի պատճենը.

«Իմ տերության բոլոր ազգերին, արիներին և անարիներին. թող բազմանա մեր մարդասեր ողջույնը ձեզ. դուք ողջ եղեք, մենք էլ արդեն ողջ ենք աստվածների օգնությամբ։

Առանց ձեզ որևէ նեղություն տալու ելանք-գնացինք Հույների երկիրը. և առանց պատերազմի սիրով ու մարդասիրությամբ նվաճեցինք ամբողջ երկիրը մեզ ծառայելու։ Դուք բարին մտածեցեք և անսպառ ուրախության մեջ մնացեք, բայց շուտով կատարեցեք այս բանը, որ ասում եմ։

Մենք մտքներումս դրել ենք անպատճառ վերկենալ-գնալ Արևելքի աշխարհը, աստվածների օգնությամբ մեզ ենթարկել քուշանների տերությունը. դուք հենց որ այս հրովարտակը տեսնեք, շուտով առանց ուշացնելու այրուձի ժողովեցեք՝ ինձանից առաջ, ներկայացեք ինձ Ապար աշխարհում»։

...Եվ անմեղությամբ չիմանալով թագավորի խարդախ միտքը՝ յուրաքանչյուրը իր երկրից զվարթությամբ և տիրասեր խորհրդով ելան-գնացին, աներկբա հավատով կատարելու [իրենց] զինվորական ծառայությունը։ Իրենց հետ վերցրին նաև աստվածային սուրբ կտակարանները շատ պաշտոնյաներով ու քահանաներով։ Բայց հրաման տվին իրենց աշխարհում, որ կյանքի ակնկալություն չունենան, այլ իրենց վախճանին [սպասեն], հանձնարարելով միմյանց իրենց հոգիներն ու մարմինները։ Որովհետև թեպետև թագավորի մտադրությունը նրանց հայտնի չէր, բայց բոլորի սրտում էլ կասկած կար. մանավանդ երբ հույների զորությունն էլ ընկճված տեսան նրա առաջ, շատ խիստ խոցվեցին իրենց մտքերում։

www.a-pdf.com

Բայց որովհետև Աստծու սուրբ կտակարանների պատվիրանները պահող մարդիկ էին, շարունակ հիշում էին Պողոսի պատվերները, թե՝ «Ծառանե՛ր, հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ո՛չ թե կեղծավորությամբ և աչառությամբ, այլ սրտանց ծառայեցեք ինչպես Աստծուն և ոչ ինչպես մարդկանց...»

Այս ամբողջ բարեմտությամբ, ուղևորվելով [իրենց] աշխարհից և... հրամանը շուտով կատարելով, ներկայացան, ամեն ինչ անելով նրա կամքի համաձայն։ Թագավորը շատ ուրախացավ՝ այն մտքով, թե իր կամքը կատարվեց. և ահա նրանց հետ վարվում է այնպես, ինչպես խրատել էին իր ամբարիշտ պաշտոնյաները։

Ապա, երբ թագավորը տեսավ հպատակ ազգերի գնդի ամբողջ պատրաստությունն ու բազմությունը, որոնք հոժարակամ եկել էին արքունի ծառայության, ավելի ևս ուրախանում էր իր մեծամեծների և զորքերի ամբողջ բազմության առաջ։ Արտաքուստ թաքցնում էր իր մտադրությունները և ակամա առատ-առատ պարգևներ էր տալիս նրանց։ Նլավ-գնաց Հոնաց աշխարհի տերության վրա, որին Քուշանք են անվանում, և երկու տարու չափ կռվելով՝ նրանց ոչ մի վնաս հասցնել չկարողացավ։ Հետո զինվորներին ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը և նրանց փոխարեն իր մոտ ուրիշներին կանչեց նույն պատրաստությամբ։ Եվ այսպես տարեցտարի սովորություն սահմանեց, և այնտեղ իր համար բնակության քաղաք չինեց, իր թագավորության չորրորդ տարվանից սկսած մինչև իր իշխանության տասնմեկերորդ տարին։

Եվ երբ տեսավ, որ հոռոմները հաստատ մնացին իրենց դաշինքին, և իր երկիրն ամեն կողմից խաղաղության մեջ է ապրում, և դեռ Հոների թագավորին էլ նեղն է լծել, որովհետև ավերեց նրա շատ գավառները, և իր թագավորությունը հաջող դրության մեջ է, ավետավորներ ուղարկեց իր երկրի բոլոր ատրուշանները, սպիտակ ցուլերով և գիսավոր նոխազներով առատացրեց կրակի զոհերը, և միանգամայն անընդհատ դարձրեց իր պիղծ պաշտամունքը... Նաև հրաման տվեց հափշտակել Պարսից աշխարհում գտնվող քրիստոնյաների ինչքն ու գույքը։

Եվ այսպես հպարտացավ, գոռոզացավ իր մտքում, սանձարձակորեն հոխորտում էր մարդկային բնությունից էլ վեր, ո՛չ միայն մարմնական պատերազմների գործերի մեջ, այլ ինքն իրեն հայրենի կարգի բնությունից մեծ մի բան էր կարծում. այդ պատճառով նա կեղծավորությամբ ինքն իրեն իր կարծիքով թաքցնում էր, բայց ինչպես նկատում էին իմաստունները, ինքն իրեն կարծես անմահների կարգն էր դասում...

***

Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է ընկած [նրանց] մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այսպիսի մարդը երազական բաներով է անցկացնում իր կյանքը, իսկ մահվան ժամանակ էլ անդառնալի կորստյան է մատնվում։ Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն։ Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից. իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում։

Եվ բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից։ Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից։ Լավ է աչքով կույր [լինել], քան մտքով կույր։ Ինչ-

www.a-pdf.com

պես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից։

Եթե մեկը շատ ճոխացած լինի աշխարհական մեծությամբ, իսկ մտքով ավելի աղքատ լինի, այնպիսին ողորմելի է շատերից. ինչպես որ տեսնում էլ ենք ո՛չ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև նրա, որ ամենից մեծն է։ Եթե թագավորը իմաստությունն իրեն աթոռակից չունի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել։ Իսկ եթե մարմնավոր բաների վերաբերմամբ այսպես է, որքա՜ն ավելի ևս՝ հոգևոր բաների վերաբերմամբ է։

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է. և՝ ինչպես որ մի մարդու, այնպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ։ Թագավորը միայն իր համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստյան պատճառ է եղել։

Բայց մենք թեպետև թուլտվություն չունենք բամբասելու իշխաններին, բայց չենք էլ կարող գովաբանել մի մարդու, որ Աստծու դեմ է կռվում։ Այլ կպատմեմ անցքերն ու դեպքերը, որ նրա ձեռքով անցան սուրբ եկեղեցիների գլխով, և չեմ դանդաղի. գործերի ընթացքը ո՛չ թե բամբասեմ մտքով, այլ ճշմարտությամբ պատմելուց չեմ դադարի։ Ո՛չ կարծիքներով եմ վեր թռել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ես ինքս անձամբ նույն տեղում պատահեցի և տեսա ու լսեցի հանդգնաբար խոսելու ձայնը։ Ինչպես սաստիկ քամին ալեկոծում է մեծ ծովը, այնպես էր շարժում ու տարուբերում իր զորքերի ամբողջ բազմությունը։ Եվ բոլոր ուսմունքների հանդիսավոր քննություն էր կատարում, կշռադատում էր մոգությունն ու քավդեությունը և իր աշխարհի բոլոր ուսմունքները, կեղծավորությամբ մեջ էր բերում նաև քրիստոնեությունը և ասում էր զայրացած.

— Հարցրե՛ք, քննեցե՛ք, տեսե՛ք, որը լավն է՝ թող այն ընտրենք ու պահենք։

Եվ ջանք էր գործ դնում, որ իր մտադրությունը շուտով կատարի։

Իսկ զորքի մեջ եղած զանազան կողմերից եկածները հասկացան այն կրակը, որ ծածուկ վառվում, բորբոքվում էր և ուզում լեռներն ու դաշտերն առհասարակ հրդեհել։ Նրանք էլ կրակ կտրեցին անմարելի հրով և սաստկապես պատրաստվեցին գաղտնի որոգայթների փորձության դեմ։

...Իսկ անօրեն իշխանը, երբ իմացավ, թե հայտնվեց [իր] խորամանկ մտադրությունը, և պատրաստված հուրը՝ դեռ ոչ-ոք նրա վրա չփչած՝ նրա վառվելը հայտնի դարձավ, սկսեց ծածուկ նետերով խոցոտել իր չար միտքը և անբուժելի վերքեր էր պատրաստում հոգիների ու մարմինների համար։

Մերթ շանթում, գալարվում էր ինչպես մի թունավոր օձ, մերթ ձգվում, մռնչում էր ինչպես զայրացած առյուծ, ճմլվում ու թապլտկվում էր խարդախ մտադրությամբ և կամենում էր իր կամքը կատարել։

...Եվ երբ տեսավ, որ ծածուկ հնարագիտությունը բանի տեղ չանցավ, այլ դիմացիններն ավելի շատ էին գործում, որովհետև տեսնում էր, որ քրիստոնեությունն օրեցօր աճում-տարածվում էր հեռավոր ճանապարհի այն բոլոր կողմերը, որով ինքն անցնում էր, սկսեց հալումաշ լինել և հառաչելով հոգոց հանել։ Ակամա հայտնեց գաղտնի մտադրությունները, բարձրաձայն հրաման տվեց և ասաց.

— Իմ իշխանության ներքո գտնված բոլոր ազգերն ու ժողովուրդները թող բոլորը ձեռք քաշեն [իրենց] մոլար կրոններից և գան երկրպագություն

www.a-pdf.com

անեն միմիայն արեգակին՝ զոհեր մատուցելով և աստված անվանելով [նրան] և սպասավորելով կրակին. բացի այս ամենից՝ մոգության օրենքներն էլ կատարեն, առանց որևէ բան պակաս թողնելու...

***

Բացի այս ամենից՝ մի այլ չարություն էլ նյութեց։ Իր հավատարիմ ծառաներից մեկին, որի անունը Դենշապուհ էր, գործով ուղարկեց Հայոց երկիրը։ Սա եկավ, տեղ հասավ արքունի հրամանով, բերեց մեծ թագավորի ողջույնը և խազազասեր կեղծավորությամբ ամբողջ Հայոց երկիրը աշխարհագիր արեց՝ իբր թե հարկերը ներելու և այրուձիու ծանրությունը թեթևացնելու նպատակով։ Թեպետև երեսանց կեղծավորություն էր անում, բայց ներքուստ երևում էին չաբաղույն դիտավորությունները։

Առաջին՝ եկեղեցու ազատությունը ծառայության տակ դրեց, երկրորդ՝ վանքերում բնակված միայնակյացներին նույն աշխարհագրի տակ գցեց, երրորդ՝ երկրի հարկն ավելի ծանրացրեց, չորրորդ՝ նախարարներին բանսարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան մեջ խռովություն գցեց։

...Բայց ամենից վատթարը հինգերորդն էր. որովհետև նա, որ երկրի հազարապետն էր, համարվում էր աշխարհականների վերակացու հայրը, սրա դեմ գրգռելով, ամբաստանություն հարուցեց և նրան գործից հանելով՝ նրա փոխարեն մի պարսիկ բերեց [մեր] աշխարհը և մի մոգպետի էլ աշխարհին դատավոր [կարգեց], որպեսզի եկեղեցու փառքը նսեմացնի։

Սակայն թեպետև այս բոլոր գործերը դժնդակ էին, բայց դեռ ոչ-ոք հայտնի կերպով ձեռք չէր տվել եկեղեցուն, այդ պատճառով էլ ոչ-ոք նրան չընդդիմացավ. թեև հարկերը ծանր էին։ Որովհետև որտեղից պետք էր հարյուր դահեկան առնել, կրկնապատիկն էին առնում. այսպես էլ [հարկի տակ] դրին եպիսկոպոսներին և երեցներին, ոչ միայն շեն, այլև ավերակ տեղերը։ ...Առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից, որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը...

***

...Եվ թագավորն անմիջապես, ներս կանչելով դպրապետին, հրամայեց հրովարտակ գրել, բայց այլևս ոչ թե սովորության համաձայն, այլ զայրագին խոսքերով ինչպես ատելի և անպիտան անձերի, ամենևին չհիշելով տիրասեր մարդկանց մեծամեծ ծառայությունները, այլ միայն անուն-անուն կանչելու հրաման տալով այն մարդկանց, որոնց ինքը ճանաչում էր...

Եվ յուրաքանչյուրն իր տեղից ելավ-գնաց արքունի դուռը։

Առաջվա ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում Դուռը, [թագավորը] մարգ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը, և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իր մոտ գալ, տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք

www.a-pdf.com

էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանց յուրաքանչյուրի քաջությունը։

Իսկ այն օրը սրանցից և ոչ մեկն էլ չհիշեց, այլ ինչպես մի չար դև, չէր դադարում ամեուվա բուքը հուզելուց և շարժելուց. ինչպես որ հենց նմանվում էլ էր վրդովված ալեկոծ ծովի, որը ոչ թե երեսանց է մի քիչ [հուզվում], այլ նույնիսկ անդունդից էր բարձրանում փրփրած ու իրար վրա դիզված, վիշապաձայն որոտալով, գազանի նման մռնչալով, ընդհանրապես սարսափեցնում էր իր տիեզերական իշխանությունը, կաթծես թե փուլ գալով պիտի տարածվեր ամեն կողմ լեռների, անդունդների և ձորերի վրա՝ լայնարձակ ու գեղեցիկ դաշտերը միանգամից փշացնելու համար։

Մռնչալով ձայն արձակեց և ասաց.

— Երդվել եմ մեծ աստված արեգակով, որ իր ճառագայթներով լուսավորում է ամբողջ տիեզերքը և իր ջերմությամբ կենդանացնում է բոլոր արարածներին, որ եթե վաղն առավոտյան, սքանչելու ծագելուն պես, բոլորդ ինձ հետ միասին ծունր չդնեք նրա առաջ՝ նրան աստված դավանելով, ձեզ ամենևին ողջողություն չեմ անի, ամեն տեսակ նեղություն ու չարչարանք կթափեմ ձեզ վրա, մինչև որ ակամա կատարեք իմ կամքն ու հրամանը։

Իսկ հավատացյալները... ոչ ձմեռային սառնամանիքից էին մրսում և ոչ խորշակի տոթից տաքանում, ոչ ահագին ձայնից էին սարսափում և ոչ էլ տանջանքների սպառնալիքից վախենում, այլ վերև նայելով և զվարթ դեմքերով ու համեստ խոսքերով առաջ անցնելով՝ թագավորին պատասխան տվին.

— Խնդրում ենք քեզանից, քա՛ջ թագավոր, ականջ դիր մեր մի քանի խոսքին և քաղցրությամբ լսի՛ր, ինչ որ ասելու ենք։ Քեզ հիշեցնում ենք արքայից արքա Շապուհի ժամանակները, որ քո պապ Հազկերտի հայրն էր, և աստված նրան Հայոց երկիրը հպատակեցրեց հենց այս կրոնով, որով և մենք ենք կառավարվում այժմ։ Եվ մեր հայրերն ու մեր հայրերի պապերը նրա ծառայության մեջ մնացին և սիրով կատարում էին նրա բոլոր հրամանները, և շատ անգամ էլ նրանից մեծամեծ պարգևներ էին ստանում։ Եվ այն ժամանակներից մինչև քո հայրենի աթոռը նստելը՝ մենք էլ նույն կերպով ծառայեցինք և, թերևս, քեզ ավելի լավ, քան [քո] նախորդներին։

Այս ասելով, ցույց էին տալիս, որ զինվորության կարգի մեջ իրենց քաջություններն ավելի էին, քան թե առաջիններինը։ Իսկ տուրքեր և աշխարհի ուրիշ ինչ տեսակ հարկեր որ կային, ավելի շատ էին մտնում արքունի [գանձարան], քան նրա հոր ժամանակ։

— Նույնիսկ սուրբ եկեղեցին, որ մեր նախնիների կարգի համաձայն սկզբից ևեթ ազատ էր, դու հարկի տակ դրիր, և մենք քո տերությանը սիրո համար ամենևին չընդդիմացանք։ Արդ, ի՞նչի համար է այս ցասումը հարուցված մեզ վրա, դու մեզ ասա մեր հանցանքն ու մեղքը. մի՞թե մեր կրոնն է պատճառը, որ մենք անվաստակ ենք դուրս եկել քո առաջ։

Իսկ չար դևը, ամեն ևեռությամբ լցված, երեսը մի կողմ դարձրեց և ասաց.

— Վնաս եմ համարում արքունի գանձարանն ընդունել ձեր աշխարհի հարկը, և ձեր արիությունն ու քաջությունն էլ՝ անօգուտ, որովհետև տգիտությամբ մոլորվել եք ձեր ճշմարիտ կրոնից, աստվածներին անարգում եք, կրակն սպանում, ջրերը պղծում և մեռելներին հողի մեջ թաղելով՝ երկիրն ապականում... Եվ դևերը մեծապես ուրախանում են, երբ չեք խրատվում և չեք պահում մոգերի բոլոր կարգերը։ Տեսնում եմ ձեզ ինչպես անա-

www.a-pdf.com

պատի մեջ ցրված ու մոլորված խաշներ, և ես շատ վախենում եմ՝ չլինի թե աստվածները ձեր պատճառով բարկանան ու վրեժը մեզանից առնեն։ Իսկ դուք եթե կամենում եք ապրել և ձեր անձերը փրկել, և մեծարանքներով ետ ուղարկվել, ինչ որ ասացի, վաղը շուտ կատարեցեք։

Այն ժամանակ երանելի նախարարներն առհասարակ բարձրացրին իրենց ձայնը և ասացին բոլորի առաջ.

— Մի՛, թագավոր, այլևս մի՛ ասա մեզ այդ բանը... Ինչ ձևով ուզում ես վարվել՝ վարվիր. բոլորս պատրաստ ենք այն ամեն հարվածների ու տանջանքների համար, որ ոգառնացիր, ո՛չ միայն չարչարվելու, այլև մեռնելու։ Եվ եթե դարձյալ նույն բանը հարցնես, ամեն մեկիցս ավելի [կտրուկ] պատասխան կլսես։

Այն ժամանակ թագավորը՝ լեղուց ավելի դառնացած փորի մեջ կուտակված կամավոր մազձի ծավը փսիլ է ածում, նրա քթից ու բերանից առհասարակ չերմախառն գոլորշի է գալիս, ինչպես սաստիկ հնոցից թանձր ծուխը։ Եվ սիրտը չհամբերելու պատճառով, կոտրում է իր մարմնի ու կամքի զորությունը, ծակատում մտադրությունների բազմամթեր ամանը և ցրում-տարածում է [իր] բոլոր նենգավոր մտածմունքները...

Երեք-չորս անգամ կրկնում է իր անասուն երգումը արեգակի անունով և ասում է այսպես.

— Չեք կարող խախտել իմ հաստատուն որոշումները, և թույլ չեմ տա, որ դուք հասնեք ձեր ուզածին, այլ ձեզ բոլորիդ և ովքեր այստեղ զորքի մեջ են, չարաչար կապանքներով վտարել կտամ անճանապարհ տեղերով, այնպես որ ձեզանից շատերը գնալու ժամանակ խորշակից կսատկեն, իսկ մնացածները կգցվեն ամուր բերդերը և անելանելի բանտերը։ Ձեր աշխարհն էլ անթիվ զորք կուղարկեմ փղերի հետ միասին, և ձեր կանանց ու որդիներին ծառայատան քշել կտամ, և ձեր եկեղեցիները և ինչ որ վկայարան եք կոչում, կքանդեմ, կավերեմ և կփչացնեմ, և եթե էլի մեկը ընդդեմ դուրս եկած լինի, գազանների ոտների տակ գցելով՝ անողորմ մահով կմեռնի։ Այս ամեն սաստներս կանեմ և կկատարեմ [ձեր] աշխարհում մնացածների վերաբերմամբ։

Եվ անմիջապես հրամայեց պատվական նախարարներին մեծ անարգանքներով հեռացնել իր աչքի առաջից...

Թագավորի ներքին խորհրդականներից մեկը գաղտնի կապված էր Քրիստոսի անքակ սիրով, նույնիսկ մկրտված էր կենդանի ավազանի մեջ, և մեծապես հոգ էր տանում վշտացածների կյանքը փրկելու։ Եվ երբ հաստատապես ստուգեց, որ թագավորն իր սպառնացած բազմաթիվ չարիքները բոլորն ուզում է կատարել Հայոց աշխարհի գլխին, թեպետև նրանցից ոչ բոլորին, բայց մի քանիսին խրատ տվեց և սովորեցրեց, թե ինչ հնարք գործ դնեն, որ առժամանակ իրենց փրկեն այն նեղ դրությունից։

...Եվ ամենքն անքակտելի ուխտ դնելով, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրության վրա, իրենց միևնույն խրատատուին պատդամավոր ուղարկեցին ներս, իբր թե կատարվելու է նրա անօրեն կամքը։

Երբ այս լսեց թագավորը՝ չափազանց ցնծաց և ուրախացավ, կարծելով, թե աստվածներն իրեն օգնության են հասել, և ահա երկրպագություն են մատուցանում արեգակին, պատվելով նրան զոհերով և մոգության բոլոր օրենքներով։ ...Եվ ճշմարիտ հայտնությունից զրկված՝ նա ամենևին չհասկացավ այն պատրանքն ու խաբեությունը, որով սխալեցրին նրան։

www.a-pdf.com

***

Սպարապետը նախարարների միաբանությամբ սկսեց խոսել զորքի հետ և ասաց.

— Շատ պատերազմներ եմ մղել ես, և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ: Բայց ավելի շատն այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված: Բայց այդ բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր թագավորի հրամանով էինք մարտնչում: Ով փախչում էր, վատանուն էր երևում աշխարհում և նրանից անողորմ մահ էր ստանում. իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցավոր ու մահկանացու թագավորից: Եվ մեզնից ամեն մեկն էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջություններ էլ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացվել: Անարգ և անօգուտ եմ համարում այդ քաջությունները և ոչինչ բաներ՝ այդ բազմաթիվ պարգևները, որովհետև բոլորն էլ ոչնչանալու են:

Իսկ արդ՝ եթե մահկանացու հրամանատուի համար քաջ գործեր էինք կատարում, ինչքան ավելի ևս [պետք է կատարենք] մեր անմահ թագավորի համար, որ տերն է կենդանիների ու մեռելների և բոլոր մարդկանց դատելու է իրենց գործերի համեմատ: Չէ՞ որ եթե խիստ շատ ապրելով ծերանամ, միևնույն է՝ այս մարմնից պետք է բաժանվենք, որպեսզի մրտնենք կենդանի Աստծու մոտ, որից այլևս չպետք է բաժանվենք:

Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչընչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը. իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չիառնենք:

...Իսկ արդ՝ երկու և երեք կռիվների մեջ Ինքը Տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, այնպես որ քաջության անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար չարդեցինք, մոգերին էլ անողորմ կերպով կոտորեցինք և կռապաշտության պղծությունը մի քանի տեղերից սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը չնչեցինք, ոչնչացրինք, ծով խռովություն իջեցրինք, լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադեզ փրփուրն սպառվեց, գազանացած զայրույթը դադարեց: Նա, որ ամպերի վրայից էր որոտում, ընկճված՝ իր սովորական բնությունից էլ ցած իջավ՝ մեզ հետ խոսելով: Նա, որ խոսքով ու հրամանով էր ուզում կատարել իր չարությունը, այժմ աղեղով ու նիզակով ու սրով է կռվում...

Եվ ահա եկել-հասել է ժամանակը, որ ամեն մի կեղտ կոչված բան հեռացնենք մեզանից: ...Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից:

www.a-pdf.com

...Պարսից բանակի զորավարը... իր առջև կանչեց անօրեն Վասակին և նրա հետ եղած հայոց բոլոր ուրացած իշխաններին։ Հարցուփորձ արեց նրանց՝ նրանցից սովորելով հաղթության հնարագիտությունը։ Եվ երբ տեղեկացավ ամեն մեկի քաջության մասին, կանչեց նաև իր ձեռքի տակ եղած զորապետներից շատերին և հրամայեց իր առաջ բերել փղերի երամակները։ Գունդ-գունդ բաժանեց այդ գազաններին և ամեն մի փղի մոտ երեք հազար սպառազեն մարդ դրեց, բացի մնացած ամբողջ զորքից։

Արքունի հրամանով խոսեց նաև մեծամեծների հետ և ասաց.

— Ամենքդ հիշեցեք մեծ թագավորի պատվերը և նպատակ դրեք քաջության անուն հանել։ Մահը գերադասեցեք, քան թե վախկոտ կյանքը։ Մի՛ մոռացեք այն առատաձեռն պարգևները, որ շնորհվում են ձեզ արքունիքից։ Ամենքդ գավառների տեր եք և շատ իշխանություն ունեք։ Դուք ինքներդ գիտեք Հայոց աշխարհի քաջությունը և ամեն մեկի անվեհերությունը։ Դուցե պարտություն կրելով՝ կենդանի-կենդանի զրկվեք այն մեծ կյանքից, որ ունենալու եք։ Հիշեցե՛ք ձեր կանանց և որդիներին, հիշեցե՛ք ձեր սիրելի բարեկամներին, դուցե առնահաղ լինեք արտաքին թշնամիներից և ձեր սիրելիների հետ միասին աղբաք։

Հիշեցնում էր նրանց նաև բազմաթիվ փախած ընկերների մասին, որոնք քիչ խուսափեցին պատերազմից, բայց սբսվ ստացան իրենց մահվան պատիժը։ Նրանց ազգաները ու աղչիկները և ամբողջ ընտանիքը տուն ու տեղից զրկվեցին, և հայրենական բոլոր գավառները խլվեցին նրանցից։

Ասում էր այս բանը և որանով էլ ավելի էր ամուտկացնում արքունական հրամանը։

Կարգավորեց ամբողջ զորքը և ճակատը ձգեց, տարածեց մեծ դաշտի երկարությամբ...

***

Իսկ քաջ Վարդանը, առաջ գալով, հարցուփորձ արեց մեծամեծներին և բոլորի տված խորհրդի համաձայն զորագլուխներ նշանակեց։

Առաջին զորամասը հանձնեց Արծրունյաց իշխանին և նրան նիզակակից կարգեց Մոկաց մեծ իշխանին. և ուրիշ բազմաթիվ նախարարների այս երկուսին նիզակակից նշանակեց և զորամասի ամբողջ բազմությունը այս ու այն կողմից օգնական տվեց նրանց։

Երկրորդ զորամասը հանձնեց Տորեն Տորխոռունուն, և նրան նիզակակից կարգեց [Արսեն] Ընծայացուն և Ներսեհ Քաջբերունուն։

Երրորդ զորամասը հանձնեց Թաթուլ Վանանդացուն և նրան նիզակակից կարգեց Տաճատ Գնթունուն և շատ քաջ մարդիկ էլ այս ու այն կողմից օգնական տվեց նրանց։

Ինքը վերցրեց չորրորդ զորամասը և իրեն նիզակակից՝ քաջ Արշավիրին և իր հարազատ եղբայր Համազասպյանին։

Այսպես կարգավորեց ու ճակատ կազմեց՝ զորքը սփռելով դաշտի ամբողջ երեսին, արյաց զորքի դեմուդեմը՝ Տղմուտ գետի ափին։

Եվ երբ այս այսպես պատրաստվեց, երկու կողմերն էլ սրտմտությամբ և մեծ բարկությամբ զայրացան և գազանացած զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպես [կայծակը] իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները։ Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված

www.e-pdf.com

զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր։ Նաև բազմաթիվ սուսերների շաղալուց և բազմախուռն նիզակների ճաճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից։ Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, և թե ինչպես վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները։

Այնտեղ պետք էր տեսնել, թե ի՛նչ մեծ տագնապ և անչափ իրարանցման սրտնեղություն կար երկու կողմերում էլ, երբ հանդուգն հարձակումով իրար էին բախվում. որովհետև թանձրամիտները հիմարանում էին, վախկոտները վհատվում, քաջերը խիզախում էին, և անվեհեր կտրիճներն ազաղակում։ Եվ ամբողջ բազմությունը իրար գլխի խմբվելով՝ գետն ամեն կողմից փակեցին, և գետի դժվարությունից վախեցած՝ պարսից զորքն սկսեց իր տեղում վխտալ։ Իսկ հայոց զորքն անցավ գետը և ձի նստած մեծ զորությամբ հարձակվեց։ Ուժգին թափով իրար զարկվելով՝ երկու կորմից էլ բազմաթիվ վիրավորներ գետին ընկած թպրտում էին։

Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները հայոց զորքի ձախ կողմն ընկճեցին։ Նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների կողմը և, շուրջը պտտելով, կոտորեց մինչև նույն տեղը։ Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց-ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց։

Ապա աչքերը վեր բարձրացրեց Մուշկան Նիսալավուրտը և տեսավ, որ հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում։ Ուստի և աղաղակ բարձրացրեց, քաջալերեց իր շուրջը գտնված արյաց զորքին, որոնք կանգնած էին Վարդանի գնդի հանդեպ։ Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտված էին զգում, և ընկած դիակների թիվն այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդուբորդ քարակույտերի։

Երբ այս բանը տեսավ Մուշկան Նիսալավուրտը, սպասում էր Արտաշրի գազաններին, որը նրանց վրա նստած էր բարձր դիտանոցում, ինչպես միջնաբերդում, և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերով շրջապատեց նրան։

Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը։

Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարաժամեց և երեկոյան դեմ դադարեց. շատերն իրենց մահվան օրհասը գտան. մանավանդ որ ընկածների դիակներն այնքան խիտ էին ու իրար մոտ թափված, ինչպես անտառի կտրատված փայտերը։

Այնտեղ պետք էր տեսնել նիզակների կոտրատումն ու աղեղների խորտակումը. ուստի և չէին կարողանում ստույգ որոշել երանելիների մարմինները. և սաստիկ խուճապ ու իրարանցում էր երկու կողմերի ընկածների համար։ Իսկ ովքեր [կենդանի] էին մնացել, ցիրուցան եղան ամուր ձորերի լեռնադաշտերում. և երբ պատահում էին միմյանց, դարձյալ սպանում էին մեկմեկու։ Եվ այսպես դաժան գործը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը։

Եվ որովհետև ժամանակը գարնանային էր, ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահոս արյունով։ Մանավանդ, երբ մեկը տեսնում էր ընկած բազ-

www.a-pdf.com

մաթիվ դիակների կույտերը՝ սիրտը կտրատվում էր, և աղիքները՝ դալարվում, լսելով խոցվածների մրմռոցը և ջարդվածների մռնչյունը, վիրավորների թավալգլոր սողալն ու շարժվելը, վախկոտների փախուստը, վհատվածների թաք կենալը, անարի մարդկանց սրտաբեկությունը, թուլասիրտների ճիչերը, սիրելիների ողբը, մերձավորների սուգը, բարեկամների վայնասունը։ Որովհետև ոչ քե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին։

Բայց որովհետև հայոց զորավարն ընկել էր մեծ պատերազմում, այնուհետև էլ ոչ ոք զինավոր չկար մեջտեղում, որին հենված ժողովեին մնացած զորքերը։ Թեպետև ողջ մնացածներն ավելի շատ էին, քան մեռնողները, սակայն նրանք ցանուցիր եզան և քաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով ամրեցին շատ գավառների ու բերդերի, որոնք ոչ ոք մինչև իսկ առնել չէր կարողանում։

Ով սրանք են այն քաջ նահատակների անունները, որոնք այդ նույն տեղում վախճանվեցին.

Մամիկոնյանց ցեղից **Քաջ Վարդանը**՝ հարյուր երեսուն և երեք մարդով.

Խորխոռունյաց ցեղից **Կորովի Խորենը**՝ տասնինը մարդով.

Պալունյաց ցեղից **Աբի Արտակը**՝ հիսուն և յոթ մարդով.

Գնթունյաց ցեղից **Ջարմանձալի Տաճատը**՝ տասնինը մարդով.

Դիմաքսյանց ցեղից **Խմաստուն Հմայակը**՝ քսաներկու մարդով.

Քաջբերունյաց ցեղից **Հրաշակերտ Ներսեսը**՝ յոթ մարդով.

Գնունյաց ցեղից **Մանուկ Վահանը**՝ երեք մարդով.

Ընծայնոց ցեղից **Արդար Արսենը**՝ յոթ մարդով.

Սրվանձտյան ցեղից **Հառաջադեմ Գարեգինը**՝ երկու հարազատներով և տասնութ մարդով։

Այս երկու հարյուր ութսունյոթ նահատակները՝ ինը մեծամեծ նախարարների հետ՝ հենց այնտեղ վախճանվեցին։ Ով Թագավորական տնից և Արծրունյաց տնից և մյուս նախարարների տնից, բացի այս երկու հարյուր ութսունյոթ հոգուց, [դարձյալ ընկան] էլի յոթ հարյուր քառասուն հոգի։ Ով այս բոլորը միասին լինում է հազար երեսունվեց մարդ։

Իսկ պարսիկների կողմից այն օրը ընկան երեք հազար հինգ հարյուր քառասունչորս մարդ։ ...Շատ խոր վշտացավ Մուշկան Նիսալավուրտը, երբ տեսավ, որ իր զորքի ստացած սաստիկ հարվածները երեք անգամ ավելի մեծ էին, քան հայերինը։ Նրա ուժն ու զորությունը կոտրվեց, ընկավ, և նրա սիրտը չէր հանգստանում, որպեսզի մտածի ու որոշում անի, որովհետև պատերազմն այնպես չվերջացավ, ինչպես կարծում էր ինքը։ ...Դեպքերն արդարությամբ գրել ու հայտնել՝ վախենում էր Թագավորից, բայց թաքցնել նույնպես չէր կարող, որովհետև այդպիսի մեծ կռիվը ծածկել չէր լինի։

***

Իսկ երանելի առաքինիների և կապվածների ու պատերազմում ընկածների կանանց ամբողջ Հայոց աշխարհում ես հաշվել չեմ կարող, որովհետև չիմացածներս ավելի շատ են, քան՝ իմացածներս։ Հինգ հարյուրի չափ անուն-անուն ճանաչում եմ, ոչ միայն նրանցից, ովքեր ավագազուններից էին, այլև շատերին կրտսերագուններից։

Բոլորը միահամուռ երկնավոր նախանձով լցված ամենևին պակաս չմնացին նրանցից, ովքեր աշխարհ չէին մտել։ Որովհետև թե՛ ավագագուն-

www.a-pdf.com

ները և թե՛ մանկագույնները հավատի միևնույն առաքինությամբ զրահավորվեցին։ Ամենևին չհիշեցին մայրենի ազատության փափկության տենչը, այլ իբրև այնպիսի մարդիկ, որոնք հենց սկզբից նեղությունների են համբերել, չինական սովորությունների օրինակով և տանջվելավ են անցկացրել իրենց կյանքը, նրանցից էլ ավելի մեծ վշտերի համբերել հանձն առան։

Ո՛չ միայն իրենց հոգիների մեջ մխիթարված մնացին հավիտենական հույսի աներևույթ զորությամբ, այլև մարմնի նեղություններով է՛լ ավելի մեծացրին ծանր բեռը։ Որովհետև թեպետ յուրաքանչյուրն ուներ իր սպասավորը, բայց չէր երևում, թե ո՛րն է տիկինը և կամ ո՛րը նաժիշտը։ Բոլորի զգեստները միատեսակ էին, և միապես բոլորն էլ պառկում էին գետնին։ Ոչ մեկը մյուսի համար անկողին չէր գցում, որովհետև նույնիսկ չգիտեին խոտեղենները չոկել միմյանցից։ Միևնույն թուխ գույնն ունեին փսխաթները, միևնույն սև գույնն էին գլխաոտակերի բարձերը։

Չկային նրանց համար առանձին անուշահամ կերակուրներ պատրաստող խոհարարներ և ոչ էլ չոկ հացարարներ՝ ազատների սովորության համաձայն նրանց սպասավորելու համար, այլ [այդ ամենը] ընդհանուր էր։ Շաբաթամուտն [անց էին կացնում] անապատում բնակվող միայնակյացների կարգով։ Ոչ ոք մյուսի ձեռին ջուր չէր լցնում, և ոչ էլ կրտսերները ավագներին սրբիչ էին մատուցանում։ Փափկասուն կանանց ձեռքը օճառ չընկավ, և յուղ չառաջարկվեց ուրախության հանդեսների համար։ Նրանց առջև մաքուր սկուտեղներ չդրվեցին և ոչ էլ բաժակակալներ տրվեցին ուրախության համար...

Փոշոտվեցին ու ծխոտվեցին նորահարսերի սրահակներն ու առագաստները, և սարդի ոստայններ ձգվեցին նրանց հարսնարաններում, կործանվեցին նրանց դահլիճների բարձր գահերը, և խանդարվեցին նրանց սեղանների պարագաները. ընկան-կործանվեցին նրանց ապարանքները, և տապալվեցին ու ավերվեցին նրանց ապաստան ծառայող ամրոցները։ Չորացան-ճռճռացին նրանց ծաղկանոցների բուրաստանները, և արմատախիլ եղան նրանց գինեբեր այգիների տունկերը։

Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոբիկ, ոտքո՜վ էին գնում աղոթատները, առանց ձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը։ Ովքեր իրենց մանկությունից հորթերի ուղեղներով և էրեների փափուկ մսով էին անվել, մեծ ուրախությամբ խոտեղեն կերակուր էին ընդունում վայրենիների նման և ամենևին չէին հիշում իրենց սովորական փափուկ կյանքը։ Նրանց մարմինների մորթը սև գույն ստացավ, որովհետև ցերեկն արևակեզ էին լինում և ամբողջ գիշերներն էլ գետնի վրա էին քնում։

Մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ, կռիվ բաց արին ու մարտնչեցին ծայրագույն մեղքերի դեմ, կտրեցին և դեն գցեցին նրա մահաբեր արմատները։ Միամտությամբ հաղթեցին խորամանկությանը և սուրբ սիրով լվացին նախանձի կապտագույն ներկվածքը, կտրեցին ագահության արմատները և չորացրին նրանց ոստերի մահաբեր պտուղները։ Խոնարհությամբ հաղթեցին ամբարտավանությունը և միևնույն խոնարհությամբ հասան երկնավոր բարձրությանը...

Շատ ամեհիների սառույցներ հալվեցին, գարուն հասավ, և նոր ծիծեռներ եկան. կենցաղասեր մարդիկ տեսան և ուրախացան, բայց նրանք երբեք

չկարողացան տեսնել իրենց անձկալիներին։ Գարնանային ծաղիկները նրանց մոտ էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու։ Որսի բարակները վերջացան, և բոլորովին դադարեցին որսորդների արշավանքները։ Նրանք հիշվեցին միայն գրված հիշատակարաններով, և ոչ մի տարեկան տոն նրանց հեռու օտարությունից տուն չբերեց. Նրանց ճաշատեղերին նայեցին ու արտասվեցին և բոլոր ատյաններում հիշեցին նրանց անունները։ Շատ աթոռներ էին կանգնեցրած նրանց անվանը, և ամեն մեկի անունը նշանակված էր նրանց վրա։

Եվ մինչդեռ այստեղ ամեն կողմից ալեկոծվում էին նրանց մտքերը, նրանք ամենքին չթողեցան երկնավոր ազատքինությունից։ Դրսից նայողներին երևում էին սրտեր ազատ և չարչարված այրիներ, իսկ իրենց սրտերում զարդարված ու մխիթարված էին երկնավոր սիրով։

Այլևս ավարտությունն չարին հնազանդ երկրից ելած մեկին հարցնելու, թե ո՞րը կլինի, որ տեսնենք մեր սիրելիներին...

www.e-pdf.com

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

(Ե ԴԱՐ)

ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

Այս Հայկը... վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով։ Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների ու դյուցազունների վրա տիրապետելու։ Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնատիրության դեմ, երբ մարդկային ցեղը սփրոված, տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա՝ բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժեղների մեջ։ Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ կատաղած՝ սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էր մյուսներին տիրելու, երբ Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և ամբողջ երկիրը գրավել։ Հայկը, չկամենալով սրան հնազանդվել, Բաբելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո չվեց, գնաց Արարադի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային կողմերում՝ իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի և ուրիշ ընդոծիններով, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով։ Գնում, բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից։ Հայկը, նրանց իրեն հնազանդեցնելով, այնտեղ կալվածական բնակելի տուն է շինում և տալիս ժառանգություն Կադմոսին՝ Արամանյակի որդուն...

Իսկ ինքը... մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք, գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն, թե այստեղ բնակվողները հայեր են՝ Թորգոմի տան սերնդից։ Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն։ Այստեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնանիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավաթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դյուցազնին։

***

...Երբ Տիտանյան Բելը իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկեց հյուսիսային կողմը Հայկի մոտ, որ նա գա հնազանդության և խաղաղությամբ ապրի։

— Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր,— ասում է,— սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և

www.a-pdf.com

ինձ հնազանդվելով, խաղաղ ապրիր, որտեղ որ կհաճես իմ երկրում բնակվելու։

Հայկը Բելի պատգամավորներին ետ է դարձնում՝ խստությամբ պատասխանելով։ Ուղարկվածը վերադառնում է Բաբելոն։

Ապա Տիտանյան Բելը զորք է հավաքում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս, հասնում է հյուսիս՝ Արարադ երկիրը, Կադմոսի տան մոտ։ Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ՝ իրենից առաջ արագավազ սուրհանգակներ ուղարկելով։

— Գիտցած եղիր,— ասում է,— ով մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա անմահ քաջերով և երկնագեղ հասակով կովող հսկաների հետ։ Եվ ես, իմանալով, որ նա մոտեցել է իմ տանը, փախա և ահա տագնապահար գալիս եմ քեզ մոտ։ Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես։

Իսկ Բելը հանգուցն ու հակա ամբոխի զորությամբ, ինչպես մի մեծ հորձանք, զառիվայրից ներքև հեղեղվելով, շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա։ Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ, գեղազանգուր ու զվարթաչյա հսկան շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշների, որ իրեն էին ենթարկվում, գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերը աղի են և իրենց մեջ մանր ձկնեու են պարունակում։ Եվ իր զորքերին ձայնելով՝ ասում է նրանց.

— Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, պետք է աշխատենք այն տեղին պատահել, որտեղ անցած կանգնած կլինի Բելը քաջերի բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք, և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք։

Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են շատ բարձր լեռների միջև մի դաշտաձև տեղ։ Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով՝ տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան սուրում է երկրի երեսի վրա, իսկ Բելը մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում։ Հայկը ճանաչեց սպառազինված չոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև։ Նա կրում էր նշաններ ունեցող վերջերով երկաթե գլխանոց, թիկունքի և կրծքի վրա պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը։ Իր աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում՝ վահան, նրա աջ ու ձախ կողմում գտնվում էին ընտիր զորականներ։ Հայկը, տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ կողմի ընտիր մարդկանց, կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով՝ ձախ կողմը, որովհետև սրանք աղեղ և սուր գործածելու մեջ հաջողակ մարդիկ էին, իսկ ինքը կանգնում է առջևից, իսկ մյուս բազմությունը կանգնեցնում է իր ետևում, գասավորում է մոտավորապես նետանկյունի ձևով և հանդարտ առաջ է շարժվում։

Եվ երկու կողմի հսկաները, միմյանց հասնելով, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին՝ գոռհելով, և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց

www.a-pdf.com

հարձակումների ձևերով։ Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ, սրի բերանի հանդիպելով, թավալվում, ընկնում էին գետին, իսկ ճակատամարտը երկու կողմից էլ անլուծելի էր մնում։ Այս անսպասելի սարսափելի դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և ետ-ետ քաշվելով՝ սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր։ Ապովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատ կազմի։ Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով, իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և այաքը, շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում, և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվում, ընկնում է վայր ու շունչը փչում։ Իսկ ամբոխը, այս մեծ քաջագործությունը տեսնելով, փախչում է, ամեն մեկը՝ իր երեսը դարձած կողմը։

...Ճակատամարտի տեղը հաղթական պատերազմի պատվին շինում է դաստակերտ և անունը դնում է Հայք։ Այս պատճառով գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր։ Իսկ այն բլուրը, որտեղ ընկավ Բելը քաջ զորականների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ ասվում է Գերեզմանակ։ Բայց Բելի դիակը դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հայք և թաղել մի բարձրավանդակ տեղում՝ տես իր կանանց և որդիների։ Իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք։

ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ

Ինձ համար քաղցր է պատմել նաև գեղեցիկ երվանդակերտ դաստակերտի մասին, որ շինեց... Երվանդը գեղեցիկ ու չքնաղ հորինվածքով, որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը՝ աչքի մյուս բոլորակը։ Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին։ Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը [հիշեցնում էին] ծնոտների գեղեցիկ ողորկությունը։ Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերանում էր մի բերան, իր երկու շրթունքներով։ Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա։ Արդարև, բերրի և թագավորական դաստակերտ։

Երվանդի այս բոլոր շինածները [հետագայում] Տրդատ Մեծը պարգևում է կամսարականների ցեղի մարդկանց, իբրև իր մտերիմներին և Արշակունյաց ցեղի արյունակիցներին...

ՋԻՐԱՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մերուժանը իմաց տվեց Խորասանի երկրում Շապուհին, թե ինչպիսի մեծ օգնություն ցույց տվեց Պապին Թեոդոսը, ուստի Շապուհից հրաման է տրվում, որ պարսից ամբողջ զորքը Մերուժանի հետ Հայաստան գնա պատերազմի։ Այսպես և Պապն ու Տերենտիանոսը իմաց են տալիս Թեոդոսին,

www.a-pdf.com

թե Շապուհը իր բոլոր զորքերին, բացի դրանիկներից, հրամայեց մեր դեմ դուրս գալ։ Ապա նաև Թեոդոս Օգոստոսը հրամայեց Ադե մեծ կոմսին գնալ Պապին օգնության, իր հետ վերցնել նույնիսկ քաղաքների հետևակ պահապաններին, որոնք մետաքսյա վիշապանիշ դրոշներ էին կրում։

Պատերազմը գումարվեց Ձիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մոտեցան։ Հայոց քաջ նախարարների պատանիներն իրենց կամքով խիզախելով մտան երկու ճակատների մեջ, առաջնորդությամբ իրենց սպարապետ Սմբատ ասպետի՝ Բագարատի որդու, որ Բագրատունյաց դեղից էր։ Պարսից զորքերի միջից էլ դուրս եկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մեջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրիվ եկան։ Երբ պարսից պատանիները ետ էին դառնում, մերոնք անմիջապես հասնում էին նրանց ետևից և ինչպես փոքրիկ, որ անտառը տերևաթափ է անում, արագորեն նիզակներով նրանց վայր էին գցում ձիերից, և սառը դիակները գետնի երեսին փռում՝ չթողնելով նրանց ճակատի մեջ մտնել։ Իսկ երբ պարսիկներն էին մերոնց ետ դարձնում, սրանք մտնում էին հունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իբրև մի ամուր քաղաք և ամենևին չէին վնասվում։ Որովհետև Գորգոնոսը՝ [հունաց] հետևակ զորքի հրամանատարը, այսպես վահաններով պատեց Պապի ճակատը, որպես պարիսպով։

Քանի որ հունաց զորքերն սպառազինված էին ոսկեղեն և արծաթեղեն զենքերով, և նրանց ձիերը նույնպես զարդեր էին կրում, ուստի նրանք կարծես մի պարիսպ էին կազմում, որոնցից շատերը իրենց զգեստների ջղյա և կաշյա պահպանակների պատճառով կարծր քարերի տեսք էին ստանում։ Եվ նրանց վրա անխնայում գետերը ծածանվում էին ստվերախիտ ծառերի սաղարթների նման։ Իսկ վիշապների [վիշապի նկարով դրոշակները] գալարումները, որոնք քամուց ուռչելով, ահագին կերպով բացել էին բերանները, ուրիշ բանի չեմ կարող նմանեցնել, այլ միայն մի ադամանդյա լեռան, որ իջնում է դեպի ծովը, այսինքն՝ հունաց ամբողջ ճակատը՝ դեպի պարսկական զորքը։ Սրանք էլ նմանվում էին դեպի մի կողմ լայնորեն ծավալված մի հզոր գետի։ Հագած զրահները արդարև ջրի գույնի տպավորություն էին թողնում։

...Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դեմուդեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և [այդ ճակատից] դուրս էին թռչում մեր նախարարներից լավ զրահավորվածները՝ ինչպես փայլատակող ճառագայթներ, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, որովհետև [դիմացից] ծագած արևի պատճառով չէր կարող դեմուդեմ նայել։ Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ, և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսկական գնդի դեմ։ Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը հանդիպեց մի մեծ խմբի, որի մեջ էր ղեկաց քաջ Շերգիր թագավորը, որ ճակատի մեջտեղում պինդ կանգնած էր միջին գնդի գլուխ, անցած։ Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց, քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման և խումբը շուռ տալով՝ փախուստի մատնեց։ Եվ այսպես հունաց և հայոց զորքերն առհասարակ... զորացած, թշնամիների դիակներով լցրին ամբողջ դաշտը և մնացածներին փախցնելով՝ հալածեցին։ Սրանց հետ էր և աղվանից Ուռնայր թագավորը, որ խոցվելով Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղից, պատերազմից դուրս վանվեց։

Բայց չարագործ Մերուժանը, ձիու վիրավորված լինելու պատճառով, չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ։ Հայոց սպարապետը աճա-

www.a-pdf.com

պարելով, հասավ նրա մոտ, նրա հետ եղող զորքերին կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոգհովտի եղեգնուտի ափին։ Մտածելով, թե գուցե Մեծ Ներսեսը նրան փրկի, ուստի բանակ չտարավ, այլ նույն տեղերում չարագործին փչացնելու համար պատրաստ է պտնում վրանաբնակներ, որոնք կրակ էին վառել, որպեսզի միս խորովեն երկաթե շամփուրներով։ Նա, շամփուրը տաքացնելով, երկու փաթ ոլորեց պսակի ձևով և [ապա] շիկացնելով, ասաց.

— Քեզ պսակում եմ, Մերուժա՛ն, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով։

Եվ կրակի նման շիկացած [շամփուրը] դրեց Մերուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց։ Այնուհետև երկիրը խաղաղվեց՝ Պապի ձեռքի տակ նվաճվելով։

ՈՂԲ՝

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՑԵՂԻՑ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՀՄԻՑ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը։

Ողբում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ, բեմիդ բարեկարգություններդ անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված։ Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ հավաքված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում։

Երանի՛ առաջին և երկրորդ փոփոխություններին, որովհետև եղավ մի ժամանակ, որ փեսան և խաչեղբայրը հեռացան, բայց դու, հարսդ, համբերեցիր՝ ողջախոհությամբ պահելով ամուսնությունդ։ Մյուս անգամ էլ, երբ մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու, հարսդ, չապականվեցիր. թեպետ բռնի կերպով փեսան վտարվեց. երբ ընդվզող որդիները իրենց ծնողին անարգեցին, նման այն խորթերին, որոնք արժանապես անարգում են օտար հորը և եկվոր խորթ հորը, բայց դու այս անգամ էլ ամեն բանով լքված չմնացիր. ակնկալելով քո [փեսայի] դարձին, դու հովվակցի ձեռքով մանուկներիդ փայփայեցիր, ոչ ինչպես տեգերոջ, այլ ինչպես նույն զավակների տեր երկրորդ հոր ձեռքով։ Իսկ այս երրորդ անգամ հեռանալիս՝ այլևս չկա դարձի ակնկալություն, որովհետև մարմնից բաժանվեց իր ընկերոջ ու գործակցի հետ։

Նրանց համար լավ է Քրիստոսի հետ բնակվել, Աբրահամի գոգում հանգչել և հրեշտակների խմբերը տեսնել։ Բայց դու ես, որ այրիությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, և մենք ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից։ Որովհետև այնպես չէ [մեր վիճակը], ինչպես հնում այն [իսրայելացիների] ժողովուրդը, այլ մեր թշվառությունն ավելի է։ Որով-

www.a-pdf.com

Հետև Մովսեսը վերացվում է, բայց Հեսուն չի հաջորդում, որ առաջնորդի դեպի Ավետյաց երկիրը։ Ռոբովամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց Նաբատի որդին, և Աստծու մարդուն ոչ թե առյուծը ոչնչացրեց այլ հիսուն տարիքը։ Եղիան համբարձվեց, բայց Եղիսեն չմնաց կրկնակի հոգով՝ Հեուեին օծելու, այլ դեռ Ազայելն էլ հրավիրվեց Իսրայելին կոտորելու, Սեղեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբաբելը, որ տերությունը նորոգի։ Անտիոքոսը հարկադրում է թողնել հայրենի կրոնը, բայց Մատաթիան չի դիմադրում. պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում։ Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք, արհավիրք հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր։

Ավա՞ղ այս զրկանքներին, ավա՞ղ այս թշվառ պատմությանը։ Ի՞նչպես դիմանամ այս ցավերին, ի՞նչպես ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս հատուցեմ խոսքով ծնունդի և սնունդի փոխարեն։ Որովհետև նրանք ինձ ծնեցին և սնեցին իրենց տված ուսումով և ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու։ Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ ամենիմաստ գիտությամբ և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ, Բյուզանդիայից շտապ-շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքում պարել, խիզախ և արագ շարժումներով, և առագաստի երգեր երգել, այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասցրի տեսնել նրանց աչքերի փակվելը, լսել նրանց վերջին ձայնն ու օրհնությունը։

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում։ Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիների համար և ահավորությունը շեղվածների համար. ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ է գրավում, ո՞ւր է երկայն ճանապարհներ հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացողը, կորավ ժողովուրդը, ծածկվեց նավահանգիստը, լքեց օգնականը, լռեց խրախուսիչ ձայնը։

Ո՞վ այսուհետև պետք է հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իմ՝ աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի՝ մասամբ իր՝ որդուց հաղթվելով։ Ո՞վ պետք է զսպի առողջ վարդապետությանը հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք, ամեն բանով քանդված ու քայքայված, շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը. ամեն խոսքի առթիվ նրանք հավասարապես նեղանում են, և մարդկանց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ։ Ո՞վ պետք է նրանց պապանձեցնի սաստելով և մեզ սփոփի գովելով և չափ դնի խոսքի և լռության։

Երբ մտածում եմ այս բաների մասին, սիրտս հառաչում և արտասվում է և ցանկանում եմ տխրալից և ագավոր խոսք ասել։ Եվ չգիտեմ ի՞նչպես հորինեմ իմ ողբը և կամ ո՛ւմ արտասվեմ. արդյոք իմ թշվառ մանուկ թագավորի՞ն, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ դեն նետվեց և նախ քան մահով մեռնելը անարգաբար աթոռից կործանվեց, թե ինձ, որի գլխից վերցվեց փառավորող գեղեցիկ կյանքին օգտակար պսակը, արդյոք իմ հո՞րն ու քահանայապետին, այն վսեմ մտքին, որ ուր գնում, տա-

www.a-pdf.com

նում էր կատարյալ խոսքը, որով կառավարում էր և բարեկարգում, և ամենաձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս դեմքերին ու անձահարում էր օտարոտի լեզուները. թե ինձ, նրա հոգու խանդից ղրկվածիս ու տնանկիս. արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր քշում ամբարշտությունը, թե ինձ, նրա խրատները խմելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս, արդյոք մեր երկրին արդեն եկա՞ծ աղետները, թե՞ ապագայում սպասվողները:

Ո՞վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտմությանը, ո՞վ մեզ կընկերանա՝ ցավակցելով մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու: Ձարթի՛ր, Երեմիա, զարթի՛ր և մարգարեանալով հանդերձ ողբա այն, ինչ թշվառություններ որ կրեցինք և ինչ պիտի կրենք. գուշակիր, որ տգետ հովիվներ պետք է երևան գան, ինչպես [գուշակեց] Ձաքարիասը իսրայելացիների համար:

Ուսուցիչները տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ Աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ Հոգով, ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվամոլ, քան թե աստվածասեր:

Վիճակավորները հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող:

Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Աշխարհականները ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, ժառանգությունից փախչող:

Ձինվորականները անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ, ավազակներին համաբարո:

Իշխանները ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր, ստրուկներին համախոհ:

Դատավորները տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած:

Եվ ի՞նչ կա այս բոլորի դիմաց, եթե ոչ այն, որ Աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը երաշտացած, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղյամաբեր. ջրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. հողի պտուղների անբերրիություն և անասունների անաճելություն, այլև երկրաշարժեր և սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբարիշտներին խաղաղություն չկա:

Որովհետև [մեզ] տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս.

www.a-pdf.com

կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախսվում է այս ունայն կյանքի համար։ Ավազակներ են գալիս անհատնում և շատ կողմերից. տները թալանվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրգեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ։ Աստվածապաշտությունը մոռացված է, և կա գժոխքի ակնկալություն։

Սրանից թող փրկի Քրիստոս Աստված մեզ և բոլորին, որոնք ճշմարտությամբ երկրպագում են նրան։ Նրան փա՛ռք բոլոր արարածներից, ամեն։

www.a-pdf.com

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

(Ե ԴԱՐ)

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հատվածներ)

Ջ. Արշակունի թագավորության երկու մասի բաժանվելու ժամանակ. Հայոց աշխարհի արևմտյան կողմը ենթարկվեց հույների թագավորին և արևելյան կողմը խոնարհվեց պարսից թագավորին՝ դառն և խիստ ծառայությամբ։ Այնուհետև պարսից թագավորի բաժնի հայոց նախարարները գնացին և խնդրեցին իրենց համար թագավոր Արշակունյաց ազգից՝ բուն կարգի համաձայն, Պարսից Շապուհ թագավորը, կատարելով նրանց խնդրանքը, Արշակունյաց ազգից Խոսրով անունով մեկին թագավոր նշանակեց նրանց։

Հայոց նախկին թագավոր Արշակը, որովհետև միահեծան իշխան էր ամ-վանդակ Հայոց աշխարհի վրա, երբ տեսավ, որ իրենց ազգի թագավորության մեծ իշխանությունը խախտվելով ու քայքայվելով մասնատվեց, սաստիկ տրտմությամբ ալեկոծված՝ տարակուսեց իր սրտում. նախ տեսավ Հայոց աշխարհի՝ երկու թագավորների ծառայության լծի տակ ընկնելը և երկրորդ՝ Հայոց աշխարհի լավագույն պիտանի և պտղաբեր մասը պարսից թագավորի իշխանության տակ. թեպետ ուրիշ շատ գավառներ բաժին էին ընկել հույների թագավորին, բայց այն համեմատում էին միայն Այրարատյան գավառի հետ։

Արշակ թագավորն իր սիրելիների հետ խորհում և մտքում տակնուվրա էր լինում, ասելով. «Թեև մինչև այժմ երբեմն հակառակությամբ կամ սիրով եղել ենք իրար հետ, մենք պատերազմով հասկացրել ենք իրար, թե ինչպես մի մարդ պարտավոր է ճանաչել իրենից ավելի քաջի նախապատվությունը. թե խոնարհվելով սիրով հանդիպում էինք իրար, նրանց եղբայր էինք համարվում՝ փոքր մասի գահակցությամբ ու պատվով. և բոլորովին ծառայության անուն չստացանք ու չկրեցինք մեզ վրա։ Իսկ այժմ մեր և մեր պապերի երկայնամիտ ու քաղցր Աստծուն բարկացնելու պատճառով մատնվեցինք ստրկության, և անարգության հասած՝ անխնա բաժանվեցինք, այլև տեսանք, որ մեր հանգստության և բնակության գեղեցիկ երկիրը պարսից անաստված ու գոռոզ ազգն է ժառանգել։ Ուստի նախընտրելի է ինձ համար թողնել Այրարատի ցանկալի և ամենափափագելի երկիրը, իմ նախնյաց բնիկ ու սեփական տեղերը, գնալ աղքատության եռևից ու ապրել ցանկալի կարոտով, քան թե այս աշխարհի կյանքը սիրել, որ ակամա թողնելու ենք, և բնակություն ընտրել այն մասում, քան անարգությամբ բնակվել անօրենների մեջ, ու միշտ մտատանջությամբ մնալ այս երկար կամ կարճ անհայտ կյանքում և մեռնել անարգությամբ, ըստ որում ոչ արժանի թագավորական պատվի ու փառքի»։

www.a-pdf.com

է. Արշակ թագավորն իր մտքում այս բոլորը խորհելով, թողեց իր պապերի բարի ու սեփական ժառանգությունը, փառավոր, անվանի, երևելի, ամենաբույս, ամենաբուխ, ամենալիառատ, մարդու կյանքի պետքերի, վայելչության, ուրախության, օգտի և դեղի համար ամեն ինչ ունեցող Այրարատ գավառը։ Մեծատարած և որսալից դաշտերը, շուրջը բազմած գեղեցկադիր և խոտավետ լեռները, որոնք կճղակավոր և որոճող և այլ շատ վայրի կենդանիներով լիքն են։ Նրանց գագաթներից առատ ջրեր են հոսում, դաշտերը ոռոգելով՝ առատորեն, անպակաս մատակարարում են անթիվ տղամարդկանց ու կանանց բազմությամբ լցված թագավորական քաղաքին հաց և գինի, անուշահոտ, քաղցրահամ բանջարներ և զանազան յուղալի սերմեր։ Իսկ դեպի լանջակողմերն ու սարահարթ վայրերը, եթե մի նորեկ մարդ իր աչքերը դարձնի, հանդերձներ կկարծի և ոչ թե համասփյուռ ծաղիկների գույներ։ Նրանց [լեռների] թանձր ու առատ խոտերն արոտական, ընտանի անթիվ ավանակների ու վայրի կենդանիների խմբերին կշտացնելով՝ մորթերն են թանձրացնում, գավակները գիրացնում և պարարտությամբ ամրողջ մարմինը հարստացնում։ Իսկ անուշահոտ ծաղիկների առատ բույրը, նեոտավոր, որսասեր քաջ այրերին և գիշեր-ցերեկ հանդում ապրող հովիվներին առողջություն է պարգևում, մտքի սթափությունն է զորացնում ու թարմացնում է։ Այնտեղ կան նաև խելացի ու հմուտ բժիշկների ստուգագույն դեղերի օգտակարության համար անհրաժեշտ զանազան տեսակի բույսերի արմատներ և արագահաս ախտահալած սպեղանիներ, որոնք երկար ժամանակ ցավերի մեջ տառապողներին առողջություն են պարգևում։

Իսկ դաշտերի՝ ամեն կարգի բարիքներով չափազանց հարստությունը գրավում, կանչում է աշխատասեր մարդկանց, ինչպես իշխանական հրամանով և իր բարիքներով լիացնելով նրանց, միանգամայն հրապուրում, որքան կարելի է շուտ դեպի իրենց դառնալ։

Նրանք իրենց օգտակարությունը ոչ թե միայն երևութապես են մատուցում մարդկանց, այլ ավելի ջանասեր աշխատողներին երկրի տակ եղած գանձերն են ցույց տալիս, որ այս աշխարհի վայելչությունն ու օգուտը իրենց անձերին պատրաստեն։ Ոսկի, պղինձ, երկաթ ու պատվական քարեր վերցնելով՝ արհեստավոր մարդիկ զարդարում են թագավորներին փառավոր զարգերով ու բանվածքներով. թագերի, խույրերի ու հանդերձների վրա շարելով՝ միավորում են ոսկեհյուս։ Այլև ջրերի հետ միախառնվելով՝ բնական համեղություն են տալիս ամեն տեսակ կերակուրներին։ Արարատի ամենացանկալի դաշտը զուր չի բուսցնում իր վրա եղեգնատեսակ բույսերի արմատներ. նրանցից դուրս եկած կարմրագեղ զարդարանքի գույների որդերը օգտասերներին վաստակ ու գեղեցկություն են ընծայում։ Եվ մեծ ու փոքր գետերը նույնպես, համով ու տեսքով զանազան, բազմատեսակ ձկներով ուրախացնելով, մեծացնում են կարողության պատիվը, ժիր ու վստահ աշխատողների որովայնին հագուրդ տալով։

Երկիրը մաքուր ջրերով սնուցանում է իր մեջ շատ թռչուններ՝ որսասեր ազնվականների ուրախության ու զվարճանքի համար. կարկաչաձայն, քաղցրախոս, քարքարուտներ սիրող ու ժայռերի ծերպերում թաքնվող կաքավների ու սալամբների երամներ, կամ եղեգնաբնակ, թփերում ու մացառներում ապաստանող պարարտամարմին անուշահամ վայրի աքարներ. այլև ջրասույզ, մամռասեր, խոտակեր, մեծանձն ու մեծամարմին հավքեր, փորը, թանձրն ու սագը և ուրիշ բազմաթիվ ցամաքային ու ջրային թռչուններ։ Իսկ

www.a-pdf.com

նախարարների գունդը ազատների զավակների հետ բարակներով ու թաքարդներով որսի գնալով՝ ոմանք վայրի ցոերի ու այծյամների ետևից են վազում, հորդորական և միայն աղեղի վերաբերյալ խոսքեր խոսելով, մյուսները, եղջերուների ու եղնիկների խմբերին ձիով հետապնդելով, քաջ նետարձակների գործ էին կատարում։ Կեսը՝ սրերով, մենամարտիկների նման, հաղթանդամ վարազներ էին տապալելով սպանում։ Նախարարազուն փոքր տղաներից շատերը դաստիարակների ու ծառաների հետ բազեներով զանազան տեսակ թռչուններ որսալով, բերում էին ուրախության ընթրիքն առատացնելու համար։ Եվ այսպես յուրաքանչյուր որսով գոհացած՝ գնում են ուրախությամբ։

Ջրերում աշխատող և որս փնտրող ձկնորսների մանուկները, նայելով նախարարների տղաներին, դիմավորում են և իրենց բռնած ձկները, գետի կղզուն ձեռք բերած վայրի բազմատեսակ թռչունների ձագեր ու ձվեր ընծայաբերում են իշխաններին։ Նախարարները, հոժարությամբ ընդունելով նրանց ընծայածների մի մասը, իրենք էլ ձկնորսների որդիներին իրենց ունեցածներից ընծայում են ավելի շատ։ Ամեն տեսակ բարիքներով բեռնված՝ իրենց պալատները հասնելով, կենդանի մնացած որսերը նվիրում են տանը մնացող աշխատավորներին, մանավանդ և օտարներին։ Ընթրիքի ժամանակ պետք է տեսնել բոլորի իրար վրա դարսված երեների բազմությունը և նրանց գլուխները իրենց առաջ կիտելը. դրանցով ուրախանում են ձկնակեր և մսակեր մարդիկ։

Ը. Այժմ այսպիսի ցանկալի, ամենախնամ արարիչ Աստծու կամեցողությամբ՝ աննման Արարատյան գավառը, որ Հայոց աշխարհի գլուխն է, նույն ցանկալի համբավը վայելող, ամեն բարիքներով լի գավառը, որ իր վրա կրում է լիության օրինակ, սուրբ Գրքի խոսքերի համաձայն եգիպտացոց երկրի և Աստծու դրախտի նման, Արշակունյաց ազգի սեփական, բնիկ կալվածքը՝ վաղարշապատ քաղաքը, Արշակունի թագավորների մայրաքաղաքը, անհամար պալատների բարձր շինվածքները, լիառատ դաշտերի ուրախությունը, հրեշտակի ցույց տված Աստծու սուրբ տունը, այսինքն՝ մեծ եկեղեցին և ճգնակյաց երանելի կույսերի վկայարանները, որոնց Արշակունյաց ազգը անարժան գտնվեց իր վատ գործերի պատճառով և սուրբ Ներսեսի խոսքի համաձայն Աստծու երեսից մերժվեց ու հունաց և պարսից թագավորների միջև բաժանվեց։ Նրանք, Հայոց մեծ աշխարհը բաժանելով, իրենց ձեռքի տակ առան։

Հայոց Արշակ թագավորն այդ պատճառով գերիի նման հեռացավ գնաց Արարատյան գավառից, նախընտրեց գնալ փոքր բաժնի երկիրը և հնազանդվել հունաց թագավորին, քան թե մնալ այսպիսի առատաբերք փառավոր գավառում և ամեն օր տեսնել հավատի ու սուրբ եկեղեցու անարգվելը, տեսնել այն նախատինքը, որ Աստծու տան պաշտոնյաները կրելու էին անօրեններից և իր ազգի ու թագավորության խայտառակվելը պարսից գոռոզ իշխաններից։ Նա ավելի նախապատիվ համարեց այս աշխարհի կարճ կյանքը իբրև քրիստոնյա անցկացնել խաղաղության մեջ, քան թե սուտ փառքով, արհամարհվածի նման այստեղ ապրելով՝ զրկվել հավիտենական կյանքից ու մատնվել հավերժ անմարելի կրակին։ Այս ամենը մտածելով տարակուսած, (Հայոց Արշակ թագավորը) թողեց իր պապերի փառավոր ժառանգությունը և գնաց հունաց թագավորին ծառայելու։

www.a-pdf.com

***

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, թշնամիներին կոտորելուց վերադառնալով, գնաց և գիշերվա մնացած մասը, մինչև առավոտ, հանգըստացավ Շահա ոյուզի գոմերում: Երբ լույսը բացվեց, նա գնաց բանակեց Շահա գյուղում:

Վահան Մամիկոնյանի զորքերը ուզում էին փոքր-ինչ հանգստանալ գիշերվա ծանր չարչարանքից հետո, երբ աչքերը բարձրացնելով՝ տեսան, որ իրենց վրա է հարձակվել պարսից զորապետ Շապուհը և զայրագնած սրտով մոտոում է գազանի նման: Որովհետև բոլոր օրերից առավել այն գիշերվա վնասներն էին չարչարել թվում նրան, և իրոք այդպես էլ էր: Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, տեսնելով պարսից զորավար Շապուհի՝ զորքի ամբողջ բազմությամբ հանկարծահաս հարձակումը իր վրա, թեև գիտեր, որ իր գունդն անպատրաստ էր և նվազ՝ թշնամիների բազմաթիվ զորքերից, այնուամենայնիվ չվախեցավ բնավ, այլ հրամայեց և շտապ դասավորեց եղածներին և բարձրաձայն գոչում էր առյուծաբար, ասելով.

— Մի մարդ, որ երկու բանից մեկին է հավասում, անհնար է, որ սխալվի: Երկուսին հանդիպելը պատվավոր է ու արժանի հարգանքի, սակայն երկուսից մեկը առավել մեծ է, բարձր և ցանկալի, քան մյուսը, և անմիտ ու անիմաստ չէ այդ հանդիպումը: Դուք ցանկացաք ապրել համբերությամբ և մեռնել հույսով, իսկ ապրելն ու մեռնելը պարծանք է, սուրբ ուխտի համար մեռնելը՝ մարտիրոսություն: Արդ, հաղթության բաժնով շատ անգամ Աստված պայծառացրեց մեզ, և շնորհակալ ենք. իսկ այն, որ ամենից մեծ և ամենից բարձր է, այն ևս Աստված պիտի շնորհե մեզ ու պսակե: Բայց և այժմ թող ոչ մեկը երկնչելով չզարհուրի թերահավատությամբ, որովհետև սուրբ Հոգին, որ ասաց, թե՝ «Ուր Տերն Աստված ջարդում է և իր սիրելիների ձեռքով ցույց տալիս, մեկը հազարին է հալածում, և երկուսը՝ բյուրերին շարժում»: Ուրեմն, մենք ևս նայենք Աստծուն, որ Աստված նայի մեզ՝ օգնելու համար: Մենք սակավ ենք թվով, շատ-շատ հարյուր, գուցե ավել կամ պակաս: Եվ թե Աստված կամենա խոստումը կատարել, ուրեմն նրանց զորքերի բազմությունը երեք հազարի չափ պիտի լինի, աչքի չափով չորս հազարից ավելի չեն լինի:

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, այս ամենն ասելով, բաժանեց մոտը եղած զորքը, տվեց զորապետներին՝ ում արժանի ու հարմար դատեց: Եվ մինչ նա պատրաստվում էր հարձակման, պարսից զորքերը կարգով պատրաստված, սաստկապես գալիս էին գրոհի, նայեց և տեսավ, որ հայոց գնգի զինվորները, երես դարձնելով Ավետարանի երդման ուխտից ու հայոց Վահան Մամիկոնյան զորավարից, բոլորը փախչում էին: Մնաց ինքը և ուխտապահներից՝ Մուշեղը, Մամիկոնյան տոհմից, երեք Կամսարականները՝ երանելի Արշավիրի որդիները, իրենց երկու կամ երեք քիկնատպահներով, ուրիշ մի քանի հազի ազատներից և նույն Մամիկոնյան տոհմից, բոլորը՝ քառասունի չափ կամ ավելի քիչ: Նրանք նույնպես տեսան ամբողջ հայոց գնդի փախուստը, և մեկը զարհուրելով առաց հայոց զորավար Վահան Մամիկոնյանին թե՝ «Զգո՛ւյշ, տեր, զգուշացիր», այսինքն՝ հնար կա այս ժամին նահանջելու և մեզ ազատելու: Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, խաչակնքելով իրեն, բարձր ձայնով ասաց.

— Ոչ մեկդ չզգուշացնի ինձ, Աստված մի արասցե, որ ես մարդու վրա հույս դնեմ, կամ մի բանով պարծենամ, բացի մեր տեր Քրիստոսի խաչից:

www.a-pdf.com

Եվ քաջաբար հարձակվեց պարսից բոլոր զորքերի վրա՝ սակավաթիվ լավ, ուխտապահ մարդկանցով, որ մնացել էին իր հետ։

Եվ հայոց զորավար Վահանի ու նրա հետ եղած այնքան փոքրաթիվ մարդկանց այն սարսափելի ու աներկյուղ ուժի վրա ապշելով՝ պարսից Շապուհ զորապետը շտապով Սյունյաց Գդիհոն իշխանի մոտ մարդ ուղարկեց և ասաց. .

— Օգնի՛ր իմ կողմին, որովհետև մի անպատմելի բան կատարվեց. եթե իսկապես մի աներևույթ ուժ կա, որ օգնում է նրանց և մեզ չի ներում, այդ ես չգիտեմ, իսկ եթե անմտորեն ցանկանում են իրենց կործանել, ապա շրջապատելով՝ այսօր կալանավորենք նրանց։

Սյունյաց Գդիհոն իշխանն ուրախությամբ լցվեց Շապուհի հրավերից և փութով այնտեղ արշավեց։

Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը, իր սակավ միասիրա մարտկանցով Աստծու օգնությամբ հարձակվելով, ճեղքեց պարսից բովանդակ բանակը, ինչպես ջրերի հորդահոս բազմությունը, որ պատռում է երկիրն ու անցնում։ Ինքն ու յուրայինները սպանեցին պարսից զորքերից բազմաթիվ հզոր պատերազմող մարդկանց, նիզակահարելով ծանր վիրավորեցին Սյունյաց Գդիհոն գոռոզ իշխանին՝ քևի տակից, և նրա զենքի չանեռված ամրությունը, որի վրա անօրենը հույս էր դնում՝ վերից վար պատռելով, նիզակի տեգը մխրճեցին լյարդի մեջ։ Գդիհոնը բարձրաձաղակ ձայներով, տանջվելով ու արտասվելով մի քանի օր, շունչը փչեց ու սատկեց առանց խոստովանելու։ Նա, որ ամբարտավանությամբ պարծենում էր ու ասում.

— Ես Վահանի և մյուս հայերի հետ ոչ թե նիզակով կկռվեմ, այլ նրա կոթով մի կողմ ձգելով, բոլորին կցրեմ այնտեղ՝ ձորերում ու դաշտերում. նրա մեծախոսությունը իրեն կործանեց։ Աստված մի երկու անգամ Սյունյան Գդիհոն իշխանին մատնեց Վահան Մամիկոնյանի զորքի մարդկանց ձեռքը և վերոտին ներողամիտ գտնվելով գեպի նա, իրրև մարդասեր, խնայելով ներեց, որ գուցե զղջալով գարձի գա և ապաշխարելու ժամանակ գտնի, ապրի։ Երբ ուշքի չեկավ, այլ բոլորովին արհամարհեց ճշմարտությունը, ստացավ իր ամոթի չարաչար կորուստը։

Պարսից զորքերը հայոց փախստականների ետևից գնացին և այն թուլացած վախկոտներից շատերին սպանեցին։

Բայց հայոց զորավար Վահան Մամիկոնյանն իր ընկերակիցների հետ, Աստծու զորությամբ քաջության գործը վերջացնելով, անհոգ գնում էր, ինչպես պարսից զորքի թևակից։ Շապուհի զորագնդերը չէին համարձակվում նայել նրանց, որովհետև Աստված այնպես էր ձգել Վահան Մամիկոնյանի ահն ու սարսափը պարսից զորքի վրա, որ կարծում էին, թե սոսկ նայելով Մամիկոնյանին և նրա ընկերներին՝ անվնաս չեն ազատվի։ Բայց հայոց Վահան զորավարի հետ հարձակվող ուխտապահ քաջ այրերից նահատակվեցին՝ Քոնթ Առավենյանը, երանելի Ներս Հովսեպյանը, երանելի Աթգեն սեպուհ Վանանդացինև երանելի Ղերպարգոսը, որ ազգով հույն էր։

www.a-pdf.com

ՅԵՓԵՈՍ

(Է ԴԱՐ)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Հատված)

...Դեսպաններ եկան արքունական հրովարտակով և Սմբատին բռնելով ուրիշ յոթ այրերի հետ՝ տարան թագավորի առաջ։ Եվ բազմամարդ հրապարակում հարցաքննելով նրանց՝ վճիռ կայացրեց՝ մերկացնել նրանց և կրկես նետել։

Նա հաղթամարմին ու գեղեցիկ տղամարդ էր, բարձրահասակ ու թիկնեղ, ուժեղ և պիրկ մարմնով։ Այնքան հզոր էր ու քաջ, որ բազմաթիվ պատերազմներում ցուցադրել էր իր արիությունն ու ուժը։ Այսպիսին է նրա զորությունը. սա անցնում էր խիտաաղարթ մայրիների ու հսկա ծառերի տակով, հաղթամարմին և հզոր երիվարը հեծած, և թռչելով բռնում էր ծառի ճյուղից և ազդրերը ուժգին կծկելով ու ոտքերով սեղմելով նժույգի մեջքը, նրան բարձրացնում էր գետնից, այնպես, որ ամբողջ զորքը տեսնելով ահաբեկվում էր զարմանքից։

Ինչևէ, մերկացնելով նրան և անդրավարտիք հագցնելով՝ նետեցին կրկեսի ասպարեզ, որ կեր դառնա գազաններին։

Եվ նրա վրա արջ արձակեցին։ Երբ գազանը հարձակվեց, Սմբատը՝ բարձրաձայն գոչելով, գնաց արջի վրա, բռունցքով հարվածեց ճակատին և տեղնուտեղը սպանեց նրան։

Երկրորդ անգամ նրա վրա ցուլ բաց թողեցին։ Իսկ նա բռնեց ցլի եղջյուրներից, և ցուլը հոգնեց այդ կռվում, իսկ նա ոլորեց պարանոցը և պոկեց եղջյուրները գլխից. ցուլը թուլացած, ետ գնալով փախուստի դիմեց։ Իսկ նա հետապնդելով բռնեց պոչը և մի ոտքի ազդրի կճղակը, և կճղակը պոկվելով մնաց նրա ձեռքում։ Եվ ցուլը գնաց փախստական, մի ոտքը բորիկ։

Եվ երրորդ անգամ նրա վրա առյուծ թողեցին։ Երբ առյուծը հարձակվեց նրա վրա, Աստուծով նրան հաջողվեց բռնել առյուծի ականջից ու նստել վրան։ Այնուհետև կոկորդից բռնելով՝ խեղդամահ արեց առյուծին։

Այդտեղ բազում հանդիսականների աղմուկը երկիրը լցրեց, թագավորից նրա համար ներումն էին խնդրում։

Եվ նա մարտից հոգնած նստեց անշունչ առյուծի վրա, որ մի փոքր հանգստանա։ Թագավորի կինը ևս, ընկնելով ամուսնու ոտքերը, խնդրում էր ողորմել Սմբատին, որովհետև նախկինում այրն այն սիրելի էր թագավորին ու նրա կնոջը և նրան իրենց որդեգիրն էին համարել։ Եվ թագավորը, զարմանալով Սմբատի զորության ու ամրության վրա և անսալով կնոջ և բոլոր պալատականների պաղատանքին, հրամայեց ներել նրան։

Այն ժամանակ նրան տարան բաղնիք՝ լողացնելու։ Լողացրին նրան և հագցրին և արքունի ընթրիքի հրավիրեցին, կերակրեցին։ Քիչ ժամանակ անց, ոչ թե թագավորի չար կամքով, այլ նախանձորդների չարախոսությունից, հրամայում է [թագավորը] նրան նավ նստեցնել և հեռավոր կղզիներ աքսորել և այնտեղից էլ հրամայում է տանել Աֆրիկա և նրան նշանակել այնտեղ գտնվող ղորքի հազարապետ։

www.a-pdf.com

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ

(Է ԴԱՐ)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ

ԳԼՈՒԽ Դ

ՎԱՂԱՐՇԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՂՎԱՆՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Այստեղ է սկսվում Աղվանքի իշխանությունը, քանի որ մարդկային աշխարհաստեղծման սկզբում Կովկասյան մեծ լեռան շուրջը բնակվածների վերաբերյալ որևէ ստույգ բան չենք կարող ասել լսողներին մինչև հայոց Վաղարշակ արքան, որ իրեն սեփականելով հյուսիսային կողմը, կոչ է անում վայրենի եկվոր ժողովուրդներին, որոնք բնակվում էին սկսած հյուսիսային դաշտից, կա՛մ Կովկասի ստորոտում, կա՛մ հովիտներում, կա՛մ խորաձորերում՝ հարավային կողմով մինչև դաշտի մուտքը, և պատվիրում է վերջ տալ ավազակությանն ու գողությանը ու հնազանդվել արքունի հարկատվության։ Հետո նրանց համար նշանակում է առաջնորդներ ու պետեր, որոնցից Վաղարշակի հրամանով գլխավոր է կարգվում Հաբեթի սերունդներից՝ Սիսակի տոհմից Առան անունով մեկը, որ ժառանգեց Աղվանքի դաշտերն ու լեռները՝ Արաքս գետից մինչև Հնարակերտ ամրոցը։ Եվ այդ երկիրը նրա քաղցր բնավորության պատճառով կոչվեց Աղվանք, որովհետև նրան աղու էին անվանում իր քաղցր բնավորության համար։

Այս Առանի ժառանգներից, ասում են, անվանի և քաջ բազմաթիվ կուսակալներ նշանակվեցին Վաղարշակ Պարթևի կողմից։ Նաև ասում են, թե սրա տոհմից են սերվել ուտիացիների, գարդմանացիների, ծավդեացիների և գարգարացիների իշխանությունների ցեղերը։

Այս մինչև այստեղ ծանոթություն է ծագումնաբանության վերաբերյալ։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՍՈՒՐԲ ՎԱՉԵԻՆ

Աստծու երկնավոր շնորհներով ողջույն։ Քո առաքինի սուրբ սիրո խոսքերով և իմ կամքով երկնավոր զորության շնորհիվ հորդեցին իմ մտքերը, ուստի մտադրվեցի խոսքով պատմող լինել։

Մեծ ու սարսափելի ահ ընկավ իմ սիրտը, որը ավելի բարձր է, քան երկինքների երկինքը և ավելի խոր է, քան վարի կիսագունդը։ Այն ինձ պաշարեց ամեն կողմից՝ վերից ու վարից, ետևից ու առաջից, աջից ու ձախից։ Փախչել չեմ կարողանում, իսկ խորամուխ լինել՝ վախենում եմ։ Գուցե խորասուզվեմ՝ ինչպես Պետրոս առաքյալը, անհատակ ծովում, բայց արդյո՞ք տեր Հիսուսը կմեկնի ձեռքը օգնելու համար։ Սրանով մի փոքր կքաջալերվեմ և խորամուխ կլինեմ անխորամուխ լինելիի մեջ։ Որովհետև խոսք ունեմ, այսինքն՝ լեզու, միայն գտնեմ քաջ մարդկանց առաքինության մեջ հոգեկիր

www.apdf.com

նյութ, մարդիկ, որոնք հրեշտակներին հիացրին, անգիր օրենքներով իրենք իրենց համար օրենքներ եղան, առանց օրենքների վերևում Տիրոջը ճանաչեցին, եղածները ընդունեցին իբրև օրենքների տակ ընկած և առանց որևէ առաջնորդ մարգարեի կամ հրեշտակի աստվածատեսներ դարձան։

Արդ ահա՝ ինչից երկյուղ ունեի, սիրով մոտենում եմ, հույսով մերձենում, հավատով ամրանում և սկսում եմ, որտեղից պետք է սկսել։ Ինչպես հենց սկզբում Քրիստոսի նկատմամբ սերը տեղ գտավ քո նախնի Ուռնայրի մեջ, որ երկնավոր նախանձով լցվեց հայոց թագավոր Տրդատի հետ, երբ սրանք իմացան Աստծու մեծամեծ հրաշքների, սքանչելիքների, հրաշագործությունների մասին, որոնք սուրբ Գրիգորի ձեռքով կատարվեցին Հայաստանում, անմիջապես մոլար ճանապարհի բազմաթիվ շավիղներից ետ դարձան դեպի ճշմարիտ Աստված։ Սանոթությամբ ու բարեկամությամբ նրանք դեն նետեցին հեթանոսական ճնշող լուծը և թեթևացան, թոթափվեցին, թևածեցին, թռան, երկնքում ճախրեցին։

Քաջ Ուռնայրը, այս լսելով, այլևս հանգիստ ու դադար չունեցավ և ոչ էլ սուրհանդակի ծառայությունից օգտվեց, այլ հենց ինքը՝ մեծ թագավորը, մեծամեծ նախարարներով, բազմաքանակ զորքով եկավ-հասավ Հայաստան և հանդիպեց հսկայազոր թագավորին։ Իսկ նա (Տրդատը) եղբայրորեն, սիրով ու բարեկամությամբ ընդունեց, ամեն բան հայտնեց նրան, իր ներքին ու արտաքին գաղտնիքները բացահայտեց սուրբ Գրիգորի ու հայոց բազմաթիվ զորքերի ներկայությամբ։ Խոնարհվում էր ձեր թագավորը, ընկնում էր գետին, փաթաթվում էր ոտքերն ու ձեռքերը և պատմում էր հեթանոսական ամբողջ մոլորության մասին, ինքը ևս խոստովանում էր անգիտությամբ կատարած իր անցած մեղքերի մասին։

Քաջալերում էր նրան սուրբ Գրիգորը Աստծու Որդու մարմնավոր գալստով, որը թողության համար եկավ և ոչ թե դատապարտելու, եկավ ապրեցնելու և ոչ թե մեղցնելու, իսկ նախապես մեռածներին խոստացավ հողից կյանքի դարձնել։ Երբ ձեր թագավորը այս ամբողջը լսում է, ինքը և իր հետ եղած ամբողջ զորքը քառասուն օր իրենց պահքի են նվիրում [պաս են պահում] և հրաժարվում են նախկին դատապարտելի գործողություններից։ Հիսուներորդ օրը, երբ հրաժարվեցին սատանայից և սրա բոլոր գործերից ու ընդունեցին սուրբ երրորդությունը, մկրտվեց թագավորը ամբողջ զորքի հետ միասին։ Սուրբ երկնավոր Երրորդությամբ քահանայապետը կրկին վերածնեց նրանց երկնային որդեգրությամբ. նրանք բոլորը ելան՝ լցված սուրբ հոգով։ Նույն ժամանակ նրանց շնորհվեց մի երանելի մարդ, որ եպիսկոպոս էր ձեռնադրված Հռոմ քաղաքի կողմից. սա եկել էր Տրդատ թագավորի հետ այս երկնավոր բարիքներով։

Ուռնայր արքան եկավ, մուտք գործեց աղվանից երկիրը, սովորեցրեց և մկրտեց նրանց առաքելական կանոններով։ Բոլորը ընդունեցին երկնավոր օծումը և գրվեցին կյանքի գրքի մեջ։ Հալածվեցին այդ երկրի դևերը, վերացան զոհագործումներն ու ճենճերահոտությունը, ամոթով մնաց մոլորությունը, բարձրացավ ճշմարտությունը, թագավորեց աներևույթ լույսը, մերժվեց կամայական խավարը, հաստատվեցին եկեղեցու առաջին պաշինները, տաճարապատկվեցին կալերի, հնձանների ու շտեմարանների բերքերը և բոլոր ընտանի անասունները։ Նաև երկրի հողը նրան ժառանգություն տվեց և հաստատվեց ու տիրեց ուղիղ կարգ ու կանոն ձեր նախնիների՝ քո հոր և մեծամեծ երանելի պապերի ու տատերի օրոք մինչև քո սքանչելի տերության ժամանակները։ Վիշապը, որ հին էր, գոյություն ուներ առաջին մարդու

www.a-pdf.com

օրերից, տեսավ քո էության չքնաղ ծնունդը՝ ա) հայրենի հավատից, բ) աներ վիճակից։

Զարհամ թշնամու սիրտը խիստ կասկած ընկավ, թե գուցե ինչպես որ կյանքը մուտք գործեց Ադվանք, այնպես էլ ճշմարտության ծնունդը և մուտքը տեղի կունենան արևելքում [Պարսկաստան]։ Շփոթվեց [թշնամին], տագնապահար եղավ, տարակուսության մեջ ընկավ ավելի, քան արդար Հոբի օրերում։ Հավաքեց, ի մի գումարեց իր խավարային զորքերը, հայտնեց նրանց իրեն տանջող չար մոլուցքը։ Բոլորը սարսափեցին ու դողացին և համաձայնության գալով՝ ելք որոնեցին։ «Այդպես տագնապահար մի՛ լինիր ինքդ քո մեջ,— ասում են,— ով քաջ. մեր մոլորությունը ավելի վաղ է. քան նրա ճշմարտությունը. տակար գազանով առաջին մարդուն հաղթեցիր, այս մեծ թագավորով չե՞ս կարող երեխաներին դիմադրել»։ Այս ասացին և համատարած ծովը շարժեցին քո վրա։ Մրրկաբեր քամիներ իջան նրա վրա, շարժեցին և փոթորկեցին նրա բազմաթիվ ալիքները։ Սկսեց մոմոալ, ևլնել, տարածվել, ոչնչացնել դաշտերը և լեռները։ Ահավոր գազաններով, զանազանակերպ դրոշակներով, բազմաձայն փողերով, գալարափողերի զոչյունով, անտառացած նիզակներով, ճառագայթող սուսերներով, ոսկյա կումբ ունեցող վահաններով, խոշոր ու հաստ մկունդներով եկան և միահամուռ քեզ վրա հարձակվեցին բազմաթիվ հեթանոս ցեղեր։ Երկրայինները երկնայիններին սարսափեցնում էին, մահկանացուները կամենում էին անմահներին կորցնել, և անաստվածները ցանկանում էին քեզ՝ աստվածային շառավղից, արմատից կտրել. երկակի և եռակի անգամ պարտվեցին, բայց չամաչեցին։

Իսկ նա, որ նստում է երկինքների երկնքում և տեսնում է ամբողջ աշխարհը՝ դիտելով ու կշռադատելով բարի օրենքները և նրանց, որոնք ընդդեմ են, քեզ միայն օրինական համարեց, թույլ տվեց, որ բարկ հնոցը շրջապատի քեզ։ Վառվեցին, բորբոքվեցին և այրվեցին այնպես, ինչպես փշերը կրակի մեջ։ Նմանվեցիր երեք մանուկներին, հնոցի մեջ կրակի բոցը մարեցիր, կանծակների զորությունը վարդի փափկության փոխեցիր, ծխի հեղձուկությունը շուշանի սպիտակության դարձրիր, կրակի այրող էությունը վերածեցիր ստեղծող ուժի, երրորդ Աստծուն երկնքից վար բերիր երկիր՝ իբրև քեզ օգնական։ Նրանց իմաստունները հիմարացան, նրանց քաջերը վախկոտ դարձան, նրանց սպառնալիքները դադարեցին, նրանց հերոսները թաքնվեցին, նրանց բազմությունները քշացան։

Երանի քեզ և երանի նրանց, որ մոտ են քեզ։ Թվով քիչ էիր, բայց բազմությամբ անթիվ դարձար,սակավ էիր հայտնիներով, բայց ոչ հայտնիներով անթիվ դարձար։ Քո նիզակը Հեսուի նիզակն է, իսկ քո սպառազինությունները Աստծու սպարապետի սպառազինություններն են, քո փողի ձայնը այնպես է, ինչպես Աստծու հրեշտակապետի փողի ձայնը. Աստծու, որ իջնում է նրա հետ հարության օրը։ Նրա ձայնը, որ աշխարհը ցնցում է, քարերը դղրդացնում, գերեզմանները ավերում, մեռելներին հարություն տալիս, հնացածներին նորոգում, դատ ու դատաստան է կորում՝ առանձնացնելով ոմանց ձախակողմը, ոմանց՝ աջակողմը։ Սա Աստծուն է միայն հատուկ և վայել է նրան։ Իսկ քեզ, իբրև հավատարիմ ծառայի և սիրելիի ու արքայության ժառանգորդի, տվեց երկնային շնորհներ, որ նմանվում է հարության օրվան։ Նա, որ չարով պարծենում էր, տագնապահար եղավ. նա, որ մոլորությամբ էր խիզախում, հիմարացավ։ Քո զորքի ամեն ինչը կրկնակի է։ Եթե զրահները մարմինը պահպանելու համար էին, ապա միաժամանակ

www.a-pdf.com

դրանք հավատի զրահներ էին. եթե սաղավարտը օգտագործվում էր սուսերից պաշտպանվելու համար, դրա հետ այն նաև փրկության սաղավարտ էր. նրն վահան ունեիր այրական լանջքդ ապահովելու, նրա հետ ունեիր նաև համբերության ու հավատքի վահան. երբ նետը քո աղեղից ուղիղ թըռչում էր, նրա հետ քո սուրբ աղաչանքի աղոթքներր շուտ և ավելի վեր էին գտնվում, քան երկինքը Աստծու առաջ, երբ քո առնական բազուկների մեջ սուսերը շողում էր, քո հավատքի լույսը հրեշտակների մեջ ցոլքեր էր արձակում: Քո դրոշակները երկնավոր դրոշակներ են և քո նիզակը ճառագայթավոր է, ինչպես արեգակի արծաթյա շողքերը:

Սա է, որ ինձ այս պատմության հենց սկզբից վախով պաշարել է, թե ինչպես կկարողանամ խոսքով պատմել այն բանի մասին, որ ավելի բարձր է, քան խոսքը: Խոսքր ի վիճակի չէ չորս նյութից կազմված աշխարհը ներկայացնել: Եվ այս ամենքին չի վիճակվում, այլ նրանց է բաժին ընկնում, որոնք չանասիրաբար զբաղվեցին գիտություններով, այսինքն՝ թվաբանությամբ, երկրաչափությամբ, աստղաբաշխությամբ, բժշկությամբ և ապա հասան ծայրագույն գիտություններին՝ մարգարեականին, առաքելականին, ավետարանականին, որը սկիզբն է ու ծլարձակումը: Եվ թեպետ ես ունեի նյութական երևույթները պատմող այս բոլոր արվեստները, իսկ դու մի ժամանակ նյութական էիր, բայց այժմ աննյութականներին ես նմանվում: Եթե քեզ արուսյակի հետ համեմատեմ, բայց չէ՞ որ դու ավելի պայծառ շողեր ես արձակում, քան արուսյակը: Արուսյակը վեց ամիս արուսյակություն է անում (լուսաստղի դեր է կատարում), իսկ վեց ամիս գիշերավար է (գիշերն է լույս տալիս). դու երբեմն արուսյակ ես, բայց ավելի բարձր ես, քան արուսյակը: Արուսյակը այգաբացին է միայն երևում, իսկ դու ամբողջ քսանչորս ժամ՝ տիվ ու գիշեր: Իսկ եթե լուսինը վերցնեմ իբրև քեզ օրինակ, չափազանց ծիծաղելի կլինի իմաստուններին. տարվա մեջ տասներկու անգամ վիժած, խիստ ժանգոտ, մանգաղաձև, կիսագունդ, խոնավալի, կիսալույս, հիվանդոտ, գիշերընթաց, խավարասեր, լուսատյաց, չղջանման, ընթացքի մեջ պակասավոր, կրակով տանջված, բազմաթիվ անգամ թաքնվոզ. իսկ դու լիալյուն, բարձր, լուսանման, ավետաբեր, հրեշտակակերպ, ուրախարար, քաջալերող, պայծառ, ավելի գեղեցիկ, քան քո բոլոր հասակակից ընկերները: Քեզ ոչ մի բան հավասար չէ. բավական է ասեմ, որ արեգակից բարձր ես գտնվում և սրանով ոչ նրան կնախատեմ և ոչ էլ քեզ կգովաբանեմ, այլ նրա [արեգակի] էությունը կպատմեմ քեզ, որը շեղաձնաց է, թյուրընթաց, միակողմանի, ստվերատու, հարավային կողմում գտնվող, ձմռանը տանջվող, ամռանը կիզվող, գարնանը անձրևոտ, իսկ աշնանը երաշտային, գիշերը մտնող, առավոտածին, ծաղիկները թարշամեցնող, կանաչները չորացնող, միջօրեին կենդանիներին դեպի ստվերներ հալածող, ամբողջ օրը երկու մասի բաժանվող. հույները իրավացիորեն սրան Ապոլոն կոչեցին: Իսկ եթե մի չնչին ճառագայթ մտքովդ անցկացնես, ապա դրա հետ իմացիր և այն, որ գիշերր ծածկվում է, ամպերում թաքնվում է, փոշով մշուշապատվում է, մրրիկներով ալեկոծվում է: Դու նմանվեցիր արեգակին, Հորից զորացար, Որդուց քաջալերվեցիր, սուրհ Հոգուց լուսավորվեցիր, գիշերը տեսնվում ես, իսկ ցերեկը քո հավատքի ճառագայթները թափանցում են:

Քո վերաբերյալ համեմատավոր խոսք կասեմ. ամեն կողմից աչք կըտրեցիր. արծվից ավելի սրատես ես և ավելի արագ լսող, քան խաղաղ անասուններից մեկը: Ոչ միայն երկիրը տեսար, այլև՝ երկինքների մեծը. փոք-

www.a-pdf.com

րերը թողեցիր, անցավորները տվեցիր, իսկ անանցը առար, դեն նետեցիր ոսկեկուռ թագավորությունը, և ահա քեզ համար կա և ապահովում է անձեռագործ պսակը, որ ընդունելու ես Քրիստոսի ամենասուրբ ձեռքերից։ Նա, որ ավետարանի համար թողնի հորը, մորը, քույրերին, եղբայրներին և իր ամբողջ ունեցվածքը, այստեղ հարյուրապատիկը և հավիտենական աշխարհի կյանքը կընդունի, որ անանց է։ Որևէ աղքատ մարդ այդ բանը դյուրությամբ կարող է անել, իսկ թագավոր մարդու համար, որպիսին դու ես, անհնարին է։ Իսկ եթե որևէ մեկը անի այնպես, ինչպես դու ինքդ արեցիր, այն է՝ մարդկանց անհավատալի, հրեշտակներին զարմանալի, Աստծուն նմանելի, ինչպես որ նա թողեց հրեշտակների անհաշիվ զորքերը և առավ մարդկային փուչ կերպարանք. քո գործը նմանվեց նրան. նաև ամբողջ աշխարհի համար եղավ կյանք ու փրկություն, դու ևս ամբողջ աշխարհին բացեցիր կյանքի ու փրկության դուռ։ Քո բուն երկրի հավատքը պահպանվեց, եկեղեցիները չեն մնացին, մատուռները խաղաղության մեջ ընկան, քահանաները քահանայությամբ զբաղվեցին, պատարագները տեղի ունեցան սեղանների վրա, մարգարեները թաղվեցին ընթերցանության մեջ, առաքյալները զբաղվեցին մխիթարությամբ, սաղմոսերգուները՝ օրհնությամբ, կույսերը մնացին կուսության մեջ, եկեղեցականները՝ սրբության մեջ, և ամեն մեկը գտնվում էր իր գործի մեջ։ Քո գործունեության լուրը հասավ արևելքից մինչև Գադիրոն, հարավից մինչև հյուսիս։

Քո մարտիրոսական անունը առաքյալների և առաջին նահատակների, հայրապետների և եպիսկոպոսապետների [անուննների] հետ գրվեց ոսկի տախտակների վրա, միաժամանակ նաև կյանքի գրքի մեջ՝ երկնքում։ Զգո՛ւյշ եղիր, ո՛վ դու սքանչելի, որ արժանացար այսքան մեծամեծների և բարձրացար հասար այսքան բարձրությունների, հաստատուն պահիր հույսի խարիսխը, անբաժան եղիր սիրուց, համբերող եղիր ճշմարիտ հավատի մեջ, որպեսզի մեռած վիշապը պոչը չշարժի մեր կյանքի վրա։

Որովհետև մինչդեռ մանուկ էիր, հաղթեցիր նրան, չափահաս դարձած, գիտեմ, որ ոտնակոխ կանես նրա չարության բոլոր մեքենայությունները։ Բայց թե ես ինչքան եմ սիրում քեզ, եթե հնարավոր լիներ խոսքերով գրի առնել այդ, մագաղաթի համար խոշոր ծախքեր անհրաժեշտ կլինեին։ Քեզ սիրելու պատճառով շատ անգամ պատրաստվել եմ քեզ մոտ գալ, իսկ այժմ մեր և եկեղեցու սուրբ ուխտի բարեխոսությամբ քեզ հանձնարարում ենք սուրբ Հոգուն. տերը քեզ հետ, ամեն։

Քրիստոսի համար նահատակ, խաչին չարչարակից, հրեշտակների կողմից փառատու պատմուճանով զարդարված, դու չգարշող որդյակ իմ Վաչե՝ Աղվանքի արքա, Գյուտ եպիսկոպոսը Տիրոջ միջոցով ողջունում է։

Ամոթալի ծուլության պատճառով չենք կարողանում համարձակվել մխիթարության խոսքեր ասել քեզ՝ այս աներևույթ պատերազմի մեջ հաղթողիդ, որ ոչ թե մարդկանցից քաջալերվեցիր, այլ Քրիստոսի հույժ ահավոր զորությունը քեզ օգնության կանչելով՝ գերազանցեցիր ամբողջ աշխարհին և ավելի բարձր երևացիր։

Բայց արդ՝ քեզ քո համեստությամբ համաձայնեցնելով, աղաչում եմ, որպեսզի իմ ողջույնը հաճելի և քաղցր թվա քեզ. բայց զոհ լինելով քո բարձրացումից, ո՛վ Քրիստոսի զորական, ես՝ աղքատ ոգեաս, չունեմ գիտություն ու պատրաստություն և ոչ էլ իմ իմացությամբ կկարողանամ նյութ հավաքել, միմյանց կցել՝ քո ազնվական գովության համար զգեստ հյուսելու։ Եթե նույնիսկ Հունաստանի բոլոր հռետոր փիլիսոփաները միատեղ

www.a-pdf.com

գումարվեն, դարձյալ չեն կարողանա քո ոգելից հաղթությանը արժանի գովասանք ասել: Որովհետև դու Աստծուն ճանաչեցիր՝ ամբողջ սրտով սիրելով, անձով ու զորությամբ, ամեն ունեցվածք ու մեծություն փոխանակեցիր բոլորի միակ Տիրոջ հետ. և նրան քեզ հետ հաշտ ունենալով՝ ոչ միայն երկիրը, այլև երկնքի մեծությունը առնելով՝ վայելեցիր: Հրաժարվեցիր դիվամոլ հեթանոսների ճենճերահոտ զոհերից և ահա անուշ բուրմունք դարձար Քրիստոսով, որ հասնելով մինչև արևմուտք՝ հոչակվելով տարածվեց և ուրախացնելով ցնծություն բերեց բոլոր հոգիներին: Թողեցիր երկրային մեծությունը, որ պատճառ է դառնում մեղքերի, ժառանգեցիր արդարությունը՝ երկնային մեծությամբ հանդերձ, բոլորովին հեռացար երկրային զվարճություններից, մերձեցար Քրիստոսին, որ խաղաղության նավահանգիստն է: Արդ՝ իմ խոսքերը ամփոփելով՝ կասեմ, որ եթե մարդ էիր, այժմ եղար հրեշտակ. ազգականներ ունեիր երկրի վրա, այժմ Քրիստոսի եղբայր դարձար երկնքում. մահկանացու էիր, այժմ եղար անմահ: Ոչ միայն դու ես անմահ, այլ որովհետև համարձակ ես Քրիստոսի մոտ, բազմաթիվ մահկանացուների կարող ես օգնություն հասցնել:

Ցանկալի ես հրեշտակներին, փափագելի ես մարդկանց, էլ ավելի կարոտալի ես ինձ՝ հեռացածիս, ամենաչար սատանայի դեմ աներևույթ պատերազմում քեզ մարտակից չեղածիս:

Բայց ահա փոխանակ ասելու՝ աղաչում եմ քեզ, որ չար բան չունենաս մտքումդ, չհիշես իմ ծուլությունը: Փարատի՛ր իմ տխրությունը քո ողջույնաբեր թղթով: Դու եղար Քրիստոսին չարչարակից, ապա նմանվի՛ր նրան ամեն բանով. որովհետև եթե նա իրեն խաչ հանողների վերաբերյալ աղաչում էր՝ չհիշել նրանց մեղքերը, որքան ավելի վայել է քեզ ներել իմ ծուլությունը: Նա, որ քեզ հոգով ողջ ստեղծեց ու մարմնով՝ առողջ և արժանի դարձրեց իր որդեգրությանը, նույնը շնորհ կանի մեզ՝ քեզ աշխարհում առողջ տեսնելու հոգով ու մարմնով և վայելք ստանալ քո շնորհալի ու առաքինի կյանքի շնորհիվ: Ողջ լինելով Քրիստոսի շնորհիվ, երկար ժամանակ մեզ համար կլինես հոգատար և լցված Քրիստոսի սիրով, ամեն:

ԳԼՈՒԽ Գ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՅՑԸ ԱՂՎԱՆԻՑ ԵՍՎԱՂԵՆ ԱՐՔԱՅԻՆ. ԳՐԻՐ ՍՏԵՂԾԵԼԸ ԵՎ ՎԵՐՈՏԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆ ՀԱՍՏԱՏԵԼԸ ԱՂՎԱՆՔՈՒՄ, ՆԱԵՎ ՄՆԱՑԱԾ ԱՂԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Այն ժամանակ, երբ Թեոդոս Փոքրը հույների կայսր էր, իսկ Վռամշապուհը՝ հայոց թագավոր, Հազկերտը՝ պարսից և Եսվաղենը՝ աղվանների, մեծավաստակ, սուրբ Հոգու ընտիր անոթ Մեսրոպ երանելին Աղվանք եկավ մեր երեմիա հայրապետի ու Եսվաղեն թագավորի մոտ: Սրանք կամավոր կերպով ընդունեցին նրա ուսուցչությունը ըստ Աստծուց նրան շնորհված այն պարգևի, որ սուրբ Հոգին նրա միջոցով հայերին ու վրացիներին տաուեր տվեց: Համաձայնվեցին և նրա մոտ ուսման տվին ընտիր մանուկներ. թարգմանիչ Բենիամինին Սյունիքից կանչեցին, որին Վասակ Մանուկը Անանիա եպիսկոպոսի միջոցով ուղարկեց: Նրանք եկան Մեսրոպի մոտ. Մեսրոպը նրանց հետ գարգարացիների կոկորդահունչ, կոշտ ու կոպիտ խժական լեզվի համար տառեր հնարեց: Այստեղ վերահսկիչ թողեց իր աշակերտ Հովնաթանին, քահանաներ նշանակեց պալատում ու վերադարձավ Հայաս-

www.a-pdf.com

տան։ Այդտեղից անցավ Բյուզանդիա՝ Թեոդոս թագավորի մոտ և այնտեղից վերադառնալով աշակերտների հետ շրջում էր։ Լսելով, որ Գարդմանում հեթանոսական աղանդ է մնացել, Սյունիքից անցնում, գալիս է Գարդմանի իշխան Խուրի մոտ և նրա միջոցով հեթանոսական կրոնի հետևորդներին ուղղության է բերում, իսկ ինքը վրաց Աշուշա բդեշխի հրավերով գնում է Վրաստան նույն գործով։

Նույն ժամանակ հայտնվեց անիծված Նեստորը, որը Եփեսոսում երկու հարյուրի կողմից նզովվեց։ Հազկերտ երկրորդ թագավորի առաջին տարում, նավասարդի վերջում վախճանվում է սուրբ Սահակը, իսկ դրանից վեց ամիս անց Վաղարշապատ քաղաքում մեռնում է նաև երանելի Մեսրոպ վարդապետը՝ միանալով սրբերին։

Գարդմանի իշխաններից Խոսրով անունով մեկը գնում է Հայաստան։ Այնպես պատահեց, որ նա եղավ անարի Շապուհ թագավորի մոտ։ Խնջույքում գինովցած շնաբար տոփանք է տածում մի կնոջ նկատմամբ. այս պատճառով Շապուհը զայրանում և հրամայում է ղնդան նետել նրան. սակայն նա, ապավինած իր սրին, դուրս է գալիս ու հեռանում, և ոչ ոք չի հանդգնում ձեռք տալ նրան։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ ԽՈՍՐՈՎԻ ԿՌՎԵԼՈՒ, ՆՐԱՆ ՀԱՂԹԵԼՈՒ ԵՎ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑԻՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ ՍՐՈՎ ՈՒ ԳԵՐՈՒԹՅԱՄԲ ՏԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հերակլի հրամանով խազիրները անհամար բազմությամբ գլուխ բարձրացրին՝ ասպատակելու մեր երկիրը։ Պարսից արքա Խոսրովի պատգամատարները գնում են նրանց մոտ և նրանց տալիս են պատգամ, ուր ասված էր. «Դուք ո՞ւմ հրամանով մտաք իմ երկիրը, նրա՞, որ թափառական ու փախստական ընկած իմ երեսից շրջում է արևմտյան ծովի կղզիներում։ Եթե կարոտել եք նրա ոսկուն, արծաթին, թանկագին քարերին կամ ոսկեհյուս, մարգարտազարդ հագուստներին, բեհեզներին ու ծիրանիներին, ես կարող էի նրանից բազմապատիկ շատով գոհացնել քեզ։ Դրա համար քեզ ասում եմ. մի՛ շարունակիր իմ նկատմամբ դրա դատարկ պահանջով, ապա թե ոչ, թող քո կամքը լինի։ Բայց ահա նախապես քեզ ասում եմ այն, ինչ որ անելու եմ առաջիկայում։ Համաձայն քո խոսքի՝ նրան իմ թույլ տալուց հետո, նրա երկրից կկանչեմ իմ հաղթական մեծ զորավար Շահվարազին իմ երկու քաջ զորականներ Շահենի և Քրտիկարինի հետ միասին, նաև իմ բյուրավոր զորքը, հազարավոր ընտիր սպառազիններ, որոնց ես պատրաստեցի արևմուտքի դեմ քշելու ու ջնջելու իմ երկրից։ Արդ՝ ահա նրանց երասանակները կդարձնեմ արևելքի դեմ ու իմ ամբողջ ուժով կշարժվեմ քո վրա և բաց չեմ թողնի քեզ, հանգիստ ու դադար չեմ տա, մինչև երկրագնդի ծայրերը քեզ չքշեմ։ Ապա պետք է գիտենաս ու հիշես այդ անմիտ և քեզ վիշտ ու նեղություն պատճառող պահանջը, որ դու անում ես։ Բայց ո՞ւր պետք է տանեմ, հանգիստ տամ, երբ ես այնտեղից հանեմ այս մեծաքանակ բազմությունը, և կամ ո՞ւր կա այնպիսի երկիր, որ բավականացնի նրանց, եթե ըստ այս պատգամի չգործեմ»։ Եվ այսպես՝ համաձայն սպառ-

նալից պատգամի, այդ տարի դադարեցրին արշավանքը ու վերադարձան նույն լեռնանցքով։

Բայց երբ նրանց տեր իշխանը տեսավ ավարների, մարդկանց ու անասունների, ոսկեղեն անոթների, թանկագին հագուստների այն ամբողջ գրավված ու գերված հարստությունը, իր մտքում խորհեց, որ ինքն իսկ գա ելնի այս կողմը։ Այնուհետև այն ամենքին, որ իրեն էին ենթարկվում՝ տոհմերին, ցեղերին, լեռնականներին ու դաշտայիններին, հաստատուն բնակություն ունեցողներին ու քոչվորներին, ծովագնացներին ու ցամաքայիններին, գլուխները խուզածներին ու մազավորներին, հայտարարեց, որ ակնարկելու պարագային ամրակուռ ու պատրաստ գտնվեն։

Եվ ահա երեսունութերորդ տարում, որ Խոսրովի սպանման, նեղության ու աղետի տարի էր, եկավ վերևում հիշատակված նույն ինքը՝ Ջեբու խաքանը, որդուն իր հետ ունենալով։ Նրա զորքի քանակը ոչ ոք չէր կարող հաշվել։ Երբ ահավոր դույժը հասավ Աղվանք, կամեցան մեր երկրի բնակչությունը ամրացնել մեծ մայրաքաղաք Պարտավի բերդի մեջ։ Այս բանը կատարվեց Գայշաք անունով մի մարդու հրամանով, որը Խոսրովի կողմից ուղարկված էր իբրև երկրի պետ ու իշխան։ Սա շրջակա գավառների բազմությունը լցրեց ներս ու կամեցավ ուժեղանալ այս երկրի մեծամեծների ու բնակիչների միաբանությամբ և դիմադրել նրանց։ Բայց նա տեսավ, թե ինչ աղետների ենթարկվեցին Ջոր մեծ քաղաքի պահապանները և գումարտակներ սքանչելի պարիսպների, որոնց համար պարսկական թագավորները հսկայական ծախքերով փակել էին իրենց երկիրը՝ հավաքելով ճարտարապետներ, հնարելով տեսակ-տեսակ շինանյութեր մեծասքանչ կառուցման համար, որ ներփակեցին Կովկաս լեռան և Արևելյան մեծ ծովի միջև։

Արդ՝ երբ մոտեցավ տիեզերական ցասումը, որ մեր ամենիս աչքին էր գտնվում, նախ ծովի ծավալված ալիքները հարվածեցին նրան [Ջոր քաղաքին] և հիմնահատակ տապալեցին։ Որովհետև տեսնելով սաստկացած սարսափը ժանտատեսք, հանդուգն երեսով, լայնադեմ, անարտևանունք բազմության, որոնք կանացի կերպարանքով, գիսարձակ վրա էին տալիս հարձակվողների դեմ-դիմաց, սարսափը պատեց նրանց։ Մանավանդ երբ տեսան ուժեղ քաշված աղեղների նետերը, որոնք կարկուտի նման տեղում էին նրանց վրա։

Իբրև լկտիացած գիշակեր գայլեր հարձակվեցին նրանց վրա և առանց խնայելու կոտորեցին քաղաքի անցուդիներում ու փողոցներում. նրանց աչքը մինչև անդամ չէր խնայում դեղեցկատես, պայծառագեղ, պատանի տղայի կամ աղջկա և ոչ էլ անպետքներին ու անօգտակարներին։ Չէին թողնում հաշմանդամներին ու ծերերին և ոչ էլ գութ էին տածում, կամ գալարվում էին նրանց աղիքները երեխաների խանդաղատանքի նկատմամբ, որոնք փարվում էին սպանված մայրերին և իբրև կաթ ծծում էին նրանց ստինքների արյունը։ Այլ, իբրև եղեգնուտում բոցավառված հուր, մի դռնից մըտնում, մյուսից դուրս էին գալիս՝ այնտեղ թողնելով միայն երկրի գազանների ու երկնքի թռչունների արարք։ Դրանից հետո աստիճանաբար ալիքները շարժվում էին մեր դեմ։

Արդ՝ երբ այս ամենը լսեց մեր ղեկավար իշխանը, որ իր ձեռքն առել և պահպանում էր Պարտավ քաղաքը, կամեցավ մեր բերդում հավաքած ամրացած բազմությանը սաստկացող սարսափի վերաբերյալ խոսք ասել, այն,

www.a-pdf.com

թե ինչ պետք է անել: Բերանը բաց արեց, բայց մեծ երկյուղի պատճառով նորից խոսքը կրկնել չկարողացավ, որովհետև նրա սիրտը թուլացավ ու դող բռնեց նրան ոտքերից մինչև գլուխ, և ծունկերը սկսեցին բախվել միմյանց: Երբ ամբոխը զգաց մարդու անչափ թուլասրտությունը, աղաղակ բարձրացրեց ու ասաց. «Ինչո՞ւ մեզ բոլորին կաշկանդեցիր, այս ժամի համար պահելո՞ւ, մեզ մեր կանանցով ու որդիներով արյունարբու գազանների ձեռքը տալո՞ւ: Եվ այժմ՝ ինչպե՞ս կարող ենք մենք՝ քաղաքի այսքան խառնիճաղանջ բազմությունս, նրանց ներկայությամբ դուրս գալ փախչել, երբ ոչընչացնող թշնամին մեզնից հեռու է գտնվում երեք մղոնի չափ: Ապա մնկմեկու ասում են. «Ինչո՞ւ ենք հապաղում. այս քաղաքը գերեզմա՞ն պետք է դարձնենք մեզ համար. թողնենք մեր կահկարասին, դուրս գանք, թերևս ազատվել կարողանանք: Եվ դիմելով միաժամանակ դեպի քաղաքի չորս դարպասները՝ աճապարում էին իրենց գցելու լեռնային Արցախի գավառը:

Երբ թշնամիները վերահասու եղան տեղի ունեցածին, հետապնդեցին փախստականներին և մի մասին, հասան այն լեռան ստորոտի մոտերքը, որ գտնվում է Կաղանկատուք մեծ գյուղի հանդեպ, որը [Կաղանկատուքը] նույն Ուտի գավառում է, ուսկից և ես եմ: Օրը մթնելու հետևանքով մեծ վնաս չկարողացան հասցնել, այլ փոքրիշատե ձեռք ընկածներից մի մասին կոտորեցին, մի մասին էլ գրավված սայլերի և գրաստների հետ վերադարձրին իրենց բանակը: Աստծու խնամակալությամբ այլևս կրկին չհետապնդեցին փախստական բազմությանը: Եվ այն գիշեր բոլորը անցան, ինչպես երբեմն եբրայեցիք անցան Կարմիր ծովով, և հասան Արցախ անառիկ գավառը: Գայշաք անունով այն իշխանը նույնպես ազատվեց իր ամբողջ տնով և իրեն գցեց Պարսկաստանի կողմերը, բայց այլևս չկարողացավ նույն իշխանությունը ձեռք բերել:

Այս բոլորից հետո հորդացած հեղեղը, հորձանուտ դետը դիմեցին դեպի Վրաստան և շրջապատեցին պաշարեցին փափկասուն, վաճառաշահ, հռչակավոր մեծ Տփղիս քաղաքը: Հայտնի է դառնում նաև մեծ կայսր Հերակլիոսին: Նա հավաքում է իր զորքի բոլոր ուժերը, գալիս շտապ հասնում է իր նիզակակից օգնականին, և երբ նա մատուցում է թագավորական ընծաներ ու նվերներ, [թագավորն] ընդունում է. չափազանց ուրախանում են միմյանց տեսնելով: Ապա այնուհետև այնտե՛ղ պետք էր տեսնել աղետը թշվառ մարդկանց, որոնք փակված էին բերդում: Թշվառություն թշվառության ետևից նրանց վրա էր գալիս, բայց սպասելի ժամանակը դեռևս չէր հասել: Այնպես եղավ, որ Խոսրովը իմացավ երկու մեծ թագավորների հանդիպման մասին: Նախքան այն քաղաքը պաշարելը շտապ կարգով ուղարկում է նրանց օգնելու և քաղաքը պահպանելու զորք՝ սրտոտ ու քաջ պատերազմող իր զորապետ Շարհապաղին, սրա հետ իր թիկնապահներից ու դռնապահներից ընտիր հեծյալներ՝ մոտ հազար մարդու: Երբ քաղաքի բնակիչները տեսան ուղարկված օգնականին հաղթանդամ և վարժ զինակիցներով, չափազանց ոգևորվեցին ու սկսեցին ծաղրել երկու թագավորներին, չնայած տեսնում էին հյուսիսի ու արևմուտքի զորքերի անթիվ բազմությունը, որ լեռների նման ճակատ էին կազմել քաղաքի շուրջը. երկիրը թնդում ու ցնցվում էր բազմությունից. սրա հետ մեքենաները, քառանիվները և հռոմեական ճարտարագործների ձեռքով պատրաստված տեսակ-տեսակ այլ գործիքներ, որոնցով նրանք անվրեպ կերպով մեծամեծ քարեր էին նետում՝ փլուզելու պարիսպը: Նաև տեսնում էին մեծամեծ, քարալից, ավազալից ուռուցիկ տիկերը, որոնցով մեծ Կուր գետը, որ հոսում է քաղաքի մի կողմով, ետ

www.a-pdf.com

դարձնելով՝ հոսանքը պարսպի դեմ էին ուղղում։ Բայց նրանք ոչ մի բանից չթուլացան, այլ քաջալերում էին միմյանց և նրանց քանդածները տեղնուտեղը շինում ու վերականգնում էին։

Իսկ երբ երկու թագավորների զորքերն էլ լքվեցին, տկարացան, հոգնեցին, նաև քիչ չէր մարտում ընկած հետևակների թիվը, թագավորները միմյանց հետ խորհրդակցեցին ու ասացին. «Ինչի՞ համար է մեր զորքերի այսպիսի կորուստը, չէ՞ որ երբ հզորին կապենք, ինչպես կամենանք, նրա տունը կողոպուտի կենթարկենք։ Այնժամ նախանձախնդիր մեծ կայսր Հերակլեսը մտածեց և կարգավորեց, թե ի՛նչ է պետք անել։ Իրեն օգնելու եկած մարդուն ասաց. «Դարձի՛ր դու և քո զորքով խաղաղությամբ այս տարի գնա՛ քո տեղը, որովհետև մենք տեսնում ենք, որ դուք ղով երկրի բնակիչ եք և չեք կարող դիմանալ, երբ Ասորեստանի ամառային տապախառն շոգերը վրա հասնեն, ուր Տիգրիս մեծ գետի ափին պարսից մայրաքաղաքն է։ Մյուս տարին, երբ շոգ ամիսները կանցնեն, կշտապես վերադառնալ այստեղ, որպեսզի կատարենք մեր մտադրությունը. իսկ ես չեմ դադարի մարտնչել պարսից թագավորի դեմ և վտանգի ենթարկելով՝ նեղություն կպատճառեմ նրա երկրին ու բնակիչներին։ Եվ խելամտությամբ այնպիսի հնարներ կգործադրեմ, մինչև որ իրենց միջոցով կատարվի։

Եվ երբ քաղաքի բնակիչները իմացան նրանց լքումի ու տկարանալու մասին, ավելի հպարտացան իրենք իրենց մեջ ու սկսեցին իրենց կորստյան պատճառ հանդիսացող խաղը խաղալ։ Բերին մի մեծ դդում, դրա վրա նկարեցին հոների թագավորի պատկերը՝ մի կանգուն երկայնությամբ և մի կանգուն լայնությամբ. աչքերի արտևանունքների փոխարեն ճյուղեր գծեցին, որ ոչ ոք չէր կարող նշմարել։ Նույնպես արեցին մորուքի լերկ ու այլանդակ տեղը, իսկ մի թիզ լայն քթի տեղը բեղեր գծեցին այնպես, որ ամեն ոք կարող էր ճանաչել։ Բերին, դրեցին նրանց հանդիման պարսպի վրա ու գոռալով զորքերին, ասում էին. «Ահավասիկ ձեր կայսր թագավորը. դարձե՛ք, երկրպագեցե՛ք սրան. սա Ջերու խաքանն է»։ Եվ նիզակները վերցնելով ձեռքները՝ նրանց աչքի առաջ ծակոտում էին նրա պատկերին նմանեցրած դդումը։ Նույնպես խայտառակում, ծաղր ու ծանակի ենթարկում, անարգում էին նաև մյուս թագավորին՝ պիղծ ու արվամոլ կոչելով։ Այս տեսնելով ու լսելով՝ թագավորները քենով լցվում, փքվում, ոխակալվում, շարժում էին իրենց գլուխները և իրենք իրենց նզովում էին, որ դրանց թագավորության ենթակա բնակիչներից ոչ ոք չազատվի, մինչև որ նախատինքների վրեժը չլուծվի, որոնցով իրենք ծաղրվեցին նրանց կողմից։ Եվ իրենց երեսները դարձնելով՝ նույն սպառնալիքներով գնացին։

www.a-pdf.com

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

(Է ԴԱՐ)

ՏԱՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԱՍՏԵՆ ԲՐԿՐՈՐԴ

ՎԱԽԹԱՆԳԻ ՏԱՐՈՆ ԳԱԼԸ ԵՐԵՍՈՒՆ ՀԱՋԱՐՈՎ ԵՎ ՊՈՐՊ ՔԱՂԱՔՆ ՈՒ ԳԱՀԱՐ ԱՄՐՈՑԸ ԿԱՌՈՒՑԵԼԸ

Պարսից թագավորը երկրորդ անգամ երբ շարժվեց գնաց հույների դեմ, այնժամ մտաբերեց Միհրանի՝ իր քրոջ որդու մահը և նրա հորեղբայր Վախթանգին երեսուն հազար ընտիր հեծելազորով ուղարկեց հայոց երկիր՝ [Տարոն]։ Սա եկավ հասավ Ապահունիք, նստեց այնտեղ և հարկահավաքներ ուղարկեց Հարք, Հաշտենք և Մուշ գավառներն ու պահանջեց նրանցից արքունական հարկերը։ Բայց այդ երկրների իշխանները նրան թուղթ գրեցին և ասացին.

— Եթե Վահանը կլինի քեզ հարկատու, ապա կլիննենք նաև մենք և կվճարենք հարկերը. ապա թե ոչ՝ այստեղից պիտի ամոթահար վերադառնաս։ Այն ժամանակ Վախթանգը, խրոխտաբար հոխորտալով, կողմնապահներ է թողնում Ապահունյաց երկրում և սաստիկ բարկությունից կատաղած, գալիս հասնում է Տարոնի քարձունքին, [որ Տարոնի գլուխ է կոչվում]։ Գալով այնտեղ՝ տեսնում է, որ մի ընդարձակ ու խիստ վայելուչ և [հարմարավետ] դաշտավայր է. սկսեց այնտեղ քաղաք կառուցել, այգիներ ու բուրաստաններ տնկել։ Վերաշինել տվեց Ջյուն[ա]կերտ մեծ քաղաքը, Պարսկաստանից իր կնոջը՝ Պորպե[ս]ին բերել տվեց այնտեղ և նրա անունով էլ քաղաքը վերակոչեց Պորպե, որ մեր լեզվով համեղ է նշանակում։ Եվ մատուռի դռանը, որ Սահակ Մեծ Պարթևի ձեռքով էր հիմնադրված, պարսկական ատրուշան հաստատել տվեց։ Այնուհետև բարձրացավ Տավրոս լեռան վրա, կառուցել տվեց այնտեղ մի մեծ ամրոց և կոչեց Գահաբ, որովհետև [նրանցից] շատերը՝ վայրի գազաններից սարսափահար, այնտեղ գահավեժ եղան, կարծելով թե հեծյալներ են։ Ապա Գ[ո]ռոզ լեռնաբլրի վրա մի ավան կառուցել տվեց իր Գռեգուռոս որդու անունով և կոչեց այն Գռգռոս։

Դրանից հետո [Վախթանգը] սուրհանդակ հղեց Վահանի մոտ և այսպես ասաց.

— Քաջարազուկ և հզոր Վահան հսկային՝ դիցն օգնականությամբ, ողջույն... Թեև իմ եղբորորդու մահվան համար շատ տրտմեցինք, սակայն հույժ զարմացած ենք՝ ձերդ մեծությանդ իմաստությունը տեսնելով։ Ահավասիկ, ես եկել եմ հանուն սիրո. եկ ինձ մոտ և խոստացիր երդմամբ տալ տերունական հարկը, նաև հնազանդ լինել արքային [պարսից], նրա նկատմամբ չարիք չխորհել, և ես կյանքդ քեզ կբաշխեմ, թույլ կտամ հայոց մեծ իշխանի այդ փառքդ պատվով վայելես։ Ողջ եղի՛ր, դիցն օգնականությամբ...

Այնժամ Վահանը պատասխանեց և այսպես ասաց.

— Վախթանգիդ՝ վախկոտ ու տմարդի, ամենուրեք աղր ճաշակող խոճկորների ցեղից սերված, քեզ ողջույն։ Թեև Միհրանիդ մահվամբ շատ խըն-

www.a-pdf.com

դացինք, բայց նույնպես էլ քո անմտության վրա լաց եղանք, որովհետև նրա մահվան բոթը լսեցիր, ապա նոր միայն ճանաչեցիր իմ բազկի զորությունը, որ Աստծո կողմից է շնորհված ինձ։ Եթե սիրով ու բարեկամությամբ ես եկել [մեզ մոտ], ապա կնոջդ ինչո՞ւ բերեցիր։ Մի՞թե արու զավակներ ես ցանկանում ունենալ մեր աղամարդկանցից։ Կամ թե իրոք սիրո պատճառով եկար, իմ այդ քաղաքն ու բերդը ինչո՞ւ վերակառուցեցիր։ Սակայն գիտեմ, որ խոսքդ սուտ, շնաբերան ես և վայրահաչ [խածնող]։ Ինքնակամ կյանքդ մահվան ես դատապարտել։ Լսիր խոսքս, դուրս եկ իմ երկրից և գնա խաղաղությամբ. ապա թե ոչ՝ մահը, որով պիտի քեզ սատակեցնեմ, աշխարհն ամբողջ տեսնելով [կզարհուրի]։

Բայց նա՝ [Վախթանգը] զայրացած նրա վրա, Մուշ քաղաքն է ուղարկում վեց հազար զինվոր։ Այնժամ Վահանին տեղեկացրին, թե Ռահանը վեց հազարով քեզ վրա է գալիս։ Նա էլ գիշերով շարժվեց գնաց մինչև Ծծմատաի (իմա՝ Ծծմակա ոտ) աղբյուրը, ուր եկել և իջևանել էին։ Սվ հանկարծակի՝ սրերի բերանն առած, կոտորեցին նրանց։ Չկարողացան [նրանք] նույնիսկ իրենց ձիերին մոտենալ, քանի որ Վահանի որդի Սմբատը մեջտեղից արշավելով, անջատեց զորքերից չորս հազար երիվարներն ու անցկացրեց Արածանիից այն կողմ՝ Հաշտենից գավառը։

Երկու հարյուր ընտիր նժույգներ էլ՝ իբրև նշան առաջին հաղթության, ավարամաս ուղարկեց սուրբ Կարապետին, նաև իբրև երախայրիք՝ քանզի ինքն այնտեղ էր մկրտություն ստացել։ Իսկ Վահանը [պարսիկներին] քշեց դեպի մորուտները, մեծ մասին սրախողխող արեցին. երկու հարյուր հոգու էլ նրանցից մերկացրին ու շամբուտների մեջ ընկղմեցին։

Այդ ժամանակ Հաշտենից իշխանն իր ձեռքի տակ ուներ վեց հարյուր զինվոր, Պալունյաց իշխանը՝ երկու հազար և երկու հարյուր, Արջուց իշխանը՝ չորս հազար, Ողնուտի իշխանը՝ հինգ հազար և ինքը՝ Վահանը՝ ութ հազար։ Նրա որդի Սմբատն էլ տասը հազար զինվոր ուներ. բոլորը միասին՝ քսանութ հազար։

Այս բոլոր զորքերը ենթարկվում էին Վահանին, սակայն բաժանել էր և ամեն կողմերում էլ սահմանապահ զորք թողել։ Այդ նույն օրը նրա մոտ կար միայն երեք հազար զինվոր։

Սվ բազում նախճիր գործեց այնտեղ Հաշտենից իշխանը. աճապարանքով կտրեց Ռահանի գլուխը, իսկ նրա զորքին փախուստի մատնելով՝ շատ խիստ նեղեցին։ Ուստի ետ դարձան [նրանք] և աղաչեցին իրենց կյանքը խնայել և խոստացան [իրենք] հարկ վճարել։ Բայց Վահանը այսպես ասավ նրանց.

— Հանձնեք մեզ Ռահանի գլուխը և մենք ձեզ ազատ կարձակենք։ Այնժամ նրանք տարակուսած՝ այդ վիճակից ելք էին փնտրում և չէին կարողանում գտնել, որովհետև փնտրում էին իրենց մեջ Ռահանի գլուխը, բայց չկար։ Ուստի բերեցին Ռահանի որդի Վահին և հանձնեցին Վահանին։ Այդ ժամանակ Հաշտենից իշխանը՝ ինքն առաջ եկավ և ասաց նրանց.— Կամ Ռահանի գլուխը տվեք մեզ, կամ երեսուն հազար դահեկան։

Նրանք էլ բերին տվին երեսուն հազար դահեկան ու ազատ գնացին։ Սակայն, երբ Վահանը նայեց ու տեսավ, որ բոլորը ազատ գնում են, աստվածային նախանձախնդրությամբ ու չարությամբ լցվեց նրանց հանդեպ. հարձակվեցին նրանց վրա ու սկսեցին անխնա կոտորել։ Իսկ նրանք, վայնասուն բարձրացնելով, գոչում էին.— Աւ ի՞նչ (ինչո՞ւ դարձյալ) պատերազմ եք բորբոքում, ով զաղրախոսներ (իմա՝ պոռոտախոսներ)։ Իսկ այդ տեղն

www.a-pdf.com

էլ ավելի անվամբ Առինչ կոչվեց: Մնացածներին էլ այնտեղ հարթավայրում սփռելով՝ սաստիկ կոտորած գործեցին: Նրանք էլ, որ փախան-ազատվեցին, հինգ-վեց հարյուր հոգի հազիվ թե լինեին: Սրանք գնացին և եղածը մի առ մի պատմեցին Վախթանգին: Նա էլ գայրացած հրամայեց գլխատել բոլոր նրանց, որ կենդանի վերադարձան: Ով այնտեղ եղած վեց հազարից ոչ մեկն էլ չմնաց:

Այնժամ Վախթանգի գայրույթն ու ցասումը դարձավ Վահանի դեմ: Այս անգամ նրա դեմ ուղարկեց Աստուրին՝ ութ հազարանոց մի բանակով: Նրանք եկան, բանակ դրին Մեղտի գետի ափին և պատգամաբեր ուղարկեցին Վահանի մոտ. և պատգամաբերը այսպես [խոսեց].

— Ո՛վ դու, չարաբարո գայլ Վահան, մի՞թե չես գիտակցում, որ ծառա և [հարկատու] ես Արյաց արքային, ինչո՞ւ այդ աստիճան անամոթաբար հանդգնում ես: Ով, ասում եմ քեզ, մեղմացրու բարքդ, խոնարհաբար հարկդ վճարիր, ապա թե ոչ, շան մահով պիտի մեռնես:

Վահանը, լսելով այդ խոսքերը, վերցրեց վեց հազար մարդ և իր Սմբատ որդու հետ միասին գնաց պատերազմի:

Երբ գնացին հասան ու բանակ դրին միմյանց հանդեպ, այնժամ Աստուրը սկսեց բորբոքել Վահանի գայրույթը՝ նրան գայլ անվանելով: Իսկ նա պատասխանեց.

— Հիրավի է, որ այդ անունն ես տալիս ինձ, քանզի գալիս եմ շարունակ կոտորում, գնում և գարձյալ գալիս: Ապա սկսեցին մարտնչել միմյանց դեմ: Պատերազմը երբ թեժացավ, Վահանի որդի Սմբատը միշտ աչքն Աստուրի վրա էր պահում, և հանդիպեցին իրար: Բայց Աստուրը, նկատելով, որ իր առջև կանգնածը մի պատանի է, քամահրեց նրան այսպես.

— Քարապաշտ հարճորդի, հեռու քաշվի՛ր դեմիցս, որպեսզի ես իսկական տղամարդկանց հետ մենամարտեմ:

Իսկ Սմբատը պատասխանեց.

— Դու ծնունդ ես սատանայի և հիրավի են քեզ Աստուր կոչում, քանզի սուրդ ոչինչ է, և հենց հիմա կտրիճիս հետ ուժդ փորձելով՝ կճանաչես քո կնամարդի լինելը: Ով այս ասելով՝ նետվեց դեպի նա. նախ կտրեց Աստուրի ձիու գլուխը, գետին տապալեց նրան, ապա սուրը ճոճելով՝ հարձակվեց նրա վրա, կտրեց նրա գլուխն ու վեր բարձրացնելով ասաց.

— Փա՜ռք քեզ, Քրիստոս, փառք, փա՜ռք քեզ սուրբ Կարապետ, որ զորավիգ եղար կործանելու Թշնամուս: Ով մինչդեռ նա խոսում էր այդպես, ինը հոգի Թշնամիներից շրջապատել էին Վահանին՝ նրա հորը, և ինչպես անտառի կաղնուն, անխնա տապարահարում էին: Այնժամ Վահանը սկսեց Թուլանալ և ձայնը բարձրացնելով՝ որդուն կանչել.

— Ո՛ւր ես, որդյակ իմ՝ Սմբատ, հասիր օգնությանս.— քանզի նա այդ ժամանակ ութսուն և ութ տարեկան էր: Բայց այդ միջոցին Սմբատը, քաջաբար առաջ նետվելով, գոչեց.— Զորավիգ լե՛ր մեզ, ով սուրբ Կարապետ: Ով այն կողմից, ինչպես արծիվ սրաթռիչք, դեպի նա սուրաց, մի հարվածով կտրեց Աստուրի որդու գլուխը թիկնախառն ու գետին տապալեց. մյուսներին էլ այս ու այն կողմ ցրիվ տալով՝ իր հորը փրկեց:

Այնժամ զորացավ Վահանը, ոգևորված առաջ արշավեց. և որովհետև Տերը նրանց ձեռքը մատնեց պարսկական զորքին, մինչև արևամուտ կոտորած արին ու [մյուսներին էլ] հալածական դարձրին: Ով այսպես ութ հազարից երեք հազարը միայն կենդանի Վախթանգի մոտ հասան, որը, տեսնելով այդ, լուռ ու մունջ մնաց և մինչև հաջորդ տարին ոչինչ չձեռնարկեց:

www.a-pdf.com

Այս նույն տարին վախճանվեց քաջ Վահանը՝ [հայոց] եկեղեցու նախանձախնդիր վրիժառուն։ Ապա կարգադրեցին տանել նրա դին Գլակա վանքը. ուր և կա թաղված՝ սուրբ Կարապետի դռան մոտ։

Հաջորդ տարի Վախթանգը քսան հազար զորք գումարեց և ուղարկեց Սմբատի դեմ՝ այս պահանջով, թե եկ կամ պատերազմենք, կամ հնազանդվիր և մեզ հարկատու դարձիր։ Իսկ նա ինը հազարանոց մի բանակ կազմեց և դուրս եկավ նրա դեմ պատերազմի. գնաց հասավ մինչև Անտաք։

Հինգ հազարը թողեց այն բլրի վրա, որը Մահվան ագարակ է կոչվում և ինքը մնացածով ելավ գնաց նրա դեմ՝ նրան գրգռելու մտքով։ Վախթանգն էլ կարծեց, թե բոլորը [այդքանն] են միայն և նրանց դեմ ուղարկեց ընդամենը ինը հազար հոգի։ Զորքերը գիշերով եկան և շրջապատեցին նրանց։ Եվ նա [Սմբատը] կամեցավ [հենց այդ գիշեր] հարձակվել նրանց վրա, սակայն իր մոտ գտնվող քահանաները արգելեցին, բայց նա չլսեց։— Ես վստահ եմ Աստծու կողմից, ասաց, որովհետև միամտությամբ, [անկեղծ հոգով] ենք հավատացել ու ծառայել սուրբ Կարապետին, ուստի նա մեզ աչքաթող չի անի։ Եվ գիշերվա կեսին ջահերով դուրս եկան ու հարձակվեցին Պարսից զորքի վրա։ Այստեղ հանկարծակի երևաց մի սպիտակափառ հերավոր ձևրուն, որի մազերից լույս էր ճառագում, և մոտենալով քաջ Սմբատին՝ ասաց.

— Քաջալերվեցե՛ք, որդյակ իմ, և մի երկնչեք, քանզի սուրբ Կարապետն է մեր թիկունքում պատրաստ կանգնած և ինքն է պատերազմում մեզ հետ միասին։ Եվ այս իրողությունը ոչ մեկին թող անհավատալի չթվա, քանի որ նրանք [թշնամիները] սկսել էին միմյանց դեմ մարտնչել և միմյանց կոտորել։ Այդ մեր Տերն ինքն էր նրանց դեմ պատերազմում։ Եվ այնքան շատ կոտորվեցին այնտեղ, որ արյան հեղեղներ գոյացան, ուստի և այդտեղն էլ Թիլ կոչվեց։ Իսկ երբ ավարտեցին վերջացրին կոտորածի գործը՝ այդ ամբողջ բազմության, երկու հարյուր մարդ միայն կենդանի թողեցին, որպեսզի ուրիշներին զրուցատար լինեն գիշերը երևացած այն մարդու մասին, որովհետև իրենք թշնամիներն էլ տեսան նրան։ Իսկ ինքը [Սմբատը] առնելով ձիերի ամբողջ երամակը ուղարկեց Մուշ, իր որդուն (սա իր մորապապի անունով Վահան Կամսարական էր կոչվում), որպեսզի քաղաքի ողջ հետևակ զինվորներին շուտափույթ հեծյալ դարձնի։ Եվ նա կազմեց մի հեծյալ գունդ՝ երկու հազար հինգ հարյուր հոգի և դուրս բերելով ուղարկեց Սմբատ իշխանի մոտ։ [Սմբատը] ութ օր շարունակ խուլս էր տալիս և իր զորքն էր կազմում ու դասավորում։ Ութ օրից հետո Վախթանգը եկավ հասավ այնտեղ՝ պատերազմի դաշտը. և վաղ առավոտյան պատրաստվեցին ճակատամարտի։

Այստեղ Սմբատը երկու հազար հեծյալ զինվորներ անջատեց զորքից և գիշերով գաղտնի անցկացրեց պարսիկների թիկունքը՝ նախապես պատրաստած թաքստոցը։ Երկու հազար էլ անցկացրեց բլրի հակառակ կողմը. և այսպես երկու կողմերից գաղտնի բանակներ կազմեց ու պատրաստ պահում էր։ Ապա ինքը մնացած ութ հազարը, առանձին ճակատների բաժանելով, դասավորեց մինչև լուսաբաց, որպեսզի գաղտնի դարանի մասին ոչինչ չհասկացվի և վաղ առավոտյան փութանակի ուղիղ թշնամու վրա շարժվեց.

Երբ սկսեցին պատերազմել միմյանց դեմ, սկզբում հաղթությունը կարծես նրանց կողմն էր թեքվում, և [խիստ] նեղեցին Սմբատին։ Այնժամ Սմբատը բարձրացավ լեռան կատարը և կանչեց ինչպես առյուծ. «Ո՞ւր եք, իմ քաջեր, հապա՛, առաջ եկե՛ք։ Զորքերը լսելով՝ ամեն կողմից դուրս թափ-

www.a-pdf.com

վեցին ու հարձակվելով՝ բոլոր կողմերից շրջապատեցին պարսից բանակը։ Եվ այնպես խառնաշփոթ ու բորբոքվեց ճակատամարտը, որ նույնիսկ իրար ճանաչելը անհնարին դարձավ. միայն փողերի ձայնից և դրոշների տեսքից էին տարբերում միմյանց։

Բայց ահա, երբ միմյանց դեմ դուրս եկան Վախթանգն ու Սմբատը, Վախթանգն ասաց.— Կանգնի՛ր, հարճորդի, թեպետ և շատ-շատերի ջնջեցիր, այսօր, սակայն, իմ քաջերի ձեռքից քեզ պրծում չկա. մեր սրերը պիտի կտոր-կտոր պառատեն ձեզ բոլորիդ։ Իսկ Սմբատը հարձակվելով՝ խփեց կտրեց նրա ազդրի սռնապանը, խոցեց նրան ուժգին և կամենում էր գետին տապալել։ Բայց Վախթանգը հասցրեց տեգով հարվածել նրա կրծքին, որը ցցվեց նրա լանջապանի մեջ, բայց ներս չթափանցեց։

Այնժամ Սմբատը, ձայնը բարձրացնելով, գոչեց.

— Ով սուրբ Կարապետ, այսօր էլ ցույց տուր զորությունդ ծառաներին քո, քանզի հանուն քո և քեզ հավատարիմ երկրպագողների ենք նահատակվում։ Եվ տեգով ուժգին հարվածեց Վախթանգի թիկունքին, պատռեց [երկաթյա] զրահը և սրտի մեջ մխրճելով՝ մյուս կողմից դուրս բերեց. ապա հանեց սուրը, թափով խփեց կտրեց Վախթանգի գլուխը, սակայն բռնել չհասցրեց, քանզի բազմաթիվ մարդկանց վրայով այն կողմ թռավ [գլուխը]։ Այդ միջոցին Վախթանգի ծառաներից մեկը վերցրեց գլուխն ու սկսեց փախչել։ Սմբատը հասավ նրա ետևից ու մուրճով հարվածեց նրա գագաթին. սաղավարտը գոգվեց և գանգի ոսկորը ներսից պատռվեց։ Մուրճը այնպես խորը մտավ սաղավարտի մեջ, որ հազիվ կարողացավ քաշել հանել։ Նա էլ գլուխը նետեց ու ինքն ընկավ մեռավ։ Վախթանգի ծառաներից մեկ ուրիշը գետնից վերցրեց գլուխն ու սկսեց փախչել։

Իսկ Սմբատը հետապնդելով նրան ասաց.— Ով անմիտ պարսիկներ, չտեսա՞ք, թե ինչպիսի մահով կործանվեց ձեր զորապետ Վախթանգը։ Իսկ դուք, որ այդպես հավատարիմ ծառաներ եք՝ նրա գլուխն առնելով փախչում եք, իմացե՛ք, որ այդպես պարտավոր եք լինել... Եվ ծառան [սարսափահար] ետ դարձավ, նետեց գլուխը Սմբատի կրծքին ու ասաց.

— Տա՛ր, խորովի՛ր ու կե՛ր։ Բայց վայ ձեզ, որ վաղն այլևս չկա, որ սպանեք։ Իսկ Սմբատը, գլուխն առնելով, հետապնդեց պարսիկին, հասավ ու ասաց.— Այ տիրատյաց պարսիկ, ինչո՞ւ քո գլուխը չես տալիս քո տիրոջ գլխի փոխարեն։ Արդ, քանի որ այդպես տիրատյաց եք, ուստի ես կհեռացնեմ այդ գլուխը քո վրայից։— Այդպես ասելով՝ խփեց կտրեց նրա գլուխն ու նետեց ցած, ապա մեծավ հաղթությամբ վերադարձան բլուրը։ Զորքերն էլ, շրջապատելով պարսիկներին, բոլորին կոտորեցին ու նույն տեղում վայր թափեցին, և ոչ մեկը նրանցից կենդանի չմնաց, բացի այն չորս հարյուր հոգուց, որոնք ուղտապաններ էին։ Նրանց հրամայեց չսպանել, այլ վերցրեց նրանցից հազար քառասունչորս ուղտ և ութ հազար ձի ու ջորի։

Իսկ երբ ավարտվեց պատերազմը, հրամայեց նրանց դիակները լցնել ձորերն ու հեղեզատները, և բլրի անունն էլ կոչեցին Մահու բլուր։ Ապա Սմբատն առավ իր զորքն ու գիշերով ելավ գնաց Պորպ քաղաքի վրա։ Ջինվորները գիշերով մտնում էին տները. որ տանը պարսից լեզվով խոսող էին գտնում՝ սպանում էին անխտիր։

Եվ ապա բոլորի քթերը կտրեցին և լարի վրա շարելով՝ բերին Սմբատի առջևը դրին։ Համրեցին քթերը ու տեսան, որ բոլորը քսանչորս հազար էին՝ մարդ, կին և երեխա։ Իսկ Վախթանգի կնոջն ու որդուն առան տարան Այծից

www.a-pdf.com

բերդն ու պահեցին այնտեղ։ Ապա լուր ուղարկեց [Սմբատը] պարսից խոսրով թագավորին ու ասաց.

— Կամ հինգ տարվա հարկը կտաս ինձ, քանի որ զորքդ ու [նրանց անասունները] իմ երկրի հացն ու խոտը կերան, և փայտի արժեքը, որ իբրև վառելիք օգտագործեցին, և ջրինը, որ խմեցին, և այն տաճարների գինը, որ իմ հայր Վահանը այրեց քո գինվորների պատճառով, և սապոնի գինը՝ հիսուն հազար դահեկան, որով քո զորքերի գիշահոտ ու արյունաթաթախ զգեստները լվանալ տվեցինք ու հագանք։ Ապա թե ոչ՝ գամ հարյուր մարդով քո վրա և ամբողջ Պարսկաստանը գերեվարեմ, բերեմ Տարոնում լցնեմ. և քո այդ կուռքերի տեղն էլ բերեմ շներին կապեմ, որ դրանց փոխարեն ձեզ համար հաչեն։ Արդ, ինչ որ ասացի, բոլորը շուտափույթ ուղարկի, իսկ եթե ոչ՝ կտեսնես ինչ եմ բերելու քո գլխին։

Խոսրով արքան, սակայն, պատասխան չտվեց։ Այն ժամանակ Վախթանգի եղբայր Սուրենը առավ հարյուր հազար դահեկան, ինը հազար էլ մարդ իր հետ վերցնելով՝ եկավ Տարոն, որպեսզի փրկագին տա և ազատի իր եղբոր կնոջն ու որդուն։ Սմբատն ընդառաջ գնաց Սուրենին, սիրով ընդունեց նրան ու առավ տարավ Մուշ։

Տասն օր այնտեղ մնալուց հետո Սուրենը խոսք բաց արեց իր եղբոր որդու մասին, թե որտե՞ղ է։Իսկ նրանք ցույց տվեցին բերդն ու ասացին, թե՝ այնտեղ է։ Եվ նա հարցրեց.— Ի՞նչ է անում, այծարա՞ծ է այնտեղ, թե դիվարած։ Սմբատը ծիծաղեց Սուրենի ազի [սրամիտ] խոսքի վրա և հրամայեց [Վախթանգի] կնոջն ու որդուն բերել նրա առջև։ Երբ բերին եկան. Սուրենը, դառնալով Սմբատին, ասաց.— Ով հզոր իշխանդ Հայոց աշխարհի, այս կնոջն ու նրա որդուն շնորհ արա պարսից արքային։— Բայց Սմբատը պատասխանեց և ասաց.

— Պարսից արքային մի սատկած շուն անգամ իբրև շնորհ [անվճար] չեմ տա, որ տանի ճաշ պատրաստի և ուտի, թող թե դրանց տամ։ Բայց քեզ կտամ, եթե գնել ես ցանկանում. ապա թե՝ ոչ, երեքդ էլ գնացեք Արծրունիք և այնտեղ այծեր արածացրեք։ Սուրենը, սակայն, քանզի իմաստուն մարդ էր, խոհեմաբար ասաց.— Ով բարեպաշտ իշխան, ոչ թե այծերիդ, այլ եթե դուռդ շներին անգամ մեզ արածացնել տայիր, դարձյալ փառք ու պարծանք էր մեզ համար, քանի որ քո դռանն ենք։ Իսկ եթե կամենում ես լսել ինձ՝ ահավասիկ, վերցրեք այս հարյուր հազար դահեկանը, երկու հազար ուղտերն ու հինգ հազար պարսկական նժույգները և շնորհ արեք մեզ հանձնել այդ կնոջն ու իր որդուն։

Այնժամ իշխանը պատասխանեց.— Այդ բոլորը, ինչ այստեղ ես բերել, իմն է. քո գլուխն էլ կարող եմ ուսերիդդ վերացնել և ինչ ունես, բոլորն էլ գրավել։ Բայց եթե [սրանք] քեզ համար թանկ են, ապա ինքդ քրիստոնյա դարձիր և ինձ էլ մի [հնարով] պարսիկների մոտ տար, և դրանք էլ թող քեզ լինեն։ Հապա թե ոչ՝ այնժամ ինքներդ ձեր գլխի ճարը տեսեք։— Իսկ Սուրենը նրա առջևը բերել տվեց հարյուր հազար դահեկանը, ուղտերն ու ձիերը և հանձնեց իշխանին։ Բայց Սմբատն ասաց նրան.— Շատ եմ հավանում բերածներդ. սակայն հարյուր ութսուն հազար դահեկանի լուր [գուտ, միայն] փայտ են տարել Քարքե լեռան [լանջերից], չորս հազար դահեկանի խոտ են կերել այդ դաշտերից, քսան հազար դահեկանի եղջերուներ, եղնիկներ և նապաստակներ են որսացել մեր անտառներից ու հանդերից. հացի ու ջրի գինն էլ ձեզ եմ բաշխում։ Բայց որ երկու տարի շարունակ խա-

www.a-pdf.com

ռանի, Ասորեստանի, Մուրհայի [Մուրխայի] անուշահամ գինին մեղանից կտրել էին և իրենք էին արբենում, այդ թող տան։ Ապա նաև վեց գավառների հարկը, նաև քաղաքի ամբողջ եկամուտը, որը կերել սպառել են՝ լրիվ չորս հազար դահեկան, թող բոլորը տան. դու՝ ինքդ էլ Քրիստոսի սուրբ հավատն ընդունիր, ինձ էլ պարսիկների մոտ առաջնորդիր, [այն ժամանակ] նրանց քեզ եմ բաշխում։

Շատ տրտմեց Սուրենն ու երեք օր շարունակ ոչինչ խոսել չկարողացավ, սակայն Սմբատը սփոփեց նրան ասելով.— Մի՛ տրտմիր, ամեն բան քո ցանկությամբ կանեմ, բայց միայն եկ միասին անցնենք գնանք մեր եկեղեցիներում ուխտի։ Ով զորքն առած՝ գնացին անցան Արածանի գետի այն կողմը, [Վախթանգի] կնոջն ու որդուն էլ իրենց հետ տարան։ Բայց որովհետև գաղտնամտաբար ցանկանում էր խաբել պարսիկին, Սմբատը իր որդի Վահանին թողեց գետի այն կողմը, որպեսզի եթե [նրանցից] որևէ մեկը փորձի այն կողմն անցնել, նա անմիջապես սպանի։

Այնժամ ինքն իր զորքը, թվով չորս հազար այր, թողեց Մեղտիում, իսկ պարսիկներին էլ՝ Արտից գյուղ կոչվող անդաստանում, առավ իր հետ հինգ հարյուր զինվոր, նույնչափ էլ Սուրենին թույլ տվեց ունենալու իր հետ և միասին անցան գնացին դեպի վանքերը։ Երբ եկան հասան այնտեղ, ուր սբ. խաչի գաղտնարանն էր, ձիերից իջան և այնպես հետիոտն շարժվեցին դեպի վանքը. քանզի երիվարներով այն կողմն անցնել անհնարին էր, ձորի արևելյան կողմը դժվարանցանելի [մացառուտ] էր և զառիվայր՝ մինչև եկեղեցին. մանավանդ, որ սուրբ Գրիգորն ու Մեծն Տրդատը չհամարձակվեցին երիվարներով այդտեղից անցնել, ապա ուրիշ որևէ մեկն ինչպե՞ս կարող էր հանդգնել։

Ահա, երբ եկան մերձեցան վանքերին, սբ. ուխտի պաշտոնյաները [վանականները] նրանց ընդառաջ եկան և արգելեցին ներս մտնել եկեղեցի [անհավատ] Սուրենի պատճառով։ Դրա համար շատ զայրացավ Սմբատը և դառնալով Սուրենին՝ ասաց.— Դուք՝ պարսիկներդ, այնքան պիղծ եք, որ այս մայրիներին անգամ արժանի չեք, ուր մնաց, թե ապրելու արժանի լինեք։ Ով Վարազը, որ Պալունյաց իշխանն էր, հարձակվեց նրանց վրա, սրով կտրեց Սուրենի գլուխը, իսկ պարսից մյուս երկու իշխաններին ծառերից կախելով խեղդամահ արին, [նրանց] չորս հարյուր զինվորներին էլ անխտիր սրի քաշեցին։ Քանի որ Պալունյաց իշխանի զորքերը թաքնված էին Մեծամորի կողքին՝ բլրի մոտ գտնվող փոքրիկ ամրոցում, երեք հարյուր մարդ էլ Անտաքի ներսում, ուստի սրանք հեծան նրանց [պարսիկների] ձիերը և իջեցրին մինչև Մեծամոր. նրանք էլ, որ դարանում էին, դուրս եկան և երկու կողմից մեջտեղն առնելով՝ այն հինգ հարյուր մարդկանց բոլորին կոտորեցին։

Ապա շտապեցին կտրեցին ձիերի երամակը պարսից զորքերից՝ ավելի քան երկու հազար երիվար, և Արյանց ձորովն ի վեր տարան։ Սրանք այն մարդիկ էին, որ Արտից գյուղի ամրոցում էին և գիշերով դուրս եկան ու երիվարներին անջատեցին նրանցից։ Իսկ մնացած զորքը հետամուտ՝ հետիոտն հասան այնտեղ, որ կոչվում է Գողոց աղբյուր։ Այստեղ ձիագողերը ետ դարձան՝ նետ-աղեղներով ու պարսաքարերով հարվածեցին ու սպանեցին [նրանցից] հինգ հարյուր և քսան մարդ։ Իջան սրանց երիվարներն էլ վերցրին, խառնեցին մյուսներին և բոլորը եղավ երեք հազար։ Բայց պարսիկներից ոմանք, ձորը մտնելով, հետամուտ եղան նրանց, մինչև հասան անտառին. այստեղ հանկարծակի հարձակվեցին ձիագողերի վրա և

www.a-pdf.com

սկսեցին կոտորել։ Իսկ ձիագողերից նա, որ ավագն էր և իրեն էլ Սերեմ էին կոչում, ետ դարձավ և սուրը հանելով՝ սկսեց ինքը միայնակ պատերազմել նրանց դեմ, մինչև ընկերները ետ դարձան։ Բայց մինչև եկան հասան, Սերեմն արդեն սպանվեց, որովհետև [Թշնամու] նետը խոցել էր նրա սիրտը։ Նույն ձորում էլ [նրան] թաղեցին. և այն տեղի ու անտառի անունն էլ մնաց Սերեմաձոր։

Նրա ընկերները, սակայն, քարերով ու նետերով հարձակվեցին Թշնամիների վրա, բազում մարդկանց, քարակոծ անելով, սպանեցին, իսկ մնացածները փախստական եղան, գնացին հավաքվեցին մի քարայր տեղ և ճաշկերույթի նստեցին։ Այդ ժամանակ մի հեծյալ խումբ՝ թվով հարյուր հիսուն մարդ, որսորդության նպատակով դուրս ելան Ողական ամրոցից ու եկան այդ կողմերը։ Երբ տեսան պարսկական զորքին՝ քանզի անհոգ լինելով [զվարճանում էին], միահամուռ հարձակվեցին նրանց վրա և ոչ մեկին թույլ չտվին իրենց երիվարներին մոտենալ, այլև շրջապատելով՝ նույն հացի սեղանի վրա բոլորին սրախողխող արին, թվով հինգ հարյուր և ութ մարդ։ Եվ քանզի այդպես գումարված-ժողովված կոտորվեցին, ուստի այդ տեղի անունն էլ Ժողով կոչվեց։

Մինչդեռ այս բոլորն այսպես եղավ, Սմբատն ու Պալունյաց իշխանը զորքերով թաքնվեցին ձորում մի անտեսանելի տեղ և մի հոգու ուղարկեցին Մեղտի, թե շտապ եկեք դրանց վրա։ Ապա հարյուր մարդ էլ ուղարկեցին պարսից զորքին գրգռելու։ Երբ պարսիկները տեսան սրանց, միասին գրոհ տվին նրանց ետևից և ուր որ է հասնում էին։ Բայց նրանք խուսափեցին, և երբ եկան ելան բլուրն ու հասան Սմբատի մոտ, պարսից զորքը սկսեց կուտակվել ու բազմանալ նրա ու Վարազի շուրջը։ Իսկ նրանք, ծուներ իջնելով, օգնության կանչեցին սուրբ Կարապետին՝ խոսելով այսպես.— Հիշի՛ր մեզ, ով սբ. Կարապետ, ու երախտիքը մեր և ինչպես հեռավոր տեղերում օգնության հասար մեզ, ապա մոտիկ տեղում նույնպես հասիր։— Եվ աստվածային օգնությունը հասավ նրանց թիկունքից։ Ապա ճակատ կազմեցին հենց բլրի վրա՝ Սմբատը աջ կողմից և Վարազը՝ ահյակ, ու սկսեցին արնահեղությունը. և արյամբ թաթախվեցին իրենք էլ, իրենց երիվարներն էլ։ Այնքան հեղեցին, որ արյունից մածուցվեց սուրը Սմբատի ափի մեջ և դաստակից էլ կոտրվեց ու չկարողացավ պոկել, որովհետև արյունը [սառչելով] պինդ էր մածուցվել։ Եվ հենց պարսիկները նկատեցին, թե սուրը կպել է ափի մեջ ու կոտրվել, և նա մի այլ սուր չի կարող բռնել, ուստի ձայն տալով իրար՝ կանչում էին.— Ճապարե՛ք, քանզի մածուցվեց սուրը քաջի և կոտրվեց սուրը, որ նրա ձեռքումն էր, և իր Աստվածն իսկ իրեն կապկապեց։

Եվ անհամար բազմությամբ շրջապատեցին նրան ու անխնա հարվածում էին։ Ինչպես որ չոր փայտն է ճեղքվելիս ճարճատում, այնպես ճարճատում էին նրանց սրերը Սմբատի գլխին։ Իսկ նա բարձրագոչ կանչում էր.— Վա՛յ ձեր քաջությանն ու արիությանը, որ իմ գլուխը կտրելու չափ իսկ զորություն չունեք՝ բոլորդ միասին։ Նա այդպես ասաց, որպեսզի ընդմիշտ հիշվի այդ խոսքը։ Սակայն հասկացավ, որ հույժ սաստկացնում են [ճնշումը], ուստի ձայն տալով ասում էր.— Ո՞ւր ես, քաջաբազուկ և սարսափ Թշնամյաց՝ իշխանդ Պալունյաց, իմ ծերության օրերի գավազան, առաջ սլացիր ինչպես հզոր արծիվ, քանզի անգղներն ու բվեճներն են շրջապատել ինձ...

Իսկ նա լսելով՝ թողեց ձախ թևն իր որդի Վահանին, նա որ Վահանա-

www.a-pdf.com

հովիտը կառուցել տվեց, և արծվի նման կռնչալով՝ այնպես սուրաց նրանց վրա, որ նրա ձայնից երիվարներն անգամ դողացին և. Աստծու օգնականությամբ, Սմբատի թիկունքի կողմից հասնելով՝ այնպես ուժգնորեն տեգով հարվածեց պարսիկի թիկունքին, որ երիվարի ողնաշարի հետ միասին կտրելով՝ մյուս կողմից դուրս հանեց. և մինչև կհասցներ հանել [տեգը], նա ընկավ ու մեռավ: Եվ քանի որ չկարողացավ տեգր հանել, ծաղր[անքով] ասաց.—

— Գնա՛, չափիր տեղդ, իմացի՛ր թե քանի՞ կանգուն է նրա հասակը, որպեսզի որևէ մեկը ստելով չխաբի՝ թե երեք կանգուն է:

Ապա Սմբատը թեժ կռվի միջից մի կողմ քաշվեց ու հրամայեց բերել մի պարսիկի. իր ձեռքի վրա պարսկի գլուխը կտրել տվեց, որպեսզի տաք արյունով ողողվի և թուլանալով պոկվի բռնատեղից:

Եվ այդպես էլ եղավ: Այնժամ Սմբատը առավ մի այլ սուր, հեծավ մի ուրիշ նժույգ, բայց հանկարծ նկատեց, որ [թշնամիներից] վեց հազար մարդ շրջապատեցին յուրայիններին, որ ընդամենը հինգ հարյուր էին: Հասկացավ իսկույն, որ երիվարները այլևս չեն կարողանում շարժվել, կանգնել են. անմիջապես խփեց մի պարսկի, ցած գլորեց ձիու վրայից և մատուցելով այն Վարազին՝ ասաց.— Հեծի՛ր, իշխանդ Պալունյաց: Նա էլ, ոտքն իր ձիու վրայից շուռ տալով, մյուսը հեծավ: Եվ այդ բանը տեսնելով՝ պարսիկ զորքերը խիստ զարմացան, թե ինչպես են կարողանում այդպես փութանակի փոփոխել երիվարները: Եվ այդպես շարունակ այդ զարհուրելի պատերազմի ընթացքում անընդհատ փոխում էին իրենց ձիերը: Իսկ Թշնամու զորքը նրանց շուրջը շարունակ կուտակվում, շատանում էր. սակայն որչափ Թշնամու զորքերը նրանց շուրջը բազմանում, [ավելի շատանում] էին, այնքան իրենք նրանց շրջապատման մեջ ավելի հանգիստ էին: Եվ այնքան կիսվեցին, որ եզրերում գտնվողները [նրանց] մոտենալու տեղ իսկ չէին գտնում: Այնժամ Սմբատի զորքերից ոմանք սկսեցին երկյուղել [թուլանալ]. բայց աստվածային տեսիլքով, կարծես, հանկարծահաս երևաց նրանց աչքին մյուս Սմբատը՝ Հաշտենից իշխանը, դեպ իրենք սուրալիս, որ իր հետ բերում էր նաև Սմբատի որդի Վահան Կամսարականին ու վեց հազար քաջամարտիկ էլ նրա հետ միասին:

Նրանց տեսնելով՝ ձայն տվեց Վարազ իշխանն ու ասաց.— Քաջորդի Վահան, ո՞րտեղ էիր, որ ավելի վաղ չեկար մեզ օգնության: Եվ Վահանը, արտասվախառն ձայն տալով, ասաց.— Ո՞ւր է, կենդանի է արդյոք իմ բազմաչարչար այն ծերունի հայրը, թե՞ արդեն երկինք փոխվեց՝ Տիրոջ մոտ իր հանգիստն առնելու: Իսկ Սմբատը, լսելով այդ, ձայն տվեց.— Որդյակ իմ, Վահա՛ն, մեր սուրբ Կարապետն էր ինձ թիկունք և զորավիգ, այլ ինչպե՞ս պիտի ես պարսիկների ձեռքով մեռնեի: Լսելով այդ՝ Վահանը իր գոհությունը հայտնեց Աստծուն, ապա ուղիղ դիմացից արշավելով հարվածեց, ճեղքեց Թշնամու հոծ բազմությունը, մտավ զորքի մեջ ու սկսեց կոտորել. մի թևում՝ ինքը, իսկ մյուսում՝ Հաշտենից իշխան Սմբատը: Եվ իրենց մեջտեղն առնելով՝ սկսեցին ոչնչացնել նախ ծայրաթևերը, ապա իրար վրա բերելով՝ բոլորեցին պարսկական ամբողջ զորքին և մեջերն առնելով՝ սկսեցին անխնա կոտորել, մինչև արևամուտ: Պարսիկներից ազատվեցին միայն երեք հարյուր հոգի, որոնք մեջտեղից սողոսկելով, փախստական գնացին: Բայց քանի որ նրանց նժույգները մնացին, իրենք գաղտագողի մտան մի ձորի մեջ ու թաքնվեցին այնտեղ: Մահից փրկված՝ [թմրեցին], ննջեցին մինչև մյուս օրվա կեսօրը: Բայց հայոց իշխանի զորքերը եկան, նրանց

www.a-pdf.com

երեսներին ջուր ցանեցին, արթնացրին և տարան Մեղտի, ուստի և այդ ձորն էլ Թմրաձոր կոչվեց։ Ապա Սմբատը հրամայեց մեռածների դիակները կիտել իրար վրա՝ մոտակա մի բլրի կատարին, որը Վարագի գործած կոտորածի պատճառով կոչվեց Վարագա[կա]բլուր։ Իսկ իրենք եկան իջևանեցին Վանքի գյուղը, որին նաև Կենաց վայր էին անվանում։ Երբ մտան գյուղը, բնակիչները երգով ու պարով ընդառաջ ելան նրանց։ Բայց հետո, երբ դիակներն սկսեցին նեխել, նրանք դրա վրա երգ հորինեցին [շեր կապեցին], ու ասում էին.

— Կերան գազանները մեռածների մարմիններն ու գիրացան.
Կուզն այնքան կերավ, որ փքվեց ինչպես արջը,
Եվ աղվեսը հպարտացավ՝ առյուծից առավել,
Գայլը, քանզի խիստ շատակեր էր, պայթեց,
Իսկ արջը, քանի որ կերածն իսկույն դուրս է տալիս, սովից մեռավ.
Անգղները, քանզի շատ ագահ էին,
Նստեցին և այլևս վեր կենալ չկարողացան,
Մկներն այնքան շատ կրեցին [լցրին] ծակերը, իրենց ոտքերը մաշեցին...

Այս ամենը երգով ասում էին, ուստիև նրանց դեմ հանդիման եկողները, կատարվածին տեղեկանալով, գյուղի անունը Շիրականիք (Շերանիկ) կոչեցին։ Իսկ այն պարսիկներին, որ [Սմբատը] կարգադրեց Մեղտի տանել, պատվիրեց նրանց բոլորի վերքերը բուժել, բազում քանակությամբ գանձ, ձի ու զենք տվեց նրանց և խաղաղությամբ ճանապարհ դրեց դեպի Պարսկաստան՝ որպես պարսիկներին գրուցատար։ Ապա իրենք ելան բաբձրացան տերունական տաճարը, անբավ հարստություն ընծայեցին Աստծուն սուրբ Կարապետի վանքում և մեծավ ցնծությամբ դարձան իրենց օջախները։

Այդ նույն օրը վախճանվեցավ երանելին՝ Ստեփանոսը և կա թաղված այնտեղ՝ Հայրաբլուրում, մյուս երանելի հայրերի կողքին։ Այնժամ Վահանը Մամիկոնյանց, Պալունյաց և Հաշտենից եպիսկոպոսներին իր հետ առած, եկավ վանքը։

Գլակա վանքի վանահայր ձեռնադրեցին Եպիփանին, որը Դվինի հոթթավայրից էր եկել ու բնակություն հաստատել վանքի անապատում։ Սա քսաներկուերորդն էր [այստեղ], Ստեփանոսից հետո։ Սա էր, որ մասնակցեց Հերակլ կայսեր իր թագավորության իններորդ տարում գումարած կրոնական ժողովին և բազում հայրապետների նզովեց։ Նույն պիղծ աղանդի պատճառով էր, որ Հաշտենից եպիսկոպոսը հալածվեց ու փախավ Հունաց երկիրը։ Եվ մարդասեր Քրիստոսին փառք հավիտյանս, ամեն։

www.a-pdf.com

ՊԵՎՈՆԴ

(Ը ԴԱՐ)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ Գ

Հոռոմոց կայսեր Հերակլեսի թոռ Կոստանդնի երկրորդ տարում Թեոդորոս իշխանը տեղեկացավ, որ թշնամին հարձակվել է մեր երկրի վրա։

Վերցնելով իր զորքը՝ նա կամենում էր Զորա ճանապարհի կիրճերը գրավել, սակայն չկարողացավ նրանցից առաջ ժամանել, քանզի թշնամիները, թևավոր օձերի նման, օդաթև արագությամբ հարձակվելով, իրենց ետևում թողեցին հայկական զորքը և առաջանալով ընթացան դեպի Դվին մայրաքաղաքը։ Նրանք քաղաքը պատերազմելու ընդունակ այրերից թափուր գտան, քանզի ամենքը Թեոդորոս իշխանի հետ գնացել էին, և միայն կանայք, մանուկներ և այլ խառնիճաղանջ [բազմություն] կար, որի մեջ պատերազմելու ընդունակ այրեր չկային։ Հասան քաղաք, անմիջապես գրավեցին ամրոցը և այնտեղ գտնվող տղամարդկանց կոտորեցին, իսկ կանանց ու մանուկներին՝ երեսունհինգ հազար հոգի, գերեվարեցին։

Արդ, ո՞վ արդյոք կարող է արժանավորապես ողբալ ազետի թշվառությունը, քանզի ամեն կողմից անելանելի ծանր դրության մեջ էին։ Սուրբ եկեղեցիները, ուր հեթանոսները չպետք է մտնեին, քանդված ու քայքայված, անօրենների ոտից կոխան էին դարձել։ Քահանաները սարկավագներով ու պաշտոնյաներով հանդերձ ժպիրհ և անողորմ թշնամիների սրով խողխողված էին։ Բազում փափկասուն տիկնայք, որոնք նեղության փորձանքի չէին ենթարկվել, գանահարության տանջանքներ կրելով՝ քարշ էին տրվել հրապարակները, ողբ ու կոծ էին անում վրա հասած օրհասի համար։ Այլևս գերյալների բազմությունը, ուստերով ու դուստրերով, նույն տագնապի, հեծության և հառաչանքի մեջ էր։ Քանզի չգիտեին, ո՞ր մեկին առավել ողբալ՝ անօրենի սրով խողխողվածների՞ն, թե՞ կենդանի մնացած ուստերին ու դուստրերին, որոնց խլել տարել էին՝ Քրիստոսի հավատքին ու հոգևոր աստվածային փառատրություններին օտարացնելու համար։ Շատերը թեպետ ողբով լաց էին լինում ողորմելի տեսքով իրար վրա ընկած արյունաթաթախ դիակների համար, սակայն ի վիճակի չէին նրանց մարմինները հավաքել ու գերեզմանին հանձնել։ Ի դեպ այստեղ հարմար են մարգարեի ողբի խոսքերը. «Ով Աստված, հեթանոսները մտան քո ժառանգությունը, պղծեցին քո սուրբ տաճարը, քո ծառաների դիակները շպրտեցին որպես երկնքի թռչունների կեր, իսկ քո սրբերի մարմինները երկրի գազանների առջև [նետեցին], և մարդ չկար, որ թաղեր նրանց»։ Այս ամեն պատուհասային անցքերը, որոնք այն ժամանակ Հրեաստանում էին եղել, այժմ մեզ մոտ կատարվեցին՝ մեծ տագնապ պատճառելով։

Իսկ հայոց զորքը, նախարարներով ու [Թեոդորոս] իշխանով մեկտեղ, երբ տեսան, թե ինչպես ավազակները սաստիկ նեղում են, նրանց ոտքի

www.a-pdf.com

այրերի ձեռքերը թուլացան և չկարողացան ավարառու թշնամու վրա հարձակվել, քանզի թեպետ տեսնում էին իրենց կանանց և մանուկներին գերի տարված, բայց, քանի որ նվազ էին թվով, չկարողացան դուրս գալ նրանց դեմ, այլ նստած ողբ ու կոծով ավաղում էին իրենց կանանց և մանուկներին: Իսկ հագարացիք նրանց տարան Ասորիք և այլևս տասը տարի չհարձակվեցին Հայոց աշխարհի վրա:

Ապա նրանց իշխանության երեսունվեցերորդ տարում զորք հավաքելավ՝ դարձյալ հարձակվեցին Հայոց երկրի վրա, և նրանց դլխավորներն էին Օթմանն ու Օգբան: Երբ Հայաստանի սահմանները հասան, երեք խմբի բաժանվելով՝ ասպատակ սփռեցին: Մի խումբը, գնալով Վասպուրականի կողմը, գրավեց ավաններ և ամրոցներ, որոնք ձգվում էին մինչև Նախճավան քաղաքը: Մի խումբը գնաց Տարոնի կողմերը, իսկ մի խումբն էլ, հասնելով Կոգովիտ, պաշարեցին Արծափ ամրոցը: Բերդի մուտքը գտնելով՝ [թշնամիները] դիշերը գաղտագողի նրա վրա բարձրացան, քանզի պահապանները քնած էին, և գրավեցին ամրոցը: Այնտեղ գտնվող տղամարդկանց կապանքների տակ դրեցին, այնուհետև իրենց սանձարձակության տալով՝ սկսեցին զազրելի պղծությամբ խառնակվել կանանց հետ:

Սակայն ամենատեսն Աստված գթալով՝ չլքեց իր անվան հավատացողներին, այլ գործված չարիքների վրեժն առնելու համար ուղարկեց Թեոդորոս իշխանին, որը 600 զինավառ ռազմիկներով արագաթև հարձակումով արծվի նման անմիջապես խոյացավ ավարառու թշնամու վրա, կոտորեց մոտավորապես 3000 թշնամու, կապվածներին արձակեց, իսկ ոսոխի փոքրաթիվ մնացորդներին փախուստի մատնեց: [Հայ ռազմիկները] գերյալներին վերադարձրին և թշնամու ավարն ու կողոպուտը ժողովելով՝ խնդությամբ վերադարձան՝ փառավորելով Աստծուն, որ իրենց վրեժը լուծեց թշնամիներից: Իսկ այն [արաբական] զորքը, որի մասին նախապես պատմել եմ, առնելով ավարը և գերիներին, գնաց Ասորիք և դրանից հետո երկու տարի դադար տվեց:

Այս չարիքները գործելով իրենց [իշխանության] օրոք՝ Իսմայելի իշխաններ Աբու Բաքրը, Օթմանը և Ամրը վախճանվեցին:

ԳԼՈՒԽ Ը

Երբ Մահմետ զորավարը Ասորիք գնաց, Հայոց աշխարհի վրա իր փոխարեն իշխան թողեց իսմայելացիներից մեկին:

Սա վատ խորհուրդ հղացավ՝ Հայոց աշխարհից նախարարական ազատախումբ տոհմերը, իրենց հեծյալներով հանդերձ, մեջտեղից վերացնել: Նրա նենգ խորհուրդը անմիջապես հայտնի դարձավ Սմբատին, որը Բագրատունի տոհմից էր, և այլ նախարարների ու նրանց հեծյալներին: Երբ նա իմացավ դավադրությունը, իր մոտ կանչեց ազատանի դասից տոհմակիցներին՝ Աշոտ իշխանի որդի Սմբատին, Թեոդորոս իշխանի որդի Վարդին, իր եղբորը՝ Աշոտին, և այլ նախարարների: Խորհում էր հնար գտնել, որով կարելի կդառնար իրենց անձերը փրկել: Վերջապես խորհրդաժողովը որոշեց հեռանալ երկրից և գնալ հունաց Թագավորի մոտ:

Ապա Վասպուրական երկրի նախարարներից ոմանք բաժանվելով՝ գնացին Վասպուրականի կողմերը, այն դաշտավայր մարզը, որն Առեստակողմ է կոչվում: Այնտեղ բնակվում էր ոմն միայնակյաց, որի մոտ գնացին գործի

www.a-pdf.com

որպիսության մասին հարցնելու, քանզի սուրբ այր էր, ընտրյալ և լի հոգևոր իմաստությամբ, Սակայն նա ողբալով ու ավաղելով մեր երկրի կորուստը, եկեղեցիների կործանումը և նախարարական տոհմերի վերանալը, ոչինչ չկարողացավ հանձնարարել, այլ միայն [խորհուրդ տվեց] խոհեմ լինել և զգուշանալ նենգությունից։ Ապա նրանց վրա աղոթք կարդալով՝ հանձնեց Տիրոջ շնորհներին և բաց թողեց նրանց։

Նրանք, ընթանալով երասխ գետի եզերքով, անցան Ուղայեի սահմանը ու հասան Ակոռի մեծ ավանը։ Իսկ Իսմայելի զորքերը, որոնք նախճավան քաղաքում էին, ընկան նրանց ետևից և հետապնդելուց չդադարեցին, քանզի հինգ հազարից ավելի էին և կամենում էին կենդանի կլանել նրանց։

Երբ հայոց զորքերը տեղեկացան ավարառու թշնամու մասին, որը շարժվում էր նրանց դեմ, վեր կացան, անցան երասխ գետը, բանակ դրեցին Վարդանակերտ ավանում, իսկ տաճկաց զորքերը հետապնդում էին նրանց։ Հայոց զորքերը պատգամ հղեցին տաճկաց զորքերին՝ ասելով. «Ինչո՞ւ եք մեզ հետապնդում, ինչո՞վ ենք մեղավոր ձեր առջև։ Ահավասիկ մեր երկիրը ձեր առջև է, ձեզ ենք թողել մեր բնակավայրերը, մեր այգիները, անտառներն ու անդաստանները։ Արդ, ինչո՞ւ եք նաև մեր անձերը պահանջում։ Թույլ տվեք մեզ հեռանալ մեր սահմաններից»։

Սակայն Իսմայելի զորքերը չկամեցան լսել նրանց, քանզի Տերը կարծրացրել էր նրանց սրտերը, որպեսզի սրի բերան ընկնեն։ Իսկ հայոց զորքերը, ամրացնելով ավանի փողոցները, պահապաններ կարգեցին մինչև առավոտը լուսանալը և իրենք ամբողջ գիշերը ազոթքի հսկումի մեջ էին, հայցելով ամենայնի Տիրոջից նրա մեծազոր աջի օգնականությունը և արդար դատել իրենց և թշնամիների միջև։ Արևածագին, երբ առավոտյան ժամերգությունը վերջացավ, իսկույն հոգևոր պատաբաժ մատուցեցին, և արժանավորները հաղորդվեցին Տիրոջ մարմնով ու արյամբ, այն համարելով իրենց անձերի նկատմամբ վերջին անհրաժեշտ հոգսը։ Ապա թևթև կերակրով՝ իրենց մարմինները զորացրին և անմիջապես վեր կենալով՝ հարձակեցին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, ու պատերազմն սկսվեց։ Այնտեղ մեծազոր Աստվածն օգնության հասավ հայոց գնդին, և թեպետ երկու հազարից նվազ էին, սակայն շատերին հարվածելով՝ սրի քաշեցին։ Յրտաշունչ սառնամանիքի օրեր էին, և դառնաշունչ օգը, առավել ևս սաստկանալով, զրկեց Իսմայելի զորքին իր արի զորությունից, քանզի ամբողջ գիշեր ձյան վրա էին օթագայել [անցկացրել], իսկ լուսածագին ընկան սրի բերանը։ Ովքեր սրից ազատվեցին՝ ընկան երասխ գետը, որն օդի խստությունից սառել էր, և երբ զորքի բազմությունը ելավ սառույցի վրա, սառույցն անմիջապես ջարդվեց, խորասույզ խեղդվեցին բոլոր սրից փախածները և հեղձամահ եղան։

Մի փոքր մասը՝ մոտավորապես 300 մարդ, փախուստի դիմելով՝ ապավինեց տիկին Շուշանին։ Սրանց իր զորքով հետապնդեց Աշոտի որդի Սմբատը, կամենալով փախստականներին սրի անցկացնել։ Նրան ընդառաջ ելավ տիկին Շուշանը և բազում աղերսանքով ու խնդրանքով փրկեց նրանց՝ մերկ, բոկոտն, հետիոտն և վիրավոր վիճակում, որոնց, վերցնելով [իր մոտ], վերքերը կապեց, առողջացրեց և հանդերձներ հագցրեց։ Տվեց նաև զրաստ իր երամակից և առաքեց Իսմայելի իշխան Աբդլ-Մելիքի մոտ, որի համար նրանից մեծ շնորհակալության և մեծամեծ պատիվների արժանացավ։

Իսկ Հայոց զորքերը՝ լիացած թշնամու ավարով, իրենց հաղթության ավետիսն առաքեցին Հունաց թագավորին։ Ավարից նրան ընծա ուղարկե-

www.a-pdf.com

ցին արաբական ձիեր՝ ընտիր երիվարներ և ընկած դիակների բերը կոթելով՝ նրան հղեցին ընծայի հետ: Կայսրը, այս նվերն ստանալով, մեծապես գոհություն մատուցեց Արարչին, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց Սմբատին և նրա հետ եղած նախարարներին ու նրանց զորքերին: Ըստ քաղավորական օրենքի՝ հրամայեց նրան կուրապաղատության պատիվ տալ: Իսկ նա, կայսրից պատիվ ստանալով, առավ իր զորքը և գնաց Տայոց աշխարհը, մտավ Թուխարք կոչված ամրոցը և զգուշանում էր Իսմայելի որդիներից:

Այդ ժամանակ դարձյալ ավարառու թշնամին մի այլ հարձակում գործեց Վասպուրական նահանգի կողմերում գտնվող [հայոց] զորքի դեմ. և գալով իրար հանդիպեցին Ոշտունյաց գավառի Գուկանք կոչված գյուղում: Այստեղ նրանք իրար բախվեցին: Երբ տեսան, որ նրանք (հայերը) սակավաթիվ են, սաստկապես հարձակվեցին նրանց վրա, սակայն ողորմածն Աստված այս անգամ ևս զթալով՝ անմիջապես նրանց թիկունք դարձավ, օգնության հասավ: [Հայերը] ամենքին սրի քաշեցին: Բայց միայն երկու հարյուր ութսուն մարդ, փախուստի դիմելով, ընկավ եկեղեցի: Եվ որովհետև [հայերը] չկարողացան որևէ այլ միջոց գտնել, խորհեցին սրբբարանը հրկիզել, սակայն Վասպուրականի իշխան Սմբատը, Աշոտ իշխանի որդին, չթողեց այդ բանն անել, թույլ չտվեց այդ ապիրատությունը գործել: Նա ասում էր. «Քավ լիցի, որ ձեռք տանք Տիրոջ փառքի բնակարանին, որը նման հաղթություն պարգևեց մեզ»: Եվ պահապաններ կարգեցին նրան հսկելու, մինչև որ ինքը՝ սրբբարանը, նրանց ատիպի իրենից դուրս գալ: Քիչ անց Իսմայելի զորականներից մեկը, որ նրանց գլխավորն էր, հաշտություն խնդրեց իր անձի համար, որպեսզի չսպանվի: Դիմեց հայոց զորքին՝ ասելով. «Լսել ենք, որ քրիստոնյաների ազգը ողորմած է, երբ մեկին տեսնում է վշտի մեջ, դթում է և ողորմում: Արդ, ողորմեցեք մեզ և մեր անձերը մեզ պարգևեցեք, իսկ մեր ինչքը ավարի մատնեք»: Պատասխան տվեց Սմբատ զորավարը և ասաց. «Մենք սովորել ենք Տիրոջից, թե ողորմությունը ողորմածներին է արժանի ցույց տալ, իսկ դուք անողորմ ազգ եք ու արժանի չեք ողորմածության, և ոչ էլ մենք այդ բանը կանենք»: Երբ իսմայելացին այս խոսքը լսեց, ասաց. «Արդ, գոնե իմ անձը խնայեցեք և մի սպանեք, իսկ մնացածներին ձեր ձեռքը կհանձնեմ»: Նրանք հանձն առան չսպանել նրան, իսկ նա ներս մտավ և ասաց. «Օգուտ չկա մեր այստեղ մնալուց, քանզի տեսնում եմ, որ անողորմ են մեր նկատմամբ: Արդ, դուրս ելնենք նրանց մոտ: Եթե սպանեն մեզ, կմեռնենք, քանզի մեր օրենսդիր Մահմետը մեզ դրախտն է խոստացել, իսկ եթե խնայեն՝ կապրենք»:

Այս խոսքերից քաջալերվելով՝ նրանք ամենքը դուրս ելան և անմիջապես սրի բերան ընկան: Իսկ այն մարդուն, որին խոստացել էին չսպանել, կենդանի ուղարկեցին ծովի խորքը, իսկ իրենք, առնելով սպանվածներից հավաքված ավարն, իրենց միջև բաժանեցին և տարբեր տեղեր սփռվեցին:

www.a-pdf.com

Այդ ժամանակներում զորավար Մահմետի սիրտը գարձյալ պրպտվեց ճենաց աշխարհի վրա, և նա մեծ զորք խնդրեց Իսմայելի իշխանից՝ խոստանալով նրան ճենաց արքային հնազանդ ծառայության բերել։

Սա (խալիֆան) բազում զորք հավաքեց և տվեց նրա ձեռքը՝ մոտավորապես 200000։ Մահմետը Դամասկոսի կողմերից զորքերի բազմությամբ շարժվեց արևելքի կողմը, անցավ Ասորեստանը, Պարսից աշխարհը, Խորասանը ու դնալով հասավ ճենաց աշխարհի մի մասը, և բանակ դրեց Բոտիս կոչված հզորագույն գետի ափին։ Հրովարտակ գրեց ճենաց արքային. «Ինչո՞ւ,— ասում է,—միայն դու ես, որ ընդվզելով չես մտնում մեր իշխանի հնազանդության տակ, մինչդեռ բոլոր ազգերը մեզանից սարսափեցին։ Դու ո՞ւմ ապավինելով մեզ չես հնազանդվում, չլինի՞ թե մեզ քո աղջիկների տեղ ես դրել, որոնց մեջ պճնված հոխորտում ես։ Արդ, եթե մեր ծառայության տակ չմտնես, դիտցիր, որ քո երկիրը անապատ կդարձնեմ [զրկելով] բնակիչներից և քո թագավորությանը վերջ կտամ։ Բայց չլինի՞ թե անհոդաբար հապաղես իմ նամակին պատասխանել, այլ արագ ուղարկիր այն»։

Երբ ճենաց Ճենբակուր կոչված արքան նամակը կարդաց, իր մոտ կանչեց բոլոր փշտիպաններին և համհարզներին՝ խորհելու, թե ի՞նչ պատասխան տա։ Խորհրդակցելով միմյանց հետ՝ նրանք հետևյալ պատասխանն են գրում.

«Արդյոք դու ավելի՞ հզոր ես, քան բոլոր թագավորները, որոնք սկզբներից մինչև օրս տիրել են աշխարհին։ Բաբելացիների թագավորը, որ տիեզերքին տիրեց, և մակեդոնացիների ու պարսից [թագավորները] ինչպե՞ս չկարողացան տիրել մեր երկրին։ Գիտցիր, որ դու ավելի լիրբ ես, քան որևէ շուն, և քո ոռնոցը խենթություն է սիրում, որի հետևանքով քո չար ցանկությունը և իմ դեղեցիկ կույսերի համբավը քեզ հարկադրեց քո անձը և քեզ հետ եկած զորքերի անձերը զոհել. կարծես թե ձեր անձերի համար դերեզմաններ չկան Դամասկոսում։ Արդ, գիտցիր, որ մեր երկիրը ոչ ոքի հպատակ չի եղել, և ես ևս այդ բանը չեմ ընդունի։ Բայց եթե ինձանից ընծա ես խնդրում, ըստ թագավորական օրենքի, կտամ քեզ, և խաղաղությամբ կերթաս քո երկիրը»։

Իսկ Մահմետը դարձյալ լուր ուղարկեց Ճենբակուրին. «Տուր ինձ,— ասում է,— 30 000 աղջիկներ, և ես խաղաղությամբ կհեռանամ քեզանից, ապա թե ոչ, պատերազմով կելնեմ քո դեմ»։ Համաձայնեց ճենաց արքան ուղարկված պատգամին և Մահմետին լուր ուղարկեց, ասելով. «Մնա քո բանակում, մինչև կատարեմ քո պահանջը»։ Նա անմիջապես հրամայեց իր զորքերին դիպակով ծածկված սայլեր կազմել և իր ընտիր հեծյալներին, կուռ սպառազինությամբ, սայլերի վրա բառնալ աղջիկների փոխարեն, որ խնդրել էր, որպեսզի կարողանա նրանց որսալ իր որոգայթի մեջ։ Գալով գետի եզերքը՝ նրանց դիմաց բանակեցին։ Սայլերի վրա կային ավելի քան 40 000 հեծյալներ։ Ինքը՝ Ճենբակուրը, սակավաթիվ մարդկանցով բանակ գրեց նրանցից հեռու մի քանի ասպարեզ այն կողմ։ Նա լուր ուղարկեց Մահմետ զորավարին, թե՝ «Եկ [վերցրու] այն, որ ինձանից խնդրեցիր՝ 30 000 աղջիկները, որոնց ես ընտրեցի իմ ամբողջ իշխանությունից քո պատվականների համար։ Արդ, վերցրու քո զորքի պատվականներից ըստ իմ աղջիկների թվի, անցիր գետի այս կողմը և ես կտամ իմ աղջիկներին վիճակ գցե-

www.a-pdf.com

լով, ում ինչ որ հասնի, որպեսզի խռովություն չլինի քո զորքերի մեջ»։ Նա նավեր ուղարկել տվեց դեպի այն կողմը, որպեսզի միանգամից բոլորն անցնեն նրա կողմը։ Իսկ նրանք, միամիտ գտնվելով, զորքերի պատվականներից 30 000 մարդ ընտրեցին և անցկացրին դեպի մյուս կողմը։ Հենց որ անցումը վերջացավ, ճենաց արքան հրաման տվեց հարձակվելու Իսմայելի զորքի վրա։

Երբ պատերազմում իրար բախվեցին, անմիջապես դուրս եկան ծածկույթների տակ թաքնվածները և շրջապատելով՝ սրով կոտորեցին, այնպես որ նրանցից ոչ ոք չազատվեց՝ նույնիսկ փախուստի դիմելով։ Նավերի լարերը կտրեցին, որպեսզի նրանցից ոչ ոք չփրկվի, և ոչ ոք չապրեց։ Միայն Մահմետը, սակավ մարդկանցով, երիվարները հեծնելով՝ դեպի անցան, ապաստանելով իրենց երիվարների ուժին։ Այսպես կորագլուխ ճենաց արքայի կողմից խայտառակված, գնացին իրենց երկիրը և այլևս չհամարձակվեցին պատերազմի դուրս գալ ճենաց աշխարհի դեմ։

Իսկ [Իսմայելի իշխանը] 10 տարի և 8 ամիս ապրելով՝ վախճանվեց։

www.a-pdf.com

ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ

(Թ–Ժ ԴԱՐԵՐ)

ԱՐՏՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Է

ԽՈՒԹԻ ԼԵՌՆՑԻՆԵՐԻՑ ՀՈՎՍԵՓԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ: ՆՐԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երբ ձմեռը կես եղավ, օդը ծանրացավ, դարձավ միգախառն ու մրրկալից: Թանձր ձյունը հարթ ու հավասար դիզվեց լեռան ստորոտներում, որտեղ կառուցված էր Տարոնի [Մուշ] քաղաքը: Այդտեղ որջացել էր արաբների զորապետը, նման ծերացած արջերի, որոնք ձմեռ ժամանակ սնվում են արմտիքներով և, ընկնելով կենաց ու մահվան մեջ, մտնում իրենց որջերը: Իսկ երբ փչում է հարավային մեղմ քամին, սփռում երկրի վրա իր ջերմության զորությունը, զվարթացնում է հողի տակ մնալուց և հյուսիսային սառնաշունչ օդից ընդարմացած արմատներն ու բույսերը: Գարնանը՝ դիշերահավասարին, իրենց բները մտած գազանները, թռչունները, երբ զգում են օդի ջերմությունը, ամեն մեկը դուրս է գալիս իր բնակության կայանից: Եվ շատերը դրանից հետո իսկույն սատկում են, իսկ մի մասը դյուրությամբ բռնվում է որսորդներից: Կենդանի մնացածները սաստիկ վնասներ են հասցնում, ում որ հանդիպեն, թե՛ մարդկանց և թե՛ ուրիշ կենդանիների: Նույն ձևով այդ մարդը՝ արաբների զորապետ Հովսեփն սպասում էր ձմեռվա անցնելուն, որպեսզի սրաժուժությամբ, գերեվարությամբ, մեծ-մեծ հարվածներով հարձակվի Հայոց երկրի վրա, և երկրի մեծամեծներին գերության տանի, երկրում նշանակի գործավարներ, որոնք իրենց հրամաններով հարինելու էին երկրի կարգերը և իրենց ընտանիքներով հանգերձ նստելու էին Հայաստանի ամրոցներում:

Այն ժամանակ լեռան բնակիչները, տեսնելով, որ իշխանին տարան ի գերություն, հասկացան, որ իրենց ևս սպասում են նույն փորձությունները, ինչ կրեցին դաշտեցիները: Միակամ բազմությամբ եկան Խութի մեկնազեններն արվեստագիտության իրենց ղինամիջոցներով, որ հնարել էին ձմեռային ինքնապաշտպանության պետքերի համար, վերցրած նաև իրենց նիզակները, որ միշտ կրում էին, ի զգուշություն անտառներում որջացած գազանների կամ իրենց վրա հարձակվող թշնամիների, հարձակվեցին [Մուշ] քաղաքի վրա, պաշարեցին այն, զորքը մատնեցին սրի, բանտից հանեցին Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և իրենց մեջ բաժանեցին թշնամիների կողոպտածը:

Բայց ինքը՝ կարծեցյալ մարզպանը փախավ ընկավ բարձրակառույց եկեղեցին, որ հանուն մեր Փրկչի, մեծ ծախսով՝ 300 հազար [դահեկանով] կառուցել էր Բագարատ իշխանը: Եվ այնտեղ՝ դմբեթի մեջ թաքնվելով, սարսափից դողահար, տեղավորվել էր [Հովսեփը]: Մեկնազենները շրջա-

www.a-pdf.com

պատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը և ինչ-որ մեկը աշտեով հարվածեց [Հովսեփի] թիկունքի մեջտեղին և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով։ Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես։

Ես իմ աչքով տեսել եմ այն մարդուն, ով հարվածել էր [Հովսեփին], որի մասին ստուգությամբ տեղեկացա նրանից։

Գուժկանը փութապես հասավ թագավորի մոտ և [գուժեց], թե՝ սպանվել է քո զորապետը, և Հայոց երկիրն ապստամբել է քո պետության դեմ։

Այստեղ մի փոքր ցույց կտամ լեռան բնակիչների որպիսությունը՝ թե ինչպիսիք են և կամ ովքեր են, ինչպես են նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով ձեռք բերում իրենց ապրուստը և բավարարում իրենց աննդի պետքերը։ Նրանք բնակվում են խոր ձորերում, լեռների փապարներում, անտառների թավուտներում և լեռների դագաթներին։ Ապրում են առանձին, ազգատոհմերով և այնչափ հեռու են միմյանցից, որ եթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավի, նրա ձայնի բոմբյունը հազիվ կարող է որևէ տեղ լսվել և տպավորություն է թողնում, թե արձագանք է ժայռերի միջից։ Նրանց կեսը խոտորել է հայրենի բնական լեզվից՝ հեռաբնակ լինելու պատճառով։ Միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր և օտարոտի լեզվով։ Եվ միմյանց հանդիպելիս այնքան խրթնախոս են ու անծանոթ, որ մինչևիսկ կարիք ունեն թարգմանների։ Կերակրի պետքերի համար գործ են ածում ինչ-որ սերմեր, առավելապես կորեկ կոչվող բույսը, որ սովի ժամանակ ոմանք անվանում են հաց։ Այդ սերմերը նրանք ոտքերով՝ անտառների բացատներում կամ ցանում են երկմատանի փայտատներով։ Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում են բրդյա շորեր. ոտնամաններ պատրաստում են կոշիկների ձևով՝ այծերի մորթուց։ Ամառ թե ձմեռ բավարարվում են միևնույն սնունդով և միևնույն հագուստով։ Լեռներում բնակվող գազաններից պաշտպանվելու համար ունեն աշտե զենքը, որ կրում են մշտապես։

Երբ թշնամիները հարձակվում են իրենց երկրի վրա, լեռնականները միաբան գալիս են իրենց իշխաններին օգնության, քանզի տիրասեր են։ Երկնքից վար թափվող անկայուն ձյան վրա մանդալու համար պատրաստել են փայտի կտորներ, որ օղակի պես չվանով ամրացնում են ոտքերի շուրջը և դյուրությամբ ընթանում ձյան, ինչպես գետնի վրայով։ Գազանաբարո էին և արյունարբու, առ ոչինչ են համարում հարազատ եղբայրների, նույնպես և իրենց սպանությունը. Սրանք կոչվում են արագագնաց մեկնազեններ, բնակվում են այն լեռան վրա, որն Աղձնիքը բաժանում է Տարոնից։ Խրթին, անհասկանալի խոսակցության ու բարքերի պատճառով անվանվում են Խութ։ Իրենց անունով լեռն էլ է Խութ անվանվում։ Անդիր գիտեն Հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որ մշտապես ունեն շուրթերին։ Սրանք ասորեստանցի ռամիկներն են, որ գաղթեցին Ադրամելեքից և Սանասարից՝ Ասորեստանի և Նինվեի թագավոր Սեննեքերիմի որդիներից հետո և նրանց անունով իրենց անվանեցին Սանասանայք։ Հյուրասեր են, օտարընկալ և պատիվ տվող։

www.a-pdf.com

Ա

ԱՄԲՈՂՋ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾԻ ՄԱՍԻՆ. ԻՇԽԱՆՆԵՐԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՐԱՆՑ ՊԱՏԱՀԱԾԸ

Մինչև այստեղ չէինք վախենում պատմել ճշմարտության թշնամիներից մեզ հասած վտանգների ու նեղությունների մասին, որովհետև թեպետ պես-պես կտտանքներով նեղվեցինք ու չարչարվեցինք իսմայելական ազգի արաբական տերության զորքից, բայց քիչ չափով և կարճատև ժամանակ։ Եվ ավելի հաճախ մեզնից էին հարվածներ ստանում, քան՝ մենք նրանցից, քանզի դեռ միաբան, միակամ և համերաշխ էին ապրում հայոց իշխաններն, իրենց ազատազորքի բազմությամբ հանդերձ, թեպետև ծածուկ նենգ կասկածների մեջ էին։ Իսկ երբ միաբանության մեջ սպրդեց երկպառակությունը, հեռացավ գնաց աստվածատուր զորության շնորհը։ Ահ ոչինչ էին համարվում աստվածային խորհուրդները՝ մարտերում ու երկրի հոգաբարձության այլ կարգի գործերում։ Նույն կերպ, եթե մեկը մարմինը բաժանի մասերի, մարդկային կենդանի սեռը չի երևա այնպես, ինչպիսին է նրա կազմվածքի գոյացությունը։ Իսկ եթե կորցնի անդամներից մեկը, կխեղանդամվի, բայց կմնա կենդանի։ Այսպես տակավին մեծ չափերով քայքայված էր մեր երկրի միաբանությունը, և յուրաքանչյուր ոք՝ ընկերը ընկերոջ, եղբայրը եղբոր նկատմամբ խոկում էր չարամտություն։ Միմյանցից ծածուկ թագավորին ուղարկում էին թղթեր ու դեսպաններ, միմյանց դավում էին քսությամբ։ Չկար գեթ մեկը, որ համերաշխ լիներ մեկ ուրիշի հետ։ Իսկ թշնամիները հույժ ուրախ էին նրանց անմիաբանությունից։ Իրենց գրածների մեջ ավելի շատ էր այն, ինչ չէին կատարել հայերը։ Եվ ապրստամբության ողջ մեղքը, հասցրած վնասները բարդում էին Աշոտի վրա։ Սրանց մասին էր Փրկիչի ասածը՝ «Ամեն թագավորություն իր դեմ բաժանված՝ կավերվի, և ամեն քաղաք կամ տուն իր դեմ բաժանված չի կարող մնալ»։ Պատշաճում է նաև առյուծի ու եղնեքի անձնավարման վերաբերյալ Օլիմպիան իմաստասերի հին առակը, ինչին տեղյակ են ուսումնասեր անձինք։

Նույն ժամանակ թագավորը, իր տերության մեծամեծներով հանդերձ, դարձյալ նստեց խորհրդի, որպեսզի քննի և անսխալ ըմբռնի Հայոց աշխարհում կատարվածը։ Բազում և ճիշտ խորհուրդներից որինկզիտոսները հաստատապես ընտրեցին միայն այս մեկը, և ասացին թագավորին. «Զորք գումարիր, գնդեր կազմիր, և շարժվիր դեպի Հայոց երկիրը։ Քո իշխանության տակ գտնվող բոլոր ազգերից քեզ մոտ հավաքիր ընտիր այրուձի և անցկացրու գետից անդին։ Երբ վրա հասնես հայերին, ամենից առաջ կգերես Աշոտին, կբերես այստեղ, և բոլոր մյուսները դյուրությամբ կմտնեն քո իշխանության տակ, և ամենքին առանց երկբայության, կհնազանդեցնես քեզ։ Չպետք է ջանանք վրեժ առնել հարկերի, զինվորության և ուրիշ ծառայության խափանման կամ ի վնաս թագավորի կռվելու համար, այլ գերվածներին կստիպենք հեռանալ քրիստոնեական հավատից և պաշտել մեր մարգարեի ու

www.a-pdf.com

օրենսդրի կրոնը, և դյուրությամբ կկատարվեն մեր բոլոր մտադրություններ։ Նրանց կխոշտանգես ծեծով, բանտով ու պես-պես տանջանքներով։ Սպառնալիքներով, ողոքմամբ, հարստության խոստումով նրանց կենթարկենք մեր թագավորությանը, և քրիստոնեության անունը կվերանա նրանց միջից»։ Այս խորհուրդը հույժ դուր եկավ թագավորին, և նա մեծապես ուրախացավ։

Այստեղ լացը, ողբն ու կոծը ոչ միայն մեկ տոհմի կամ աշխարհի համար է, այլ Հայաստանի բոլոր ազգատոհմերի ու աշխարհների։ Որ և շարունակելով թեպետև ոչ հաճությամբ, կպատմեմ կարգով։ Բայց ակամա և առհարկի [կխոսեմ] այն անօրինություններուն մասին, որ գործեցինք մենք առհասարակ, մեծից մինչև փոքրը, որի պատճառով մեզ վրա բացվեց Աստծո սաստող բարկության դուռը, վրա հասան վրիժահատույց պատիժները։ Ինչպես գրված է Երեմիայի մարգարեության մեջ, «Տերը բացեց իր ինարանը և հանեց այնտեղից իր բարկության զենքերը», որոնք պահել էր վրեժի հատուցման օրվա համար, հատուցելու մեզ ըստ մեր գործերի, խփելու մեր ոտքը քարին։ Կորստյան օրը եկավ հասավ մեր դռանը, որովհետև Տերն ահա,— ինչպես գրել է Մովսեսը,— պատրաստեց հասցրեց այն մեզ վրա։ Բայց այս բոլորից վատթար է այն դռան բացվելը, որ եղել է աներևութաբար. հոգիների կորստյան դուռն առավել է, քան՝ մարմինների, երբ խոտորվում են Հոր, Որդու և սուրբ Հոգու անբիծ, ուղիղ և առաքելաքարոզ հավատից։ Որովհետև մարդկային կարողության համար անհնար է դոցել կորըստյան համար բացված դուռը։ Սա հույժ պատշաճում է միայն կարող և ամենքին հոգածու Աստծո զորությանը։ Ինչպես գրված է. «Կփակի, և ոչ ոք չի լինի, որ բացի, կբացի, և ոչ ոք չի լինի, որ փակի»։

Այնժամ թագավորն արձակեց հրովարտակներ և ուղարկեց արագագնաց սուրհանդակներ իր տերության բոլոր կողմերը՝ Ասորեստանի և Բաբելոնի, Թուրքաստանի և Խուժաստանի, մարերի, ելիմացիների ու եգիպտացիների հեռաբնակ վայրերը, Արաբիայի ներքին կողմերը, մինչև Սակաստանի սահմանները, այդ երկրների զորքերին ու զորագլուխներին, նահանգապետներին, քաղաքագլուխներին, հազարապետներին, կուսակալներին ու մեծամեծներին ժամանակ սահմանեց՝ փութով ներկայանալ թագավորաբնակ քաղաքը։ Եվ ամենքը թագավորի հրամանով բոլոր կողմերից գումարեցին այրուձի՝ սպառազեն այլ հորինվածքով հանդերձ և անհապաղ, արագությամբ եկան ժամադրված տեղը։

Երբ զորապետները եկան թագավորի մոտ, սա սկսեց խոսել, ասելով. «Մեր նախնյաց թագավորության սկզբից, երբ Աստված բազում թագավորների գահը տվեց նրանց ձեռքը, մինչև մեր օրերը ոչ ոք ի զորու չեղավ դիմակայել մեզ, ո՛չ հեռավոր և ո՛չ էլ մերձավոր երկրներից։ Ոչ ոք այչափ աղետներ ու տառապանքներ չհասցրեց մեզ, մեր ազգին, զորքերին ու զորապետներին, որչափ Վասպուրականի Աշոտ իշխանը։ Ուրեմն արիացե՛ք, եղեք տղամարդ և ելեք Հայոց երկրի վրա, [մատնեցեք] սովի, սրածության և գերության։ Իշխաններին, կուսակալ իշխաններին, ազատներին ու ազատորդիներին կապանքների մեջ դրած, փութով կբերեք մեզ մոտ, և իսկույն դուք կբնակվեք նրանց երկրում, որն ի ժառանգություն կտրվի ձեզ և ձեռ որդիներին։ Բայց նախ Աշոտին և նրա ազգատոհմին կբերեք այստեղ, ուրիշ ոչ ոքի նրանից առաջ մի ջանացեք բռնել»։

Եվ իր մոտ եկած ամեն մի զորագլխի ընծայեց պարգևներ ու պատիվներ, հատատեց ու տվեց գյուղեր, ավաններ։ [Արքունի] դիվանից պա-

www.a-pdf.com

հանջեց [պարզել] զորքերի քանակը, ինչը փնտրեցին և գտան։ Տեղեկացավ նաև ամեն մի զորագնդի հմուտ ու կարավի պատերազմողների մասին, յուրաքանչյուրն ըստ անվան, նույնպես և թե քանիսն են լավ սպառազինված. քանիսն են նրանցից հետևակ վահանավորներ, նիզակավորներ ու աղեղնավորներ, և քանի զորապետներ ունի բանակը, և կամ քանիսն են առաջամարտիկ մեկնազեն զինվորներ, քանիսն ըմբշամարտիկ և քանի զորագլուխներ, և սուրհանդակների քանի զորապետեր կան։ Պահանջեց տեղեկացնել, նաև թե քանի դրոշներ կան, և կամ քանի նշաններ, զորքը քանի մասերի է բաժանվելու, քանի փող են փչելու կամ քանի թմբուկ են զարկելու։

Երբ ստուգեց և տեղեկացավ ամեն ինչ, իմացավ, որ բոլորից մեծաթիվն են ելիմացիներն ու արաբները, որոնք երկու ձեռքով էլ աջողակ և մազից անգամ չվրիպող կապարճակիրներ ու կորովի նետաձիգներ են, ինչպես մի ժամանակ Իսրայելի զորավոր այրերն էին՝ Եփրեմի ու Բենիամինի տոհմի զորագնդերը։ Նրանց զորագլուխ կարգեց Բուղա անունով, ազգությամբ թուրք մի մարդու։ Իր առջևի բազմությանը հրամայաբար պատվիրեց անսալ նրա խրատներին ու հրամաններին։ Սա արաբների ամբողջ տերության գլխավոր հրամանատարն էր, և ոչ ոք, մեծից մինչև փոքրը, չէր համարձակվում ընդդիմանալ նրան։ Նույնիսկ ինքը՝ թագավորը հնազանդվում էր նրա հրամանին։ Նա ապիրատ էր, համակված սատանայական հնարներով, չար դիտավորություններով, սաստիկ հոխորտում էր և վիշապի պես գոռալով՝ ահաբեկում հետևավորներին ու մերձավորներին։

Նույն ժամանակ թագավորի մոտից մեկնեց այդ մարդը՝ Բուղան, որի ներսում որջացել էր սատանան իր զորությամբ, և որի բաղձանքն ու ախորժելի զբաղմունքն էր անմեղ մարդկանց միսն ու արյունը, ինչով պետք է հագեցներ իր անչափ գազանաբարո կատաղությունը։

Ինձ թվում է սրա մասին է Ամբակում մարգարեի ասածը. «Տեսեք, արհամարհողներ և զարմացեք ու ապականվեք, որովհետև ձեր օրերում մի այնպիսի գործ եմ կատարելու, որին չեք հավատալու, եթե մեկը պատմի ձեզ։ Քանզի ահա ես ձեր դեմ եմ հարուցելու այն դաոն ու արագագնաց ժողովրդին, որը դիմում է երկրի լայնություններ՝ ժառանգելու բնակարանները, որ իրենը չեն։ Նա ահեղ է ու երևելի։ Ով նրա դատաստանն ու վճիռը իրենից պիտի լինի։ Նրանց ձիերն արագավազ են, քան ինձերը և Արաբիայի գայլերը։ Ով կգան, ինչպես արծիվները կերի վրա։ Անօրենների վախճանը կհասնի նրանց դիմադարձողներից։ Ավազի չափ հավաքելու է գերիներ, ծաղրելու է թագավորների, և իշխանները կգառնան նրա խաղալիքները, նա պիտի ծիծաղի բոլոր ամրոցների վրա»։

Բ

ՄՈԿԱՑ ԻՇԽԱՆ ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

Այն ժամանակ Բուղան եկավ մտավ հլաթ քաղաքը, ճանապարհվեց դեպի Ապահունիքի կողմերը։ Զորքը բաժանեց երկու մասի և հրաման տվեց մտնել վասպուրական երկիրը, հեղեղել, գերել, թալանել, ավերել ու բնաջինջ անել, սրածել, բազմամարդ գյուղերի ու ավանների տղամարդկանց աչքն չացնել, մնացածներին՝ կանանց մանուկներով հանդերձ վարել գերության։

www.a-pdf.com

Իսկ իշխան Աշոտին կապանքներով տանել թագավորի մոտ, որպեսզի վրեժով հատուցի իր արարքների և արաբացոց տերության դեմ ապստամբելու համար։ Այնուհետև զորքի մի մասը տվեց Ժիրաք անունով ինչ-որ զորապետի ձեռքը և հղեց նրան Ռշտունիքի կողմը։ Իսկ զորքի մնացած բազմությունը վերցրեց իր հետ և գնաց դեպի Ապահունիքի կողմերը։ Առյուծների կամ նրանց նման ուրիշ [կենդանիների] որսորդների պես [Աշոտի] շուրջ ձգեցին արգելաններ, որպեսզի շրջափակեն կորովի և քաջ տղամարդուն՝ իշխան Աշոտին։ Կասկածում էին, թե միգուցե ճողոպրի իրենց ձեռքերից կամ գիշերով հանկարծակի հարձակվի իրենց վրա և գործի մեծամեծ ոճիրներ։ Բայց քանի որ բաց էին Հողցի դռները, Ժիրաքը փութապես եկավ հասավ Ռշտունյաց գավառ և զորքն առաջ շարժեց Առվանից ձորը, Մոկաց կողմերը։ Այնտեղ գտան Ռշտունիքի բնակիչներին, որոնք թափառական՝ ընկան անողորմ, արյունարբու և գիշակեր շների ձեռքը։ Նրանց սրակոտոր արեցին և արյամբ լցրեցին երկիրը։ Կեսին գերի վերցրեցին և տարան իրենց հետ, հրդեհեցին շեներն, ավաններն ու ագարակները, թափուր դարձրեցին մարդկանցից և անասուններից։ Իսկ Ռշտունիքի Նորագեղջ ավանի մի ռամիկի վերցրեցին բերեցին Ռշտունյաց Ոստանի վաճառատեղը, չվանն անցկացրեցին պարանոցը և սրի քաշեցին, ապա այնտեղից գնացին Ածանա ձոր, փախստականներին որոնելու համար։ Հասան ետևներից և սրի քաշեցին կամ գերի տարան նրանցից շատերին։

Բայց սուրհանդակների գլխավորներից ինչ-որ երկու եղբայրներ հասան ձորի կածանին, վահանները դրեցին թիկունքներին, ձեռքներին բռնեցին նիզակները, կապարճներում՝ նետեր և դիմահարեցին [թշնամի] զորքին։ Աստծո օգնությունը հասավ նրանց, և պարտության մատնեցին այլազգիներին. վիրավորեցին շատերին, գերիների բազմությանն ազատեցին գնալու երկրի ամրոցները։ Սրանցից մեկի անունն է հայտնի։ [Նա] սպանվեց սրով։ «Եղբայրը եղբորը կօգնի, ինչպես ամուր և անառիկ քաղաքը»։ Եվ ըստ Եսայիի՝ «Մեկի խոսքով կկորչեն հազարներ, և հնգի խոսքերով շատերը կփախչեն»։ Շապուհ անունով մի երեց և ձորի ռամիկներից ինչ-որ մեկը մտան զորագնդի մեջ։ Սրանց օգնության հասավ նաև մի հովիվ։ Պարսատիկներով քարեր էին նետում [թշնամիների] վրա։ Մարտի դաշտում շատերն առաքինացան մեծ ուժով ու քաջությամբ, Նրանց հիշատակը նպաստ կլինի շատերի մեջ քաջություն հարուցանելու համար և անարիներին կտան զորություն, կխրախուսի քաջ առաջամարտիկներին։

Այդ ժամանակ կալանվեց հայ ազատներից մեկը՝ Ապուսահակը Վահեվունյաց տոհմից. նա Նախճավան ոստանի և Մարդպետականի եպիսկոպոս Սահակի եղբայրն էր։ Մարմնով ծերացել էր, արտաքինապես ալևոր էր, բայց ներքինը նորոգ էր ու գեղեցկատեսիլ՝ նման արարչի պատկերին։ Տեղյակ էր ու հմուտ աստվածաշունչ գրքերին։ Նստում էր նեղ ու ցածր ճանապարհին, որը տանում էր դեպի վերին մայրաքաղաք Սիոնը, երկնային զորքի բանակատեղը և Քրիստոսի թագավորության արքայանիստը։ Սրան բերեցին Ժիրաք զորապետի առջև,՝ որը տեսավ նրա վայելուչ ու բարձր հասակը, դեմքի պատշաճ գեղեցկությունն ու արուսյակի նման փայլփլող դույնը՝ սպիտակափայլ ու պատկառելի մազերով։ Նա դուր եկավ զորապետին, որն սկսեց դեպի նրան մղել ժահահոտ, հիմարեցուցիչ ու մաղձախառն թույները, որպեսզի թերևս կարողանա գցել երանելիին մահածին հնազանդության պղտոր ու խաբեպատիր աղտեղության մեջ։ Մահացու զորությամբ թունավոր շնա-

www.a-pdf.com

խաղողի հյութով ծածկված նետերը կապարճից [հանելով], նետից սրբի դեմ, [հուսալով], թե միգուցե փոքր-ինչ սասանի նրա ապաստանի միջոցը՝ հաստատուն վեմը, կարողանա գաղտնի մոլորեցնել սրբի հոգին, որը զրահված էր վերուստ եկած սուրհ Հոգով։ Որպես սուսեր, մեջքին կապել էր Տիրոջ պատգամը, որն ասում է. «Երբ ձեզ մատնեն, մի հոգացեք, թե ինչպես կամ ինչ պիտի խոսեք, քանզի ես ձեզ կտամ բերան և իմաստություն, որին ձեր բոլոր հակառակորդները չեն կարող հակառակ կանգնել կամ պատասխան տալ»։

Բռնավորն սկսեց բարբառել ողոքական խոսքերով, հրամայեց առաջը բերել մեծամեծ պարգևներ ու պատիվներ, խոստացավ դարձնել արքունի մեծաթիվ պալատականների մեջ շքեղ ու երևելի և թագավորի մոտ գլխավոր իշխաններից մեկը ու բարձակից՝ թագավորի մեծամեծներին՝ այնտեղի գլխավոր բարձավորներին, երբ հարդարվի արքունի ատյանը։ «Միայն թե,— ասում է,— հեռացիր Քրիստոսի հավատից, հնազանդվիր մեծ թագավորին, ընդունիր կենաց և գովության արժանի հավատը, հնազանդվիր մեծ արքային և մեզ իշխող, նրա հրամանակատար թագավորին»։

Իսկ սուրբը զինավառվեց Սուրբ Հոգով և հիշեց Փրկչի ասածը. «Մի երկնչեք նրանցից, որ սպանում են մարմինը և չեն կարողանում սպանել հոգին»։ Եվ որ՝ «Ցոթ չահով ճրագը չեն վառի և դնի դիվանի տակ, այլ կդնեն առաքելական եկեղեցու բարձրաբերձ աշտանակին, որպեսզի տեսնեն ու փառավորեն երկնավոր Հորը»։ Նա իր բերանը բացում էր Աստծո խոսքով և այն ժամանակ զեղեցիկ, անպաճուճ ու համառոտակի մեկ առ մեկ, կարգով հաստատում, ցույց էր տալիս հավատն ի Քրիստոս, և ինչ որ նրանից կան, պահվում են, որպես պարգևներ՝ ճշմարիտ հավատին մնացողների և տանջանք՝ ուրացողների ու ետ կենողների համար։ Մեծ պարսավանքով ստորադասում էր նրանց թագավորին ու մոլար օրենսդրին՝ Մուհամմեդին։ Բայց որովհետև մեզանից ոչ ոք այն ժամանակ չհանդիպեց երանելիին՝ պատասխան տալիս, ուստի հարմար չհամարեցինք գրելու։

Երբ բռնավորը տեսավ [Ապուսահակի] անդառնալի մտադրությունը, հավատի աներկբայությունը, աներկյուղ ու հանդուգն պատասխանները և մեծ անարգանքը, որ հասցրեց իրեն ու իրենց օրենսդրին, որովհետև [սուրբը] տեղյակ էր նրանց մոլար վարդապետությանը, հույժ բարկացավ և հրամայեց փուքսվ վերջ տալ նրա կյանքին։

Իսկ սուրբը, դահիճներով հանդերձ, դուրս գալով երկնային նահատակության կատարման ասպարեզ, ծնրադիր աղոթում էր, որպեսզի կարողանա անսայթաք հավատով հաղթել բանսարկուի հնաբնները, թե ծածուկ և թե հայտնի պատերազմում։ Եվ նա ասաց. «Իրավունքի և արդարության արարիչ...»։ Ապա ձեռքերը բարձրացրեց դեպի երկինք, պարանոցը բռնեց դահիճների առաջ։ Ինչ-որ մեկը վերցրեց սուրը, հարվածեց երանելուն և հատեց նրա գլուխը։ Եվ այսպես նահատակվեց երանելի Ապուսահակը։ Սա առաջինը գտավ մարտիրոսության պտուղը բոլոր հայաստանցիներիս վրա հասած մեծ վտանգի ու նեղության ժամանակ։ Այս պատմեց մեզ Արտամետ ավանի մեծ քահանա Սամուելը։ Նա լսել էր ինչ-որ պարսիկից, որը Շատվանի ձորից էր և դահիճների հետ, սրբի վկայության սկզբից մինչև նահատակվելը եղել էր այնտեղ։ Նա մոտապահել էր սաղմոսը, որը ասել էր երանելին։ Այս մասին գիտեն նաև Ռշտունյաց գավառի բնակիչները, որովհետև նրանցից շատերը դեռևս կենդանի են։

www.a-pdf.com

Սրանից հետո Ժիրաքը գնաց այնտեղից, ապա եկավ մտավ Վանտոսպ և անցնելիս հրկիզեց Արտամետ ավանի մեծ եկեղեցին։

Իսկ ինքը՝ Բուղան շարժվեց իշխանի ետևից։ Նրա հետ էին նաև Հայաստանի արաբները, որ բնակվում էին մեր աշխարհի այլևայլ կողմերում և առաջնորդում էին Բուղային՝ մեր երկրում ել ու մուտ անելիս։

Աշոտ իշխանը կամաց-կամաց առանձնացավ ընտանյոք և իր ազատներից ոմանց՝ Մուշեղ Վահևունու, որ ուներ տանուտերական պատիվ, Վահրամ սեպուհի՝ իշխանի թիկնապահի, Վահրամ Տրունու, Հասանի և պաշտոնավոր սեպուհներից ուրիշների հետ, և եկան մտան Նկան բերդ-ղղյակը, որը Թոռնավան գավառում էր։ Փնտրում էին, քննում, թե ինչպես կարող են ելք գտնել վերահաս վտանգից։

Երբ արաբացոց զորքն իմացավ, որ իշխանը մտավ ամրոցը, այնուհետև բազմությամբ հետամտելով, իսկույն շրջապատեց ամրոցը, ինչպես անել վանդակը։ Բայց բուն բանակը Ղոկորվատ ավանում էր և հետն ուներ գերիների բազմությունը, որ հավաքել էին ինչպես հող։ Իսկ Վահան Ամատունին գավառից փախավ ձորը, որը մոտ էր այն ամրոցին, ուր իրենց իշխանն էր։

Ապա փոքր-ինչ ժամանակ հետո զինվեց զորքը՝ պատերազմելու բերդականների դեմ, ամրոցն առնելու համար։ Եվ ինքն իսկ անձամբ՝ զորապետ Բուղան, նստած երիվարին, զինավառում, գոտեպնդում էր ելիմացիների կորովի աղեղնավորներին ու ընտիր հեծյալներին, իր հետ տանելով ի պատերազմ ընդդեմ [Աշոտ] իշխանի։ Եվ այլևայլ ցեղերի զինվորներն ունեին վաղրեր, սուսերներ, սվիններ, տապարներ, քարհատ գործիքներ, մեքենաներ, քար նետող գործիքներ, վահաններ և նիզակներ։ Վերցնում էին նաև կրակ, ծծումբ և նավթ՝ պատերազմելու համար։ Լուծույթը լցնում էին ապակեղեն անոթների մեջ, մանր ծծումբ խառնում նրան ու դնում մեքենայի պարսատիկի վրա, նրա կողքին նաև՝ կրակը և միջոց էին գտնում նետելու ամրոցի վրա։ Եվ ովքեր որ պատերազմում էին պարիսպների մոտ, ունեին բրդյա զգեստներ։ [Բուրդը] բազուկների ուժով սեղմել և կպցրել էին միմյանց։ Այդ նուրբ մազը կոչում էին թաղիք, որը ջրի մեջ դրվելիս ծծում է իբրև սպունգ, և նրանով զինված մարդիկ ավելի սաստիկ են կռվում, մնում են աներկյուղ հրից այրվելուց։ Նրանց երիվարներն ու հեծյալները սպառազինված էին։ Ձիերը ունեին կուրծքը, ճակատը, գավակը և զանգապանները չորս կողմից պաշտպանող զարդեր, կրծքներից ևս կախել էին զենք և խրոխտ [տեսքի] համար նաև՝ վահան, ոտնատրոփի [ժամանակ] փնչացնելիս զրնգացող, զանգակազարդ ոսկե շղթաներ։ Ձիերի ճակատների մեջտեղը կապել էին լուսնաձև մահիկներ։ Իսկ կերի խոտը ամուր կապել էին երկաթե շղթաներով։ Այլև տախտակը հարմարեցնելով ըստ ձիուս փորի չափի՝ վահանի պես կպցրել էին փորի երկու կողմից, ցուցահանելով զինագործության արվեստ։ Իսկ իրենք մարմնի վրա կրում էին զրահ, գլխներին դրել էին սաղավարտ, ձեռքներին հագցրել բազպաններ, նստելատեղերին ամրացրել էին զանգապաններ, պատրաստել կոչկաձև ոտնամաններ, վահաններ դրել թիկունքներին, մեջքներին կապել սուրը՝ ձեռքներին բռնել նիզակը։ Կապարճներն ու աղեղները պատրաստ ունեին առջևները՝ ձիերի թիկունքներին։ Մեջքներին կապել էին ոսկենախշ ու արծաթագործ զարդեր և գոտիներ։ Կողքերին ունեին փողփողացող դրոշներ և թևաբախումների ձայնից թնդեցնում էին լեռները։ Բարձրացրել էին դրոշները, հնչեցնում էին քնարները և զարկում թմբուկները։ Արևն ընկնում էր զենքերի ու զարդերի վրա։

www.a-pdf.com

Փայլատակող մերկ սուսերները արևի ճառագայթներն անդրադարձնում էին շրջակա լեռներին։ Քաջերը խիզախում էին, զորագլուխները և առաջամարտիկները գոչում։ Եվ բանակը դասավորեցին, պատրաստեցին պատերազմի։ Այս ասել է Եսային մեկ խոսքով. «Ելամացիք վերցրեցին կապարճները, նստեցին ձիերը»։ Պատերազմողների զորագնդերը եկան մոտեցան մեր քաջն Աշոտին՝ մեծ իշխանների մեջ Հայոց ընտիր զորավարին։ Եվ այնչափ, դրանից էլ առավել սպառազեն պատրաստություն ունեին, բայց սաստիկ կասկածներից ու մեծ երկյուղից դողում էին մեր հայկասիրտ և հաղթող կտրիճից՝ Աշոտից և Վասպուրական տերության բնիկ նախարարների ազգատոհմերից նրա հետ եղած ազատների զորագնդերից ու նրանց զորքից։

Իսկ [Աշոտ] իշխանը ելավ պարսպի վրա, հպարտ էր և պանծալի, ճեմում էր, ինչպես առյուծի կորյուն և մնում աներկյուղ՝ առ ոչինչ համարելով հրոսակներին, որ վրա էին հասել ու շրջափակել իրեն։ Որովհետև կարծում էր, թե իր նիզակակիրները, ազատագունդ զորքը, զորագլուխները, որ մտել էին իր հետ նկանի անձավը, համախոհ են ու գործակից իրեն։ Մինչդեռ [արաբներն] ավելի ու ավելի էին սաստկացնում մարտը։

Այնժամ խորհրդի նստեցին իշխանն ու իր տոհմակիցները՝ Վահան և Մուշեղ Արծրունիները, իր հետ եղած ազատների զորագունդը, որպեսզի թերևս կարողանան համաձայնեցնել [Բուղա] զորապետին՝ հրաժարվելու իր հղացած դիտավորություններից և դադարեցնելու մարտը, վերջ տալու խառնակություններին։ Ինչ-որ պահանջում է,— ասացին,— թող վերցնի ըստ իր կամքի, [կամեցան] հաստատել և նրան տալ գյուղեր, ագարակներ, վճարել արքունի հարկը և տալ խաղաղության պատանդներ։

Մինչդեռ այսպես էին խոսում ու խորհում միասին, նույն ժամանակ բերդում արգելվածները՝ ազատ տոհմերից, որոնք մասնակցում էին խորհրդին, իսկույն անջատվեցին ուխտած միաբանությունից, մեջտեղ բերեցին չար մտադրություն, կեղծեցին բարեկամություն, ինչպես երեկ և նրանից էլ առաջ, ու հանձն առան մեկնել զորապետի մոտ և խնդրել խաղաղություն։ Իրենցից մեկը՝ Վահրամ անունով, մեկնեց զորապետի մոտ, և հրովարտակը տվեցին. որ տանի նրան։ Լցված էին սատանայական դիտավորությունների թույնով, իշխանի աչքին [երևում էին] գառան մորթիով, բայց ներքուստ ունեին ապականող գայլերի լրբություն, նման էին համրացած շների, որոնք չեն կարող հաչել, ինչպես ասում է Եսայի մարգարեն, բայց տիրոջ դեմ են ուղղում իրենց մահածին թույնի սպանող զորությունը՝ դառնալով տիրակորույսներ, աշխարհավերներ, բանսարկուներ, քսուներ, ավելի խռովարարներ, քան խաղաղասերներ, որոնք քակում էին ամենուրեք, որտեղ լինեին և հանդիպեին, եղբայրների, ազգականների ու բարեկամների խաղաղության ուխտի միաբանությունը։

Եվ մատնիչի նման դարձյալ եկան Փրկչի անօրինությունից՝ իրենց հետ ունենալով հրովարտակ, որտեղ գրված էր.

«Արքունիքից ընդունել ես Հայոց աշխարհի վերակացությունը և ինքնակալ թագավորի հրամանով նվաճել և հնազանդեցրել ես ձեր պետությանը ամբողջ Հայաստանի իշխաններին, կուսակալներին, քաղաքապետներին, մարզպետներին, ինչպես և խրատել ապստամբներին ու ընդդիմակայողներին իրենց ապիրատությանն արժանի ձևով՝ բանտով, ծեծով և պեսպես տանջանքներով, վերացրել երկրի խաղաղության մեջ [ընկած] շփոթն ու խռովությունը, ինչպես վայել է խաղաղասեր թագավորներին ու թագավորազներին, իբրև Աստծո հլու հավատարիմ ու տիրասեր ծառաների։

www.a-pdf.com

Եվ արդ մենք՝ Վասպուրականի ազատների ու իշխանների նահապետներս, Վահևունյաց տոհմից Մուշեղը, Տրունյաց տոհմից Վահրամը, մյուս Վահրամը, որը և իշխանի թիկնապահն է, և բազում ուրիշ ազատներ ու պետության զորականներ, որոնց ձեռքն է մեր աշխարհի հոգաբարձությունը, դրեցինք քեզ, Բուղա, արաբացոց զորապետների գլխավոր և բարձակից մեծն թագավորի։ Միայն թե ազատ արձակի մեզ և մեր ազգատոհմին մեր տները և թույլ տուր յուրաքանչյուրիս խաղաղ ապրելու այնտեղ։ Մենք Աշոտին կտանք քո ձեռքը, առանց զենքի, մարտի ու ճակատ կազմելու, և չես չարչարվի նրա պատճառով։ Այլև չես կարծի, թե մենք ապստամբ ննք եղել ինքնակալ թագավորի և քո մեծության դեմ, եթե ստուգությամբ քննես։ Բայց սրան էլ անտեղյակ չպիտի լինես, որ Դուրգենի՝ իշխանի եղբոր հետ Արծրունյաց տոհմից ուրիշներ և Վասպուրական տերության ազատները, ազատորդիները և նրանց քաջարի զորքը՝ բոլորը անցան գնացին Ատրպատականի կողմերը և այնտեղ են հավաքել մեր աշխարհի ամբողջ զորքն ու ռամիկներին։ Նրանք կորովի և պատերազմող տղամարդիկ են, որոնք երես չեն դարձնում սրից։ Եվ եթե գործը ձգձգվի այսպես, և պատերազմը փութով չտարվի, գուցե գիշերվա օգնությամբ գա քո վրա և հասցնի մեծամեծ վնասներ քեզ և արքունի քո զորքին։ Որովհետև քաջ և պատերազմող այր է, նրա հետ եղած զորքն էլ միաբան է, և անձերը մահվան կտան իրենց տան, երկրի, ժողովրդի ու ազգատոհմի համար։ Նրանց ձեռքում են հույժ անմատչելի և ապահով ամրոցներ՝ **Ջլմարը, Սբինգը և Ճահուկ բերդը**։ Ու եթե նրանք բաժանվեն երեք, չորս և ավելի մասերի և իրենց օգնական ունենան ամրոցները, **քեզ կպատճառեն մեծ նեղություններ, կխափանեն քո բոլոր դիտավորությունները, քեզ կմատնեն նվաստացուցիչ, ամոթալից պարտության**, ինչպես ավելի առաջ արքունիքից եկած զորապետին, որ չկարողացավ դիմակայել սրանց՝ նույնիսկ 100-ով հայոց 10 զինվորի դեմ»։

Եվ երբ գլխավոր զորապետը ազատանուց ծածուկ ընթերցեց [հրովարտակը], գրավոր պատասխան տվեց և երդմամբ հաստատելով՝ ասաց. «**Դուք** ինչ որ ցանկանում եք, կլինի ստուգապես, առանց երկբայության. միայն իմ ձեռքից Աշոտն, իր ազգականներով հանդերձ, չպետք է դուրս պրծնի»։

Այնժամ. իշխանը, իմանալով նրանց նենգությունն ու խորամանկ կեղծավորությունը, և որովհետև ոչ ըստ նրա հրամանի էին կարգավորում ամրոցի պաշտպանության կարիքները, ասաց նրանց. «Գնացեք զորապետի մոտ, հավաստիացեք և վերահասու եղեք, իմացեք, թե ինչպես կարող եք նրան հակել խաղաղության»։

Այն ժամանակ գարշելի դեմքերից դեն գցվեց կեղծավոր քողը։ Պատասխան տվեցին, ասելով. «Դու ինքդ վեր կկենաս, կգնաս, նրանից կլսես, ինչ որ կցանկանա, և քեզնից կվերանա ապստամբի [անունը] և թագավորի դեմ ապստամբողի՝ քո մասին եղած կարծիքը»։

Երբ Աշոտ իշխանն իմացավ, որ նրանք վատ բան են կատարել և խոսում են խաբեությամբ, բայց գաղտնի քրթմնջում են, հրաժարվում կատարել իր հրամանները, պատասխան տվեց, ասելով. «Դուք ծածուկ ի՞նչ եք կամենում գործել, ինչո՞ւ եք միմյանց հետ հղանում գաղտնի դիտավորություններ։ Եթե չար եմ թվում ձեր աչքին, ապիրատություն եմ գործել ձեր հանդեպ կամ խարդախությամբ ապրել ձեզ հետ, ահավասիկ իմ երեսին տվեք պատասխան և հականեք հանվանե, մեկ առ մեկ ցույց տվեք իմ գործած ամեն մի հանցանքը, ասացեք ի լուր բոլոր զորականների և մի՛ ամաչեք ճշմարտությունն ասելուց։ Չէ՞ որ իբրև հայր գրկել, գգվել եմ ձեզ, հավաքել,

www.a-pdf.com

ինչպես հավը ձագերին, թևերիս տակ՝ պաշտպանելու համար, և դուք ամենուր պահպանվել եք ուշադրությամբ, ապահով եղել իմ ձեռքի տակ և անհոգ, ինչպես անմատույց քաղաքում։ Եվ դուք այսպես եք հատուցում ինձ, չիմանալով այն, ինչ ասել է Դավիթը. «Բարու փոխարեն չար են հատուցելու և իմ սիրո փոխարեն՝ ատելություն»։ Եվ որպես դրա հատուցում, շարունակության մեջ ասում է. «Ննջանց վրա դիր մի մեղավորի, սատանան թող կանգնի նրա աջ կողմը»։ Եվ ինչ որ շարունակվում է սաղմոսում։ Չե՞ք լսել, թե ինչ է ասել Սողոմոնը. «Ով բարության փոխարեն հատուցում է չարությամբ, չարիքը նրա տանից չպիտի պակասի»։ Չե՞ք մտաբերում և ոչ մեկն այն բարիքներից, որ դուք գտել եք ինձնից։ Քանզի ամեն տարիքում ձեզանից յուրաքանչյուրին մեծարում էի գթառատ սիրով այնչափ, որ իմ հարստությունից, ինչն իմ գանձն էր, տարեցտարի բաժին էի տալիս զվարթ սրտով, իմն էի համարում ձեր կողմից և ձեզ համար իմ տանից դուրս հանվածը։ Չի լսվել, որ նախկին իշխաններից որևէ մեկը այսպիսի բան աներ։ Իսկ ես աղքատանալով, հոգ չէի տանում ունեցվածքի մասին և այսուամենայնիվ ուրախանում էի միայն ձեր լիացումից։ Ձեր որդիներին ու մանուկներին տեսնելիս խանդաղատանքով գիրկս էի ընդունում, մեծ ընծաներով ու գգվանքով, իբրև ինձնից ծնվածների։ Արդ այս ամենի փոխարե՞ն է, որ նենգագործ մտահղացմամբ համաձայնություն եք տվել, բանտարկման պատճառ դառնալ, [օգնել] մեզ հետամտողներին՝ դյուրությամբ բռնելու ինձ ու իմ զավակներին և ամբողջ ընտանիքով ձգելու վիշապի բերանը՝ պատճառ դառնալով ամբողջ երկրի սրածությանն ու գերությանը»։

Իսկ նրանք, քանզի հաստատապես միացել էին արաբացոց իշխանի նենգադրուժ մտադրությանը, պատասխան տվեցին, ասելով. «Ձենք կարող դիմադրել արքունի իշխանության չտեսնված զորությանը, և ոչ էլ այս բերդի ամրություններն են այնքան վստահելի, ինչքան մեզ էր թվում, և սրա միջի պաշարներն էլ բավական չեն, էլ չենք ասում ուրիշ բաների մասին։ Քիչ են նաև բերդի պահապան ռամիկ զինվորները։ Այս ամենի համար, հարկ է, որ դու գնաս, որպեսզի քո, որպես ապստամբի [մասին] եղած կարծիքը վերանա, և այդ տառապյալները, որ զուր տեղը գաղթել և եկել ապավինել են այստեղ, արձակվեն յուրաքանչյուրն իր տեղը, և երկիրը հանգիստ առնի թշնամիների ասպատակությունից, վրա հասած ավերից ու ապականությունից։ Եվ եթե գնաս կամովին, թևերս շատերին, նաև քո անձին օգուտ լինի Հարկադրված մեկնելդ, հարձակվողին չարշարանքով դիմադրելդ միգուցե ավելի վնաս տա նաև քեզ, և այնուհետև ոչ ոքից չես գտնի թողություն»։

Այս լսելով՝ հաստատ իմացավ նրանց նենգագործությունը և աչքերը բարձրացնելով առ Աստված՝ աղոթեց, ճաշակեց մի քիչ հաց ու գինի, գոհացավ և թախանձագին շրջվեց դեպի իր ընտանիքը, ապա վեր կացավ, իջավ ամրոցից, եկավ վայրի ոսոխի առջև, ողջույն տվեց ըստ նրանց սովորության։ [Բուղան] հարցրեց. «Դո՞ւ ես Աշոտը»։ Պատասխանեց. «Այո՛, ես եմ»։ Կրկնեց, երրորդեց, բայց լսեց նույնը։ Ապա ավելացրեց և նրա առաջ դրեց մեղադրական բազում խոսքեր, բայց նրանից լսեց հույժ պատշաճ ու մտացի պատասխաններ և հրամայեց նստել։

Այնժամ Սմբատ Բագրատունին՝ Մոկաց տերը, որին հիշեցինք ավելի վերևում, քանզի շատ սիրվեց զորապետից և առավել քան բոլոր մեծամեծները, ստացավ պարգևներ ու պատիվներ, չհանդուրժեց կատարված անցուդարձերը։ Նրա հոգին հառաչում էր մեծ տրտմությամբ։ Նա դուրս եկավ բանակից և հեղեց հորդառատ արտասուքներ՝ իշխանի և մյուս նախարար-

www.a-pdf.com

ների կործանման համար։ Բայց ոչնչով չէր կարող օգնել նրանց, **անօրեն** թագավորի դաժան հրամանի պատճառով։ Մածուկ իր սիրտն այրվում, խորովվում էր երկրի ավերման և թշնամիներից գերվածների անողորմ չարչարանքների համար։ Այնժամ համարձակվեց մտնել բռնավորի ատյանը և աներկյուղ, առանց ամաչելու, եկավ զորապետի առջև ու ասաց. «Որովհետև քո մոտ գտա շնորհներ, և մեծարանքներ արեցիր իմ անձին և Հայաստանի բոլոր իշխաններից, արքունի մեծամեծներից առավել ինձ նախամեծար համարեցիր և պատիվներ ցույց տվեցիր, ու բոլորը լսեցին ինձ քեզ հետ վերցնելու մասին։ Քո սիրալիրությունն իմ հանդեպ թող դատարկ ու անարժեք չլինի, որպեսզի ովքեր շատ են ատում և թշնամի են մեզ՝ տեսնեն ու ամաչեն, իսկ բարեկամներն ու սիրողները հույժ ուրախ լինեն»։

Իսկ զորապետը երդմամբ խոստացավ տալ նրան, ինչ որ կամենա, մինչև իսկ արժանացնի իր իշխանությանը հավասար բարձի ու պատվի։

Սակայն նա ուշադրություն չդարձրեց երկրային հարստություններին քանզի դրանք անցավոր են, և խնդրեց արժանացնել անսպառ, անվախճան, հավիտենական և գողերից անկողոպտելի պարգևների։ «Տուր ինձ,— ասում է,— այդտեղի գերիներից, որչափ քո կամքը թելադրի»։ Իսկույն փութով հրաման տվեց, որպեսզի ում որ վերցնել կամենա Սմբատը, ոչ ոք չհամարձակվի արգելք լինել։ Եվ նրան տվեց սուրհանդակներ, մեկնազեններ, սակրավորներ, լախտավորներ, որպեսզի ըստ նրա կամքի, բանակից դուրս հանեն Վասպուրականի գերիներին։ [Սմբատը] վերցրեց նրանց, ամեն մեկին անցկացրեց իր բնակության կողմերը։ Ինքն էլ գնաց նրանց հետ ինչպես պարսից Կյուրոս արքան՝ Բաբելոնի գերությունից վերադարձողների եռևից ժողովրդին բերեց հանեց իր երկիրը։ Սմբատի նկատմամբ կատարվեց Եսայի մարգարեի ասածը, թե՝ «Կուղարկի նրանց մի մարդ, որը կվկրկի նրանց» և կվկրկի դատաստանով։ Եվ դարձյալ, թե «իր գերված ժողովրդին ետ պիտի դարձնի, ոչ կաշառքով և ոչ էլ ընծաներով, ասում է տերը»։

Եվ [Բուղան] մեծ ուրախությամբ և անտրտում խնդությամբ արձակեց նրան։ Ժամանակ տվեց նրան վերադառնալու իր մոտ՝ Դվին քաղաքի իր ամեռոցը։

www.a-pdf.com

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ

(850—929)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

(Հատվածներ)

Այդ ժամանակ՝ գիշերը, հանկարծ սաստիկ երկրաշարժ է լինում Դվին քաղաքում՝ բնակիչներին խուճապի մատնելով, սարսափեցնելով և դղրդյուն, կործանում առաջ բերելով՝ [այն] հիմնիվեր տապալում։ Եվ ամրողջովին փուլ ածելով պարիսպների պատերը, երևելի մարդկանց ապարանքները, ռամիկների տները՝ դրանք մի ակնթարթում ավերակի է վերածում։ Դղրդալով քանդվում, ավերվում ու վայր են թափվում նաև կաթողիկոսարանի աստվածաշեն եկեղեցին և այլ հաստահեղույս վկայարաններ. դա տեսնողներին երևում էր իրրև քարքարոտ, խորդուբորդ ու սարսափելի ավերակ։ Մարդկանց մեծ բազմություններ, մնալով հարկերի տակ, շնչասպառ են լինում՝ հողի մեջ թավալվելով և հողի տակ խեղդվելով։ Եվ դա դիակույտ բազմության այն կոտորածն էր, որ ավելի կարծր, քարեղեն ու անկարեկից դարձնելով միտքր՝ նրան համակում էր մեծ ողրով ու արտասվաթոր լացուկոծով։ Չեմ ուզում ասել մարդկանց ազգակից, կարեկից, լծակից հարազատների մասին, որոնց կականը, ողբը, գույժից ճչալը, կանչելը, գոռալը, վայնասունը և երգող կույսերի, սևազգեստ կանանց, վշտահար հեծությամբ սգացող տղամարդկանց ձայները բարձրանում ու մինչև երկինք էին հասնում։ Իսկ դիակներն այնքան շատ էին, որ գերեզմանոցները չէին բավարարում և շատերին գցում էին վիհերը, խորխորատները, փոսերը ու ծածկում։ Եվ այսպես սաստիկ վախ ահաբեկում էր բոլորին՝ ահով պաշարելով ողջ մնացածներին։

Այսպիսի աստվածասաստ բարկությունը լսելով՝ Աստծու սուրբ մարդ Մաշտոցը, որ բազմաչարչար ճգնությամբ բնակվել էր Սևան կղզում, մնացած գանահարվածներին գրում է հետևյալ թուղթը.

«Իմ հավատացյալ ու հաճելի տյարք, սիրելի եղբայրներ, ես իմացա ազգային այդ խորտակումը, որ աստվածային բարկությունը [մեզ] բուռն զորությամբ հնձանում տրորվող խաղողի նման մանրեց ու ճմլեց մեր շատացած մեղքերի պատճառով, և հանկարծակի վրա հասան դառն արտասուքի հնձանահարությունն ու մահվան գույժի անտանելի օրհասը, որ ձեր ուրախությունը վերածեց ողրի։ Քանի որ միանգամից հրդեհեց ու փշրեց մարդկային անտառների ծառերը։ Եվ ահա ծովի լայնությունն ու լեռների բարձրությունը չբավարարեցին արգելելու այդ արագաթև հրամանը։ Ավա՜ղ կործանման օրվա դառն լույսին, երբ [մարդիկ] քանի դեռ իրենց վայելուչ սեղանների մոտ կերակուրները բերանում էին, պապանձվեցին այդ մեծ աղետի սաստիկ բախումից։ Քանի որ ծնողները լքեցին իրենց երեխաներին, իսկ երեխաները աղետի պատճառով հրաժարվեցին իրենց ծնողներից։ Գերեզմանները նրանց համար տուն եղան, և նրանք թաղվեցին իրենց տներում. իբրև գերեզմանոցում։ Ավա՜ղ չարչարվածներիդ ու կոտորվածներիդ, տա-

www.a-pdf.com

հասարակ հայրերիդ ու եղբայրներիդ, որովհետև Տերը իր աներևույթ սրով թակարդափակեց ժողովուրդների ու ազգերի բազմությունը, մի վայրկյանում վանելով ու իբրև չուր թափելով՝ ցամաքեցրեց կամ իբրև ծուխ սպառեց և մեզ բոլորիս ծածկեց աչքահան խավարով։ Երանի՜ այն աչքերին, որոնք չտեսան այն նոր ու անլուր դատապարտությունը, որ վիճակվեց մեզ, և մենք ընդունեցինք։ Որովհետև եթե երբեմն սիրալիր խնդությամբ զվարճանում ու հրճվում էինք՝ ծնողների, եղբայրների, ժառանգների ու զավակների հետ հնչեցնելով Տիրոջ օրհնության ձայնը, այժմ տոչորվում ենք անտանելի տառապանքով և հանկարծահաս ու խավարազգեստ մթությամբ։ Անգամ չթողնվեց մխիթարության ստվեր, և ոչ էլ այդ վիճակից դուրս գալու կամ մահվան հույս, բացի Աստծու մարդասիրությունից, ինչպես որ հենց դուք գիտեք։ Որովհետև Աստված այլ հոգս չունի, քան՝ մարդկանց ուղղություն ու փրկություն [տալը], դրա համար մենք մոռանում ենք Աստծուն և մեզ։ Ահա այսպես դրդելով՝ արթնացնում է իր ողորմությամբ և մարդասիրությամբ, քանի որ այսպես եմ հավանում Աստծու տանջելը, որի մասին ասում է [սուրբ] Գիրքը, որով խրատում է մեզ՝ չարացած անզգամներիս։

Դարձյալ մի՛ զարմանաք նրա անքննելի դատաստանից, թե արդարին ինչո՞ւ է կորցնում անօրենի հետ։ Նախ և առաջ, որովհետև ոչ ոք և ոչ մեկը արդար չէ, և բոլորս էլ միասին մոլորվեցինք ու ոչ պիտանի դարձանք։ Ուրեմն չկա շատ ավելի չար բան, քան մահը, որին մեղապարտ ենք մենք, և այն վրիժաբար կհասնի մեզ։ Դրանից հետո բոլորը՝ և՛ արդարները, և՛ մեղավորները միասին ինչպես վայելում են արևը, անձրևն ու բոլոր բարիքները, այդպես էլ միասին խմում են պատուհասի բաժակը, իսկ յուրաքանչյուրի պատիվն ու պատուհասն էլ գալիք օրվա համար են պահվում։ Այսպիսով, քանի որ այսպես մինչև մեզ հաստատված է արարչի իրավունքը՝ այն անաչառորեն գործածելով բոլորի նկատմամբ, չկամեցածը որպես կամեցած ընդունեցեք, որով դատաստանը հայտնի կլինի իմաստությանը, գիտությանը և ձեր հավատքին։ Եվ ձեր պարտական գոհաբանությունը մատուցեք նրան, որ վհատ սրտի մխիթարիչն է, որով և բնակվել եք նրա մերձավորությամբ և ըստ քրիստոնեական հավատի, ուղիղ վարքով, առաքինասեր և ուղղափառ կարգով հաստատվել աստվածավախությամբ։ Եվ նա սուրբ սրտով ձեզ կտա մխիթարության հոգի ու բարեհուսություն և ձեզ՝ մնացած բոլորիդ կհագեցնի բնական սփոփանքով՝ հոտ ու հովիվով՝ մոռացնել տալով ձեր ծանր ու մեծ վշտերը։ Տրտմության հովտից դուրս գալու չարչարանքների համեմատ նրանց կհավասարեցնի Քրիստոսի չարչարված վկաներին՝ նրանց հոգիները տեղավորելով լույսի տներում, եղծանելով նրանց խոսքի, գործի ու մտածմունքի պարտագրերը, դասավորելով խոստացած բարիքների մեջ, որ հավիտյան պահվում են իր սիրելիների համար»։

Այս բարեզարդ պատգամը ընթերցելով բազմության առաջ, և մնացած ժողովուրդը լսելով՝ Տիրոջ ահից ու սաստից պակաս չէր մխիթարվում և իրեն արժան էր համարում այն չար ամպրոպին՝ խառնվելով նրանց անօրեն մեղքերին ու միմյանց ասելով. «Հիրավի քրիստոնյաները, ևս թմրելով հեթանոսների սաստիկ ծխի մեջ, պատժապարտ գտնվեցին։ Քանի որ դուրս չգալով Սեզովրայից՝ խառնակվեցինք հաղարացիների հետ և սովորեցինք նրանց գործը, որ մեզ համար եղավ որպես գայթակղություն»։

Ուստի թող քեզ բավականացնի այս եղկելի, տարակուսական աղետի դրած պայմանը, որպեսզի սրանից առավել պատերազմողներին չանցնի...

www.a-pdf.com

...Եվ արդ՝ այսուհետև ես դարձյալ իմ խոսքը այնտեղից կվերադարձնեմ դեպի ողբը և տխուր սրտով չեմ դանդաղի մտաբերել քստ Ջաքարիայի ասածի, մերոնց վտանգավոր կրքերից օդի մեջ թռած գերանդին՝ երկոսյերի սուրը, որ սրրվել էր մեր երկրի որդիների արյամբ: [Կմտաբերեմ] բազմախողխող առաքյալին որպես վրեժխնդրություն գողերին, գողակիցներին, ոսոխոսներին, երդմնազանցներին: Ուստի և մենք տեսանք հարավից բորբոքված չարիքը և մեր ժողովրդի որդիներին ամեն կերպ վնասող տանջարանները, իսկ որդիները խփվեցին ու թարախոտվեցին սովով, սրով, խարդավանքով, որ թափանցեց ու հասավ մինչև մարմինը, ոսկորները և ուղեղը: Ես այստեղ չեմ անտեսի և մյուս այն մարգարեությունը, որ, իրրև ինձ, ասում է, պատահում է նրանց ճանապարհին, ովքեր չարությամբ են համակված, ինչպես այն ժամանակ երբեմնի կռամոլ ասորեստանցիները: Այստեղ իմ առաջ կանգնում է Մովսեսը՝ Աստծու մարդը, որ հրապարակավ հայտնում է մեր գործերի վրեժի հատուցումը մեր վրեժխնդրության օրը՝ փայլակի նման սուսերով վրա հասնելով և մեր իշխանների գլուխները ու գերի վիրավորների մարմինները ուտելուց չհագենալով: Որովհետև նրանք, ովքեր երբեմն ավելի բարձր աթոռների էին նստում և իշխանական բնակարաններում երկրից վեր բարձրանալով հպարտանում էին, ահա այժմ խարեբայությամբ դյուրադավ եղան ու մահապարտության տույժի ենթարկվեցին ոստիկանի կողմից: Քանի որ ոմանց բանտ բերելով՝ տակավին պատժում էր սրով, սովով ու ծեծով, իսկ ոմանց էլ, որոնք տեսնողներին իրենից ավելի պատվավոր էին թվում, ծածուկ դատապարտում էր մահվան: Ըստ որում նախ թաքուն վճիռ կայացնելով՝ նա խարեությամբ սպանեց Սմբատ արքայի քեռորդի Գրիգոր իշխանին՝ իր տոհմի հետ միասին, որը, ինչպես նախապես ասացի, կամավոր հանձնվել էր նրա ծառայությանը: Մահացու թույն լցնելով նրա որովայնը՝ այնպես տագնապով ու տարակուսանքով մեռցրեց: Եվ տարավ թաղեց իր ձեռակերտում, սուրբ Շիմոնի սրբարանում: Սրա նման էլ քաջարի մանուկ Մուշեղին՝ Սմբատ արքայի որդուն, որ Ուտի գավառի բնակիչների ենթգության պատճառով բռնվեց. նրան էլ նույն տանջանքների մեջ գցեցին ու թույն խմեցնելով՝ սպանեցին: Վերցնելով նրա մարմինը՝ Աշոտ սպարապետը առաքում է թաղելու Բագարանում գտնվող պապենական գերեզմանոցում: Նույն խարդավանքով նա այս կյանքից զրկում է նաև կայտառ երիտասարդ Սմբատին՝ Սմբատ [արքայի] եղբորորդուն, որը հոժարակամ գնացել էր ծառայելու հագարացուն: Նրան տարան ու թաղեցին Դարույնքում, իր հայրերի մոտ: Եվ այս պատճառով ողբալով իմ սիրելիների սուգը և շրթունքներով գուժելով լացի ու պաղատանքի ձայնը՝ ոզսրմագին լաց ու կոծ եմ անում, քանի որ մեր մեղքերի պատճառով ամոթով վերջացան մեր օրերը և կորան հույսի ունայնության մեջ: Այնուհետև նույն ձևով կոտորում են նաև ազնվականներից շատերին, որոնց մասին ես չեմ ասի մեկ առ մեկ: Եվ այն պատվականներից ու մեծամեծներից, որոնք անձնատուր էին եղել նրան ու ընկել նրա ձեռքը, գրեթե ոչ ոք չփրկվեց այն անտանելի ու չարաչար մահից, բացի միայն խոհեմ Գագիկ Թագավսրից և չքնաղագեղ Աշոտ սպարապետից, որոնք, իրենց մտքում լավ մտածելով, իրենց առջև խելամտությամբ միանգամից տեսնելով տերերի ու եղբայրների շարժման ելքը և այդպիսի դաժան մահվանից վախենալով, ամեն ինչ հաշվի առնելով, վերջնական խոսքով ու խորհրդով շտապեցնելով իրենց, ենթարկվեցին ոստիկանի կամքին: Նաև պատանի մանուկ Վասակը՝ Մյուն-

www.a-pdf.com

յաց գահերեց իշխան Աշոտի որդին, իր կամքով անձնատուր եղավ ոստիկանին, որը նրան բանտարկեց։ Իսկ մի օր, երբ վրա էր հասնում դիշերը, [Վասակը] հանկարծակի, գործածելով պողպատյա կարճ սուրը, պահակին գետին է փռում և ապա բավական հեռանալով ու գնալով՝ անցնում է քաղաքի պարսպի պատից ու փախչում։ Իսկ երբ ուժեղանում է պահակների ձայները, նրանք զորք են պատրաստում նրա հետևից ուղարկելու համար։ Այդ ընթացքում նա դուրս է գալիս այգիների ճանապարհը և գնում-հասնում է իրենց աշխարհը, իր հայրական ամրոցները։ Այնուհետև չարության գաղտնի պատրվակը հայտնի դարձնելով՝ պատվական ազնվականներից ոմանց բազմախողխող սրին էին կերակուր տալիս, իսկ ոմանց էլ փախցնում ու քշում էին ձորերն ու ժայռերի ծերպերը։ Հետևաբար ամբողջ ժողովուրդը սարսափելով՝ ոմանք ժտան քարանձավները, ոմանք թաքնվեցին անտառներում, ոմանք բարձրացան քարաժայռերը։ Իսկ հետո պատվական կանայք ու տիրուհիները, բռնվելով այն գերիչների կողմից, ավելի ծանր բեռ ու նեղություն կրեցին՝ չհիշելով մայրական ազատության փափկության անունը։ Իսկ ոմանք բանտ դրվեցին խավարչտին տեղերում։ Նրանք ապրում էին քուրջ ու կոպիտ շոր հագած, դատապարտված չքավորության և օրվա հացի կարոտ, բայց թերևս ազնվականները ավելի փափկացած չէին, քան գեղջուկները վշտացած։ Եվ առանձին հղի մայրեր, դատապարտվելով դաժան մահվան, իրենց մանուկների համար գերեզման էին դառնում։ Իսկ ուրիշները, իրենց կյանքն ավարտելով մահվան չարախտավոր դառնությամբ, չէին տարբերվում նրանցից, ովքեր աշխարհ չմտան։ Եվ այդպես չքանդվեցին մեր երկրի դուստրերի կապանքները, և ոչ էլ թոթափվեց վշտալի տիկնանց գլխի փոշին, որը կպել էր իբրև հնոցի մոխիր։ Նրանք տանջվեցին նաև ողբալի տույժով ու մեծ հեծութեամբ, և սուգ հագան նրանց զարդատուփերը, խանգարվեց նրանց սեղանների սպասքը, սարդի ոստայններ ձգվեցին նրանց հարսնարաններում, և ամբողջովին ծխոտվեցին նրանց սենյակներն ու ննջարանները։ Հետո զորացավ մահը և կուլ տվեց շատերին։ Արտասուքը հոսելով պատեց ամբողջ երկրի երեսը։— Բայց այսքանով քեզ, [ընթերցող], բավարարելով՝ ես կվերադառնամ իմ պատմության շարադրանքին՝ չթողնելով կիսատ։

Այդ ժամանակ ոստիկանի կողմից անտեղի սպանված Գրիգորի հայկազուն հարազատ եղբայրները՝ Սահակն ու Վասակը, հալածանքների ժամանակ ուժեղ իրարանցում բարձրացրին, ձգտելով, որ գոնե կարողանան հնար գտնել իրենց նեղողների ձեռքից ազատվելու ու ամրանալու իրենց տերության սեփական ամրոցներում և չհեռանալու, գնալու օտար աշխարհներ, մինչև, [ինչպես] ասում են, անցնի Տիրոջ բարկությունը։ Եվ ապա նավեր պատրաստելով ու սրընթաց թիակներով իբր տապանի մեջ վարելով՝ նրանք գնացին, թաքնվեցին ու ամրացան Սևան կղզում իրենց քրիստոնյա ու ճգնավոր մոր, կանանց, որդիների ու ազնվական բանակի հետ միասին, քանի որ իսմայելյան ավազակների՝ գետի նման հոսող պղտոր հորձանքը առավել ևս սաստկացած բախում էր մեր բնակության ավազահիմն տունը։ Բայց երբ այդ բանը հայտնվեց կնավարի խոսող դաժան հազարացուն, նա զորք է հավաքում և ուղարկում նրանց վրա։ Եվ երբ հասավ ծովակի ափին, թշնամու սուրը պատի նման շրջափակեց նրանց։ Այնուհետև սիրելի եղբայրները միասին որոշեցին, թե գուցե իրենց հուսալքվելը թշնամիներից լինի, և ջրապատ անդունդներում փախչելու տեղ չգտնվի ու իրենք մատնվեն հեթանոս բռնակալների ու նրանց տղմոտ չարության ձեռքը։ Դրա համա

www.a-pdf.com

նավաստիների ձեռքերը հզորացնելով՝ իրենց մոր և առհասարակ ընտանիքների ու գերդաստանների հետ գնացին, հեռացան այնքան, որքան ի վիճակի էին և հապճեպ ընկան Միափորի ապահով գավառը։ Իսմայելյան զորապետը, մտնելով կղզու ամրոցը և մնացած կողոպուտից ոչ թե քիչ, այլ շատ բան հավաքելով, փակում, թողնում է, և ինքը ասպատակելով ընկնում է նրանց հետևից։ Իսկ նրանք, ետ դառնալով ու դիվահար դուրս գալով թշնամու դեմ, նրանցից շատերին վիրավորում են ու սրի ճարակ տալիս, մնացածներին փախուստի մատնում, իրենք հեռանում, գնում ու թաքնվում են Գարդմանի ու Արցախի անտառների անձավաշատ ամրոցներում՝ ակընկալելով Տիրոջ խնամակալությանը։ Եվ այնտեղ վախճանվեց պարկեշտասուն ու սրբափայլ կրոնով դաստիարակվածն ու ճգնավորներից մեծը՝ նրանց մայրն ու Սմբատ արքայի քույրը, որի մարմինը տարիներ անց, երբ նրանք վերադառնում ու տիրում են իրենց սեփական ու հայրական իշխանությանը, տանում թաղում են իր գերեզմանոցում, Շողագայում կառուցած իր եկեղեցուն մոտիկ։

Անօրեն ոստիկանը տեսնելով, որ իր կուսակալներն ու կողմնակալները ձեռք են քաշում մեր երկրի բոլոր կողմերից մեր մեծ հաղթության պատճառով, և չկա մեկը, որ նրանց դեմ դուրս գա, չար ավազակների հետ միասին ասպատակում է բոլոր կողմերում, Սիսականի ժողովուրդներին, Տաշիրի ու Կանգարի այն կողմերում և Գեղամա ծովակի ափին։ Ինչպես նաև Գագիկ թագավորին իր նախարարների հետ միասին մեծ զորքով առաքում է Վաղարշակերտի ամրոցը՝ շրջապատելու, պաշարելու և գրավելու այն։ Նրանք գնացին և շատ օրեր կռվեցին ամրոցի դեմ, բայց ոչ մի վնաս չկարողացան տալ նրան։ Եվ թեպետև շատ մարդիկ են վիրավորվում ամրոցում ու գետին տապալվում թշնամիների կողմից, սակայն նրանք այն մոլեգնածի հրամանով չեն համարձակվում որևէ բան անել, այլ նստում, պահում են ամրոցը բազում օրեր։ Իսկ այն զորքը, որ ապստամբ ոստիկանի կողմից առաքվեց այդ կողմերը, որպես կայծակի հուր փայլատակելով մեր երկրի բոլոր կողմերում, բարձրացրեց տոչորող բոցը՝ ցրելու, հնձելու և ավերելու հայոց բնակիչներին։ Եվ բոլորին մեկտեղ՝ ազատին ու անազատին, զորեղին ու կռվողին, հիսնապետին ու դատավորին, խորհրդականին ու քննիչին, իմաստունին ու հանճարեղին, ծերին ու երեխային, մեծին ու փոքրին մատնեցին բռնակալ գերիչների ձեռքը՝ ըստ այն մարգարեության, թե «խաբեբաները կտիրեն ձեզ»։ Եվ այսպես զորությանց Տիրոջ նախանձը մեր վրեժխնդրության օրերին մեզ ցույց տվեց այն, ինչ լինելու էր հետագայում։

www.a-pdf.com

ԱՆԱՆՈՒՆ ԱՐԾՐՈՒՆԻ

(Ժ ԴԱՐ)

ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾՆ ԱՐՔԱ ԳԱԳԻԿԻ ԱՇԽԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԲԱԶՈՒՄ ՏԵՂԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՈՍՏԱՆ ԱՎԱՆԻ ՀՐԱՇԱԿԵՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Բայց ահա ինձ համար հույժ հաճելի է այստեղ ձեռնարկել վեհագույնին՝ հիշատակ թողնելով հետնորդներին, ինչպես և ի պարծանս Արծրունյաց ազգատոհմի, հիշատակել Հայոց մեծն թագավոր Գագիկի իմաստուն և խոհական գործերը: Նա քաջությամբ և աշխարհաշեն խաղաղասիրությամբ, իբրև հայր և խնամածու, հոգ էր տանում մեր Հայոց աշխարհի մասին: Բարեխնամ գթությամբ դարմանում էր աղքատներին, վերադարձնում գերիներին, փրկում հափշտակվածներին, իրավունք տալիս որբերին ու այրիներին, ավարտում, գլուխ էր բերում ամեն մի առաքինասեր պարբ: Ավելի մեծ գովեստի է արժանի: Սիրելի կտրիճ և առաջինը քաջ այրերից, որ այս պատմությունն ինձանից պահանջեցիր, քե՛զ համար արձանագրում եմ, ոչ իբրև ուրիշների համբավածից տեղեկացած՝ ստահոդ խոսքով առասպել պաճուճելով, այլ պատմում եմ, որպես ականատես և ականջալուր, իմ ձեռքերով շոշափած՝ հավաստի և ապշեցնող եղելությունը:

Բոլոր ուսումնասերներին հայտնի է այն զրույցը, որ արծաթասեր մարդը ավելի լավ է համարում իր պարանոցը ոլորելը, քան մի մանր արծաթով տուժելը: Եվ տեսնելով, որ նախախնամող Աստծու հրամանով արևն իր ճառագայթներն արձակում է, հոգ տանելով տիեզերքի համար, ընդդիմանում է նրան և ասում. «Ինչո՞ւ լույսիդ փոխարեն ոսկի չես բխում ինձ համար»: Կամ թե՝ տեսնելով ակնավճիտ աղբյուր, ասում է. «Ջեմ ծարավի և երբեք քեզանից ջուր չեմ խմի, մատուցիր ինձ արծաթ»: Իսկ թագավորը, ունենալով անարծաթասեր բնավորություն, մաքուր մնաց նման մեծավեր ախտից, խնամ տարավ ոչ միայն իր անձի զվարճության, այլև մեր ամբողջ Հայոց աշխարհի մասին: Մթերված գանձերը տվեց գործավորներին ու արհեստավորներին՝ գավառներում ու երկրի կենտրոններում ամեր պարապելու բարձրագագաթ բլուրները, անառիկ ամրոցներն ու բերդերը, ավազակներից և օտար ազգերի խառնակություններից փախչողներին ապաստանելու կարիքները բավարարելու համար: Իր անունով պարոպած բազմաթիվ ամրոցներից հատկապես երկու տեղում հույժ հաճեցնելով գրավում են դիտողին՝ ստիպելով ակնապիշ նայելու: Մեկը Ոստան ավանն է՝ ծավեզեբքին, Ռշտունյաց գավառում, որը հույժ բարեխառն է, երկրի չորս կազմերից առհասարակ այնտեղ է փչում քամին: Նաև սազաբքապատված է պտղաբեր ծառերով, զարդարված, հույժ վայելչացած այգեվեա ճոխությամբ: Քաղաքի շուրջը բխում են անուշահամ աղբյուրներ, որոնք օգնություն են մատուցում մարդկանց բազում պետքերի համար: Իսկ հարավակողմում, ամրոցի մոտակայքում է բարձրաբերձ Արասս լեռը, որը գարնանային գիշերահավասարից

www.a-pdf.com

մինչև աշնան եղանակն ամբարում, իր մեջ պահպանում է արմատների ու ծաղիկների դալարությունը, վերևում ունենալով ձյունահորեր՝ թագավորների ու բոլոր նրանց համար, ովքեր կկամենան վերցնել։ Նաև լեռան գագաթից ցած են հոսում սահմանակարկաչ ու հորդահոս գետեր, որոնցով առատանում է երկիրն առհասարակ։ Դրանք թափվում են ծովը և իրենց հետ բերում մանր ձկներ՝ գավառի բնակիչների վայելքի պետքերի համար, ինչպես և թագավորների գանձարանը լցնում բազում հարստություն, որոնք վերցնելով՝ արքան նվիրաբերում է աղքատների ապրուստի կարիքների համար։ Իսկ ամրոցի գագաթը ծովահայաց է և շատ վայելուչ։ Երբ հողմերից հուզված ալեկոծվում է ծովը, նրա ծաղկաձև ալիքները հաճելի ու վայելուչ են երևում, իսկ երբ օդը հստակ է լինում, գրավում է բոլորին՝ իր ծավալումը տեսնելու համար։ Որի պատճառով և թագավորը ձեռնարկում ու նրա մեջ կառուցում է ապարանքներ, սենյակներ և փողոցներ, հրաշալի, պատկերավոր և տեսակ-տեսակ հորինվածքով, որը չեմ կարող պատմել։ Պարսպում է նաև ծովակողմը զորավոր վեմերով, հիմքերը դնելով մեծ խորության մեջ, իսկ պարսպի վերևում, ծովի առջև շինում է մի ճեմադահլիճ՝ զարդարված ոսկեզարդ ու պես-պես ներկերով, արեգակնափայլ, ճառագայթաձև, աչքերը շոյելու, հուրախություն իր սրտի և իրեն արժանիների։ Շինում է կամարաձև, օդաբեր, զովացնող դռներ, միաժամանակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք, արեգակի ծագման ու մայրամուտի պահերին փայլատակելով ծովի վրա, դահլիճի սրտի մեջ են գցում իրենց շողերը և պես-պես գույներով շրջշրջելով զրոշմված պատկերներն ու զանազան հորինվածքները՝ հիացնում են դիտողներին՝ ավելի վեր անցնելով պատմողների կարողությունից։

Իսկ մենք, շատից սակավը հիշելով, պատմեցինք Ոստան ավանի մասին եղածը։

ՓԱՌԱՀԵՂ ՈՒ ՊԱՆԾԱԼԻ ՍԻՐԻԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐՆ ԱՂԹԱՄԱՐ ՔԱՂԱՔՈՒՄ Է, ԵՎ ՈՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՐԵՐԸ ԲԵՐԵՑ ՀԵՌԱՎՈՐ ԵՐԿՐԻՑ, ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԱՍՏԱՊԵՍ ԿՀԱՅՏՆԵՆՔ ԻՐ ՏԵՂՈՒՄ

Հոյակապ, հռչակավոր և մեծահրաշ Աղթամար քաղաքի շինության ժամանակ մեր փրկիչ Հիսուսը զորացրեց իր օծած Գագիկի բազուկը՝ նեղելու Իսմայելի գազանաբարո ցեղը, որին [Գագիկը] իր ձեռքով կապեց կաշկանդեց, հաստատ նպատակադրումով և պատերազմելու զորավոր արիությամբ։ Ասես սանձերով նրանց կզակը ճմլեց, թոշնեցրեց, սկսած Մարաստանից, Պարսկաստանից և ամբողջ Ատրպատականից, մինչև Խուժաստան։ Ում որ կամենում էր, տալիս էր, իսկ որին չէր ցանկանում, ազատ էր աբձակում,ուրիշներին միմյանց վրա էր գրգռում, և նրանցից հազարներին ու տասնյակ հազարներին սպանում էր իմաստության սրով, մյուսներին հանդիպելով պատերազմում, տալիս էր սրի բերանը և անխնա կոտորում, եռբեմն անձամբ և երբեմն զորքի միջոցով։

Այս աննելուց հետո արքան պատերազմի ելավ նաև Ասորեստանի դեմ և գրավեց բազում գավառներ ամրոցներով հանդերձ։ Եվ Ասորեստանի դռների մոտ, տեսնելով Աղձնիքի իշխանատան մի ամրոց, Կոտոմ անունով գյուղում, որը սեփականել էր Ջուրարիկ կոչված ցեղը, սրան իսպառ չնչելով, կորցրեց և ամրոցի շինությունը հիմքից տապալելով, նրա քարերը վերցրեց բերեց ծովի ալիքների վրայով ու տվեց սուրբ եկեղեցու շինության

www.a-pdf.com

համար։ Եվ կատան ձև ունեցող պղծալից շենքի փոխարեն կանգնեցրեց փառքի տաճարը։ Այստեղ կատարվեց մարգարեի ասածը՝ «Թե որ պատվականը անարժանից զատի, իմ բերանի պես կդառնա», ուր միշտ հանգչում է սուրբ Հոգին՝ մարդկանց ընծայելով անստվեր լույս։

Եվ քանզի մեծարվեստ գործի ճարտարապետն էր Մանվելը, իմաստությամբ լի և իր գործում զորավոր մի այր, որին հիշատակեցինք վերևում հրաշակերտեց եկեղեցին զարմանալի արվեստով։ Կրոնավորը, որին հիշեցինք նախապես, օգնեց փորագրելու քարերի վրա ճշգրիտ նմանությամբ, սկսած Աբրահամից ու Դավթից, մինչև մեր տեր Հիսուս Քրիստոսը, նաև մարգարեների ու առաքյալների դասերը, ըստ յուրաքանչյուրի աստիճանի։ Եկեղեցու հորինվածքի որմնաշարերի վրա ստեղծագործելով շարակարգեց նաև երեների խումբը և թռչունների երամները, ինչպես նաև գազանների, խոզերի ու առյուծների, ցուլերի ու արջերի շարքերը՝ միմյանց դեմդիմաց, զարդարված, հիշեցնելով ապրելու համար նրանց կռիվը, ինչը հույժ ըղձալի է իմաստուններին։ Եկեղեցու իրանը պատեց այն շրջառող հոյակերտ գոտիով, որը զարդարեց նուրբ քանդակներով։ Նկարեց խաղողի որթեր՝ լցված այգեգործներով, գազաններով ու սողուններով։ Նրանց կերպարանքներն այլևայլ զանազանությամբ, ամեն մի մասով դրսևորում են իրենց տեսակները։

Իսկ չորս կողմից, սուրբ խորանների վերևում, ճշգրտորեն նկարեց չորս ավետարանիչների պատկերները, որոնք արժանավորապես սուրբ եկեղեցու ուրախության պսակն են և ավելի բարձր են, քան բոլոր սրբերը։

Խաչի հետ նկարակերտեց նաև պատկերը Փրկչի, որը մեզ համար մարմնացավ, երևալով որպես մարդ։ Այն արևմտյան խորանի կամարների մոտ է։ Փրկչի դիմաց՝ ճշգրիտ նմանահանությամբ, հորինեց նաև Գագիկ արքայի փառահեղ պատկերը, որը մեծապանծ հավատքով բարձրացրել է եկեղեցին բազուկների վրա, ինչպես մանանայով լի ոսկե սափոր կամ որպես անուշահոտությամբ լցված ոսկե տուփ։ [Գագիկը] Տիրոջ առաջ կերպագրված է այնպես, որ աներ թողություն է խնդրելու իր մեղքերի համար։ Թեպետև մեր խոսքը վերաբերում է պատմությանը, սակայն [ասենք, որ] թագավորը չզրկեց խնդրված պաբգևներից, հուսալով գալիք հատուցման։

Ապա հարավային կողմի խորանին՝ եկեղեցու դռան վերևում հորինեց գահի տեղ, որը բաբձրից դեպի ներքև ունի կամարաձև սանդուղք՝ աստիճաններով, որպեսզի այն գառնա թագավորի աղոթքի տեղը, հեռու մարդկանցից, ուր ինքն իր մեջ խորասուզվելով, անզբաղապես խոսելու է Աստծու հետ։

Իսկ ներսի կողմից հբաշալիորեն հարինեց արբուրյուն սրբոցը՝ նկարապաճուճ ներկերով, աբծաթապատ դռներով և լի ոսկեհուռ զարգերով, ասկեզօծ պատկերներով, պատվական ակներով, մարգաբատահյուս զարդերով և պես-պես, երևելի ու փայլուն ապաքով։ Այսպիսով նա հրաշափառապես մեզ ցույց տվեց երկրորդ Երուսաղեմը, ինչպես և վերին Սիոնի դուռը։

Այստեղ կատաբվեցին մարգարեության նվագները, թե «ուրախ լեր, ծարաւ անապատ» և զարձյալ, որ «Երկիրը պիտի ցնծա, և ուրախ պիտի լինեն բազում կղզիներ»։ Աբգարև, սա եբբեմն ծարավ անապատ էր, իսկ այժմ՝ մեծ Աստծու քաղաք, որը ծավանամ է երկու մշտաբուխ աղբյուրներից, սուրբ ավազանից և Աստծու Որդու անապական արյունից՝ արբեցնելով հոգով ծարավիներին»։

Իսկ սրա Նավակատիքի օրը շքեղացնելով, եպիսկոպոսների և իշխան- www.a-pdf.com
ների խմբերով կատարեց ուրախության մեծ տոն՝ մեծապանծ փառքով, հի-շատակ [թողնելով] սերնդեսերունդ։ Արդ ասացինք սուրբ եկեղեցու մասին եղածը։

ԴՎԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ՄՈՏ ԱՐԱԲԱՑՈՒ ԴԵՄ ՄՂԱԾ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾՆ ԱՐՔԱ ԳԱԳԻԿԻ ՔԱՋԱՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՈՒ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես ավելի վերևում պատմեցինք Պարսից երկրի անիշխանության մասին, ըստ գրվածի, թե «Իսրայելը դատավոր չուներ», և յուրաքանչյուրոք հավանում էր իր կամեցածը։ Այս ժամանակ արաբացի ցեղից մի մարդ, որը հմուտ էր պատերազմներում, զինվորական գործերում, բարձրավիզ ամբարտավանությամբ վերաբերվելով, կամեցավ ինքնագլուխ լինել։ Ուստի զորք գումարեց, հանկարծակիորեն մտավ ու անցավ Գողթնաստանով ու Նախճավան ավանով։ Նա, հնազանդեցնելով նաև Շարուր կոչված գավառի զորքը, եկավ հասավ մինչև մեծ մայրաքաղաք Դվինը։ Ապա փութապես հարկապահանջներ ու ոստիկաններ ուղարկեց Այրարատյան երկիրը և մինչև Արագածոտն կոչված [գավառը], որը Աբասի՝ Սմբատի որդու կալվածների մի մասն է։ Այն գցեց իր իշխանության տակ։ Եվ քանզի Աբասը չէր կարող ընդհարվել իր վրա բռնացողի հետ, իմաց տվեց [Գագիկ] արքային սուրհանդակների ու հրովարտակների միջոցով, որպեսզի գա և փրկի իրեն հրոսակների հարկապահանջ բռնություններից։ Եվ [Գագիկ] արքան, գթաշարժվելով արյան հարազատությամբ, ելավ գնաց բազում զորքով՝ հարազատի վրեժն առնելու։

Իսկ Աբասը՝ Սմբատի որդին, հպարտությամբ եկավ իջավ Վաղարշապատ քաղաքի դաշտը և կամեցավ նախքան Հայոց մեծն թագավոր Գագիկի գալուստը՝ փառք վաստակել իր անձի համար։ Այլազգի այրը, քանզի գիտեր նրա մասին, որ հմուտ չէ պատերազմներում, ելավ նրա դեմ սակավաթիվ զորքով և ջարդեց ու փախուստի մատնեց նրան։ [Աբասի] զորքից սրի քաշեց 400 տղամարդու, կողոպտեց զորքին ու երկրի բնակիչներին, հրի մատնեց այն աշխարհը և վերադարձավ քաղաք՝ մեծ հաղթությամբ ու բազում ավարով։ Իսկ Աբասը այնուհետև փախավ և մազապուրծ ընկավ Վրաց աշխարհը։

[Գագիկ] արքան լսելով այս գույժը, փութով հասավ Դվինի մատույցները, Երասխ գետի եզերքը...

Այնժամ արքան զինավառվեց արիությամբ, առավ հավատացյալների բանակը, հանդարտ առաջ շարժվեց զորագունդ զորագնդի ետևից, պատշաճաբար դասավորեց իր զորքը ու պատրաստվեց մարտի։ Այնուհետև սպառազինված խմբերն իրար խառնվեցին, [լսվեցին] ճայթյուններ, թնդյուններ, երևացին ասես ամպերից ցած թափվող փայլատակումներ։ Օրն սկսեց դառնալ ահավոր։ Այնժամ արքան Բարձրյալի օգնությամբ զորացավ իր զորքի հետ, մանավանդ որ Հայոց սուրբ հայրապետը՝ մեծն Եղիսեն, բարձրացել էր Գինաբլրի կատարը քահանայական դասով հանդերձ և սուրբ Մովսեսի պես ձեռքերը չիջեցրեց ներքև, մինչև երկրորդ ամաղեկի պարտվելը։ Ուստի Հայոց զորագնդերը գերազանցում էին միմյանց։ Արքան եկավ և հանդիպեց այլազգիների զորքի կենտրոնին, որտեղ կային մոտ չորս հազար հետևակ այրեր՝

ըմբշամարտիկ զինվորներից։ Նրանց հետ ընդհարվելով՝ արքան, ինչպես կայծակն է հարվածում եղեգնին, այդպես խորտակեց այլազգիների բանակը։ Եվ գետին ընկածների բազում դիակներ կուտակվել էին դաշտի երեսին, ինչպես հնձի ժամանակ ցորենի խուրձերի դեզեր։ Այնտեղ սրախողխող և գետավեժ արվելով սպանվեց ութ հազար մարդ, իսկ շատերին նրանցից ձերբակալեցին։ [Արքան] սմանց շղթայակապ ուղարկեց անառիկ Դարույնք։ Իսկ 200-ից ավելի կամ պակաս մարդկանց բաշխեց նրանց արյունը, հրամայելով արձակել, որպեսզի գնան քաղաք և պատմեն՝ ինչ որ տեսան...

ՀԱԴԱՄԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՈՒ ԱՂԲԱԿ ԳԱՎԱՌԻ ՎՐԱ ԴԵԼՄԻԿՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԵՎ ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՆԵՐՈՎ ՀԱՅՈՑ ԶՈՐՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Այն ժամանակ դելմիկների զորքի մի մասը առաջ խաղաց և կամեցավ անցնել Ասորեստան աշխարհը։ Նրանք հասան Հադամակերտ քաղաքը, Աղբակ գավառը և ինչքան կարող էին, կողոպտեցին ինչքը, գերեցին կանանց ու երեխաներին։ Այս լսելով՝ [Գագիկ] արքան հրամայեց իր զորքին՝ հետամուտ լինել նրանց ետևից քաջապինդ հեծյալներով, որոնք արքունուստ ստանալով հրամանը, աճապարեցին և վաղընթաց հասան նրանց, ովքեր անհոգությամբ մնում էին Անձևացյաց աշխարհում։ Եվ բախվեցին դելմիկների նիզակավոր քաջամարտիկ զորքին, որը դարձավ հայոց երիվարների ոտքի կոխան, ինչպես դաշտի խոտը։ Նրանց վրա սուր գործադրելով՝ կոտորեցին գրեթե երկու հազար մարդու։ Եվ ավարի մատնելով նրանց բանակը՝ փրկեցին նաև գերիներին ու վերադարձան յուրաքանչյուրն իրենց տեղերը՝ մեծ հաղթությամբ։

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾՆ ԱՐՔԱ ԳԱԳԻԿԻ ՊԱՏԿԵՐԻ, ԱՆՁԻ ԵՎ ՎԱՅԵԼՉՈՒԹՅԱՆ [ՄԱՍԻՆ]

Եվ քանզի Աստված կանխապես գիտեր և իրեն հայտնի էր, որ նա այդպիսին է լինելու, հենց սկզբից, մոր որովայնում նրա հոգին լցրեց իմաստությամբ։ Այդ պատճառով էլ [Գագիկին] շնորհեց լուսազարդ պատկեր և վայելուչ հասակ, անհամեմատ՝ բանական կարգի բոլոր մահկանացուների մեջ։ Ունի ուլացիկ հասակ, վայելուչ ու պայծառ երես. Նրա գլխի մազերը թխակերպ են, գանգրագեղ գիսավորությամբ, թանձրախիտ խառնությամբ և ուղիղ ձևով հավաքված են փառահեղ ճակատին։ Բարակ, կամարաձև ու մրազարդ հոնքերը, արտևանունքները՝ աչքերի բիբերով հանդերձ՝ ինչպես շուշանը հովիտներում, ծաղկելով ծավալվել են հրաշազարդ հոբինվածքով։ Քիթը երկար է ու վայելուչ, ականջները՝ գլորակլոր ու գլորամետ դեպի բարությունը, իսկ դեմքը՝ պայծառ ու հրաշալի լույսի նման։ Նրա շրթունքները նման են կարմիր լարի, ատամները միմյանց մոտ են և մաքուր։ Նրա նորածիլ մորուսը մանուշակի պես ծաղկել է գանգրագեղ այտերին, որով տեսնողներին նա երևում է հրեշտակի կերպարանքով։ Հիրավի, նրա այդպիսի շնորհագեղ վայելչությանը վերևում ասված պարզ է, որովհետև նա Հովսիայի պես, թագավորելով նոր Իսրայելում, նրանից էլ առավել, լրացրեց սուրբ եկեղեցու կարգերը։ Ուստի, հույժ սիրելի է ինձ համար այս ժամանակ Հնդկաց աշխարհից և պատվական քարերի քաղաքից, մանավանդ քար-

www.a-pdf.com

www.a-pdf.com

գործներից ու մարմարագործներից և թեքեացոց վաճառատեղերից գնել առակու նման պատվական քարեր ու նրա թագի հետ ընդելուզել՝ [նրա] պոռակի զբոսանքների ժամանակ, մանավանդ երբ Փրկչական պասի՝ տեքուններին, որպես փեսա, գուրս էր գալիս առագաստից՝ արուսյակի նմանությամբ և գույնզգույն քարերով ու մարգարիտներով հյուսված զարդերը՝ խրոխտ ձիու գլխին, լանջին ու գավակին, ճառագայթում էին լույսի ճաճանչներ։ Այլև նրա առջև արվող հրաձգություններից առհասարակ սարսռում էին բյուրավոր մարդիկ։ Ամեն աչք բաղձում էր տեսնել նրան, այնտեղից ամենքն աղաղակում էին՝ «Տեր, ապրեցրու թագավորին, լսի՛ր մեզ»։ Եվ արդարև, Աստծու օծյալը բարձր էր, քան երկրի բոլոր թագավորները, արժանի էր այսպիսի և սրանից ավելի մեծ գովասանության։

Որովհետև նա եղավ շինության և խաղաղության պատճառ, ավազակներին այրող ու դուրս վանող։ Նա արդարությամբ էր անում իրավունքն ու գատաստանը, կտրում էր ամբարտավանների բարձրաթռիչ թևերը։ Նա բարձրաբերձ ամրոցներից ցած իջեցրեց բազում որջացածների, ապստամբների ծուղակ էր, որից փրկվելու հնար չկար։ Նա թշնամիների գաղտնի նենգությունները նախատեսող և դուրս կորզող կարթ էր։ Նա իր սիրելիների և հնազանդների անհատնում պարգևն էր, այլև անուշահոտ բուրաստան՝ լի ամբողջապես պայծառ ծաղիկներով։ Նա իր տան մեջ կանաչ ու ոսկեսաղարթ ծառ էր՝ լի ոգելից սիրով, և ուրախաբեր ավետիք էր։ Իր որդիների համար բարության կրթարան և իմաստնության մշտաբուխ աղբյուր էր, բոլոր վարպետների գուրը բացող և անվրեպ չափանիշ։ Նա բռնավորների սպառնալիքներին, բքաբեր և ահարկու հողմերին ընդդիմակայող բարձր լեռ և անդրվազելի վեմ էր։ Նա այլազգիներից իրեն հղված խարդախ ու կասկածելի հրովարտակների ու պատգամների ոչնչացնող հուր էր։ Նա բաբելացի, մարաց, պարսից, բյուզանդացի ու բարբարոս բռնավորների պատերում շիկացած և հարաշարժ մեխ էր։ Նա իմաստասիրներին քննող էր, ծովի խորք էր և երկնի անհաս բարձրություն։ Նա բազմած էր ուղղախության ոսկեզարդ գահին՝ պատվելի ճոխությամբ, իբրև առյուծ, զորավոր հավատով աճելով ի փառս Աստծու։ Նա երեկույթների ոսկեզարդ սենյակներում քաղցրանինջ քնի մեջ նիրհող վիշապ էր, և նրա հզոր զորության ահը ընդգրկել էր ամբողջ Հայաստանը, և ինչպես պղնձե պարիսպը, անմերձենալի էր պահում թշնամիների երկյուղից ու գազանաձիգ նետերից։ Նա իր դրացիների և իրեն հնազանդվողների վրա ապահով հովանի էր...

www.a-pdf.com

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ

(Մոտ. 1000—1073)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԺԱ

ԱՅՆ ԿԱՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՂԱՎ ԲԱՍԵՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՍՄԲԱՏԻ ԿՈՉՎԱԾ ԼԵՌԱՆ ՎՐԱ

Այս տարիներին երկնքի բարկության դուռը բացվեց մեր աշխարհի վրա. Թուրքեստանից եկան բազմաթիվ զորքեր, որոնց երիվարները սրընթաց էին արծիվների պես. նրանց ամբարկներն ամուր էին ինչպես ապառաժ։ Նքանք սաստիկ սպառազինված էին. աղեղները լարված, նետերը միշտ սուր. երբեք չարձակեցին իրենց կոշիկների կապերը։ Հասնելով Վասպուրական գավառ՝ քաղցած ու անհագուրդ գայլերի նման հարձակվեցին քրիստոնյաների վրա և հասնելով մինչև Բասեն գավառը ու Վաղարշավան կոչված մեծ դաստակերտը, սրով, հրով ու գերությամբ քանդելով ավերեցին քսանչորս գավառ։ Կսկծալի և անսպառ ողբ ու արտասուքների է արժանի այս պատմությունը։ Նրանք սուրացին ինչպես առյուծներ և առյուծների կորյունների պես անողորմաբար փռեցին շատերի դիակները՝ որպես գիշակուր գազանների ու երկնքի թռչունների, և նույն նպատակով էլ ցանկանում էին գալ Կարին քաղաքը։ Բայց նա, ով ծովին սահման է դրել, ասելով՝ «Մինչև այստեղ պիտի գաս, ավելի այն կողմ չպիտի անցնես. այլ հենց այս տեղում քո ալիքները պիտի խորտակվեն նորից քո մեջ», թանձրամած խավար փռեց նրանց առաջ և արգելակեց նրանց առաջընթացը։ Նա այս արեց իր անպատում իմաստությամբ, որպեսզի նրանց ահով մենք խրատվենք, իսկ նրանք էլ հասկանան, որ այն, ինչ կատարեցին, իրենց զորությամբ չկատարեցին, այլ այն ձեռքը, որ հզորապես արգելեց իրենց, այդ նույն ձեռքն էլ հենց իրենց գնալու ճանապարհն էր հաջողել։

Այժմ նա թափեց մեզ վրա իր բարկությունը օտար ազգի ձեռքով, որովհետև մեղանչեցինք իր դեմ, բայց դարձյալ խղճաց ու նոր փորձությունների չենթարկեց մեզ, որովհետև ողորմած է. այդ պատճառով էլ ընդմիշտ բարկացած չի մնում և հավիտյան ոխ չի պահում։ Մի կողմից՝ մեզանից հարկադրվում է իրավացի դատաստան անել, քանի որ արդար դատավոր է, մի կողմից՝ շտապում է ողորմել, որովհետև գթառատ հայր է, իսկ մյուս կողմից էլ՝ ցավում, ափսոսում է, քանի որ ողորմած Աստված է։ Ինչպես և հենց այստեղ երկուսն էլ ցուցաբերեց մեր նկատմամբ. նախ արժանահատ վրեժով ծանրացրեց իր ձեռքը մեզ վրա, ապա դարձավ ու փութապես ցրեց իր բարկությունը, որպեսզի մեզ իսպառ չբնաջնջի։ Բայց մենք վարակվեցինք Փարավոնի և նրա ախտակիցներից ամենահիմարի կարծրասրտությամբ, որը երբեմն տանջվելով խոստովանում էր, ասելով՝ «Աստծու մատն է այս», բայց երբ անցնում էր Աստծու բարկությունը, ամբարտավանությամբ հզփացած ասում էր. «Տիրոջը չեմ ճանաչում և իսրայելացիներին բաց չեմ թողնի»։ Երբ ոբ ստացավ վերջին պատիժը՝ դառնալով խորխոր անդունդների բնակիչ,

www.arpdf.com

անզգամն ստույգ ասաց, թե՝ «Աստծու մատն է այս». ինչպես որ ձեռքը տասը մատներով է կատարյալ գործ կատարում, այնպես էլ այնտեղ՝ մեկից սկսելով՝ տասով ավարտեց խրատների պատիժը, և հետո սա բաց թողեց իսրայելացիներին։

Այժմ էլ մենք բարկությունը հրահրելուց, կրակը բորբոքելուց և եղեռնալի աղետները մեզ վրա շարժելուց հետո սաստիկ ահաբեկված ու դողահար զարհուրեցինք. բայց Աստված ողորմեց, խավարով փակեց նրանց ճանապարհը և խափանեց անօրենների արշավանքը։ Կասկածելի համարեցինք մենք այդ բարիքը և տմարդի գտնվեցինք շնորհակալության համար. մինչդեռ անհրաժեշտ էր մեր եղբայրների կրած պատժի շնորհիվ ողջախոհ դառնալ ու շտապել սովորել մարգարեի փրկարար խրատը. «Վե՛րջ տվեք ձեր չարիքներին և սովորեցե՛ք բարիքներ գործել» ու սրան հետևող խոսքերը և մեր շիտակությամբ հաշտեցնել Աստծուն, գեհենաբորբոք պատուհասը մարել ու բարկությամբ բարձրացած ձեռքը իջեցնել, որ մեզ ների. մենք այդ մոռացանք, մտքով իսկ չանցկացրինք, և նա, ով անօրինելու էր, անօրինում էր, իսկ որը անիրավելու՝ անիրավում, այնքան որ վարազների նման ինքներս մեզ սրի վրա մղեցինք՝ բոլոր հանցանքները մեզ վրա կրելով։ Մեզ թվում էր, թե նրանք, մեղավոր լինելով, պատիժը կրեցին, իսկ մենք մեր արդարության պատճառով փրկվեցինք, և չէինք մտաբերում աներունական պատվերն ու զգաստացնող այս խրատը. «Այն գալիլեացիները, որոնց արյունը Պիղատոսը խառնեց նրանց զոհերի հետ, կարծում եք, թե բոլոր մարդկանցից ավելի մեղավո՞ր էին, ո՛չ, եթե չապաշխարեք, ամենքդ էլ նույնպես կկորչեք»։ Իսկ մենք վարվում էինք Ամովսի խոսքերի համաձայն, որոնցով նա նախատում էր իսրայելացիներին, որոնք զտված գինի էին խմում, անուշաբույր յուղերով փափկանում, փղոսկրյա գահավորակների վրա հանգըստանում և այլն, բայց չէին ցավում Հովսեփի թշվառության համար, որովհետև Աստված պահանջում է, որ երբ ոմանց տանջանքների է ենթարկում, մերձավորները նրանց վշտակից լինեն՝ «լացողների հետ լաց»։ Բայց նրանք սրա հակառակն էին անում. մի արյունից էին, բայց Հովսեփի ցեղի գերության համար չէին ցավում, դրա համար էլ մարգարեն երգելով ամբաստանում է նրանց։ Այդպես էլ մեզանում եղավ։

Մեր՝ չորս հարյուր իննսունյոթ թվականին, որը մեր գերության երկրորդ տարին էր, Պարսից աշխարհից բարկությամբ լեցուն դառն մրուրը ահեղ ծփանքով դարձյալ եկավ ու լցվեց Կարնի ու Բասենի ընդարձակ դաշտերը, և այդ հեղեղի ցայտքերը հասան-բռնեցին երկրի չորս անկյունները. դեպի արևմուտք՝ մինչև Խաղտյաց գավառը, դեպի հյուսիս՝ մինչև Սպեր, մինչև Տայքի ու Արշարունյաց բերդերը, իսկ դեպի հարավ՝ մինչև Տարոն, մինչև Հաշտենից գավառն ու Խորձենի անտառները։ Տասնչորս օր դադարառնելով ու ծովանալով՝ ծածկեց լեռներն ու մացառուտները, բռնեց ամբողջ աշխարհը։ Ինձ թվում է, որ այս եղավ այն անապակ գինուց, որ մանուկ Երեմիան, իր տեսիլքի մեջ ոսկի բաժակով մատուցվակելով, խմեցրեց թագավորներին, ազգերին, քաղաքներին, իշխաններին ու նրանց զորքերին, իսկ հետո՝ նաև Սիսակա տանը։ Ահա այդ մարգարեությունը ստույգ կատարվեց։ Հայոց աշխարհը խմեց այն անապակ գինուց և հարբեց, հարբեց չարաչարս և թմրելով հիմարացավ, խմեց այնքան, որ բոլոր պատուհասներն ընդունեց իր վրա. և այժմ ընկած է բոլոր ճանապարհների խաչմերուկներում մերկ, խայտառակված, և կոխկրտում են նրան նախատինքով ճանապարհների բո-

www.a-pdf.com

լոր անցորդները։ Նլած հայրենի աշխարհից, օտարացած ծանոթներին, հեռացած ընտանիքից, բարեկամներից ու ազգականներից, դարձել է գերի ու կալանավոր բոլոր ազգերին։

Ժամանակն է մարգարեի այն խոսքն ասելու, թե՝ «Թրթուրի մնացորդը մորեխը կերավ, մորեխի մնացորդը ջորեկը կերավ, իսկ ջորեկի մնացորդը՝ գրվիճը»։ Սրանք էլ մեզ են վերաբերում, քանի որ մարգարեների բոլոր կանխագուշակությունները մեր նկատմամբ կատարվեցին։ Այժմ այն թրթուրն ու մորեխն անցել են, իսկ ջորեկն ու գրվիճը սրանք են, որոնց մասին մեր այս պատմությունն ենք սկսել։ Առաջին անգամ երբ պարսիկներն ու այլ խուժադուժ հեթանոս ազգեր եկան և մարդակոտոր սպանդով բնաջնջեցին շատ գավառներ և բազում ավար ու գերի առած՝ գնացին իրենց աշխարհը, ավետիք տվին ազգերին ու թագավորներին և նրանց հրավիրելով՝ ասացին մարգարեի նման. «Անապատի գազաններ, եկեք կերե՛ք այս անտառում եղածը»։ Իսկ հաջորդ տարվա սկզբին աղեղնավոր ու սուսերամարտիկ զորքերի անհամար բազմություններ հավաքվեցին, ինչպես արծիվները կերակուրի վրա, և մեծ խրախուսանքով՝ շտապ մտան մեր աշխարհը սեպտեմբեր ամսին, սուրբ Խաչի տոնի չորեքշաբթի օրը։ Այս ժամանակը մեզ համար եղավ ողբ ու վայերի պատմություն, և իմ այս երկն էլ հրավիրում է ամենքին կոծի։ Եթե նինվեցիք, մարդարեի սպառնալիքի և այն բանի պատճառով, որ տարաշխարհիկ, բոլորին անծանոթ ու աննշան մի մարդ էր մտել իրենց քաղաքը, այնքան ահաբեկվեցին, որ թագավորից սկսած մինչև ջրաղացպանը հավասարապես կոծեցին, ամենքը քուրձ հագած ու սևազգեստ, ամենքը կերակրից կտրված՝ իրենց բռնադատում էին առատանալ ողբով, այլև եղերամայր կանանց էին հրավիրում իրենց ձայնակցելու. «Թերևս,— ասում էին,— Աստված գթա, և մեր դեմ ունեցած նրա բարկությունն անցնի», հապա մեր կյանքը որքա՜ն ավելի ողբալի է, որ ոչ միայն սպառնալիքը, այլև բարկության պատուհասն է վրա հասել ու կատարվել. մենք չարաչար տանջված, կործանված՝ աշխարհին տեսարան ենք դարձել, ինչպես ասել է առաքյալը սրբերի մասին, ու մեր ետևից ազգեազգ թողել ենք միայն տխուր պատմություն, քանի որ մեր քաղաքներն ավերվել են, տները՝ այրվել, ապարանքները հնոցների են վերածվել, իսկ արքայաշեն դահլիճները՝ մոխրի։ Տղամարդիկ կոտորվել են հրապարակներում, իսկ կանայք տներից քշվել գերության. կաթնակեր երեխաները խփվել են քարի, և թառամել է պատանիների գեղեցիկ դեմքը, կույսերը խայտառակվել են հրապարակներում, իսկ երիտասարդները ծերերի առաջ սրախողխող եղել. պատվական ծերերի դիակները, արնաշաղախ ալիքներով, թպրտում են թավալգլոր։ Թշնամիների սրերը բթացան, ձեռներն ուժասպառվեցին, ազեղների լարերը կտրվեցին, կապարճները դատարկվեցին նետերից, իրենք հոգնեցին, բայց նրանց սիրտը խղճմտանք չընկավ։

Ո՛վ քո ողորմությանը, Աստված, որ այնքան հանգուրժեցիր անօրեններին խրոխտանալու քո՛ արոտի հոտի վրա։ Հիշի՛ր քո ժողովրդին, որին ստացար քո Միածնի գալստյան սկզբից և փրկեցիր օծյալիդ արյամբ։ Ինչո՞ւ մերժեցիր մեզ բոլորովին, սաստիկ բարկացար և մատնեցիր մեզ անօրեն, դժնդակ ու ապստամբ մարդկանց ձեռքը։ Մի՛ հիշիր մեր մեղքերը և մեր մեղքերի պատճառով մի՛ դարձրու քո երեսը մեզանից, այլ հիշի՛ր, որ տիրում էիր մեզ քո հզոր ձեռքով ու բարձր բազկով, և քո անունը կոչված էր մեզ վրա։ Այժմ ահա դու բարկացար, և մենք մեղանչեցինք, որի պատճառով

www.e-pdf.com

գերությամբ թափանցեցինք շատ ազգերի մեջ ու պղծվեցինք բոլորս էլ։ Հողմերը ցրեցին մեզ, և չկա մեկը, որ օրհնի քո անունը և մոտծի ապավինել քեզ, որովհետև դարձրիր քո երեսը մեզանից և մատնեցիր մեզ մեր մեղքերի պատճառով։ Մի՛ մնա հավիտյան բարկացած և ժամանակին մի՛ հիշիր մեր մեղքերը։

Ավա՜ղ այն օրվա լուսանալուն, քանզի այն լույսը, որ արարչության առաջին օրը Աստծու խոսքով անմարմին տեսքով գոյացավ, իսկ չորրորդ օրը մարմնով պարուրված՝ բաժանվեց լուսատուների, որոնք դարձան ցերեկվա ու գիշերվա իշխաններ, աշխարհի հավիտենական ճանապարհորդներ, մեկը մարդուն է գործի հանում, իսկ մյուսը գազաններին համարձակություն տալիս, այսօր կեսօրով մեզ համար խավարի փոխված՝ վերածվեց գիշերի, և հեթանոս ազգերը, որ վաղուց ի վեր իրենց խշտիններում գազանաբար մռնչում էին, ըստ մարգարեի, և Աստծու հոտից կերակուր ուզում, երբ գիշերացավ այն օրը մեզ համար, դուրս ելան տեղից ու տարածվեցին երկրի երեսով. գտան բազում որս, կերան, հագեցան և դեռ իրենց զավակներին էլ բաժին թողին շատ տարիների համար։ Թեպետ ամենուրեք նրանց համար բավականաչափ պատրաստի որս եղավ, որովհետև երկիրը դալարագեղ դրախտի պես պտուղներով լի տարածված էր նրանց առաջ, բայց ամենից ավելի Մանանաղի գավառում, այն լեռան վրա, որը կոչված է Սմբատաբերդ, քանի որ այնտեղ հավաքվել էին փախստականների անթիվ բազմություն և անասուններ, որոնց թիվ չկար։ Անօրենները հարձակվելով ավերեցին բերդերը ու ներս մտնելով՝ բոլորին սրակոտոր արին։

Ողբալի էր ու սրտաճմլիկ այն տեսարանը, որովհետև նրանցից ոմանց, որոնց ձեռք էին գցում, սրամահ էին անում, որոնք, առապար տեղեր մտնելով, ամրանում էին, նետերով խոցոտելով էին սպանում, իսկ շատերին, անձավների վրա բարձրացած, մեծամեծ քարերով էին կոտորում, որոնց դիակները գլորելով ու կտրատված փայտերի նման միմյանց վրա դիզելով՝ դիմացի ձորն էին լցնում։ Վա՜յ և ավա՜ղ այն օրվա դժնդակ լույսին, քանզի զինավառված ու բարկությամբ բորբոքված՝ կռվի էին պատրաստվում, վախկոտները թալկացել էին, կանացիները սարսափից խելքներն էին թոցնում, երիտասարդները խիզախում էին, բայց ոչ մի ելք չէին կարողանում գտնել, որովհետև թշնամու պատնեշը բոլոր կողմերից պաշարել էր նրանց։ Չկար այնտեղ սիրելիների սեր, ոչ էլ կարեկցանք բարեկամների. հայրը մոռացավ որդիների գոռթը, իսկ մայրը՝ սերը նորածին մանուկների։ Նորահարս կինը չէր կարող հիշել փեսայի սերը, ոչ էլ այր մարդը՝ գեղեցկությունը ցանկալի կնոջ. լռեցին պաշտամունքի երգերը քահանաների բերաններից, ու կտրվեց սաղմոսների ձայնը սաղմոսողների շրթունքներից. բոլորին առհասարակ պատեց սարսափ ու երկյուղ, շատ կանայք այնտեղ, հղի լինելով, սաստիկ տագնապից վիժում էին երեխաներին. որսորդների պես ասես ցանցերով շրջափակել էին ամբողջ լեռը, մինչև բոլորն էլ թուլացան և ուժից ընկան։

Իսկ երբ իջավ երեկոն, վերցնելով ավարը, գերիներին ու սպանվածների կողոպուտը՝ հեռացան այնտեղից։ Բայց նրանց գնալուց հետո բացված տեսարանը շատ ավելի սրտաճմլիկ էր ու ողբալի։ Բազմաթեւաւոկ էին այնտեղ մահվան օրհասները. ընկածներից ոմանք, դեռևս կենդանի, լեզուները ծարավից պապանձված, թույլ ու նվազ ձայնով ջուր էին հայցում, բայց տվող չկար. ոմանք, չարաչար վիրավորված ու ձայնը կորցրած, ծանր

www.a-pdf.com

էին շնչում, ոմանք, կոկորդից մորթված, դեռևս կիսամեռ լինելով՝ հազիվ խոխռում էին. ոմանք էլ ծանր վերքերից սաստիկ կսկիծ զգալով՝ ոտներով գետինն էին դափում ու ձեռների եղունգներով ճանկռտում հողը: Բայց սրանից ավելի զարհուրելի տեսարան էլ կար, որ նույնիսկ քարերի և այլ անշունչ արարածների ողբ ու հառաչանքն էր շարժում: Որովհետև երբ անօրեններն զերիներին սարից իջեցրին, ծնողների գրկից երեխաներին հափշտակելով՝ նետեցին գետին, որոնց բազմությունից ամբողջ բանակատեղը եռում էր. նրանցից ոմանք խփվելով քարի՝ սպանվել էին. ոմանց կողքերն էին պատառոտվել, ու փորոտիքը թափվել էր գետին, իսկ կենդանի մնացածների կառաչը ո՞ր լսելիքը կարող էր տանել. նրանք, որ կարողանում էին քայլել, այս ու այն կողմ հածելով՝ իրենց մայրերին էին փնտրում, որոնց բարձրաձայն լացին լեռները արձագանքում էին, որոնք դեռ ոտի չէին հաստատվել, ծնկների վրա սողալով՝ կառաչում էին. իսկ սրանցից ավելի փոքրահասակները ոտներով գետինն էին դոփում և սողալով, ձայները նվաղած՝ չէին կարողանում շունչ արձակել և այսպիսի արտաճմլիկ ձայներով ու անվերջ աղաղակելով նմանվում էին այն գառնուկներին, որոնք մայրերից դեռ նոր բաժանված, բնությամբ անհամբեր լինելով՝ անհանգիստ այս ու այն կողմ էին խփվում՝ անդադար ղողանջներով վիրավորելով օդն ու ձանձրացնելով լսողների լսելիքը:

Այս է դառնաղետ քո պատմությունը, ո՛վ լե՛ռ, ամո՛ւր լեռ Սմբատի, բայց ոչ այն, որի վրա կամենար Աստված բնակվել, այլ արյան, ոտնակոխության ու կորստյան լեռ. քեզ չի կարելի նույնիսկ լեռ կոչել, այլ ամբողջ երկրի բնակիչների՝ տիղմի խորխորատ, քանզի քեզ վրա հիմա գազաններ են իջևանում, ցիներն ու անգղները բնակություն հաստատեցին, և աղվեսներն են խմբերով խայտում՝ կերով լիացած: Հերմոնի նման երկնքից իջած ցողով չէր, ո՛վ լե՛ռ, որ պարարտացար, այլ վրադ եղած կոտորածների դիակների արյամբ ու ճարպերով: Ո՛վ լե՛ռ, դու չեղար Սինայի նման միջնորդ Աստծու հետ Մովսեսի խոսակցության, այլ լռեցրիր քահանաներին՝ սաղմոս երգելուց, որոնք աղոթքով խոսակցում էին միշտ Աստծու հետ: Եղիան, մահվանից սարսափահար՝ Հեզաբելից փախչելով, Քորեբ սարն ընկավ ու փրկվեց, մինչդեռ սրանք, քեզ ապաստանելով, մատնվեցին սրի ու աղվեսներին կերակուր գարձան: Ո՛վ լե՛ռ, նման եռ դու Գեղբու [սարին], ուր Իսրայելի զավակներն ընկան, այդ պատճառով էլ տեղին է հիմա այն սարի մասին Դավթի առածը ուղղել նաև քեզ: Սմբատի լեռնե՛ր, ձեզ վրա անձրև ու ցող թող չիջնի, քանզի հագեցաք ձեզ ապավինած այր ու կին մարդկանց առատ արյունով: Սակայն դառնալուր այս պատմությունը այն լեռան մասին, թող որ դադարի, քեզնից շատերից քիչ բան պատմեցի:

www.a-pdf.com

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՑԵՑԻ

(Մոտ. 1070—1140)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Հատվածներ)

...Հայոց ազգիս 503 թվականին [8 մարտ 1054—7 մարտ 1055 թ.] հայոց աշխարհի վրա փչեց դառնաշունչ և մահաբեր քամի։ Պարսից Տուղրիլ սուլթանը, հսկայական բազմությամբ, ինչպես ծովի ավազ, իր մայրաքաղաքից դուրս գալով, անթիվ զորքով շարժվեց եկավ Հայաստան և իջավ Բերկրի կոչվող քաղաքի վրա, գրոհով առավ այն, իսկ բնակչությանը չարաչար կոտորեց։ Ապա ելնելով այնտեղից, որպես հրացայտ սև ամպ, իր մահաբեր կարկտի հետ միասին եկավ հասավ ու պաշարեց Արճեշ կոչվող քաղաքը, որի դեմ ութ օր կատաղի պատերազմ մղեց։ Քաղաքացիները [թշնամու] վիթխարի զորքից [սարսափած], դժվարին պատերազմից ուժասպառ, բազում նվերներով՝ ոսկի, արծաթ, ձիեր ու ջորիներ, մեծ աղաչանքով ու պաղատանքով նրա մոտ եկան, հնազանդություն հայտնեցին և հաշտություն խնդրելով՝ ասացին. «Ո՛վ աշխարհակալ սուլթան, գնա՛ Մանազկերտ քաղաքը գրավիր, որից հետո մենք և Հայոց բովանդակ երկիրը կմտնենք քո ծառայության մեջ»։ Տուղրիլ սուլթանին դուր եկան այս խոսքերը։ Եվ նա իբ հսկայական զորքով ելավ հասավ Մանազկերտ քաղաքը, և նման էր շարժությամբ լցված օձի։ Նա բանակեց և պաշարեց քաղաքը։ Իջնելով Քարագլուխ կոչվող վայրը՝ այնտեղ իջևանեց։ Երբ լույսը բացվեց, նա հրամայեց հնչեցնել պատերազմական փողերը։ Պետք էր տեսնել ահավոր օրը և քրիստոնյաների գլխին եկած դժբախտությունը, երբ պաշարեց Մանազկերտ քաղաքը։ Պատերազմական փողերի ձայնն ու աղմուկը, ապա կռվող զինվորների աղաղակը սասանեցնում էին բովանդակ պարիսպը։ Այժմ ի՞նչ պատմեմ քրիստոնյաների քաղաքի մասին, քաղաքի ողջ բնակչության մասին, որ անվերջ պատերազմ էր մղում և համերաշխաբար նահատակվեց։ Քաղաքի զորագլուխն էր հոռոմոց իշխան Վասիլը՝ Ապուքապի որդին, մի բարի և աստվածապաշտ մարդ։ Նա օր ու գիշեր հորդորում էր, ներտաղնդում ու քաջալերում քաղաքի ողջ բնակչությանը՝ տղամարդկանց ու կանանց, րոլորին կայսրի անունից խոստանում պաշտոն և պատիվ։ Իսկ այլազգիների զորքը բազում օրեր անդադար կռվում էր։ Քաղաքը գրավելու մտադրությամբ այլազգիները ստորերկրյա անցք փորեցին, բայց քաղաքի կայազորի մարտիկները, իմանալով այդ, սկսեցին հակառակ կողմից փորել և գետնափոր անող բոլոր թշնամիներին բռնեցին, (այդ թվում և սուլթանի աներոջը, որի անունը Ոսկեծամ էր), որոնց, պարսպի վրա բարձրացնելով, սպանեցին։ Սուլթանը, տեսնելով դա, շատ տխրեց։ Նա մարդ ուղարկեց Բաղեշ և բերել տվեց տասնհինգ ատիլանոց ահավոր և զարմանալի բաբանը, որը Վասիլ կայսրն էր սարքել տվել Հեր քաղաքի համար։ Երբ այդ վիթխարի բարանը կանգնեցրին, ողջ քաղաքը սոսկաց։ Առաջին հարվածով կայազորի երեք

www.a-pdf.com

մարտիկներ և կրծապահը գետին տապալվեցին: Այն ժամանակ քաղաքում հայտնվեց մի երեց և փութանակի [բաբանի] դեմ կանգնեցրեց մի մեքենա, որը քարի առաջին իսկ հարվածով ջարդեց բաբանի կոզակը: Քաղաքացիները սրտապնդվեցին, որովհետև [թշնամին] սարսափեց: Մի քանի օր անց այլազգիները վերանորոգեցին բաբանը, ամեն կողմից անմատչելի դարձրին այն և սկսեցին հսկայական քարերով հարվածել քաղաքի պարիսպը. բոլոր քաղաքացիները ահ ու դողի մեջ ընկան: Վասիլը, դիմելով բոլոր քաղաքացիներին, ասաց. «Ով կկաբողանա դուրս գալ և կրակի տալ այդ բաբանը, նա ինձնից որպես ընծա կստանա բազում ոսկի և աբծաթ, ձիեր և ջորիներ. իսկ կայսրից՝ պաշտոն և պատիվ: Եթե նա անհավատների զոհը դառնա, ապա նշածս ամեն ինչ նրա ազգականը կամ արդին կստանա, եթե այդպիսիք կան»: Դրա վրա դուրս եկավ մի ֆրանկ և ասաց. «Ես կգնամ և կհրդեհեմ այդ բաբանը: Թող հեղվի իմ արյունն այսօր՝ բոլոր քրիստոնյաների [փրկության] համար, քանզի միմիայն ես եմ, որ չունեմ ո՛չ կին, ո՛չ երեխաներ. որ ինձ վրա լաց լինեն»: Նա մի ուժեղ և անվախ ձի խնդրեց, հագավ զրահը, գլխին դրեց սաղավարտը, ապա մի թուղթ առնելով, այն կապեց նիզակի ծայրին, գրպանը դրեց երեք շիշ նավթ և որպես սուրհանդակ գնաց առաջ: Բոլոր քրիստոնյաների աղոթքին արժանանալով և Աստծուն իրեն զորավիգ ունենալով՝ նա դիմեց դեպի այլազգիների զորքը: Անհավատների զինվորները, թուղթը տեսնելով, նրան սուրհանդակ համարեցին և բան չասացին: Կեսօր էր, սարսափելի շոգ: [Անհավատների] զինվորները քնել էին իբենց վրանների մեջ: Ֆրանկը, մոտենալով բաբանին, կանգնեց և չէր հեռանում այնտեղից. [թշնամիները] կարծեցին, որ կանգնած հիանում է բաբանի մեծությամբ, երբ նա, հանելով շիշը, ջարդեց այն բաբանի վրա: Արծվի պես պտտվելով բաբանի շուրջը՝ նա ջարդեց և մյուս շիշը, ապա նորից շուռ եկավ և բաբանի վրա ջարդեց նաև երրորդ շիշը: [Բաբանը] սարսափելի բռնկվեց, իսկ ֆրանկն էլ դիմեց փախուստի: Նրա արածին ականատես եղած այլազգիների ողջ ճամբարը հարձակվեց նրա ետևից, բայց ֆրանկին հաջողվեց անվնաս քաղաք հասնել: Բաբանը հիմնովին հրո ճարակ դարձավ: Բոլոր հավատացյալները անչափ ուրախացան, իսկ ֆրանկն էլ արժանացավ բոլոր քաղաքացիների նվերներին: Մոնոմախ կայսրը, լսելով նրա մասին, իր մոտ հրավիրեց և պաշտոններ տվեց: Սուլթանը ապշեց ֆրանկի արածի վրա և Վասիլից խնդրեց տեսնել սխրանք կատարողին՝ խոստանալով պարգևներ տալ նրան: Բայց ֆրանկը հանձն չառավ գնալ: Սուլթանը, ոտաթիկ զայրացած, նորից ձեռնարկեց գետնափոր անելուն, մտագիր լինելով պարիսպը տապալել, բայց սրտապնդված քաղաքացիները նրա բոլոր մեքենայությունների բանի տեղ չէին դնում: Երկաթե կեռ սարքելով՝ նրանք թշնամու բոլոր փորողներին դուրս էին քաշում և սպանում: Սուլթանը, տեսնելով դա, խայտառակ եղած վերջ տվեց գործին: Դրա վրա քաղաքացիները բարանի օգնությամբ սուլթանի ճամբարը մի խոզ արձակեցին և բոլորը միասին ձայն տալով՝ ասացին. «Ա՛ռ, սուլթան, այդ խոզը քեզ կին արա, իսկ մենք էլ Մանազկերտը քեզ օժիտ կտանք»: Սուլթանը, լսելով դա, զայրացել, գլխատեց իբեն Մանազկերտ բերողին, իսկ ինքը մեծ ամոթով դեպի Պարսից երկիրը: Ահա Աստծու աղոթածությամբ Մանազկերտ քաղաքը փրկվեց թուրքերի պիղծ ազգի ձեռքից:

Հայոց 504 թվականին [8 մարտ 1055—6 մարտ 1056 թ.] վախճանվեց հռոմոց կայսր Մոնոմախը. հռոմոց թագավորության գահին նոտեց տասնը-

www.apdf.com

չորս տարի։ Նրա փոխարեն թագավորեց քենին՝ կիրա Թոդորան, նա, ով ստացավ Նլեխտոռ մականունը, կիրա Զոեի քույրը, սրրասեր, կույս և շատ առաքինի։ Նա բոլորին կարգադրեց չնեղել այրիներին և ծառաներին, [փախուստի դիմած] բոլոր զրկյալներին վերադարձրեց և նրանց իրավունքները հաստատեց, հրամայեց ազատել բոլոր բանտարկյալներին։ Նա բանտից հանել տվեց հայոց իշխաններին՝ Հարեւի որդիներին, այն է՝ Հարպիկի եղբայրներին. նա հանեց նրանց կղզուց և մեծ պատիվներով ազատ արձակեց, [թույլ տվեց] գնալ իրենց հայրենիքը, Արկնի բերդը, պատվիրելով այսուհետև չմեղանչել։ Նույն տարին իսկ հեռացրին կատապան Պետոսին և նրա տեղ նշանակեցին Մելիսանոսին՝ բարի և անվանի, այրիների և ծառաների նկատմամբ ողորմած, աշխարհաշեն, ամեն տեսակի առաքինություններով օժտված մի մարդու։ Կիրա Թոդորան թագավորական գահին նստեց երկու տարի և երեք ամիս և վախճանվեց բարի խոստովանությամբ։ Թագավորական գահին նստեց Միքայել Ալևորը՝ յոթ ամիս։

Այդ օրերին Հռոմոց երկրից մի իշխան, որի անունը Կոմանոս էր, ահագին բազմության գլուխն անցած՝ եկավ Կոստանդնուպոլսի վրա և, բանակելով Օվկիանոս ծովի այս ափին, մեծ բռնությամբ պահանջում էր Հռոմոց թագավորության գահը։ Դա տեղի ունեցավ հայոց 505 թվականին (7 մարտ 1056—6 մարտ 1057)։ Այն ժամանակ Միքայել կայսրը բովանդակ արևմտյան աշխարհում զորահավաք արեց և իր զորքերի ամբողջ բազմությունն Օվկիանոսով անցկացրեց Խրիսուպոլիս՝ ընդդեմ Կոմանոսի։ Այդ օրը քրիստոնյաների միջև տեղի ունեցավ մեծ և ահավոր պատերազմ. նրանք կատաղորեն կոտորում էին միմյանց, երկիրը ողողվում էր բազում հավատացյալների արյունով։ Կոմանոսը ցասումնալից առյուծի պես մռնչաց և, հարձակվելով, սկսեց հարվածել Հռոմոց կայսեր զինվորներին և սրի քաշելով՝ գլխովին փախուստի մատնեց նրանց։ Նա անողոքարար կոտորեց Հռոմոց բոլոր զինվորներին՝ նրանց բոլորին շրջապատելով Օվկիանոս մեծ ծովի ափին։ Կատաղի պատերազմից Հռոմոց զինվորները նման էին քամուց ընդարմացած մորեխի և լցվելով Օվկիանոս ծովը՝ ջրահեղձ էին լինում։ Բայց շատերը դառն սրով մահ ընդունեցին։ Այդ օրը Հռոմոց զորքից հարյուր տասնհինգ հազար մարտիկ զոհվեց։ [Կոմանոսը գերի վերցրեց] բոլոր իշխանավորներին և տիրացավ թագավորությանը. բոլոր փորձանքներին և անչափ արյուն թափվելուն ականատես եղած պալատի իշխանավորները որոշեցին թագավորական գահը Կոմանոսին տալ, քանզի նա հույների ամբողջ ժողովրդի գլխին մեծ սուգ կապեց։ Պատրիարքն ու Կոստանդնուպոլսի բոլոր իշխանավորները գնացին Կոմանոսի մոտ և նրան բազում երդումներ տալով՝ տարան և նստեցրին Հռոմոց թագավորության գահին։ Հույների երկրում խաղաղություն տիրեց։ Սակայն, այդ տարին երկրում մեծ ավերածություն և հափշտակություններ եղան, որովհետև Կոմանոսի և Միքայելի կողմնակիցները կոտորում էին միմյանց, մինչև որ թագավորական գահին հաստատվեց Կոմանոսը. նա համայն երկրում հրովարտակ արձակեց և խաղաղություն հաստատեց։ Կոմանոսը, սակայն, ավելի մեծացրեց նրանց, ովքեր Միքայելի կողմում էին, քան թե իր համար մարտնչողներին։ Նախքան այդ Հռոմոց իշխաններ Պիշղոնիտն ու Լիպարիտը Միքայելին օգնության էին գիմել։ Հասնելով Ճերճերի՝ նրանք իմացան, որ Կոմանոսն [արդեն] գահ է բարձրացել, և գիշերով բոլորն էլ փախան, ասելով միմյանց, թե «Նալատոը

ձեռքերից է գալիս»: Մի քանի օր անց նրանք գնացին կայսեր մոտ և մեծ պատիվների արժանացան: Ռոմանոս կայսրը հրամայեց իր անունով դահեկան կտրել, որի վրա ինքը նկարված լինի՝ թուրը ուսից վեր բարձրացրած, թե՝ «Թագավորական գահին թրով տիրացա»: Ռոմանոսը, դրանով էլ չբավարարվելով, բազում վատություններ գործեց քրիստոնյաներին: Մի քանի օր անց նա զորահավաք արեց և, հսկայական զորքի գլուխն անցած, ուզեց պատերազմել պածինակների դեմ: Նա գնաց անցավ Տոնավիս գետը և առաջ գնաց՝ ավերելու ողջ Արևմուտքը: Ուր հասնում էր, սրտի չարությունից մռնչում էր գազանի պես, իսկ որտեղով անցնում՝ բազում արյուն էր թափել տալիս: Համայն Արևմուտքում մեծ կոծ բարձրացավ և ամենից շատ՝ Բուլղարների երկրում: Ամառ ժամանակ էր, երբ աստվածասաստ բարկությունը թափվեց Ռոմանոսի զորքերի գլխին, այնքան սարսափելի, որ անկարելի է ըստ արժանվույն նկարագրել նրանց կրածը: Ահա արևմուտքից ամպ բարձրացավ և շարժվեց Ռոմանոսի ճամբարի վրա: Ամպը սև էր և տեսնողին սարսափ էր պատում: Ոչ ոք չէր համարձակվում նայել դրան: Ճայթյուն ու որոտում եղավ և հրացայտ փայլատակումներ: Ապա սկսեց խոշոր կարկուտ տեղալ, որ ջարդուփշուր արեց ճամբարը, ուժգնորեն հարվածեց բոլոր զինվորներին: Նրանք, չիմանալով ինչ անել, մեկ առ մեկ փախուստի դիմեցին: Կայսրը, տեսնելով դա, լցվեց զայրույթով և ստիպված փախստականի նման վերադարձավ: Ամբողջ զորքը իսպառ ցրիվ եկավ լեռներն ու դաշտերը: Տեսնելու բան էր սոսկալի փորձանքը, որ եկավ նրանց գլխին: Անհամար մարդիկ կորան. հայրը կորցրեց որդուն, որդին՝ հորը, եղբայրը՝ եղբորը: Տոնավիս գետի ափին կորավ և կայսրը իր երեք թիկնապահներով, բայց հետո գտնվեց: Երբ նա գումարեց իր զինվորներին, տեսավ, որ նրանց մեծ մասը երկնքի բարկության զոհն էր դարձել: Իսկ ձիերի և ջորիների, ոսկու և արծաթի, այլ սպասների, պատերազմական ամեն տեսակի սարքերի [կորստյան] մասին ավելորդ է խոսել: Այս ամենից հետո Ռոմանոսն [ինքն իրեն] ասաց. «Այս բոլոր աստվածասաստ պատիժները քրիստոնյաների գլխին եկան իմ հանցանքների պատճառով, որովհետև ես իմ մեղքերով բարկացրի Աստծուն»: Գալով Կոստանդնուպոլիս և երկրպագելով Աստծուն, նա իր գործած մեղքերի համար թողություն էր աղերսում: Նա ուզեց հրաժարվել թագավորական գահից և պահեցողությամբ ու զղջմամբ մտնել ապաշխարողների շարքը:

Հայոց 521 թվականին [3 մարտ 1072—2 մարտ 1073 թ.] տեր Գրիգորիսի և տեր Գևորգի միջև վեճ առաջացավ: Տեր Գրիգորիսը տեր Գևորգին հայրապետական աթոռից տապալեց և նրա գլխից առավ քողը. Գևորգը վշտահար գնաց Տարոն քաղաքը, ուր և վախճանվեց: Իսկ տեր Գրիգորիսն եկավ բնակվեց Մուտառասունում, Գուրգենի որդի Գագիկի մոտ:

Այս ժամանակները բռնատիրեց անօրեն և ամենաչար Փիլարտոս իշխանը, սատանայի անդրանիկ որդին. չարաչանչ, պիղծ Նեռի կարապետը՝ դիվային և այլանդակ, վատաբարո այդ մարդը [օգտվելով] Տիոժենի դահընկեցությունից, բռնատիրեց գավառի վրա: Նա՝ անհավատ քրիստոնյան (նրան ոչ հայադավան, ոչ հոռոմադավան չի կարելի համարել), սկսեց մարտնչել քրիստոնյաների դեմ: Թեև հոռոմների նիստուկացը և դավանանքն ուներ, նա հորից ու մորից հայ էր: Մանկությունը նա անցկացրել էր իր հորեղբոր մոտ, Զարմրի-Կաղեան կոչված վանքում, Հարանմաիր գավառում:

www.a-pdf.com

Անապատից դուրս գալով, նա դարձավ անապատի պիղծ։ Տիրելով բազում գավառների ու քաղաքների վրա՝ նա անգթաբար ոչնչացրեց բազում մեծամեծ իշխանների և եկավ հաստատվեց Մշարում։ Նա դիմեց Սասունի տեր քաջ Թոռնիկին՝ [պահանջելով] հպատակություն հայտնել իրեն։ Թոռնիկը՝ Մուշեղի որդին, նրա այդ ապուշ հրամանի վրա ծիծաղելով, ասաց. «Ես նրա երեսն անգամ չեմ ուզում տեսնել»։ Փիլարտոսի ներկայացուցիչները Թոռնիկին ասացին, թե՝ «Նա բազմաթիվ զինվորներով կգա քո դեմ և կավերի, կկործանի քո գավառները»։ Թոռնիկը պատասխանեց. «Ինչքա՞ն զորք ունի Փիլարտոսը»։ Նրանք պատասխանեցին, թե՝ «Շուրջ քսան հազար»։ Թոռնիկն ասաց. «Ես հազար ձիավոր ունեմ, որոնք միշտ հաղորդվում են Աստծու Որդու մարմնով և արյամբ։ Ես համոզված եմ, որ Փիլարտոսն ու նրա բոլոր զինվորները հեռու են և անմասն Քրիստոսի հավատքից, ամեն տեսակի մեծ մեղքերով ծանրաբեռնված»։ Այդ բոլորը գնացին պատմեցին Փիլարտոսին, որը, կանչելով տեր Գրիգորիսին, ասաց. «Թոռնիկը քո փեսան է, գնա և կոչ արա՝ գա ինձ հպատակություն հայտնի»։ Տեր Վահրամը Փիլարտոսի չարաբարության առջև տեղի տվեց, ակամա գնաց Թոռնիկի մոտ և այլևս Փիլարտոսի երեսը չտեսավ։ Նա Թոռնիկին պատմեց իր գալստյան պատճառը։ Թոռնիկն ապշեց ու ասաց. «Այդ ամենալիրբ անօրենը չամաչե՞ց և քեզ որպես դեսպան ինձ մոտ ուղարկեց՝ իր սուտ երդումով հանդերձ»։ Փիլարտոսը, համոզվելով, որ Թոռնիկը չի ուզում իր կոչին ընդառաջ գնալ, զորահավաք արեց և Թոռնիկի վրա շարժվեց։ Թոռնիկն անտեղյակ էր Փիլարտոսի գալստյան մասին, բայց երբ տեղեկացավ, ձայն տվեց իր զինվորներին, ամբողջ Սասունում զորահավաք անելով, հիսուն հազար հետևակ և վեց հազար ձիավոր, նա եկավ Ճապաղջուր։ Նա [դեռ] չէր հավատում, որ Փիլարտոսը կարող է [իր վրա] գալ, դրա համար նա իր ողջ հետևակազորը ետ ուղարկեց։ Ինքը հազար ձիավորով գնաց հայոց Աշմուշատ քաղաքը։ Ալելուա դաշտում նրանք հանդիպեցին Փիլարտոսի զորքերին։ Փիլարտոսի հետ էր ֆրանկների կոմս Ռմբաղատը՝ ութ հարյուր հոգով։ Թոռնիկն ափսոսաց, որ իր հետևակազորը ետ ուղարկեց։ Նա իր մարտիկներին խումբ-խումբ դասավորեց ձախ ու աջ կողմերում, ապա ճակատում, իսկ թիկունքի պաշտպանությունը հանձնեց քաջ Կապոսին՝ երեք հարյուր հոգով։ Թոռնիկն ամենից շատ ֆրանկներից էր վախենում, դրա համար կարգադրեց. «Այնպես արեք, որ մի գունդ գնա ֆրանկների դեմ»։ Եվ ահա Ռմբաղատն իր զորքով եկավ և բախվեց Թոռնիկի գնդի ճակատին, ճեղքեց այն և ներս խրվեց։ Թոռնիկն իր զինվորներին ձայն տվեց, և բոլորը միասին շրջապատելով նրանց, բոլոր իշխաններին՝ հազար հինգ հարյուր հոգու գերեցին, բռնեցին նրանց կոմսին, իսկ Փիլարտոսին և նրա բոլոր զինվորներին փախուստի մատնեցին։ Այդ օրը ֆրանկների և այլ քրիստոնյաների մեծ կոտորած եղավ։ Թոռնիկը և հայոց բոլոր զինվորները մեծ ավարով գնացին Սասուն, իսկ Փիլարտոսը փախստական ու խայտառակված մտավ Խարբերդ։ Այս [դեպքը] տեղի ունեցավ Անձիտ գավառի Ալելուա դաշտում։

Այդ օրերին Թոռնիկը փոքրաթիվ զորքով եկավ մտավ Աշմուշատ քաղաքի իր բերդը, որ կառուցված էր Արածանի գետի վրա։ Անապասելիորեն բազում զորքերով երևաց մի ոմն ամիրա, որի անունը Ամր-Քափր էր։ Իմանալով, որ Թոռնիկն առանց զինվորների է, Փիլարտոսի հրամանով դիմեց նրան խաբեպատիր խոսքերով ու սուտ երդումներով, նրա հետ փորձեց բա-

www.a-pdf.com

րեկամություն հաստատել. նրան հաջողվեց բազմաթիվ նվերներով ու ընծաներով համոզել Թոռնիկի սպասավորներին, նրանց օգնությամբ խաբել նրան և երեք հոգով իր մոտ հրավիրել: Երբ նրանք գինարբուքով էին տարված, ամիրան գաղտնաբար հարձակվեց Թոռնիկի վրա, ուզենալով սպանել նրան: Թոռնիկի մոտ, բացի մի փոքր դանակից, ոչինչ չկար: Ահա [գրանով] նա խփեց ամիրային և թափեց նրա փորոտիքը, մյուս ամիրաների գլուխներն էլ մեկը մյուսին զարնելով, սատկեցրեց: Ինքն էլ, անվնաս մնալով, ելավ գնաց դեպի իր բերդը, որ մոտիկ էր գտնվում: Բոլոր թուրքերը փախուստի գիմեցին: Երբ նա մոտեցավ բերդին, դարան մտած մի այլազգի նիզակով թաքուն հարվածեց Թոռնիկի սրտին, որից քաջ Թոռնիկը մահացավ: Նրա գլուխը տարան Փիլարտոսին: Անօրեն Փիլարտոսը [Թոռնիկի] գանգից թաս սարքեց և նրանով էր գինի խմում, իսկ գանգի մնացած մասը Մեսափարկինի ամիրային ուղարկեց, մարմինն էլ կրակի տվեց: Հետագայում այդ քաջ ու աստվածապաշտ մարդու այրված ոսկորները հավաքեցին և տարան թաղեցին Սուրբ Կարապետի [վանքի] շեմքին: Թոռնիկը երկու անչափահաս որդի թողեց՝ Զորտվանելին և Վասակին:

Այս ժամանակ անօրեն Փիլարտոսը դիմեց տեր Գրիգորիսին և հրավիրեց նստելու իր հայրապետական աթոռին, սակայն նա, չարաշունչ գազանից վախեցած, չընդառաջեց նրա կոչին: Փիլարտոսը կրկին անգամ գրեց սուրբ հայրապետին, ասելով. «Հայրապետական աթոռը չի կարող թափուր մնալ»: Բայց Գրիգորիսը չհամարձակվեց գնալ և Փիլարտոսին գրեց հետևյալը. «Իմ հրամանով հայրապետական աթոռը տուր տեր Պետրոսի քրոջորդի տեր Սարգսին»: Տեր Գրիգորիսը տեր Պետրոսի քողը, գավազանը և սուրբ խաչը տեր Սարգսին ուղարկեց: Փիլարտոսը, համոզվելով, որ տեր Գրիգորիսը այլևս չի վերադառնա իր հայրապետական աթոռը, հրամայեց եպիսկոպոսների, վանահայրերի և վանականների ժողով գումարել: Ջահան գավառի Հոնի կոչվող քաղաքում հայոց կաթողիկոս ձեռնադրեցին տեր Սարգսին, քանզի նա սուրբ մարդ էր, ուներ փառավոր արտաքին, ատաքինությամբ հռչակված էր, և ամեն տեսակետից աստվածապաշտ՝ Հիսուս Քրիստոսին ճշմարիտ խոստովանող, Քրիստոսի հոտի կատարյալ հովիվ: Տեր Գրիգորիսը գնաց հայոց մայրաքաղաքը, որ Անի է կոչվում, որտեղ եպիսկոպոս ձեռնադրեց իր քեռորդի Բարսեղին՝ Վասակի որդուն, Ապիրատի որդու, Հասանի որդու, [այն Բարսեղին], որ հետագայում Հայոց երկրի հայրապետական աթոռին նստեց:

Այդ բոլորից հետո, հայոց 523 թվականին [3 մարտ 1074—2 մարտ 1075 թ.) տեր Գրիգորիսը գնաց Կոստանդնուպոլիս, այնտեղից էլ՝ Հռոմ: Գալով Եգիպտոս, նա շրջագայեց առաջին սուրբ հայրերի բոլոր անապատներում և կատարեց իր սրտի բոլոր փափագները: Այնտեղ նա հաստատեց հայրապետական աթոռը և նորոգեց սուրբ եկեղեցու բոլոր կարգերը: Տեր Գրիգորիսը Եգիպտոսի թագավորից մեծ փառքի ու պատվի արժանացավ, ավելի քան հոռոմոց կայսրից: [Այդ ժամանակները] Եգիպտոսում բազմաթիվ հայեր հաստատվեցին, շուրջ երեսուն հազար հոգի: Տեր Գրիգորիսը որոշ ժամանակ անց իր քեռորդի տեր Գրիգորին կաթողիկոս ձեռնադրեց, իսկ ինքը ելավ եկավ Հայոց երկիրը, որովհետև իր մայրը դեռ կենդանի էր:

...Այդ ժամանակները սատակեց արևելից ամիրա Սուլիմանը. նա Հռոմապարհին հանկարծամահ եղավ՝ Տիրոջից ստանալով իր աբժանի պատիժը. քանզի Ուռհա գավառում բաղում ավերածություններ և նախճիրներ էր գործե-

www.a-pdf.com

Այդ տարին Աստված մի հզոր մարդու՝ հայոց մեծ իշխան Թորոսի Ռուբենի որդի Կոստանդնի որդու ձեռքով վրեժխնդիր եղավ Գագիկ շահնշահի՝ Աշոտ Բագրատունու որդու անմեղ արյան համար: Թորոսի օրոք հայոց Գագիկ արքային սպանողները բնակվում էին Կոնդոռոսկավիս կոչվող շատ ամուր և բարձր, ամեն կողմից անառիկ բերդում: Մանդալեի որդիները, երեք եղբայրներ, դեռ կենդանի էին, որոնցից մեկը, Թորոսի հետ ունեցած խնամիական կապերի պատճառով, մտերմական հարաբերությունների մեջ էր նրա հետ, նրանք խոստացել էին բերդը Թորոսին հանձնել, քանի որ այն սահմանակից էր Թորոսի գավառին՝ Ձկնջուր կոչվող և Դամիրքին լեռնահայաց վայրում: Այդ տարին հայոց իշխանը փոքրաթիվ զորքով բարեկամական նպատակով ելավ գնաց նրանց մոտ: Իջնելով այդ սահմանները, նրանց գրություն ուղարկեց՝ տեղեկացնելով իր գալստյան մասին: [Գագիկին] սպանողներից մեկը նվերներով եկավ Թորոսի մոտ. վերջինս պատվեց նրան: Ժամանողը, որպես փոխադարձ նվեր, Թորոսին տվեց մի թանկարժեք դանակ և մի հագուստ: Նրանք կերան ու խմեցին: Թորոսն ասաց նրան. «Դուք ինձ բերդն եք խոստացել, տվեք այն և իմ համայն տիրույթներից որ մեկում ուզեք հաստատվեցեք»: Բայց նա ուրացավ անցյալում տված խոստումը և ասաց հայոց իշխանին. «Մենք չենք կարող բերդը հանձնել, քանզի այն մեր հայրենական [կալվածն] է և տոհմի բնակատեղին»: Թորոսը հասկացավ. որ խաբել են իրեն և, վերադարձնելով ստացած նվերները, զայրացած ասաց. «Ելի՛ր, գնա՛ քո տունը, բայց այսուհետև զգուշացեք ինձանից»: Աստվածասպանն ելավ գնաց իր տունը: Թորոսն էլ նրա ներկայությամբ ճամփա ընկավ դեպի իր տունը, բայց երբ սպանողը չքվեց, նա իր զինվորներով գիշերը մոտեցավ բերդին. հետևակազորին դարան դրեց, իսկ ինքը հեծյալներով հեռացավ դեպի ագարակները, մտադիր լինելով ասպատակել շրջանը: Առավոտյան բերդաբնակ ժողովուրդը բերդից դուրս եկավ, բայց տեսնելով դարան մտած [զինվորներին], փախուստի դիմեց: Թորոսի զինվորները սկսեցին բարձրանալ բերդ տանող զառիվերով: Բերդաբնակ ժողովուրդը, տեսնելով նրանց, փակեց բերդի դուռը, իսկ նրանք, տիրանալով դռանը դրսից, կռիվ սկսեցին և բերդի ձեղունի վրա կրակ գցեցին. այն սաստիկ բորբոքվեց: [Բերդի] բնակիչները, տեսնելով դա, բացեցին մյուս կողմի դուռը և փախան: Թորոսի զինվորները գրավեցին բերդը, բռնեցին փախստականներին, ապա գնացին տեղի ունեցածի մասին զեկուցեցին Թորոսին: Նա շատ ուրախացավ և ուրախացած եկավ Կոնդոռոսկավիս բերդը: Ներս մտնելով՝ նա ուսուցեց նրանց գանձատունը, քանզի ողջ գավառի ոսկին և արծաթը այնտեղ էր պահվում. Թորոսն ասաց Մանդալեի որդիներին. «Ինձ բերեք հայոց թագավոր Գագիկի թուրը և հանդերձները»: Նրանք բերեցին: Թորոսը, տեսնելով դրանք, դառնագին արտասվեց: Լաց եղան և բոլոր զինվորները: Թորոսն այնուհետև հրամայեց ցույց տալ իրենց գանձերը, բայց նրանք համառությամբ ցույց չէին տալիս. դրա վրա սկսեցին նրանց խոշտանգել: Եղբայրներից մեկը պահապան զինվորներին խնդրեց իրեն տանեն քարաժայռը՝ ջուր թափելու: Նրան տարան, բայց նա իրեն բարձր ժայռից ցած գցեց և չարաչար ոտնակեց: Մյուս եղբայրն սկսեց ապտակել Թորոսին, լրբորեն տեղով. «Դու հայ մարդ ես, իսկ մենք՝ հառամ իշխաններ. դու հոռոմոց

www.a-pdf.com

կայսեր ի՞նչ պատասխան պիտի տաս, որ դատաստան ես տեսնում հոռոմ մարդու հետ»։ Թորոսը գազազեց, նրա երեսի գույնը փոխվեց։ Նա երկաթե մի մահակ վերցրեց և, գազանի պես նրա վրա հարձակվելով, ասաց. «Ի՞վ էիք դուք, որ հզոր մարդուն, հայոց օծյալ թագավորին սպանեցիք, կամ ի՞նչ պատասխան տվեցիք հայ ժողովրդին», և լալախառն սկսեց անխնա հարվածել նրան, մինչև որ գառն մահվամբ սատակեց։ Այնուհետև նա գոհություն հայտնեց Աստծուն, որ իրեն արժանացրեց հայոց արքա Գագիկի արյան վրեժն առնելու. Թորոսի հոր հայրը՝ Ռուբենը, Գագիկի զինվորներից էր։ Այնուհետև նա նրանց ողջ տունը տակնուվրա արեց և բազմաթիվ գանձեր, դիպակներ, արծաթե հսկայական խաչեր, ոսկեձույլ և արծաթե [սրբա]պատկերներ առնելով՝ գնաց Վահկա [բերդը]։ Նա [Մանդալյան] երրորդ եղբորը իր հետ տարավ, իսկ [նրանց] բերդի պահպանության համար կայազոր հաստատեց։

www.a-pdf.com

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

(1209—1272)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Գ.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԵՐՈՒՄ ԼԵՎՈՆԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մինչև այստեղ մեր պատմությունը տքնաջան աշխատանքով հավաքեցինք մեզնից առաջ եղած գրողներից, իսկ մեր առաջիկա պատմությունը, ինչ-որ շարադրելու ենք, ականջով լսել և աչքով տեսել ենք։

Երբ մեռավ Կիլիկիա աշխարհի Ռուբեն թագավորազնի թոռ Լևոնի որդի՝ Կոստանդինի թոռ մեծ իշխան Թորոսը, իշխանությունը ստանձնեց նրա Ռուբեն անունով եղբորորդին՝ Ստեփանեի որդին, որին հռոմների զորավար Անդրոնիկոսը նենգաբար սպանեց։ Կարճ ժամանակ հետո սա էլ վախճանվեց, և իշխանությունը վերցրեց քաջ ու պատերազմող Լևոնը։ Սա հենց որ տիրեց, անմիջապես ընդարձակեց իր տերության սահմանները։ Նա պատերազմեց շրջակա ազգերի հետ և քաջությամբ հաղթեց, ըստ իր անունի՝ առյուծաբար, որովհետև Լևոն առյուծ է նշանակում։

Երբ սուլթան անվանված թուրք ու մահմեդական բռնակալները տեսան նրա հաջողությունը, Հալեպի ու Դամասկոսի իշխող սուլթանը անհամար զորքով ու զենքով եկավ նրա վրա։ Իշխանաց իշխան Լևոնը, լսելով այլազգիի իր վրա գալու մասին, աճապարեց՝ հավաքեց իր զորքերը ու հանկարծակի հարձակվեց նրանց վրա, ինչպես որ արծիվն է խոյանում թռչունների երամների վրա։ Եվ մեծամեծ հարվածներով ջարդեց նրանց։ Այն սուլթանը, որ խրոխտանքով գալիս էր նրա դեմ, փախավ ու նրանից մազապուրծ եղավ։ Իսկ Լևոնը, նրա վրա հարկեր դնելով, հարկատու դարձրեց։ Նրա այս քաջագործությունը արաբական շրջակա ազգերը տեսնելով սարսափում էին նրանից ու հարկ էին տալիս։ Այսպես նա տիրեց բոլորին։

Երբ նա տեսավ, որ իշխանությունը իրեն ավելի հաջողվեց, քան իր նախնիներին, այնուհետև իր իշխանների ու մեծամեծների հետ խորհեց թագավոր դառնալ։ Եվ [պատվիրակ] ուղարկեց աշխարհահռչակ Հռոմ քաղաքը ինքնակալ կայսրի ու պապի մոտ, որպեսզի նրան թույլտվություն ու թագավորական թագ տան, որովհետև նա չկամեցավ թագի համար բացի ֆրանկների ազգից որևէ այլ մեկի հնազանդվել։ Միաժամանակ իր համար պարծանք համարեց սուրբ առաքյալներ Պետրոսին ու Պողոսին, որ գտնվում են [շիրիմները] Հռոմ քաղաքում, որպես թե նրանցից է առնում օրհնության պսակը։

Եվ Հռոմի թագավորն ու պապը ուղարկում են առաջին թագավորների մի քանկարժեք թագ ու մի պատվավոր արծվեսի, այսինքն՝ արքեպիսկոպոսի, որպեսզի թագադրի նրան և երեք բան պահանջի նրանից՝ Տիրոջ ու բոլոր սրբերի տանը տոնել որ օրը որ հանդիպի, ցերեկվա ու գիշերվա ազոթքները միշտ եկեղեցում անել, որ արաբական ավազակահեղության պատճառով վտարված հայերը չէին անում, բացի միայն սուրբ պատարագի խորհրդածության

www.e-pdf.com

ժամանակից. Ծննդյան ու Հարության ճրագալույցը չուժել այլ կերպ, քան միայն ձկով ու ձեթով։ Եվ երբ այդ կանեք, ոչ մի հոգ մի տանեք, ասում է, թագի համար կայսրին ու պապին տրվելիքների ու ընծաների մասին։ Իսկ եթե չանեք, հրաման ունեմ, ասում է, ձեզնից ոսկու, արծաթի ու թանկագին քարերի անչափ գանձեր առնելու։

Իսկ Լևոնը կանչում է կաթողիկոսին ու եպիսկոպոսներին և հարցնում, թե հռոմեացիների պատգամին ինչ պատասխան տա։ Նրանք չեն համաձայնում առաջարկն ընդունել։ Լևոնը նրանց ասում է. «Դրա մասին հոգ մի տանեք, ես նրանց այս անգամ կեղծավորությամբ կգոհացնեմ»։

Եվ Լևոնը պատասխանելով ասում է Հռոմի եպիսկոպոսին. «Ինչ որ ինքնակալ կայսրն ու մեծ պապը հրամայում են, անհապաղ ամենը կանենք»։ Նա տասներկու եպիսկոպոսներից երդում պահանջեց, իսկ ինքը Լևոնը համոզեց եպիսկոպոսներին երդում տալ։ Եպիսկոպոսները երդման խոսքը ասացին. դրանցից մեկն էր Տարսոնի եպիսկոպոս վերևում հիշատակված Ներսես Լամբրոնացին, Անտիոքի կողմերի Հեսվանց կոչված վանքի առաջնորդ Հովսեփը, Հովհաննեսը, որ կաթողիկոս եղավ, Անանիան, որ Սևաստում հակաթոռ կաթողիկոս եղավ, և ուրիշներ սրանց հետ։

Ապա զորապետների ու զորքերի, ազգերի ու ցեղերի խիստ մեծ բազմություն հավաքվեց. [եկավ] Տարսոնում նստող հունաց պատրիարքը, Մելիտինեի սահմաններում գտնվող սուրբ Պարսումայի վանքում նստող ասորիների կաթողիկոսը ու հայոց կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսներով. և թագավորեցրին Լևոնին, իսկ շրջակա ազգերը ընծաներ բերին թագադրված նորոգ թագավորին։

Եվ հունաց կայսրը լսելով, որ Ֆրանկները թագ ուղին Լևոնին՝ նա էլ ընծաներ, ոսկով ու թանկագին ակնեղենով ընդելուզված գեղեցիկ թագ ուղարկեց ու ասաց. «Հռոմեացիների թագը մի դնիր քո գլուխը, այլ մերը դիր, որովհետև մեզ ավելի մոտիկ ես, քան Հռոմին»։ Իսկ Լևոն թագավորը խմաստուն մարդ էր, երկու թագավորներից ոչ մեկին էլ չմերժեց՝ ոչ Հռոմինը և ոչ էլ Կոստանդնուպոլսինը, այլ նրանց կամքի համաձայն պատասխան ուղեց. սիրալիր ընդունեց եկվորներին, մեծամեծ նվերներ տվեց թագ բերողներին ու երկուսի կողմից էլ պատկված եղավ։

Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու և Աստծու սպասավորների նկատմամբ սիրալիր։ Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում ու բազմացնում էր նրանց պիտույքները, որպեսզի մարմնավոր պետքերից ոչ մի բանի կարիք չզգան, այլ որ միայն աղոթքներով ու արարողություններով զբաղվեն։ Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հռչակավոր վանքը, որ մինչև այժմ կառավարվում է նրա դրած կարգ ու կանոնով, այսինքն՝ շաբաթվա բոլոր օրերը պաս են պահում, միայն շաբաթ ու կիրակի պասը լուծում են ձկնով ու կաթնեղենով։

Եվ այսպիսի բարեկարգությամբ հաստատեց իր թագավորությունը բարեպաշտ Լևոնը։ Ամեն բանով նա իրոք ընտիր էր, բացի մի բանից, որ իգասեր էր։ Նա թողեց իր առաջին կնոջը, որ իշխանության ժամանակ ուներ, և իրեն կին առավ Կիպրոս կղզու ազգով ֆրանկ արքայի դստերը, որպեսզի իրեն թիկունք ու օգնական լինի։

Մի անգամ այնպես պատահեց, որ նա զնաց Կիպրոս կղզին իր աներներին տեսության։ Նրա թշնամիները, որ ցամաքում նրա վրա ներգործել

www.a-pdf.com

չէին կարողանում, բազմաթիվ նավեր պատրաստեցին, որպեսզի ծովում դավեն նրան։

Լևոնը, այս լսելով, կրկին ետ դարձավ Կիպրոս, որովհետև ծովի վրա ճանապարհին էր։ Վերցրեց իր ռազմական նավերը և եկավ այն դարանը, որ բազմաթիվ նավեր պատրաստել էին նրա համար։ Եվ քանի որ իմաստուն էր, ճանաչեց, թե նավերից որն էր գլխավորը, հարվածեց նրան իր արագընթաց նավով ու ջրասույզ արեց բոլորին։ Իսկ մնացած նավերը փախան։ Նրա ահը տարածվեց ամենքի՝ հեռավորների ու մոտավորների վրա։

Եղավ մի ժամանակ, երբ Հալեպի կողմերի տիրող սուլթանը զատկի օրերին զորաժողով արեց նրա վրա հարձակվելու և այսպիսի պատգամ ուղարկեց Լևոն արքային. «Եթե հնազանդվելով հարկատու չինես ինձ, իմ բազմաթիվ զորքերով քո երկրի բոլոր բնակիչներին՝ մորը մանկան մոտ, սրածելով կոչնչացնեմ և ձեր այդ տոնը, երբ ուրախանում եք քրիստոնյաներդ՝ պատվելով այդ, իբր թե ձեր Քրիստոսի հարությունն է, ձեզ համար սգի կվերածեմ։ Եվ այնպես կանեմ, որ այդ տոնի համար ձեր պատրաստած կերակուրը ուտեք ձիերի վրա»։

Եվ երբ առաքեց այս, ինքը իր բազմաթիվ զորքերը առավ ու բանակեց նրա սահմանների մոտ, սպասում էր պատգամի պատասխանի գալստյանը։

Երբ Լևոնը իմացավ պատգամի գալու և այլազգիների զորաժողովի մասին, հրամայեց շրջեցնել պատգամաբերներին երկրի այլ կողմում այն պատրվակով, որպես թե արքան այնտեղ է։ Իսկ ինքը շտապելով հավաքեց իր զորքերը և այլ կողմով հարձակվեց նրանց վրա։ Եվ անսպասելի ժամանակ ընկավ նրանց վրա, ահավոր հարվածներ հասցրեց. սուլթանը մազապուրծ փախավ։ Լևոնը, առնելով այլազգիների բանակի ավարը նրանց վրաններով հանդերձ ու բոլոր գերիներին, եկավ բանակ զարկեց իր երկրում գետի ափին ու հրամայեց իր զորքերին այլազգիների վրանները խփել և յուրաքանչյուրի դրոշը կանգնեցնել իրենց վրանների առջև. ապա հրամայեց պատգամաբերներին կանչել։

Եվ երբ եկան տեսան իրենց զորքերի վրանները ու յուրաքանչյուր գնդի դրոշանշանները, մեծ զարմացումով հիացան, որովհետև կատարվածը չգիտեին։ Իսկ երբ իմացան, ընկան թագավորի ոտքերը ու խնդրեցին իրենց անձերի փրկությունը։ Իսկ արքան մարդասիրաբար վարվեց նրանց հետ, կյանք շնորհեց նրանց և ուղարկեց իրենց տիրոջ մոտ։ Արքայից պահանջվող այս նույն հարկը հավելյալ չափով դրեց սուլթանի վրա և այլազգիներին հարկատու դարձրեց։ Նրա թագադրումը տեղի ունեցավ հայոց վեց հարյուր քառասունվեց թվականին (1197 թ.)։

Ը.

ԶԱՔԱՐԵ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Բազմաթիվ քաջագործություններից ու հաղթություններից հետո, որ կատարեցին մեծամեծ իշխաններ Զաքարեն ու Իվանեն, մեծ զորքով դնացին Մարանդ քաղաքը, գրավեցին այն ու ավերեցին նրա շուրջը գտնվող գավառները։ Ապա գնացին Արտավիլ քաղաքը, այն նմանապես գրավեցին։

Նրանցից շատերը իրենց աղոթասացների հետ, որոնց մուղրի են անվանում, ապաստանել էին իրենց աղոթարանում։ Զաքարեն հրամայեց բերել խոտ ու ցախուն, դրանց վրա լցրեց ձեթ ու նավթ և կրակ տալով այդպես ա-

www.a-pdf.com

րեց նրանց՝ ասելով. «Իշխաններն ու աշխարհականները՝ արաբների կողմից Նախիջևանում այրված հայ իշխանների փոխարեն, իսկ Կուրան ընթերցողները (կրոնավորները)՝ Բագարանի այն քահանաների փոխարեն, որոնց մորթեցին և արյունը եկեղեցու պարսպով թափեցին, որ մինչև այսօր տեղը սևացած երևում է»:

Իսկ ինքը վերադարձավ իր երկիրը. ճանապարհին հիվանդացավ, քանի որ անբուժելի վերքեր դուրս եկան նրա մարմնի վրա: Մեկի առողջանալով մեկ ուրիշն էր դուրս գալիս: Եվ այսպես [հիվանդությունը] տանջելով նրան՝ քիչ օրեր անց վախճանվեց: Բոլոր քրիստոնյաները սգացին: Նրան տարան թաղեցին Սանահինում՝ մեծ եկեղեցում, դռան առաջ խորանի տակ ձախ կողմից: Մեծ սուգ կապեցին վրաց Գիորգի Լաշա մականունով թագավորը՝ Սոսլանի ու Թամարի որդին՝ մեծ թագավոր Գիորգիի թոռը, և իր եղբայր Իվանեն վրաց ամբողջ զորքով: Ձաքարեին Շահնշահ անունով մի որդի մնաց, որ հասակով մանուկ էր. սրան խնամեց Իվանեն իր որդի Սարգսի հետ, որին Ավագ էին անվանում, մինչև արբունքի հասավ և տիրեց հայրենի իշխանությունը:

ԻԳ.

ՇԱՄՔՈՐ ՔԱՂԱՔԻ ԴՐԱՎՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ավազներից Մոլար նուին անունով մեկը, որին բաժին էին ընկել այն կազմերը, երբ Մուղան կոչված դաշտի բոլոր բնակված տեղից շարժվում էին, մատ հաբյուր մարդուց կազմված փոքրիկ զորքամաս ուղարկեց, որոնք եկան նստեցին Շամքոր քաղաքի դռների առջև ու արգելեցին այնտեղի ելումուտը:

Իսկ քաղաքը այն ժամանակ գտնվում էր Վահրամի ու իր որդի Աղբուղայի իշխանության ներքո, որը նախապես գրավել էին պարսիկներից: Շամքոր քաղաքի բնակիչները [մարդ] ուղարկեցին Վահրամի ու նրա որդու մոտ, որպեսզի իրենց օգնեն, և ասացին, թե քիչ են: Իսկ նա չօգնեց ու որդուն էլ, որ կամեցավ գնալ, չթողեց, այլ խանգարեց, եկողներին սովորեցրեց, որ ասեն, թե շատ են: Ոչ իսկ քաղաքացիներին հրամայեց նրանց դեմ մարտնչել:

Իսկ այլազգիների զորքը օրըստօրե քանակով ավելանում էր, մինչև եկավ նրանց գլխավորը, որին Մոլար էին կոչում, և պատերազմ սկսեց քաղաքի դեմ: Քաղաքի պարսպի շուրջը գտնված փոսը լցրեց փայտով ու ծղոտով, որպեսզի հեշտությամբ բարձրանան պարսպի վրա: Իսկ նրանք [բնակիչները] ներսից կրակ տվին ու գիշերը վառեցին այն: Առավոտյան երբ այս բանը տեսավ Մոլար նուինը, զորքին հրամայեց, որ յուրաքանչյուրը մի բեռ հող վերցնի ու լցնի փոսը. երբ փոսը լցրին, փոսը հավասարվեց պարըսպին:

Եվ զորքը, յուրաքանչյուրը ուղղություն վերցնելով իր առջևի կողմը, դիմեց դեպի քաղաք, գրավեց այն, բոլորին սրով կոտորեց, այրեց նրա մեջ եղած շենքերը և, ինչ որ այնտեղ գտավ, կողոպտեց: Ապա հարձակվեց Վահրամին ենթակա այլ բերդերի՝ Տեբունականի, Երգեվանքի, Մածնաբերդի վրա, որին տիրում էր Աղսարթանի որդի Կյուրիկե Բագրատունին: Իսկ Գարդմանի և ուրիշ կողմերի՝ Ջարեքի ու Գետաբակի վրա Ղատաղան նուին անունով մի այլ գլխավոր գնաց: Վահրամը, որ այն ժամանակ Գարդմանում էր, գիշեր ժամանակ գաղտնի փախավ ինչ-որ տեղ ու կարողացավ ազատվել: Այլազ-

գիների զորքը ճակատամարտեց բերդերի դեմ. Ներսում գտնվածները ստիպված տվին ձի, անասուն ու ինչ որ պահանջեցին։ Հարկ դնելով նրանց վրա՝ նրանց թողին իրենց անունով [իբրև իրենց կողմից գրավված]։

Բայց նրանք, որ գրավեցին Շամքորը, իրենց ամբողջ ունեցվածքով եկան Տավուշ, Կածարեթ, Նոր բերդ, Գագ և նրանց շուրջը գտնված վայրերը, և նեղը գցելով՝ պաշարեցին նրանց։

Իէ.

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԵՐԸ ՄԱՏՆԵՑ ՆՐԱ [ՉԱՐՄԱՂՈՒՆԻ] ՁԵՌՔԸ

Այս Անի քաղաքը լցված էր մարդկանց ու անասունների բազմությամբ և պատնեշված էր շատ ամուր պարիսպներով։ Եվ անչափ եկեղեցի կար նրա մեջ, մինչև որ խոսքի մեջ երդվելիս այսպես էին երդվում. «Անիի հազար ու մի եկեղեցին [վկա]»։ Ամեն բանով խիստ հարուստ էր քաղաքը, այդ պատճառով առատությունը ամբարտավանացրեց նրանց, իսկ ամբարտավանությունը կորստի է մատնում, ինչպես սովոր է անելու սկզբից մինչև այժմ։ Չարմաղունը պատգամավորներ ուղարկեց նրանց մոտ, որ իրեն հնազանդվեն։ Քաղաքի գլխավոր իշխանները չհամարձակվեցին պատգամին պատասխանել առանց Շահնշահ իշխանին հարցնելու, որովհետև քաղաքը ենթակա էր նրա իշխանությանը։ Իսկ քաղաքի ամբոխն ու ռամիկները սպանեցին պատգամավորներին։ Այլազգիների զորքերը, այս տեսնելով, կատաղեցին. քաղաքը բոլոր կողմերից պաշարեցին, հմտորեն կանգնեցրին բազմաթիվ բաբաններ [քարաձիգ մեքենաներ] և ուժգնապես ճակատամարտելով քաղաքի դեմ՝ գրավեցին այն։ Այլև քաղաքի իշխաններից ոմանք օգնեցին թշնամուն իրենց կյանքի փրկությունը ձեռք բերելու համար։ Նրանք քաղաքից դուրս կանչեցին բազմությունը, խոստացան ոչ մի չար բան չանել նրանց։

Եվ երբ ամբողջ բազմությունը դուրս եկավ նրանց մոտ, [թաթարները] նրանց իրենց մեջ բաժանեցին և սրերը քաշելով՝ անողորմաբար համահավասար կոտորեցին՝ թողնելով սակավաթիվ կանայք, մանուկներ և արհեստավոր տղամարդիկ, որոնց քշեցին գերության։ Ապա իրենք մտան քաղաքը, գրավեցին բոլոր ինչքերն ու ստացվածքները, կողոպտեցին նաև բոլոր եկեղեցիները, ավերեցին ու քանդեցին ամբողջ քաղաքը, եղծեցին ու ոչնչացրին նրա վայելչության փառքը։

Այնտեղ պետք էր տեսնել ողորմագին տեսարանը. համահավասար կոտորված ծնողները և զավակները նրանց հետ դիզված էին միմյանց վրա, ինչպես կուտակված քարակարկառ. քահանաներ ու սարկավագներ և եկեղեցական սպասավորներ, ծերեր ու պատանիներ, մանուկներ, շատ երիտասարդներ ու կույսեր՝ ըստ սուրբ ավետարանի, թե՝ «կը մատնվեք սովի ու գերության»։ Նույն պատվիրանը կատարվեց սրանց վրա, որովհետև ցանուցիր ընկել էին դաշտերի երեսին, հողը հագեցել էր վիրավորների արյունից ու ճարպից. օճառով լվացված փափուկ մարմինները սևացել և ուռել էին։ Իսկ նրանք, որ քաղաքի դռներից դուրս չէին եկել, բոլորն ու հետիոտն ընթացան դեպի գերություն. և նրանք, որոնք հաղորդվել էին Աստվածորդու թանկագին մարմնով ու արյունով, ուտում էին անմաքուր [անուտելի կենդանիների] ու սատկած [անմորթ] միս և խմում էին անուտելի ձիերի կաթից։ Պարկեշտ ու ողջախոհ կանայք մատնված էին իգամոլ ու վավաշոտ

www.a-pdf.com

մարդկանց խաղքութեանը։ Սուրբ կույսերը, որոնք ուխտել էին Աստծուն՝ սրբութեամբ պահելու մարմինները և մաքուր՝ հոգիները, պղծվում էին տեսակ-տեսակ պոռնկութեամբ, ապականվում խառնակութեամբ։ Եվ գործի վախճանը այս եղավ։

ԼԱ.

ԻՐ ԿԱՌՈՒՑԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

[Ջալալը] Գանձասար կոչված վանքում, խոխանաբերդի հանդեպ, իրենց շիրմատեղում կառուցեց գեղեցկազարդ հորինվածքով, զմբեթաձև, երկնանման, Աստծու փառքի տաճար մի եկեղեցի, ուր մշտապես պատարագվում է Աստծու գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը։ Շատ տարիներ չարչարվեցին նրա վրա։

Երբ ավարտվեց, բացման մեծահանդես տոն կատարեց եկեղեցին օրհնելու համար։ Այնտեղ էր նաև Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը բազմաթիվ եպիսկոպոսներով, այլև մեծ վարդապետ վանականը շատ ուսուցիչներով։ Այնտեղ էին Խաչենի Գրիգորիս և տեր Օղիա սուրբ վարդապետները՝ [սրանք] միմյանց հարազատ էին, որոնց Աստված զաքդարել էր երկու մաքդով. այս կյանքից փոխադրվեցին ***Քրիստոսի մոտ և պահ են դրված նոպալի աստվածափառ առանը [դերեզմանատունը]։ Առաջինը [մեռել է] վեց հարյուր ութսունյոթ թվին (1238), իսկ Օղիան՝ վեց հարյուր իննսունութ (1249)։ Եկեղեցին օրհնեցին բազմաթիվ քահանաներով, որոնց թիվը հաշվում էին յոթ հարյուր։***

Եվ երբ [եկեղեցին] օծումով մկրտվեց, մեծ ճաշկերույթ սարքեց [Ջալալը]. ինքն իր իսկ ձեռքով մատուցում էր նստածներին. և յուրաքանչյուրին նրա պատվի համապատասխան առատությամբ նվերներ տվեց ու ճամփու դրեց ամբոխին։ Այս տեղի ունեցավ հայոց վեց հարյուր ութսունինը թվականին (1240 թ.) վարդավառի մեծ տոնի օրը։

Նրա կին Մամքանը եկեղեցու դռանը կառուցեց հրաշալի գավիթ, իսկ ինքը, իրեն ամբողջովին առաքինության տված, միշտ ճգնում էր պասերով, աղոթքներով ու ընթերցանությամբ. գիշեր-ցերեկ միշտ պահպանում էր Տիրոջ պատվիրանը ըստ գրածի։

ԼԲ.

ԹԱԹԱՐՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՆՔԸ ՅՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԻ ՓՈՔՐԻԿ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որովհետև մեզ պատած այս նեղությունից հուսով ակնկալում ենք փրկություն, մտադրվեցինք մեր ազգի եկող սերունդներին հիշատակ թողնել, ուստի համառոտ հետաքրքրասերների համար կնկարագրենք նրանց կերպարանքն ու լեզուն։

Կերպարանքով ու տեսքով ահավոր տգեղ էին և զարհուրելի. մորուք չունեին, բայց ոմանք սակավաթիվ մազ ունեին շրթունքին կամ դնչին։ Աչքերը նեղ էին ու սրատես, ձայները նուրբ ու սուր, երկարակյաց էին ու դիմացկուն։

Երբ լինում էր, հաճախ էին անհագ ուտում ու խմում, իսկ երբ չկար, ժուժկալ էին։ Ուտում էին ամեն տեսակի կենդանի՝ մաքուր ու անմաքուր.

www.a-pdf.com

ձիու միսը ավելի էին գերադասում. կտոր-կտոր հոշում էին, խաշում, կամ խորովում էին առանց աղի և ապա մանր կտտորում էին, աղաջրում թրջում և այդպես ուտում. ոմանք ուղտերի նման ծնկում էին, ոմանք էլ նստած էին ուտում: Ուտելիս համահավասար բաժանում էին տերերին ու ծառաներին, իսկ կումիս կամ գինի ըմպելիս՝ մեկը մեծ ամանով վերցնում էր իր ձեռքը և փոքր բաժակով մեծ ամանից վերցնում շաղ էր տալիս դեպի երկինք, ապա արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ, և ապա ինքը՝ շաղ տվողը մի քիչ խմում էր նրանից և մատուցում էր ավագագույնին: Իսկ եթե որևէ մեկը նրանց համար ուտելիք կամ ըմպելիք էր բերում, նախ բերողին էին տալիս ուտելու և խմելու, իսկ հետո իրենք էին ուտում ու խմում, որպեսզի մահադեղերից չվնասվեն:

Ինչքան կին կամենում էին, այնքան առնում էին, բայց իրենց կանանց հետ պոռնիկ չէին պահում. իսկ որտեղ հանդիպում էին այլազգի կանանց, անխտիր խառնակվում էին: Գողությունը ատում էին, մինչև իսկ [գողերին] դաժանորեն սպանում էին: Որևէ պաշտամունք կամ երկրպագություն չէին կատարում, բայց ամեն բանում շուտ-շուտ հիշատակում էին Աստծու անունը. այն՝ թե էին՝ Աստծուն, գոհություն էին հայտնում, կամ թե ինչ-որ բան Աստված էին անվանում, [թե ինչ էր] մենք չգիտենք, և անգամ իրենք չգիտեին: Բայց սովորաբար այն էին ասում, թե իրենց արքան ազգակից է Աստծուն: Երկինքը Աստված վերցրել է իր համար բաժին, իսկ երկիրը տվել է խաղանին: Որովհետև ասում էին խաղանի հայրը Ջանգղ ղանը տղամարդու սերմից չի սերվել, այլ ինչ-որ լույս է եկել աներևույթից, տան երդիկով ներս է մտել և մորն ասել է, թե՝ «Կհղիանաս և ինքնակալ որդի կծնես երկրի համար»: Եվ սրանից էին նրան ծնված համարում:

Այս բանը ինձ պատմեց Մարզպանի որդի՝ Ասլանբեկի, Սարգսի, Ամիրայի եղբայր Գրիգոր իշխանը, որ Մամիկոնյան տոհմից էր, և որը ինքը լսել էր Ղութուն նուին անունով մի մեծ մարդուց, որ բարձր ավագներից էր, երբ նա մի օր փոքրիկ մանուկների սովորեցնում էր:

Եվ երբ նրանցից մեկը մեռնում էր, կամ սպանում էին, կար, որ շատ օրեր իրենց հետ շրջեցնում էին, որովհետև դևը մտնում էր [նրա մեջ] և այնտեղից շատ ցնդաբանություններ էր դուրս տալիս. և կար, որ այրում էին, մի մասին էլ հողի մեջ խոր փոսերում թաղում էին և նրա հետ դնում էին իր զենքն ու հագուստը, ոսկին ու արծաթը, ինչ որ իր բաժինն էր: Իսկ եթե մեծավորներից մեկն էր լինում, ծառաներից և աղախիններից նույնպես նրա հետ դնում էին գերեզմանի մեջ, որպեսզի, ասում էին, սպասավորի նրան. նաև ձի [էին դնում], որովհետև, ասում էին, այնտեղ սաստիկ պատերազմ է լինում: Ինչ մեռելի հիշատակ որ կամենում էին նշել, ձիու փորը ճեղքում էին և ամբողջ միսը առանց ոսկորի նրա միջով քաշում էին, ապա փորոտիքն ու ոսկորները այրում էին և ձիու մորթին կարում էին, որպես թե ամբողջ մարմինը պարփակում է: Սրում էին մի մեծ փայտ, մացնում էին որովայնի միջով, բերանից հանում և այդպես բարձրացնում էին ծառի վրա կամ մի բարձր տեղ:

Այլև նրանց կանայք կախարդ էին, ամեն ինչ գուշակում էին. առանց կախարդների ու դյութողների թույլտվության ոչ մի ճանապարհ չէին գնում. [ճանապարհ էին ընկնում] միայն եթե նրանք թույլ էին տալիս:

Այլև նրանց լեզուն բարբարոսական ու անծանոթ է մեզ: Որովհետև Աստծուն ասում էին՝ թանգրի, մարդուն՝ էրե, հարսն. կնոջը՝ էմե, ափսի. հորը՝ էշկա, մորը՝ ամա, եղբորը՝ աղա, քրոջը՝ ամաճի, պատիվը՝ բիրոն,

www.a-pdf.com

աչքերը՝ նիդուն, ականջները՝ չիքին. մորուքը՝ սախալ. երեսը՝ յուզ, նիուր, բերանը՝ աման, ատամը՝ սխուր, սիդուն. հացը՝ օթմակ, եզը՝ օքար, կովը՝ ունեն, ոչխարը՝ ղոյնա, գառը՝ ղուրղան, այծը՝ իման, ձին՝ մորի, ջորին՝ լոսա, ուղտը՝ թաման, շունը՝ նոխա, գայլը՝ չինա, արջը՝ այաքու, աղվեսը՝ նոնքան, նապաստակը՝ թաբլղա, թուլա, հավը՝ թախյա, աղավնին քոքուչին, արծիվը՝ բուրքվի ղուշ, ջուրը՝ ուսուն, գինին՝ դարասու[ն], ծովը՝ նաուր-տանգըզ, գետը՝ մորան-ուլանսուն, թուրը՝ իոլդու, աղեղը՝ նմու, նետը՝ սմու, թագավորին՝ մելիք, պարոնին՝ նուին, մեծ պարոնին՝ եքա նուին, երկիրը՝ էլ, իրկան, երկինքը՝ գոգա, արեգակը՝ նարան, լուսինը՝ սարա, աստղերը՝ սարղա, նուդուտ. լույսը՝ օտուր, գիշերը՝ սույնի, գրագրին՝ բիթիքչի, սատանային՝ բառանուր, էլեպ և այլ այսպիսի բարբարոսական անուններ, որոնք բազմաթիվ տարիներ մեզ անծանոթ են եղել, իսկ այժմ ակամայից ծանոթացանք։

Երևելի գլխավորները, որոնք առաջին դեմքերն էին, սրանք են. առաջին մեծը, որ գլխավորն է ու ամբողջ զորքի հրամանատարը՝ Չարմաղուն նուինն է, մի իրավարար ու դատավոր մարդ էր. նրան աթոռակիցներ էին՝ Իսրար նուինը, Ղութուն նուինը, Տութթուն նուինը և Չաղատան, որ զորքի զորավարն էր, և որին սպանեցին մուլհեդները։ Եվ այլ բազմաթիվ գլխավորներ կային ու անհամար զորք։

Կ.

ԲԱՂԴԱԴԻ ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Աշխարհի թագավորների մեջ մեծ և տիեզերակալ Մանգու ղանը հայոց յոթ հարյուր յոթ թվականին (1258 թ.) անթիվ ու անհամար զորք գումարեց, գնաց հասավ հարավ-արևելքի կողմերը հեռավոր մի երկիր Նանգաս [Հարավային Չինաստանում] կոչված ժողովրդի վրա, որովհետև իրենից ապստամբվել էին ու հարկեր չէին վճարում, ինչպես վճարում էին այլ երկրներ։ Սրանք պատերազմող մարդիկ էին, ունեին անառիկ երկիր և կռապաշտ էին։ Ուտում էին իրենց ծերունիներին ու պառավներին։ Ամբողջ տոհմը հավաքվում էր՝ որդիներ, թոռներ, ծոռներ և իրենց ծերացած ծնողներին բերանից քերթում էին, միսն ու ոսկորները հանում, եփում, ուտում էին առանց մնացորդի։ Իսկ մորթին տիկ էին հանում, գինի էին լցնում և ատնանդամի միջոցով ամենքը խմում էին, ովքեր որ այդ տոհմից էին, բայց ոչ օտար տոհմերը, որպես թե նրանից են սերված և իրենց է վերաբերում այն ուտելն ու խմելը։ Իսկ գանգը պատում էին ոսկով, ամբողջ տարին նրանով էին խմում։

Մանգու ղանը գնաց նրանց վրա պատերազմի, կոտորեց և զորով հնազանդեցրեց։ Տուն վերադառնալիս մահվան ցավը բռնեց նրան, ու նա վախճանվեց։ Աթոռը գրավեց նրա եղբայր Արիք Բուղան։

Իսկ մեծ Հուլավուն, որ նրա եղբայրն էր և նրա կողմից արևելքի զորքի գլխավոր էր նշանակված, հրաման տվեց բոլոր իրեն հնազանդվածներին ընդհանրապես՝ գնալու արաբական մայրաքաղաք Բաղդադի վրա, որ արաբների արքայանիստն էր։

Այնտեղ նստած թագավորին սուլթան կամ մելիք չէին կոչում, ինչպես որ սովորաբար ուրիշներին անվանում էին նրանք, որոնք թուրքերից, պարսիկներից, քրդերից ընտրված էին, այլ խալիֆա էին կոչում, այսինքն Մահմեդի հետնորդ։

www.a-pdf.com

Մեծ Հուլավուն նրա վրա շարժվեց բոլոր հնազանդված ժողովուրդների անհամար բազմությամբ աշնան ու ձմռան եղանակներին՝ այդ երկրի սաստիկ շոգի պատճառով։ Բայց նախքան իր գնալը հրաման տվեց Բաչու նուինին և նրա հետ հոռոմների երկրում գտնվող զորքերին, որ գնան շրջապատեն Տիգրիս մեծ գետը, որի վրա շինված էր Բաղդադ քաղաքը, որպեսզի նավերով ոչ ոք Բաղդադից չփախչի, գնա մտնի Կատիսբոն, կամ ավելի ամուր Բասրան։ Նրանք անհապաղ կատարեցին հրամանը. նավակամուրջներ կապեցին մեծ գետի վրա և երկաթյա կեռերով ու շամփուրներով ամուր ցանցեր գցեցին գետի մեջ ու հատակում, որպեսզի ոչ ոք լողալով դուրս չպրծնի ու քաղաքից հեռանա, և իրենք չիմանան։

Իսկ Մուսթասար խալիֆան, որ քաղաքում էր նստում, ինքնավստահ հպարտացած՝ Դավդար անունով իր տան վերակացու մի իշխանավոր մարդու միջոցով մեծ զորք ուղարկեց նրանց վրա, որոնք գետի վրա հսկում էին։ Սա գնաց հաղթեց սկզբում և թաթարներից մոտ երեք հազար մարդ կոտորեց, և երբ երեկոն վրա հասավ, անհոգությամբ նստեց ուտել-խմելու։ Ավետատարներ ուղարկեց Մուսթասար խալիֆայի մոտ, թե բոլորին կոտորեցի, իսկ սակավաթիվ մնացորդներին վաղը կսպառեմ։

Իսկ թաթարների խորամանկ ու բազմահնարագյուտ զորքը ամբողջ գիշերը սպառազինվեց ու պատրաստվեց, շուրջանակի պատեց արաբական բանակը. սրա հետ էր նաև Շահնշահի որդի Զաքարե իշխանը։ Եվ երբ լուսանում էր առավոտը, սրերը գործի դրին, համահավասար բոլորին կոտորեցին ու գետասույզ արին։ Նրանցից ոչ ոք չազատվեց՝ բացի քչերից։

Նույն առավոտյան նաև մեծ Հուլավուն շուրջանակի պատեց Բաղդադ քաղաքը. յուրաքանչյուրին պարսպից մի գրկաչափ տվեց փլցնելու և զգուշությամբ հսկելու, որ ոչ ոք չփախչի։ Խալիֆայի մոտ պատգամավոր ուղարկեց քաջ Պոռշին և ուրիշներին, որ գա հնազանդվի իրեն և դառնա ղանին հարկատու։

Նա խստությամբ ու անարգանքով պատասխան տվեց. ասաց, որ ինքը աշխարհակալ է, տեր է ծովի ու ցամաքի. պարծեցավ Մահմեդի դրոշակով, թե՝ «Այստեղ է, ասաց, և եթե շարժեմ այն, դու էլ, տիեզերքն էլ ընդհանրապես կոչնչանաք։ Իսկ դու մի շուն ես, ասաց, թուրք ես. ինչպե՞ս քեզ հարկ տամ կամ հնազանդվեմ»։

Իսկ Հուլավուն ոչ անարգանքի համար բարկացավ, ոչ էլ որևէ մեծախոսություն գրեց, այլ միայն հետևյալը ասաց. «Աստված է իմանում, ինչ է անում»։ Եվ հրաման տվեց պարիսպը փլցնել։ Ու ամբողջապես փլցրին։ Ասաց՝ դարձյալ շինեցեք և զգուշությամբ հսկեցեք։ Այդպես էլ արին։

Քաղաքը լիքն էր զորքով ու ժողովրդով։ Յոթ օր պարսպի վրա մնացին, և ոչ ոք նրանց վրա նետ չարձակեց, կամ սուր չօգտագործեց, ոչ քաղաքից, ոչ էլ թաթարական զորքից։ Յոթ օրից հետո քաղաքացիք սկսեցին հաշտություն խնդրել ու նրա մոտ ելնել սիրով ու հնազանդությամբ։ Հուլավուն հրամայեց այդպես անել։

Քաղաքի դռներից անհամար բազմություններ էին դուրս գալիս՝ միմյանց հետ մրցելով, թե ով առաջ նրա մոտ կհասնի, Իսկ նա եկողներին բռնել էր զորքերի վրա և հրամայում քաղաքից հեռացնել, ծածուկ կոտորել, որ մյուսները չիմանան։ Եվ բոլորին կոտորում էին։

Չորս օր հետո դուրս եկավ նաև Մուսթասար խալիֆան երկու որդիներով ու բոլոր մեծամեծներով՝ մեծ քանակությամբ ոսկի, արծաթ, թանկագին

www.a-pdf.com

քարեր, մեծագին հանդերձանք վերցրած իր հետ Հուլավուի և մեծամեծների նվերների համար։ Եվ նա [Հուլավուն] սկզբում մեծարեց նրան՝ մեղադրելով ուշանալու և իր մոտ անմիջապես չգալու համար, ապա նրան հարցրեց. «Դու ի՞նչ ես, աստվա՞ծ ես, թե՞ մարդ»։ Նա ասաց. «Մարդ և Աստծու ծառա»։ Հուլավուն ասաց. «Ուրեմն Աստվա՞ծ քեզ ասաց, որ ինձ անարգես, շուն կոչես և ինձ՝ շանս չտաս Աստծու կերակուրն ու ըմպելիքը։ Արդ՝ քաղցած լինելով Աստծու այս շունը կուտի քեզ»։ Եվ իր ձեռքով սպանեց նրան։ «Այս,— ասաց,— պատիվ է քեզ, որովհետև ես սպանեցի քեզ և չտվի այլ մեկին սպանելու»։ Եվ իր որդուն հրամայեց խալիֆայի որդիներից մեկին սպանել, իսկ մյուսին տալ Տիգրիս գետին ընծա։ «Որովհետև, ասում է, մեր դեմ չմեղանչեց [Տիգրիսը], այլ անզգամներին կուտորելու համար գործակից եղավ»։ Նաև ասաց. «Այս մարդը իր գոռոզությամբ շատ արյուն թափել տվեց, թող գնա Աստծուն պատասխան տա, իսկ մենք անպարտ կլինենք»։ Կուտորեց նաև այլ մեծամեծների։

Ապա հրաման տվեց պարսպի վրա հսկող զորքին իջնել ու կուտորել քաղաքի բնակիչներին մեծից մինչև փոքրը։ Իսկ նրանք շարվեցին արտ հնձելու օրինակով, կուտորեցին տղամարդկանց, կանանց ու երեխաների անհամար բազմություն։ Քառասուն օր սուրը գործելուց չդադարեց։ Զզվեցին, լքվեցին սպանողները, հոգնեցին նրանց ձեռքերը. ուրիշներին վարձում, և անողորմաբար կուտորում էին։

Սակայն Հուլավուի կինը՝ ավագ խաթունը, քրիստոնյա էր, որի անունն էր Տոզուս խաթուն. սա խղճաց Բաղդադում գտնվող աղանդավ նեստորական քրիստոնյաներին, նաև այլ ազգերից քրիստոնյաներին և իր ամուսնուց խընդրեց նրանց չսպանել։ Եվ նրանց իրենց ունեցվածքով բաց թողին։

Հրաման տվեց ամբողջ զորքին վերցնել քաղաքի ինչքն ու ստացվածքը. Ամենքը ոսկով, արծաթով, թանկագին քարերով, մարգարիտներով, մեծագին հանդերձանքով լիացան, որովհետև քաղաքը այնքան շատ հարուստ էր, որ աշխարհում նրա նման քաղաք չկար։

Ինքը Հուլավուն իր համար բաժին վերցրեց խալիֆայի դանձերը. դրանցից երեք հազար վեց հարյուր ուղտի բեռ բարձեց, իսկ ձիերը, ջորիները, էշերը թիվ չունեին։ Եվ մյուս տները գանձերով լիքը իր մատանիով կնքեց ու պահապաններ դրեց, որովհետև այնքան շատ էին, որ բոլորը չկարողացավ բարձել։ Քանի որ հինգ հարյուր տասնհինգ տարի էր անցել այն ժամանակից, երբ քաղաքը հայոց հարյուր իննսունչորս թվականին (745 թ.) արաբ Ջափրի կողմից Տիգրիս գետի վրա՝ Կատիսբոնից վերև, Բաբելոնից մոտ հինգ օրվա ճանապարհ հեռու դեպի վեր կառուցվեց. ամեն ինչ մնացել էր թագավորության մեջ, որն իբրև անհագ տզրուկ ծծել էր ամբողջ տիեզերքը, իսկ այժմ հայոց յոթ հարյուր յոթ թվականին դուրս փսխեց, հատուցելով թափած արյունների ու գործած չարիքների վրեժը, երբ ամենագետ Աստծու առաջ իր մեղքերի չափը լցվեց, որ արդար իրավունքով անաչառորեն ու ճշտությամբ հատուցում է։ Եվ դադարեց արաբների ահռելի ու կատաղի թագավորությունը, որ տևեց վեց հարյուր քառասունյոթ տարի։ Բաղդադը գրավվեց Աղուհացքի [Մեծ պասի] առաջին օրը, երկուշաբթի, նավասարդ ամսին, որը ըստ արևադարձի ամսի քսանն էր։

Այս ամենը մեզ պատմեց Հասան իշխանը, որին Պռոշ էին անվանում. սա Հաղբակի որդու բարեպաշտ Վասակի որդին էր, Պապաքի ու Մկռեմի եղբայրը, Մկռեմի, Պապաքի, Հասանի ու Վասակի հայրը, որ ականատես ու ականշալուր էր այս դեպքերին և մեծ պատվով հարգված էր ղանի աչքում։

www.a-pdf.com

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

(1378—1447)

ԼԵՆԿԹԵՄՈՒՐԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Հատված)

...Զարմանալի մի բան պատահեց այդ օրը։ Երկյուղած և հավատարիմ մի կին Մուշ գավառից՝ ուներ շատ պատվական և ցանկալի մի որդի, և՝ դեմքով նման հրեշտակի, յոթ-ութ տարեկան։ Երբ արևելյան զորքը բարձրանում էր Խութի լեռը, քրիստոնյաներից շատերն, այսուայնտեղ փախչելով, թաքնվում էին վայրի անտառում։ Նրան տեսան անօրեննները, հարձակվեցին, կամենում էին գերել։

Իսկ սրբասեր ու երկյուղած խեղճ մայրը հետ դառնալով տեսնում է, որ հետևից գալիս, մոտենում էին՝ խլելու մանկանը։ Սուրն առնելով իր ձեռքը՝ մորթեց ցանկալի զավակին և իբրև անմեղ գառ պատարագեց ի սեր Հիսուս գառան՝ փոխադարձելով երկնային Հորը, որ Աստվածորդուն՝ իր անարատ գառանը, քառաթև խաչի վրա զոհելով ու խոցելով՝ պատարագեց սուրբ Գողգոթայում։ Իսկ մանկան մայրն ինքը, փոքր-ինչ առաջ ընթանալով, ելավ բարձրադիր վեմի վրա և իրեն վայր նետեց ու հոգին ավանդեց՝ գոհությամբ փառավորելով Հիսուս Քրիստոսի անունը։ Եվ սա արեց որպեսզի երկուսով չզրկվեն Քրիստոսից և սատանայի բաժին չդառնան, այլ լինեն Աստծու բաժին և հաճո պատարագ առավել, քան հավատո հայր մեծ Աբրահամինը և քան Շամունեինը, որ յոթ զավակներին զոհեց Աստծուն՝ հորդորելով նրանց հոժարակամ մեռնել մեր Աստված Մեսիայի համար։

Եվ Աստված թույլ տվեց սպանել իր սիրելիին ու պարգևել Աստծուն, որպեսզի միայն Աբրահամի Աստվածը չփառավորվի և՝ միայն հին Իսրայելի տնով։ Եվ հին Իսրայելն ավելի չպարծենա, քան նոր Իսրայելը՝ հավատո որդիները մեծն Աբրահամի և Գրիգոր Լուսավորչի, որ հավատո Հոր մարմնավոր թոռներից էր։

Եվ սա թող երկբայությամբ ու կասկածանքով չընդունեն, որովհետև մենք վարդապետներով ու աշակերտներով գնացինք սուրբ Կարապետ և վերադարձանք Մուշ, բերինք ականատեսներին ու ականջալուրներին՝ ճգնավոր հայր Դավիթ կրոնավորին, սուրբ Առաքելոց վանքի սուրբ ճգնավոր Բարդուղիմեոսի հոգևոր հարազատին, նրանցից [լսելով] ճշմարիտն ստուգեցինք և Աստծու օրհնությամբ հիշատակ թողինք ձեզ։

www.a-pdf.com

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ

(Մոտ. 1600—1670)

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՑ

ԳԼՈՒԽ Դ

ՋՂԱԼՕՂԼՈՒ ԱՌԱՋԻՆ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՇԱՀԸ ԲՈՎԱՆԴԱԿ ԱՐԱԲԱՏՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՍՐԱՆ ՄՈՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԳԱՎԱՌՆԵՐԸ ՍՐԱ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՏԱՐԱԳՐԵՑ

Շահը... երևանից իր ամբողջ բանակով առաջ շարժվեց գնաց Կարս քաղաքի վրա այն ևս գրավելու նպատակով։ Եվ երբ հասավ Շիրակավանի գավառը, Ջղալօղլու գալու մասին բազմաթիվ լուրերի հետ, որ մշտապես բերում էին գնացած լրտեսները, այնտեղ եկան այլ լրտեսներ և ստույգ լուր բերին, թե ահավասիկ Ջղալօղլին եկավ մուտք գործեց Կարնո գավառը, որ էրզրումն է։ Երբ շահը այս լուրը լսեց, իր երեսը շուռ տվեց, եկավ նախկին Երվանդակերտ, որ այժմ կոչվում է Աղջաղալա։

Եվ այն, որ վաղուց մտադրվել էր քրիստոնյա ժողովրդին տարագրել և Հայոց աշխարհը ավերել, այդտեղ հայտնեց իր խորհրդականներին։ Քանզի իր մտքում հաստատում էր, թե չի կարող պատերազմով Սինան փաշային, այսինքն՝ Ջղալօղլի ղարահբամանաոտարին, դիմադրել, այդ պատճառով հրամայեց Հայաստանի բոլոր բնակիչներին՝ թե քրիստոնյա, թե հրեա, թե մահմեդական, քշել Պաբսկաստան, որպեսզի օսմանցիները գան երկիրը մարդկանցից թափուր տեսնեն, և չգտնվեն ուտելիք ու օրապահիկ և այլ պիտույք նրանց ու նրանց անասունների համար. և հարկավոր առաջարկների չգոյության հետևանքով օսմանյան զորքերը նեղվեն։ Նաև՝ քշված տարված ժողովուրդները նրա համար լինեն կայուն հարկատուներ, ծառաներ ու հողագործներ մինչև հավիտյան։

Եվ նա մինչ մտավարանքի մեջ էր, լսեց, թե Ջղալօղլին դուրս եկավ Կարինից։ Այդ ժամանակ իր մոտ կանչեց Հայաստանի մեծամեծներին, իրեն կեղծավորաբար ցավակից ցույց տալով հայոց ազգի նկատմամբ, ասաց հայոց մեծամեծներին ու ավագներին. «Լսեցինք, թե եկել է Ջղալօղլին և ահավասիկ անթիվ զորքով գալիս մտնում է ձեր երկրները։ Նաև մեր զորքերն են անթիվ, գիտեք, որ սրանց մեջ երկու կողմերում էլ այսպիսի ժամանակ կան հոգով դաժանացածներ՝ ավազակներ, գողեր ու սրիկաներ, որոնց ով և որտեղից լինելը չգիտենք. գուցե ոմանք նրանցից անփույթ են դարձել իրենց կյանքի և իշխանների հրամանատարների նկատմամբ, հանկարծակի հարձակվեն և կոտորեն երկրի մի մասը և ձեր ժողովրդին, կամ ավարեն ունեցվածքը, ընտանիքները և առնելով հեռու ճողոպրեն, ու ձեր ժողովուրդը կորըստի ու գերության մատնվի։ Այդ պատճառով խղճալով ձեզ՝ մտածել եմ ձեզ փրկել հետևյալ կերպ. որ զավառապետերը և ձեր երկրի բնակիչները դուրս գան իրենց տեղերից, քիչ առաջ շարժվեն, գնան մի քանի օրվա ճանապարհ, իսկ մենք այստեղ, դեմները կտրելով, դավենք օսմանցիների հետ, եթե Տերը մեզ հաջողություն տա, այդ ժամանակ կդառնաք ձեր տեղերը և կլինեք մեզ ժողովուրդ. իսկ եթե Աստված նրանց տա, մենք կթողնենք կգնանք, և դուք կդառնաք ձեր տեղերը, կլինեք նրանց ժողովուրդը»։ Երբ շահը

www.e-pdf.com

այս ասաց հայոց ավագանուն, որոնց գլխավորի անունն էր տեր Հովհաննես, որին հարգալից մակդիրով ասում էին աղա տերտեր: Նրանք հասկացան պատվադրական նենգությունը և վատ զգացին նրա խոսքերից. պատճառներ մտածելով՝ մոտեցան շահի նախարարներին, ասացին. «Այդ ժամանակը աշուն է,— քանի որ սուրբ Խաչի տոնից հետո էր, երբ երկիրը տարագրեցին,— երկրի բոլոր բնակիչները ճանապարհի պատրաստություն՝ գրաստ և այլ բեռնակիր չունեն ունեցվածքն ու մանուկները բառնալու համար. թեպետ առողջներն ու կարողները ոտքով կգնան, իսկ ծերերն ու մատղաշ մանուկները չեն կարող գնալ: Այս պատճառով խնդրում ենք արքայից այժմ մեզ ներել, իսկ այգ հրամանը Աստծու հաջողությամբ գարնանը կկատարենք»: Այս ասում էին՝ գուցե իրենցից [փորձության] ժամը անցնի:

Իսկ երկրների ավերիչը, քրիստոնյա ազգերի վատնիչը, սատանայի բնակարանը՝ Շահ-Աբաս թագավորը, չանսաց հայերի խոսքին: Այլ իր նախարարներին կանչեց իր առջև ու նրանցից վերակացուներ, երկրի բնակիչների վարիչներ նշանակեց. ամեն մի գավառի իշխան իր զորքով վարող ու քշող կլինի իր գավառի բնակիչներին:

Իսկ Ամիրգունա խանին հատկապես Երևան քաղաքի, Արարատյան երկրի և սրան մերձ գավառների [վերակացու նշանակեց]: Եվ շահը նրանց հրամայեց՝ որտեղ կարող են ձեռ գցել, տարագրեն-քշեն՝ չխղճալով ամենևին կենդանի շունչ, թե քրիստոնյա, թե մահմեդական, խոսքով համոզվողներին, չհամոզվողներին, թագավորի հրամանին չանսացողներին՝ սրով, մահվամբ, գերությամբ:

Իսկ զորապետները այսպիսի աշխարհակործան ու դաժան հրամանը թագավորի կողմից ընդունելուց հետո յուրաքանչյուր զորավար իր գնդով ելավ դիմաց Հայոց աշխարհի հրամայված գավառը իբրև հողմակոծ հուր, որ անցնում է եղեգնուտով: Տագնապալից աճապարանքով գավառների բոլոր բնակիչներին շուտափույթ խլելով իրենց բնակավայրերից և վտարելով իրենց տեղերից, ինչպես հոտ ու նախիր բազմաթիվ ոչխարների ու տավարների առաջները անելով՝ բռնությամբ քշեցին բերին հասցրին Արարատյան գավառը: Նրա լայնանիստ դաշտը ծագեծագ լցրին, որովհետև Գառնիի լեռների ստորոտներից մինչև Արաքս մեծ գետը բանակի լայնքն էր, իսկ երկարությունը, ըստ այդ լայնության, դուռ կշռադատիր. ես կասեմ մի օրվա ճանապարհ, քայց այլուր տեսա՝ գրված էր հինգ օրվա ճանապարհ: Հայոց թվականը նոր էր վերջացել, մտել էինք 1054 (1605) թվականի հայոց նավասարդ առաջին ամիսը, երբ երկիրը տարագրեցին:

Եվ պարսից զորքերը, որ անցան երկրի տարագրմանը, որտեղից որ ժողովրդին դուրս էին քշում, գյուղերից թե քաղաքներից, բոլոր շենները, տները, բնակավայրերը, անխնայորեն այրելով, հրկիզում էին: Հրկիզում էին նաև խոտի, հարդի, ցորենի, գարու և այլ պիտույքների համբարանոցները, ամեն ինչ այրելով ոչնչացնում էին: Այսպես ավերելով դատարկեցին երկիրը օսմանցի զորքերի համար, որպեսզի նրանց որևէ օրվա պահիկ չմնա, և նրանք վտանգավոր կացության մեջ լինեն: Նաև տեղահանված ժողովուրդը այդ տեսնելով հուսահատ լինի ու ետ չդառնա:

Արդ՝ պարսից այն զորքերը, որ նշանակվեցին իբրև ժողովրդին տարապրողներ, ժողովրդին քշելով բերին հասցրին էջմիածնի դաշտը: Այդ ժամանակ Շահ-Աբասը նստած էր Աղջաղալա, իսկ օսմանցիների զորահրամանատար Ջղալօղլին իր զորքով հասել էր Կարս: Շահ-Աբասը գիտեր, որ զեմ հանդիման ճակատամարտելով չէր կարող օսմանցիներին դիմադրել, վախե-

www.e-pdf.com

նում էր նրանց մեծաքանակությունից, ուստի դարձավ իր ամբողջ բանակով, հետևից ժողովրդի չվերթին դեպի Պարսկաստան։ Նաև օսմանյան զորքերը շարժվելով հետևեցին պարսից բանակին։ Եղան երեք մեծ ու անթիվ բանակներ. առաջին բանակը ժողովրդի բանակն էր, երկրորդը պարսից բանակն էր, իսկ երրորդ բանակը օսմանյանն էր։ Այնպես էր պատահում, որ երբ ժողովրդի բանակը չվում էր, սրանց հանդրվանում Շահ-Աբասն էր պարսից զորքով իջնում-բանակում, իսկ սրանց չվերթից հետո նույն տեղում օսմանյան զորքերով բանակում էր Ջղալօղլին. և այսպես միմյանց կրնկակոխ հետամտելով՝ գնացին, մինչև որ ժողովուրդը և պարսիկները հասան Ջուղա գյուղը, իսկ օսմանցիները հասան Նախիջևան։ Այսուհետև պարսիկները և ոչ մեկ ժամ չթուլլատրեցին հանգիստ առնել, այլ խիստ տագնապով նեղում էին ժողովրդին, ամանց մահու հարվածներով ծեծում էին, ոմանց քթերն ու ականջները կտրելով, ոմանց էլ գլուխները կտրում էին ու ցցում էին ձողի վրա, ինչպես Առաքել կաթողիկոսի եղբորը, որի անունն էր Օհանջան. սրա և մի այլ մարդու գլուխները կտրեցին և Արաքս գետի ափին ձողի վրա ցցեցին։ Սրանք և սրանցից առավել կոտանքների ու խոշտանգումների էին ենթարկում ժողովրդին, իրրև ահ ու սարսափ ժողովրդին և տեսնողներին, որպեսզի գետը շտապ անցնեն։ Պարսից խորամանկ ազգը այս ամեն փորձություններին էր ենթարկում ժողովրդին օսմանցիների սարսափից, որոնք հետապնդում էին պարսիկներին։ Որովհետև պարսիկները տեսնում էին, որ ժողովրդի քանակը անթիվ է, նույնպես տեսնում էին, որ իրենց բանակն էլ շատ է, մինչև այսքան բազմությունը գետը անցներ, շատ օրեր կանցնեին։ Օսմանյան զորքից երկնչում էին, թե՝ մի գուցե այդքան օրերի ընթացքում հանկարծակի կհարձակվեն պարսից բանակի վրա, կոտորած կսարքեն, կամ վնաս կհասցնեն իրենց և կամ ժողովրդին իրենցից հափշտակելով՝ ետ կդարձնեն և իրենց շար դիտավորությունը կխափանվի։ Այս պատճառով տագնապալից ստիպում էին ժողովրդին գետն անցնել։ Եվ ժողովրդի շատության պատճառով նրանց նավ կամ արկղ չէր բավականացնում, որոնցով գետը անցնեին. թեպետ այլ տեղերից ուրիշ նավեր բերին ու այնտեղ շատ արկղեր շինեցին, սակայն ժողովրդի բանակը և պարսից զորքը շատ-շատ էին, տակավին չէր բավականացնում։ Եվ պարսից այն զորքերից, որոնք նշանակված էին իբրև ժողովրդին քշողներ, ժողովրդին շրջապատած էին պահում, որպեսզի ոչ ոք չփախչի. նաև փայտով ծեծում, հարվածում, ջարդում ու մղում էին, լցնում գետը։ Եվ այսպես ժողովրդի փորձությունն ու վիշտը ասպառնում էր։

Իսկ թշվառ ժողովուրդը նայում, իր առջև տեսնում էր ծովի նման անհուն գետը, որ խեղդում էր, իսկ ետևից պարսից սուրն էր, որ ոպանում էր, և փախուստի ոչ մի հնար չկար։ Ընդհանուր կերպով աղիողորմ ազգեր, հորդ արցունքներ աչքերից թափելով՝ երկրորդ Արաքս էին գոյացնում, իսկ լացի, հառաչանքի, ճիչերի, վայերի, կսկծանքների, մորմոքների ձայները միմյանց խառնվելով ուժգին գոռում-գոչյուններ էին առաջացնում, բայց ողորմածություն ու փրկություն ոչ մի տեղից չկար։

Այստեղ մեր ժողովրդին խիստ անհրաժեշտությամբ պետք եղավ հին Մովսեսը և նրա աշակերտ Հեսուն՝ նոր Իսրայելը երկրորդ փարավոնի ձեռքից փրկելու համար, կամ գոնե քաջալերելու հարկավոր, լցնատաքած մեծ գետի հոսքը, բայց չգտնվեց, քանզի մեր մեղքերի հարդությունը մեր դեմ փակեց գթառատ Աստծու ողորմության գուռը։

Բայց պատից անողորմ զորքերը ժողովրդին քշելով լցնում էին գետը,

www.a-pdf.com

իսկ սրանք վտանգից գետի մեջ ավելի ու ավելի էին շատացնում աղաղակի ու ողրի ձայները: Սրանցից ոմանք բռնելով նավերի, ոմանք արկղերի եզրերից, ոմանք ձիերի, եզների ու գոմեշների պոչերից, ոմանք էլ ինքնուրույն լողալով անցնում էին: Իսկ նրանք, որոնք լողալ չգիտեին, կամ ուժ չունեին՝ ծերեր, պառավներ, տղաներ, աղջիկներ, մատղաշ մանուկներ լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց իբրև չոր ճյուղ գարնան ժամանակ: Գետատար մարդկանցով ծածկված էր գետի երեսը. թեպետ անցնողները անցան, բայց շատերը նրանք էին, որ ջրում խեղդվելով մեռան:

Պարսից զորքերի հեծյալներից ոմանք, որ ուժեղ ձիեր ունեին և իրենք ալրի տղամարդիկ էին և կարող, շրջում էին քրիստոնյաների մեջ ու, տեսնելով քրիստոնյա ուստրերին ու դուստրերին, որոնց հավանում էին, լինեին կանայք, աղջիկներ և տղաներ, երբեմն խաբում էին տերերին, թե տուր քեզ համար գետից այն կողմ անցկացնեմ, և երբ անցկացնում էին, այնտեղ գետին չէր դնում, այլ առնում-տանում էր ուր կամենում էր: Ուրիշներն էլ գողությամբ էին առնում-տանում: Մի մասն էլ հափշտակելով ու սպանությամբ էր տերերից առնում-տանում: Եվ շատ մայրեր երեխաներին ու տերեր հիվանդներին ճանապարհ գցեցին, դարձրին լքյալ, թողին գնացին անհանդուրժելի ու անտանելի փորձության պատճառով, որ հասել էր նրանց: Եվ միանգամից ասեմ, որ անտանելի թշվառություններ, արհավիրքներ հասան մեր ազգի վրա և չգիտեմ, թե ինչ ձևով դամբանական ու ապաշխարական ողբեր հյուսեմ հայ ազգի խորտակման վրա, որ ունակ դարձավ այսքան չարիքներ կրելու: Քանի որ հին Իսրայելի նման գերի էին քշվում երկրորդ բաբելացիների ձեռքով, բայց Երեմիան չկար, որ խրատեր, ոչ էլ Եղեկիելը կար, որ լուսավորեր, ոչ էլ Հեռուն կամ Զորաբաբելը, որ դարձը առաջնորդեր, այլ գարձել էին անհովիվ հոտեր, ցրվել ու հալածվել էին պատառոտող գայլերի ու գիշատիչ գաղանների առջև, որոնք նրանց քշում էին բռնի կերպով: Եվ նրանք գնալով գնում էին ու լալիս էին, որ բարձած տանում էին իրենց տերմները:

Իսկ սրան հաջորդ տեսանելի չեզավ այն, որ ասում է. գալով թող գան ու ցնծան, որովհետև ոչ եկան, ոչ էլ ցնծություն եղավ, այլ այնտեղ մնացին, ուր տարան, արգելեցին այսինքն՝ Պարսից աշխարհը:

Եվ եղավ, որ ողջ ժողովուրդը գետը անցավ, ժողովրդի հետ խառն գետը անցավ նաև պարսից բանակը: Մինչև այդտեղ Ամիրգունա խանն էր ժողովրդին քշողը, այստեղ Շահ-Աբասը հրամայեց նրան գնալ իր բանակի հետ, ժողովրդին քշող նշանակեց Խալիֆալու էլիազ սուլթանին. և սրան հրամանեց շտապ ու շուտափույթ քշել ժողովրդին և հեռացնել օսմանյան զորքերից և հասցնել Պարսկաստան: Իսկ ինքը՝ շահը, պարսից ամբողջ բանակով արքունի ճանապարհով, այսինքն՝ կենտրոնական ճանապարհով ուղի ընկավ, գնաց Թավրիզ: Սակայն ժողովրդին միևնույն արքունի ճանապարհով չտարան Թավրիզ օսմանցիներից երկյուղ ունենալու պատճառով, ոա գուցե հետևներից հասնելով՝ ժողովրդին խլեն պարսիկներից: Շահը էլիազ սուլթանին հրամայեց, որ նեղ ու անձուկ, դժվարին վայրերով տանի, որով օսմանյան բանակը չկարողանա նրանց հետևից գնալ: Եվ նա քշեց ժողովրդին ձորի ճանապարհով, որտեղով Արաքս գետը հոսում է իր ընթացքով, լեռների ու ձորերի դժվարին ելևէջներով, կածան տեղերով: Եվ բաղում առապանքներով ու փորձություններով անցան լեռների գժվարին տեղերը: Ժողովրդին դժվարին վայրերից անցկացնելով՝ տարան Թարումխալխալ, Ահար, Մուշկան և սրանց մոտակա վայրերը, ուր տեղավորեցին նրանց ամիռներ

ձմռան սաստկասառույց ու դառնաշունչ ցրտերի պատճառով, երբ չէին կարող գնալ։

Իսկ երբ եկավ գարնանային քաղցրաշունչ եղանակը, Արութուրաք բեկ անունով մի այլ իշխան նշանակեցին ժողովրդին քշող, որ կրկին սկսեց քշել ժողովրդին, մինչև տարավ, հասցրեց Սպահան քաղաքը։ Այնտեղ, ովքեր քաղաքացիներ էին, նույն քաղաքում տեղավորելով՝ բնակեցրին, իսկ ովքեր շինականներ ու գյուղացիներ էին, Սպահան քաղաքի շրջակա գավառներում բնակեցրին, այսինքն՝ Լնջանում, Ալնջանում, Գանդիմանում, Ջղախոռում, Փարիայում և Բուրվարիում. այդ տեղերում բնակվեցին ու մնացին մինչև այսօր։ Քանզի տարիքով մարդիկ, որ Հայաստանից էին գնացել և ծանոթ էին հայ աշխարհի վայելչություններին, որանք մեռան այնտեղ, իսկ նրանք, որ այնտեղ ծնվեցին, սնվեցին ու վարժվեցին, այդ երկիրը սիրեցին, նրան ընտելացան, քանզի վարժվեցին նրան, այդ պատճառով այնտեղ մնացին մինչև այսօր։

Սպահան տարված հայոց այս ժողովրդից հինգ հարյուր տուն բաժանեցին, տարան Սպահան, հինգ հարյուր տուն բաժանեցին տարան Շիրազի երկրամասը և այնտեղ բնակեցրին։ Քանզի Շիրազի տեր Ալահվերդի խանը Շահ-Աբասից խնդրեց իրեն շնորհել հայ ազգից մի մաս հայ ազգի բարեմտության ու հավատարմության համար, որպեսզի դառնան նրա ժողովուրդը. Թագավորը հարգեց նրա խնդրանքը, և նա տարավ բնակեցրեց Շիրազի գավառում։

Դարձյալ անդրադառնանք մեր պատմության սկզբին։ Քանզի երբ թագավորի հրամանով Ամիրգունա խանը պատրաստվեց տարագրելու Արարատյան երկիրը, իր զորքերից մի զորամաս ուղարկեց Գառնիի գավառը, որպեսզի նրանց ետ քշեցնեն, բերեն խառնեն ժողովրդի չվերթին։ Իսկ գնացած զորքը նախ մտավ նույն Գառնի գյուղը. սրանք թագավորի հրամանի համապատասխան չվարվեցին, այլ իբրև գերեվարիչներ ու ավարառուներ սկսեցին քրիստոնյաների ունեցվածքն ու զավակներին հափշտակել։ Այս տեսնելով՝ գյուղի բնակիչները միմյանց ձայն տվին ու կազմեցին մեծ ամբոխ, ապա սրով, քարով ու փայտով խփեցին, վիրավորեցին, գլխատեցին նրանց ու իրենցից հեռացրին, իսկ իրենք այնտեղ մնացին անհոգ, ինչպես Մորիկի ժամանակներում, և ոչ մի տեղ չփախան և ոչ էլ գնացին խանին իմացնելու նրա զորքի հափշտակության մասին։ Իսկ հալածված զորամասը գնաց Ամիրգունա խանի մոտ, սկսեց ամբաստանել ժողովրդին և մեծամեծ հանցանքներ հերյուրել նրանց վրա։ Սա խիստ բարկությամբ զայրացած իր հետ վերցրեց մեծ զորամաս, եկավ Գառնիի գավառը. Նախ նույն Գառնի գյուղի տղամարդկանց բռնեց, ենթարկեց խոշտանգումների ու չարչարանքների՝ զանահարությամբ, հոդերի հատումով. և հետո իսկույն տեղահանեց, տվեց իր զորականների ձեռքը, որ սրանց տանեն խառնեն ժողովրդի մեծ չվերթին, որ և տարան խառնեցին ժողովրդի չվերթին, ու սրանք նրանց հետ գնացին Պարսից աշխարհը։ Այնտեղ Գառնիում Ամիրգունա խանին ասացին, թե Գառնիի գավառում այլ գյուղեր էլ կան, որոնք ամրացել են այս երկրի լեռների ամուր վայրերում, այրերում, քարանձավների ծերպերում։ Եվ հանվանե հիշեցին Հավուց թառի վանքի եպիսկոպոս Մանվելին և Գեղարդի վանքի Աստվածատուր եպիսկոպոսին, թե սրանք մտել են այսինչ այրերը և այնտեղ ամրացել։ Քանզի այս երկու եպիսկոպոսն էլ երբ լսեցին երկրի տարագրության մասին, հոգացին իրենց կարիքների համար անհրաժեշտ պետքերը՝ իբրև, ուտելիք, ըմպելիք և իրենց հետ տանելով իրենց մերձավոր-

www.a-pdf.com

www.e-pdf.com

ներից ամանց՝ կրոնավոր ու աշխարհիկ մարդիկ, սրանց հետ ելան, գնացին Գեղարդի ձորը և մտնելով քարանձավային մի այր՝ դադարեցին: Որովհետև Գեղարդի ձորում շատ հին ժամանակներից կան փորած այրեր ու ամրոցներ: Ամիրգունա խանը, այս լսելով, առավ իր հետ եղած զորամասը և եկավ Գեղարդի ձորը և ինքը եկավ կանգնեց եպիսկոպոսների գտնված այրի դիմացդեպի այրը բարձր ձայն տալով՝ խոսում էր նրանց հետ խաղաղությամբ, արպեսզի գան թագավորի հրամանին հնազանդվեն: Իսկ նրանք անարգանքի, հայհոյանքի, անպատվության տգեղ խոսքեր էին այնտեղից ձայնելով ասում խանին: Նաև քար ու նետ արձակեցին դեպի խանը: Իսկ երբ խանը տեսավ, որ խաղաղությամբ թագավորի հրամանին հնազանդության չեն գալիս, այնժամ հրամայեց իր զորամասին, ինչ որ կարող են անել, թող անեն: Խանի զորականներից քարագնաց Մարդիկ ելան լեռան գագաթը, որտեղ քարայրն էր և բռնելով քարաժայռերից հնարավոր ընթացքով իջան քարայրի մուտքի կողմը: Քարագնաց տաճիկներից մեկը կանգնեց քարայրի դռանը, որտեղ Մանվել եպիսկոպոսն էր, և նայելով ներս՝ տեսավ եպիսկոպոսին նստած: Եվ տաճիկների լեզվով նախ ողջույն տվեց եպիսկոպոսին, իսկ եպիսկոպոսը չկարողացավ պատասխանել, այլ ապշեց մնաց, իսկ տաճիկը սրտով ու գործով արիացավ, մտավ քարայրը և իսկույն մեջքը կապած կարճ սուրը դուրս քաշեց, զարկեց, այնտեղ սպանեց եպիսկոպոսին և գլուխը կտրելով՝ ցած գցեց խանի առջև: Ապա պարսից զորքի այլ զինվորներ ևս սրտապնդվելով շտապ բարձրացան քարայր, եպիսկոպոսի մյուս ընկերներին ևս բռնեցին, իջեցրին ցած խանի առջև. բոլորին հենց այդտեղ սպանեցին: Ապա նույն ձորը մանրակրկիտ հետախուզեցին, որոնեցին ու բոլոր փախածներին, որոնք քարերի խոռոչներում ու ծակերում թաքնված էին, ամենին գտան. նրանց ունեցվածքը կողոպտեցին, նրանցից ոմանց կոտորեցին, ոմանց թողնելով կենդանի՝ տարան խառնեցին ժողովրդի բուն հավաքի չվերթին:

Այդ՝ հենց այստեղ հայտնի եղավ Աստծո արդար դատաստանը, որ բաժանում է մինչև շնչի, ուղեղի, օդի հատվածքը այս երկու եպիսկոպոսների վրա, որոնք գնացին Սպահան, բերին պարսիկ ազգը, որոնք ավերեցին Հայոց աշխարհը, և իրենք էլ նույն սրով սատկեցին, որովհետև ում հետ հույս կապեցին, նրանք էլ եղան իրենց սատակիչները, ըստ այն խոսքի, որ գրված է Օրինաց գրքում. ինչով որ մեկը մեղանչում է, նրանով էլ տանջանքի կենթարկվի: Ոչինչ չօգտվելով իրենց փուչ առաջարկություններից ու անօրեն գործերից՝ նաև պարտական մնացին Աստծու արդար դատաստանի առջև Հայոց աշխարհի ավերման, մեր ազգի կործանման, անմեղ մարդկանց կորուստի, այնքան անպարտ արցունքների թափման, սուրբ եկեղեցիների հանգման, այլ տեսակ-տեսակ չարաչար դիպվածների համար, և այս բոլորից հետո իրենք ևս սատկեցին պարսից սրով:

Այս ամենից հետո խանը հավաքեց իր ողջ զորքը ու գնաց նույն Գառնիի գավառի այլ փախստականների վրա, որոնց որ չկարողացան բռնել, թողին հեռացան, իսկ որոնց որ բռնեցին, թալանեցին ու սպանեցին, կամ քշելով տարան իրենց հետ: Գնալով գնացին մինչև հասան մեծ ձորը, որն անվանում են Քոռադարա: Եվ չնայած այնտեղ ձորում շատ քարայրներ ու ամրոցներ կային, որտեղ քրիստոնյաները թաքնված էին. թողին բոլոր թաքստոցները, դիմեցին մի նշանավոր քարայրի վրա, որ կոչում էին Յախչխան այր, քանի որ նրա ամրության շնորհիվ այնտեղ շատ քրիստոնյա ազամարդիկ ու կանայք էին հավաքված՝ մոտ հազար հոգի: Քարայրի մուտքը քրիստոնյաները զգուշությամբ պահպանում էին: Իսկ պարսից զորքը, թեպետև բազ-

www.a-pdf.com

մաթիվ ժամեր նետաձգությամբ ու հրացանով կռիվ մղելով, մարտնչամ էր, սակայն չկարողացավ հաղթել, որովհետև ներքևի կողմից խիստ շատ բարձր էր։ Ապա չարագույտ պարսից ազգը գտավ մի այլ հնար։ Իրենց զորքից անջատեցին երկու հարյուր մարդ, որոնք ձորից բարձրացան գնացին ժայռի գլուխը, և որովհետև ձորի ժայռերն ու վեմերը միմյանց վրա դասավորված էին գոտիներով, շատ պարաններ իրար կապելով՝ իջեցնում էին միմյանց գոտի առ գոտի. և գոտուց գոտի իջնելով՝ հասան այն գոտու գլուխը, որի մեջ քարայրն էր. այդտեղ բերին չորս մարդ և հագցրին երկաթե զրահներ՝ դրանց ոտից գլուխ դարձրին երկաթապատ. յուրաքանչյուրի մեջքը կապեցին չորսից հինգ թոար, որպեսզի երբ մեկը կոտրվի, մյուսը պատրաստ լինի. և նրանց ձեռքը տվին մերկացրած սուսերներ ու յուրաքանչյուրի մեջքը կապեցին երկու-երեք պաբան, որպեսզի երբ մեկը կտրվի, մյուսը նրան պահի։ Ապա անոահման բարձրությունից նրանց կախեցին, մինչև եկան հասան քարայրին, և մտնելով քարայրի մեջ՝ դիմելով տղամարդկանց ու կանանց վրա մերկ ոուսերներով, սկսեցին անխնա կոտորել նրանց. ինչպես գայլեր, որ մտնելով ոչխարների մակաղատեղին, կոտորում են առանց գթալու։ Եվ խեղճ քրիստոնյաները, տեսնելով պարսից անողորմ սուրը, որ կոտորում է իրենց, սկսեցին ողբի, լացի ու կոծի, աղաղակի բարձր ձայնով լալ ու ողբալ, կոծել իրենց կորուստը։ Խռովված աղմկում էին իրրև փոթորկած ծով, ալեկոծված միմյանց հետ մրցում էին, մի կողմից մի այլ կողմ էին ընկնում ազատվելու հնար գտնելու համար, բայց փախուստի տեղ չկար։ Եվ այն մարդիկ, որ պահպանում էին քարայրի մուտքի ճանապարհը, լսելով աղաղակն ու իմանալով տեղի ունեցածը, թողեցին պահպանությունը և իրենց ընտանիքներին խղճալու պատճառով գնացին քարայրի ներսը ընտանիքները փրկելու։ Դրսի կողմից պարսիկները, տեսնելով պահապանների գնալը, հավաքված միասին մտան քարայր և սկսեցին քրիստոնյաներին սպանել մարդախողխող սրեբով քարայրի դռնից մինչև քարայրի բուն ներսի անկյունները. խոտհարների նման բոլորին ջարդած վայր թափեցին։ Եվ որովհետև արուներին, պաուավներին և իրենց համար ոչ հաճելիներին սպանեցին, ուստի քարայրի հատակը ծովացավ քրիստոնյաների արյունով, ու բոլոր քարերը ներկվեցին։ Կաթնկեր մանուկներին մայրերի գրկերից խլում էին և քարայրից վայր նետում։ Իսկ կանանցից, տղաներից, աղջիկներից ոմանք, որ սպանումից փրկվեցին, երբ իրենց տեսան մատնված անիրավ մարդակերպ գազաններքի ձեռքը, որ իրենց քշելու են գերության ու տեսակ-տեսակ կեղտոտություններով ապականելու են իրենց մաքրությունը, այդ պատճառով լավ համաբերցին մաքուր վիճակով մահը, քան ժամանակավոր կարճ կյանքը, որ այն էլ պետք է անցնի մեղքերով ու չարիքներ կրելով. շատերը նրանցից իրենց երեսները ծածկում էին իրենց գլխարկով կամ զգեստով և անոահման բարձրությունից իրենց վայր էին նետում քարայրից ու մեռնում։ Եվ սրավճեան ձորի մեջ խիտ ծառերի անտառ կար, նրանցից ոմանք, որ իրենց վայր էին նետում քարայրից, գալով հանգիպում էին ծառերի առաջի ծայրերին ու մնում էին նրանց մեջ, ոմանց էլ ճյուղը փորից մտնում, մեջքից ելնում էր, ոմանց էլ սրտից մտնում, թիկունքից էր ելնում։ Սրանք էլ այսպիսի դաժան ու դառն մահով վախճանվեցին։ Իսկ սրանցից մնացածներին գերի գտնելով տարան. նրանց ունեցվածքը կողոպտեցին ու բռժանեցին իրար մեջ ի լիություն իրենց։ Փորից զորքերը ելան այնտեղից, վերցրին իրենց հետ բոլոր գերիներին, եկան պարսից բուն բանակատեղը։

www.a-pdf.com

Այս ամենը մենք լսեցինք և դրելով՝ ճմլվում է մեր սիրտը, գալարվում են մեր որովայնի աղիները, իսկ մեր աչքերը արտասուքի վտակներ են հասցնելով իջեցնում մեր ժողովրդին թշվառություն գալու և հասնելու համար։ Եվ չենք կարողանում այստեղ [իմանալ], թե ի՞նչ օրինակով կամ ի՞նչ ձևով ողբեր ակսելով՝ ողբանք մեր ազգի և երկրի խորտակման վրա, ի՞նչ պատճառով ելավ մահաբեր հրամանը երկրորդ Սարյուռոսի թերանից և հրախառն շունչը նրա ռունգներից ու կերավ Լիբանանի եղևնափայտերը, որովհետև միանգամից անմարդարնակ դարձրեց ամեն ինչով լի ու հուժքի աշխարհս Հայոց, որովհետև տարագրելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քշեց Պարսկաստան, այլ շատ գավառներ։ Եվ սկսեցին Նախիջևանի սահմաններից, անցան Ղեղգնաձոր, Գեղամա ծովի եզերքով, Լոռիով, Համզաչիման գավառը, Ապարանը, Շաբարխանան, Շիրակավանը, Զարիշատը, Կարսի գյուղերի մի մասը, Կաղզվանի ձորը ամբողջովին, բովանդակ Ալաշկերտը, Մակուի գյուղերը, Աղբակի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի գավառները, նաև ինչ պանդուխտներ, որ մնացել էին Թավրիզ քաղաքում կամ գյուղերում, բովանդակ Արարատյան դաշտը, Երևան քաղաքը, Կոտայքի շրջանը, Ծաղկունքի ձորը, Գառնո ձորը, Ուրծաձորը, սրանցից առաջ Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրիի, Վանա գավառները ավարով ու գերությամբ բերել էին Երևան, բոլորին սրանց հետ քշեցին տարան։

Արդ՝ այս բոլոր գավառները և նրանք, որ սրանց հետ էին, շահը հրամայեց՝ քշեցին տարան Պարսկաստան, և Հայոց վայելչատես աշխարհը ավերակ ու անմարդաբնակ դարձրեց։ Եվ այժմ տեսնում ենք սրա արգավանդ ու բերրի հողերը, արտերն ու անդաստանները և բազմապատիկ գյուղերի ու մեծատարած ավանների ավերակները։ Նաև [տեսնում ենք] անապատիկ ամուր, հաստահեղույս քարեղեն, կրով հեղուսված անմատչելի բերդերի ավերումը, տապալումն ու քայքայումը։ Եվս ավելի մեծափառ, հռչակավոր վանքերը սուրբ Աստծու տեղ ու հանգստարան էին։ Իսկ Հայոց աշխարհի երկնանման, բարձրաբերձ, գմբեթաշեն, կոփածո, հաստահեղույս վեմերով կառուցված եկեղեցիները, որոնց մեջ հորինված էին շուշանների, կենդանիների զանազան ու պես-պես նկարներ ու ձևեր՝ գեղեցիկ հորինվածքով տեսակ-տեսակ հնարամտությամբ քանդակված վեմերի վրա։ Սրանց ձևն ու շինվածքի դիրքը, սյուները, տեսակ-տեսակ կամարների վերնախարիսխները, լուսանցույցներն ու դռները և ամեն ինչ խորհրդավոր են։ Նաև տեսնում եմ քաղցրահամ, ականակիտ, մշտահոս ջրերի աղբյուրակները և կարկաչահոս, ծիծաղախիտ, մշտընթաց, հառաջախաղաց ջրերի վտակները, որ ձյունարարդ, սպիտակափառ, բարձրաբերձ լեռների գագաթներից ներքև հոսելով իջնում են դաշտը ու նրանց շենություն պարգևում։

Նաև տեսնում եմ քաղցրաշունչ, առողջարար ու կենսապարգև օդը ու սրա հողմը։ Եվ սրա այլ ամեն վայելչությունները տեսնելով, հեղձամուղձ լինելով՝ փղձկում են և արտասվելով ողբում ու կսկծոմ են, որովհետև անապատ եղավ մեր վայելուչ ու քաղցր երկիրը։ Եվ մեր հայրենի ու բնիկ ժառանգություններից, օրհնված երկրից, որ լիքն էր Աստծու սրբերի մասունքներով, ոռոգված էր սուրբ մարտիրոսների արյունով և օրհնված էր սուրբ առաքյալների քարոզներով, եղան վտարանդի ու տարագրված օտար երկիր, այլացեղ և այլալեզու ազգերի մոտ, որոնք հոգու և հավատի թշնամիներ են ու մարմնի արյան ծարավի։ Նրանք այնտեղ օրավուր քիչ-քիչ նվազում են, ոմանք մահվամբ ու կորուստով, ոմանք հավատի ուրացությամբ պատճառ են պիղծ անապատի անօրեն կրոնին։

www.a-pdf.com

Իսկ երկնանման ու դրախտակերպ եկեղեցիներին ի՞նչ ասեմ, որոնք մնացել են խավարում, բնակիչներից թափուր են դարձել, մերկացել են զարդերից, եղել են համբարուների ու ջայլամների հանգրվաններ, ըստ Եսայի մարգարեի՝ դարձել են աղվեսների, նապաստակների որջեր, խաշների ու խոշոր անասունների մակաղատեղի, թռչունների ու ավերաբնակ բուերի բներ։ Փոխանակ օրավուր նորոգման, օր առ օր խարխլվում, քայքայվում, ավերվում ու փլուզվում են։ Փոխանակ անուշահոտ խունկերի բուրման լցվում են ողբերով, լռել են փառաբանիչների ձայները, տարեկան տոների սամունքները և փրկական պատարագների նվիրաբերումները։

Արդ՝ այստեղ մեզ անհրաժեշտ է հին Երեմիան, որ ողբա նոր Իսրայելը՝ [Հայաստանը], քանի որ ըստ քերթողահայր ողբերգակ Մովսեսի [Խորենացու], այլևս փեսան չի դառնալու դեպի մեզ, այլ անդարձ ընթացքով հեռացավ մեզնից։ Արդ՝ մեր ազգի անունը կոչենք վայքաբովթ, քանզի վերացավ Իսրայելի փառքը՝ ըստ հնում ասվածի։

Կրկին դառնանք մեր առաջին պատմության շարադրանքին, այն աքին, որ Ջղալօղլուն հասցրինք Նախիջևան, իսկ շահին տարանք Թավրիզ։ Արդ՝ շահը գնաց Թավրիզ ու այնտեղ պարսից զորքով ձմեռեց , որովհետև օսմանցիների ահը նրանից հեռացավ։

Իսկ Ջղալօղլին, որ գալիս էր պարսից բանակի հետևից, երբ Նախիջևան հասավ, լսեց, որ շահը տարագրված ժողովրդին Արաքս գետից անցկացրել, տարել է Պարսկաստան։ Նաև բոլոր ջուղայեցիներին քշել տարել է, իսկ շենքերը հրդեհել։ Նա մեծ զարմանքով շվարած ապուշ կտրեց, թե ինչպես շտապ սուղ օրերի ընթացքում այդքան մեծ ու ծանր գործը պարսիկները գլուխ բերին։ Դրա համար պատրաստեց երկու լրտես ու սրանց հրամայեց գնալ Ջուղա, տեսնել ու իմանալ խոսքերի իսկությունը և իրեն ստույգ լուր բերել։ Իսկ լրտեսները գնացին տեսան՝ ամեն ինչ ըստ ասվածի կատարված վերջացած է, նաև Ջուղայի շենքերը հրդեհված են, և դեռ խանձողները ծխում էին։ Լրտեսները այնտեղից դարձան Ջղալօղլու մոտ [և ասացին], թե բոլոր լուրերը ճիշտ էին։ Այդտեղ Ջղալօղլին իր մեջ խորհեց՝ չգնալ Ջուղայի ճանապարհով, այլ Արաքս գետը անցնել ու հետամտել պարսիկներին։ Նախ՝ կասկածի մեջ ընկավ ու երկյուղեց պարսից հնարամտությունից, որ միգուցե ետ դառնան և հանկարծակի հարձակվեն օսմանցիների վրա, շրջափակեն Արաքսի ու ձորերի միջև և կոտորեն։ Երկրորդ՝ տարագրված ժողովրդին այլ ճանապարհով քշեցին, [մի ճանապարհ], որով օսմանցիների ծանր բանակը չէր կարող անցնել, եթե անգամ կամենար։ Երրորդ՝ նրանց դարձի նշանավոր օրը, որ կոչում են զատում գյամի, մոտեցել էր։ Այս բաները և սրանց նմանները կշռադատելով՝ Թավրիզ չգնաց [Ջղալօղլին], այլ Նախիջևանից շարժվելով՝ Աստապատ գյուղի մոտ Արաքսը անցավ և իր բանակով գնաց Վան քաղաքը և մինչև գարուն այնտեղ ձմեռեց։

ԳԼՈՒԽ Ե

ԱՄԵՆԱՓԱՐԹԱՄ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔ ՋՈՒՂԱՅԻ ԴԵՊԻ ՊԱՐՍԻՑ ԵՐԿԻՐԸ ՏԱՐԱԳՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվ արդ՝ այս ամենից հետո, որ գործվեց Շահ-Աբաս թագավորի կողմից մեր երկրի և մեր հայոց ազգի հանդեպ, որ տարագրեց Պարսկաստան, և որ մենք պատմեցինք, ժամանակն է, որ այսուհետև պատմենք մեծ ու անվանի գյուղաքաղաք Ջուղայի մասին, քանի որ հին ամբարած դառն թույնն

www.a-pdf.com

ու նախանձը, որ Ջուղայի համար իր սրտի խորքում թաքուն բորբոքուն էր պահում շահը, այստեղ առիթ ներկայացավ արտահայտելու, ցույց տալու, որովհետև շահը իր մեջ բերում էր իր նախատիպ Սաբյուռոսի [Շապուհ Բ-րդի] խորհուրդը: Որովհետև, ինչպես պատմեցինք նախորդ գլխում, շահը պարսից զորքերից նշանակեց հայոց ազգի տարադրիչներ, որոնց ուղարկեց Հայոց ողջ երկիրը, և սրանք հանեցին տարագրեցին. այսպես էլ վարվեց Ջուղայի հետ:

Իր առջև կանչեց Հանիս Թահմազդուլի բեկին, որի մասին նախապես պատմեցինք, թե Աթաբեկի եղբայրն է. սա վրացիների կողմից պատանդ էր տրված պարսից թագավորներին, որոնց մոտ դաստիարակվելով ուրացավ հավատը: Այժմ շահը կանչեց այս Թահմազդուլուն իր առջև, գրեց հրամանհրովարտակ, տվեց նրան և հրամայեց գնալ Ջուղա ու միանգամից տարագրել նրանց՝ չթողնելով նրանում և ոչ մի բնակիչ: Թահմազդուլին, ելնելով շահի մոտից, սրընթաց արշավանքով շեշտակի աճապարեց Ջուղա և կանչեց ավագանուն ու խիստ բարկությամբ սպառնաց նրանց, թե սարսռեցնող ու տանջալից մահով նրանց կոչնչացնի, եթե անմիջապես ու շուտափույթ չկատարեն թագավորի հրամանը: Նաև թագավորի հրաման-հրովարտակը հանեցին ողջ ժողովրդի առջև կարդացին. այնտեղ գրված էր, թե հրաման է մեր թագավորությունից ձեզ՝ ջուղայեցիներիդ, որ ելնեք ձեր տեղերից ու գնաք Պարսկաստան:

Դրանից հետո Թահմազդուլի բեկը հրամայեց, որ մունետիկ ելնի, այսինքն՝ ջառչի, ու կանչի ամենուրեք Ջուղայի շենի մեջ: «Հրաման է մեծ թագավոր Շահ-Աբասի կողմից, ձեզ՝ Ջուղայի բոլոր բնակիչներիդ, ելնել ձեր բնակությունից ու գնալ Պարսկաստան: Արդ՝ երեք օր ձեզ է շնորհվում, որ ելնեք, իսկ ով երեք օրից հետո այստեղ գտնվի, իրեն կսպանեն, իսկ նրա ընտանիքը և ունեցվածքը կգերեվարեն. նաև՝ եթե փախչի կամ թաքնվի, ով որ այդպիսին մատնացույց անի, նրա ունեցվածքը մատնացուցողին կլինի, իսկ դուխը՝ թագավորին»: Եվ այս հրամանը միշտ հայտարարելով՝ կանչում էր մունետիկը և սարսափեցնում բոլորին: Մահվան սպառնալիքի սարսափից չդանդաղեցին ջուղայեցիք, այլ անմիջապես կատարվեց նրանց ուղղված թագավորի հրամանը, պատրաստվեցին դուրս գնալ: Բայց շտապանքով ու հանկարծակի դուրս գալու պատճառով գրաստ ու բեռնակիր անասուն չէին գըտնում, ուստի խիստ վտանգված էր ժողովուրդը, որովհետև նրանց ունեցվածքը ցրված ու թափված էր իրենց առջև, ու չէին կարողանում բառնալ տանել դրաստներ չլինելու պատճառով: Ինչ որ կարողացան բարձել, բարձին, իսկ ինչ որ չկարողացան բարձել, ամեն մեկը պահուստ արին, և իբրև թաքուստ թաղեցին: Բայց նրանց ունեցվածքի մեծ մասը կորավ ու հափշտակվեց, քանզի ոչ միայն այն զորքերը, որ եկել էին Թահմազդուլի բեկի հետ, սրտնք միայն հարկադրում էին ժողովրդին շտապ դուրս գալու համար, այլև մահմեդականներից շատերը, որոնք շրջակա գյուղերից էին գալիս, և սրտնք պարսից զորքերից էին կամ իրենց բուն բանակից, գալիս էին խառնվում Թահմազդուլի բեկի զորքերի հետ, և օրավուր պարսիկները ավելանում էին Ջուղայում: Եվ մահմեդականները գումարվելով միասնաբար երբեմն տասն, երբեմն քսան, երբեմն երեսուն հոգի մտնում էին քրիստոնյաների տները, նրանց ստիպում էին դուրս գալ ու դնալ, սաստիկ ծեծում էին, ինչքից ու կարասիքից իրենք էին հափշտակում, ինչ որ սրտերն ուզում էր, իսկ մնացածը ցաք ու ցրիվ էին տալիս, որպեսզի ուրիշները հափշտակեն, և այսպես կողոպուտի ու կորստի էր մատնվում քրիստոնյանների հարստությունը:

www.a-pdf.com

Եվ դառնագույն չարիքները, որ թափեցին ժողովրդի գլխին ծեծելն էր, կեղեքելը, հարստահարելը։ Ջուղայի բոլոր բնակիչները՝ ճար չունենալով, յուրաքանչյուր ոք իր կամքից անկախ ելավ գնալու։ Թեպետ մարմնապես զորեղները, կամ նրանք, որոնք ունեին գույք, հարստություն, նրանցով էին պատրաստվում գնալու, բայց նրանք, որոնք թույլ էին, այսինքն՝ տնանկները, այրիները, ծերերը, չէին կարողանում գնալ, աղիողորմ ձայնով աղաղակ էին բարձրացնում, արտասուքով, լացուկոծով առհասարակ ողբում էին։ Ոմանք ողբում էին իրենց տներն ու շենքերը, ոմանք բնակավայրն ու հայրենիքը, ոմանք եկեղեցիները, ոմանք իրենց նախահայրերի գերեզմաններն ու դամբարանները, ոմանք իրենց գնալու մարմնական անկարողությունը, լալիս էին, ողբում էին, աչքերից հորդ արցունքներ էին թափում, բայց մեկը չկար, որ խղճար նրանց ու օգներ, որովհետև պճառատ Աստծու ողորմության դուռը փակված էր նրանց առջև։

Վերին Կաթան կոչվող եկեղեցու բանալին քահանաները առան և երբ Ջուղայի պարսպի դռնից դուրս եկան և հասան առաջին եկեղեցուն, որ Աստվածածին անունով շինված կա Ջուղայից դուրս, երբ նայեցին ու տեսան Աստվածածին եկեղեցին, շատ քրիստոնյաներ եկան խառնվեցին քահանաներին. նրանք ևս բերին իրենց տների բանալիները և միասին աղիողորմ ձայնով աղաղակ բարձրացրին, փղձկացող սրտով, արտասվալից աչքերով գոռում էին ու լալիս և աղաղակելով կանչում էին Աստվածածնին ու ասում. «Ով սուրբ Աստվածածին, մեր սուրբ եկեղեցու և տների բանալիները քեզ ենք հանձնում, որ դու այն օտար երկրից, ուր տանում են մեզ, վերադարձնես մեր տեղերը։ Այս ասելով բանալիները նետեցին գետը և մորմոքանքով շատ ժամեր բարձրաձայն լաց եղան, ու ապա գնացին։

Եվ այսպես Ջուղայի բնակչությունը՝ հարուստներ թե աղքատներ, դուրս եկավ Ջուղայից և գնաց Արաքս գետի ափը գետն անցնելու համար։ Այնտեղ խմբված տեղավորվեցին, մինչև որ ողջ ժողովուրդը գյուղից դուրս եկավ. գետեզրում հավաքված խմբվածների մոտ։ Եվ երբ ժողովրդի գալը դադրեց, այն ժամանակ պարսիկների կողմից հրամայվեց ժողովրդին, թե գետն անցեք։

Այս օրերին Շահ-Աբաս թագավորը հասել էր Ջուղա և բանակել Արաքս գետի ափին. այդ ժամանակ իբր թե խղճալով և ջուղայեցի ժողովրդին օգնելու համար Շահ-Աբաս թագավորը հրամայեց իր զորապետներին, որպեսզի սրանք էլ կարգադրեն իրենց զորքերին, ժողովրդին օգնեն, ձիանքով, ուղտերով անցկացնեն գետի այն կողմը։ Պարսից հեծյալները քրիստոնյա ժողովրդին անցկացնելիս ում իրենց սիրտը կպչում էր, լիներ կին, աղջիկ, տղա կամ ապրանք, առնում տանում էին, ուր կամենում էին, իսկ նրանց տերերը չէին կարող գնալ նրանց հետևից, և նրանք կոբուտի ու գերության էին մատնվում։ Իսկ ովքեր ակաբ էին, թափվում էին ջուրը, ծփալով ու ճչալով գնում էին ջրի երեսին, և շատերը խեղդվում էին ջրում ու մեռնում։ Գետի երկու եզրերում ցրված էին ջրից խեղդված մարդկանց մոտքիններն ու դիակները։ Ահա այսպիսի տառապանքով ժողովուրդը անցավ Արաքս գետը. մի քիչ առաջ գնալով՝ ճամբար դրեցին, մինչև տմենքը ժողովվեցին հավաքատեղում։

Եվ նույն տագնապալից օրերին չորքը մտաբելու մեջ հանճարեղ Շահ-Աբասը ավելի նոր չարիքներ մտածեց Ջուղայի համար. կտնչեց իր առջև նույն Հանիո Թոհմազազալի բեկին և հարցրեց, թե՝ Ջուղայի բնակիչներին տեղահանելուց հետո, այրեցի՞ն Ջուղայի շինվածքները։ Երբ պատասխան

www.a-pdf.com

ստացավ նրանից, թե թագավորի կողմից մեզ չէր հրամայված, այդ պատճառով չայրեցինք, բազմաթիվ հանդիմանություններից հետո անմիջապես հրամայեց իսկույն մեծ զորքով վերադառնալ և այրել տների ու այլ շենքերի կառույցները: Սա բազմաթիվ հրոսակներով շեշտակի հասավ Ջուղա, առան իրենց ձեռքերը վառված ջահեր, բոցավառ եղեգներ, նավթի լապտերներ, սկսեցին այրել ու հրդեհել, քանդել առաստաղները, տապալել պատերի շարվածքները: Ինավ չթողին ծածկված կամ շեն հարկ, այլ ավերի ու ոչնչացման հասցրին: Երբ իրենց չարագործությունը վերջացրին, դարձան եկան բուն բանակատեղը ու ներկայանալով՝ արքային պատմեցին, թե տեր, եղավ այնպես, ինչպես հրամայեցիր:

Այնուհետև շահը հրամայեց Թահմազղուլի բեկին, թե մի թողնիր Ջուղայի ժողովրդին նստի, այլ քշելով տար հասցրու Թավրիզ: Եվ նա իսկույն եկավ, ժողովրդին շարժեց այնտեղից, որտեղ ճամբարված էին: Եվ այն օրն ու ժամին, երբ ամեն մեկը բարձում էր իր բեռը, երկինքն ու իր օդը միասին փոթորկվեցին քրիստոնյա ժողովրդի վրա, քանզի կուտակվեցին ամպերը, փոթորկվեց օդը, մթնեց երկինքը, փչեցին ուժգին հողմեր, փայլատակում էր կայծակը մեծ ճայթյունով, տեղային ձյունախառն անձրևներ ու ծեծելով տանջեցին քրիստոնյաներին: Նրանք, ովքեր մարմնով զորեղ էին, կամ գրաստ ունեին, գնացին, իսկ տկարները օրեր հետո եկան հասան տառապանքով ու չարչարանքով: Ծանր տառապանքներով ու տաժանքի մեջ բերին հասցրին Թավրիզ քաղաքը:

Այնտեղ՝ Թավրիզում չար մարդիկ իրենց սրտի չար մաղձից չար Թահմազխուլի բեկի մոտ չարախոսեցին Ջուղայի մասին, հիշեցին, թե դեռևս Ջուղայում մնացած մարդիկ կան, որովհետև շատերը փախչելով լեռներն ու ձորերը, մի մասը պատճառաբանելով տկարությունը, ոմանք ծերությունը, ոմանք աղքատությունը, իսկ ուրիշներն էլ այլ պատճառներով չեկան, այնտեղ մնացին ու այժմ գտնվում են Ջուղայում: Երբ Թահմազղուլի խանը այս լսեց, սաստիկ զայրացավ, բայց որովհետև որևէ չար բան անելու ի վիճակի չէր, ուստի թողին, որ մնան մինչև գարուն:

Եվ երբ գարունը բացվեց [Թահմազղուլի բեկը] պատրաստեց իր մարդկանցից Հաջամ անունով մի երևելի մարդու մեծ զորքով, այլև հրովարտակ-հրաման առնելով թագավորից՝ տվեց նրա ձեռքը, ուղարկեց Ջուղա՝ մնացած ժողովրդին բերելու: Հաջամ աղան իր զորքով եկավ Ջուղա և մնացած ժողովրդին կանչեց իր առջև ու նրանց հետ խոսեց բոնի ահաբեկությամբ. «Եթե հնազանդվելով կանսաք թագավորի հրամանին, ելեք ձեր ընտանիքներով և ունեցվածքով միասին գնանք, իսկ եթե չեք կամենում գնալ, ձեր արուներին ու զորեղներին սրով կկոտորենք, իսկ ձեր ունեցվածքն ու ձեր ընտանիքները կգերեվարենք»: Նաև գնացին լեռներն ու ձորերը՝ փախստականների տեղերը, գտան փախածներին ու բերին Ջուղա: Հինանց [հիսուն օր զատկից հետո] երկրորդ կիրակվա երկուշաբթի օրը Ջուղայից քշեցին, ճանապարհ դրեցին դեպի Թավրիզ: Թավրիզից անցկացնելով բերին, հասցրին ժողովրդի առաջին ճամբարին Ղազբին քաղաքում: Նրանց հետ տեղավորեցին այնտեղ Ղազբին քաղաքում ու նրա գյուղերում ձմեռվա ցրտի պատճառով, երբ չէին կարող գնալ:

Գարնանային հողմը փչելու ժամանակ վերստին քշեցին նրանց, մինչև տարան, հասցրին Սպահան քաղաքը և այնտեղ բնակեցրին՝ հանձնելով նրանց շինության տեղեր: Նրանք շինեցին շենքեր ու իրենց համար բնակարաններ՝ հրաշալի ձևավորումով, կամարակապ փողոցներով, թևավոր ապարանքներով,

www.a pdf.com

հովասուն դատիկոններով, բարձրաբերձ ու արքայավայել շինվածքներով, զարդարեցին սակս և լաջվարդի պես-պես երանգ ունեցող ծաղիկներով, որ տեսնողի աչքերը խտզտում էին։

Սրանց նման բան Աստծու փառքի արժանիքի հրաշակերտ հորինվածքով, երկնանման խորաններով, բարձրաբերձ կաթողիկեներով եկեղեցիներ շինեցին, որոնք ամբողջովին ծաղկազարդված էին տեսակ-տեսակ գույներով, ոսկով ու լաջվարդով, Տիրոջ մարդեղության գործերով, սրբերի պատկերներով։ Եվ բոլոր եկեղեցիների [գմբեթ] գլխին դրված էր նրանց եկեղեցիների [Հայաստանում ունեցած] սուրբ Խաչի նշանը իբրև պսակ ու պարծանք քրիստոնյաների։

Եվ Ջուղայի ժողովուրդը, բոլոր հայկազունները, որոնք գնացին Սպահան քաղաքը ու այնտեղ բնակված մնացին, շատ պատճառներ ունի։ Քանզի Շահ-Աբաս թագավորը բազմահանճար, խելացի, կանխատես մարդ էր. հայոց ազգի համար հնարեց բազում ու տեսակ-տեսակ հնարավորություններ, որպեսզի մնան Պարսկաստանում, եթե այդպես չվարվեր, չէին մնա։

Նախ՝ ինքը Շահ-Աբասը սիրալիր էր հայ ազգի հանդեպ, մեծարում էր նրանց՝ մանավանդ ջուղայեցիներին, որոնց գլխավորի անունն էր խոջա Սաֆար, սրա եղբորը՝ խոջա Նազար, և սրանց որդիները՝ Մելիք աղա, Սուլթանում ու Սաֆրազ։ Մշտապես շահը գալիս էր նրանց տները, ուտում ու խմում էր նրանց հետ նրանց կերակուրները առանց խտրություն դնելու, ինչպես որ պարսիկները սովորություն ունեն քրիստոնյաների նկատմամբ խտրական լինելու։ Այլև շահը ինքը նրանց տուն էր հրավիրում իր սեղանին ու պատվում էր իր մեծամեծների հետ, այլև պատվիրում էր իր նախարարներին նույնը անել։

Երկրորդ՝ որովհետև թագավորական տուրքը, որ քրիստոնյաները վճարում էին, թեթև էր առնում, այնպես որ քրիստոնյաներին հաճելի լիներ։

Երրորդ՝ եթե վեճ ու կռիվ, խռովություն էին պատահում քրիստոնյաների ու մահմեդականների միջև, կամ դատական այլ գործ՝ մեծ կամ փոքր, քրիստոնյաներին արդարացնում էր, մահմեդականներին՝ դատապարտում։

Չորրորդ՝ երբ քրիստոնյաներին բերեց հասցրեց Սպահան, ու սրա գյուղերը, շատ մահմեդականների արտաքսեց իրենց տեղերից ու բնակավայրերից, նրանց տներն ու աբտերը տվեց քրիստոնյաներին։

Հինգերորդ՝ հոժար կամքով հրամայեց ամենուրեք լայնանիստ ու բարձրաշեն եկեղեցիներ շինել [նոր] Ջուղայում ու գյուղերում, նաև քաղաքի բերդի մեջ, այնքան հոժարությամբ, որ ինքն էր հորդորում քրիստոնյաներին եկեղեցիներ շինել։ Մեծամեծ տոների օրերին՝ Հարության, Համբարձման և այլ տոներին, գալիս էր եկեղեցիները և ուրախանում քրիստոնյաների հետ։

Վեցերորդ՝ քրիստոնեական ամեն կարգ ու դավանություն քրիստոնյաները կատարում էին համաձակաբեն. զանգեր զարկել, ժամասացություն անել, ջրօրհնեքը մեծախումբ հանդեսով տանել, նաև ինքը՝ շահն էլ էր գալիս ջրօրհնեքին և տեսնելով ուրախանում էր։ Մեռելներին խաչվառով, շարական երգելով հանում էին քաղաքից, անցկացնում էին շուկայի միջով ու տանում թաղելու, և պարսիկներից ոչ ոք անարգական կամ հայհոյական բառ չէր ասում։ Եվ այսպիսի շատ օրինակներով ու տեսակ-տեսակ միջոցներով շահը ամոքում էր քրիստոնյաների սրտերը, որի համար էլ [հայերը] մնացին Պարսկաստանում։ Շահը քրիստոնյաներին այնքան համարձակություն տվեց, որ երբ հրապարակներում կամ շուկաներում քրիստոնյաների ու մահ-

www.e-pdf.com

մեղականների միջև վեճ ու կռիվ էր պատահում, [կռվողները] համահավասար միմյանց ծեծում էին և հայհոյում առանց երկյուղի։ Սրա վրա այնքան էին վշտանում պարսիկները և նրանց գրագետներն ու մեծամեծերը, որ շահին ասել էին, «ինչո՞ւ քրիստոնյաներին թույլ ես տվել այդքան համարձակվել և կամ ինչո՞ւ մոլար կրոնից չես դարձնում Մահմեդի ճշմարիտ կրոնին»։

Իսկ շահը, տեսնելով նրանց սրտի վիշտը, հայտնել էր նրանց իր սրտի գաղտնիքը և ասել էր. «Դուք այդ դատարկ սիրալիրության համար, որ տածում եմ քրիստոնյաների հանդեպ, մի վշտանաք ու ինձ մեղադրեք, որովհետև ես ծախսերով, ջանքով ու հնարներով հազիվ կարողացա նրանց այս երկիրը բերել։ Ես նրանց չբերեցի իրենց օգտի համար, այլ որպեսզի մեր երկիրը շենացվի ու մեր ազգը ավելանա։ Եվ քրիստոնյա ազգի մարդկանց, որոնք իրենց երկրից եկել են ու այժմ մնում են, եթե նրանց ամենքին մաս առ մաս կոտորենք, հոդ առ հոդ բաժանենք, նրանցից ոչ ոք մեր կրոնին չի դառնա, նաև մյուսները խրտչելով կսկսեն թաքուն փախչել և վերադառնալ իրենց երկիրը, իսկ մեր աշխատանքը իզուր կանցնի։ Այդ պատճառով եմ ես նրանց նկատմամբ սիրալիր, որպեսզի դրանով կապված մնան մեր երկրում, իսկ նրանց մեծ մարդիկ, որոնք ծնվել են Հայաստանում ու եկել այստեղ, ամենքը կմեռնեն, նրանցից ծնվածները, որոնք այս երկրում են ծնվում, նրանք բոլորը առանց մեր կանչի ու ջանքի իրենք իրենց հոժարությամբ կգան մեր օրենքին։ Արդ՝ եթե դուք էլ եք կամենում մեր ազգի շահը, դուք էլ արեք այնպես, ինչպես ես եմ անում»։ Ապա նրանց դուր եկան շահի խոսքերը, և նրանք, գովելով շահի իմաստությունը, հեռացան։

Շահ-Աբասի՝ իր մեծամեծներին ասված այդ խոսքերը այս ժամանակ՝ մեր օրերում, լիապես կատարվեցին, որովհետև մեծ մարդիկ, որ ծնված էին Հայաստանում և այնտեղից եկել էին Պարսկաստան, նրանք ամենքը մեռան։ Եվ չնայած մտադրվել էին վերադառնալ իրենց երկիրը, չկարողացան վերհիշյալ պատճառներով, նաև պարսիկները թույլ չէին տալիս։ Իսկ նրանցից ծնվածները, որ ծնվեցին Պարսկաստանում, այնտեղ էլ սնվեցին, սրտով կապվեցին այդ երկրին, որի համար գտնվում են այնտեղ ու մնում են, չնայած նրանցից ոմանք՝ երկյուղած, բարեմիտ մարդիկ կամենում են գնալ Հայաստան, բայց պարսիկները չեն թողնում։ Իսկ քրիստոնյաների նոր աշխարհ եկած զավակներից ոմանք, թողած քրիստոնեության լուսապայծառ հավատքը, դարձան և տակավին դառնում են Մահմեդի անօրեն կրոնին՝ իրենց թերահավատության, գողության ու անառակության համար։ Դրանք, միանալով պարսիկների հետ, նեղն են գցում քրիստոնյաներին բազմաթիվ ու տեսակ-տեսակ հնարներով։ Եվ մանավանդ նրանով, որ կաշառք են տալիս մահմեդականներին ու սուտ վկաներ են դարձնում, քրիստոնյաներին քարշ են տալիս մահմեդական դատավորների մոտ դատաստանի և քրիստոնյաներից պահանջում են, ինչ որ կարողանում են հնարել։ Ոմանցից [պահանջում են], թե պարտք ես ինձ, պարտդ հատուցիր։ Ոմանցից էլ, թե քո ազգականն եմ, քո ամեն ինչը, բոլոր ունեցվածքը հասնում է ինձ, տուր. և այլ այս կարգի զրպարտություններ, ինչ որ կարողանում էին հնարել։ Իսկ գատավորներն, ըստ իրենց անօրեն օրենքի, ուրացողների խոսքերը արդարացնում են, թե որովհետև նա եկել է Մահմեդի կրոնին, նրան են հասնում իր ազգականների բոլոր գույքերը։ Եվ այսպես զրկում են խեղճ քրիստոնյաներին, հափշտակում են ամեն մի ունեցվածք և տալիս են այդ ուրացողներին։ Եվ այն էլ ոչ թե ունեցվածքը, այլ մինչև հինգ հարյուր թուման տրժեցող

www.a-pdf.com

տները. անխրավորեն այս իրավունքով արդարացրին ուրացողների խոսքերը, հափշտակեցին քրիստոնյաների ժառանգությունը և տվին ուրացողներին, որը մեր աչքերով տեսանք: Նաև մեռած քրիստոնյաների ազգականներից ուրացող ոմանք քրիստոնյա մեռյալի ամեն ունեցվածքը, տները գրավելուց հետո, եկան տիրեցին մեռածների որդիներին, դուստրերին, աղախիններին: Եվ Ջուղայի ժողովուրդը թեպետ շատ չարչարվեց տղաների փրկության համար իշխանների դռները դեգերելով, ոչինչ չստացվեց, որովհետև բոլորը, մահմեդական լինելով, իրենց կողմն էին քաշում: Իսկ դու իմ այս երկու խոսքով, որ օրինակի համար գրեցի քեզ, բոլոր վտանգավոր փորձությունները մտաբերելով՝ կիմանաս, թե ինչ են քաշում քրիստոնյաները օձաբարո պարսից ազգից:

Եվ ինչպես սուրբ Գիրքը ասում է, թե վախճանվեց Հովսեփը և նրա բոլոր եղբայրները, այն ամբողջ ցեղը, նստեց այլ թագավոր, որ չէր ճանաչում Հովսեփին, և ասում է իր ազգին, եկեք հնարենք որևէ բան Իսրայելի ազգի համար: Այսպես պատահեց նաև մեր ազգին, որովհետև Շահ-Աբաս թագավորը, թե հայ ազգին ինչքան նեղությամբ տարավ Պարսկաստան, իմանում էր այդ ամբողջ տառապանքը, որ ինքը պատճառեց հայոց ազգին, գթում ու խղճում էր հայերի վրա ու սեր էր տածում, և թեպետ սուտ ու դատարկ և ոչ սրտանց, այնուամենայնիվ սեր էր ցույց տալիս: Վախճանվեց նա, վախճանվեցին նաև այն ժամանակվա բոլոր իշխաններն ու մարդիկ:

Շահ-Աբասից հետո թագավորեց նրա թոռը՝ Շահսեֆին. նա ևս բավարար էր վարվում քրիստոնյա ազգի հետ, որովհետև Շահ-Աբասի նախարարներից ոմանք նրա մոտ էին, իսկ սրանք հիշեցնում էին նրան Շահ-Աբասի վերաբերմունքը հայ ազգի հանդեպ, այլև հայերի բարեսրտությունը սրա [Շահսեֆիի] նախնիների հանդեպ, այս պատճառով հայերը նեղություններից թեթև էին մնում: Վախճանվեցին նաև Շահսեֆին և բոլոր հին մարդիկ: Իսկ Շահսեֆիից հետո թագավորեց սրա որդին, որին դարձյալ Շահ-Աբաս կոչեցին ըստ անվան իր ապուպապի. այս պատճառով սրան կկոչենք Շահ-Աբաս Երկրորդ: Սա թեպետ լսել էր այն իրողությունները, որ անցել էին հայ ազգի գլխով, սակայն աչքերով չէր տեսել. նաև չէին տեսել սրա նախարարները, որ սրա թագավորության պաշտոնյաներն էին: Այդ պատճառով հայ ազգը նրանց փույթը չէր, ոչ հոգում էին, ոչ խղճում. նրանց հոգսը միայն այն էր, որևէ պատճառով հայերին դարձնել մահմեդական կրոնի: Դրա համար հարձակվեցին քրիստոնյաների վրա արյունարբու, անօրեն, զեխ ու շվայտ մարդիկ, մարդիկ, որ մարմնական ցանկությունն ու փափկակեցությունը երջանիկ կյանք են համարում: Նրանք, որ հայոց ազգից հրաժարվել էին և նրանք որ բնիկ պարսիկներ էին, նեղում էին, բռնադատում, պիղծ համարում և բռնությամբ էին վարվում քրիստոնյաների հետ: Նաև քրիստոնյաների զավակներից, որը որ պարսիկներին հաճելի էր թվում, լիներ տղա, աղջիկ թե հարս, բռնի հափշտակում տանում էին թագավորի տները և անվանում թագավորական ծառա ու այլևս չէին վերադարձնում իրենց տերերին և Քրիստոսի հավատից հանում, դարձնում էին մահմեդական: Նախ՝ իրենց պղծագործությունների համար, և երկրորդ. որպեսզի հավելում լինի թագավորական ծառաներին և պարսից ազգին, և երրորդ, որպեսզի առժամանակ հետո այս տարված զավակների պատրվակով գերվեին, դուխվեին, հոփշտակվեին

www.a-pdf.com

նրանց՝ քրիստոնյաների հետևաթող ընտանիքների տները, տեղերը, ամենավածքը և ապրանքը։

Եվ մինչև այսօր ու այս ժամանակը, որի մեջ գտնվում ենք, ջուղայեցիք չդիտեին, նաև բոլոր այն հայազունները, որ գտնվում էին Պարսկաստանում, չդիտեին օձաբարո պարսիկ ազգի ննջաժետությունը, որ կար իրենց հետևակ։ Եվ արդ՝ իմանալով հեծում, հոգոց են հանում, հալվում ու մաշվում են, որ գուցե ազատվեն Պարսից աշխարհից, կամ հայտնի, կամ ծածուկ գնան Հայոց աշխարհը, բայց չեն կարողանում, քանզի պարսիկները թույլ չեն տալիս իրենց երկրից դուրս գալ, ինչպես որ եգիպտացիք թույլ չէին տալիս իսրայելցի ազգին։ Գուցե տիրոջ նույն բարձրացած բազուկն ու հզոր ձեռքը նաև սրանց հանի այստեղից, ինչպես նրանց այնտեղից՝ մեծ նախնի նահապետ Մովսես մարգարեի և մեծ լուսավորչի՝ սուրբ Գրիգորի մաղթանքներով։

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ

(1709—1759)

ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Հատվածներ)

Գլ. Ա. 12. Դավիթը բաժանվեց Վրաց իշխանից և եկավ հասավ Սյունյաց աշխարհը՝ տիրոջ 1722 թ. և Հայոց թվականության 1171-ին ու բանակ դրեց Սիսական գավառի սահմաններում, գեղեցիկ դաշտավայրում, Ծրնեզավաթյան բլրի մոտ, որ տեղացիները կոչում են Ուլթեփե։

13. Դավիթն ինքը ազնվական էր, բարեպաշտ, արդարության պաշտպան, գրագետ, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ և վրեժխնդիր՝ մեր ազգի թշնամիների հանդեպ։ Իր նման էին և նրա բոլոր հետևորդները։ Երբ նա եկավ Վրաց երկրից, լսելով նրա մասին, շուրջը հավաքվեցին գավառի բոլոր կողմերից զինակիր տղամարդիկ, մոտ 400 մարդ, որոնք ճնշված ու տառապած էին օտարների ծառայության լծից, տղամարդիկ, որոնցից մեկը հալածում էր հարյուրների, իսկ երկուսը՝ հազարների։

14. Նախ Դավիթը Ծռակատար բլրի մոտ հարվածեց զորաշտապ կուչված թուրքին, ապա այնտեղից գնաց և բանակեց Շինուհայր ամրոցում։

15. Եվ իր մոտ կանչելով Տաթևի առաջնորդին՝ պատմեց նրան, թե ինչ գործով, ինչ նպատակով է եկել. և ասում է՝ խոսքով ջնջելու ենք բոլոր օտարերկրացիներին այս հողից։

25. Եվ Դավթի՝ Ղափան գալու երկրորդ տարում, սուրբ Լուսավորչի տոնի քառասնորդաց պահքի օրերին Զավնդուր երկրի վրա հարձակվեցին Ղափանի սուլթանը, Բարգուշատի Բաթալի սուլթանը և Սև լևան խանը տասնութ հազարով։

20. Իսկ հայոց զորքերը, որ պարան էին մնաց, Քրիստոսի սուրբ Հարության տոնին, գիշերով, Աստծու օգնությունը կանչելով, հանկարծակի աղաղակ բարձրացրին, հարձակվեցին, հարվածեցին, կոտորեցին նրանցից շատերին և մյուսներին փախուստի մատնեցին։

34. Իր Ղափան գալու երրորդ տարում Դավիթը գնում պաշարում է մեծ ու անառիկ Որոտնա բերդը։ Ծաղկազարդի տոնին, որ բերդի պաշարման չորրորդ օրն է, սաստիկ հողմ անձրև եղավ [ա՜վ աղաղակելով] և անձրևի առատությունից պարսպի մի կողմը ինքնիրեն քանդվեց։ Մերոնք երբ այդ տեսան, ձայն տվին, խրախույս կարդալով հարձակվեցին, ներս մտնելով կոտորեցին բոլոր թուրքերին և գրավեցին բերդը։

35. Եվ այնպես պատահեց, որ այդ օրերին Դավիթն իր զորքերի մեծ մասը ուղարկեց Բարգուշատի թուրքերի վրա և ինքը քիչ մարդկանցով մնաց Սիսական գավառում։

36. Նրա դեմ եկավ Նախիջևանի խանը՝ առանձնացյալ հազարով։ Երբ այդ լսեց, Դավիթը շտապ զորք հավաքեց Դարպասից և Սիսական տնից, գունդ կազմեց, եկավ հասավ նրան Նախիջևանի դաշտի վրա։ Այնտեղ, երբ իրար

www.a-pdf.com

www.a-pdf.com

բախվեցին, [նրանի զորքերը փախուստ տվին սրանցից, և սրանք հետամուտ էին նրանց օրվա տասնութերորդ ժամից մինչև քսաներորդ ժամը, հալածում էին և շատերին դիաթավալ վիրավոր դարձնում:

Գլ. Բ. 20. Այն օրերին Դավիթը տեղեկանում է, թե Բուխուրուխի լեռան կողմերում զորք է հավաքում Ալամազ ղուլին, ինքն էլ շտապ զորաժողով է անում, հարձակվում և նրանց բոլորին կոտորում է այնտեղ:

38. Երբ լուր հասավ Օրդուվար, թե Դավիթն անցել է Ջավնդուր, ելան պատրաստվեցին Սափի ղուլին, որդին Ղազու և որդին Շահիսլամի, և իրենց հետ բազմաթիվ զորք վերցնելով, մոտ տասներկու հազարով, եկան հասան Կենավուզի կողմերը և անցնելով Ալանկեզի լեռներից՝ Կենավուզի բոլոր գյուղերը այրեցին:

39. Այս ամենի մասին լուրը հասավ Դավթին: Եվ նա, անմիջապես իր հետ վերցնելով մոտ չորս հազար հոգի, եկավ բանակեց Կալերում: Առավոտյան ավազակ թուրքերի վրա հարձակվեց, երբ նրանց գտավ Մեղրի գետի մյուս կողմում բանակած: Իսկ նրանք երբ տեսան Դավթի զորքերը, բոլորը վրա հասան բռնեցին գետափը և թույլ չէին տալիս Դավթին գետն անցնել: Ապա սրանք այստեղից և նրանք այնտեղից կռվեցին առավոտից երեկո: Եվ երբ գիշերը վրա հասավ, Դավիթը խուսս տվեց ու ելավ գնաց Հալիձոր:

40. Լուսաբացին, երբ թուրքաց զորքերն իմացան, որ Դավիթը գնացել հեռացել է իրենցից, և իրենց այլևս վտանգ չի սպառնում ոչ մի տեղից, համարձակ անցան գնացին Գուրհամի կողմերը և սկսեցին կոտորել ու ասպատակել գյուղերը, մինչև եկան ու պաշարեցին Մեղրին:

43. Այստեղ մեղրեցիները սուրհանդակ ուղարկեցին Գուրհամի գավառը՝ Կալեր, ասելով՝ «Ահա թուրքերի զորքերը հասան, գրավեցին մեր Փոքր թաղը: Եվ եթե հիմա մեզ օգնության չհասնեք երկու օրում, մենք նրանց բազմությանը դիմադրել չենք կարող»: Եվ երբ սուրհանդակը հասավ նրանց, անմիջապես գիշերով ելավ Ստեփաննոս Վարդանյանը, որ Շահումյանի տնից էր և Եկդաստյան ավանից [որ և փոխանորդն ու տեղակալն էր Պապ զորապետի], գնաց Ջավնդուր գավառը, Պայինտուր զորապետի մոտ, նրան տեղեկացրեց, որ մեղրեցիները անհամբեր են և՛ վտանգի մեջ են:

44. Սա երբ այդ լսեց, մարդիկ ուղարկեց Ջավնդուր, զորականների մոտ, որ արագ գան հավաքվեն այնտեղ: Եվ եկան հասան նրա մոտ, համախմբվեցին երկու հազար քաջ սպառազեն այրեր Ջավնդուրից ու Գուրհամից, և նրանցով Պայինտուր զորապետը ելավ գնաց բանակեց այն գիշեր Մազրան ավանում, Ստեփաննոսն էլ նրա հետ: Լուսադեմին պատրաստվեցին և Ափկիսի կողմերից անցնելով՝ եկան մտան Մեղրի:

45. Իսկ թուրքերի զորքերը երբ իրենց բանակատեղից տեսան հայոց զորքերին, չէին հավատում, թե նրանց ուրիշ տեղից օգնության են եկել, այլ ասում էին, «մեղրեցիներն իրենց կանանց տղամարդու շոր են հագցրել և զինել, նրանց ձեռքը տվել բազում սուտ դրոշակներ, մեզ վախեցնելու համար»:

46. Սրանք դեռևս Մեղրի չէին հասել, որ քաջ ու արի մեղրեցիների զորքերը այն գիշեր սխրանքներ գործեցին: Անցնելով գետի մյուս ափը՝ անսպասելիորեն թշնամու բանակի մեջ մտան և նրանցից շատերին սուր-սուսերով խորտակեցին. իսկ Շահիսլամի որդին երկու հազարով փախավ Օրդուվար քաղաքը: Բայց որովհետև մեղրեցիները քիչ էին, չկարողացան խոչընդոտել ու վերացնել նրանց այնտեղից, վերստին դարձան Մեղրի:

www.a-pdf.com

47. Երբ հայոց օգնականները եկան և Մեղրիի Մեծ թաղը հասան, մեղրեցիները շտապ նրանց համար կերակուր պատրաստեցին։ Այնժամ Պայինտուրը, որ իշխան էր և իր հետ եկած զորքի հրամանատարը, չթողեց նրանց, ասելով. «Մենք ոչինչ չենք ուտի, մինչև Աստծու ողորմածությամբ մեր թշնամիներին չվռնդենք»։

48. Որովհետև նրա մտածմունքն ու ձգտումը պատերազմի գործը արագ վերջացնելն էր և որովհետև մեկ օր առաջ այլազգիները գրել էին թուրքերի զորականներին, որոնք երեսխ գետի մյուս կողմում էին, որ գան օգնության հասնեն իրենց, իսկ դրանք պատրաստ էին բազում գնդերով գալու, իրենց օգնության հասնելու։ Ուստի Պայինտուրը շտապ իր հետ եկած և ամրոցում եղած բոլոր զորքերի զորահանդես արեց և նրանց երեք գնդի բաժանեց, յուրաքանչյուր գունդը ոսթ հարյուր վաթսուն սպառազեն մարդով։

49. Ապա մի գունդն ընդառաջ ուղարկեց թուրքերի դեմ ճակատելու և մյուս երկու գնդերը ձայն տալով խրախուսս կարդացին և վրա հասան թուրքական զորքերին աջից ու ձախից և օրվա տասնվեցերորդ ժամից մինչև քսաներորդ ժամը շրջապատեցին, իրենց մեջ առան անօրենների զորքերի բազմությունը և այն օրը նրանցից կոտորեցին ավելի քան տասնմեկ հազար մարդ, մյուսներին հալածեցին Օրդուվար, իսկ հաջի Շափիին, որ ամենից աչքի ընկնողն էր, ձերբակալեցին։

Գլ. Գ. 1. Տիրոջ 1724 և հայոց 1173 թվականին օսմանցիների սուլթան Ահմետը, որ բռնությամբ տիրում էր օվկիանոսի Պարսից ծոցից մինչև Եգիպտոս ու Լիբիա, այնտեղից մինչև Լյուրիկե ու մինչև Պոնտոսի ամբողջ ծովը և Հայաստանի մեծ մասը և այլ բազում ազգերի, թագավորություններ, իշխանություններ ու նրանց երկրները, երբ լսեց պարսից արքայի վտարվելը հայրենի գահից, մտածեց ամեն գնով գրավել այն տերությունը։

2. Ուստի հրամայեց զորապետին ելնել զորաժողով անել բոլոր երկրներից և գնալ հարձակվել Պարսկաստանի վրա և գավթել նրանց քաղաքները։ Արքայի հրամանով նա անթիվ ու անհամար զորքով հասավ Մեծ Հայաստանի կողմերը, որ Պարսկաստանի ձեռքին էր։ Եվ որտեղ պատահեցին, սրով ու սուսերով կոտորում էին իրենց դիմադրողներին, և բոլոր զորքերը վերադառնում էին հարուստ ավարով, տարեցտարի, մինչև Հղփացան, հարստացան և իրենց ամբողջ քաղաքներն ու գյուղերը լցրին ավարներով ու բազմաթիվ գերիներով՝ Հայաստանից ու Պարսկաստանից։ Բայց ո՞վ կարող է պատմել մայրերի ու զավակների՝ անօրեն գավթիչներից կրած աղետները և նրանց հայրերի ու եղբայրների անողորմ կոտորածը։

3. Սրանք, որ այսպես զորացան այն կողմերում, երկարատև պաշարումից հետո գրավեցին Երևան մայրաքաղաքը և ամբողջ բնակչությանը սրի մատնեցին։ Ապա Տիրոջ 1726 և հայոց 1175 թվականին, անթիվ-անհամար զորքով Սյունյաց աշխարհը մտան և հասան, բոլոր կողմերից պաշարեցին Դավթի երկիրը՝ Ղափանի յոթնաբերդ գավառը։

4. Այնժամ գավառի բոլոր բնակիչներն առհասարակ խառնվեցին, խուճապի մատնվեցին, լքեցին Դավթին ու գնացին մտան օսմանցիների լծի տակ։ Իսկ Դավիթը մնաց մենակ տասնյոթ սպառազեն այրերով Հալիձորի մենաստանում, ուր կառուցել էր անառիկ բերդը։ Նրա հետ էին Տաթևի երեք եպիսկոպոս և տասներկու քահանա, հետը գնացին նաև տեր Ավետիսն ու մելիք Փարսադանը՝ սակավաթիվ մարդկանցով, որովհետև ամբողջ զորքը փախավ նրանցից։

www.a-pdf.com

9. Եվ Դավիթը իջավ ամրոցից ու բանակեց գյուղում, որ գետի այս կողմն էր՝ Թշնամու բանակի դիմաց, և ուղարկեց մի զորագունդ, հարյուր վաթսուն հոգուց, գետանցները փակելու համար, և եկան փակեցին...

10. Իսկ Դավիթն ու իր զորականները երեք հարյուր հիսուն հոգով մտան Անապատի բերդը և ամրացան այնտեղ: Օսմանցիների ամբողջ բանակը գետն անցավ, և մոտենալով, բերդի շուրջը պահպանություն կարգեցին և պատնեշեցին: Այնտեղից Թնդանոթների ու հրացանների գնդակներ էին ներս թափում, և սրանք էլ ներսից դուրս նույնը նրանց էին անում: Վեց օր միմյանց դեմ կռվում էին: Հակառակորդի կողմից օրական հարյուր կամ երկու հարյուր, երբեմն էլ երեք կամ չորս հարյուրն ընկնում էին, իսկ սրանցից՝ դիրքի պաշտպանված լինելու շնորհիվ, հազիվ մեկ կամ երկու հոգի:

11. Բայց յոթերորդ օրը, առավոտյան, լուսադեմին, ամրոցը պաշարողները պատրաստվեցին և մոտեցան պարսպին, ոչ թե երեկվա ու նախորդ օրվա նման, այլ ահագին մեծ մեքենաներ [հսկայական սանդուղքների նման, թվով քսանվեց հատ], իրենց ուսերին բարձած բերում էին, մոտեցնում, հենում պարսպին: Եվ խառնիճաղանջ բազմությունը, երեք խմբի բաժանված և երեք կողմից գրոհ տալով, մեքենաների վրայով բարձրանում էին պարիսպները:

12. Իսկ պարիսպների պահապանները, վերևից նրանց խփելով, մեքենաներից ներքև էին թափում, և նրանց դիակների բազմությունը կարկտի սաստկությունից թափվող վաղահասուկ թզի նման ծածկում էր գետինը՝ մեքենաների տակ, և այդ բոլորը արհամարհելով, առավոտից մինչև օրվա ութերորդ ժամը մեծ աղմուկ-աղաղակով ու իրարանցումով դեպի պարիսպներն էին գիմում:

13. Տեսնելու բան էր կատաղի զորքի աղաղակի այդ ահավոր պատկերը, որովհետև երբ մեքենաները դրեցին, հարյուրավոր գրոշակակիրներն առաջ շարժվեցին, իսկ նրանց ետևից ամբողջ զորքը հորդահոս գետի նման ահագին գոչումով թափվում էր, կամ ուժգին հողմերից փոթորկված ծովի ամեհի ալիքների պես հորձանքով գալիս, իրարից առաջ էին անցնում, և այն մեքենաներից դեպի պարիսպներն էին գիմում: Եվ առհասարակ երկու կողմից փողի ու թմբուկի ձայները, զորքերի գոչյունները, հրալից գնդակների շառաչյունը, հրազենների ճայթյունը ականջ էին խլացնում:

14. Իսկ ներսում եղածները, երբ ամրոցից տեսնում էին այդ ահեղ տեսարանը, բազմաթիվ թշնամի գնդերի ու դրոշների պատրաստությունը, ազդանշանների փողփողելը և զինվորների զենքերի շողյունը, հնչեցնում էին զանգերը, եկեղեցու սեղանի բազմոցին դնում սուրբ Մինասի նշխարները, և բոլորն, ընկնելով սուրբ սեղանի առաջ, Աստծուն էին գիմում, եպիսկոպոսներն ու քահանաները և բոլոր աշխարհականներն ու կուսակրոնները [քանի որ այնտեղ նաև կուսակրոնների մենաստան էր, ուր բնակվում էին քառասուն կամ հիսուն կուսակրոն], բոլորը մահն աչքն էին առել:

15. Եվ օրվա ութերորդ ժամին, երբ տեսան, որ այնուհետև ապրելու հույս չի մնում, Մխիթար սպարապետն ու տեր Ավետիսը խրախուսս կարդացին և զենքի դիմեցին: Այն ժամանակ ամբողջ զորքերը նրանց մոտ հավաքվեցին [բացի պարիսպների պահապաններից], զինվեցին, պատրաստվեցին, զենք կապեցին, բոլորը զայրույթով լցվեցին Թշնամիների դեմ:

16. Նրանց հետ սկսեցին խոսել Մխիթարն ու տեր Ավետիսը և ասացին. «Արիացե՛ք, չերկնչեք, հետևեցեք մեզ, եթե հասնելու է մեր վախճանը, քա-

www.a-pdf.com

չաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պատերազմներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դժնդակություններ»։ Այս խոսքերն ասացին և իրենք ամենից առաջ շտապ դուրս եկան պարսպի գաղտնի դռնով։ Երեք հարյուր զինվորներ հետևեցին նրանց։

17. Ո՛վ սքանչելիք, ո՛վ Աստծու մեծ բարեգթություն, ահա երեք հարյուր զինվածներ, օրվա ութերորդ ժամին, ձայնեցին, խրախուսյա տվին, հարձակվեցին միանգամից յոթանասուն հազարի վրա, նախ հանկարծակի պրոհեցին աջակողմյան գնդի վրա՝ աջ ու ձախ կոտորելով նրանց։

18. Իսկ նրանք երբ հանկարծակի տեսան իրենց վրա հասած այդ ահեղ հարձակումն ու կոտորածը, բոլորը, գլուխները կորցրած խուճապի մատնվելով, դիմեցին երկրորդ և երրորդ խմբերի մոտ, աղաղակելով. «Հարձակվեցի՞ն, կոտորեցի՞ն մեզ քրիստոնյաները», և այդ լսելով բոլորը զարմացան, ապշեցին, սկսրացան, հուսալքվեցին, և Աստծուց ահ ընկավ նրանց վրա, որովհետև մինչ հույս ունեին մեծ հաղթանակի, ամրոցն իրենց ձեռքը գցելու, հանկարծակի վրա հասավ այդ անազարմ կոտորածը։

19. Ուստի բոլորը զարհուրած ու վախեցած ասում էին իրար, թե ով ուղում է կյանքը փրկել, թող փախչի, որովհետև նրանցից շատերը բազմիցս տեսել էին Դավթի և նրա մարդկանց քաջությունները, և քանի որ նրանց բանակի ոարսաափը, աղաղակը, անասելի կոտորածը գնալով աստիճանում էին, ուստի այնուհետև ոչ ոք չի համարձակվում շրջվել ղափանցիների դեմ, այլ բոլորը շփոթված խուճապահար փախչում են։

20. Իսկ սրանք և բերդում մնացածները համարձակ վրա հասան, խփեցին, շատերին տեղնուտեղը սպանեցին, ուրիշներին խոցելով ու վիրավորելով հալածեցին այնտեղից, մինչև որ չթողին երկու հոգու իրար մոտ։ Եվ այդտեղ օսմանցիների բանակից ընկավ տասներկու հազար զինվոր, իսկ սրանցից՝ շատ քչերը։

33. Դրանից հետո որոշ ժամանակ անցավ, օսմանցիների ասպատակիչ փաշան զորքով եկավ ու բանակեց Բեխ կոչված գյուղում և մոտ մեկ շաբաթ օրնիբուն փնտրում էր դանաղան հնարներ՝ Դավթին և նրա զորականներին նենգությամբ որսալու և ոչինչ չկարողացավ անել։ Իսկ Դավթի զինվորները մի գիշեր հարձակվեցին նրանց վրա, ջարդեցին, կոտորեցին նրանցից շատերին և փաշային հալածական դարձրին։

35. Ապա օսմանյան այլ զորքեր նույնպես եկան բանակեցին Մանլևի մոտ մի թուրքական գյուղում։ Սրանց ևս, գիշերով հարձակվելով, կոտորեցին և միայն նրանցից երկուսին կենդանի տարան Հալիձոր։

36. Քրիստոսի 1727 թվականին, որ Դավթի Ղափան գալու հինգերորդ տարին էր, երբ Դավիթ բեկը տեսավ, որ վերին խնամակալությամբ իր քշնամիներն ամենուրեք խորտակված են ու վտարված, պարսից շահ Թահմազին ուղարկեց սպանվածների չորս բեռ գլուխներ այն բազմաթիվ կոտորվածներից, որ օսմանցիների կողմից ընկան։

37. Վերջինս այդ տեսնելով շատ ուրախացավ իր քշնամիներն մահով և միաժամանակ շատ զարմացավ Դավթի ու նրա զինվորներն քաջագործությունների վրա։ Ուստի բնծաներ ավեց և հրավառական գրեց նրան այսպիսի խոսքով։

www.a-pdf.com

38. «Շահ-Քահմազ պարսից արքայից քաջ Դավիթ բեկին և հայոց քաջ զորավարներին, որ քեզ հետ են՝ ողջույն։ Շատերից բազմիցս իմացել ենք քո քաջության մասին, բայց հիմա կարծես ականատես էլ եղանք ձեր մեծամեծ սխրանքներին, որ մեր թշնամիների դեմ գործեցիք։

Եվ ահա կաբզեցի քեզ այսօր իշխան և պլուխ մեր բոլոր իշխանների, որ այդ կողմերում են տու Ղափանի երկրում, որ վերցրիր քաջությամբ, քեզ լինեն։ Բայց դու պիտի ելնես ու քո շուրջը համախմբես բոլոր զորքերը և այդ կողմերի խաներին, դուրս վտարես օսմանցիներին քո սահմաններից»։

39. Եվ նրան տվեց մի խաչվառ և մի պատվական նժույգ, նաև դրամ կտրելու իրավունք, իսկ նրա զորապետներից յուրաքանչյուրին մեկական պատմուճան ուղարկեց։ Եվ եկան Դավթին հնազանդվեցին բոլոր իշխաններն ու թուրքերի զավառապետները։

www.a-pdf.com

Բ

ԵՋՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

(Թ ԴԱՐ)

«ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՂԱՆԴՈՑԻ ՀԵՐՔՈՒԾՔԸ

Գ. ...Որ մի էությունը մշտնջենական է ու բոլորի գոյացման պատճառ. դա հաստատում են նաև բազմաստվածության պաշտամունքներ հնարողները՝ պատճառաբանելով այսպես՝ «Մենք,— ասում են,— քանի որ անկարող ենք մատենալու բոլորի պատճառին՝ է-ին, գոյին, մշտնջենականին ու անմատչելիին, այդ պատճառով ուրիշ ավելի ցածր բաների միջոցով ենք նրան պաշտամունք մատուցում. ուստի անհրաժեշտ է զոհերով ու նվերներով սիրաշահել նաև նրանց, ում միջոցով նրան պաշտում ենք։

Եթե մեկն է բոլորի պատճառը, նույնն էլ ինքնագոյ և մշտնջենական, ինչպես հաստատում են նրանք, պարզ է, որ մյուսները ինքնագոյ և մշտնջենական չեն։ Եվ ինքնագոյի ու մշտնջենականի հետ ինչպես պիտի երկրպագվեն այլ ինքնագոյ և այլ մշտնջենական գոյականները, մանավանդ մարմնավորներն ու տեսանելիները, ինչպես արեգակը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը, հողը, որոնք մոգերի ու հեթանոսների կողմից պաշտվում են։

Իսկ եթե այնպիսիներից մեկն ասի՝ «Լավ է, որ ամեն ինչի պատճառը մի էություն եք համարում, և եթե մի էությունն է, որ բոլորի վրա ներգործում է ամեն ինչում, ու իրեն հակառակ որևէ բան չկա, [ապա] մեզ ի՞նչպես եք առաջարկում անարգել նրա ստեղծած երախտավորներին ու բարերարներին»։

Կասենք, որ մենք չենք առաջարկում նրա կողմից ստեղծված երախտավորներին ու բարերարներին անարգել, ոչ էլ, սակայն, Արարչի պաշտամունքը արարածներին մատուցել, որովհետև չկա ուրիշ երախտավոր և բարերար, բացի միայն նրանից, որն ստեղծեց ու չխնայեց և կենդանի է պահում աներևույթ բանականներին ու չի նախանձում,— նկատի ունեմ հրեշտակներն ու մարդկանց հոգիները,— ինչպես նաև [խնամք է տանում] անբանականներին ու անշունչներին՝ յուրաքանչյուրին իր տեղում։

Արդ՝ արեգակը բարի է, բնույթով գեղեցիկ և մեզ ու՝ երկնքի տակ գտնվող [մյուս] բոլոր արարածների համար օգտակար ու պիտանի, ինչպես մի ճրագ վառված է մեծ տան մեջ, առաստաղի և հատակի միջև՝ ստվերն ու խավարը երկու մեծ անոթների միջից վերացնելու համար։ Սակայն չգիտե՝ ինքը գոյություն ունի՞, թե՞ ոչ, որովհետև բանականներից ու մտավորներից չէ։ Այդպես են և անշուշ արարածներից մյուսները։ Թե՛ ջուրը, թե՛ կրակը, թե՛ հողը, թե՛ օդը չգիտեն՝ կա՞ն, թե՞ ոչ, որովհետև բանականներից ու մտավորներից չէ։ Այդպես են և անշունչ արարածներից մյուսները։ Թե՛ ջուրը, թե՛ կրակը, թե՛ հողը, թե՛ օդը չգիտեն՝ կա՞ն, թե՞ չկան և անընդհատ մատուցում են այն ծառայությունը, ինչի համար հաստատվեցին՝ ղեկավարվելով նրա կամքից, որն ստեղծեց իրենց։ Եվ մենք նրանց ոչ անար-

www.a-pdf.com

դում ենք, ոչ էլ պաշտում, այլ նայելով նրանց վրա՝ փառաբանում ենք իրենց հորինողին ու հաստատողին, որովհետև մեր կարիքների ու իրենց ստեղծողի փառքի համար են։

Ինչպես պաշտենք արեգակը, որ մերթ կանչվում է իբրև սպասավոր հասնելու այն ծառայությանը, որի համար նշանակվել է և մերթ գնահատվում է ինչպես զարհուրած, տեղի տալով խավարին՝ լցնելու այս մեծ տունը. ժամանակ առ ժամանակ խավարում է՝ որպես հանդիմանություն և նախատինք իրեն պաշտողներին՝ հայտնելով, թե՝ «Պաշտամունքի արժանի ես չեմ, այլ նա է, որը ինձ ևս ամբողջ ցերեկը լուսավոր է պահում, իսկ գիշերը թաքցնում է, երբեմն-երբեմն խավարեցնում»։ Եվ այն անշշունչը, խոսողի նման, բերանով բողոքում է, թե՝ «Ես արժանի չեմ պաշտվելու, այլ ինքս պիտի պաշտեմ»։

Կամ [ինչպե՞ս պաշտենք] լուսինը, որ ամեն ամիս նվազում է և գրեթե մեռնում, ապա կենդանանալու սկիզբ է առնում, որպեսզի քեզ համար հարության օրինակը պատկերի։ Կամ՝ օդը, որ մերթ գազանացած գոչում է. հրամանով և մերթ վախենում գոչելուց՝ սաստում։ Եվ կամ՝ կրակը, որի համար հենց քեզ երկրորդ արարիչ նշանակեց Ստեղծողը, որպեսզի երբ ցանկանաս, վառես և երբ ցանկանաս, հանգցնես։ Կամ՝ հողը, որ շարունակ փորում ենք, միշտ տրորում և մեր ու մեր անասունների աղբը նրա մեջ թափում։ Կամ՝ ջրերը, որ անընդհատ խմում ենք, նրանց անուշահամությունը մեր փորում ժանտահոտության վերածում և մեր ներքին ու արտաքին կեղտոտությունները նրանցով ենք մաքրում։

Եվ այս ամենով պարզ է, որ այն, ինչ [նրանք] աստվածներ են համարում, շատերին անարգում ու անպատվում են։ Նաև ահ ու դողը պատում է արարածներին, երբ մեկը Արարչի պատիվը իրենց է մատուցում։ Եվ [սա] հայտնի են դարձնում՝ երկիրը՝ շարժվելով, լուսատուները՝ խավարելով, օդը՝ խոժոռվելով ու սարսռալով և ծովը՝ ալիքների սաստկությամբ սպառնալով։ Եվ եթե Արարչի սաստումը նրանց ետ չպահեր, նրանցից յուրաքանչյուրը ի վիճակի կլիներ բոլորին ոչնչացնելու՝ ընդհանուրի Արարչի անարգանքի վրեժը լուծելու համար։ Կամ ծովը կծածկեր, որ թույլ ավազով շրջափակված, չի համարձակվում հրամանից անցնել։ Կամ երկիրը կկլաներ, որ ոչնչի վրա է հաստատված, բայց պատշաճ չէ, որ ոչնչանա ու ոչնչացնի իր բնակիչներին, կամ քամին ուժասպառ կաներ, որ բոլոր շնչավորների կենդանությունն է, բայց չի հանդգնում խափանել կենդանությունը՝ առանց կյանքը պահպանողի հրամանի։ Կամ եղանակը՝ երբեմն սառն քամի փչելով, երբեմն խորշակ բերելով։ Եվ այսպես ամեն ինչ կոչնչանար։

Եվ ահա տեսնում ենք այս աշխարհը ինչպես մի կառք՝ լծված չորս երիվարով՝ տաքությամբ, ցրտությամբ, չորությամբ ու խոնավությամբ։ Եվ կա կառավարող մի գաղտնի զորություն, որն այդ չորս հակառակորդներին հաշտ ու խաղաղ պահելով, ենթարկում է իրեն։ Բոլոր կառքերը նույնատեսակ երիվարներով են լծվում, բացի այն կառքից, որը ոչ նույնատեսակներով է լծված։ Եվ նրանք, որոնք նույնատեսակներով են լծված, [նրանց երիվարները] սայթաքում են, երբեմն ճանապարհից շեղվում և կառապանին ու իրենց տաղնապի մեջ են գցում, երբեմն հենց կառքն են խորտակում։ Եվ երբ կառքը սարքին է լինում, կառապանը՝ առողջ, երիվարները՝ վարժ, ուղղություն վերցրած միայն եբեսների կողմն են արշավում։ Իսկ այս զարմանալի կառքը, հակառակ ու ոչ նույնատեսակ երիվարներով լծված և գազանի ձեռքով ուղղություն ստացած, ոչ թե միայն դեպի առաջ է արշավում, այլ բո-

www.a-pdf.com

լոր կողմերն է վազում, բոլոր ուղղություններով ընթանում, ամեն ինչ է սլանում և այդ բոլորին ի վիճակի է։ Երբ դեպի արևելք է ընթանում, արևէ աբգելք չկա, որ դեպի արևմուտք արշավի, և երբ դեպի հյուսիս է սլանում, արևէ աբգելք չկա, որ դեպի հարավ սուրա, որովհետև կառավարողի ձեռքն ունակ է դեպի ամեն կողմ ուղղելու և տիեզերքի չորս անկյուններին արշավել տալու։

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ՊԱՐՍԻՑ ԿՐՈՆԻ ՀԵՐՔՈՒՄԸ

Ա. Քանի դեռ բնավ ոչինչ գոյություն չուներ,— ասում են,— ո՛չ երկինքը, ո՛չ երկիրը, ո՛չ էլ մյուս արարածները, երկնքում կամ երկրի վրա, կար մեկը՝ անունով Զրվան, որ թարգմանվում է բախտ կամ փառք։ Հազար տարի զոհ արեց նա, որպեսզի, թերևս, իրեն մի որդի լինի՝ Որմիզդ անունով, որն ստեղծի երկինքը, երկիրը ու այն ամենը, ինչ որ նրանց մեջ է։ Եվ հազար տարի զոհ անելուց հետո սկսեց մտածել՝ ասելով. «Որևէ օգուտ կա՞, որ այս զոհն անում եմ, կունենա՞մ Որմիզդ որդի, թե իզուր եմ ջանում»։ Եվ մինչ նա այսպես մտածում էր, Որմիզդն ու Արհմանը սաղմնավորվեցին իրենց մոր արգանդում, Որմիզդը՝ այն զոհ մատուցելուց, իսկ Արհմանը՝ երկմտելուց։ Ապա Զրվանն իմանալով ասում է. «Երկու որդիներ կան որովայնում. նրանցից ով որ շուտ հասնի ինձ մոտ, նրան թագավոր կդարձնեմ»։ Եվ Որմիզդը, իմանալով հոր մտադրությունը, հայտնեց Արհմանին՝ ասելով. «Մեր հայր Զրվանը մտածեց, թե մեզնից ով շուտ գնա իր մոտ, նրան թագավոր կդարձնի»։ Արհմանը, այդ լսելով, ծակեց որովայնը և ելավ-կանգնեց հոր առաջ։ Նրան տեսնելով՝ Զրվանը չիմացավ, թե ո՛վ է, ուստի հարցրեց՝ «Ո՞վ ես դու»։ Իսկ նա պատասխանեց՝ «Ես քո որդին եմ»։ Զրվանը նրան ասաց. «Իմ որդին անուշահոտ ու լուսավոր է, իսկ դու խավար ու գարշահոտ ես»։ Մինչ նրանք միմյանց հետ այսպես խոսում էին, իր ժամին Որմիզդը ծնվեց լուսավոր ու անուշահոտ, եկավ-կանգնեց Զրվանի առաջ։ Եվ Զրվանը, տեսնելով նրան, իմացավ, որ իր որդի Որմիզդն է, որի համար զոհ էր մատուցում։ Եվ վերցնելով բարսմունքը, որ բռնում էր իր ձեռքում ու նրանով զոհ անում, տվեց Որմիզդին ու ասաց. «Մինչ այժմ ես էի քեզ համար զոհում, այսուհետև դու պիտի անես ինձ համար»։ Եվ երբ Զրվանը բարսմունքը տվեց Որմիզդին ու օրհնեց նրան, Արհմանը մոտեցավ Զրվանին ու նրան ասաց. «Այնպես չուխտեցի՞ր, թե քո երկու որդիներից ով որ շուտ հասնի քեզ մոտ, նրան թագավոր կդարձնես»։ Իսկ Զրվանը պայմանը չդրժելու համար Արհմանին ասաց. «Ա՛յ խաբեբա ու չարագործ, թող քեզ տրվի ինը հազար տարվա թագավորություն, Որմիզդին էլ քեզ վրա արքա նշանակած լինեմ, իսկ ինը հազար տարուց հետո Որմիզդը թագավորի և ինչ ցանկանա անել՝ անի»։ Այն ժամանակ Որմիզդն ու Արհմանը սկսեցին արարածներ ստեղծել։ Եվ այն ամենը, ինչ Որմիզդն էր ստեղծում, բարի էր և սուրբ, իսկ ինչ որ Արհմանն էր ստեղծում՝ չար էր ու ծուռ։

Գ. Այժմ մենք, թողնելով նրանց [մանիքեականներին], հարցնենք սրանց[մոգերին]. Զրվանը, որին ամեն ինչից առաջ են համարում, կատարյա՞լ մեկն էր, թե՞ անկատար։ Եթե ասեն, որ կատարյալ էր, կլսեն, թե կատարյալը ամի՞ց կարիք կունենար խնդրելու որդի, որը զուր և երկինքն

www.a-pdf.com

ու երկիրն ստեղծեր. քանի որ եթե կատարյալ լիներ, հենց ինքը կարող էր ստեղծել երկինքն ու երկիրը: Իսկ եթե անկատար էր, պարզ է, որ նրանից վեր կար մեկը, որը կարող էր նրա թերակատարությունը լրացնել: Եվ եթե իրենից վեր մեկը կար, նա պիտի ստեղծեր երկինքն ու երկիրը և այն ամենը, ինչ որ նրանց մեջ են՝ իր բարերարությունն ու զորությունը ցույց տալու համար, և ոչ թե Զրվանին որդի շնորհեր, որը երկինքն ու երկիրը և նրանց մեջ եղող ամեն ինչ ստեղծեր:

«Բայց,— ասում են,— փառքի համար էր զոհ անում»:

Հարցնենք՝ փառքը մեկի՞ կողմից էր շնորհված նրան, թե՞ [ինքը] մշտնջենական լինելու պատճառով էր փառավոր: Եթե փառքը մեկի կողմից էր պարգևված նրան, պետք է կարծել, որ կար մեկը նրանից վեր՝ ավելի հզոր ու ավելի փառավոր, որից փառքը հասավ նրան: Իսկ եթե նրանից վեր մեկը չկար, հազարամյա զոհ անելը իզուր էր. որովհետև փառքը գոյավոր բան չէ, այլ մեկի հաջողությունից է փառք կոչվում, ինչպես որ մեկի անհաջողությունից էլ թշվառությունն է անվանվում: Երկուսն էլ դեպքերի արգասիք են և ոչ թե հաստատ գոյակներ:

Մի բան ևս: Եթե դեռ ստեղծված չէին արեգակը՝ և լուսինը, որոնցով ժամերն ու օրերը, ամիսներն ու տարիներն են որոշվում, հազար տարին որտեղի՞ց էր երևում: Քանի որ մեջտեղում չկային լուսատուները, որոնք օրերի, ամիսների ու տարիների թիվը պիտի ցույց տային, ուրեմն պարզ է, որ անմտությամբ լի են այն շաղակրատանքները:

Դարձյալ՝ եթե չկային երկինքը, երկիրը և ինչ որ նրանց մեջ է, որտե՞ղ կամ ինչո՞վ էր զոհ անում [Զրվանը]: Երբ չկար երկիրը, ոչ էլ նրանից [բուսնող] տունկերը, բարսմունքը որտեղի՞ց էր գտնում՝ իր ձեռքում բռնելու. կամ թե ի՞նչ էր զոհում, քանի որ անասունները դեռ ստեղծված չէին: Եվ որ ամենից անմիտ բանն է, «Հազար տարի,— ասում են,— զոհ մատուցեց. և հազար տարի հետո երկմտեց՝ ասելով. «Կլինի ինձ Որմիզդ որդի. եթե չլինի, իզուր տեղը պիտի չարչարվեմ»: Եվ դա ցույց է տալիս, որ Զրվանը տկար, կարիքավոր ու տգետ էր. չարիքների պատճառն էլ նույն ինքն է և ոչ թե Արհմնը: Որովհետև եթե նա երկմտած չլիներ, ինչպես ասում են նրանք, չէր լինի Արհմնը, որին իրենք չարիքների արարիչ են հռչակում, Բայց ինքը երկմտեց, որը անհավատալի և լիապես անկարգ բան է:

Քանի որ մեկ աղբյուրից երբեք երկու տեսակ ջուր չի բխում՝ մեկն անուշ, մյուսը՝ դառն, ոչ էլ մեկ ծառից երկու տեսակ պտուղ [է լինում]՝ մեկը քաղցր, մյուսը դառն, ուստի եթե Զրվանին ընդունում են քաղցր, չպետք է դառն պտուղը՝ Արհմնին, նրանից [ծնված] համարեն, իսկ եթե դառն են հաշվում, պատշաճ չէ, որ քաղցր պտուղը [Որմիզդին] նրանից [սերած] կարծեն: Եվ նրանց համար հարմար է աստվածային խոսքը, թե՝ «Կամ արեք ծառը քաղցր ու նրա պտուղը քաղցր և կամ ծառը դառն արեք ու նրա պտուղը դառն, որովհետև ծառից է իր պտուղը ճանաչվում»:

Եվ եթե արարածները մնում են յուրաքանչյուրն իրենց հորինվածքում ու երբեք դուրս չեն գալիս իրենց համար դրված սահմաններից, [ապա] առավել ևս Զրվանը, եթե մշտնջենավոր մեկն էր ու արարածներ ստեղծելու հնարներ էր որոնում՝ թե՛ անձամբ, թե՛ որդու կամ մի ուրիշի միջոցով, ինչպես ասում են, պարտավոր էր կարգ ու կանոն ցույց տալ և ոչ թե անկարգություն: Որովհետև երբեք չտեսանք, որ կովերը էշ ծնեին, էշերը՝ եզ, ոչ էլ գայլերը՝ մաքի, մաքիները՝ աղվես, առյուծները՝ ձի, ձիերը՝ օձ. սակայն մի

www.a-pdf.com

ծնունդ կա միայն, որը մարդիկ բնության օրենքներից դուրս հնարեցին՝ ձիերից ու էշերից ջորիներ ծնեցնելը։ Նրանք էլ անսերմ ու անծնունդ են, քանի որ ոչ թե Աստծուց են ստեղծվել, այլ մարդկանց հնարամտությունից։ Այսպիսով՝ եթե Զրվանը տավար էր, կարիճ Արհմնին ինչպե՞ս էր ծնում, և եթե գայլ էր, գառ Որմիզդին ինչպե՞ս ծնեց, չէ՞ որ մարդկանց մտքի ցնդաբանություններ են [դրանք]։

Քանի որ Զրվանը ևս մարդ է եղել, մի քաջ տղամարդ՝ տիտաններից օրոք, և հույները, արիները և բոլոր հնթանոս ժողովուրդներն էլ սովոր են քաջերին դյուցազուններ համարել, [ուստի] պարսից կրոնը կցմցողը տեսնելով, որ իր երկրի մարդիկ [նույն ձևով] նրան [Զրվանին] Աստված են համարում, [ասում է]. «Ես պիտի կարծել տամ, որ երկնքի, երկրի ու բոլոր արարածների ստեղծումը նրանից է»։

Խոսքիս ճշմարիտ լինելը նրանից է երևում, որ [կցմցողը] ըստ մարդկային բարքերի է հարմարեցնում քեշը և հղիության ու ծննդյան [հիմունքով] է կցմցում իր ուսմունքը։ Որովհետև նախ ազդարարում է, թե բարի և չար երկու արարիչները մեկ հոր ծնունդ են, և ապա մեջտեղ է բերում այն, թե մոր ու քրոջ [հետ ունեցած] սեռական գործողություններով են ստեղծվել լուսատուները։ Եվ դա՝ ոչ թե ուրիշ բանի, այլ մարմնասիրության ու ցանկասիրության պատճառով։ Որովհետև տեսնելով, որ արիական ցեղը իգասեր էր, նրա նույն մեղկ բարքին համապատասխան նրա համար կրոն կցմցեց, որպեսզի իրենց աստվածների մասին լսելով, թե անվայել խառնակեցություններ են հետամուտ եղել, իրենք էլ, նրանց նմանվելով, նույն անառակություններն անեն անխտիր, իսկ դրանից հետո է և վեր է մնում աստվածայինը։ Որովհետև Աստծուն պատշաճ է որդի ունենալ ոչ թե ամուսնությամբ, այլ հավիտենականաբար, ինչպես որ մտքին [հատուկ է առանց բերել] խոսք, ազբյուրին՝ գետ, կրակին՝ ատքություն, աբեզակին՝ լուսավորություն, ուստի այնպես չէ, ինչպես նրանք են հանդգնում ասել, թե փափագում էր, որ մի որդի ծնվեր իրեն, որի անունը Որմիզդ լիներ։

Օ՜ հիմարություն, դեռ մեջտեղը որդի չկար, և նա չասպնավորվածին ու չծնվածին անուն էր դնում։ Բոլոր ծնունդներին անուններ են դրվում ծնվելուց հետո, իսկ սա [Զրվանը] ծնվելուց առաջ ինչպե՞ս էր նրան Որմիզդ անունը դնում։ Բայց [գուցե ասեն], թե հավատում էր, որ իսկապես իրեն որդի է ծնվելու։ Իսկ եթե հավատում էր, ինչո՞ւ երկմտեց և իր երկմտանքով պատճառ դարձավ Արհմնի ծննդյան, որով չարիքներն աշխարհ մտան։ Եվ զարմանալին այն է, որ մեկը հազարամյա զոհաբերությամբ հազիվ ծնվեց, իսկ մյուսը՝ հենց նոր երկմտելուց։ Դարձյալ՝ նա, որ իմացավ, թե որովայնում երկու որդի կա, ինչո՞ւ այն էլ չիմացավ, որ մեկը բարի է, իսկ մյուսը՝ չար։ Եվ եթե իմացավ, բայց չոչնչացրեց չարին, [ուրեմն] ինքն է չարի պատճառը։ Իսկ եթե այն չիմացավ, ինչպե՞ս կարելի է հավատալ, թե մյուսին ճանաչեց։ Եվ եթե այն ժամանակ չիմացավ, [իսկ հետո], երբ տեսավ՝ նրան խավարին ու գարշահոտ, արդյոք այն ժամանակ նո՞ւյնպես չիմացավ։ Սակայն և՛ իմացավ, և՛ տեսավ, և՛ թագավոր դարձրեց խավարայինին. [ուստի] ինքն է չարիքների պատճառը, որովհետև չոչնչացրեց չարին և դեռ թագավորություն էլ տվեց նրան ինը հազար տարի։ Եվ ո՞ւմ վրա թագավորեցրեց նրան [Արհմնին], եթե ոչ Որմիզդի կողմից ստեղծված բարի արարածների վրա, որպեսզի նրանց չարչարի՝ խառնելով նրանց հետ իր չար արարածներին։

www.a-pdf.com

«Սակայն,— ասում են,— Որմիզդին էլ թագավորեցրեց նրա վրա»:

Եթե Որմիզդը նրա թագավորը լիներ, ինչպե՞ս թույլ կտար, որ նա [Արհմնը] իր բարի արարածներին չարչարեր: Եթե հայրը որդու արարածներին չխնայեց՝ չարի ձեռքը տալով [նրանց], որդին իր արարածների նկատմամբ ինչո՞ւ չպիտի հոգ տանի. անկարողությա՞ն, թե՝ չարկամության պատճառով: Եթե անկարողության պատճառով վտանգից ազատ չի պահում. ապա նա ո՛չ այժմ է թագավորում, և ո՛չ հետո, ինչպես ասում են, կարող է հաղթել: Իսկ եթե չարկամության պատճառով է, դուրս է գալիս, որ չարիքների համար պատասխանատու է ոչ միայն հայրը, որ թագավորեցրեց չարին, այլև որդին, որ համախոհ եղավ հորը և քաջալերող չարին:

Դարձյալ՝ թե որ թագավորությունը հանձնեց որդիներին՝ մեկին ինը հազար տարով, մյուսին՝ հավիտենապես, [ապա] ինքը ո՞ր կարգում պիտի մնար: Չէ՞ որ երբ դեռ աշխինչ չկար, չկար նաև որևէ բանի թագավոր, որովհետև որևէ բանի արարիչ էլ չկար: Իսկ երբ որդիները ծնվեցին, դարձան արարիչներ, մեկը բարիների, մյուսը՝ չարերի: Հենց նրանք էլ թագավորներ եղան, մեկը՝ ժամանակավոր, մյուսը՝ հավիտենական: Այսպիսով Զրվանն արարչությունից ու թագավորությունից դատարկ մնաց. և արարիչ չէ, որովհետև ինքը չի ստեղծել, թագավոր էլ չեղավ, որովհետև ո՞ւմ արարածներին պիտի թագավոր լիներ: Ուրեմն պարզ է, որ Զրվանը երբեք գոյություն չի ունեցել և չկա: Որովհետև այն, որ գոյություն ունի, կա՛մ արարիչ է, կա՛մ արարած: Եվ քանի որ նա [Զրվանը] ոչ արարիչ է, ոչ էլ արարած, [հետևաբար] երբեք էլ Աստված չի եղել, չկա ու չի էլ լինի:

Ե. Դարձյալ ասում են՝ «Բարսմունքը, որ բռնում էր իր ձեռքում, տվեց իր որդուն՝ Որմիզդին, և ասաց՝ «Մինչ այժմ ես էի քեզ համար զոհ մատուցում, այսուհետև դու ինձ համար պիտի զոհես»:

Արդ՝ եթե ինքը զոհ էր մատուցում [Որմիզդի] համար, որ նա ծնվի իրեն որդի, իսկ Որմիզդը ի՞նչ նպատակով պիտի զոհ աներ իր [Զրվանի] համար, մի՞թե Զրվանը որևէ տեղից կասկած ուներ և այն պատճառով էր պատվիրում նրան՝ իր համար զոհ անել. մի՞թե նրանից [էր կասկածում], որից խնդրեց որդին՝ [մտածելով], թե որդին տալու դիմաց գուցե հատուցում պահանջի: Եթե նրա մտքում այդ բանն էր, բարսմունքը որևէ կերպ չէր կարող օգտակար լինել: Ուրեմն բարսմունքը հանձնելիս սա չասաց՝ «Դու ինձ զոհ պիտի մատուցես», որպեսզի ցույց տար, թե կար մեկը, որին ինքը զոհ էր մատուցում՝ որդու համար և որդուն պատվիրեց իր համար նրան [այն մեկին] զոհ մատուցել:

Եվ եթե իրենից ու իր որդուց վեր կար մեկը, որին զոհ էին մատուցում, նրա՛ն պետք է ընդունել իրենց պատճառ ու ամեն բանի արարիչ և ոչ թե Զրվանին՝ [համարել գոյանալու] պատճառ Որմիզդի ու Արհմնի, իսկ սրանց էլ՝ չարերի ու բարիների արարիչ: Ով Զրվանից վեր գոյություն ուներ, փոխանակ Զրվանին արարիչ որդի տալու, հենց ինքը չէ՞ր կարող ստեղծել երկինքը, երկիրը և ինչ որ կա նրանց մեջ,— ինչպես նախօրոք ասվեց,— և իր զորությունն ու բարերարությունը ցույց տալ: Կամ եթե նա [Զրվանը] իր Արհմն որդուց կասկած ուներ և այն պատճառով բարսմունքը Որմիզդին տվեց, որ նրանով զոհ մատուցի բարձրագույնին, [ու ինքը] կասկածից վերծ լինի, ուրեմն մեջտեղը պիտի լիներ մեկը, որին զոհը մատուցեր: Եվ եթե մեջտեղում կար մեկը, որն արժանի էր զոհ մատուցելուն, ուրեմն Զրվանը

www.a-pdf.com

մշտնջենական չէր, այլ մեկի կորմից ստեղծված էր։ Եվ պետք է որոնել, թե ինքն ումի՞ց ստեղծվեց, ո՞վ կար, որին ինքը զոհ էր մատուցում, և ո՞վ է նա, որին, իր համար, իր որդուն հրամայեց զոհ մատուցել։ Որովհետև հնարավոր չէ, որ մեկը լինելու սկիզբ առնի՝ առանց ուրիշից գոյացում ստանալու, և միայն Աստված կարող է ոչնչից բան ստեղծել, ինչպես որ կամենա։ Եվ արդ՝ ո՞վ է, որ Զրվանին ստեղծեց, եթե ոչ Աստված, ում և զոհն էր մատուցում, որը և նրան այնպիսի որդի տվեց, որ երկինքը, երկիրը և նրանց մեջ եղածները ստեղծի։ Եվ այն է զարմանալին, որ ինքը չստեղծեց, բայց կարողացավ Զրվանի որդուն շնորհել ստեղծելը։

«Մակայն,— ասում են,— մեչտեղը ոչ ոք չկար, որին Զրվանը զոհ մատուցեր»։

Եթե այդպես էր, ապեմն, Զրվանն էլ գոյություն չուներ։ Եվ մեծ ծաղրի է արժանի [այն], որ չեղածը չեղածին չեղածի համար զոհ էր մատուցում։

www.a-pdf.com

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

(Ե ԴԱՐ)

ԹՈՒՂԹ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՅԱՆԻՆ
ՍՏԱԼՈՍ ԱՐԵՂԱՆԵՐԻ ՄԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

...Արդ, դո՛ւ, տեր, քաղցր ու խոնարհամիտ, աղքատահայաց ու կշռադատող, Աստծո հավատին առաջել ծանոթ մի մարդ ես, որպես քո բոլոր նախնիները։ Եվ ես՝ անպիտանս, ամենեցուն կզկզանք, թեպետև, իբրև տգամարդու որդի, անզգամի մեկը երևամ աիրող առաջ, սակայն ինչպես Պողոս մեծ առաքյալին Քրիստոսը հանդուրժեց, Քրիստոսի պես դու էլ ինձ ընդունիր իբրև անզգամի՝ ներելով իմ անզգամութիւնը։

Մանկութեան օրերի իմ կյանքը դուք ինքդ, աե՛ր, լավ գիտես։ Իմ վարդապետների հրամանով տարան ինձ Հոռոմոց երկիր, և այնտեղ մնացի ես մի քանի տարի։ Այնտեղից վերադառնալով՝ խոռվությունների ամբողջ ժամանակն ապրեցի Կամսարականների մոտ՝ մինչև ձեր հնազանդվելու օրերը։ Եվ այնուհետև ձանձրացած խառնաշփոթություններից, ցանկացա աղոթքներով զբաղվել ու հանգստանալ։ Եվ գնալով Սյունիք՝ երկու տարի այնտեղ մնացի, ձմեռը՝ քարայրում, գավառի ամբողջ բնակչության մեջ բոլոր կրոնավորներից ամենից հռչակավոր մի մարդու հետ, որի անունն է Մովսես։ Քարայրը շատ էր նեղ, և ամռանը, այնտեղի խիստ շոգի պատճառով, նահանգի քահանայապետ տեր Մուշեղն ինձ տանում էր իր հետ, ո՛ր ամառանոցումն էլ որ լիներ։

Եվ, այսպես, իմ նախնական կյանքն ու վարքը Կամսարական տեր Ներսեհն ու Հրահատը գիտեն, Սյունիքում անցկացրած կյանքս՝ նահանգի վերոհիշյալ եպիսկոպոսը։ Եվ դու, փնտրելով ու գտնելով ինձ այն նահանգում, տարար քո տուն՝ ո՛չ իբրև ընչազուրկ աղքատի կամ երեխայի և ո՛չ իբրև քեզանից օտար մի մարդու կամ ուրիշի ծառայի, քանի որ պարեգոտ հագնողներն ազատ են հայտարարված Քրիստոսի սիրուն։

Իսկ նա, որ աշխարհիկ ծառայությունից ինձ հանեց և պարեգոտավորի իմ ազատության պատճառը դարձավ, տեր Աղանն էր, տե՛ր իմ, քո քեռին։ Այդ պատճառով էլ Հայաստանում քեզ՝ տիրոջդ էի արժանի։

Դրանից բացի, քո երանելի մայրը, երբ ձեզ բերեց բդեշխի մոտ, երբ պալատում մեզ էլ էին ուսուցանում, թեպետև տարիքով մեծ էինք ձեզանից, բայց սննդակից եղանք ձեզ և խաղակից, ձեր վերնազգեստներն էինք բերում ձեր եռևից։ Ձեր օրհնված մայրը և Անուշ-Վռամն իրենց հոգեսիրությամբ մեզ էլ ձեզ հետ դաստիարակում էին այնպես, ինչպես որ ձեզ։ Այդ բոլորի համար էլ քեզ՝ տիրոջդ էի արժանի։ Իսկ իմ ստացած մեծ շնորհքի համար, որ Քրիստոսն ինձ պարգևեց,— իբրև արժանավորի, թե՛ անարժանի՝ այդ էլ տվողը լավ գիտեր,— ապա արդարև քեզ էի արժանի։

Քանի որ այս դարում վերին խնամակալությունը զորացնելով քո քաջությունը պայծառացրեց ավելի, քան ամենքինը, որոնք կային կամ այժմ

www.a-pdf.com

կան Հայաստանում, իսկ իմ շնորհներն էլ՝ ավելի, քան բազում պարգևատավարներինը,— ահա՛ անզգամացա և ճառում եմ. Ների՛ր, աղաչում եմ, իմ այս փոքր անզգամությունը,— ուրեմն, ստույգ ու առավել քեզ էլ արժանի էի։

Եվ ես այն Ղազարն եմ, որին, քո՝ Տիրոջդ, և ուրիշ շատերի ասածների համաձայն, ոչ ոք չի կարող փոխարինել։ Իսկ այժմ, չար նախանձից, շատերն են ձգտում լինել իմ փոխանակը։ Երանի՜, թե լինեին։

Դեռ արարչագործության ժամանակից նախանձը բազում ոճիրներ գործեց աշխարհում։ Սկզբիցևեթ նախանձոտ սատանան, նախաստեղծին կործանելով, հող դարձրեց։ Եվ Սուրբ գիրքն է վկայում Իմաստության մեջ, թե «Սատանայի նախանձությա՛մբ մահն աշխարհ մտավ»։ Ադամից դեռ միայն երկու մարդ էին աշխարհ եկել՝ Կայենն ու Հաբելը, երբ նախանձության դևը տիեզերքի անբավ տարածությունը փոքր ու նեղ ցույց տվեց Կայենին և նրան դարձրեց եղբայրասպան։ Նախանձից Հակոբի դեմ գրգռված Եսավը նրա մահն էր մտորում։ Անմեղ Հովսեփին, նախանձից դրդված, մոլեգնորեն ստրկության վաճառեցին նրա եղբայրները։ Եվ, դարձյալ նախանձից, սատանան երկու հոգեշնորհ անձանց՝ Ահարոնին ու Մարիամին, մղեց անարժան խորհուրդի գայթակղության և մարգարեի կնոջը բամբասացրեց։ Թշնամիներին ոչնչացնող ժողովրդին ապրեցնող մարդուն՝ Դավթին, նախանձից անդադար փնտրում էր Սավուղը, որպեսզի նրան կործանի։

Արդ, ես էլ ի՞նչ ասեմ մարդկանց՝ միմյանց դեմ ունեցած նախանձի մասին, երբ նախանձից հրեա ժողովուրդն ու քահանայապետերն ամենքի արարիչ ու տեր Հիսուս Քրիստոսին նախ ծաղրելով խայտառակեցին, երբեմն նրան կոչելով կախարդ և ասելով, թե «Դա դևերի իշխան Բեհեղզեբուղի ձեռքով է դևեր հանում»։

Այսպես էլ ժամանակին, նախանձից դրդված, ինձ վրա բարդեցին բազում բանսարկություններ՝ ասելով, թե Ղազարն ասում է՝ պատահականությունը մեղք չէ, ու այս բանը մարգարեներն էլ է հորդորել։ Եվ թե ինչու գա այդպես է, ապա ինքդ, տե՛ր, ավելի լավ գիտես, քան այն ստոր խոսողները։ Եվ դեռ ու անսուրբ մարդիկ էլ քաղցր ու սխրալժակով այդպիսի լուրերն ընդունում էին՝ իբրև օժանդակություն իրենց մեջ բույն դրած չար գործերին։

Արդ, ո՞ր անհավատը, էլ չե՛մ ասում՝ քրիստոնյան, այդպիսի բան կանցկացնի իր մտքով, հետո էլ ուրիշների մոտ կշշնչա այդպիսի խոսքեր. ո՞ր անմիտը, ո՞ր տգետը, ո՞ր հրեան, ո՞ր այլազգիները։ Եվ Ղազա՞րն էր այդ քարոզում, ո՞ւմ, որտե՞ղ և կամ ե՞րբ։ Նա անտեղյա՞կ է գրքերից, անկի՞րթ է ուսման մեջ, մովսիսական օրենքնե՞րն են նրան օտար, թե քրիստոսատուր շնորհի՞ց է զուրկ։ Եվ արդյոք մեր Հայոց աբեղանե՞րը չեն, որ արժանի են ողբի, արտասուքի ու մեծ ողի, երբ անպիտան լուրեր են տարածում և նախանձից խոսում են անարժան բաներ։

Այն ո՞վ համբերատար ու անբարկանալի Աստծու մեջ մի այնպիսի ահավոր բարկություն շարժեց, որ նա ջրհեղեղ անեց երկրի երեսին, մինչև որ ծածկեր բոլոր լեռները, ո՞չ, արդյոք պառնկությամբ բորբոքվածները։ Ասում է. «Աստծո որդիք տեսան մարդկանց դուստրերին և խառնակվեցին նրանց հետ»...

Իմ մասին նաև ասում են՝ «Աղանդավոր է»։ Եվ այս շտապում են բոլորին հայտնել, տկարամիտներին էլ հավատացնել ու ցույց տալ, թե իմ մեջ եղած շնորհքի վարդապետությունը թերի է։ Ես գրի անցկացնելու համար նույնիսկ հույժ աղտեղի բան եմ համարում անունն այն աղանդի, որով

հանդգնում են ինձ ռամբասել։ Եվ նրանց այդ հայհոյալից դիտողությունն էլ նման է վերոգրյալին՝ պոռնկացածների մեղքը թեթև ու չնչին համարելուն։

Բայց ես իմ կարողության չափ հունական գիտությամբ զբաղվելով՝ մտքիս տկար ուժի համեմատ կարդացել եմ գրքերը սուրբ մարդկանց, որոնք սուրբ Հոգու ուժով զինված, աղանդավոր վարդապետությունների հոգեսպան սրերը դարձրին նրանց դեմ, փշրեցին նրանց աղեղները և գրով մեզ ավանդեցին իրենց փրկագործ վարդապետությունը, իսկական ոգեսեր հայրերի պես հոգալով բոլոր անհասկացող մարդկանց օգտի մասին։ Եվ եթե մեկը ջերմ սիրով կարդա նրանց երկարաշունչ գրածները, անվնաս կմնա ու հեշտությամբ կփրկվի չար նետաձիգների հրարձակ նետերից։ Խոսքս սուրբ մարդկանց մասին է՝ Աթանաս Ալեքսանդրացու, երկու նույնանունների՝ Կյուրեղ Ալեքսանդրացու և Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազազացու, որն իր ուղղափառ գիտության մեծ շնորհքի պատճառով Աստվածաբան հորջորջվեց, և մեր առաքելանման նահատակ Գրիգորի՝ Հայոց վարդապետի, ու նրանց նմանների մասին, որոնք քարոզեցին՝ հետևելով նույն ողջամտության շավղին...

Իսկ Հայոց աշխարհի աղանդը, որ ասում են, ո՛չ վարդապետի անվամբ է կոչվում, ո՛չ էլ գրի է առնված։ Հավատքից և ուսումից զուրկ մարդիկ են, գործի մեջ՝ ծույլ ու անհամբեր։ Վայե՛լ էր, իհարկե, որ նրանց մեջ եղած անգիտությունից ու վարքի անկարգությունից արդարև բուսներ մի այդպիսի աղանդ, ըստ առասպելի խոսքի, որ ասում է՝ «Հարսնացած խոզի համար կոյաջուրը բաղնիք է»։ «Թող այս չպատմվի Գեթում ողբի կարգով և չլսվի Ասկաղովնի դռներում»։ Կարդացո՛ղը կհասկանա։

Բայց ես, թեպետ գիտեի այդպիսի աղանդավորներից մեկին, բոլորովին չէի կամենում դատել կամ դատապարտել լոկ լսածի հիման վրա, որի համար չարաթույնները կարծում էին, թե ես էլ նրա նման եմ։ Սակայն ես սովորել էի Փրկչից, որն ամենքին չի հրամայում հանդգնորեն որոմը ցորենի միջից հանել մինչև հնձի ժամանակը և խոստանում է հունձքի ժամանակ ուղարկել իր նվիրակներին, որոնց կամ հրեշտակ է ասում կամ ճշմարիտ վարդապետներ, ինչպես որ աստվածային գիրքը սովոր է վարդապետներին կոչել հրեշտակներ, որպես և մարգարեներն աստվածներ կոչեցին իշխաններին։ Իսկ ես, ո՛չ հրեշտակս, բայց վարդապետ, երբեք էլ չեմ ենթարկվել այս խոսքին, որ ուրիշների կամքը հարցնեմ իշխանության գործ կատարելու համար։ Երբե՛ք։ Ինձ ատելու պատճառով,— թերևս իսկապես բատ անարժանության,— սուրբ ու անարատ ամեն տեսակ մեղքից ազատ Հայոց այդ ուսուցիչներն ինձ ո՛չ միայն չբարձրացրին մեծ-մեծ պաշտոնների, ինչպես եպիսկոպոսության կամ իրենց մեջ առաջին տեղին, կամ էլ եկեղեցու դատավորության, այլև որևէ մեկն ինձ քորեպիսկոպոս անգամ չդարձրեց, որ պարսիկ ու անարժան մարդիկ այսօր էլ անում են։

Ասում էին նաև, թե. «Ուր որ պիղծ ու չարագործ մարդ կա, Ղազարը նրա մոտ է լինում և ինքը սիրում է նմաններին»։ Այդպիսի խոսքեր ասողների գործերի մասին ես ահա լռում եմ, քանի որ կարիք չունեմ խոսելու։ Բայց Քրիստոսի դատաստանի ահավոր ու անաչառ օրը չի լռելու, այլ մատնելու է անշեջ բոցին։ Եվ իմ բարեկամներն եմ համարում երկու եղբայրներիդ, տե՛ր իմ, սուրբ եղբորդ որդու հետ միասին։ Այդ երեք այրերն էլ հոգեպես ու մարմնապես կրթված են և ունեն խրատի հաղորդությամբ ու գիտություն, իսկ ուղղափառ հավատի ծանոթությունը ձեռք են բերել օրհնված մորից ու քեզնից, տե՛ր իմ։ Դրանք ո՛չ թե հասակով պակասավոր և [illegible]

www.a-pdf.com

մարդիկ են, այլ կատարյալ են գործերով ու քաջությամբ։ Նրանց հետ էլ՝ Աբեղենից իշխանը, որը ևս, տե՛ր իմ, քո սիրո ու ամենընկալ բարերարության շնորհիվ բոլորից հարգված է և ասպարեզում լինելու պատճառը քեզանից ու Քրիստոսի պարգևից է ստացել։ Թող հարցնեն՝ ըստ մարմնի՝ հայրական իմ խրատների և ըստ Հոգու՝ քարոզությանս խոսքերի մասին, և ինչ որ լսել են ինձանից, առանց իրենց հոգիների վրա բեռ դնելու, թող ասեն ճշմարիտը...

Անմխիթար կերպո՛վ ես վշտացած եմ մինչև մահ, որ գայլերի պես հարձակվեցին ունեցվածքիս վրա և անխնա գիշատեցին, երբ տեսան, որ ես ընկած եմ քո աչքից։ Այժմ շրջում են իմ ունեցվածքով պճնված և ինձ էլ ծաղրի են ենթարկում։ Բայց ինչ որ այդ վանքում է մնացել ինձանից, ուրախ եմ ու երջանիկ, քանի որ սուրբ ու հոգևոր վայրում է մնացել։

Ուրիշ բամբասարկությունններով ևս ջանացին քեզ զայրացնել իմ դեմ. տե՛ր. իբր, «մի մանուկ չի կարող հոգաբարձու լինել վանքին»։ Եվ ինձ պաշտպանելու համար ո՛չ մի հրեշտակ մարմին չառավ, որպեսզի թերևս նա՛ հոգեղեն բնությամբ տեսներ թշնամիների լարած թաքուն որոգայթը, կարողանար զգուշացնել և համձն առներ լինելու ինձ օգնական։ Ո՛ւմ էլ վերցնում էի, իսկույն նրա մոտ էին հասնում դավաճանության նենգիչները և անմաքուր խրատներ տալով՝ ասում էին. «Ո՛վ անմիտ մարդիկ, ա՛նօգուտ ինչո՞ւ եք աշխատում, այդ խորշակահար վանքում ինչո՞ւ զուր տեղը լալիս և խենթությամբ անձնամահ եք լինում։ Չէ՞ որ Մամիկոնյան տան ավագ ծառաներից ոմանք և մի ավագ քահանա, որ տանն է, երդումով մեզ խոսք են տվել, թե երբ էլ որ լինի, Ղազարին թույլ չենք տա նույնիսկ այդտեղ հանգստանալու, ո՛չ մնաց, թե նրա մերձավորներից մեկին»։ Եվ լսողներն էլ, այսպիսի խոսքերից թուլացած՝ այնուհետև ջանում էին ո՛չ թե վանքի, այլ իրենց շալակի համար։ Սակայն ես, մեղվի նման ամեն կողմից բերելով, թե՛ վաստակողներին պահում և թե՛ վանքի պետքերն էի հոգում։

Բայց դու, տե՛ր, լավ հիշողության տեսնեցող մարդ ես և ոչինչ չես մոռանում, մանավանդ հոգատարության շնորհիվ գուցե ցանկանաս մտաբերել Գյուտ կաթողիկոսի երանելի եղբորորդի Հովհանի՝ Սեպուհի պատմում մի քանի մարդկանց անունից քեզ հայտնած խոսքը։ Այդ մարդիկ, ընծաներ խոստանալով, քեզանից վանքն էին խնդրում։ Եվ դու, տե՛ր, կանչելով քո եղբորը՝ տեր Վարդին, Հայցիկին և ինձ՝ անարժանիս, տեր Հովհանին կարգադրեցիր մեկ էլ կրկնել իր խոսքերը, որոնց վեմ դու տացիր ուրիշ շատ բաներ, սակայն պատասխանից զիջավոր խոսքն այն էիր տվել, թե. «Նրանք պարտավոր էին մտածել և ինձ չհղել այդպիսի խնդիրք։ Բայց որովհետև նրանք անզգամացած են, ուստի ես քստինքով ձեռք բերված այդքան վաստակներն ու բազում չարչարանքներով կուտակած ծախքերը, վատ վաճառականությամբ, չեմ կարող տալ թեթև բաների և ոչ էլ հոգևոր ու հավիտենական գանձը փոխանակել անպետք ու անցավոր գույքի հետ»։ Եվ դարձար տեր Հովհանի վրա, թե. «Քեզ նման մարդուն արժա՞ն էր այդպիսի բաներ լսել, իսկ դու նաև ի՛նձ ես բերել»։

Եվ քանի որ ես երկրային հարցերում ակարամիտ ու անզգույշ մարդ եմ, այնժամ չհասկացա դավադրությունը։ Բայց անհրաժեշտ էր անմիջապես և արագորեն ոտքերդ ընկնել արտասվալից աղաչանքով և հեռու փախչել վանքի հոգաբարձությունից։ Ահա այդպես փրկված կլինեի չարաթույն ժանիքներից այն գազանների, որոնք այնուհետև դարանամուտ ու ծածուկ, իրենց անհամար ու ահռելի հարստությամբ գնեցին բազում հեսաններ,

www.e-pdf.com

«սրեցին իրենց լեզուները իբրև սուսեր, իսկ իրենց շուրթերի տակ էլ իժերի թույնն էր կուտակված»: Եվ ես չկարողացա աղոթել սաղմոսերգուի պես, որ ասում է. «Տե՛ր, ինձ պահի՛ր մեղավորի ձեռքից և փրկի՛ր չար մարդուց», իսկ նրանք այնուհետև հետապնդելով խափանեցին իմ ընթացքը և հասնելով՝ խոցոտեցին ինձ մահացու: Բայց ես ուրախ եմ, քանի որ առաջուց մեղքերով խոցոտված իմ հոգին այն վերքերով առողջացավ ու զորացավ:

Եվ այսպես իրենց կամեցած ամեն ինչը փորձելով ինձ վրա՝ այնուհետև երջանիկ էին տոնախմբության ժամանակ ուրախացողների պես: Մինչդեռ նրանք պետք է լային վրաս՝ իբրև վիրավորի, սենյակիս մեջ շուրջս նստոտելով՝ դեղ դնեին վերքերիս, սակայն սրանց հակառակը հատուցեցին, ծաղր ու ծանակով շրջապատեցին ինձ և սրտանց ուրախացան... Եվ քանի որ սա լոկ զազրախոսություն չէ, որ ասում եմ, այլ ճշմարիտ ու փորձված իրողություն, ներկայացնում եմ քեզ, տե՛ր իմ:

Ականավոր տոհմից մի երևելի սեպուհի ուզարկեցի Հայոց քահանայության գլխավորի մոտ՝ հոգով հիվանդներին տեսակցություն խնդրելու, ասացի. «Շտապի՛ր բուժելու վիրավորներին, օգնությա՛ն հասիր: Թշնամին անթիվ նետերով խոցոտել է ինձ, խիստ վիրավորված եմ ու մահամերձ: Այսուհետև ինքդ պետք է դեղ դնես ու բժշկես, կամ, որ մեռնեմ, շիրիմ դնես ու թաղես»: Եվ նա այսպես պատասխանեց (պատգամաբերը, Քրիստոսի շնորհիվ, ողջ է և ոչ փոքրոգի մարդ). «Ես,— ասաց,— երկյուղից քեզ տեսնել անգամ չեմ համարձակվում, իսկ դու ասում ես՝ գամ բժշկեմ կամ թաղե՛մ: Գուցե մեկն իմանա և ինձ էլ քեզ հետ միասի՛ն թաղի»:

Ո՛ւր է քաջ հովվի անվեհերությունը, ո՛ւր է արդար ուսուցչի հոգատարությունը, ո՛ւր՝ քրիստոսանմանությունն առողջ հայրապետի: Արարածների արարիչը մեղավորների փրկության համար մարդ դարձավ, բազում չարչարանքների դիմացավ, բռնցքահարություններ ու թուք երեսին առավ, արժանացավ փշեղեն պսակի՝ այլևայլ մեծամեծ տանջանքներով հանդերձ: Իսկ դա նվաղածի, վիրավորի երեսին չուր անգամ սրսկել չհամարձակվեց՝ մարդկանց երկյուղից:

Ասում է՝ մի անգամ ավազ մի մարդ, իմ անունը հիշելով, մի քանի պարեգոտավորների ներկայությամբ տրտմահառաչ ասել է. «Արդա՛ր չեղավ այն մարդու հեռանալն այս աշխարհից, քանզի նա եկեղեցու զարդն էր»: Եվ լսողները, ոչինչ չկարողանալով ասել, միայն այս պատասխանն են տվել, թե. «Նրան հալածելու մեջ մենք բոլորովին մեղավոր չենք: Իսկ ինչ վերաբերում է նրա գիտությանը, արդարև առաջները քաջ, անուշ ու զորավոր էր քարոզներ կարդում, սակայն վերջին ժամանակները միանգամայն վատ էր քարոզում»: Եվ նրանք այնքան էլ չհասկացան, որ դրանով հանդիմանության ու ամոթի խոսքեր էին բարդում հենց իրենց անձերի վրա:

Ուրեմն, թող ասեն, թե ո՞ւմ համար էի անում շնորհապարգև քարոզությունս: Ասողի՞ն: Չէ՞ որ ունկնդիրների ախորժալուծ բազմության և հենց նրանց խնդրանքո՛վ: Նայեցեք հույն ժողովրդին, երբ քարոզի մասին հայտնվում է, և քարոզելու ցանկություն ունեցողը մոտենում է սահմանված տեղին, բոլորը, իրենց հոգիները զարթնեցնելով, վերանում են առ Աստված. ձեռքները տարածելով՝ դառնում խաչանման: Եվ միաձայն աղերսանքներով ու աղաղակից ձայնով թախանձում են Փրկչին: «Տո՛ւր,— ասում են,— խոսք, առաքի՛ր շնորհ, դու ի՛նքդ դրա բերանով, որպես սուրբ Պողոսի միջոցով, խոսի՛ր մեզ հետ, նրան ցո՛ւյց տուր քո հաշտությունը քո ծառաների հետ: Եվ մեր մեղքերի պատճառով թող դա չնմանվի ստերջ ամպերի, այլ

www.a-pdf.com

անձրևահոս բխմամբ թող հորդի մեր հողիների անդաստանների վրա, որոնց ծաղկումից մենք քո կամեցած արժանավոր պտուղները բերենք և մատուցենք քեզ»:

Եվ արդ, այն ո՞ր տգետի, էլ չեմ ասում՝ սակավ-ինչ ոսման հետևած մեկի, միտքը չի զարթնի, սիրտը չի վառվի, որպեսզի նա հանի սուրբ Հոդու հին ու նոր գանձերը, մանավանդ, եթե մեկը խոնարհամտությամբ և ո՛չ թե ամբարտավան դիտությամբ է մոտենում իր ասելիքին և պարծենում է լսողների աղոթքներով և ո՛չ թե իր իսկ անձի դիտությամբ...

Իսկ Հայոց այս աբեղաները, իրենց սրտերում բուն դրած դառնաշունչ նախանձի հետ միացած, դրանց հակառակն են անում և արդարև, մարդաբեի ասածի պես, «Յավեր հղանալով՝ անօրենություն ծնոմ», նույնիսկ աղոթք չեն անում քարոզողի համար: Իսկ եթե հանկարծ մարդասեր Աստծուց քարոզելու դիտությունն է շնորհվում նրան, նախանձից տրաքվում են: Եթե տեսնեն, որ ժողովրդից մեկը դովում է նրան, ծաղրելով կամաչեցնեն, կասեն. «Խո՞ւք է առել, բայց լռել չդիտե, զուր տեղը փքված աղմկում է»: Հունաց ժողովուրդը և նույնիսկ երեխաներն իրենց ծնողների ուսերին, ուրիշներին դովելու համար ձեռքները շարժելով ու անհոդակապ ձայներ արձակելով՝ վեր-վեր են թռչում: Իսկ դրանք նստում են՝ գլխարկները գլուխներին քաշած, երեսները փաթաթած, ասես հոտած դիակի մոտ են և պապանձվում են իբրև համր դևեր: Եվ եթե մարդասեր Աստվածը դիալով կամենում է ժողովրդի փրկության համար խրատի խոսք տալ քարոզչին, ապա, նայելով նրանց որճացած դառն խորհուրդներին, մեկ էլ իր մեջ ամփոփելով՝ պահում է այդ շնորհը: Ինչպես Օրհնությանց օրհնությանների մեջ է գրված, արդարև անդիմակայելի են երկու բան՝ սերը և նախանձը: «Նրա կայծը կրակի բոցի կայծ է»: Նրանցից յուրաքանչյուրը դեպի բարին առաջնորդողներին արքայության է հասցնում, իսկ շաբը բազմացնողներին ժառանգություն է թողնում դժոխքը:

Եվ ասում են. «Առաջներում Ղազարը խոսում էր գիտունի նման, այժմ՝ որպեսզի ողբալով ասեր. «Ո՛վ իմ գլուխը ջրին կասը, աչքերս՝ աղտաստւքի աղբյուրներին, որպեսզի նստած լայի այս աշխարհի թշվառությունը»:

Եվ ասում են. «Առաջներում Ղազարը խոսում էր դիտունի նման, այժմ՝ անգետի»: Քանի դեռ նրանց մեջ լուռ էր նախանձը, քարոզիչների մեջ զորեղ էր շնորհը: Եվ երբ տեսան, որ ժողովրդական բազմությունները հոժարությամբ լսում են, դովասանքներով քաջալերում, հետո էլ միմյանց պատմելով շնորհի առատությունը՝ հարդում ու զարմանալով հիշում խոսքի լուսավոր ու անսայթաք բխումը, հրապարակներում ու փողոցներում այս բոլորը հաղորդում իրար երջանկացած,— այնժամ վշտահար կործանվեցին և այնուհետ սկսեցին հղանալ ոխակալություն և ծնել նախանձ: Իսկ երբ դրանց մեջ այնպես առատացավ չարակամությունը, լռելով արդելվեց խոսքը,— և ոչ թե քարոզչի կողմից, քա՛վ լիցի, քանզի անզեղչ է շնորհը, և անպակաս են պարգևները,— այլ դրանցի՛ց, որպեսզի չլսեն իրենց փրկության խոսքը: Դրանց վրա է կատարվում սուրբ Հոգու խոսքը, որ ասում է. «Ձեզ սուլ կթերեմ, ո՛չ հացի սուլ և ո՛չ էլ ջրի ծարավ, այլ Տիրոջ պատգամները լսելո՛ւ սուլ»:

Իրենց մտքերը բազում բաների ետևից դցելով և այս էլ ուրիշ չարամտությունների կապելով՝ ասում էին. «Այդ մարդը դերք չի կարդում, սակայն ընթերցվածն այնպես անսայթաք է ասում, ինչպես դրքի մեջ է դրրված»: Եվ այնքանն էլ չկարողացան հասկանալ, թե ով որ լավ է իմանում, Դավթի սաղմոսը պետք է անխախտ արտասանի միայն պաշտաման ժամին

www.e-pdf.com

և ոչ թե միշտ գիրքը ձեռքին բռնած՝ ցնորվածի պես կարդա այլևայլ բաներ։ Իսկ մեր երանելի վարդապետները, երեք-չորս անգամ մեզ սովորեցնելով եկեղեցու բոլոր կտակարանները, սկզբից մինչև վերջ, մեզնից էլ հաշիվ էին պահանջում նույնը և մեզ հարկադրում էին այդ բոլորն իմանալ Դավթի սաղմոսի պես։ Իսկ այժմ լիրբ նախանձորդներից շատերը հազիվ կարողանում են գիտենալ լոկ եկեղեցական գրքերի անունները...

Բայց այժմ, գալով խոսքիս ավարտին, հարմար ու պատշաճ եմ համարում հիշել զարմանալի ու երիցս երանելի ավազակի խոսքը, որ խաչի վրա իր եղկելի ընկերոջը սաստելով՝ ասաց, թե. «Մենք ընդունում ենք մեր գործածներին արժանի հատուցումը,— և Փրկչին ցույց տալով էլ ավելացրել է.— Իսկ սա՞ ինչի»։ Արդ, ես ահա իմ գործածների համեմատ ընդունեցի պատիժը և հրեշտակների ու մարդկանց առաջ խոստովանում եմ։ Իսկ ուրիշ առաքելանման մարդիկ ինչո՞ւ այսպիսի և սրանից էլ առավել տառապանքներ կրեցին այս աշխարհում և խստագույն վշտով վախճանվեցին։

Երանելի փիլիսոփա Մովսեսը, որ արդարև, մինչդեռ ապրում էր իր մարմնական կյանքը, արդեն երկնային զորականներին էր քաղաքակից, չէ՞ որ տեղից տեղ հալածվեց հայոց այդ աբեղաների ձեռքով։ Չէ՞ որ նրա լուսավորող ու տգիտահալած գրքերը անգիտությունից փաթաթիկես էին համարում նրանք և էլի ուրիշ բաներով խայտառակեցին։ Սակայն հետո այլոց տված ամոթանքից՝ մի խաբեական եպիսկոպոսություն մահադեղի պես խմեցրին այն սրրին ու խեղդեցին։ Եվ թե նա վախճանի ժամին ի՞նչ ահավոր նզովքի գիր է թողել քահանայության գլխավորների վրա, գիտեմ, որ դուք լավ տեղյակ եք... [Նա իր կյանքը] անչափ անհանգիստ աշխատությունների և գիշեր-ցերեկ Հայոց աշխարհը լուսավորող վաստակի վրա դրեց։ Նրա ոսկորները գերեզմանից հանել տվին և գետը թափեցին։ Հրեշտականման այն տերին նույն այդ անհանգիստ հալածանքներով մահու հասցրին և դեռ հիմա էլ անհագ քինախնդրությամբ մեռածի հետ են կռիվ տալիս։

Անարատ և ամենքի հարգելի տեր Եսորովիկը դեռևս մեր սահմանին չէր հասել տանդարձի ճանապարհին, երբ իմացան և իբրև թշնամու դեմ զինվեցին՝ ասելով. «Այդ մյուս թաթգամանի՞չն ուր է գալիս»։ Եվ օրհնյալը. հեռվից հեռու լսելով մահաձայն աղեղների աղմուկը, աղոթեց Բարձրյալին և շուտափույթ ընդունեց իր խնդրած մահը։ Նրա տենչալի նշխարներն ուրիշները, և ո՛չ թե մենք, արժանի եղան ընդունելու։

Դրանց հետ միասին տեղին եմ համարում հիշել նաև տեր Աբրահամ եպիսկոպոսին, որին փափագում էի, և խղճիս ձայնը ծերությանս օրերին էլ ինձ հանգիստ չի տալիս, որ չկարողացա գոնե մի կարճ ժամանակ նրա մոտ մնալ։ Թեպետև թերակատար չէ այն սուրբ ու ճշմարիտ հավատը, որ մանուկ հասակում սո՛վորել էի երանելի Աղանից, ապրում եմ նրանով և նրա հետ էլ անփոփոխ կապրեմ մինչև կյանքիս վերջը։ Սակայն համարում եմ. որ նրա իմաստուն խոսքով ու կարգադրությամբ իրենից շահած այն պարապմունքն իր մեջ մեծ գանձ էր ամփոփում... Պարեգոտավորներն էլ մի քիչ զայրացած օրհնյալ ավագ տիկնոջ վերաբերմունքից, այն ժամանակ չհայտնեցին։ Նա, երանելի մորն աղաչելով, հոգաց ինչպես եղրոր մասին, բայց առավել գրգռելով զայրացրեց նրանց, որոնք և նրա միջոցով կատարեցին այն, ինչ հաճելի էր իրենց կամքին։

Եվ սրանց այսպես անարգվելն ու հայհոյանքներով հալածվելը մենք ոչ թե ինչ-որ ժամանակ երեկոյան զրույցներին ինչ-որ մեկի հաղորդածից դիտենք, այլ մեր օրերում և մեր ժամանակում կատարված տեսանք բոլորը։

Իսկ վերագրյալ սուրբ մարդիկ, որոնց նահատակ Գրիգորի մասին հյուսված Պատմությունն է հիշատակում. է՞լ ինչ ասեմ արդար ու արժանավոր բարեպաշտ կաթողիկոսի՝ սուրբ Ներսեսի, առաքինի կրոնավոր և Հայոց մեծ լուսավորիչ տեր Սահակի և շատ ուրիշների մասին, որոնք այս աշխարհի վրա իրենց բարեխոս բերաններն ազգի համար չբացած՝ վախճանվեցին...

Համարձակվում եմ, սրանց հետ միասին, ասել նաև, որ եթե ստույգ չլինեն իմ կարծիքները, ապա դու, տե՛ր, քաղցրությամբ զանց առնելով ների՛ր ինձ որպես տկարամիտի, քանի որ դու ամենասքանչելի անձն է, որից Հայաստանի բոլոր մարդկանց, մեծից փոքրը, հասել է մեծ օգուտ՝ և՛ գահ, և՛ փառք, իսկ սրանց էլ, տե՛ր, մահից փրկել, կյանքի ես արժանացրել, կորուստից հանել, դրել մարգարեներ: Եվ արդ, օրեցօր տեսնելով այդպես Աստծո փառավորությամբ լցված քո հնազանդությունը, որ պարգևելով նրանց՝ տալիս է շքեղություն ու պարծանք, ապա եթե կլինե՞ր, որ նրանցից շատերը, նախանձ դրդումով, կկամենային հնարներ գտնել, սրբերի բարությամբ չհատուցեին քո բարու փոխարեն, այլ նյութեին հակառակը: Բայց վերին արդարատես աչքը՝ լի նայում չարակամների պահանջին, այլ իր խնամակալության հաջողությամբ միշտ ու անփոփոխ բարիք է կատարում՝ ի փառավորություն իր սուրբ անվան, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

www.a-pdf.com

www.a-pdf.com

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

(Ե ԴԱՐ)

ՃԱՌ ԱՆՕՐԵՆ ԴԻՎԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Ո՞ւր գնամ հանգչեմ և լամ այս ահեղ անօրինությունը՝ որ ճմլում է հոգիս. և կամ ո՞ւր թաքնվեմ՝ մեղքիս վշտերից համրացած, և կեղեքվելով ամբողջ զազրելի ու չարալուր այս համբավից, որ տրորում է միշտ սիրտս և գալարեցնում աղիքներս ու որովայնս՝ ողբալով: Եվ մշտապես հալում ու խեղդում են ինձ տրտմություններս, որովհետև ամեն ժամ անառակ պրպծություններ եմ լսում և տեսնում եմ անօրեն ամբարշտություններ: Եվ սրտիս բազում թախանձանքներից ոսկորս կպավ հողին, և իմ մարմինը գետնաքարշ եղավ, որովհետև բազում մեղքերի հանդարտության խռովումից չորացա ինչպես խոտ և ինչպես անշունչ պատկեր. և իմ մտքի ապշությունից սխալանքներս անտես առնելով՝ մոռացա, և ձերն եմ քննում հանապազ: Քանի որ չար լուր և զազրելի համբավ հասնելով մեր լսելիքին՝ հնչում են մշտապես, որից սաստիկ ժանտություն է բուրում և նեխման ու փտության աղտեղություն. և չարահոտ մի բույր վեր ցոլալով ապականում է սուրբ եկեղեցին, ուր բոլոր արդարների հոգիները ահազմայլ ողբում են անօրինությունը:

Եվ ես՝ չի ամեն տեսակ հանցանքով, այդ եմ սգում ու հառաչում. զի ձեր գարշելի անօրինություններից ամեն ժամ սատանայական թատերը ցնծում են խայտալով, և Քրիստոսի եկեղեցիները միշտ ողբում են դառնապես: Քանի որ սուրբ եկեղեցու մանուկներին իրեն հպատակեցրեց սատանան, որոնք պղծվեցին ու պղտորվեցին տեսարանների անառակ թատերում: [Նա], որ միշտ ու հանապազ ուզում է մարդկանց հեռացնել Աստծու ողորմությունից ու ամենապայծառ անանց բարություններից և տանել բաժնեկից դարձնել իր տանջանքների ահեղ աղետներին: Դրա համար անտեսեցի իմ բազում հանցանքները, ձեր ցավերին եմ լինում վշտակից և ողբում ձեր անձի կործանման աներևույթ վերքը: Որովհետև մերժելով արհամարհեցիք Աստծու պատվիրանների խորհուրդները, և ոտնահարելով կոխոտեցիք առաքելական եկեղեցու հավատը, և ոչինչ համարեցիք Քրիստոսի արյան և մարմնի սրբությունը, որ մշտապես ընդունում եք ահավոր և սոսկալի սեղանից:

Եվ այժմ լիովին ընկղմված եք դիվական մոլորության մեջ և գերված, գրավված սատանայի խորհուրդներից, շտապում եք ընկնել նրա դառնահամ որոգայթները, գնալ մտնել խաղերի ապականիչ հրապարակները, լսել ականջ խաբող աղտեղի ձայները, և զայրացած ու պղծացած անօրեն ու չարալուկ կատաղություններ գուսանների, որոնք միշտ հալածում են սուրբ Հոգու շնորհները և սատանայի մահաբեր պիղծ խորհուրդը ձեր սրտերում ու մտքերում սերմանում: Որից բռնվելով տոչորում է բոցը տեսակ-տեսակ ախտերով՝ հնազանդյալների մարմիններում, որոնք փշերի ու տատասկների նման վի-

բավարարում են անձերդ, և հավաքելով կուտակում են դժվարակիր բեռներ՝ կորստյան ոգիների վրա։ Ու իրենց անձանց համար վաստակած այրիչ հուրը և սատակիչ սուրը՝ ելնում են պղծությունների թատրոններից՝ կարեվեր լինելով. և ստացապես խոցված գաղտնի նետերից սատանայի, որ չարաչար վիրավորում է ոգիները և փոքր է կործեցնում մեծամեծ անօրինությունները, որից պետք էր սարսել և դողալ մշտապես, և փախչել, հեռանալ բազում երկյուղով։ Որովհետև չար է սովորույթը, չար են և նրա հորդորիչները՝ գինի, դասան և սատանա և ցոփացնացություններով ու վավաշոտության հափրանքով մոլորված մտքեր, որ կամահոժար և դյուրահավան ընդունում են չար սերմերը սատանայի, մանավանդ թեթևամիտ և վայրենի անհամեստ կանանց ցեղը, արագալուր և հեշտահավան և դյուրապատիր, որոնք, ձանձրույթից անառակացած, միշտ աներկյուղ շտապում են թատերավայր, անօրեն խաղեր և սատանայական տեսարաններ դիտելու հրապարակում. ելնելով վերև, դիտավայրում նստում, խորհում, դիտում են իրենց նմաններին՝ չար [գործերի մեջ], որոնք թեպետև անօրեն գործին դեռ մասնակից չեն, բայց խոցող սպանիչ նետերը կրում են սրտերում, որոնցից և հետո պիտի մահանան, ինչպես որսորդների նետերից՝ վիրավոր գազանը, որ թեպետ հիմա թակարդից պրծավ, սակայն նետերը կրելով՝ կմեռնի։

Այդ ինչպե՞ս դադարեցնենք այն ցոլացող բոցի ահեղ տոչորումը, կամ երբևէ կարո՞ղ եք գտնել աներևույթ վերքերը բուժելու հնար և կամ ե՞րբ ավերելով կկործանենք թատերական պղծությունների վայրերը, մահաբեր որոգայթը, բազմաչար ժողովը, բոլոր ախտերի արվեստանոցը։ Որովհետև այնտեղ կույսերը պոռնկության են մղվում, ամուսնացածները՝ շնության, այնտեղ կանայք ատելի են լինում այրերին և այրերը կանանց՝ արհամարհելի. այնտեղ որդիները թշնամանում են հայրերին և ծառաները՝ տերերին։ այնտեղ ծերերն անհամ են և երիտասարդները վավաշոտ. այնտեղ պառավներն անամոթ և դեռատի աղջիկները գեշ են, այրերը լկտի են, կանայք կատաղի. այնտեղ կան մարդորսություն և կնաթողություն և մանկասպաններ և այլ զրկանքներ՝ պաճուճանքի զարդերի համար. այնտեղ՝ սնափառություն և պճնություն, և չարաչար ախտերի բազում որոգայթ. այնտեղ զանազան պղծություններ կան, որ ասելն անգամ աղտեղի է։ Նաև [սատանան] սովորեցնում է անձի լկտություն, ոգու մեղկություն, մտքի քայքայում, անառակ հայացք, զրախոսություն, գործի հեղգություն, զբաղվել է տալիս ամեն չարիքով, որոնք ուծացնելով հեռացնում են Աստծու սիրուց և մերժելով հանում են քրիստոնեական կարգից։

Եվ չեմ կարող ասել չարիքների մյուս տեսակ-տեսակ կերպերը, որ թատերախաղերն են սովորեցնում. ամբարտավանությունը, հայհոյությունը, նենգությունը, չարահնարությունը, չարակնությունը, նախանձը, բամբասանքը, որի պատճառով երկրի վրա կթափվեն Աստծու պատուհասները, որ ապատիկ սրտմտությամբ տանջանքի կմատնի։ Ահա այս բոլոր անօրինություններն են ձեռք բերում՝ ովքեր մտնում են խաղահրապարակները և իրենց մարմիններում բազմացնում են սատանայի սերմերի չար պտուղը։

Այդ ո՞ր բերանը կարող է ողբալ և լալ այնպիսի ողբալիներին ու պղծվածներին. և կամ ի՞նչ լեզու կարող է պատմել անթիվ ավերները, որ այնտեղ կատարվեն. և կամ ո՞ր միտքը ցույց կտա ահեղ տանջանքների բազմությունը՝ որ գեհենի հրի հնոցներում պատրաստված է նրանց և սպասավորներին սատանայի, որոնք խավարայիններին արժանիքով ընդունեցին։ Եվ այժմ ինչի համար ես մտնում այդպիսի տանջանքների և կամ ինչ

www.a-pdf.com

ստացար պիղծ խաղից. մեղկություն և ցոփություն, և թեթևություններ և աչ մի օգուտ, այլ՝ անթիվ ահեղ աղետների բազմություն: Որովհետև թեպետ անառակներին ցանկալի են լինում պիղծ թատրերը, ուր միշտ ախտերից ցանկություններ են հալչում և ծորում, այլ առողջներին է երևում տաղտկալի պղծությունն ու ամոթալի վավաշոտությունը:

Կանայք անրարոյականների բարք են ձեռք բերում, և այրերը՝ մատակախաղաց ձիերի, որոնք անօրեն զազրախոսությամբ անասուններից էլ վայր են իջնում, և շների փսխածից ավելի աղտեղի՝ փսխում են տաղտկալի խոսքերի գարշություններ, որոնցից նեխության աղտեղություն և զազրելի հոտ է ելնում, որ զզվեցնում է երկյուղած անձանց և ցանկալի է դևերին. քանի որ այդպիսի խայտառակվածների մեջ սատանան խռովություն է ձգում: Որովհետև, ուր կատակներ ու գուսաններ կան, և խաղ, և լկտի ծաղրանք. այնտեղ դևերն են նրանց հետ պար բռնում և զեխացածների մտքերում բազում աղտեղություններ են սերմանում, առավել ևս մոլեգնության են մղում գուսաններին՝ պիղծերին ու սրբության շնորհը հալածողներին, ցանկության հուրը բորբոքողներին, պատվիրանները քամահրողներին, սատանայի խորհուրդների կարապետներին, անօրեններին և աստվածամարտներին, ամեն տեսակ արդարության թշնամիներին: Դրանց պետք է քարկոծել և աշխարհից հալածել, նրանց զեխացրածներին՝ զբոսարանի խաղարաններում, ուր մտնում են ողջանդամ և ելնում վիրավոր. Քրիստոսից մերկացած և սատանայով զգեստավորված. շնորհների հոգին մերժած և լցված դևերի պիղծ հոգով: Չի բոլորը, որ հավատով ու երկյուղածությամբ են մոտենում Քրիստոսին, լուսավորվում են սուրբ Հոգով, և օր-օրի առաքինի գործերով վեր են բարձրանում և գնալով հեռանում սատանայի բոլոր խաբկանքներից: Եվ ովքեր թատերախաղերի պղծությամբ մշտապես հաղորդակից են լինում դևերին և խավարանում են վարքով, միգապատվելով մթնում և լցվում սատանայի պիղծ ոգով, և օրըստօրե ծանրանալով անօրինություններով՝ տապալվում են վայր, մինչև օտարանալով հեռանում են Աստծու պատվիրանների երկյուղից և դառնում սատանայական խորհուրդների անոթ: Եվ սրա համար ավելի ախորժելով են գնում դևերի հավաքատեղին, փութալով սատանայի կանչին, քան՝ Քրիստոսի սուրբ եկեղեցի: Չէ՞ որ թատերախաղերը դևերի հավաքարան են, և բոլոր անառակ և գուսանամոլ հարբեցողները, որ զեխում-ցոփանում են անօրեն-անաստվածարար, քանդելով լեզվի սանձերը և բերանի կապն արձակելով՝ ուտում են և շվայտանում համադամ կերակուրներով, և հոտը մտնելով նրանց բերաններից բազում ժանտություններ է բուրում, և խորհում և տեսնում են սատանայի բոլոր ցանկությունները և չեն ճանաչում սատանայի նետերը: Խփում և վերքերը հանգստացնում է և չի [թույլ] տալիս իմանալ, որպեսզի ապաշխարությամբ չբուժենք, որովհետև գող է և հայտնի ճանապարհով չի ընթանում, որ զգուշանանք, այլ՝ գաղտնի, և՛ հետապնդում է, և՛ սովորեցնում է՝ մեծամեծ պատվիրանները անամոթաբար արհամարհելով, և կարծել է տալիս, թե փոքր են [դրանք], որ չզգուշանանք: Գիտե, որ պատվիրանները արգելում են տգեղ և դատարկ խոսքերը, բամբասանքն ու հայհոյանքները, և ցո՛փ գուսանները ավելի շատ են թափում բերաններից բազում խեղկատակություններ և ցնդաբանություններ, գարշելի ու դատարկաբան խոսքեր: Արհամարհանք, ծաղր և հայհոյություն է հոսում նրանցից հանապազ, որովհետև դևերը փութալով հաճում են ծաղրի ու խառնախոսության ժամանակ և բազում ախտեր բերելով ուտեցնում և խմեցնում են նրանց, որ այնտեղ շվայտանում են: Սրա

www.a-pdf.com

համար պետք է լալ ու ողբալ այդպիսի անառակությունները, մանավանդ խելակորույս կատակները՝ լկտի բազմականների մեջ. դիվահարի նման զեխանում, ծաղրում, զվարճանում, ցատկոտում են և բերանի կեղտով զազրելի դարձնում բոլորին. ոմանց հայհոյում, ոմանց բամբասում, ոմանց թշնամանում և ոմանց ծանակում, ամոթալի խեղությամբ կուրացնում է. ոմանց խաբում ու պատվով մեծամտացնում. կատաղի շան պես առհասարակ բոլորին խածոտում է։

Ի՞նչ ես անում, ո՛վ թշվառական, ինչո՞ւ չես ջանում ազատվել այդ չարաչար ամբարշտությունից, ինչո՞ւ չես սթափվում՝ այդ անզգամությունից ուշքի գալու, ինչո՞ւ չես ողորմում կորնչող ոգուդ, ինչո՞ւ չես լալիս ու ողբում անօրինություններն այս, ինչո՞ւ կրակ ես ավելացնում դառն այրումի կրակին, ինչո՞ւ մշտապես ընթանում ես կայծակների ու փշերի վրայով, ինչո՞ւ անընդհատ գամվում ես մեղաց բեռներին, ինչո՞ւ ես քարավեժ ու դաբահոս լինում բարձունքից, ինչի՞ համար ես սուր սրում ու խոցվում դրանով. չէ որ ոչ ոք հրով հուր չի հանգցնում և ոչ էլ չարով բարու հանդիպում։ Ո՞վ է, որ փուշ տնկում և խաղող է քաղում կամ որոմ ցանում և ցորեն հնձում. և ոչ ոք անառակ վարքով չի [արժանանում] տեսուն Քրիստոսի և չի ժառանգում արքայություն, այլ դատապարտվում է գեհենի հրին՝ թունավոր որդերի ընկերակցությամբ։ Եվ ով այդպիսի անօրեն լրկտիությամբ և գինեմոլ զեխությամբ ապրի, և դիվական թատրով ու ծաղրով. գուսաններով զբաղվի, թող ամենևին չհուսա փրկվել տանջանքների հրից։ Հիշիր ահեղ պատգամը՝ վայ նրանց, որ ծիծաղում են հիմա, որովհետև սգալու և ողբալու են նրանք, վա՛յ, որ գինի են ըմպում խնջույքին և որ օծվում են անուշ յուղերով, վա՛յ ձեզ, մեծահարուստներ, որ այստեղ ստացաք ձեր բարության հատուցումը. որովհետև բազում նեղություններով պետք է մըտնել Աստծու արքայություն։ Մինչդեռ Քրիստոս այս աշխարհում լալ և սգալ պատվիրեց. դու ծիծաղում և ցնծում ես և չես զարհուրում ու դողում Աստծու ահեղ դատաստանից, որ արդար է քննում բոլոր՝ և՛ կամովին, և՛ ակամա [մեղքերը], որ ծուլությունից և կամ մոռանալով ենք գործում։

Արդ շտապիր մաքրել անձդ այդ անամոթությունից, լեզուդ՝ դատարկաբանությունից, ականջդ՝ պղծություն լսելու սովորությունից և միտքդ՝ մահաբեր սատանայական գաղափարներից։ Ընկիր Աստծու առաջ և ասա՝ Մեղա երկնքում և Քո առջև։ Մի՛ ծուլանար ապաշխարության համար աշխատելուց, քանի ժամանակ կա. ահա շուտով կհասնես այն ահեղ գիշերին և սոսկալի խավարին ու աղջամղջին։ Արդ ճանաչիր քո մեղքերի բազմությունը՝ հիշի՛ր, որ մեռնելու ես շուտով, նկատի առ, որ հոգիդ քո մարմնից պահանջելու է. և մշտապես հիշիր ահեղ դատաստանի մեծ օրը, անշեջ հուրը, աղջամուղջ-խավարը, ապականության փոսը և գեհենի տարտարոսը, և ահագին դատավորի ահեղ դատաստանին մեղավորների դառն ողբումը, ուր սպառվում են խոսքերը, և թագավորում գործերը, ուր պահանջվելու են խորհուրդներն ու արարքները. ուր դատապարտության հարցերն ու անպատշաճ մտածողության պահանջներն են։ Ա՛յս մասին մտածիր հանապազ, և՛ հիշիր միշտ, հոգաց հանիր և ողբա, հեծիր և լաց անդադար, որ գուցե ազատվել կարենաս տանջանքի ահեղ գեհեններից և անթափանց խավարից, և՝ արժանանալ անանց բարություններին, որ խոստացել է մեզ տեր Հիսուս Քրիստոսը, նրան փառք հավիտյանս, ամեն։

www.a-pdf.com

ԴԻՋԱՓԱՅՏ

Այսօր սրբերի սպանության է, որոնք Դիզափայտում էին: Հայոց աստվածահաճո և մեծ վարդապետ Մեսրոպը, Աստծուց ստացած շնորհքով ստեղծեց երեք ազգի՝ հայոց, վրաց և աղվանից գրերը և Կովկասյան լեռների բնակիչներից բազում բարբարոսների քրիստոնյա դարձրեց: Իսկ ինքը վերադարձավ Հայաստան, սուրբ Սահակից հետո նստեց հայրապետության աթոռին և վեց ամիս անց ինքն էլ մահացավ: Նրա աշակերտները, որ Աղվանից կողմերում էին, որը մնալով սուրբ հորից, գնացին Երուսաղեմ և վերադարձան Աղվանք, բնակություն հաստատեցին մի տեղում, որ կոչվում է Աստղաբլուր՝ Արցախ գավառին մերձ, որ է Խաչենքը:

Այդ ժամանակները հոնաց հյուսիսային արքան եկավ խազբերի ու հոների անթիվ բազմությամբ և բանակեց Կուր գետի ափին, ասպատակեց երեք աշղությամբ՝ Հայաստան, Վրաստան, Աղվանք:

Իշխան զորապետներից մեկը 477 թվականին գնաց Արցախի կողմերը, այնտեղից շատ գերիներ ու ավար վերցրեց և օթևանեց Աստղաբլուրում, ուր Մեսրոպի աշակերտներն էին: Նրանցից ոմանց բռնեցին և սպանեցին: Եվ Աթանաս քահանային, որ նրանց հետ եկել էր Եքսպաղեմից, երկու այլ քահանայի հետ սպանեցին, իսկ մյուսներին, շղթայելով, թողին:

Գերվածների մեջ տեսան մի մեծատոհմիկ կնոջ՝ Թագուհի անունով, շատ գեղեցիկ: Զորապետը հրամայեց նրան պահել, որ իրեն կին դարձնի: Բայց կինը չհնազանդվեց նրան, այլ անարգեց: Դրա համար նրան խիստ գանահարեցին, գետնի վրա քարշ տվեցին, մինչև մարմինը կտրատվեց, պատառ-պատառ ցրվեց դաշտով մեկ: Եվ նա այսպիսով մահացավ:

Երբ երեկոն իջավ, մեծ լույս ծագեց սրբի մարմնի վրա, աստղի նման ցոլալով: Այդ տեսնելով՝ անօրեններն ահաբեկվեցին և կանչելով գերի երեցներին՝ հարցնում էին, թե ի՞նչ բան է դա: Սրանք քարոզելով՝ նրանց հավատի բերին, մինչև որ զորապետը նույնպես իր երկու որդիներով և ամբողջ զորքով հավատաց Քրիստոսին, և մկրտվեցին քահանաների ձեռքով: Զորապետը վերակոչվեց Թեոփիլոս, որ նշանակում է աստվածասեր, իսկ որդիները վերանվանվեցին՝ Մովսես և Երանողիս: Հավաքելով սուրբ Թագուհու նշխարները՝ ամփոփեցին մի տեղ բլրակի վրա, որն անվանեցին՝ Աստղաբլուր: Սա տեղի ունեցավ սուրբ Զատկի Ավագ շաբաթ օրը. զորապետի հավատափոխության հետ մեկտեղ տվեցին սուրբ Հարության Զատկի տոնը: Եվ ի պատիվ Քրիստոսի Հարության ազատեցին բոլոր գերիներին: Իսկ երբ

www.a-pdf.com

իմացավ հոների արքան, թե այն զորավարը իր զորքով քրիստոնյա է դարձել, կանչեց իր մոտ զորապետին 7000 պատվավոր մարդկանցով և խոսեց նրանց հետ սիրալիր ու սպառնալիքով, որպեսզի ետ կանգնեն քրիստոնեական հավատից։ Եվ երբ սրանք չհամաձայնեցին, սրով սպանեցին նրանց, սրանք այսպես մեռան բարի հավատով։ Իսկ զորավարի որդիները՝ Մովսեսն ու Երանոզիսը, և մնացած հավատացյալ զորքը փախան դեպի Դիզափայտ կոչվող լեռը։ Անօրենները, գնալով նրանց ետևից, կոտորեցին բոլորին մի տեղում և վառեցին հրով ու լեռն անվանեցին Դիզափայտ, որովհետև փայտի նման դիզեցին սրբերին իրար վրա և ապա այրեցին։ Եվ սրանք այդպես մահացան արեգ ամսի 21-ին։

www.a-pdf.com

ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պարսից թագավորության ժամանակ Վազգեն բդեշխը՝ Աշուշա բդեշխի որդին, արքունի դուռ գնալով ուրացավ քրիստոնեությունը և ընդունեց պարսկական կրոնը կամավորապես և ոչ թե ստիպված կամ բռնությամբ: Նրա կինն էր Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրը և Հայոց Հայրապետ սուրբ Սահակ Պարթևի թոռը՝ նրա Սահականուշ դուստրից: Ծնողները նրա անունը դրել էին Վարդենի, և հետո հորջորջումով վերանվանվեց Շուշանիկ, որ իր մանկությունից բարեպաշտ էր և աստվածավախ: Իր ամուսնու լկտի ու անառակ վարքի համար հավատացյալներին աղաչում էր աղոթել Աստծուն, որպեսզի թերևս զգաստանա, իսկ երբ արքունիք գնաց, հոգս էր անում և կասկածում, թե չուրանա Քրիստոսին:

Այդպես էլ արեց ամբարիշտը՝ ուրանալով ճշմարիտ Աստծուն. երկրպագում էր կրակին, ուխտ էր գնում սատանայի հետ և պարսիկ կին էր խընդրում թագավորից: Եվ [թագավորը] հավատում էր նրան և իր կնոջ մորը կնության էր տալիս նրան և խոստանում էր առաջին կնոջն ու որդիներին դարձի բերել մոգության կրոնին: Ամբարշտությամբ վերադառնում էր իր աշխարհը և իրենից առաջ իր աշխարհը լուր էր ուղարկում իր գալուստի և դարձի մասին:

Եվ մեկը ներկայացավ Շուշանիկ տիկնոջը՝ ողջույն տալու իր ամուսնու կողմից, և Շուշանիկն ասաց.

— Իսկապես ո՞ղջ է հոգով:— Մարդուն երդվեցնում էր կենդանի Աստուծով: Նա ասում էր արցունքների մեջ.

— Քո ամուսինը ուրացավ ճշմարտությունը, երկրպագեց աստրուշաններին և ընդունեց պարսկական կրոնը:

Եվ տիկինը գետին ընկավ, դառնորեն լաց էր լինում, ուրացած ամուսնուն եղկելի էր համարում Աստծու առջև և ողբում էր որդիներին: Շատ ողբից ու հառաչանքներից հետո վեր կենալով գնում էր եկեղեցի. իր հետ տանում էր որդիներին, քանի որ ուներ երեք որդի և մի դուստր, ծունկի էր դալիս սուրբ Սեղանի առաջ և այսպես էր խոսում.

— Տեր Աստված ամենակալ, երկնքի, երկրի և նրանց մեջ գտնվող արարածների արարիչ: Դու ազատությանդ այսպիսի օրենքներ հաստատեցիր քո Միածին Որդու միջոցով, քո օրհնյալ խոսքով՝ քո օգնական ծառաների միջոցով արձանագրված կենսաբեր Ավետարանով, ջրով ու հոգով վերստին և նոր ծնունդով՝ դառնալու և անվանվելու համար լույսի և արևի որդիներ, մաքրվելու համար գիշերային և ախտավոր ծնունդից, որ մարմնապես տղամարդուց և կնոջից է առաջ գալիս, և արժանանալու համար լուսավոր ծնունդի այցելության, որ Հիսուս Քրիստոսով է: Արդ, ես իմը չեմ համարում

www.a-pdf.com

սրանց, որոնք մարմնապես ծնվել են ամբարիշտ մարդուց, իրրև մահկանացուներ՝ մահկանացուից, և չեմ ասի, որ իմն են։ Տեր, եթե սրանց արժանի ես համարում մնալու քո ճշմարիտ ու Հոր, Որդու և սուրբ Հոգու միջոցով վերստին ծնունդիդ մեջ, և քո տերության առաջ՝ իմ բազուկների վրա արդարությամբ սնված, ճշմարտությամբ պահիր սրանց ուղիղ հավատքի և բարի գործերի մեջ՝ զգաստությամբ, արդարությամբ և աստվածապաշտությամբ ապրելու երկրում, որ չպաշտեն արարածներին, այլ՝ արարչիդ, որ օրհնյալ ես հավիտյան, ամեն։ Որովհետև ուրացողը ամբարշտությամբ լցված դալիս է կորստյան վիհերում որսալու ինձ և իմ ծնունդներին։ Եվ արդ, Հիսուս Քրիստոս, որ Տեր ես և Աստված, քեզ եմ հանձնում ինձ և իմ զավակներին, և պատրաստ եմ ես չարչարվել և մեռնել քո սուրբ անվան համար և չհամաձայնել ուրացողի և պիղծ կողակցի կամքին։

Եվ առավոտից մինչև երեկո սուրբ երանելին եկեղեցում արտասուքներով շատ պաղատանքներ էր մատուցում բոլորի Տիրոջը։ Եկեղեցու պաշտոնյաները կատարեցին երեկոյան պաշտամունքը, և բոլորը սպակցում էին և զգուշանում էին որևէ բան խոսել այն մասին։ Եվ նա վեր կենալով մտավ մի փոքրիկ տնակ, որ եկեղեցու մոտ էր, և ամբողջ գիշերը անհանգիստ լալով ու ողբալով աղոթում էր Աստծուն՝ անձի դառնության պատճառով բոլորովին ոչինչ չճաշակելով, և չէր համարձակվում որևէ բան ասել մերձավորներին։

Այդ ժամանակ եպիսկոպոս չկար բդեշխի տանը, բայց տիկնոջ պալատական երեցը համարձակվում էր սփոփել նրան ահավոր վտանգի համար և ասում էր երանելուն.

— Հիշիր Աստծուն և նրա հույսով մխիթարիր քեզ, որ համբերություն է տալիս տարակուսողներին և կյանք նրանց, ովքեր թուլացել են հոգով։ Ինքդ քեզ սփոփիր Քրիստոսով և կռվիր բարի մարտը, որով կաս և մարտընչում ես, մխիթարությամբ լքիր անցավոր բաները և հուսով մոտեցիր Աստծուն, որ ամենակարողն է, թեկուզ և ոչ մեկին չունենաս հաբազատ, սակայն ընտանեբար հոդ կտանի քեզ։

Եվ շատ այլ խոսքերով քաջալերում և մխիթարում էր նրան։

Եվ մերձավորները համարձակվելով կապվել նրա հետ՝ աղաչում էին կերակուր ընդունել, և նա լսում էր, մի քիչ կերակուր և ըմպելի ճաշակելով՝ գոհանում էր Տիրոջից, և ամբողջ գիշերը աղոթքներով, սաղմոսերգությամբ և սուրբ Գրոց ընթերցումով էին անցկացնում։ Եվ մրրկված, տարակուսած և խռովված սիրտը փոքր-ինչ կազդուրվում էր Աստծու հույսով։ Եվ առավոտյան արարողությունը կատարելիս օրհնություն էին տալիս Աստծուն։

Եվ պալատական քահանան մոտենալով ասաց տիկնոջը.

— Քանի որ ուրացողը պատերազմ է հարուցել քո դեմ, ի՞նչ ես մտածել և ի՞նչ պիտի անես նրա՝ դստեր հետ միավորության համար, որին պետք է կնության առնի պարսկական օրենքի համաձայն, և որդիներին ճշմարիտ Աստծուց հեռացնելու և խավարի որդիներ դարձնելու համար, ինչպես ինքն է, և այս բոլոր չարիքների համար, որ պետք է ցույց տար մոգերի դրդմամբ և չարի ազդեցությամբ. առել արդարությունը, սիրել անօրենությունն ու ամբարշտությունը, որպեսզի ամեն ինչում մեղք գործի։

Տիկինը պատասխանեց և ասաց.

— Այս բաները վտանգում են իմ անձը, իմ տղաների և դստեր համար հոգս են և տառապանք. գիտեմ ամուսնուս ամբարշտությունը, այդ պատճառով էլ շարունակում եմ սուգը և կտոր-կտոր եմ լինում արցունքներով։ Ո՞վ կտար ջուր իմ գլխին և արցունքի աղբյուրներ՝ իմ աչքերին, օթևան անա-

www.a-pdf.com

պատում, որպեսզի չաց լինեի իմ ամբարիշտ և ուրացող, անբուժելի ամուսնու համար, իմ զավակների տագնապի համար, որ այլափոխվում են՝ աստվածաճանաչությունից անաստվածգիտության, լույսից խավար փոխադրվելով։ Ո՛վ չի ողբա կորստի մեծ լուրը, որ լսվում է։ Ո՞ր ականջները կդիմանան կորստի համբավին, որ մխիթարության մասնիկ անգամ չունի։ Ո՞ր աչքերը կտանեն ամբարիշտ և Աստծուն ուրացող ամուսնու տեսքը։ Ո՞ր խոսքը կկարողանա պատմել այսպիսի աղետների թշվառությունն ու վտանգը։ Մահվան ի՞նչ համբավ է, որ այսպես գեհենի է մատնում հոգին և մարմինը։ Ո՞ր մահացածն է, որ երկրում մխիթարության մասնիկ չի թողնում իր մերձավորներին։ Ինչպե՞ս սրանցով մերժեմ սուգը, և իմ անձը մխիթարվի փոքր-ինչ։ Որքա՞ն է վտանգը, և դեռ բոլորից ավելի պետք է զգալ ահագին հեծությունը։ Ո՛վ մարդիկ, ասացեք, ո՞ր հանճարեղն ու իմաստունն է, որ կարող է լուծում գտնել պատահածներին։ Ինչո՞ւ, Տեր, հեռու կանգնեցիր և անտեսեցիր քո աղախնուն նեղության պահին, տագնապների մեջ և վտանգի ժամի, քանի որ բացի Աստծուց այլ տեղից մխիթարություն չկա, ոչ վերակացուներ, ոչ մերձավորներ, ոչ սիրելիներ, ոչ ծառաներ, ոչ աղախիններ, ոչ օտարներ, ոչ պանդոխտներ, ոչ հեռավորներ, ոչ մոտիկներ և ոչ ոք երկրավորներից։ Կորավ հավատքը, հատավ, սպառվեց ամեն հույս երկրից և մարդկանցից, բայց կսպասեմ ամենակալ Աստծուն, որ կփրկի ինձ, աղավնու պես թևեր կտա ինձ, որպեսզի թևերով թռչելով հասնեմ և զադար առնեմ անապատում, ուժ առնեմ վերին խնամակալությունից և փոքր-ինչ սթափվեմ իմ մորկված սրտնեղությունից ու վհատությունից։ Եվ ինչպես նա իր իմաստությամբ և մարգասիրությամբ գիտե, ես պատրաստ եմ իմ անձը տալ բանտի, կապանքների և կոտանքների, որպեսզի փրկվի ինձ ուրացողը, որպեսզի ապրեմ Աստուծով և մեռնեմ նրա անվան համար, և չեմ թողնի իմ Հայոց լուսավորիչ հայրերի ավանդությունը և չեմ զայթակղվի իմ հակառակորդների կողմից, որոնք պինդում են իմ անձի և Հոր, Որդու և սուրբ Հոգու խաստովանության, երկրպագության և փառաբանության ճշմարիտ ավանդի դեմ, և ես Տիրոջ շնորհով ու զորությամբ անշարժ, անդրդվելի և հաստատուն կմնամ և ուրացողի հետ չեմ միավորվի ու չեմ պղծվի։ Մաքուր և արդար վարքով մեծ համբերությամբ ենթակա և հպատակ կլինեմ Աստծու փառքի և մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառաբանության համար, որ ուզում է, որ բոլոր մարդիկ ապրեն և հասնեն ճշմարտության ճանաչման։

Եվ այլ բազում խոսքերով ողորմագին ողբում էր իր որովայնի ծնունդներին և ամբարիշտ ամուսնու վայրենությունը, որ գալիս էր պատերազմ հարուցելու ճշմարտության դեմ և որոգայթ դնելու և՛ որդիներին, և՛ դուստրերին որսալու կորստի մեղքերի վիհի մեջ՝ պարսկական օրենքով, ուրացությամբ և պղծությամբ։ Եվ ինքն իրեն մխիթարում էր Աստծու հույսով, հիշում էր, թե ինչ է ասվում սաղմոսերգության մեջ. «Իմ անձը չէր ուզում մխիթարվել, հիշեցի Աստծուն և ուրախացա»։ Եվ այսպես քաջալերեց ինքն իրեն և անմիջապես տրտմությունը ուրախության փոխարկեց։

Այն ժամանակ ուրացած բդեշխը եկավ Վրաց աշխարհ՝ իր տուն, կանչեց իր եպիսկոպոսներին և քահանաներին, խոսեց նրանց հետ մեղմությամբ և պարգևներ խոստացավ և առաջվանից ավելի բարի էր դառնում.

— Մի՛ խորշեք և մի վհատվեք իմ տերությունից,— ասում էր։ Եվ պատգամ էր ուղարկում տիկնոջը՝ ետ կանգնելու իր կամքից և համաձայնել նրա կամքին և աշխարհի փառքը վայելել առաջվանից ավելի շատ։ Եվ նրանք եկան, նրանց հետ և բդեշխի եղբայրը, որի անունը Զոչիկ էր։ Բոլորը ար-

www.a-pdf.com

ցունքների մեջ վարանում էին ասել ուրացողի պատգամները, և բազում ոգբից ու հառաչանքից հետո եպիսկոպոսն ու Ջոչիկը մի կերպ սկսեցին պատմել բդեշխի ասածները։

Ով նա եպիսկոպոսին ասաց խստագույն ձայնով.

— Ով այդ դո՞ւ ես հրամայում միաբանել ամբարիշտ և Աստծուն ուրացող մարդու հետ և այսպիսի բաներին թելադիր ես լինում և մտախոհ։ Ավաղ ինձ՝ թշվառիս, որ խորհրդատու չգտնվեց ինձ համար։ Ճանաչեցեք ամբարշտի նենգությունը, թե ինչպես է խարդախում ինձ դեպի կորստի վիհը, մի՛ ընդունեք նրա [ասածները], որ որսում է խաբեությամբ, բայց ես չեմ խաբվում՝ իմաստությամբ ինձ առաջնորդելով դեպի արդարություն։ Լսիր առաքելական խրատը, որ մարգարեական խոսքն է հիշեցնում. «Ելեք նրանց միջից, և մեկնեցեք, ասում է Տերը, և պիղծերին մի՛ մոտեցեք, որովհետև ով մերձենում է պոռնիկին, [նրա հետ] մեկ մարմին է, և ով մերձենում է Տիրոջը, մեկ հոգի է [նրա հետ], իսկ որտեղ Տիրոջ հոգին է, այնտեղ ազատ է մեղքից։ Ով ես, ասում է, կընդունեմ ձեզ և ձեզ Աստված կլինեմ, և դուք ինձ որդիներ ու դուստրեր կդառնաք, ասում է ամենակալ Տերը»։ Իմ սիրելինե՛ր և վերակացունե՛ր, իսկ եթե մենք այս ավետիսը ունենք, ո՞վ ինձ կբաժանի նրանից, որ պիտի փրկի ինձ հավիտենական կրակից, ուրացողի հազորդակցությունից, որին որսաց ոսոխյան նրա կամքով։ Ով ես ամենայն սրբությամբ և արդարությամբ պաշտեմ կենդանի Աստծուն և ընդունեմ բոլոր շարչարանքներն ու վտանգները, որ բերելու է ինձ վրա Աստծուն ուրացողն ու արդարության թշնամին։

Եպիսկոպոսն ասաց.

— Քո ասածները ճշմարիտ են, բայց այս պետք է մտածել, թե չարը առավել բարկություն ու նախանձ կորորբոքի և չարություն կավելացնի վերակացուների և ժողովրդի վրա, բայց եթե վեր կենալով գաս,թերևս անօրենի բարկությունը մի փոքր իջնի։

Բդեշխի եղբայրը նույնպես աղաչում էր։ Ով երբ բոլորը ստիպեցին և թախանձեցին երանելուն, համաձայնեց նրանց կամքին և ասաց.

— Ձեր կամքը կանեմ և գիտեմ, որ չարշարանքներ է բերելու գլխիս։ Յուրաքանչյուրդ իր տեղը կգնա և ինձ մենակ կթողնեք, ես միայնակ չեմ, որովհետև իմ Տերը, որի վրա եմ դրել հույսս, ինձ հետ է, քանի որ Տերն է իմ օգնականը, ես չեմ վախենա, թե ի՞նչ կանի ինձ չարը։

Ով վեր կացավ, գնաց նրանց հետ և մտնելով ապարանք՝ չէր համաձայնում գնալ իր սենյակը, այլ փակվում էր մի փոքր տնակում, աղոթում Տեր Աստծուն և ասում.

— Տեր իմ Աստված, հույսս քեզ վրա եմ դրել, գթա ինձ, որ օգնական ես անօգնականներին, տարակուսողներին՝ վստահություն, անհույսներին՝ հույս, և սգավորներին՝ մխիթարություն, խռովյալներին՝ բերկրանք, տառապյալներին՝ հատուցում, վաստակածներին՝ հանգիստ, չարչարվածներին՝ զորացուցիչ, կապյալներին՝ արձակող, նավարկողներին՝ նավահանգիստ, որբերին՝ հայր, վատաոհմներին՝ տոհմ, և քեզ հուսացողներին՝ ապավեն ու մեծ հույս։ Ինձ զորություն, ժուժկալություն և դիմացկունություն տուր, երբ ուրացողը չարի ազդեցությամբ սրամտությամբ բարկանա ինձ վրա, որպեսզի ինձ պահեմ սրբությամբ, անարատությամբ և ճշմարիտ հավատքով, որովհետև դու ինքդ գիտես, Տեր իմ, որ իմ մանկությունից ատեցի ու անարգեցի մեղքը և քո օրենքները սիրեցի։ Հիշիր քո ծառաներին՝ իմ հայրերին, որոնց զարմն եմ ես, որոնք սիրեցին քեզ, ով ճշմարիտ Աստված, և նրանց

www.apdf.com

բարեխոսությամբ օգնիր ինձ այս պատերազմում, որ իմ առջև է։ Եվ ոչ ոք օգնական չունեմ, ո՛չ հայր, ո՛չ եղբայր և ո՛չ այլ ոք մերձավորներից, որ հարազատորեն հոգա իմ մասին։ Այլ դու, Աստված իմ, հայր և առաջնորդ, մի զրկիր քո աղախնուն քո խնամքից և ողորմությունից, ինձ ուժ տուր իմ դժվար ընթացքը ավարտելու, նմանվելու իմ հայրերին և նրանց հանդստին ու վիճակին ժառանգորդ լինելու։ Եվ արդ հույսս քեզ վրա է, որ սուրբ Հոիփսիմեին փրկեցիր թագավորի բարկությունից և նրան ամոթի մեջ թողիր, և ինձ՝ քո անարժան աղախնուն փրկիր ուրացողի բարկությունից, որովհետև քոնն է հաղթանակը, և ես պիտի հաղթեմ։

Եվ աղոթելով այդ տնակում մնում էր երեք օր անկերակուր, անըմպելի, և գիշեր ու ցերեկ անդադար սաղմոսերգությամբ և աղոթքներով լցվում էր հոգևոր կերակրով։ Եվ երրորդ օրը, երբ ընթրում էին, [բդեշխը] ուղարկեց իր եղբորը՝ Ջոջիկին, տիկնոջը ընթրիքի հրավիրելու։ Տիկինը չէր համաձայնում, բայց բազում աղաչանքներից և փաղաքշական խոսքերից հետո գնաց լալով և տրտմությամբ։ Եվ ուներ մի փոքրիկ Ավետարան, որն իր նախահայր սուրբ Սահակինն էր, այն իր հետ էր և նրանով գաղտնորեն աղաչում էր Աստծուն։ Չկերավ և չխմեց այդ դիվական ընթրիքից, այլ լուռ արտասվում էր՝ հիշելով Աստծու խոստացած բարիքներն ու հոգևոր վայելքները՝ Հիսուս Քրիստոսի միջոցով։ Եվ վեր կենալով գնում էր իր տեղը։

Եվ բդեշխը սրտնեղած բորբոքվում էր բարկությամբ, և երբ յուրաքանչյուրն իր տեղը գնաց, ուղարկեց, նորից կանչեց նրան իր մոտ։ Իսկ նա չկամեցավ գնալ։ Վեր կացավ, ինքը գնաց գաղանացած և ծառաների հետ նրան քարշ էր տալիս տեղում, իսկ նա աղաղակում էր և ասում.

— Տեր Հիսուս, օգնիր ինձ։

Եվ սաստիկ հարվածում էր նրան գավազանով, և ոչ ոք չէր կարող բարկությունը հանգցնել։ Այն ժամանակ լուր էին տալիս եղբորը, որ գալով չէր կարողանում իջեցնել բարկությունը, նրան էլ արհամարհանքով դուրս էր անում և սաստկացնում էր սարսափելի և անողորմ հարվածները, մինչև նրա վրա ողջ տեղ չմնաց բրածեծ անելուց։ Եվ նա կար ինչպես մեռել, իսկ բդեշխը ավելի դայլայլած՝ անարգում էր նրա Աստծուն ու հայրերին։ Եվ երբ հոգնեց ու թուլացավ շատ հարվածներից, հրաման տվեց երանելուն քարշ տալ իր տեղը, և նրան մահացած էր համարում։ Առավոտյան վեր կենալով գնաց երանելուն տեսնելու։ Երբ տեսավ, որ կենդանի է, պահապաններ կարգեց՝ հրամայելով թույլ չտալ աղամարդկանցից կամ կանանցից որևէ մեկը նրա մոտ մտնի, որպեսզի նույն չարչարանքով մեռնի։ Եվ կերակուր էր հրամայում՝ գարու հաց և ջուր։ Իսկ երանելին սչնչից չէր դժգոհում, այլ գոհություն էր հայտնում Աստծուն, որ նրա անվան համար արժանի եղավ չարչարանքներ ընդունել և փրկվեց ուրացողի հաղորդակցությունից, ինչպես որ նա էր ուզում, և հույսը դնում էր Աստծու փառքի համար կատարվածի վրա։

Եվ նա գնում էր աշխարհիկ գործերին։

Հետո գալիս էր դռան քահանան և խնդրում պահապաններին, որ տեսնի երանելուն։ Իսկ նա չէր կարողանում կանգնել ամբողջ մարմնի սաստիկ այտուցներից և արյունից, որ ճապաղել էր նրա շուրջը։ Եվ քահանան լալիս էր դառնորեն։ Եվ երանելի տիկինը ասում էր։

— Մի՛ լար ինձ վրա, որովհետև ամեն մարդ չի արդարանում Աստծու առաջ առանց փորձության և չարչարանքների, ոչ էլ Փրկչի շնորհքն է լքում և առանց ողորմության թողնում որևէ մեկին, որ հույսը նրա վրա է դրել։ Ես այս չարչարանքներով մաքրվեցի ամբարիշտ ամուսնու պիղծ անկող-

www.e-pdf.com

նուց։ Եվ ես ուրախ եմ չարչարանքներիս համար, որ հասան ինձ, որովհետև այս չարչարանքներով պիտի արժանանամ իմ Հայրերի բարի ժառանգությանը, որ Հիսուս Քրիստոսով է, և այդ բոլորի համար գոհություն տվեցի Նրան և կտամ միշտ։

Եվ երանելուն աղաչում էր կերակուր ուտել, և նա թեև ուզում էր, սակայն սաստիկ հարվածների պատճառով չէր կարողանում։ Եվ ապա հաղիվ մի քիչ կերավ, մի քանի օր հետո մի փոքր լավացավ և անդադար՝ տիվ ու գիշեր աղոթում էր, որտեղ բանտարկել էին նրան։ Եվ ճաշակում էր մի քիչ գարու հացից ու ջրից։

Այդ ժամանակներում ինչ-որ տեղից սարսափ էր վրա գալիս, և նրա որդիներին տանում էին Կուր գետից անցկացնելու՝ ինչ-որ բերդ տանելու համար և երեխաներից մեկը գահավիժում էր [գետի մեջ], մեծ սուգ էր տիրում բդեշխին և երկրին։ Եվ երանելի տիկինը գոհություն էր հայտնում Աստծուն ասելով.

— Թեպետ մարմնապես մեռավ, բայց և հոգեպես փրկվեց իր ուրացող հոր որոգայթից։

Եվ Վրաց նախարարն ու մարզպանը գալիս էին բդեշխի մոտ մխիթարելու նրան երեխայի համար և լուծելու սուգը։ Նա լուր էր ուղարկում տիկնոջը, որ վեր կենա և զնդանից գնա եպիսկոպոսի ապարանքը, որ եկեղեցու մոտ էր, և մի սենյակում մնա պահապաններով, մինչև որ մարզպանն ու նախարարը յուրաքանչյուրը իրենց տեղը գնան։ Նա ուրախությամբ կատարում էր հրամանը։ Գնալով իր անձը զարդարում էր կրոնական ղգեստով, ավելի ու ավելի հոժարությամբ էր առաքինանում պահքով, աղոթքներով և լուսավոր կարգերով, մինչև որ բոլորը ղարմանում էին երանելի տիկնոջ նահատակության քաջության վրա։ Որովհետև այնպես կայուն էր աստվածասիրությամբ, որ ոչինչ նրան չէր տկարացնում ճգնությունից, քանի որ երանելու անձը զարդարված էր բոլոր բարի գործերով՝ սուրբ էր, մաքուր, ճշմարիտ, ուղիղ, խոնարհ, ողորմած, աղքատասեր, աշխատասեր, գործասեր, արդյունաշատ, ընթերցասեր, լսող, անոխակալ, անընչասեր, անփառասեր, այլև աստվածասեր, հանճարեղ, իմաստուն, խորհող, արդարադատ, աստվածապաշտ, հետու բոլոր չար բաներից, արժանի՝ երկնային կոչման համաձայն խորհելու, և անարատ կենցաղով իր կյանքը վայելում էր արժանավորապես՝ Քրիստոսի Ավետարանի համաձայն։ Եվ եղավ, երբ մեծամեծներից յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը, բդեշխը երանելի տիկնոջ մոտ մարդ էր ուղարկում աղերսական խոսքերով, որպեսզի ետ կանգնի այդպիսի կամքից և համաձայնի իր կամքին, և առաջվանից ավելի շատ պարգևներ, հարստություն և պատիվ էր խոստանում։ Նա հանձն չէր առնում այլևս բնակվել ուրացողի հետ։ Եվ իր ղարդերն ու պատվական հագուստները տվեց, որ տանեն բդեշխին, և պատասխանեց.

— Ի՛նչ ունի կիսելու հավատացյալը անհավատի հետ, և ի՛նչ կապ ունի լույսը խավարի հետ, ի՞նչ միաբանություն կարող է լինել Աստծու տաճարի և սրիկայի միջև։ Ես, որ մաքրվեցի այն չարչարանքներով, որ բերեցիր ինձ վրա բարկությամբ և այդ միավորության պատճառով։ Ես ինձ ընծայեցի Քրիստոսին. ոչ փառք, ոչ հարստություն, ոչ պատիվ, ոչ էլ մարգկանցից [տրվող] բաներ՝ փափկություն և հեշտություն։ Ես չարչարանքներով կգնամ աշխարհից և կմերձենամ մեծ Թագավորին, և այնտեղ կլցվեմ այն լույսով, որն այստեղ փոքր-ինչ ընդունում եմ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ։ Այսպես կամ, զգուշավորապես կմնամ արդար խոր-

www.a-pdf.com

հուրդի մեջ և չարագործի աթոռին չեմ նստի: Ինչ որ անելու եմ՝ ասա, ես պատրաստ եմ մեռնել, քան դանց առնեմ իմ հայրերի ավանդությունը:

Եվ կարասին ու ղարդը տանելով նրան՝ պատմեցին, ինչ որ ասաց երանելին:

Եվ ամբարիշտը ավելի էր բարկանում և սպառնում էր չարչարել Քրիստոսի երանելի աղախնուն. ցասումից չէր ներում, այլ վեր կենալով և իր ծառաներից շատերին իր հետ վերցնելով՝ ինքն էր գնում և նրան գտնում էր եկեղեցում ու չէր ներում, այլ մտնելով՝ սաստիկ հարվածում էր նրան գավազաններով, բռնում էր մազերից և քաշում եկեղեցուց դուրս: Եվ ոչ ոք չէր համարձակվում բռնել և գայլից ազատել Քրիստոսի գառնուկին: Սակայն քահանաներից մեկն ասում էր. «Ինչո՞ւ ես այդպես անողորմ չարչարում»: Իսկ նա նրա վրա էր թափում բարկությունը և շատ սաստիկ հարվածում էր նրան: Ամբողջ ժողովուրդը, առհասարակ տղամարդ և կին, ճիչ բարձրացնելով, լաց էին լինում, և նա բոլորին դիմում էր հարվածներով, ինչպես շար և վայրենի գազան: Եվ երանելուն քարշ էր տալիս գետնով, փշերի, սրածայր փայտերի և քարերի մեջ և ապա հրամայում էր ապարանք տանել, նրա մարմինը պատառ-պատառ էր լինում, որովհետև գետինը շատ կոշտ էր, և արյուն էր հոսում, և գետինը արյամբ ծածկված էր երևում նայողներին:

Եվ հասնելով ապարանք՝ նորից էր անցնում հարվածների՝ առավել, քան առաջին անգամ, իսկ Քրիստոսի երանելի աղախինը ոչինչ չէր խոսում, այլ իրեն հանձնել էր Աստծուն և ժուժկալությամբ ու մեծ ուժով կանգնում էր, և ոչինչ համարեց քարշ տալն ու բրածեծ անելը, որովհետև հագուստը, որ իր մարմնին և գլխի վրա ուներ, քարշ տալուց ընկնում էր վրայից և մերկ գլխով ու պատառոտուն զգեստով պատսպարում էր իր անձը և գոհություն էր հայտնում Աստծուն իր գլխով անցածների համար: Եվ ամբարիշտը չէր ամաչում ու չէր գթում, այլ չարի ազդեցությամբ բարձրանալով՝ ինչպես մի սաստիկ հեղեղատ՝ ուզում էր ողողել և ապականել երանելու սրբությունն ու լուսավոր վարքը և ասում էր.

— Թող օգնի քեզ Քրիստոս և քո հայրերի աղոթքը, որոնց վրա ես դրել քո հույսը: Եվ երանելու ոտքերն ու ձեռքերը կապել էր տալիս երկաթյա կապանքներով, հրամայում էր նետել բանտ, շղթա գցել վիզը, պատին երկաթե ցից խփել և շղթան դրան կապել: Կնքում էր կապանքներն ու շղթաները, պահապաններ էր նշանակում՝ մեծ ահով և զգուշությամբ պահելու նրան և ամենևին ոչ մեկին չթողնել, և կերակուր էր հրամայում՝ գարու հաց և ջուր: Եվ ասում էր.

— Այժմ ուրախացիր, քանի որ ստացար այս չարչարանքներն ու դառն կապանքները, որոնցով պիտի խոշտանգեմ քեզ մինչև մահ:

Պատասխանեց տիկինը և ասաց.

— Ուրախ եմ այդ չարչարանքների համար, որ պատճառեցիր ինձ, քանի որ կարժանանամ իմ հայրերի սուրբ ժառանգության, որ նախատում ես նրանց և Աստծուն, ով Աստծուց օտարացած և արդարության թշնամի, որովհետև ինչքան ավելացնում ես տանջանքներս, ավելացնում ես իմ ուրախությունը, որ չի անցնի, քանի որ այս ժամանակավոր նեղությունները ինձ համար մեծ փառք են նախապատրաստում, որ հավիտյանս չի սասանվի: Եվ դու Աստծու դատաստանից վրեժ կստանաս նրա գալստյան ժամանակ:

Եվ ամբարիշտը ոչ մի պատասխան չէր տալիս, այլ զարմանում էր երանելի տիկնոջ ժուժկալության և համբերության վրա, կապանքների մեջ թող-

www.a-pdf.com

նելով գնում էր աշխարհիկ գործերին։ Եվ երեք օր հետո գալիս էր դառն քահանան, բաներ էր տալիս պահապաններին և մտնում էր երանելի տիկնոջ մոտ և տեսնում էր նրան կապանքների մեջ՝ ուրախությամբ ու զվարթությամբ լեցուն և անդադար սաղմոսերգության մեջ. համբուրում էր երանելու կապանքները և երանի էր տալիս նրան, որ այսպիսի համբերություն ունեցավ Աստծու համար, և ասաց.

— Երանելի ես դու կանանց մեջ, ինչպես բարի արմատի բարի շառավիղ եղար. որանից հետո հավատացյալները արդար խոսքերով երանի կտան քեզ, որովհետև Աստծու հույսով վանեցիր ամբարշտին և սուրբ Հռիփսիմեի պես անուն և ազգ ժառանգեցիր, ինչպես նաև պսակներ՝ բոլորի Տիրոջից։

Երանելի տիկինն ասաց.

— Ես արժանի չեմ երանության, պսակների և սրբերի ուրախության, որոնք չմերձեցան ամբարիշտ մարդու։ Իսկ ես ապրեցի ամբարիշտ ամուսնու հետ և որդիներ ծնա՝ ապականության և ամբարշտի ձեռքով կորստի համար։ Ես արդարությամբ սնեցի և հույս ունեի խրատներով և Տիրոջ իմաստությամբ նրանց Աստծու մերձավորներ դարձնել, սակայն անզգամի սերմերը արժանի չեն բարի բույս լինելու։ Բայց կա մի բան, որ ես չարչարանքներով և երկաթե կապանքներով սրբվեցի ուրացողի մերձավորությունից, և հայտնի դարձավ բոլորին, որ իմ ձեռքում էր՝ զերծ մնալ տանջանքներից ու կապանքներից, որով խոշտանգում են ինձ։ Եվ արդ ես անհույս չեմ նրանցից, ում վստահեցի, որովհետև թիկունքս հանձնեցի հարվածների և ծնոտս՝ ապտակների. երեսս ամոթից չշրջեցի, և իմ Տերը ինձ օգնական կլինի, և ես չեմ վախենա, թե ի՞նչ կանի ինձ մարդը։ Արդ այսպես պիտի շարունակեմ՝ զգուշությամբ, կատարյալ կարգով ու կրոնով, ինչքան որ շունչ կա իմ մարմնում, որպեսզի թերևս պատահեմ սրբերի դասին և մտնեմ լուսավոր հարկ։

Եվ քահանան, շատ ուրախացած սուրբ տիկնոջ համբերությամբ, վերադառնում էր իր վանքը, և ամեն օր գաղտնաբար հետևում էր կապանքներին։ Եվ բդեշխը հեռանում է Ճորա պահակի կողմերը։ Բդեշխի եղբայրը այդ սահմաններում չէր, երբ երկրորդ անգամ չարչարանք ու դժնյա կապանքները բաժին էին ընկնում սրբին, լսելով շատ էր տխրում, և գնալով աղաչում էր արձակել կապանքները։ Շատ օրեր էին անցնում, և հազիվ էր համաձայնեցնում շղթաները արձակել միայն պարանոցից, իսկ ոտքերի համար երդվել էր չարձակել մինչև նրա մահվան օրը։ Եվ այսպես կապանքներով ու տառապանքներով, սովով, ծարավով ու նեղությամբ անցկացնում էր բանտի վեց տարիները։ Եվ վեց տարում չէր դադարում կրոնի ամբողջությունից, որով առաքինանում և ճգնում էր պասով ու աղոթքով, արթնությամբ և արցունքներով, այգ ու ցերեկ անդադար սաղմոսերգությամբ, ծեծված մարմնով և դառն կապանքներով, բավարարվելով գարու հացով և ջրով։ Եվ սուրբ Զատկի պահքին շաբաթներով ոչինչ չճաշակեց, բայց միայն շաբաթ և կիրակի օրերին ճաշակում էր կենարար մարմնից և արյունից։ Եվ մի քիչ բանջար էր ճաշակում։ Եվ նրա առաքինության համբավից շատերը՝ տղամարդիկ, կանայք և աշխարհական ուխտավորներ գալիս էին տեսնելու, նրանից լսելու պարկեշտ ու արդար վարքի մասին։ Եվ շատերին հորդորում էր թողնել աշխարհը և ինչ որ կա աշխարհում և գնալ անանցանելի կյանքի հետևից։ Եվ Աստված նրա աղոթքներով այցելում էր շատ տարակուսյալների, անորդիներին՝ որդիներ, դիվահարներին՝ բժշկություն, ախտավորներին՝ առող-

www.a-pdf.com

ջություն, և բոլոր վշտացածներին՝ մխիթարություն, և յուրաքանչյուրին ըստ իր անձի Աստուծո խնամակալությունից պարգևներ էր շնորհում իր սուրբ աղոթքներով։ Եվ ամեն մարդ, որ գալիս էր նրա մոտ, լիացած և ուրախությամբ էր վերադառնում, և որտեղ լսվում էր սրբի համբավը, նրա միջոցով փառավորվում էր Տիրոջ անունը։ Այդ պատճառով էլ, անվանի մոգերից մի պարսիկ կին, որ բորոտ էր և ոչ մի բուժում չէր գտել բժիշկներից, սրբի համբավից գալիս և ընկնում է սուրբ տիկնոջ առաջ և բուժում է հայցում։ Եվ երանելին ասում է.

— Եթե հավատաս ճշմարիտ Աստծուն և թողնես պարսից կրոնը, աղոթքներով կխնդրեմ Տիրոջից, և կբուժվես և կճանաչես իմ Աստծու մեծ զորությունը։

Պարսիկ կինն ասում է.

— Հավատում եմ քրիստոնյաների Աստծուն։

[Սուրբը] հրամայում է մկրտել նրան, և անմիջապես մաքրվում է բորոտությունը։ [Պարսկուհին] փառք է տալիս Աստծուն, օրհնում է Աստծուն, խոստովանում ամենասուրբ Երրորդությունը, հեռանում պարսկական կրոնից և ընտելանում Աստծուն, որով բժշկություն գտավ, և ինքն էլ պատմում է մոգերին և մոգպետներին։

Եվ բդեշխը, լսելով այս բոլորը, զայրանում էր։ Եվ չորս տարի հետո վերադառնում է հեռավոր ճանապարհից և գալիս, ուր տիկինն էր, և, անմիջապես ծանր հարվածներով ու տանջանքներով նեղում է սրբին, բարկանում և պահապաններին ասում.

— Զգաստվիրեցի՛ ձեզ զգույշ լինել և ոչ մեկին չթողնել նրա մոտ։

Նրան զանահարում է մահու չափ և հրամայում է երանելուն առավել ևս նեղել բանտի կապանքներով։

Եվ այս բոլորից հետո ամբարիշտը չկարողացավ հասնել իր նպատակին, որ ապաստան էր։ Խարգավանքի էր դիմում, գտնում է մի կախարդ կին և ջանում նրա միջոցով հեռացնել գեղեցիկ կբոնից։ Եվ կինը հանձն է առնում։ Բդեշխը մի տաբի դիվական ցնորքներով մոլորնչեց նրա դեմ և չկարողացավ ոչինչ անել, այլ ավելի էր ահանատես լինում Աստծու կամքի արատհայտությանը։ Եվ դրանում ևս ամոթով մնալով՝ ետ չէր կանգնում իր նանիք մտածումներից, թեև ետ էր մղվում առաքինուց, ինչպես մեքենան ամուր պարսպից։ Նաև իր որդիներին էր ուրացնում և շնորհում պարսից թագավորին, որպեսզի առավել պատիվ ստանա արքայից։ Տեղեկացնում էր նաև տիկնոջ մասին, թե «Վարդանի դուստրն է, որ ընդդիմացավ պարսից արքային և այդ պատճառով կտտում եմ նրան և տանջում մինչև մահ, որովհետև չհամաձայնեց պաշտել արքայի աստվածներին, ինչպես իր աշխարհավետ հայրը։

Բայց էլ ինչ պետք է պատմել նրա չարաբարոյությունները, որ ամեն ինչում մեղք գործեց, քանի որ, թեև վեց տարի շատ ջանաց, ոչնչով չկարողացավ հաղթել՝ Քրիստոսի հույսի պատճառով։ Մարմնի վրա [կրած] հագուստը քուրձ էր, վրայից՝ անտիոքյան պարեգոտ, ներքին՝ մաշկյա մի փոքրիկ բարձիկ, մի փոքրիկ աղոթատեղի։ Նա բոկոտն էր։ Կերակուրը գարու հաց էր և ըմպելիքը՝ ջուր, մանավանդ շատ անգամ առանց կերակուրի էր մնում և ամեն ինչով մնում էր իր սուրբ հայրերի ավանդի մեջ, որպես կատարյալ՝ կատարյալների հետ, արհամարհում էր բոլոր վտանգները, որոնք մարտնչում էին նրա դեմ։ Եվ շատ անգամ հաղորդակցում էր վերին տեսիլքների, որոնք քաջալերում էին նրան զորանալ այդ մարտում։ Եվ բոլոր բարի կարգերում առաջադեմ էր։

Եվ երբ մոտան հարվածների, կապանքների և բանտի յոթերորդ տարին, երանելին հիվանդացավ անհնարին տանջանքներով՝ սաստիկ ճգնության պատճառով, որ կրեց անօրենից։ Եվ բդեշխի եղբայրը՝ Ջոջիկը, գալիս-երկրպագում էր սուրբ խաչին, որ տիկնոջ առջև էր։ Եվ իր կնոջ հետ ծունկի էր գալիս Քրիստոսի սուրբ աղախնու առաջ, որպեսզի օրհնություն ստանա նրանից։ Բազում ողբով և արտասուքով խոստովանում էր մեղքերը և թողություն էր խնդրում նրանից։ Եվ նա սովորեցնում էր սիրել արդարությունը և ատել անիրավությունը. «Եվ կանես ամեն բարի գործ, որ մեղքերի դեմ է, որ ընդունելի է Աստծուն, որ արդարության պտուղ է։ Եվ օրհնություն կստանաս Աստծուց և եկեղեցու առաջնորդներից։ Եվ բարեգործությունից հետո այլևս մեղք չգործես, որպեսզի ևս մի չար բան չպատահի քեզ»։ Եվ այլ բազում հորդորական խոսքերով խրատում էր նրան և օրհնում։ Եվ նրան ուղարկում էր նրա տեղը։

Գալիս էր նաև եպիսկոպոսների գլուխ Սամվելը, նաև Հովհան եպիսկոպոսը քահանաներով և սարկավագներով, որոնք երանելու քաջալերողներն էին և նեղության մասնակից, որպեսզի նրան ուղարկեն մեծ տառապանքից դեպի նավահանգիստ՝ Քրիստոս, նույնպես և Վրաց աշխարհի նախարարներ, ազատներ, տիկիններ և այլ սեպուհներ, որպեսզի մասնակցեն երանելու ուղարկմանը և հաղորդվեն երանելի Շուշանիկի օրհնությանը։ Եվ բոլորը խնդրում էին երկաթե կապանքները՝ իբրև սուրբ հիշատակի նշխար։ Իսկ նա ասաց.

— Ես դրան արժանի չեմ, բայց թող Աստծու կամքը լինի, արեք, ինչպես ուզում եք,— և օրհնեց բոլորին և ասաց. «Ամենակալ Քրիստոս թող ձեզ լցնի հոգևոր օրհնությամբ և վայելչությամբ»։

Եվ տան համար գոհություն էր հայտնում եպիսկոպոսին, ինչպես դայակին կամ հորը։ Եվ այսպես հրաժեշտ առնելով բոլորից և բոլորին օրհնելով Քրիստոսին՝ աղաչում էր գնալ այնտեղ, որտեղ առաջին անգամ քարշ տվեցին նրան. «Եթե արժանի լինեմ այդ անել», ասում է։

Եվ այսպես բաժանվելով բոլորից և բոլորին օրհնելով Քրիստոսով՝ բոլոր հավաքվածների հետ ամենասուրբ Երրորդության հաղթանակի գոհաբանությունն էր վեր առաքում, որպեսզի չարչարանքով բաժանվի երկրից և հասնի երկնավորին, որին ձգտում էր երանելին։

Եվ աղոթելով սուրբ Աստծուն և տարածելով իր ձեռքերը՝ ասաց. «Տեր Աստված, գոհ եմ քեզանից, որ ինձ՝ անարժանիս, արժանի դարձրիր չարչարանքով ավարտելու իմ ընթացքը։ Արդ, դո՛ւ, որ հոգիների ընդունող ես, բոլոր արարածների արարիչ և փրկիչ և կեցուցիչ, ընդունիր իմ հոգին, արժանի գարձրու ինձ քո սիրելիների հետ հանգստի հասնելու քո հավիտենական խորանին, որ պատրաստել ես քո սիրելիների համար, որտեղից մերժված են ցավը, տխրությունը, հեծեծանքն ու այն ամենը, ինչ աշխարհի արդյունք է, և փոքր նեղությունը, կապանքներն ու բանտը քո անվան համար ընդունեցի ի հաճույս քեզ, ինձ ընդունիր, արժանի դարձրու սրբերի հատուցման, իմ հայրերի՝ քո սիրելիների, որոնք յուրաքանչյուրը ըստ իրենց կարգի պաշտեցին քեզ, ո՛վ ճշմարիտ Աստված։ Եվ մեռնում եմ քո փառավոր և սուրբ անվան համար։ Եվ արդ, ի՞նչ եմ թվարկում իմ նեղությունները, քո՝ մարդասերիդ շնորհի վրա դնելով հույսս՝ հոգիս ավանդում եմ քո ձեռքը»։ Եվ այս ասելով՝ հոգին ավանդեց ամենակալ Աստծուն։ Բոլորը լաց էին լինում և մեծ երկյուղածությամբ օրհնություն էին տալիս մեր Տեր Աստծուն։

www.a-pdf.com

Եվ եպիսկոպոսն ու բոլոր հավաքվածները ամփոփելով մարմինը՝ լվացին պարկեշտ կանանց ձեռքով և անուշահոտ յուղով ու խունկով անհրաժեշտը կատարելով և պատելով մաքուր կտավով՝ սաղմոսներով, օրհնությամբ, հոգևոր երգերով, շնորհներով և վառվող մոմերով գրեցին պատրաստված տեղը, ինչպես Քրիստոսի սուրբ աղախինը պատվիրել էր նրանց։ Եվ ամբողջ գիշերը օրհնում և փառաբանում էին Տեր Աստծուն մինչև ճաշու ժամը։

Ու այնուհետև, քաղց ամսի տասնյոթին՝ սուրբ Շուշանիկի մահվան օրը, պատարագ էին մատուցում և մեծ տոն կատարում։ Եվ կարգ հաստատեցին ամեն տարի բազմամբոխ ժողովրդով սրբի հիշատակը կատարել ամենասուրբ երրորդության փառքի և փառաբանության համար։ Եվ Տերը ոչ քիչ բժշկություն էր կատարում սուրբ տիկնոջ բարեխոսությամբ։

Այս է սուրբ Շուշանիկի նահատակության նկարագրությունը, որ այսպես ընծայվեց Հորը, Որդուն և սուրբ Հոգուն, այսպես մերձեցավ Քրիստոսին և այսպես դարձավ սուրբ Հոգու օթևան և բնակարան, վախճանվեց ամենասուրբ երրորդության փառքի համար և բոլոր սրբերի հետ պսակվեց անթառամ փառքի պսակով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ Հոր և ամենասուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն։

www.a-pdf.com

www.a-pdf.com

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

(Է ԴԱՐ)

[ԽՈՍՔ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ՝ ԻՐ ԿՅԱՆՔԻ ՈՐՊԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ]

Ես՝ Անանիա Շիրակացի, Անանիա գյուղից, որ [սովորելով] յուրացրի մեր՝ Հայոց ազգի դպրությունը և հմտացա Աստվածաշունչ գրքերին, օրըստօրե լուսավորում էի մտքիս աչքերը՝ Սաղմոսերգուի խոսքին համապատասխան։ Ամեն բանում լսում էի իմաստունների և իմաստության հետամուտների երանության [խոսքերը], ինչպես այդ Սողոմոնի կողմից է հանձնարարվում. «Ստացիր իմաստություն և առավել պարզամիտ տգիտությունը՝ իբրև խավարի ծնունդ»։ Եվ [ապա]՝ «Դու գիտությունը մերժեցիր, ես էլ քեզ կմերժեմ»։ Եվ ես, զարհուրելով այս սպառնալիքներից, երանությանը հանգրվանեցի ու փափագեցի հետևել իմաստասիրությանը։ Հույժ սիրելով համարոզության արվեստը՝ խորհեցի, թե առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում՝ մայր համարեցի այն բոլոր ոսմանց։ Եվ քանի որ Հայոց մեր աշխարհում չկար այնպիսի մեկը, որ տիրապետեր իմաստությանը, և ոչ էլ նույնիսկ որևէ տեղ գիտական գրքեր էին ճարվում, ուստի մեկնեցի Հռոմաց երկիրը, հասնելով Թեոդուսուպոլիս, այնտեղ գտա Ծզիաղարոս անունով մեկին, որը հմուտ էր եկեղեցական գրքերին։ Նա պատմեց ինձ, թե Չորրորդ Հայքում ապրում է մի մաթեմատիկոս անձնավորություն՝ Քրիստոսատուր անունով։ Ու երբ գնացի, գտա հանձնարարված մարդուն. վեց ամիս մնալով նրա մոտ՝ համոզվեցի, որ նա սպառիչ չի տիրապետում [այդ] գիտությանը։ Այնուհետև շտապեցի մեկնել Կոստանդնուպոլիս, հանդիպեցի այնտեղից եկող իմ ծանոթներին, որոնք ասացին ինձ. «Ինչու ես հանձն առել այսքան երկար ճանապարհորդություն, չէ՞ որ Տյուքիկոս Բյուզանդացի գիտունը գտնվում է մեզ մոտիկ՝ Պոնտոսի ծովեզրյա այն քաղաքում, որը կոչվում է Տրապիզոն. Նա իմաստությամբ լի մարդ է, գիտակ հայերեն դպրությանն ու լեզվին և ճանաչված թագավորներից»։ Ես հարցրի նրանց՝ «Ո՞րտեղից դուք այդ գիտեք»։ Իսկ նրանք պատասխանեցին. «Բազում անգամ այս ճանապարհով ընթանալիս շատերին ենք տեսել՝ տարբեր տեղերից նրա մոտ [սովորելու] եկած, նրա փայլուն գիտության պատճառով։ Այլև այժմ էլ մեզ նավակից եղավ Կոստանդնուպոլսի պատրիարքի Փիլաքր սարկավագը, որը շատ երեխաներ էր տանում նրա մոտ ոսմանելու։ Հասնելով Սինոպ [քաղաքը], մենք պատահեցինք մեր ընկերներին, բաժանվեցինք նրանից և ճանապարհվեցինք ցամաք։ Եթե դու արագ գնալու լինես, կգտնես այնտեղ Փիլաքրին»։

Լսելով այս՝ խնգալից սրտով փառավորեցի նախախնամող Աստծուն, որ նեցուկ է իր ծառաների փափագը կատարելուն, ինչպես որ ասում են թե. «Հայցեցեք՝ և կգտնեք»։ Գնացի ու գտա նրան սուրբ Եվգենիայի վկայարանում։ Պատմեցի նրա մոտ գալու պատճառը։ Նա ուրախությամբ ընդունեց ինձ և ասաց. «Գոհություն Աստծուն, որ քեզ ուղարկել է գիտության նպա-

www.a-pdf.com

տակով, որպեսզի տանես այն սուրբ Գրիգորի երկիրը։ Եվ առավել ուրախ եմ, որ ինձ է աշակերտում այդ երկիրը, որովհետև ես իմ երիտասարդության տարիներին շատ ժամանակ մնացել եմ բարեխրությյան մեջ Հայոց երկրում, և ուրախ եմ գիտությունս այնտեղ տալու համար, քանի որ իմ գտնված ժամանակ տգիտություն էր այնտեղ»։

Եվ Տերն ինձ շնորհ տվեց այդ մարդու առաջ։ Նա սիրեց ինձ որդու նման և պարապեց ինձ հետ իր ողջ իմացությամբ, այնպես որ ինձ նախանձել սկսեցին իմ բոլոր աշակերտակիցները, որոնք արքայնիքից էին։

Մնալով նրա մոտ ութ տարի՝ ես լիովին յուրացրի համարողական գիտությունը, փոքր-ինչ էլ ծանոթացա այլ գիտություններին և հմտացա բազմաթիվ այնպիսի գրքերի, որոնք մեր լեզվով դեռ չէին թարգմանված։ Ամեն տեսակի գրքեր կային նրա մոտ՝ հայտնի և գաղտնի, արտաքին [հեթանոսական], գիտական և պատմական գրքեր, բժշկարաններ, ժամանակագրություններ. ի՞նչ թվարկեմ մեկ առ մեկ, քանի որ չկար այնպիսի գիրք, որ նրա մոտ չգտնվեր։ Թարգմանության մեջ էլ սուրբ Հոգուց պարգևված այնպիսի շնորհք ուներ, որ երբ ցանկանում էր հունարեն գրված գիրքը թարգմանել, ուրիշ թարգմանիչների պես չէր գծգծում, այլ հունարենն այնպես էր հայերեն կարդում, որ կարծես հայերեն գրված լիներ։ Ցանկանալով, որ դուք անտեղյակ չլինեք այդ բազմահմուտ մարդու առաքինությանը, [ուզում եմ] ծանոթացնել ձեզ, թե ինչպես է, որ նա գիտեր մեր լեզուն և ինչպես էր գիտության մեջ այդքան պատրաստություն ձեռք բերել։

Նա պոնտացիների երկրից էր, Տրապիզոն քաղաքից։ Երիտասարդ հասակում ծառայել էր Տիբերիանոս կայսեր զորավար Հովհանի մոտ, որը գտնվում էր Հայաստանում։ Այստեղ նա մնում է շատ տարիներ՝ մինչև Մորիկ թագավորի ժամանակները, սովորում է մեր լեզուն և դպրությունը։ Իսկ պարսկական զորքերի՝ հույների վրա կատարած հարձակման ժամանակ, որը տեղի ունեցավ Անտիոքի մոտ, պատահում է այնպես, որ նա վիրավորվում է մարտում, փախչելով հասնում է Անտիոք, իսկ իր ունեցած ողջ գույքն ավար են վերցնում։ Երկար ժամանակ գտնվելով հիվանդ վիճակում՝ նա կսկծանքո՛վ է հիշում իր ունեցվածքի կորուստը, Աստծուց խնդրում է իր վերքերի բուժում՝ ասելով. «Եթե շնորհես ինձ առողջ կյանք, այլևս անցավոր դանձ չեմ կուտակելու, այլ հետամուտ եմ լինելու գիտության գանձին, ինչպես իմաստունն է ասում. «Երատ վերցրեք և ոչ թե արծաթ, [սիրեցեք], ավելի գիտություն, քան ընտիր ոսկի»։ Եվ Աստված կատարում է նրա խնդրանքը, առողջանալուց հետո գնում է սուրբ քաղաք Երուսաղեմ։ Այնտեղ մնում է մեկ ամիս, [ապա] տեղափոխվում Աղեքսանդրիա, ուր ուսանում է երեք տարի։ Հետո մեկնում է Հռոմ և, մնալով այնտեղ մեկ տարի, գալիս է Կոստանդնուպոլիս։ Այստեղ նա գտնում է մի նշանավոր անձնավորության, որ դասավանդում էր քաղաքի իմաստասերներին։ Նրա մոտ մնում և սովորում է ոչ սակավ ժամանակ և կատարյալ իմաստասիրությամբ վերադառնում իր ծննդավայրը։ Զնայած պատրիարքը ու քաղաքի իշխանները շատ են խնդրում, որ նա չհեռանա Կոստանդնուպոլսից, սակայն նա չի լսում նրանց, կարեկից հանդիսանալո՛վ իր երկրին, ինչպես գրված է [սուրբ Գրքում]։ Գալով [հայրենի քաղաքը], նա օրինակելի կյանք է վարում։ Քիչ տարիներ անց [Կոստանդնուպոլսում] մահանում է նրա ուսուցիչը։ Աշակերտների մեջ չգտնելով նրան հավասար մեկին հաջորդելու նրան՝ խնդրանքով դիմում են ցանկալի Տյուքիկոսին, որ գա և զբաղեցնի նրա տեղը։ Միաժամանակ ստանում է նաև թագավորի հրամանը։ Սակայն նա հանձն

www.a-pdf.com

չի առնում, ասելով. «Ծրկնայինների թագավորին ոսխտել եմ՝ չհեռանալ այստեղից»։ Այնուհետև այնտեղ էին գալիս նրա մոտ սովորելու։ Բայց ես այնպես եմ կարծում, թե Աստծու նախախնամությունը նրան պատրաստել է մեզ մոտ գիտությունը ծավալելու համար։

Ով ահա ես՝ նվաստս, հայաստանցի, սովորեցի նրանից այս մեծազոր գիտությունը, որ թագավորներին է ցանկալի և քերի մեր երկիրը՝ առանց որևէ մեկի աջակցության, շնորհիվ միայն իմ անձնական ջանքերի և օգնականությամբ սուրբ Գրիգորի աղոթքների, թեպետև ոչ ոք եղավ մեծարող և շնորհակալ իմ աշխատանքի համար, որովհետև մեր ժողովուրդը իմաստասիրություն և գիտություն սիրող չէ, այլ ծույլ է և ձանձրացող։ Որովհետև երբ վերադարձա, շատերը եկան ինձ մոտ սովորելու և փոքր-ինչ խելամտած թողին ինձ ու հեռացան, չմնացին մինչև դասընթացի ավարտը։ Ասորյա կարիքների համար նրանք բավական համարեցին այն, ինչ ստացել են։ Ով ինձնից շատ շուտ հեռանալով՝ սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չգիտեին, և ներկայանում էին իբրև ուսուցիչներ [առարկաների], որոնց հասու չէին։ Կեղծավորներ և սնափառներ. ուզում են դիտնականի կեցվածք ընդունել և ուսուցչապետ կոչվել մարդկանցից։ Իմ հասցեին նրանք տգիտությամբ պարսավանքի խոսքեր էին ասում, որ իրենք էին հերյուրել։ Թե ես չարություն ունենայի նրանց նման՝ բերանս չէի բաց անի սովորեցնելու ոչ մեկին՝ իբրև արդարև ապերախտների։ Սակայն ես միշտ մտաբերում եմ տերունական ձայնը, որ ասում է. «Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ»։ Ով դարձյալ թե՝ «Գցիր քո ոսկին սեղանավորին, և ես գալով՝ տոկոսներով կպահանջեմ»։ Դարձյալ ոչ ոքի չեմ ազգելել, ովքեր ցանկացել են սովորել, այսուհետև նույնպես չեմ ազգելի։ Ով այս եմ առհավետ կտակում ձեզ՝ ինձնից հետո աշխարհ եկող ուսուցիչներիդ՝ իմաստություն և գիտություն սովորել ցանկացողներիդ։

Ով Քրիստոսին՝ ձիրք շնորհողին, փառք, պատիվ և իշխանություն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն։

www.a-pdf.com

Ա Ր Տ Ա Վ Ա Զ Դ

(Ը ԴԱՐ)

ՈՂԲ
703 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՍՄԱՅԵԼԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԶԳԻՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՍԱԾ ՉԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՎԱՀԱՆԻ, ՈՐ ՈՐԴԻՆ ԷՐ ԳՈՂԹՆԻ ՏԵՐ ԽՈՍՐՈՎԻ

Ա. Ահա մերկացավ սուրը պատյանից: Արյան ծարավի սուրը մեզ վրա է հանել Իսմայելի ազգը, աշխարհի չորս կողմերում զարկելով սայրածի պես, չորս հողմով հուզելով ծովը՝ սասանեց աշխարհը: Իսրայելին վերաբերող մարգարեությունը մեզ ևս համարվում է. Երուսաղեմը քանդված էր հիմնովին. մեր ամբողջ երկիրն էլ ավերակվեց: Երկրիս բարիքները օտարները վայելեցին, և նախարարների ազատությունը, տերությունը, իշխանությունը անարգաբար գետին տապալվեց: Այնտեղ մանուկները զարնվեցին քարին, իսկ մեր բոլոր ծնողներն ու զավակները գերեվարվեցին: Այն, որ Երեմիան ողբում էր մայրերին, այժմ մեզ պատահեց:

Այժմ, այն ժամանակվա նման սգում են մեզ Սիոնի ճանապարհները. որովհետև ապականվելով՝ սուրբ սպասների պայծառազարդության լույսը վերացավ, վերացան հոգեզարդ տոների ուրախությունը և քահանաների ու պաշտոնյաների, սաղմոսային հոգևոր երգերի ցնծությունը և միաժամանակ՝ առհասարակ աշխարհիս վայելչությունը: Որովհետև տխրաբեր հարավային օդով շնչող մրրիկը վերացրեց փափկության առագաստը, ոչնչացրեց լուսազարդ ծածկոցի պատվականությունը, որ դրախտի փոխարեն շնորհվեց մեզ Քրիստոսի խաչի կենաց փայտից, և ի հայտ եկավ կտավի թանձրության թուխ գույնը: Օ՜, խավարչուտ թանձրություն անսահման սևության. գո՜ւյն, որ բռնելու էր ամբողջ Հայաստան աշխարհը: Ինչպես նախապես երևացել էր տեսիլը Աստծու երանելի ու մարգարեաշնորհ այր սուրբ Սահակին՝ բանավոր հոտի հավետ հոգատար հովվին և Հայոց աշխարհի վերադիտողին, կամ ինչպես ավելի առաջ տեսել էր սքանչելի լուսավորումով նրա նախնին՝ առաքելանման այր, երիցս երջանիկ սուրբ Գրիգորը:

Բ. Տաճիկների բռնակալության շրջանում, երբ Մահմեդ Առաջինի մահից հետո, նրանց ութսունհինգ թվականին, Մրվանի որդի Աբդլմելիքի վերակացության ժամանակ, մեզ կրակը գցեցին, երբ սատանան բարկացրեց նրանց, անարդար բան մտածեցին մեր դեմ, չարության մահաբեր թույնով, բազում չարիքներից հետո, որովհետև զորքերն ու զորագլուխներին, պետերին ու իշխաններին, ազնվականներին ու նախարարներին բնաջնջում էին՝ սրափողոտ խողխողելով:

Ապա շտապ դեսպաններ ուղարկեցին տարբեր կողմեր՝ ստահամբավ փութով, դավադրաբար համոզող խոսքով ու խոստումով, բոլորին մի տեղ հավաքելով, արքունիքից բազմաթիվ նվերներ ու պարգևներ շնորհեցին, առատաձեռնորեն նրանց դահեկաններ, նաև տարվա պարտքերը բաշխեցին: Նենգապատիր խաբեությամբ զենքերը նրանցից վերցրին, երբ թե նրանց

զենքի երկյուղից իրենց ապահովելու համար, ասելով՝ «Դուք մեզ նման հաստատուն չեք երդման մեջ»: Եվ նրանց տարան մի վայր, պահեցին ոմանց Նախճավան քաղաքում, մյուսներին՝ Հրամի ավանում: Եվ իրենց չարագործներից մի վերակացուի, Կասմ անունով, Մահմեդին հավատարիմ, Աբդլմելիքը Հայոց հրամանատար էր կարգել:

Հավաքելով երկրիս նախարարներին նախատեսված տեղում, լցնում էին սուրբ եկեղեցիները, դռներն ամուր փակում և ասում. «Ոչ ոք թող այստեղից դուրս չելնի»: Եվ իրենք ծածուկ զինվեցին, դուրս եկան և աղյուսով շարեցին ելքերը: Իսկ նախարարները ձայնելով օրհնեցին հնոցի միջի սուրբ մանուկներին, և հետո երգելով փառաբանում էին հովիվներին ու վերին հրեշտակներին: Նրանք քանդելով տաճարը, վառեցին եկեղեցին, և բոցը բարձրացավ Բաբելոնից ավելի վեր: Այնտեղ թագավորի բանության երկյուղն էր, իսկ այստեղ դևերի լեգեոնը մարդկանց մեջ մտած՝ կատաղեցնելով սատաններն էին ճռճռում: Այնտեղ զուլթն այրում էր ծնողների աղիքները, իսկ վերևից՝ ձեղունից ընկնում էր կրակը. և մանուկներին հանդերձների մեջ վառում էր հուրը: Հայրերն ինքնասպան էին լինում, որովհետև զավակների ողորմելի մահը իրենց տառապանքը մոռանալ տվեց: Եվ բոլորը միասին այրվում էին:

Արդ, ողբա մեզ, ո՛վ Աստծու սուրբ, որ ասում էիր. «Մի՛ ուղարկիր ինձ ժողովրդիս մոտ», քանի որ քոնը գերեզմանով փակվեց, և աչքերդ աղբյուր են դառնում մեզ համար: Բա՛ց բերանդ բարեխոսության համար, չէ՞ որ քո մահը ավելի պատվական է, քան մեր կենդանությունը: Սգա, երկի՛ր, ողբա, երկինք, բարձր հոգոց հանեցեք ու ճչացեք մարգարեի հետ, որովհետև մեգն ու մառախուղը տարածվեցին ձեզ վրա: Բազմարտասուք մի՛ տանջվիր դու, Երեմիա՛, որ աղբյուր աչքեր էիր ցանկանում. հենց մե՛ր աշխարհում ծովացավ աղբյուրն արտասուքի:

Այս ամենի համաձայն բազմավտանգ հուրն այն, որ բորբոքել էին մարդիկ, փայտակերտ տաճարը հրդեհակեզ այրեց. այրվածքի մուրը ներքև հոսեց միախառն հրով հանդերձ, հեղձամղձուկ դառն պատուհասով մահ բերելով նրանց բոլորին, ծածկեց այն անօգնական բազմությանը: Եվ նրանց անդադար գոհաբանությունը դադարեց սպառած հոգիների հետ: Եվ դահիճները ապահովվեցին սակավ, բայց քաջամարտիկ ու պատվական նախարարների այն երկյուղից, որ բազմիցս անհանգստացրել էր նրանցից շատերին: Նույն կերպ բոլոր երևելի զորամարտիկները սրով գլխատված կախվեցին փայտից. գործն այսպես ավարտվեց:

Գ. Հետո ոխակալ այլազգիները ցրվեցին մեր աշխարհում՝ խուզարկելու սպանվածների տները և մեր ամբողջ երկրի բոլոր գանձերը կողոպտելով, տիրանալով հեծյալների տներին ու ընտանիքներին, գերեվարեցին դեպի Նախճավան: Այս ամենի համբավը ցնցեց մարդկանց ու երկրից ողբի հառաչանքներ հանեց: Իսկ անօրենները անողորմությամբ հոշոտեցին ոչ միայն մեր մեջ, այլև ամբողջ աշխարհում:

Այս չարագործությունը տեղի ունեցավ Աբդլմելիքի իշխանության տասնըվեցերորդ տարում: Սա ավերում էր Հայոց աշխարհը մինչև իր մահվան օրը: Նրա հրամանով չորս անգամ կատարվեց այդ բանը: Նրա մահից հետո, նրա Վլիթ որդու իշխանության առաջին տարում, որ Հայոց 152(703) թվականն էր, Ջահկի անունի օրերին, գերի բազմությունը տարան Դվին մայրաքաղաքը և տասը օրերին բոլորին պահեցին բանտում: Ինձ թվում է,

www.a-pdf.com

www.a-pdf.com

ավելի շատ էին մահացածները, քան՝ կենդանիները։ Եվ աշնանը հանեցին նրանց բանտերից, պարանոցները կապեցին և համարով ու ցուցակով տարան ասորեստանցիների երկիրը։ Հասնելով Դամասկոս՝ ազատներին տարան արքունի ծառայության, նրանց երեխաներին արհեստի տվեցին, մնացյալները բաժանվեցին իբրև գերիներ։ Իսկ ճանապարհին զոհվածները չգիտեմ, գերեզման ունեցա՞ն և կամ ինչպե՛ս մահացան։

Դ. Այնտեղ հավաքվածների մեջ կար մի մանուկ Գողթն գավառից։ Նրա անունը Վահան էր, Գողթնի տեր Խոսրովի որդին էր, մոտ չորս տարեկան, շնորհալի և աչքի ընկնող։ Արքունիքից հրամայեցին՝ նրան մեր մեծախորհուրդ ճշմարտությունից դարձնել ուրացության կողմը։ Երբ այդ արեցին, նրան անվանեցին Վահապ։ Նա գնալով իմաստնանում էր և բարձրանում իր խորհրդակիցներից, դառնում ուսուցանող իր հասակակիցներին և արքունի դիվանադպիր։ Աբդլմելիքի, նրա որդու՝ Վլիդի, եղբոր՝ Սուլիմանի մահից հետո արաբների մեջ տարածվեց խոսակցություն, թե հայերիս նկատմամբ անարդար են վարվել։

Եվ երբ արաբների գլխավոր դարձավ Ոմառը, Աստված նրան հիշել տվեց հայերի նկատմամբ կատարված անիրավությունները։ Սա հրամայեց հավաքել գերիներին և արձակեց բոլորին։ Եկավ և այն Վահանը, որ վերակոչվել էր Վահապ և նրանց ուսման ու գիտության քաջատեղյակ էր, խոսքով ևս հմուտ էր ու կորովի, և հայտնեց իր տառապանքները։ Եվ նրա խոսքերը ծանր տպավորություն գործեցին Ոմառի վրա, որովհետև տեսնում էր, որ ոչ ոք իմաստությամբ հավասար չէր նրան։ Վկաներ ուզեց, բայց ոչ ոք նրա մասին վկայել չէր կամենում։ Իսկ հայերից եկող վկաներին չընդունեց։ Այս անում էր Վահանի պիտանիության պատճառով, բայց իր հրամանը հաստատուն էր պահում և չէր փոփոխում՝ իր բարոյական բնության համաձայն։

Այնուհետև հնծյալ դեսպաններ առաքեց Միջագետք՝ ստուգելու։ Այնտեղ գտնվեցին տասնհինգ հոգի, արաբներ, որ լավ տեղյակ էին ու ծանոթ երանելի պատանուն։ Նրանց վկայությունները հասցրին Ոմառին։ Սա չկամեցավ բռնանալ նրա կամքին, այլ քաղցր խոսքերով ուզեց համոզել պատանուն, ասելով.

— Մի թողնիր մեզ, որդյակ։ Եթե որևէ բանի պակասություն ունես, քեզ կդարձնեմ իմ թագավորության երևելիներից, փառավոր՝ իշխանությամբ ու գանձով։

Իսկ նա, որ աստվածային հոգի ուներ ու խորատես էր, բարձր՝ մարմնական ցանկություններից, իմաստնանում էր պատասխանելիս.

— Իմ հայրերը, որ Պարսից իշխանության մեջ էին, նիզակի ու աղեղի մարդիկ, ավելի շատ մեծարվեցին գանձով, քան մեր երկրի բազում ազատներ։ Եթե ամեն ինչ ինձ կրկնապատիկ տրվի իմ գերության դիմաց, դա ևս ինձ չի կարող պահել։ Արդ, քանի որ Աստված քաղցրացրեց ձեր գութն իմ հանդեպ, արձակեցեք, որ տեսնեմ իմ հայրենի երկրի ավերածությունների որչափությունը և ձեր հրամանով գործակալ նշանակելով, վերադառնամ ձեզ մոտ։

Ե. Իմաստուն խոսքերից հետո թույլ տվեցին, գրելով հաստատուն և անփոփոխելի հրաման։ Նա հասավ իր գավառը՝ Գողթն, վերակացուների հարցը կարգավորեց ըստ հրամանի։ Շուտով նրան լուր հասավ, որ Ոմառը

www.a-pdf.com

մահացել է։ Եվ նա չկամեցավ վերադառնալ, չնայած պայմանավորվել էին, և իրեն մեծ պատիվներ էին սպասում արաբների երկրում։ Ողբում էր մանուկ հասակում կատարած ուրացությունը, վերստին արտասուքը ծով էր դառնում, և նա սրտի խորքում այսպես էր մտածում. «Սուրբ հայր, դու, որ քո բարձրությամբ դարձյալ խոնարհներից հեռու չես և քո Միածինը մեզ պարգևեցիր խաչի տեղանով և քո սուրբ Հոգին՝ հավատացյալներիդ առաջնորդելու, նայիր ինձ, սրտով բեկվածիս։ Միայն դու ես տեր, և քո գթությունը անսահման է, իսկ բարերարությունդ չափ չունի»։

Եվ երբ տեսան այդ ամենը, աներկրաեր մտքի բարքերը, կամեցան նրան աշխարհի սիրով կապել, ստիպում էին ամուսնանալ, որ ազգատոհմը շնվազի, և իրենց ցանկությունը կատարեցին, բարեկամություն հաստատելով Սյունյաց տիկնոջ հետ։ Բայց նա չհրապուրվեց աշխարհիս մեծություններով։ Եվ ծածուկ շարունակում էր աստվածապաշտությունը, հայտնապես դավանում Քրիստոսին և ոչ թե վախենում ուրացողի նման։ Այնուհետև, մտածելով հանցավոր կենցաղավարության վրա, թողեց իր ամբողջ կարողությունը, հետը պաշար վերցնելով և քսան հեծյալ, դիմեց դեպի Հունաց աշխարհը։ Եվ երբ գնաց Վայոց ձոր, նրա դաղտնիքը հայտնի դարձավ աներոջը, որի խրատի կարիքն զգում էր։ Այնտեղ տխրաշարժ կանայք արտասվելով ողբում էին, ասելով. «Իրավամբ տիրելով հայրենիքիդ, մեզ ևս մեծ հույս էիր։ Այժմ, տեսնելով մտադրությունդ, երես ենք դարձնում քեզանից, և դու մեզ համար ոչ կենդանի ես, ոչ մեռած»։ Շուրջը նստած՝ արտասուքով սաում էին. «Նայիր մեր ծանր կյանքին. գուցե քեզ խլում են մեզնից. քեզ հետ կգանք ապրելու և մեռնելու օտար երկրում»։

Այդ լսելով՝ երանելին, հոգու զենքով վառված, շտապ հասնում է Վրաց երկիրը, որպեսզի այնտեղ եղած իր ազատ մերձավորների միջոցով կազմակերպի ծրագրված ճանապարհորդությունը։ Եվ մոտ մեկ տարի այնտեղ անցկացնելով՝ վերադարձավ Հայաստան, Արագածոտն։ Օգնական հեծյալներից ճանճրանալով, արձակել էր նրանց։ Այնտեղ, Իշխանաց գավառում մերձավոր ազատները խորհրդակցեցին՝ որոշելով ուղարկել նրան թագավորանիստ քաղաքը։ Բայց չբավարարվեցին այդքանով և իշխանին ու կաթողիկոսին ևս խորհրդակից դարձրին։ Իմ կարծիքով, այն դևը, որ ամեն ինչով քաջավաստակ էր, չարամիտ գաղափարով շտապ հասավ՝ վախեցնելով ղորապետներին ու քրիստոնյաների վերակացուին, որոնք ասացին. «Գնում է՝ թող գնա, թե չէ մեզ էլ, իրեն էլ կկործանի»։

Սրանով ավելի էին զայրացնում վահանին։ Նա հրաժարվեց պաշարից ու օգնականներից, բացի մեկից, որ իր սիրելիներից էր։ Բայց նա ևս չվրիպեց դևի աչքից, ու ասում էր. «Ես գնում եմ ընկերներիս հետ, տուր ինձ եբիվարդ, և քեզ չեմ մատնի թշնամիներիդ ձեռքը»։ Նա, տեսնելով սրա խորամանկությունը, տվեց ու սիրով ուղարկեց։ Իր մոտ մնաց մի քիչ պաշար, որ տվել էր կինը իր հոր տունն ուղարկելիս, և ուրիշ ոչինչ չուներ։ Գնաց հասավ վաղարշապատ քաղաքը, հանդիպեց կաթողիկոսին, որն ասաց.

— Գնա որևէ մենաստան, որ ուրիշներին չվնասես։

Եվ ոչ ոք նրան չէր ուզում ճանաչել։ Գնում էր մեծ տառապանքից ուժասպառ և ընկնում գետին։ Անմիջապես մի մարդ հասավ գրաստով։ Նայեց [վահանը] և ոչինչ չգտավ, բացի մատանուց, որ իր կնիքն էր, հանեց, տվեց մարդուն, որ իրեն տանի որևէ անապատ։

Մեծ Զատկի օրերը մոտ էին։ Եվ սա, մտնելով կրոնական միջավայր, մնաց վեց ամիս։ Եվ արտասուքի ծով կապեց, և մտքերը աստվածախոս

www.a-pdf.com

արքեցրին նրան վերին իմաստությամբ։ Բայց չարաճճի դևը, որ սովոր է մարդկանց խաբել, երկյուղ է գցում կրոնավորների սրտերը։ Մերձակայքի իշխանի կինը մարդ է ուղարկում անապատ՝ ասելու. «Թող նա հեռանա ձեզնից, որպեսզի իրեն և ձեզ կորստյան պատճառ չլինի»։ Իսկ նա, գոհությունս հայտնելով Աստծուն, ասում էր. «Երբ չարը պատերազմ է հրահրում, իմ հույսը դու ես։ Ես չեմ վախենում մահվան ստվերոտ տեղերից։ Եվ քո խաչի ցուպն ու գավազանը մի հեռացնիր ինձնից։ Խոցված եմ, ահա, գայլի ժանիքներով, ինչպես նա, որ Երիքովում ընկավ ավազակների ձեռքը։ Ինձ կիսամահ չթողնես. ես պատանքի և ձեթի ողորմության կարիքն եմ զգում»։

Եկավ հասավ անծանոթ ու սակավամարդ մի անապատ. տարին վերջանում էր, աշունն էր։ Միամերարկու, անթոշնանալի սրտով, ինչպես շատ ծարավկոտ եղջերուները՝ աղբյուրին, նա կարոտել էր Աստծու սիրուն։

Գնաց հասավ այնտեղ, ուր տաճկաց իշխանն էր, և իր հավատի համար թույլտվություն խնդրեց, մանավանդ որ ծանոթ էր սուրբ Գրքին և քաջհմուտ իսմայելական առասպելաբանության։ Եվ ոչ թե հանդգնորեն դեպի մահ էր գնում, այլ՝ իր ճշմարիտ հավատին հաստատություն և նրանց ստությունից հրաժարվել էր ցանկանում։

— Քանի որ ես դեռահաս էի, երբ նրանց հավատն ընդունեցի,— ասում էր նա։— Քրիստոսն ինձ համար մեռավ, իսկ այժմ ես նրա սիրու համար տասնապատիկը կընդունեմ. թշնամանքի դեմ՝ թշնամանք, հալածանքի դեմ՝ հալածանք, կապանքների դեմ՝ կապանքներ, ատյանի դեմ՝ դատաստան, սուտ վկաների դեմ՝ արդար վկաներ։

Եվ ոմանք արգելում էին նրան, բայց նա չէր հետևում այդ խրատներին, այլ եղբայրների հորդորները լսելիքը մտած՝ քաջալերում էին նրան մշտապես։ Երբ գնալու ժամն եկավ՝ իմացավ մի կրոնավոր, որ Սովի վանքի վանահայրն էր՝ Հովհաննես անունով, նրա համար գրաստ և հագուստ էր պատրաստում։ Եվ կրտսերագույն եղբայրներից մեկին հորդորեց գնալ իբրև վահանի սպասավոր։ Եվ այն չորս տարում, որ նրանք շրջեցին միասին, երեք աքանչելիք երևաց, որ անկարող եմ պատմել, ինչպես Տարսոնացին էլ իր տեսածն էր պատմում՝ լուռս տեսնելով և ձայն չլսելով։

Սուրբ խաչի տոնին բազում զղջանքներով մտնում էր Աստծու տաճարը։ Եվ մի մարդ Մաքենաց վանքից, Սողոմոն անունով, նրան տալիս էր գիր քաջալերության և հանդերձանք՝ իբրև վարձատրություն։ Իսկ երանելին այս բազում արտասուքներով ընկավ անդառնալի ճանապարհ. ինչպես տիեզերաքարոզը՝ Հռոմ. եկավ հասավ նա Բզնունյաց գավառ, գյուղը, որի անունն էր Արծկե։ Գնաց անապատը, որ կոչվում է Երաշխավոր, Մասսի ստորոտում, որի առաջնորդը Արտավազդ անունով մեկն էր։ Սա Աբրահամի նման սիրով հյուրընկալեց նրան երեք օր և մեկնելու ժամանակ ճանապարհի պաշար պատրաստեց։

Երբ հասավ Ուռհա մայրաքաղաքը, երկրպագեց Փրկչի պատկերին՝ թողություն խնդրելով մանկամիտ անմեղության համար։ Այնտեղից կաղանեկոս գալով՝ անցան Եփրատ գետը։ Ճանապարհը մեծ դժվարությամբ ավարտելով՝ գալիս հասնում էր Ռուծափ, ուր բնակվում էր տաճիկների Շամի իշխանը։ Դրանից հետո արձակեց այն պատանուն, որ իր հետ էր, և ինքը քաղաքից դուրս հանգստացավ մի քանի օր։

www.e-pdf.com

Զ. Բայց ինձ թվում է, թե դևն էլ էր այնտեղից անցել. նա իր խորհրդակիցներին ասում էր. «Կհեռացնեմ այս մարդուն Քրիստոսից և կմոռեցնեմ դժոխքին. բայց դուք ինձ պիտի օգնեք»:

Եվ արքունի խորհրդակիցների բազմությունը նրան ասում էր.

— Հեշտ կյանքը թողած, մոլորվելով, մի հետևիր դժվարին, մի՛ հրաժարվիր քո փառավոր կյանքից, ընդունիր մեր պատգամավորին, որ այստեղ մեզ տվեց աշխարհիս մեծությունը և այնտեղ՝ դրախտի փափկությունը մեզ համար է պահում:

Վահանը սուրբ Հոգով զորացած՝ ասում էր.

— Ձեզնով ինձ հետ խոսում են դևերը: դրանք գերգեսացոց երկրում խնդրեցին լինել խոզերի իշխան և ծովում խեղդվեցին: Ձեզ հետ կմահանան և ձեր խոսքերն ու չար խրատները:

Եվ պարտվելով նրանից՝ իրենց հավատի մեջ թուլացան:

Իսկ նա, Աստծուց խրախուսված, գնաց դպրապետի մոտ, որ անցյալում եղել էր իր ուսուցիչը, ու նրան հայտնեց իր խորհուրդը:

— Ճշմարիտ հուսով աներկյուղ եմ,— ասաց,— խնդրում եմ, պատմիր իմ մասին ամիրապետին:

Դպրապետը, տեսնելով Վահանի համարձակությունը և իրենց հավատի նկատմամբ ունեցած արհամարհանքը, սաստեց նրան խստագույն սպառնալիքներով: Բայց նրա սրտի ուրախությունը պայծառացնում էր երեսի գույնը:

Եվ երբ այդ տեսավ դպրապետը, խղճի գալով արքունական պարգևներ խոստացավ և իշխանություն, միայն թե համաձայնի: Տվեց նրան երեսուն դրամ, որը վերցնելով դպրապետի ներկայությամբ աղքատներին բաժանեց: Իսկ ինքը անօթևան էր ցրտաշունչ ձմեռով, սակավահանդերձ և անսնունդ:

Ապա գնաց մի իշխանի մոտ, որ եվամտից պետն էր: Մա սարսափից հրաժարվեց օգնել, ասելով.

— Վտանգավոր է այդ խոսքդ. ինձ՝ հոգս, իսկ քեզ մահ կբերի,— ու խորհուրդ տվեց նրան գնալ հեռանալ: Իսկ նա իրատը ոչ աստվածահաճո նկատեց. ինքը վատաբար փախչի՝ պատերազմից: Երբ չէր գտնում ելք իր ցանկությունը իրագործելու, ընկավ Աստծու առջև աղերսելով: Գտանք նրա գրավոր աղոթքը, ուր ասվում է.

«Աստծու միածին Որդի, որ մոլորյալ ոչխարին հովիվ կոչվեցիր և գտնելով նրան՝ ուսով բարձրացրիր և բազուկներդ տարածելով՝ տիեզերքը շուրջդ ժողովեցիր, ինձ անօգնական չթողնես, լվա՛ իմ հանցանքը քո արյամբ ու կենդանարար մարմնով, դու, որ մանանա ես անմահությանդ՝ երկրքից իջար և մեզ հաց պարգևեցիր. աշխարհի փրկաբեր և կենաց ճանապարհի առաջնորդ, մենք հավատում ենք Երրորդությանդ և մի աստվածության, մի դեմք և երեք անձնավորություն, բոլորից հեռու և մոտ բոլորին»:

Գոհության աղոթքից հետո գնաց մի դահճապետի մոտ, որի անունն էր Քաբշ և հիմացիների իշխանն էր: Սա ցանկացավ լսել նրա պատմելիքը: Եվ նրան տարավ բռնակալի մոտ: Նա երբ կարդաց Վահանի գիրը, զարմացավ նրա գրի վայելչության և ճշմարտացիության վրա. հրամայեց բերել իր մոտ ու նրան նայելով՝ հանդիմանեց.

— Վահապ,— ասաց նա,— ինչու աղքատահանդերձ ես երևում. Հայոց երկի՞ր քեզ իջեցրեց քո փառավորությունից:

Պատասխանելով, սուրբն ասում է.

www.a-pdf.com

— Իմ Տերը ինքն իրեն ունայնացրեց, ծառայի կերպարանքով աղքատության իջնելով հանուն մեզ ու մահվան ենթարկվեց խաչի վրա։ Եթե նա ինձ համար համբերում էր, ինչու ես խուսափեմ դրանից։

— Հայոց սառցապատ լեռների չար գևերը քեզ խաբելով խենթացրին, որ այդպես խոսես,— ասում է բռնավորը։

Վկան պատասխանում է.

— Այն, որ առաջ կային իմ մեջ ձեր օրենքները՝ վտարեցի իմ միջից։

— Ձեր մոլոր օրենքի իմաստուններն ասում են, որ գևերն ընկան, և ուրիշները չարք դարձան. ճշմարիտ է, ձեզ նեղում են այստեղ և՝ ուր որ հույս ունեք գնալու։ Ով բարեմերժ այր, մոլեկաններին նմանվելով, քեզ զրկում ես փառավորությունից։

Ու հրամայեց դանձապետներին ոսկի և արծաթ բերել և մեծաքանչ գույնզգույն հանդերձանք, ասելով նրան.

— Թշվառական և չարասեր, առ այս ամենը, նաև՝ ծառաներ ու աղախիններ, ձիեր, ջորիներ, ուղտեր և իշխանություն՝ կուզես այստեղ, չէ՝ Դողքընում։ Մոռծիր մեր պատգամավորի մասին, որ տվել է մեզ այս մեծ իշխանությունը և այնտեղ դրախտի փափկությունն է պահել մեզ համար։

Իսկ սուրբը պատասխանում է.

— Ես առաջ էլ եմ լսել քո խորամանկ ու բազմահնար ճարտարախոսությունը, շատերին ես որսացել այդ ճարտարությամբ ու կորստյան վիհը նետել, քեզ դժոխակից դարձնելով։ Ոմանց ստիպել են ահարկու ձայնով, ուրիշներին՝ շողոքորթությամբ. ոմանց՝ անոտիապատիր դույզով ու այլ կաշառքներով. ոմանց՝ անցավոր իշխանությամբ ու պատվով զարդարելով. շատերին՝ սուտ հույսով խաբելով։ Ջանացիր ամեն կերպ քո բազմահնար իմաստությամբ կայուն մարդկանց շեղել այն ճանապարհից ու նետեցիր կորրոտյան խորխորատ։ Այդ բոլորի համար պատասխան ես տալու՝ այրվելով գեհենի հավիտենական տանջանքներով։ Բայց քո չարահնար մեքենայով չես կարող հաղթել ինձ, որ պարսպված եմ աստվածային երկյուղով ու գիտությամբ։ Որովհետև ձեր պետը, որին մարգարե եք անվանում, մեռած է և նրա ոսկորներն ու գերեզմանը ձեզ մոտ են. իսկ դու նրան մոտեցնում ես Աստծուն և կոչում դրախտապետ, և նա ձեր մոլորության տեսանողը կամ բանբերն է լինելու։ Դու իմ նկատմամբ բարի եղիր և իրավունք տուր համարձակ իմ կարգավորության ավանդությունն ոռնենալ։ Ինձ հարկավոր չէ քո առաջարկած անցավոր մեծությունը, և եթե կամենում ես, իմ գավառն էլ խլիր ինձնից, միևնույն է, թողնելու եմ բոլորի նման։ Ո՞ւր է քո հոր սրեզևրական իշխանությունը. կամ քո եղբայրների բռնապետությունը. ստվեր չե՞ն դարձել։ Դու ևս քիչ ժամանակ ունես. շուտով հող ես դառնալու։

Այնժամ բռնավորը բարկացավ, հրամայեց նրան դուրս տանել ու բանտարկել. ոտքերը կապել կոճղին։ Ով երբ նրան տարան կապարան, խնդրեց, որ երկու ոտքն էլ դնեն կոճղի մեջ։ Ու նրանք զարմացան սրա հոժարակամության վրա՝ կատարելով խնդրանքը։

Ով [ամիրապետը] շտապ դեսպաններ ուղարկեց Մրվանի մոտ, որ այն ժամանակ Միջագետքում էր, որպեսզի նրանից ստույգ տեղեկանա սուրբ այցի մասին։ Իսկ նա դատավ քաջատեղյակ մարդիկ, արագ ուղարկեց ամիրապետի մոտ։

Վահանը բանտում մնաց ութ օր, մարմնի հանգստությունը մոռացած, անքուն աչքով, աննինջ արտևանունքով։ Իսկ բռնավորն այս օրերին նրա

www.a-pdf.com

մոտ էր ուղարկում իրենց կրոնի քարոզիչներ՝ վիճելու, ու նրանից պարտվելով՝ վերադառնում էին իշխանի մոտ, ասելով.

— Ոչ մեկից այդպիսի բան լսած չկանք. նրա խոսքը մերկ սրի է նման։

Եվ բռնապետը պատվիրում էր նրանց ուրիշների մոտ այս խոսքը չկրկնել։

Ծակավ ողոգոմյան կոչված տոնը։ Վահանն ասում է բանտապետին.

— Աշխարհից հեռանալով՝ խաղաղությամբ կթողնեմ քեզ, քանի որ իմ նկատմամբ բարյացակամ եղար։

Իսկ բանտապետը զարմացած ասում է.

— Ինչ ես ասում. ես քո հանգստին չնպաստեցի, քանի որ դու այդպիսի բաներից հրաժարվեցիր։ Իսկ ես այլ բաներ չէի կարող անել, աշխատում էի օգնել իրերով ու շորերով։ Բայց դու ամենևին չէիր մտածում մարմնի միխիթարության մասին, որովհետև շնորհները զարդարում էին քեզ ոչ միայն ցերեկը, այլև գիշերը։ Հիմա դու հրաժեշտի խոսքեր ես ասում։

Նրանից զոհ՝ Վահանն ասում է.

— Օրախտիքների հատուցողը հեռու չէ. և ահա այս անցավոր բաները գնում են իմ ձեռքից։

Է. Շուտով այստեղ հյուսիսային կողմերի իշխանից ձիավորներ եկան՝ պատմելու նրա մասին, թե իմաստությունը նրան խորթ չէ, և վատ կրթություն չի ստացել։

Իշխանը հրամայեց բերել երանելիին և հարցրեց.

— Քո մոլորությունից հանգեցի՞ր ճշմարտությանը, որ սովորեցիր մեզանում մանկությունից, թե՞ նույնն ես պնդում համառորեն։

— Ճշմարտությանն այլ անուն տալ չի կարելի, ոչ էլ՝ լույսին՝ խավար կամ խավարին լույս ասել։ Ինչ ուզում ես՝ ինձ արա,— պատասխանեց նա։

— Վերին աստիճանի ուշադիր քննելով՝ քո և քո ազգակիցների մեջ կեղծիք չենք նկատել. նրանք իմաստուն են եղել։ Եվ եթե այլադավան ժողովուրդների մեջ են գործել, չեն հրաժարվել իրենց սովորույթից,— ասում է նրան իշխանը։— Բայց դու շար օրինակ եղար մեզ. քեզ նայելով՝ ուրիշներն էլ կընկնեն այդ փորձանքի մեջ։ Ուստի քո նկատմամբ բարի լինել չարժե, քանի որ դու բոլորին լսելի դարձրիր քո խոսքը՝ մերը սուտ հռչակելով։ Դու այդ շնորհները մեր հավատից էիր ստացել, իսկ հանդգնությունդ իմ ներողամտությունից էր։

Բոլորն սկսեցին աղաղակել, որ նրան անմիջապես սպանեն. շար դևը իր շունչը տվեց բոլորին։ Եվ ամիրապետը հրամայեց հանել նրան դուրս և սպանել։ Իսկ նա գնում էր հեզորեն, անտրտում դեմքով, սաղմոսում էր, ասելով. «Դեպի քեզ է բարձրանում հոգուս աչքը, Տեր, ինչպես ծառայի ձեռքը՝ տերերի ձեռքին, նույնպես էլ իմ մտքի տեսողությունը քեզ է նայում»։ Ասաց և հաջորդ սաղմոսները, մինչև հասավ սպանության տեղը։

Կանչելով Շամի դահճապետին՝ ամիրապետն ասում է.

— Գնա, տար նրան քաղաքից դուրս, համոզիր, թերևս դառնա մեր հավատին, հակառակ դեպքում ահաբեկիր սուսերով։

Եվ նրանց ետևից գնում էր քրիստոնյաների բազմությունը, որոնց խանդաղատալից ողբերը աղբյուրանում էին արտասուքով։ Հասնելով սպանման վայրը՝ Վահանը ուրախ, ձեռքերը երկինք պարզած, ասում է.

www.e-pdf.com

— Շնորհակալ եմ քեզնից, որ լսեցիր իմ հառաչանքները և կատարեցիր փափագս, ինձ արժանացնում ես քո սուրբ վկաների բախտին և քո մեծ անվան համար մեռնելու փառքին։

Այնժամ դահճապետը ցասումով դիմում է նրան.

— Իմ խոսքին լսել ըցանկացար, այժմ կկատարեմ հրամանը։

Եվ սուրբը պատասխանում է.

— Եթե ձեր վերակացուի հրամանը արհամարհելը ձեր սովորությունն է, ինձ համար անհնար է իմ երկնավոր թագավորի պատվիրանը չկատարել։

Դահճապետը հանեց սուսերը և մի քանի անգամ թուլլ հարվածեց նրան ինչպես հրամայված էր։ Ցայտող արյունը տեսնելով՝ նա չէր զարհուրում։

— Ի՞նչ կցանկանայիր,— վերստին հարցնում է դահիճը։

— Արա՝ ինչ կամենամ ես,— պատասխանում է վահանն ու այլևս չի խոսում։

— Ա՜յ տառապյալ,— ասում է սպանողը,— եկել հասել է քո դառնության օրը, ինչո՞ւ չես նախընտրում ապրելը։

— Այսպիսի մահը անցավոր կյանքից լավ է,— ասում է վահանը։

Այնուհետև սպանողն ասաց, որ պարանոցն առաջ պահի և բարձրացնելով սուսերը՝ կտրեց գլուխը։

Երանելի և մեծ վահանը մահացավ մարտ ամսի տասնյոթին և մարերի ամսի քսանյոթին, ժամը իններին։

Ը. Այնտեղ պալատականներ կային, որ լսում էին ու տեսնում այս ամենը, երբ խոստովանողի արյունը հավաքում էր մի տեղ։ Եվ ականատեսները պատմում էին, որ աքանչելի պայծառությամբ փայլում էր նրա դեմքը։ Իսկ քրիստոնյաները, որ սպասում էին նրանից նշխար վերցնելու, չէին համարձակվում մոտենալ։ Եվ սուրբ մարմինն ընկավ այնտեղ, ուր մահապարտներին էին գցում։ Եվ շները սովորել էին այնտեղ հավաքվել։ Մութն ընկնելուն պես եկան, շրջապատեցին ու կանգնեցին, հանկարծ իրար ծակոտեցին ժանիքներով ու փախան։

Մյուս գիշերը, չգիտեմ գիշերային տեսիլք էր, թե ուրիշ արհավիրք եղավ, ներքինապետը, դուրս գալով արքունիքից, ձայն տվեց.

— Այստեղ քրիստոնյա չկա՞, թող վերցնի մարմինը տանի, իրենց սովորության համաձայն վարվի։

Քրիստոնյաները երկյուղածորեն առաջ եկան։ Եվ նա ասաց.

— Ոչ մի խարդախ բան չկա, վերցրեք խաղաղությամբ։

Եվ երբ լուրը տարածվեց, քրիստոնյաները հավաքվեցին, թաղեցին։ Նրանց մեջ կային հռոմեներ, հակովբիկներ, նեստորականներ՝ կանայք և տղամարդիկ։

Բ. Սա կատարվեց Շամի էմիրությունում, Եփրատից այն կողմ, Ռուծափ քաղաքում։

Յոթ տարի հետո Աբրահամ կրոնահայրը, որ և Արտավազդ է կոչվում, մի քանի եղբայրների հետ գնաց Աստրեստան, Կաղանիկոս քաղաքը, օթևանեց Դերման Ջաքե կոչված մենաստանում, ուր մեզ սիրով ընդունեցին և խորհուրդ տվեցին զգուշորեն գնալ այնտեղ, որ թշնամիները չբռնեն ու պատժեն։ Եղբայրներին ու գրաստը այնտեղ թողնելով՝ իր հետ վերցրեց մեկին ու

www.a-pdf.com

[illegible] հաջորդ առավոտյան հասավ։ Մտնելով վկայարան, երկրպագություն ու գոհություն մատուցեց։ Եվ Թեոփիլեն, որ նաև Աբու Ստեփանե է կոչվում, սիրով ու հիացմամբ ընդունեց մեզ։ Ապա կանչեց բոլոր իրազեկ մարդկանց, որ երևելի պալատականներ էին։ Նրանք պատմեցին քաջ նահատակի վկայությունը և տվեցին այն գրված հունարենով։

Սիրով հրաժեշտ տալով եպիսկոպոսին և մյուսներին, աղոթելով սուրբ վահանի վկայարանում՝ վերատին անցանք Եփրատ գետը, եկանք Ուռհա քաղաքը և գիրքը հայերեն թարգմանեցինք։ Վերադառնալով, սկսեցի պատմագրել՝ որտեղից արժանի էր։

Ժ. Արդ, Հայոց աշխարհի՝ պատուհանի բաժակն ըմպելուց հետո հայոց հարյուր հիսուներկու (=703) թվականին կատարվեց սա, և երեսունչորս տարի գերության մեջ մնացին, մինչև հարյուր ութսունվեց (=737) թվականը, երբ կատարվեց սուրբ Վահանի վկայությունը։

www.a-pdf.com

ԱՍՏՑՈՒ ԵՐԱՆՅԱԼ ԱՅՐ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Երկնային բնակչի կյանք վարելուց հետո ճշմարտության պատկերը և օրինավոր կարգերի քանոնը՝ երիցս երջանիկ Հովհաննես վարդապետը, Սարկավագ մականունով, հասավ բարվոք կյանքի ճանապարհի ավարտակետին ՇՀԸ (1129) թվականին և պատվով դրվեց հանգստարան բոլոր սրբերի հետ։

Բայց պարտեպատշաճ է համառոտակի գրել նրա վարքը և ծանուցել մեր աղքատ մտքից ու սակավ խոսքերից, որ բարի նախանձորդներդ գաղափար առնեք նրա օրինակից և հոգու հայացքով նորոգվեք նրա արևափայլ գործնական ու արդյունավետ ճառագայթներից։

Նա մանուկ հասակից և խանձարուրից, ըստ սուրբ Սամվելի, նվիրված Աստծու և կուսության, արյունով և արգանդով քահանաներից էր, սնվել ու դաստիարակվել էր իր սրբասնունդ քեռու մոտ, Հաղպատի վանքում, իսկ գավառով Փառիսոսից էր։ Նախապես տրվեց վարժվելու երաժշտական-հոգեվոր ուսման, ապա, երբ նրա մեջ երևաց ծածուկ գանձը, իր քեռին նրան հանձնեց ու հանձնարարեց Ուռճացի վարդապետին։ Եվ մանկությունից երեվաց, որ անհավասար է իր նմաններին։ Եվ որքան հառակ առավ՝ գերազանց եղավ հասակակիցներից հիմնավոր առաջադիմությամբ, զվարճանքից և մանկական դրսի խաղերից զերծ, հաստատելով մարդու արտաքին պետքերը՝ տնտեսի պես հարդարում էր ի նպաստ ներքին մաքրության։ Այն ամենին, որ վայր է քաշում դեպի հողը, հրաժեշտ տալով՝ կլանվեց մի ողջախոհ մտությամբ։ Նրա քիմքի մեջ քաղցրացան ու համեղացան իմաստության խոկումն ու սրբության սերը։ Եվ արհամարհեց արտայնի նախկին առաջնային պահանջը՝ բավարարվելով սակավ հացով։ Մանուկ հասակում շատ օրերով միայնանալով խոնավ լեռներում՝ կարդում և ուսանում էր։ Եվ աստիճանաբար առաջ գնալով նստում էր ուսուցիչների ոտքերի մոտ, նրանցից վերցնում մեկնություններ ու խորհրդաստ առակներ։ Եվ մեծ սիրուց ու բաղձանքից՝ ութ օր ինքնիրեն փակեց քարանձավ գրադարակների մեջ, տարվում էր զանազան գործերով ու ընտիր ուսեստներով՝ այնտեղ կուտակված հոգևոր կերակուրների խորտիկներով։

Նա՝ մանկությունից սկսած մինչև վերջին շունչը, երբեք չդադարեց, երբեք հոգու ուշադրությունը չշեղեց ընթերցման նպատակից՝ սովորելու և սովորեցնելու, գրելու և ընթերցելու, հակելու և աղոթելու ցերեկ-գիշեր, բոլոր զբաղմունքներից ու վայր հակող իրերից դուրս։ Բարեբարո էր, քաղցրահայաց ու զվարթ տեսքով, պարկեշտ ընթացքով և համեղախոս, մեղք գործածների նկատմամբ՝ զգած և իմաստուն բժիշկ՝ տառապյալներին։ Այնքան

www.a-pdf.com

բարի համբավ ստացավ, որ բազմությունը գրոհ էր տալիս հեռավոր վայրերից՝ սպեղանի առնելու յուրաքանչյուր բորբոքված վերքի։

Այլև նրանք, որ իմաստության գանձի վաճառական ու տենչացող էին, գալիս մակաղում էին երջանիկ ու համեղաբան իմաստունի ոտքերի մոտ և [ամեն մեկն] իր չափով լցնում էր մտքի քսակը։ Եվ վերադառնում էին ցընծալով և լուսատու ակնեղենով ու գանձով։ Եվ նախնիներից եկած բոլոր նսեմացած ու խամրած գիտությունները, որ տգիտությունից, ծուլությունից և խավարյալ մտքով ծածկված աղավաղվեցին, սրա աշխատաջան գործերով և մտքի արագությամբ զարդարվեցին, և տեսասեր ու լսասեր մարդկանց անձերը ցնծացին։

Բանի և գործի բոլոր ասպարեզներում՝ տեսության և փորձի, գրելու և ընթերցելու, պատմագրության և ուսուցական վերլուծության, մարգարեականի և առաքելականի մեջ այնպես բարձր կատարելության հասավ, ինչպես ոչ ոք, որ միայն մեկ ուղղությամբ էր հռչակված՝ գործով կամ արդյունքով։ Եվ նրա որովայնից գետեր բխեցին, ողողեցին տերունական տունն ու Աստծու հարկերի նոթատի մանուկներին։ Եվ ի՞նչ հարկ կա, որ երկարեմ խոսքիս տողերը, ուր ակնհայտ վկայություն են նրա ասույթները, որոնք լիացրին հայաստանցոց, ըստ ամեն մեկի պահանջի և ախորժակի։ Նրա արմատից ու շառավիղից ելան բազմապտուղ ոստեր՝ ուսուցիչներ և ոգով լուսավորներ, անմոլար աստղեր և լուսաթագանթ ջահեր, և տիեզերքը լցրին՝ կյանքի Բանով, և իմաստահեղց՝ տրամաբանող, ներհուն իմաստներով, ինչպես առաջինը՝ Երեմիան, հոգևոր երկերի առաջնեկն ու արբության ծնունդը։ Որ իմաստուն մեղվի նման փույնզգույն ծաղիկները բարձած մտքի անգամներին՝ հոտերն ու համերը, բերում էր իր քաղաքն ու ծննդյան վայրը՝ մայրաքաղաք Անի, և տունը լիացնում էր այդ փարթամությամբ։ Առատորեն ու աննախանձ ծախսում էր տաղանդը և տասնապատիկ շահույթ ստանում։ Ծաղկելով բողբոջներ արձակեց և արդյունարար բույսեր աճեցրեց։ Իրեն շրջապատելով մանուկներով՝ խոնարհաբար և սիրահոժար ուսուցանում էր խրթին և խորհրդատ բաներ, նախ՝ քերականության, գիտության բանալին և վերծանության գաստիարակը, և աղբյուրը տասնյակ առուգանության, որից և որով տրոհվում է միտքը և ճանաչվում՝ զորությունը քաջերի, և շոյվում են ունկնդիրների լսելիքները, տեղյակ են դառնում երկար ու կարճ [հնչյուններին], սուղին ու սիղոբային, երկամանակներին ու անձայններին, նաև տրամախոհ անկման նշանին՝ ըստ շեշտադրության, ըստ պարույկի փոփոխության, և ապաթարցի կիրառության, որ ծիծաղելի չլինեն չար խոհարարի նման, տունը հասցնեն միջակ ու դժգույն ավարտի, և կատարյալ մտքի փոխարեն խոսքը դարձնեն տարորոշ։ Դրանից հետո կրթում, ծանոթացնում էր նուրբ և դժվարընկալելի դրքերին, առուգանության կանոնների համաձայն պատրաստակամ վերլուծելով մտքերը՝ պահանջում էր ճշմարտությամբ որոշել բայն ու բառը։

Այնուհետև ձեռնամուխ էր լինում աստղերի ընթացքին հետևելու և քննելու, դումարել էր տալիս տոմարի միատեսակ և ստույգ թվերը, [զարգացնելով] երեխաների ուշադրությունն ու դիտողականությունը։ Տեղյակ էր դարձնում կարգավորված տոներին, ամիսներին, ժամանակների փոփոխությանը և չորս եղանակի բաժանվելուն։ [Ուսուցանում էր] նաև այն բաները, որ երկասիրաց կաճառում դրված են քառակուսիների բոլորակների մեջ, պիտանի և արդյունարար բաներ, և նահանջավոր ընթացքները, և անշարժ կառույցները, և պարբերաշրջանները՝ 19-յակներն ու 28-յակ լիատարր պա-

www.a-pdf.com

րումակները, Արիստոտելի այլաբանական խոսքերը, և Փիլոնի թվականաչափ խորոցը, զույգ ու կենտը և դրանցից ծնված թվերը, և յոթնյակի ծնունդները տասի շրջանակներում, և ստուգակարգ հատուկների անկարելիությունը. աճուններն ու անաճականները։

Մղում էր սրանց և համանման բաներ ուսանելու, կրթում մանուկների իրերի ամանները և մտքի քսակները՝ պատրաստելով լավը և վատթարը մարզող, մաքրող և հալող։ Եվ միաժամանակ բարի նախանձի ձգտում էր ներարկում։ Եվ [սաներից] ամեն մեկը եռում էր հոգով՝ գերազանցելու իրար։ Եվ այնքան էին հլու իրենց ուսուցչին, որ երբ աննշան մի բանի համար սաստեր [մեկին], ասելով՝ Լռի՛ր, երեք տարի լուռ կմնար ձեռքը բերանին, խոնարհաբար խոսելով մտքում և Աստծու հետ, կզբաղվեր ունկնդրությամբ։ Եվ երանելի Եփրեմին, որ և Անձրևիկ [է կոչվում], երեսուն տարի կարգին չբացեց բերանը, այլ սանձելով կրթում էր և զսպում անձի ամեհությունը՝ բավարարվելով չոր կերակրով ու հացով, բանջարեղենով։

Վարդապետների վարդապետը սուրբ Հոգու մարգարեության և սքանչելիքի պարգև ուներ, որոնց շատերից մի քիչ կծանոթացնենք, որ վկայել են շատերը։

Առաջին. նախ սա, որ միայնակ աղոթելու ժամին, բորբոք կրակի նման Հոգու փայլատակությունը նրա շուրջը շողում էր, որը տեսել են բազում անգամ նրա մոտ եղողները։

Եվ երկրորդ. անառակ վարքով մեկը լրբաբար մտնում էր [եկեղեցի] և մատուցում անարժան պատարագ՝ փառամոլությամբ, աներկյուղ ու լկտի զեղծումով։ Եվ երկյուղած մարդիկ բազում անգամ նրան խնդրեցին, որ հետ պահի անօրենին գործից և զատի եկեղեցին նրանից։ Աստծու սուրբը, ըստ իր իմաստության այդ կարեկցությամբ սաստելով, խրատեց։ Իսկ [նա] չլսեց։ Մինչև գաղտնիքը հրապարակվելը առանձին ասաց։ Այդ ևս ուշադրության չառավ։ Ապա սուրբը հայտնապես խրատեց ամբողջ եկեղեցու առաջ նրան, որ չափազանց հանդգնելով՝ առնահարում էր հրամանը, մինչև որ լռելով վերջացներ։ Եվ խոր գիշերին տեսավ, որ Աստծու այրը ելավ անձավից, ուր ննջում էր, սուսերամերկ հարձակվեց նրա վրա և սուրը դնելով նրա բկին՝ կամենում էր փողոտել նրան։ Իսկ նա հեզորեն հարցրեց.

— Ո՞վ ես և ինչո՞ւ ես ուզում ինձ սպանել։

Պատասխանեց և ասաց.

— Ես Բարսեղն եմ, որ ամբաստանեցիր բազմության առջև։ Ուզում եմ այստեղ քեզ սպանել, ինչո՞ւ արգելեցիր ինձ պատարագել։

Պատասխանեց նրան հանդարտաբար և ասաց.

— Որդյակ, մի՛ արա դա. ես հրապարակավ քեզ հանդիմանեցի և ես հրապարակավ կբժշկեմ։

Ու նրան թողեց՝ երդվեցնելով այնպես անել։ Այդպես սուրբն ազատվեց անսուրբ պղծից, փրկվեց սպանությունից։ Եվ ոչ մեկին չհայտնեց այդ մասին։ Եվ վարդապետելիս եկեղեցում կանգնած՝ թողություն տվեց նրան՝ ասելով.

— Եղբայրներ, Բարսեղին հույժ ամբաստանեցին ոմանք, և ես արգելեցի նրա [մուտքը] եկեղեցի, այժմ, երբ քննեցի՝ սուտ էր ամբաստանությունը, նրան և Քրիստոսին թողեք իրար [մոտ]։

Երբ երկյուղած և ընտիր այրերը սա լսեցին, իրենց մտքում արհամարհեցին նրան, որովհետև գաղտնիքը չգիտեին։ Եվ առավոտյան ժամին, երբ արձակվեցին, շրջապատեցին արդար այրին և հանդիմանեցին թողության

www.e-pdf.com

համար։ Իսկ նա զայրանալով՝ բանալ տվեց եկեղեցու դուռը և գոչեց Քրիստոսի նշանին, որ եկեղեցում կա՝ ասելով.

— Ով քրիստոսակիր սուրբ նշան, ես իշու նահատակ լինել չուզեցի, դու արա քո գործածանը։

Ով [ամեն մեկը] գնաց իր հարկաբաժինը։ Իսկ այն հանդուգնը այլ արժանավորների հետ ուզեց ժամերգություն անել։ Ով նշխար առավ։ Երբ ժամահարեցին ու հավաքվեցին, եկավ ստյանի կենտրոնը, որ մոնի պատրագելու։ Ով երբ բացեց Աստծու հարկի դուռը, սուրբ վարդապետը նայում էր նրանին և անմռունչ պաղատում, ինչպես Աննան՝ անցյալում։ Իսկ երբ այն այրը կամեցավ մոլեգին մոնել և հաց ավիրել նրա ձիշտացով, վերցրեց նրան մոլության ոգին, որպես օդով լցված պարկ, խփեց բնի առաջ, լկեց նրան խայտառակ կերպով։ Ով այդ ահարկու նշանից անձն ամբողջովին դողաց։ Ով փառք էին տալիս Աստծուն, որ իր երկյոպածների կամքն է կատարում Տերը և լսում նրանց աղոթքին։ Իսկ Աստծու սուրբ երջանիկ վարդապետը, փառք տալով Քրիստոսին, հրամայեց դուրս քաշել գարշելիին սուրբ տեղերից և գոհության պատարագ մատուցեց։ Իսկ անմիտ այրը չար հարվածը կրեց դողդոջելով ու ողբալի կյանքով 21 տարի։ Ով կրոնավորներից Ձեթ անունով մեկը այդքան տարի սպասավորեց անասուրբին, հաց էր դնում նրա բերանը և շալակած տանում էր արտաքնոց։ Նրա վախճանն առավել ևս չար էր։ Սա դրով խնդրեցի ես, և նրանք մեկի բերանով, որ ականատես էր և սպասավոր, ստուգելով գրեցին մեզ, որ և օրինակեցինք։

Կան և շատ ուրիշ սքանչելիքներ Աստծու այրից, որ չգրեցի, որպեսզի լսելիք չվիրավորեմ, մանավանդ որ նախանձոտ է ժողովուրդը և արհամարհող։

Մի օր սա տեսավ կրոնավորներից մեկին, որ եկել էր նրա մոտ՝ անապատ, ղոչման ու խոստովանության։ Հայտնապես տեսավ, որ սատանան նստել էր նրա ուսին՝ ինչպես գրաստի։ Երբ մոտենում էր խցի դռանը, մարդուն դարձրեց և մերկ սուսերով, որ ձեռքին էր բռնած, խթելով իբրև էշ՝ վազեցրեց, ապա դարձյալ քշում էր սաստկապես։ Այդ տեսնելով Առաքինությունը աշակերտին ուղարկեց և բռնությամբ իր մոտ բերել տվեց։ Ով հարցրեց.

— Ինչո՞ւ, երբ մոտիկ եկար, նորից հետ դարձար։

Ով նա ասում է.

— Չգիտեմ, զղջացած գալիս էի քո ոտքը, և հանկարծ միտքս ընկավ շնացողի մոլի սերս, այնտեղ էի գնում։

Իսկ Աստծու այրը նրան պատմեց իր տեսածը, և սուրբն աղոթելով ազատեց նրան։ Այս հավաստի պատմությունը պատմեց նրա կրոնավոր աշակերտը՝ սքանչելանշան երիցս երանեալ վարդապետ Հովհաննես Սարկավագի մասին, որ գրեցի, որով պայծառանում էր Բան Աստծու փառքը։ Ինչպես և Պողոս վարդապետը Տարսոնում, և նրա աշակերտները՝ Սարգիս Հարքացին և Ստեփանոսը և շատ ուրիշներ։ Սա Հոռոմ գրեց «Գիր հաւատոյ» և սանձեց հերձվածողների բերանները։

Անվանի այրեր կային նույն ժամանակ Տարսոնացվոց երկրում, Սև և Կարմիր լեռներում և Նորին անապատում, Դրազարկում՝ Բարսեղ Պիավեցին, որ հռչակավոր էր և սքանչելի վարքով, որ կարգավորում էր իր ուխտը, բնավ միս չուտելով և ոչ հավկիթ, բայց տոներին և կիրակի՝ միայն մի փոքր։ Ով կարգավորեց յուրաքանչյուր կիբակմտի ցայգի պաշտոնեությունը, որ դեռևս կա կանոնի կարգավորությունն այդպես։

www.a-pdf.com

Եվ նրանից հետո լուսավոր հոգով վարդապետներ կային այնտեղ՝ Գևորգ և Կիրակոս, և հռչակավոր Իգնատիոսը, որ տեր Գրիգորի խնդրանքով գրեց Ղուկասի մեկնությունը։ Եվ երանելի ճանապարհով քայլող կյանքի արժանացած ուրիշներ, մեզ անծանոթ և Աստծուց ճանաչված և գովված՝ ճշմարիտ հարգողից։

Մեր քաղաքի գլխավորը կախարդ դուստր ուներ, և քահանաներից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ, աղոթել նրա վրա, քանի որ [եկողների] բոլոր կատարածները երեսով էր տալիս և խայտառակում։ Այն ժամանակ նրա մայրը՝ տիկին Հրանուշը, բոկոտն գնաց լույսի սյուների մոտ և արտասվելով աղաչում էր այցելության գալ [իր] չարչարվող դստերը։ Իսկ սրբերը սաղմոսելով անմիջապես մտան նրանց տուն։ Մոլորության ոգին ոչինչ չգտավ պարսավելու պարկեշտ ու պատկառելի այրերին, այլ սասում էր՝ բավարարվել շատ քաղցր մրգերով և տկարությունը վերացնել։

Այնժամ հավատի ամոլները, մտքերն ու ձեռքերը բարձրացրած, սկսեցին Դավթի սաղմոսը՝ լալով ու պաղատելով։ Իսկ դևը առաջին իսկ սաղմոսից սկսեց աղերսել, խնդրում էր արձակել, որ դուրս ելնի ու գնա հեռանա։ Եվ սրբերն ասացին.

— Հնարավոր չէ՝ մինչև երգը չվերջանա, որքան և շատ նեղվես։

Այսպես բժշկեցին սքանչելի և ընտրյալ այրերը՝ ի փառս Աստծու։

Շատերից քիչը գրվեց ընտիր այրերի այս պատմության մեջ՝ երից երանյալ ամենաերջանիկ Սարկավագ վարդապետից հետո, որ պատմեցին գիտցող ոմանք՝ թե մինչ սկսվում էր կեսգիշերի աղոթքը իր խցում, լույսի և հրի ճառագայթ էր [ելնում] խցի լուսամուտից, եռանդագին դուրս էր հորդում անսպառ կերպով։

Եվ այսպես բարվոք մնալով ժիր մշակությամբ՝ գնաց ստանալու վարձը հավերժական ժառանգության մեջ։ Եվ սուրբ գերեզման դրվեց Հաղպատում, ուր մեծացել և կրթվել էր ի փառս Տեր Աստծու ՇՀԸ (1129) թվին։

www.a-pdf.com

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԼՈՒՅՍ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՎԱՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՐԱ ՆԱԽՆԻՆԵՐԻՑ ՍԿՍԱԾ

Ա. Պարտապատշաճ է, որ մենք անմոռաց հիշատակով [և] գոհացողական բարեբանությամբ պատմենք անմոռաց աստվածային անբավ գթությունների շնորհը, որ միշտ հօգուտ մարդկանց առատաձիր նախախնամությամբ պարգևում է սուրբ եկեղեցուն յուրաքանչյուր ժամանակի համար։ Որովհետև ինձ այնպես է թվում՝ ովքեր գերապատիվ են համարում թագավորական պարգևները և ընդունում են, նրանց ավելի սիրելի են լինում, քան նրանք, որ շնորհակալ չեն և անպատվում են նրանցից եկած բարիքները։ Մանավանդ, եթե արժանիորեն նրանցից պատուհասի պատիժներ ստանան։ Եվ քանի որ սա այսպես է ստուգապես, անհրաժեշտ է, որ մենք ընտրողաբար խուսափենք վնասակարներից և հետևենք օգտակարներին, որպեսզի Տիրոջ հոգևոր շահերին արժանանանք։ Զանց չառնենք այսպիսի աստվածազգյաց հայրապետին և տիեզերալույս իմաստասերին, որ Աստված պարգևեց իր եկեղեցուն՝ իբրև լուսատու այս երեկոյացած ժամանակս, և ծուլությամբ մոռացության՝ ու աղտավաղման չմատնենք։ Դրա համար այստուհետև մի կողմ թողնենք մտքի և հոգու թանձրամած խավարը, մաքուր և հատակ տեսողությամբ մաքրվենք գրչական զբաղմունքներից, իմացության թևերով գանք մեր Սուրբ հայր և երկրորդ լուսավորիչ սուրբ Ներսեսի առաքինության հանդեսին, թերևս արժանանանք նրանից ստանալու խոսքի շնորհք և իմաստություն՝ ուղիղ և աննայթաք շարադրելու նրա սուրբ և հրեշտականման վարքի պատմությունը արժանիորեն։ Եվ վստահելով նրա շատ աստվածային հեղությանը՝ հավատում եմ, որ նրանից կստանամ իմաստություն՝ ըստ առաքելական շնորհի, որով առաջիկա նավարկությանս անվնաս կհասնեմ իմ պատմության նավահանգիստը՝ արտաբերելով ճշմարիտ խոսքեր։ Որովհետև ես տառապյալ մարդ եմ, իմաստության ուսումից ունայն ու դատարկ, միանգամայն ու ամբողջապես հեռացած բարուց՝ հետևելով չարին, անարժան եմ սուրբ հոր մաքրությանը, ինչպե՞ս համարձակվեմ իմ ուժից վեր գործ կատարելու։ Բայց ապավինելով ձեր սուրբ և մաքուր աղոթքներին՝ փոքրիշատե կպատմեմ սուրբ Հոգու պաշտպանությամբ և նրա իմանալի օգնությամբ, ինչ-որ բան հավաքելով նախորդ պատմողներից, ինչ-որ բան իմ գիտցածից, որ ստույգ լսել եմ ճշմարտապատում այրերի հաղորդումներից, իմ տկարության ուժի ներածին չափ կշարադրեմ։ Իսկ դուք ախորժաբար ուշադիր լսեցեք, մեզ համար աղոթելով, մտերմաբար, սիրով և հոժարամտությամբ լսել Աստծու սրբի մաքուր վարքի հանգամանքները, գոհանալով Տիրոջից, որպեսզի Քրիստոս Հիսուսի առջև նրա բարեխոսությանը արժանի լինենք։

Եվ արդ, սկսենք նրա նախնիներից, որովհետև թեպետ սրբերը մեկ ազգ

www.a-pdf.com

ունեն՝ Քրիստոս, բայց շինությունն առանց հիմքի չի լինում և ոչ պատմությունը՝ առանց նախնիներին հիշելու։ Ուստիև այստեղ ցույց կտանք ըստ կարգի միմյանց փոխանորդելը՝ սրբի հայրերից և պապերից սկսած, հասնելով նրա հովվապետության ժամանակին։

Բ. Հունաց Կոստանդին Մոնոմախ բարեպաշտ ու բարեսեր արքայի և Հայոց տեր Պետրոսի հայրապետության ժամանակ, մի այր Արշակունյաց թագակալ տոհմից և Պահլավունյաց զարմից, ազգական արյունակցությամբ, մեր սուրբ Լուսավորիչ Գրիգորի, Վասակ Պահլավունու որդին և Բջնիի տեր Գրիգոր անունով Մարտիրոսի շառավիղներից, հույժ իմաստուն և հանճարեղ, ներքին ու արտաքին գիտություններին խորապես վարժված մանկությունից՝ հայկական և հունական դպրությամբ, հասնելով փիլիսոփայության հռետորական աստիճանի, նաև ուղևորվելով Կոստանդնուպոլիս թագավորական քաղաքը, հանդիպեց թագավորին և պատիվ ստացավ ինքնակալից ու պալատի մեծամեծներից՝ քաջատոհմության արժանիքներին և մեծիմաստ գիտությանն ու հանճարին վայել։ Քանի որ քաղում օրեր հունաց իմաստունների հետ դժվարալույծ խնդիրների շուրջը բանավիճեց, մաքառեց փիլիսոփայական կարգով, հաղթեց բոլորին և ամենքի տկարությունը ցույց տվեց՝ լինելով պատասխանների մեջ հզոր ու խոհական և հանճարեղ՝ խոսքի զարձվածներով։ Այդ պատճառով ինքնակալից մագիստրոսության և դքսության պատիվ ստացավ և նշանակվեց արևելից աշխարհը՝ տիրելու շատ գավառների։ Նա եկավ և ոչ միայն մարմնավոր իշխանությամբ էր հովվում ամբողջ երկրին, որ իր իշխանության տակ էր, այլև բոլորին կարգի էր հրավիրում՝ ինչպես հաճո է Աստծուն։ Վանքերն ու եկեղեցիները զարդարում էր աստվածային պայծառագույն կարգերով, հարգում էր իմաստուն և առաքինի մարդկանց և եկեղեցական դասերին և բոլորին հովանավորում աստվածայնապես։ Հավաքում էր վարդապետների խմբեր և նրանց հետ քննում անդադար աստվածային իմաստների խորքերը և բոլորին զորացնում առաքինի և աստվածապաշտական գործերում։ Հոր սաածի նման, հայր եղավ որբերին ու այրիներին և ստանալով նյութական գանձեր՝ բաժանում էր տնանկներին ու կարոտյալներին։

Ու քանի որ այն ժամանակ զորացել էին մանիքեցոց և թոնդրակեցոց աղանդները, որոնք արմատախիլ էր անում աստվածուսույց վարդապետությամբ և բացատրում իմաստությից ու կորովարան նամակներով, իսկ անհավատներին ու չարությամբ խստացածներին, որոնք իժերի ու քարքերի բնության համեմատ չէին ուզում լսել ճարտար թովչի ձայնը և դեղ առնել իմաստուն դեղատուից, իշխանական խստություն էր կիրառում և այդպես էր հիմնիվեր տապալում հնացած չարությունը։ Եվ ապրելով բարի կենցաղով և հաճոյական քաղաքավարությամբ՝ այս աշխարհից փոխվեց դեպի անվախճան կյանք՝ բարի ժառանգ թողնելով վահրամ անունով որդուն, որ նման էր բարի գործերով իրենց նախնուն՝ Պարթևազյան Պահլավունի Գրիգորին։ Մանուկ հասակից անվեց ու վարժվեց աստվածային գրքի ուսմամբ, զարդարված ամեն բարիքով, որը հասնելով հայրենի իշխանության աստիճանի՝ իր անձը զարդարում էր պարկեշտ կենցաղավարությամբ։ Ապա մտովի հիշում էր Տիրոջ հրամանը, որ ասում է. «Ով չի վերցնում խաչն իր, [չի] ուրանում անձն ու [չի] գալիս [իմ] հետևից՝ չի կարող իմ աշակերտը լինել»։ Եվ իսկույն թողնում է աշխարհական ձևը, քանդում իշխանական գոտին, հրաժարվում յուրայիններից, գնում մենաստան՝ խոնարհ ձև ընդու-

www.a-pdf.com

նելով։ Եվ հնազանդվելով անզբաղական կյանքին՝ օր ու գիշեր ճգնում էր պահքով մեծ Հովհաննեսի նման, և Աստվածաշնչի մշտական ընթերցմամբ կերակրում էր բանական հոգին։

Գ. Բայց որովհետև քաղաքը չի կարող թաքնվել, եթե լեռան վրա է կառուցված, այն ժամանակները Հայոց աշխարհից վերացել էին հովվապետները, և տեր Պետրոսի տունը պակասություն ուներ արժանավոր ժառանգավորների, ինչպես ծերացած Հեղին, և Թորգոմի տունը յոթ տարի մնաց առանց հայրապետի։ Քանի որ այն ժամանակ մեր երկիրն այլազգիների ձեռքն էր ընկել, և կաթողիկոսական աթոռը վտարված էր Սեբաստիա՝ հոռոմների իշխանության տակ։ Դրա համար հույների թագավորները թույլ չէին տալիս կաթողիկոս [օծել], որ մեր ազգն անառաջնորդ մնար և դրա հետևանքով դառնար իրենց [դավանությանը]։

Այնժամ Հայոց Գագիկ արքան մեծ ջանքերով և բազում չարչարանքով ջանալով՝ մեծ ծախսով [մարդ] ուղարկեց հույների թագավորի մոտ, այս խնդրանքով. Կարս ամրոցը տալիս է հոռոմների ձեռքը և հրաման ստանում թագավորից, ոսկե մատանիով կնքած, որ ո՛ւմ ուզեն, նստեցնեն Հայոց հայրապետության աթոռին։ Ապա Հայոց Գագիկ թագավորը հավաքեց հայոց բոլոր հայրերին, և միակամ համաձայնությամբ գտան խնդրի արժանավոր [լուծումը], ինչպես վերին ակնարկությամբ՝ սուրբ Հոգուն հայտնվեց մի անձ՝ ծածկված ագարակում, և բոլորի համաձայնությամբ առաջադրում են Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամին, որի մասին վերևում ասացինք։ Նա լսելով հրաժարվում էր պատվից, իրեն անարժան համարելով բարձր կոչմանը՝ և՛ Աստծու, և՛ մարդկանց միջնորդ լինելու։ Նրանք բոլորը ստիպողաբար նրան իր նախնի սուրբ Գրիգորի անունով Գրիգորիս կոչեցին և արժանավոր ձեռնադրությամբ ու հոգևոր օծմամբ նստեցրին Հայկի և Թորգոմի կաթողիկոսական գահին։ Հավատո վեմը և ընտրության անոթը հաստատեց Հայոց եկեղեցու հիմքերը և վերստին լուսավորելով՝ պայծառացրեց սուրբ Լուսավորչի և սուրբ թարգմանիչներ Սահակի ու Մեսրոպի նման, որովհետև օժտված էր թարգմանության շնորհով և միշտ ուսումնասիրում էր բոլոր ազգերի գրքերը և պիտանիները, որ մեր [մատենագրության] մեջ թերի էր գտնում, թարգմանում էր աշխատասիրաբար, ինքը և այլ ճարտար ոմանք, և ավանդում էր սուրբ եկեղեցուն։ Կարգում էր վկաների ու սուրբ այրերի տոները և պատվում նրանց պայծառագույն տոնախմբությամբ և նոր թարգմանած երկերով։ Ինքը ևս, վառվելով նրանց սիրո հրով, իր մշտաթոր արցունքները խառնում էր նրանց սուրբ և պատվական արյանը։ Վկաների նկատմամբ ունեցած ջերմեռանդ սիրո պատճառով ստացավ Վկայասեր անունը, որը պարծանաց հորջորջում է, և եկեղեցին, միշտ, վերագոչում է՝ լսելի բոլորին։ Հովվում էր Տիրոջից իրեն հանձնված հոտերը՝ քաջ հովվապետի օրինակով, և բոլորին տանում էր դալարագեղ վայրեր և հանգստավետ ջրեր՝ ի պահպանություն աստվածային պատվիրանների, մշտապես տքնում էր նրանց հոգու փրկության համար և իր համար հոգս չկար, քան նրանց անվնաս մնալն ապականիչ գայլերից։ Շրջում էր միշտ նրանց մեջ և խրատում բոլորին օրենքով շարժվել և անարատությամբ [հետևել] Տիրոջ պատվիրաններին։ Շրջում էր երբեմն գրաստով, երբեմն հետիոտն, և մարմնի շարչարանքը շատ քաղցր էր նրա համար՝ աստվածային [բաների] սիրուց։ Նա արհամարհում էր մարմնական բաները և նրան փուլթ չէր անցավոր փառքը, այսինքն՝ հեծնելիքը, փափկերախ երիվարների կամ զարդարուն ջորիների,

www.a-pdf.com

կամ զգեստների ճոխությունը, որով շատերն են արտաքուստ զարդարվում, ինչպես հայտնի է բոլորին: Նա չուներ նաև տուն հանգստի, որով հանգիստ տար մարմնի տկարությանը բազում չարչարանքից հետո: Կամ ինչ-որ մարմնական ժառանգություն [չէր] ստացել, կամ մի վայրում բնակություն հաստատել, այլ պանդխտելով շրջում էր երկրի վրա և սոված հոգիները կերակրում աստվածային խոսքով:

Գնում էր սուրբ Երուսաղեմ քաղաքը և երկրպագում այնտեղի սուրբ վայրերին և հասնում արևմուտք, ուր հայոց ազգից շատերն էին հանգրվանել, և լուսավորում էր նրանց հոգիները և հաստատում հավատի մեջ, գալիս հասնում էր Կոստանդնուպոլիս թագավորանիստ քաղաքը և հանդիպում թագավորին ու պատրիարքին, որոնք տեսնելով այդպիսի աստվածազգյաց հայրապետին՝ սուրբ Հոգու շնորհքով ու իմաստությամբ զարդարված, մեծ պատվով ընդունեցին նրան, մանավանդ երբ միմյանց հետ զրուցեցին հարցուփորձով՝ ըստ իմաստունների օրենքի և տեսան, որ նա անպակաս լիությամբ լցված է սուրբ Հոգու շնորհներով: Որովհետև գերազանց գիտեր հունարեն լեզուն ու դպրությունը և ըստ ամենայնի վարժ էր ու կիրթ գիտելիքով ու խոսքով, խոհեմ էր հարցադրումների մեջ, զգոն ու հանդարտ՝ պատասխանելիս: Դեմքի գեղեցկությունը բարեհաս ու հեզահայաց, և աստվածազարդ լեզվի խոսքերը՝ համեստ ու շատ քաղցր, որոնց սիրով կապվեցին թագավորը և բոլոր իմաստունների խումբը: Այնժամ Աստծու սուրբն իր խորագետ իմաստությամբ թագավորից ու պատրիարքից խնդրեց որոշ ժամանակ մնալ նրանց մոտ, ընթերցելով նրանց մատյանները և օգտվել: Համաձայնելով՝ բոլոր նրա հետ եկածներին նշանակեցին ոռճիկ ու կերակուր և հրամայեցին առանց խնայելու տալ նրան բոլոր մատյանները: Նա այնտեղ մնաց երկար ժամանակ և վերցրեց թարգմանեց սուրբ հայրերի վարքերը և վկաների պատմությունները, և ուղղափառ վարդապետների գրքերը, և ներբողական ճառեր՝ նվիրված տերունական տոներին և սրբերի հիշատակին: Եվ տալիս էր նրանց, որ իր հետ էին, ճարտար և իմաստուն այրերին՝ արագագիր գրչության և Բանի գիտության համար, որ վերցնելով շտապ թարգմանում էին և արբագրելով՝ մեր լեզվով ամենևին ողորկ շարադրելով քերթողական արվեստով:

Իսկ շատ ժամանակ անց բավարարվելով՝ լցվեցին այն բանով, որ փափագում էին, կասկածում է սուրբ հայրապետը՝ հունական խորամիտ ու գոռոզամիտ հին չարությամբ, եթե իմանան՝ չեն թույլ տա այնտեղից տանելու թարգմանած գրքերը: Ուստի նա հորդորեց իր հետ եղած ազգակիցներին, ընտրյալ այրերի խմբին և իր քրոջ որդուն, որ զարդարված էր երկու գեղեցկությամբ՝ մարմնի քաջագեղությամբ և հոգու պարկեշտությամբ ու սրբությամբ, ու տեր Գրիգորիս արքեպիսկոպոսին, իրենց ամբողջ ունեցածով նավ նստել և նախ՝ անցնել պաղեստինցոց սահմանները, իսկ ինքը քիչ օրեր անց՝ արքայից հրաման ստանալով, հրաժեշտ տվեց բոլորին, որ թեթևակի բացանավելով հասնի նրանց: Նրանք մտան նավ, ուժգին հողմ ելավ. նավը բռնությամբ տարավ, գցեց Եգիպտոս: Եվ քանի որ եգիպտացոց աշխարհը արաբացոց իշխանության տակ էր, մեծ վախ ապրեցին և սպասում էին, որ ավարի ու գերության կմատնվեն: Այնժամ տեր Գրիգորիսը իմաստուն միտք հղացավ. հագավ իր եկեղեցական զգեստը և եկեղեցականներին հագնել տվեց իրենց զգեստները: Զարդարվեցին և աշխարհականները ոսկեհուռ պատմուճաններով, որ ստացել էին Հունաց թագավորից, և բոլորը

www.a-pdf.com

զարդարված նստեցին. մեծամեծները՝ իրենց աստիճանի համաձայն, և փոքրերը կանգնեցին սպասարկության։

Ինչպես սովորություն էր՝ տեղի իշխանը մարդիկ ուղարկեց՝ տեսնելու և իմանալու, թե ինչ է, որ կա նավի մեջ կամ որտեղից են եկել։ Ուղարկվածները գնացին և տեսան պատվական այրերի՝ պես-պես զգեստներով գեղեցիկ զարդարված, հիացան սքանչելի կերպարանքներով և ափիբերան վերադարձան իշխանի մոտ ու պատմեցին նրան։ Այնժամ իշխանը վեր կացավ եկավ նրանց ողջունելու պատվով ու հնազանդությամբ և հարցրեց հեզությամբ, թե ովքեր են։ Եվ պատասխանեցին. «Հայոց կաթողիկոսի ազգականներն ու սպասավորներն ենք։ Նա մեզ առաջ ուղարկեց, որ ինքն ևս գա, որպեսզի տեսնենք սուրբ Սինա լեռը և այստեղի նախնի սրբերի միաբանները ու երկրպագելով՝ վերադառնանք մեր աշխարհը»։ Ապա իշխանը նրանց պատվով ընդունեց և մարդասիրաբար տեղավորեց և շտապ ուղարկեց՝ իրենց ամիրապետ մեծ խալիֆային հայտնեց, որն իրենց ազգի առաջնորդն էր, բարի և իմաստուն այր էր, առատաձեռն՝ պարգևելիս, քաղցր ու ողորմած բոլորի նկատմամբ։ Որը լսելով՝ շատ ուրախացավ և շտապ ուղարկեց՝ նրանց իր մոտ բերելու մեծ պատվով և տեսնելով՝ համբուրում էր ըղձական սիրով և տեղեկացավ, նրանց հարցնելով գալու պատճառը, մանավանդ ուրախացավ՝ իմանալով, որ սուրբ հայրապետը նույնպես պիտի գա, և հրամայեց նրան պատշաճ տեղ տրամադրել, և նրանց հարկ եղածը տալ առատորեն։ Իսկ տեր Գրիգորիս արքեպիսկոպոսը շտապ լուր է ուղարկում սուրբ հայրապետին, տեղեկացնում իրենց պատահածը և խնդրում արագ հասնել իրենց մոտ։ Եվ Աստծու սուրբն այս բանները լսելով՝ շտապ նավ նստեց ու հասավ այնտեղ։ Եվ բարեբարո խալիֆան իր մեծամեծներով նրան ընդառաջ գնաց, առավ համբուրեց սուրբ ձեռքերը և դրեց իր ճակատին ու երեսին, մեծ գոհությամբ օրհնություն տվեց Աստծուն, որ իրեն այդպիսի մեծ փարթամության [հանդիպելու] արժանացրեց։ Եվ հրամայեց նրան պատվական իջևան պատրաստել և նրանց տեղավորեց ինչպես արժանի էր, և սպասավորներ նշանակեց՝ պատրաստակամ հոգալու նրանց բոլոր կարիքները մեծագին և առատաբաշխ պարգևներով։ Եվ նրանց՝ մեծից փոքրը, լիացրեց ընծաներով, արաբական ոսկով և ուրիշ թանկարժեք բաներով, որ այն աշխարհը տալիս է տիեզերքին։ Ապա միմյանց տեսնելով բազում օրեր և շատ ու շատ զրուցելով՝ սուրբ հայրապետը խնդրեց թույլ տալ վերադառնալու իր երկիրը։ Իսկ նա բնավ չէր համաձայնում, թեև սուրբ հայրապետը պատճառաբանում էր և հիշում Աստծու երկյուղը, որ երկար ժամանակով իր ժողովրդին թողել է անառաջնորդ։ Ասում էր. «Աստծուց ինձ առաքված այսպիսի պարգևից ինչու զրկվեմ ու աղքատանամ»։ Նաև այլ պատճառներ էր բերում՝ [ասելով, որ] իր հովվելն այնտեղ իզուր է։ Իսկ նա հերքում էր պատճառաբանությունները և երդումով խոստանում երկիրը լցնել հայոց ազգով, որ և կատարեց, և այնտեղ շատ մեծ բազմություն կուտակվեց, մոտ տասը հազար տուն, և նրանց մեջ պատվավոր բազում իշխաններ ու հեծյալներ։ Եվ սուրբ հայրապետը, տեսնելով նրա չերմեռանդ ու գորովալի սերը, իր փոխարեն այնտեղ թողեց իր քրոջ որդուն, նրան ձեռնադրեց Եգիպտոսի կաթողիկոս և դրանով հաճեցրեց բարեբարո խալիֆային՝ թույլ տալու իրեն մեկնելու նրա երկրից։ Բայց մենք չենք կարող պատմել նրա բարեշնորհումները նորընծա հայրապետին ու իր ժողովրդին, քանի որ նախկինում ուրիշները գրել են մանրապատում ու ավելի ընդարձակ, որ ես կարդալով փոքրիշատե օգտագործեցի պատմությանս մեջ։

www.a-pdf.com

Իսկ Գրիգորիս հայրապետը, որ Եգիպտոսում էր, սուրբ և իմաստուն այր էր, աստվածային գիտությամբ ու շնորհներով զարդարված, առաքինությամբ նման սուրբ և վկայասեր հորը։ Նրան այնտեղ կարգելով՝ սուրբ հայրապետը Քրիստոսին է հանձնում հոտն ու հովիվը, և ինքը գալիս հասնում է այս կողմերը՝ Հայաստանյայց եկեղեցուն բերելով ադարակում ծածկված մեծ գանձը, որ իր ջանքով գտել ավանդում էր սուրբ եկեղեցուն և բոլորին հաստատում սիրով Աստծու նկատմամբ, հորդորում խոսքով ու գրով՝ արթուն և պատրաստ լինել հոգևոր գործերի։

Իսկ ինքը մտաբերում էր նախնիի վարքը, հիշում Լուսավորչի սխրանքը, որ աստվածային գործի կատարման համար ճգնում էր մենաստաններում։ Նույնպես և սա բնակվում էր Սև լեռան մենաստաններում՝ մշտապես զբաղվելով սուրբ Գրքի ընթերցանությամբ և աստվածախոս աղոթքներով։ Բազում տարիների ճգնությունից հետո գալիս է Քեսու քաղաքի կողմերը, աստվածասեր Վասիլ իշխանի մոտ, որի մականունը Գող էր։ Իր ազգակիցներից մեկին՝ Բասիլիոս անունով, սուրբ և աստվածահաճո այր, իր փոխարեն նշանակում է Քրիստոսի հոտի հովիվ ու վերատեսուչ և նրա բնակության տեղ է դարձնում սուրբ անապատը՝ Շուղր լեռան խորքում, և նրան է ավանդում երկու պատանյակներին՝ Գրիգորիսին ու Ներսեսին, իր քրոջ որդու՝ մեծազոր Ապիրատ իշխանի զավակներին։ Ապիրատը եղբայրն էր տեր Գրիգորի, որ Եգիպտոսում էր։ Նրան պատվիրում էր սնուցանել նրանց զգուշությամբ, ուսուցանել և խրատել Աստծու երկյուղով լինելու սուրբ Աթոսի ժառանգը, որ անհաջորդ չմնա իր նախնի սուրբ Գրիգորի զարմից։ Իսկ ինքը փոխվում է այս աշխարհից, բարվոք ծերությամբ ալևորվելով, մեծարված ու պատվված մեծ իշխան Վասիլից՝ կենդանվույն, իսկ մահից հետո թաղվեց Կարմիր վանքում, ոչ նախնիների դամբարաններում, այլ օտարների շիրիմների մեջ, իբրև մի պանդուխտ, ըստ Դավթի երգի՝ հովվապետ լինելով քառասուն տարի։

Դ. Սուրբ Բասիլիոս հայրապետը աշխատանքով անարատ ու անբիծ հովվապետությամբ ապրեց և մեծաջան աշխատանքով հալածեց չար մշակների դասերը, որոնք փառամոլ ախտերով բարձրացրին իրենց գլուխները Աստծու սուրբ եկեղեցու վրա՝ երբ զորացան հարավայրն ազգերը և Քրիստոսի արյունով ազատվածներին հարկատու դարձրին այլասեռների, և Տիրոջ ընծաների երախայրիքներն ու մարդկանց հոգու նվերները, որ ընծայված էին Աստծուն, պոռնիկների տրվեցին ու վատնվեցին չար գործերի վրա, որոնց իր իմաստությամբ վտարեց, հերքեց իբրև կատաղի գազանների ու ապականիչ գայլերի՝ Քրիստոսի հոտից։

Իսկ Ապիրատի մանուկներին, որ տրված էին իրեն ավանդ սուրբ հորից, սնում և վարժում էր իմաստությամբ, կրթում Տիրոջ երկյուղով։ Երբ [նրանցից] ավագը՝ Գրիգորիսը, հասավ արբունքի, նրան քահանայության աստիճանի կոչեց։ Ու մինչդեռ ուրախ էին, ի սուրբ Հոգին բերկրելով աստվածային վարքով, մահանում է սուրբ հայրապետ Բասիլիոսը։

Եվ այս կյանքից հեռանալուց առաջ դնում է եկեղեցի և Գրիգորիսի վրա կատարում եպիսկոպոսության ու հայրապետության կարգ և սուրբ Գրիգոր Վկայասեր հայրապետի ավանդը հաստնում ավարտի և ապա ելնում այստեղից՝ մեզ թողնելով Հեսուին՝ Մովսեսի և Եղիազարին՝ Ահարոնի հետ։

Ուրեմն, տեր Գրիգորիսը հոգևոր իշխանությամբ ամբողջ հայության կաթողիկոս է դառնում՝ նստելով ու զորանալով սուրբ Հոգուց, բարեզարդու-

www.a-pdf.com

թյամբ՝ ըստ Աստծու կամքի, հարդարում ամեն ինչ։ Եվ ըստ իր բնածին մեծ ու մեծիմաստ հանճարի լինում է բոլոր աստվածային գործերում բարիքի տնօրինող ընդհանրապես, կրթում Ներսես եղբորը աստվածային գրքեր իմաստների ուսման մեջ և սուրբ ու առաքինի գիտնական այրերին կարգում նրան դաստիարակ։ Որը նրանցից ստացավ Բանի սերմը՝ հարյուրներով, ինչպես արգավանդ պտղաբեր երկիր, և կրթության կարճ ժամանակի մեջ ցույց էր տալիս վարք և գիտություն, իմաստություն՝ շատ առաքինիներից ու գիտուններից վեհ։ Նրբայրը, տեսնելով այնպիսի բարեզարդությամբ արգասավորվելը, նրան սարկավագության կարգ է տալիս և քահանայի աստիճան։ Նա անմարմնաբար և աստվածայնորեն սպասավորում է մեղսաքավիչ և կենարար սուրբ խորհրդին, իր անձը շատերին բարության օրինակ ծառայեցնում և նախանձելի լինում ողջախոհ շեղվածներին՝ բարիք գործելու։ Որովհետև ամբողջովին վառված էր Աստծու սիրո հրով և հեռու էր մարմնական գիջությունից ու մոլի զբաղումներից և կարողանում է մարել այդպիսի բորբոքումը։

Դրանից հետո բազում եպիսկոպոսների և սուրբ այրերի ժողովով, մեծապայծառ հանդեսով նրան եպիսկոպոս ձեռնադրեցին արժանավոր ձեռնադրությամբ։ Իսկ սուրբ Ներսեսը քեպետ ընդունել էր պատիվը, բայց ոչ մի ցանկություն չուներ մարմնական ինչ-որ բաների, այսինքն՝ հագուստի կամ զրաոտի, կամ անցավոր մամոնայի ոեր, որոնցով խաբված՝ մեզանում շատերն են կուրանում իմանալի աչքերի տեսողությունից։ Այլ մարմնի մեջ լինելով անմարմնի նման, աստվածային բաների վերին տեսողության՝ զարմանալի տեսողություն ուներ [նրա] միտքը։ Մարմնական հանգիստ չունենալով՝ անդադար ժուժկալությամբ կրթվում էր աղոթքներով, Աստվածաշնչի ընթերցումով և միշտ ու հարակա այդ էր քննում։ Ուստի և սուրբ Հոգուց ընդունեց գիտության շնորհները,- առաքելական դասերից ոչ պակաս, որ վերնատանն ըմպեցին Հոգու բաժակը։

Մեկնաբանում էր սուրբ Գրքի խորին մտքերը, որով ժամանակի ընտրյալ վարդապետների դասերը զարմանում էին քաջակորով իմաստությունից և սքանչելի սուրբ ու հստակ ընկալումից։ Գրում էր հրաշատեսակ և վայելուչ զանազան կերպերով, վայելչագիր՝ ինչպես աստվածային մատներով շարած և հյուսած։ Եվ շնորհակիր ու աստվածաներկ մատների գծերը և բազմահանճար մտքի արտաբերած հոգեշարժ խոսքերը՝ օտար և գերբարձր էին երևում մարմնական գիտանքների և իրերի համեմատ։ Որովհետև մարդկանցից չէր ունեցածը, այլ՝ Հոր, Որդու և սուրբ Հոգու միջոցով էր, որովհետև մաքրել ու արդարել էր հոգին, մարմինն ու միտքը [իբրև] տաճար և բնակարան համագո երրորդության։

Ե. Իսկ սուրբ հայրապետ Գրիգորիսը, տեսնելով այսպիսի անպատմելի շնորհքն ու իմաստությունը՝ աղբյուրի պես բխած եղբորից՝ սուրբ Ներսեսից, խնդրում է նրանից հարազատաբար և հոգևոր սիրով՝ այնուհետև բանեցնել աստվածային շնորհքը և համալրել թերին եկեղեցու կարգերի մեջ՝ ապագային սուրբ եկեղեցում թողնելով իրենց հիշատակ։ Նա, ընդունելով աստվածային հայրապետի հրամաններն ու աղաչանքը, սկսում է երգել հոգևոր պաշտամունքի երգեր, որ պակաս և թերի էր գտնում։ Եվ սուրբ ձեռքի գրով ավանդում էր եկեղեցու մանուկներին, որոնք հավաքված էին նրանց մոտ բոլոր գավառներից՝ ուսուցանելու սուրբ աթոռին, իմաստուն և շնորհազգաց այրեր՝ եպիսկոպոսներից ու վարդապետներից, քահանաներից ու սարկա-

www.apdf.com

վագներից։ Որովհետև նրանց համար ավելի սիրելի բան չկար, քան ընտրյալ այրերի ու առաքինիների խումբը։ Որով հարմնացած Հայաստանյայց եկեղեցին, պայծառորեն ղարդարվելով, շքեղանում էր, հալածելով նրանից աղջամուղջի թանձր խավարը, որ իջել էր մեր ազգի անկումից և շատ ծուլ հովիվներից, և եկեղեցու՝ լուսավորիչների սահմանած կարգը վերացել էր մեր ազգի անիշխանութիւնից ու խրթնատեսակ անզարդութիւնամբ նսեմացել մոռացութեան խավարով։ Եվ նրանք բոլորովին նյութականի ձգտում չունեին, այլ՝ սուրբ եկեղեցու կարգերի և պայծառ մաքրութեամբ անբիծ սպասավորութեան Տիրոջ մեղսաքավիչ մարմնի և արյան, որոնք [Ներսեսը] պայծառացնում էր։ Եկեղեցականներին մաքուր ու վայելուչ զգեստներ էր ձևավորում և հոգևոր ու մարմնավոր սրբութեամբ սովորեցնում էր սպասարկել սուրբ խորհուրդներին։ Նորոգում էր եկեղեցու այն կարգերը, որ հաստատել էին առաջին սուրբ հայրերը և Հայաստանյայց եկեղեցին զարդարում էր անթերի ամբողջացմամբ։ Եվ հոգևոր երգերով ու քաղցրանվագ եղանակներով վայելչացնում էր սուրբ պատարագի խորհրդական երգերը, որպեսզի սուրբ խորհուրդը տեսնողների թանձրացած միտքը, նայելով այսպիսի պայծառ սպասավորութեանը և սարսափելի խորհրդածութեանը, կակղելով նրբանա զգայական տեսողութեամբ և օգտվի՝ հասնելով իմանալի դիտավորութեան։ Ուստի քիչ-քիչ ավելացնելով այդ նույնը՝ հասնեն ավելի մեծ չափերի և պարզաբար արժանանան պարզագույնի տեսութեան։ Քաղցրանվագ եղանակով երգում էր և տագի երգեր, ներդաշնակելով խոսքի իմաստին՝ տերունական առներին և առաքյալներին, մարգարեների ու մարտիրոսների հիշատակներին։

Ու թեպետ հրաշալի էին նրա երգերի խոսքերը, իմաստութեան առումով, բայց ավելի զարմանալի էին զանազան եղանակների արվեստները, որ միմյանց նման չէին հորինվում, ինչպես անապատելի և առատագույն գանձարանից՝ ճոխ ու հարուստ մտքից էր արտաբերում։ Եվ քանի որ նրա ասածները վայելուչ և շատ ողորկ էին և լի ոտքը Հոգով, այդ պատճառով հեշտութեամբ հիշվում էին դրանք, որովհետև ազով էին համեմված և կարծես ճարտար [վարպետների] ճախարակով ասշված էին անթերի ու անբիծ խոսքերով։ Տաղաչափութեամբ նաև վիպասանութիւններ էր հորինում՝ Հոմերոսի տաղերի նման չափաբերելով և ավարտելով մի հանգով, մանավանդ գերազանցելով հելլենական հռետորներին Հոգու իմաստներով։ Շարադրում էր աղոթական բանքեր նույն արվեստով՝ սկսելով նախահորից մինչև այս հավիտյանի վերջը և այնտեղ դնում էր միտքն ու զորութիւնը Հին և Նոր [կտակարանների] և տների ամբողջ հանգերը մի տառով էր հորինում։ Սրբաբան աստվածաբանութեամբ գրում էր նաև խոստովանական դավանութիւններ սուրբ Երրորդութեան և միասնական աստվածութեան և Որդու անօրինութեան մասին՝ ըստ սուրբ հայրերի ուղղափառ դավանութեան, նույն տաղաչափութեամբ, [որոնք] հույժ ընդունելի են ոս հավանելի ընդհանուր ուղղափառ եկեղեցիներին և իմաստախոհ քննողներին։

Գրում էր նաև ողբ մեծ եղեռնքի առման մասին, նույն արվեստով, շատ գեղեցիկ ու վայելուչ պատմութեամբ, որ հուզում է բոլոր ընթերցողներին։ Նաև նախկինում Մովսես Խորենացու պատմագրածը հայոց նախնիների մասին վերստին պատմում էր չափաբերելով, սկսած տիտանյան Բելից և մեր նախնի Հայկից հասցնում մինչև իրենց հայրերը և իրենք։ Գրեց և ներբողական ճառեր սուրբ հրեշտակապետների և երկնավոր զորքերի վերաբերյալ և այնտեղ բացահայտեց խորին մտքեր, որ թաքնված էին սուրբ

Գրքում։ Հորինեց և խորհրդական երգեր, պատշաճավոր նրանց տոնի օրերին և աստվածիմաստ շնորհքով պայծառացրեց նրանց հիշատակի օրը։ Զանազանակերպ կիրառություն էր տալիս այբուբենի տառերին և նրանց մեջ գտնում խոսքի բազում իմաստներ ու հոգևոր խրատներ, և շատ անգամ տների սկզբնատառերով իր սուրբ անունն էր կազմում, ինչպես և հայտնի է բոլորին։

Եվ անթերի լիությամբ լցված սուրբ Հոգու շնորհքով՝ համատարած ծովի պես միշտ ծփում էր ինքնիրեն։ Եվ մեր իշխանությունը վերացած էր, մեր եկեղեցին անզարդացած, և մեր երկիրը օտար ազգերից ավերված և հասած հետին չար ժամանակի, բոլորը սառել էին աստվածային սիրուց, և ոչ ոք չկար, որ այնպիսի աստվածային այրից խնդրեր իմաստալից ճառեր կամ խորին խորհուրդներ, մոռացված սուրբ կտակարանների մեկնություններ, որ օգուտ լինեն մեր ազգին՝ ապագային բարի հիշատակ թողնելով, հետո եկողներին։ Եվ սրա համար ծարավ էին մնում անսպառ աղբյուրից և աղքատ ու թափուր կատարյալ ճոխությունից։ Եվ քանի որ նա կատարյալ էր աստվածային իմաստությամբ, չէր ուզում առանց խնդրելու անիմաստ բաժանել Հոգու շնորհները և շնորհակալության փոխարեն պարսավանքի խոսքեր ստանալ։

Եվ արդ, թեև գիտությունն ստացել էր ուսումնասիրությամբ, ուստի մշտապես նրա մոտ լինում էր գրելու պատրաստ թանաք ու թուղթ։ Նա անպարապ, միշտ գիրքը ձեռքին կարդում էր, անդադար որոնում ու քննում նուրբ տեսողությամբ գրքերի խորին մտքերը, և եթե պատահեր, որ շատ երկարատև աշխատելիս մի փոքր թիկներ բազմոցին ու սակավ նիրհումով հանգստանար, նրա շրթունքները շարժվում էին ինչպես արթուն ժամանակ և խաղում սուրբ Հոգու թելադրանքով։ Որից հետո, ասես ինչ-որ խթանից զարթնում էր և իսկույն վերցնելով պատրաստի թուղթը՝ արագ-արագ գրում էր, որ տեսիլքով ստացած էր լինում սուրբ Հոգուց և նորից ննջում էր։ Եվ նույն կերպ էր լինում սա մշտապես։

Ուներ նաև ուրիշ հրաշալի շնորհ առաքինության։ Արդ, հենց հասունացման օրից մանուկներից ոչ մեկին անկատար անունով չկանչեց, որ ամեն տեսակ մարդիկ ունեն սովորաբար, և ոչ մեկին մականունով չկոչեց։ Այլ, որպես կրկնակի հոգեծնված և աստվածային լույսով լուսավորված, բոլորին՝ մեծին ու փոքրին, «Լույս» էր անվանում։ Նաև մարմնի զգայարաններն այնքան սանձեց ու հնազանդեցրեց Աստծու տված պատվիրանին, ասես անմարմին լիներ և իր կյանքի ամբողջ ժամանակը չխոսեց զվարճալի ու ծիծաղելի բաներ, այլ ինչ որ խոսում էր՝ հոգևոր բան էր լինում, բարության հորդոր, սիրո պատճառ, առաքինի գործերի խրատ, միշտ՝ ընթերցում և արժանավոր աղոթք սուրբ սրտից, խոսակցություն Աստծու հետ։ Մի՛ անձի, և՛ մարմնի բոլոր զգայություններն առաքինության երասաններով ուղղում էր դեպի աստվածային շավիղների անսայթաք ընթացք։ Պարկեշտությամբ պետքերի նկատմամբ, սուրբ և ամենամաքուր մարմնի ճնշումով [հերքելով] մարմնականը, իսպառ ցամաքեցնում էր մարմնական ցանկությունների աղբյուրը։

Նրա մեջ կար նաև այլ առաքինության կիրք, որ ավելի բարձր է ուրիշ բարեմասնություններից, որը խիստ դժվար է, որ երկրածիններից մեկը ստացական ջանքով կարողանա ձեռք բերել։ Ամենազարմանալի հեզություն եմ ասում, որն ուներ մեծ նախամարգարե Մովսեսի նման, որ ոչ թե մասնավոր ժամերի էր լինում, այլ իր կյանքի բոլոր օրերին ոչ մեկի վրա չբար-

www.a-pdf.com

www.a-pdf.com

կացավ։ Եվ եթե ինչ-որ պատճառով մեկը բարկության արժանի խոսք կամ գործ թույլ տար, նա չէր զայրանում կամ բարկություն ցույց տալիս, այլ հեզ ու շատ քաղցր ձայնով ասում էր. «Լույս, եթե ինձ չխնայեի՝ կբարկանայի քեզ վրա»։

Եվ սա նրա մշտական բարի սովորությունն էր, որ մարմնի բնությունից բարձր բան է։ Այդ տեսնելով՝ եղբայրը զոհանում էր Տիրոջից, որ այդպիսի մեծ փարթամության տեր և հավատի այնքան մեծ սյուն տեսավ հաստատված սուրբ եկեղեցում՝ իր ծնողների որովայնից։ Եվ նրա չծակցությամբ զարդերի անթերի հորինմամբ ճոխացնում էր Հայաստանյայց եկեղեցին։

Զ. Այն ժամանակ իսմայելական մահմեդական ազգի զորքերը խիստ հարձակմամբ տիրել էին արևելքից մինչև Եփրատի սահմանները։ Իսկ քրիստոնյաների զորությունն օրըստօրե նվազում էր, և նրանք մեր հանցանքների պատճառով վատթարանում էին։ Եվ քանի որ սա լինում էր Տիրոջից, մեր մեղքերի համար մեզ տկարացնում էր, իսկ նրանք կարծում էին, թե իրենց պաշտամունքը հաճո է Աստծուն, և տիրում են այսքան աշխարհների ու գավառների և զորազանալով գազանաբար հարձակվում, ուզում էին միանգամից մեջտեղից վերացնել քրիստոնյաներին։ Այդ ժամանակ հոյակապ և շատ վայելուչ Եդեսիա քաղաքը, որի տերն էր աստվածասեր կոմս Ճոսլինը, պաշարեցին անթիվ բազմությամբ՝ պես-պես հնարներով ու բազմադիմի նենգությամբ, ավարի առան և առհասարակ բոլորին սրով ու սուսերով կոտորեցին, այնքան, որ նրա հրապարակները ողողեցին արյունով։ Սկսեցին նաև այլ տեղեր գրավել և օր օրի նեղել քրիստոնյաներին մինչև Օվկիանոսի ափը։ Առան և Մարաշ քաղաքը՝ Գերմանիկեն, Մեծ Անտիոքի աշխարհից և մատրվեցին բնաջնջել քրիստոնյաներին։

Ու թեպետ Հայոց հայրապետները վտարված էին քնիկ աշխարհից, ուր ավազագույն առաջին աթոռն էր Շիրակավանում, բայց այդ ժամանակ տեր Գրիգորիսը տիեզերալույս եղբոր՝ Ներսեսի հետ բնակության կայան էին հաստատել Անտիոքի երկրում, Տլուք գավառում, Ծով կոչված փոքրիկ դղյակում։ Եվ աղոթում էին Տիրոջը իրենց փրկելու չարաթույն այլասեռներից ու մարդադեմ գազաններից։ Որ և փրկվեցին ու ազատվեցին ինչպես ճնճղուկը որսորդների որոգայթից, որովհետև Տերը նրանց ձեռք մեկնեց՝ ըստ մատգարեի։ Իսկ հետո տեսնելով մերայինների ուժի թուլությունը՝ վախեցան մնալ նախահիշյալ Ծով դղյակում, քանի որ այնքան ամրություն չուներ, որ կարող լիներ նրանց փրկել աշխարհակործան բարկությունից։ Որի համար նրանք վճռեցին ճանապարհ հարթել ինչպես ծովի ալիքների մեջ, և անցնել արևելք՝ հույս դնելով այնտեղ զորացած Վրաց տան իշխանների և Ափխազաց թագավորի վրա։ Բայց գթած Տերը, որ միշտ հասնում է արդարներին և չի թույլ տալիս նրանց կործանել, աստվածապես ներգործեց տնօրինաբար, նրանց պարգևեց Հռոմկլա անմատչելի ամրոցը՝ Եփրատ գրախտաբուխ գետի ափի մոտ, Եդեսիայի բարեբանված կոմս Ճոսլինի աստվածասեր տիկնոջ միջոցով։ Նրանք այնտեղ գնացին ազգականներով, ամբողջ զարմով ու սպասավորներով և սուրբ աթոռի ամբողջ կազմով, անդորրաբար հանգստացան չարալուկ բռնավորների երկյուղից ու կասկածներից։ Ու թեև շրջակա գավառներն այլազգիները գրավեցին մինչև Անտիոք, նրանք մնացին անփորձանք՝ տեղի ամրության պատճառով և երկնակառույց հզոր ձեռքի պահպանությամբ։

www.e-pdf.com

Իսկ սուրբ Գրիգորիս հայրապետը սուրբ եղբոր հետ աստվածային խոստությամբ խաղաղություն էր քարոզում բոլոր պետերին ու բռնավորներին, իժերի ու քարքերի հույլերին, եկեղեցու գառներին ոչնչացնող ամենաչար գազաններին, և բազում տարիներ բարվոք ծերության հասնելով՝ անդորրաբար մեծարդո էին և ընդունելի հավատի թշնամիներին։

Է. Այդ ժամանակ Փոյուգիայի լեռնային կողմերում տիրում էր քաջազոր իշխան Թորոսը։ Իսկ Օշին իշխանը տիրում էր Լամբրունի անառիկ դղյակին՝ Տավրոսի լեռներում, բարձրադիր Տարսոն մայրաքաղաքում։ Եվ շարի ազգումով միմյանց դեմ թշնամանում էին և այդ պատճառով ոչ քիչ խռովություններ ու արյան հեղմունք էր լինում երկու իշխանների միջև։ Այսպես հարկ եղավ, որ սրբազան տեր Գրիգորիս կաթողիկոսը իր կորովաբիբ ու իմաստուն եղբորը՝ տեր Ներսես արքեպիսկոպոսին ուղարկեր նրանց մոտ, միգուցե իր խոհեմությամբ նրանց միջև հաշտություն հաստատեր։ Եվ նա պատրաստակամությամբ ճանապարհ ընկավ, գնաց նրանց մոտ և վստահված գործն իր միջնորդությամբ կատարեց հաջողապես։

Եվ այն ժամանակ ճանապարհին պատահաբար նա մտնում է Մամուեստացոց քաղաքը, ուր մի թագավորազարմ իշխան կար՝ ուղարկված հունաց կիսմանուել ինքնակալի կողմից, կարգված արևելյան կողմերի դուքս։ Նա թագավորի փեսան էր, կորովամիտ ու հանճարեղ մարդ, պատվով՝ առաջին հեծյալներից։ Սա տեսավ մեծահանճար իմաստասերին ու տիեզերալույս վարդապետին, Հայոց խոհական առաջնորդին, հույժ ուրախացավ մեծ ուրախությամբ և հայտարարեց.

— Մեծ տենչ և խղճ ու բազմանք ունեի խոսելու ձեզ հետ Աստվածաշունչ գրքի շուրջը։

Այնժամ իմաստների մեջ կատարյալը ուրախությամբ ընդունում է խնդրանքը, և հաբցնելի պատասխանը գոհացնում բարեպաշտ իշխանին։ Եվ նա թախանձեց երանելիին, որպեսզի Հայոց դավանությունը, որ բանավոր ասել էր, գրավոր շաբադրած տա իրեն։ Սուրբը հավանեց հաճո խընդրանքը՝ կատարելով հավատով խնդրածը, գրեց մեր հավատո դավանությունը, եկեղեցու կարգերը և հանձնեց նախահիշյալ բարեպաշտ իշխանին այսպես. «Խոստովանում ենք ամենասուրբ Երրորդություն՝ Հայր, Որդի և սուրբ Հոգի, երեք անձի բաժանված, և մեկ բնության և աստվածության մեջ միացած։ Անծին և անսկիզբ Հայրն առաջ է, քան հավերժը։ Որդին ծնված է Հոր բնությունից անախտ և անմարմին, ժամանակներից առաջ։ Սուրբ Հոգին բխումն է Հորից, ոչ Որդու ծննդի նման, այլ առաջացած աղբյուրի պես։ Այս պարագան միայն իրեն է քննելի և անիմանալի է արարածների համար։ Եվ Հայրը չկար մի ժամանակ, որ Որդին ու Հոգին նրա հետ չլինեին, այլ՝ Հայրը միշտ որպես Հայր և ոչ քե հետո ստացավ հայրության կոչում։ Նույնպես և Որդին միշտ Որդի էր, մշտնջենորեն իր Հոր հետ։ Այդպես և սուրբ Հոգին մի Աստծու Հոգի էր, անբաժանելի Հորից ու Որդուց։ Մեկ էություն, մեկ իշխանություն, մեկ կամք և մեկ արարչագործ զորություն իմացվում է երեք անձնավորությամբ, ո՛չ ավագ, ո՛չ կրտսեր, ո՛չ բարձր, ո՛չ ցածր, ո՛չ առավել և ո՛չ նվազ, այլ մեկ կարգ, մեկ պաշտոն, մեկ երկրպագություն դավանում է սուրբ Երրորդությանը, որով ոչնչից գոյացան բոլոր եղածները, երկինքն ու երկնավորները, երկիրը և երկրավորները, երևելի և աներևույթ արարածներն առաջին արարչությամբ ստեղծված։ Իսկ երկրորդին Երրորդությունից մեկը՝ Հոր Բան Միածին Որդին՝ Հոր և սուրբ Հոգու կամքով,

www.e-pdf.com

Գաբրիել հրեշտակապետի ավետումով իջավ կույս Մարիամի որովայնը. չպակասելով Հար ծոցից՝ ըստ աստվածային անսահմանափակ բնության: Եվ ինքն ստանալով ամենամաքուր կույսի արյունից, որ Ադամի նյութից էր և միացրեց իր աստվածային անքննելի ու անճառելի խառնումով և եղավ երկու կատարյալ բնություններից՝ աստվածային և մարդկային, մեկ անձնավորություն. կատարելապես անայլայլելի ու անբաժանելի բնությամբ: Մարդկային թանձր ու հոդավոր բնությունը չփոխելով Աստծու անհոգ և պարզ բնության՝ կորցնելով իրենը: Եվ Աստծու պարզ ու անմարմին բնությունը չխառնեց մարդու բնությանը, վրիպեց իր հավերժ պարզությունից, թեև ասվում է, թե անմարմինը մարմնացավ և Բանը թանձրացավ անքակտելի միության համար: Բայցև անմարմինը՝ Բանը, խառնվում է մարմնի հետ և իր հետ միացնում մարդկային բնությունը՝ նրան խառնումով ու միավորումով աստվածացնելով, միավորվելիս չկրելով փոփոխություն կամ այլայլում, ինչպես և մարդկային հոգին ու մարմինը. թեպետ ճշմարտությունը համարվում է օրինակից բարձր, ինչպես Արարչին ու արարածին համեմատելիս: Այլ մերը միավորեց իրենի հետ անհասանելի ձևով, և մնացին անփոփոխ վերցնողն ու վերցրածը: Ոչ թե պարունակելով, ինչպես ամանի օդն ու ջուրը, որ թափվելիս դատարկվում է, այլ էապես միացած ավելի քան Բանը՝ անբաժանելի ու անշփոթ միությամբ: Եվ ստանալով Ադամի բնությունը՝ ոչ թե դրախտի անմեղության, այլ մեղանչելուց և ապականվելուց հետո, որովհետև նաև Մարիամ կույսը, որից մարմնացավ Քրիստոս, մեղանչած Ադամի բնությունից էր: Բայց միավորվելով Աստծու բնության հետ՝ մեղանչականն անմեղ դարձավ, և ապականացուն՝ անգոյանելի ապականության կրքից ազատ, ինչպես հրով հալչող նյութերը, երբ միանում են հրին, եթե նրանց վրա ապականության ժանգ կա՝ մաքրվում է, իսկ բնությունը, ապականությունից մաքրվելով, մնում է անմահելի: Որովհետև ում ծնունդն անապական կույսից էր սկզբում, վերջը ևս անապական է. նրա մարմինը գերեզմանում չապականվեց. պետք է որ ժամանակի մեջ ծնվելիս և մահանալիս անապական լինի: Հարկավոր և կամավոր կրքին չենք ասում անապական, այսինքն՝ քաղցին, ծարավին, ննջելուն և հոգնելուն, տրտմելուն և արտասվելուն, որոնք ճշմարիտ և ոչ երևույթով մեզ ցույց են տալիս ապականություն: Քանի որ նրա մեջ կար բան, որ նման էր մերին, և կար, որ մերից բարձր էր. ըստ գրվածի, թե մարդ է և բարձր, քան մարդը, և թե՝ մարդ է, և ո՞վ կճանաչի նրան:

Արդ, այսպիսի եղանակով եղավ միավորությունը Կույսի արգանդում. բնակվեց նրա մեջ իննամսյա ժամկետով, գումարած հինգ օր՝ ըստ անդրանիկության: Եվ նա, որ կարող էր մեկ վայրկյանում լինել կատարյալ, զարգանում է օրըստօրե աճելով, որպեսզի դրանով կանխվի այն կարծիքը, թե մարդեղությունը երևակայական է: Եվ մարդացյալ Աստվածը ծնվում է իբրև մարդ, ծնողի կուսությունը պահելով անապական, որ և ծնունդն օրհնի անեծքներից և նախապատիվ համարի կուսությունը: Ութօրյա՝ թլփատվեց, որ հայրերի նկատմամբ ուխտը կատարի և մեզ սովորեցնի սրտի հոգևոր թլփատությունը: Քառասնօրյա՝ Տաճարը եկավ ըստ օրենքի ընծայվելու, որպեսզի մարդկային բնությունն իրենով Հորն ընծայի բարձունքներում: Փառավ Եգիպտոս, որ կռապաշտության մայրաքաղաքն աստվածապաշտության դարձնի և խրատի մեզ՝ նրա հետ հալածվելով փախչել հոժարակամ: Աշխարհում երեսուն տարի շրջեց աղքատությամբ ու խոնարհությամբ՝ ծածկելով աստվածությունը, որպեսզի մեզ ճոխացնելով բարձրացնի, երբ նույն

www.a-pdf.com

ճանապարհին հետևող լինենք։ Երեսուն տարին լրանալով՝ եկավ Հորդանան, Հոր վկայությամբ հայտնի դարձրեց իր աստվածային փառքը, թե՝ «Դա է իմ սիրելի որդին»,— և Հոգու աղավնակերպ իջմամբ։ Մկրտվեց Հովհաննեսի ձեռքով, որ ջրերը սրբի և մեղքի բնությունն ընկղմի նրա մեջ և մեկ տա հոգևոր մկրտություն՝ ըստ Հովհաննեսի վկայության, թե՝ «Նա ձեզ կմկրտի սուրբ Հոգով և հրով»։ Երկրորդ Ադամն առաջին քառասուն օրը պահք արեց Ադամի համար, որ չպահեց, և մարդկանց հաղթողին հաղթեց երեք փորձությամբ։ Ապա դրանից հետո իր ծածուկ աստվածային զորությունը հայտնի դարձրեց աշխարհին։ Դևեր հալածելով, հիվանդներ բուժելով, մեռելներին հարություն տալով, ծովի վրա՝ ինչպես ցամաքին, քայլելով, քիչ հացով շատերին կերակրելով, արարածների բնությունը փոփոխելով ըստ ցանկության, ջուրը՝ գինի ու կավը լույս դարձնելով և իր աստվածագիտության լույսը, որ ծածկված էր ինչպես վարագույրով, մարմնի հետ հայտնի դարձրեց իր աշակերտներին Թաբոր լեռան վրա, հայտնությունից առաջ, իրեն տեր հռչակեց կենդանիների և մեռյալների, Մովսեսի ու Եղիայի իշխանական կոչով։ Այնուհետև կամովին գալիս է Երուսաղեմ չարչարվելու, որպեսզի կատարի Օրինաց և մարգարեների գրքերի [խոսքը]։ Էշ ու ավանակ է հեծնում իբրև օրինական հրեանների և հեթանոսների եկեղեցու։ Ջատիկն է կատարում ըստ օրենքը, որ Հինը՝ Նորի և սովերը ճշմարտության փոխարկի։ Լվանում է աշակերտների ոտքերը, որ մաքրի հանցանքը նախահոր ոտքերի, որոնք ընթացան գեպի գիտության ծառը։ Իր մարմինը տալիս է կերակուր կյանքի և արյունը՝ մեղքերի քավության, որպեսզի պտղի ճաշակմամբ մահացածներս կենդանանանք՝ սրանք ճաշակելով։ Իմ բնությամբ աղոթում է Հորը ինձ համար, որ վերադարձնի առաջին փառքին ու աղոթքի օրինակ տա մեզ մեր փրկության պահին։ Տրտմեց և արտասվեց երկնավորների ու երկրավորների ուրախության պատճառը, որպեսզի բոլոր երեսներից ջնջի արտասուրը— ըստ Եսայիի։ Վախեցավ, որ վերացնի մեր մահվան երկյուղը, քրտնեց, որ սրբի Ադամի երեսի քրտինքը, ապտակվեց, որ պատռի նախահոր ամոթի ծածկույթը, խմեց լեղին, որ դառն մեղքի համը քաղցրացնի, մեխվեց խաչին, որ մեզ ազատի կապանքներից և շնորհի կյանքի փայտ մահվան փայտի փոխարեն. իշխանաբար մեռավ մեր մարդկային մահկանացու բնությամբ և մնաց կենդանի աստվածային անմահ բնությամբ։ Ոչ թե մեկը մեռած և մեկը կենդանի՝ համաձայն հերձվածողների, այլ մի և նույն անձնավորություն, և մի Քրիստոսը չարչարվում և մեռնում էր մահկանացու մարմնով, որ մեզնից է, և կենդանի էր անմահ ու կենդանարար աստվածությամբը, որ Հորից է։ Ինչպես սուրբ Աթանաս է ասում. «Մահկանացու մարմինը չվնասեց անմահ աստվածությանը, քանի որ անախտ էր, այլ մնաց ինքն ևս անախտ՝ անմահի զորությամբ»։ Եվ քիչ հետո ասում է՝ մահկանացուներիս համագոյակցի մարմնի մահը եղավ։ Որի համար և մենք խոստովանում ենք Քրիստոսին Աստված և մարդ։ Սա ասում ենք ոչ բաժանելու նպատակով, ո՛չ, որովհետև նա ինքը չարչարվել է՝ աստվածային բնությամբ լինելով անփոփոխելի և անչարչարելի, իսկ մարմնով չարչարվեց և ճաշակեց մահը։ Ուստի մոլորվում են նրանք, որ ասում են, թե այլ մեկն էր չարչարվողը և ուրիշ մեկը՝ չչարչարվողը։ Բայց այլ մեկը չէ, քան Բանը, որ չարչարվեց և մարմնով մահն ընդունեց։ Չէ՞ որ նույն անչարչարելի և անմարմին Բանը հանձն առավ լինել չարչարելի մարմին, որպեսզի չարչարվելով փրկե մարդկանց։ Որովհետև չարչարվում էր Բանի մարմինը՝ ինչ որ մարդեղենն էր, և Բանը նրա հետ էր, և շատ հրաշափառ [երևույթ] էր.

www.a-pdf.com

որովհետև ինքն էր, որ չարչարվում էր։ Չարչարվում էր չարչարելիով, և ի՛ր մարմինն էր չարչարվում, բայց և ինքն առանց չարչարանքի էր և անբաժանելի՝ չարչարված մարմնից։ Որովհետև Բանը, լինելով Աստված, բնությամբ անչարչարելի էր, բայց չարչարելի մարմնի հետ մարմինը մնացել էր անբաժանելի։ Եվ մարմինն ուներ անչարչարելի Բանը՝ իր տկարության վերացնողը։ Սրանք [ասում է] Աթանասիոսը։

Նրա հետ և մենք անբաժանելի ենք դավանում աստվածությունը՝ մարմնից ու մարդկեղեն հոգուց՝ մահանալուց հետո, և երբ հայտնվեց խաչի վրա և գերեզմանի մեջ մարմնով, աստվածությամբ Հոր աջ կողմն էր, և իր փառքով լի էին երկինքն ու երկիրը։ Նրա հետ երկրի վրա էր և Հայրը, ինչպես և ասաց. «Իմ Հայրն ինձ հետ է, և ինձ մենակ չթողեց, որովհետև ուր Հայրն է՝ այնտեղ են և Որդին ու Հոգին, և ուր Որդին է, այնտեղ՝ Հոգին ու Հայրը, և ուր սուրբ Հոգին է, այնտեղ են Հայրն ու Որդին»։ Արդ, իջնելով գերեզման, մեռած մարմնով և կենդանի աստվածությամբ, ավերեց դժոխքը և երրորդ օրը հարություն առավ, իր հետ մեղքի մեռածությունից հարություն տվեց հավատացյալ մարդկանց հոգիներին, և մարմնին հույս տվեց իր նմանությամբ՝ երկրորդ գալստյան։ Եվ քառասուն օր անց երկինք բարձրացավ նույն մարմնով՝ առաքյալների աչքի առաջ, և նստեց Հոր մեծության աջ կողմը, բարձունքին, ըստ առաքյալների։ Գալու է մարդկային մարմնով, որով համբարձավ, դատելու կենդանիներին ու մեռյալներին արդարությամբ ու յուրաքանչյուրին՝ ըստ գործերի հատուցելու։

Ուրեմն՝ սուրբ երրորդության և Քրիստոսի տնօրինության վերաբերյալ մեր հավատի խոստովանությունն է սա, որ համառոտ խոսքով շարադրեցինք»։

Ը. Այս ուղղափառ դավանությունից հետո երանելի հայրապետը գրում է նաև Հայաստանյայց եկեղեցու կարգերի մասին և նախնիների կարգած տոների պատճառները և լուսավոր, Աստծուց ստացած խոսքով ամբողջը ցույց է տալիս [սուրբ] Գրքի վկայությամբ, որ մենք ստացել ենք առաքյալներից ու նրանց հետևորդներից։ Ստանալով այն՝ իմաստուն այրը պարգևական ընծաներով պատվեց երանելիին և խաղաղությամբ ճանապարհ դրեց։ Նա վերադարձավ հայրապետական աթոռը՝ նախապատիվ եղբոր մոտ։

Իսկ դուքսը, երբ լրացավ իր իշխանության ժամկետը, դարձավ Թագավորական Կոստանդնուպոլիս քաղաքը և տարավ ցույց տվեց Հայաստանյայց հավատո հանգանակը բարեպաշտ արքային, որի անունը Մանուիլ էր, և իրենց հայրապետին՝ մեծ եկեղեցու կղերականներով հանդերձ։ Արքան սքանչացավ, հիացավ, տեսնելով իմաստների զորությունը, որ պարունակում էին խոսքերը, հաճեց-հավանեց և ուղղադավան խոստովանությունը և պալատի ներքինիներից մեկին թագավորական հրամանով շտապ ուղարկում է հրավիրելու սուրբ եպիսկոպոսին, նամակ գրելով նախապատիվ եղբորը՝ տեր Գրիգորիսին, այդ հարցով, որ անհապաղ եղբորն ուղարկի Թագավորական քաղաքը՝ պատրիարքի, սուրբ ժողովի և աստվածասեր արքայի մոտ, որպեսզի գործը օրինական կերպով տնօրինի ըստ Աստծու, վերացնի մեր միջի պատճառը, և Քրիստոս չհամարվի վեմ գլորման և քար գայթակղության, այլ՝ երկու որմերը միացնող անկյունաքար, և բոլորս մեկ լիննենք ի Քրիստոս։

Առաքված այրն անցնում է բազում գավառներով, գալիս հասնում է Միջագետք աշխարհը, հայրապետական աթոռը, որ սկզբում ցույց տվինք։

www.e-pdf.com

Եվ այն տարին մահացել էր տեր Գրիգորիս կաթողիկոսը Հայոց վեց հարյուր և տասներեք (1164) թվականին և աթոռին կարգել էր իր եղբայր տեր Ներսեհին։ [Հույն նվիրակը] արքայական նամակը մատուցեց նորապսակ հայրապետին, որ [արքան] գրել էր նրա եղբորը։ Բանավոր պատմեց նաև րաբեպաշտ թագավորի փափագը եկեղեցու խաղաղության վերաբերյալ։ Իսկ նա, ականջը մոտեցնելով, ամեն ինչ լսում է քաղցրությամբ և ուշք դարձնում զորավոր խոսքերին։ Եվ քանի որ այն ժամանակ անհնարին էր կատարել թագավորի խնդրանքը, նրա՝ եկեղեցական հոգսերով ծանրաբեռնված լինելու պատճառով, [սուրբ Ներսեսը] պատասխան է գրում թագավորին և վերստին կրկնում մեր հավատի դավանությունը՝ արքայի խնդրանքի համաձայն, և նշում է իր՝ թագավորի մոտ չգնալու պատճառները և պատվով հետ է վերադարձնում թագավորական սուրհանդակին։

Թ. Բայց մենք չպետք է մոռացության տանք սուրբ հայրապետի՝ այս աշխարհից փոխվելու հանգամանքը և տիեզերալույս եղբոր հաջորդելը աթոռին։

Ուրեմն՝ երանելի տեր Գրիգորիս սուրբ հայրապետը երկար ժամանակ մնաց անդադար կենցաղավարությամբ և հավվեց բարվոք հոտը, որը տվել էր նրան Քրիստոս ըստ Պետրոսի, թե՝ «Արածե իմ ոչխարները»։ Նա հովվապետ եղավ երիտասարդ տարիքից և հասավ կատարյալ հասակի՝ նախկին առաջնորդների կարգով։ Մահից առաջ սուրբ Հոգու ազդեցությամբ կանչեց եպիսկոպոսներին ու վարդապետներին և լեռան սուրբ հայրերին, նաև ուրիշ կողմերում եղածներին՝ եղբոր ձեռնադրության։ Ու թեև սուրբ Ներսեսը հրաժարվում էր կաշումից, իրեն անարժան համարելով մեծ պաշտոնին, բայց եղբոր, ժողովի հարկադրմամբ նրան ձեռնադրեցին Հայկի ազգի և Թորգոմի տան կաթողիկոսական աթոռին։ Եվ երբ կատարեց հրամայված գործը, որ նրան ազդվել էր ի վերուստ, երեք ամիս անց առ Քրիստոս փոխվեց, դավելով հայրերի շարքը՝ հայրապետը արդարության համար հալածվածների հետ՝ համբերողը հալածանքներին ու զանազան փորձությունների ճշմարտության հակառակորդների ձեռքով։ Եվ նրա մահը Տիրոջ առջև պատվավոր եղավ ըստ մարգարեի. Հայոց ազգի հովվապետը եղավ հիսուներեք տարի։

Իսկ սուրբ և ամեն երանության արժանի Ներսեսը, արժանավոր կոչմամբ նստելով հայրապետական աթոռին, մեծ վարանումով տքնում էր, գիշեր ու ցերեկ հոգ տանում, թե ինչպես կարողանա իր հավատացյալ հոտը քաջ հովվապետի նման հովվել, որ ոչ ոք, անմարմին գազանի որս դառնալով, չհոշոտվի և գիշատված կորչի։ Որովհետև, ինչպես վերևում ասացինք, ամբողջ աշխարհն այլասեռների ձեռքին էր, իսկ մեր ազգը՝ նրանց մեջ ցրված տիեզերքով մեկ, և հնար չկար շրջելու նրանց մեջ ու խրատելու նրանց կամ ուղղելու սուրբ առաքյալների նմանությամբ՝ ժամանակի չարության և անիշխանության պատճառով։ Մեր ազգը նաև թագավորական քաղաք չուներ, որ այնտեղ նստելով հայրապետական ու վարդապետության աթոռին, գիշեր-ցերեկ մեր ժողովրդին ուսուցաներ աստվածային պատվիրանները։ Ու քանի որ անուշադրության մատնելն ու չհովվելն անհավատության նշան էր համարվում, տեսնելով գայլերի կողմից հափշտակված գառներին և անտեսելով, ապա բազում և այլազան հոգսերով անհանգստանալուց հետո մտածում էր գրել և առաքել ընդհանրապես բոլորին և ամենքին առել Աստծու պատվիրանները Հին և Նոր կտակարաններում, որոնով նմանվելով Պետրոս առաքյալին, որ ոչ միայն շրջելով օտար աշխարհում, քարոզում էր Ավե-

www.e-pdf.com

տարանը, ինչպեսև ասվում էր, թե՝ «Երուսաղեմից մինչև Լյուրիկիա», այլև կապանքների մեջ լինելով՝ նամակներով էր հաստատում աշակերտածներին։

Այս գաղափարը հաստատելով շրջաբերական գիր է գրում և ուղարկում ամբողջ աշխարհով մեկ, արևելք և արևմուտք, միջերկրայք և տիեղերքով ցրված զանազան տեղեր։ Եվ բոլորին զգուշացնում էր՝ պահպանելու աստվածային պատվիրանները։ Եպիսկոպոսներին, երեցներին, վանականներին, իշխաններին, դինվորներին, քաղաքացիներին, ամիկներին և բոլորին յուրաքանչյուր կարգից, խրատում էր կանոնական սահմանադրությամբ, ինչպես որ այսօր մեր մեջ հայտնի են գրածները...

Ժ. Վերստին գործի էր դնում ողորմությունը իր բարձր, որ նախկին սովորությամբ ուներ, և իր բարձր աստիճանի համեմատ ավելացնում էր աղքատների ողորմությունը՝ բացահայտ կամ ծածուկ։ Քանի որ սովոր էր աշակերտներից ոմանց անսպասելի ուղարկել իմանալու և քննելու, թե ով կա տնանկ ու հետին աղքատության հասած, բայց ամաչում է գալու ողորմության ընդհանուր բաշխմանը և ճանաչվելու։ Երբ իմանում էր՝ նրանց տալիս էր առատ ոսկու ծրարներ և հրամայում գիշերով գցել նրանց երդիկից կամ պատուհանից ներս, որ նրանք իրենց կարիքները հոգան։ Եվ զգուշորեն պատվիրում էր, որ ոչ ոք չիմանա։ Եվ սրանով նմանվում էր սքանչելագործ Նիկողայոս Հայրապետին։ Եվ բազում ու պես-պես առաքինություններով նա նմանվում էր նախնի սրբերին. մշտական աղոթքը սուրբ սրտից, սրբության պահքերը, համբերությունը հոգևոր պատերազմի ճիգերով, սերը առ Աստված և ամեն-ամեն ինչ, բարության նախանձախնդրությունը, ուղիղ հավատը, հույսը առ Աստված, անբավ հեզությունը, ամենքի հետ ամեն ինչ լինելը, համբերատարությամբ աշխատելիս, աստվածային խոսքերը միշտ և հարաժամ կարդալով ու գրելով և նույնը խոկալով անդադար։ Եվ բարության բոլոր մյուս տեսակները, որ մեկ առ մեկ պատմելու համար տկարանում է [մարդու] լեզուն։ Մտքում հաստատապես ուներ և Պողոսի գրածները Տիմոթեոսին, թե Շտապողական ձեռնադրությամբ կցորդ չդառնաս օտարների մեղքերին։ Եվ ուրիշ մեկին Եպիսկոպոսության աստիճանի չէր կոչում, այլ միայն իմաստուն և գիտնական այրերի, որ վարժ ու կիրթ լինեին Աստծու օրենքներին և կապված նրա երկյուղին։ Որոնց մեծ զգուշությամբ ու համբերատար քննությամբ էր ընտրում երկար օրեր, ժամանակներ և ապա պես-պես ուսուցումից ու խրատելուց հետո արժանի էր դարձնում հովվության աստիճանի։ Եվ այդպես բարվոք հովվապետությամբ Տիրոջ՝ իրեն վստահած հոտը լուսավորում էր աստվածային գիտությամբ, կանաչագեղ ու ջրավետ վայրերում։ Եվ ոչ մի անցողիկ բան նրան չէր գրավում, այլ միայն՝ գործել մարդկանց հոգու փրկության համար, որով իր ամեներջանիկ և լուսափայլ հոգին առավել պայծառ էր զարդարում։ Քանի որ իր մեջ եղած աստվածային իմացությամբ գիտեր՝ չկա Աստծուն ավելի սիրելի բան, քան մարդկանց փրկությունը, որի համար և մեր Տերն Աստված իր անձը զոհեց։

Ուստի այդպես միշտ խրատում էր մերձավորներին աստվածիմաստ խոսքով, և հեռավորներին օգնում էր խրատելով աստվածաշնորհ ձեռքի գրություններով, քանի որ ուր կարդում էին նրա շնորհալից նամակները՝ ինչպես նրա աստվածահրաշ դեմքից պատկառում էին։ Եվ այնժամ առանց ձանձրանալու հոժարությամբ աստվածային սիրով հարցնողներին պատասխանում էր խոսքով ու գրով։ Դժվարամարս և տարակուսելի հարցերը հա-

www.a-pdf.com

ճիշի և ավելի քաղցր էր մեկնում ու մուծում հարցնողների իմանալի ոգու և մտքի մեջ՝ ի վերուստ իրեն տրված առատապարգև շնորհների համաձայն։ Եվ առհասարակ բոլորին ուրախացնում էր ամեն խնդրում, իր հոգեծին և մշտաբուխ շնորհների աղբյուրից։ Մեղանչածներին միշտ խրատում էր ու հանդիմանում, ավելի քաղցր և ողոք խոսքով կյանքի էր դարձնում։ Եվ սրբերին ու առաքինիներին հորդորում էր կրկնապատկել բարի գործերը։ Վանքերում ծեր ու վտանգված եղբայրներին պարգևում էր դահեկաններ և զգեստ՝ նրանց կարիքների համար։ Եկեղեցին զարդարում էր ոսկե ու արծաթե անոթներով և ավելի պայծառ ոսկենախշ շորերով Տիրոջ սուրբ մարմինը և արյունը բաշխելու, հորդորում բոլորին՝ իմանալի և զգալի պայծառությամբ սպասավորել կենարար և երկրպագելի սուրբ խորհրդին։

Եվ թե իմանար, որ մի տեղ կա մի երեց կամ սարկավագ, որ շնորհալի է և սեր ունի հոգևոր գործառնությանց, շտապ նամակով իր մոտ էր կանչում և առավել ևս հորդորում նույնը, և ուսուցանում ու խրատում հարաժամ։ Եվ նրան շատ սիրելի էր նա, որ նախանձախնդրություն ու ողջախոհություն ուներ աստվածային շնորհների ու բարության, որոնք թեև հոգևոր [գործերով] ճոխացնում էր, այլև մարմնականով անփարթամ չէր թողնում։ Եվ որպես Աստծուն լծակցած նրանից շնորհքով պատվվածներին ինքը ևս պատվում էր, սիրում, հարգում աննախանձ մտքով, իբրև բարի, գթած և որդեսեր հայր։

Որի համար Հայաստանյայց ընդհանուր եկեղեցին սուրբ հայրապետ Ներսեսի ժամանակ լուսավորվեց նրա շնորհներով և ուրախացավ նրա շատ աստվածային հովվապետությամբ, ամեն տեղ գոհանում էին Տիրոջից, որ սուրբ Գրիգորի զարմից այնպիսի լուսավորիչ պարգևեց իրենց հետին ժամանակս, և ուրախ էին բոլորը ի Տեր։

ԺԱ. Բայց մեզ անհրաժեշտ է վերստին անդրադառնալ հռոմների արքային վերաբերող խոսքին, որ սկսվել էր սուրբ հայրապետի հետ միաբանության խնդրի առիթով։ Արդ, թագավորը, ձեռքն առած սուրբ հայրապետ Ներսեսի նամակները, գնաց մեծ եկեղեցին, ցույց տվեց տիեզերական հայրապետին և եկեղեցականների միագումար դասերին։ Նրանք հավանությամբ ընդունեցին և հրաժարվեցին առաջին գայթակղությունից, որ ունեին Հայոց եկեղեցու նկատմամբ, և մանավանդ սկիզբ էին դնում միավորման՝ լուծարելով պառակտման կնճիռը։ Բայց որովհետև արևմտյան աշխարհի թագավորն զբաղված էր խռովությամբ, անկարող էր մեկնել արևելք՝ հայրապետի խնդրանքի համաձայն։ Արտաքին գրքերով կրթված և եկեղեցական ուսմամբ ճոխացած ճարտարախոս փիլիսոփա մի այրի [թագավորն] առաքում է սուրբ հայրապետի մոտ՝ հարցուփորձի, որպեսզի լիովին տեղեկանա ճշմարտապես Հայոց կամքին, թե նրանց ևս ախորժելի՞ է միավորման խընդիրը։ Սա եկավ, արքայի նամակը մատուցեց սուրբ հայրապետին, ուր գրված էր այսպես. «Կամովին համաձայն ենք երկու բաժանված ազգերի միաբանությանը և դրա համար ձեզ մոտ ուղարկեցինք մեր թագավորության տեսաբան Թեորիանես մագիստրոսին, որ գա խոսի ձեզ հետ մեր թագավորական կամքի մասին և տա ապացույցը սիրո, որ ունենք ձեր նկատմամբ, և բարվոք առաջարկություններս, հոժարական կամքս միաբանելու»։

Նա վերցրեց թագավորի նամակը և ընթերցեց, սկսեց քննարկել իմաստասեր այրի հետ և երկար ժամանակ Աստվածաշունչն էին ուսումնասիրում։ Կար բան, որ միանման էին հասկանում, և բան կար, որ յուրաքան-

www.a-pdf.com

չյուրն այլ կերպ էր բացատրում, մանավանդ սուրբ Կյուրեղի նամակները Սեկունդոսին՝ առաջինն ու երկրորդը, որ իր խոսքի մեջ հայտնում է, թե ինչպես հայրերն ասացին՝ «Մարմնացյալ Բանի բնությունը մեկ է»։ Այս առթիվ իմաստասերը նահանջել չէր ուզում՝ ասելով Անճառ միավորությամբ մի բնություն, այլ՝ Անշփոթ պահել երկու բնության հատկությունը։ Իսկ սուրբ հայրապետը, առաջին սրբերի նման, պաշտպանում էր՝ միավորելով երկուսը ևս, [հակադրվելով] նեստորականներին։ Եվ այս մասին նորից գրեց թագավորին և ուղարկեց իմաստուն այրի հետ, գրավոր վկայությամբ հաստատելով Հայաստանյայց սուրբ հավատի ուղղափառ դավանությունը։ Իսկ նա վերցրեց նամակը հարցերով ու պատասխաններով, որովհետև ամեն ինչ գրի առավ, գնաց թագավորի մոտ։ Ապա ձեռքին ունենալով նաև զանազան հարցումների նշումները և հայոց՝ միաբանության հոժարամտությունը, ներկայացրեց սուրբ հայրապետից թագավորին բերած նամակը։ Այդ տեսնելով՝ բարյացապարտ արքան ուրախանում և բերկրում էր հոգով, մեծ համարելով աստվածային եկեղեցու խաղաղությունը, քան Հռոմայեցոց բոլոր տիեզերակալական հաղթանակները։ Նաև եկեղեցականների ամբողջ դասերը և թագավորի բոլոր ազգականները մեծ պալատում վերցրին հարցումների շարադրանքը, այս ու այն կողմ էին գնում՝ ասելով միմյանց. «Տեսեք Հայոց կաթողիկոսի խոհական ճարտարության հանճարը, նայեցեք խելամիտ խոստովանության շավիղներին, որոնցով գնում է երանելին ամբողջ ազգով։ Փա՜ռք Աստծու, որ տեսնում ենք եկեղեցու այսպիսի առաջնորդ նվազյալ ժամանակներս»։

Որովհետև իմաստուն այրը ոչ թե խոհական խոսքի և գիտության պատմությամբ էր հիացնում նրանց, այլ ավելի շատ օրանչելի վարքի պատմությամբ, որին ականատես եղավ, նաև հոգու հեզությունը և անձի պարկեշտությունը, և ճգնավորական կրոնը, որ տեսավ՝ պատմում էր բոլորի առաջ։ Եվ թե ինչպես հարցումներում խոնարհամիտ էր և պատասխանելիս հանդարտ, խաղաղություն փնտրող և սիրո օրենքները հաստատող։ Որին տեղյակ գարձան մեծամեծները և փոքրերը, սովորությունը երկրորդ բնությունն էր, այսինքն՝ Հայոց նկատմամբ եղած ատելությունը, որ սխալ կարծիքներից էր, փոխարկում էր սիրո։ Այնուհետև պետք էր տեսնել մերոնց համարձակությունը թագավորական մայրաքաղաքի եկեղեցիներում, որովհետև բոլորի [աչքի] առջև ապացույց էր արդարացի լինելը։

ԺԲ. Եվ Ներսես հայրապետն ինքը թագավորական նամակն ուղարկելուց հետո, իր գրած խոստման համաձայն՝ Հայաստանով մեկ հրաման արձակեց, սկսած Աղվանից աթոռից մինչև Սուրացոց կողմերը, մինչև արևմտյան կողմերը, որովհետև բոլորը միասին եկան՝ եպիսկոպոսներն ու վարդապետները, վանահայրերը, ճգնող կրոնավորները՝ խնդիրը քննելու խաղաղությամբ, որ բոլորը միասին պատասխանեն։

Իսկ Աստծու անքննելի դատաստանն ու անհասանելի խորքը նույն տարին սուրբ հայրապետին վերև փոխադրեց, անվախճան խաղաղության մեջ, օգոստոս ամսի տասներեքին, հինգշաբթի օրը և Հայոց թվականության վեց հարյուր քսաներկուսին (1173), և այս գործն անկատար մնաց մինչև այժմ։ Որովհետև ճգնավորական կյանքից տկարացել էր երանելին մարմնով, և ցավը ճնշում էր պարկեշտ մարմինը։ Վրա էր հասել ամառային եղանակը ջերմային օդով՝ տապացնում էր սրբին, որ արագ վախճանվեց։ Մեծ սուգ հաստավ մեր եկեղեցուն և ամբողջ ազգին։ Եվ ոչ միայն մեզ, այլ համբավը հասավ

www.a-pdf.com

թագավորական [Կոստանդնուպոլիս] քաղաքը, վշտացավ բարեպաշտ թագավորը և հառաչելով ասաց.

— Մեծ ու արթուն միտքը վերացավ այսօր Աստծու եկեղեցուց, հայաստանյանները զրկվեցին իրենց երկրորդ Լուսավորչից։ Ո՛վ երանելի սուրբ հայրապետ, ինչո՞ւ իմ բաղձանքը անկատար թողած գնացիր Քրիստոսի մոտ։ Իսկ մենք հիշատակման արժանի քո անունն առաջին սրբերի հետ կդասենք՝ ուրախությամբ տոնախմբելով ի Քրիստոս։

Եվ հրամայելով պատվիրեց մայրաքաղաքի եկեղեցիներում տոնախմբությամբ հիշատակել նրան առաջին սրբերի հետ։

Իսկ սուրբ Ներսես հայրապետի ոգիացած մարմինը՝ պատվով և առաքինիների ու վարդապետների խմբով, մեծապայծառ հանդեսով իջեցրին արժանավոր դամբարան սուրբ և գեղապաճույճ տաճարի հիմքի մոտ, որ կառուցվեց հանուն սուրբ Գրիգոր Լուսավորչի, իր եղբոր որդի տեր Գրիգորիսի ձեռքով, քանի որ հաջորդեց սուրբ Ներսեսին Հայոց հայրապետության աթոռի վրա։ Նա առավել զարդարեց սուրբ աթոռը վայելչագեղ տաճարի կառուցմամբ և ճոխացրեց երևելի ու պատվական սպասքով, բերել տվեց սուրբ հայրապետի և իրենց նախնիի՝ տեր Գրիգորիս Վկայասերի նշխարները և ամփոփեց նույն տաճարի հիմքի մոտ, երկու հայրապետների՝ Գրիգորիսի և Ներսեսի դամբարանների մոտ։

Արդ, Աստծու սուրբը ինը տարի հայրապետ եղավ բարվոք և գեղեցիկ կենցաղավարությամբ, ընթացքն ավարտելով և պահելով հավատքը՝ ըստ Պողոսի, փոխվեց անվախճան ու երանելի կյանքի և գնաց առաքյալների և ուղղադավան հայրերի ու վարդապետների դասի մեջ։

ԺԹ. Իսկ Հայոց թվականության վեց հարյուր ութսունինը (1240) թվին, սուրբ Ներսես հայրապետի վերափոխման վաթսունյոթերորդ տարին, սուրբ վարդապետ Հովհաննեսի հրամանով ու հորդորով, շարադրեցին սուրբ Ներսես հայրապետի կենսագրությունը և իր նախնիների ճշմարտաճառ պատմությունը՝ անստուգ վկայությամբ, Կիլիկիա աշխարհի քրիստոսասպասակյալ Հեթում բարեպաշտ թագավորի ժամանակ, որ երկրորդն է այս նահանգի Լևոն Առաջին բարեպաշտ արքայից [հետո]։

Արդ, սուրբ այրերի այս լուսազարդ պատմության վայելողներ, սիրով հիշեցեք ի Քրիստոս վերոհիշյալ անունները և ընդօրինակեցեք առանց հապավման յուրաքանչյուր դեպքում, որ ձեզ ևս գրե Քրիստոս կյանքի մատյանում, [և] բոլորդ սուրբ ու երջանիկ հայրապետների բարեխոսությամբ արժանի լինեք երկնքի արքայությանը՝ բոլոր սրբերի հետ, ի Քրիստոս Հիսուս, Տեր մեր, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ հավիտյանս. ամեն։

www.a-pdf.com

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

(Մոտ. 1140—1213)

ԽՈՍՐՈՎ ԳԱՆՁԱԿԵՑԻ

Սելճուկների բռնակալության ժամանակ, որից շատ առաջ իսպառ վերացել էր հայոց թագավորությունը, և իշխանների մնացորդները ջրջում էին անտերունչ՝ ցրված ամբողջ աշխարհում, չհնազանդվելով միմյանց, մանավանդ նրանք, որ բնակվում էին Արցախ ամուր աշխարհում, ավազակի նման մնալով լեռներում ու անմատչելի տեղերում և ճանապարհներին, ամեն ազգից, ում կարող էին հաղթել, առ ու ավար էին վերցնում և ոչ պակաս նեղություն էին պատճառում քրիստոնյաներին՝ հարկ գանձելով։ Կարծես մեզ համար է ասված՝ «Այժմ չունենք ոչ իշխան, ոչ առաջնորդ, որ մեզ հովվեն»։

Մարգարեն ձայնակցում է ողբիս. «Երանի թե գլուխս ջուր, աչքերս աղբյուր լիներին, որ ցերեկ-գիշեր լայի իմ ժողովրդի թշվառության, սպանվածների համար, և ողբայի բոլոր ազգերի մեջ ցրվելն ու կորսվելը՝ մրրկահույզ ծովի ալիքների նման տատանված և նավահանգիստ չհասած։ Քանի որ մերոնք նախընտրում էին ստրուկ լինել ամեն ազգի ձեռքին, քան հնազանդել միմյանց և ապրել ազատության մեջ։

Այս պատճառով նեղվեցին ու տառապեցին անօրեն և ամբարիշտ ազգերից, Քետուրի ու Իսմայելի որդիներից ու եզեմացիներից, որոնց լուծը քրիստոնյաների վրա ավելի ծանր էր, քան երկաթե անուրը, մանավանդ պոնտացոց աշխարհում, ուր ծանր հարկերից ստիպված վաճառում էին որդիներին և իրենց փրկագին վճարում։ Եվ ամենուր, բոլոր վայրերում բազում էր ամպրոպը խռովության։ Որովհետև աստվածաշեն եկեղեցիները, որ մեզ տրվեցին դրախտի փոխարեն, տապալում էին, հիմնահատակ քանդում վանքերը, վկաների մատուռները անասունների տեղ էին դարձնում, պատվական մարդկանց անարգում էին և իմաստուններին արհամարհում, քրիստոնյաներից շատերի հավատը թուլանում էր, ինչպես կանխագուշակել էր Պողոսը, թե՝ «Հետին ժամանակներում քանդվելու է մարդկանց հավատը. նրանք լսելու են մոլորության դևերին»։

Որովհետև հայրապետները արծաթով էին ձեռնադրություն անում, նույնպես և քահանայապետներն ու քահանաները, ինչպես ասել է Եսային. քահանան և մարգարեն խենթացան և այնպիսի հանդգնության հասան, որ աշխարհական մարդիկ, որոնք քահանայական օծում չունեին, նույնիսկ նրանց կանայք, վերատեսուչ էին լինում եկեղեցիներին, և ամեն մարդ համարձակ չարիքներ էր գործում և՝ ոչ մի երկյուղ ու հանդիմանություն։

Այսպիսի մի ժամանակ հանկարծակի իբրև մեծապայծառ աստղ ծագեց Քրիստոսի նոր վկա Խոսրովը։ Նրա պատմությունն այս է։

Սուրբ Խոսրովը քրիստոնյա էր, քրիստոնյա ծնողների զավակ, Առան աշխարհում՝ Գանձակ կոչվող քաղաքին մոտ, տակավին մանուկ՝ ուշիմ ու

www.a-pdf.com

հանդարտ, ապրում էր զգուշավոր կյանքով։ Իսկ բարեմերժ սատանան, որ Ադամի հետ կռվեց կնոջ միջոցով, պատանու դեմ այսպիսի պատերազմ հարուցեց։

Փոքր ու աննշան մի պարսիկ ապրում էր Առան գավառում, Գանձակ մեծ քաղաքին մերձ, Արխանաշեն գյուղում։ Բնակիչների կեսը քրիստոնյա էին, կեսը՝ հեթանոս, լինելով իրար սիրելի բարեկամներ։ Հիշյալ պարսիկն ուներ աղջիկներ ու տղաներ՝ այլևայլ կանանցից ծնված։ Նրա որդիներից մեկը սիրահարվել էր իր քրոջը, որ համամայր չէր։ Սա բռնացավ աղջկա վրա։ Եվ աղջիկը հղանալուց շատ վախեցավ, որ հանկարծ իմանան ծնողներն ու սպանեն։

Բայց աղջիկը սիրահարված էր պատանի Խոսրովին, որ տեսքով ամենից գեղեցիկ էր, խարտիշահեր, կարմիր և սպիտակ դեմքով։ Նրանք հարևաններ էին, և միշտ մտնել-ելնելիս տեսնում էր, երբեմն հանդիպում էր պատանուն առանձին, փաղաքշելով պատիր բաներ էր ասում նրան՝ միգուցե կարենա խաբել, որ չբացահայտվեն իրենց չար գործերը և իրենք սպանվեն։ Եվ սա անում էր բազում անգամ։ Իսկ սրբասեր ու ողջախոհ պատանին չէր խոտորում աղջկա խոսքերից, այլ ընդդիմանում էր չարին, ինչպես այն Հովսեփը հնում, կամ ավելի վեհ, եթե հանդգնություն չէ ասելը։ Որովհետև նա այն առաքինությունից հետո օրինավոր ամուսնություն ունեցավ և ծնեց երեխաներ՝ Եփրեմին ու Մանասեին, իսկ սա մեր օրերում արիությամբ մտավ ասպարեզ՝ նվաճելով հաղթության դափնին։

Եվ երբ աղջկա հայրը տեղեկացավ, թե իր դուստրը հղի է, խոշտանգում էր նրան ու հարցնում. «Ո՛վ բռնադատեց քեզ, ասա՛»։

Իսկ սատանայի դուստրը և զենքը, որ բոլոր ժամանակներում բազում չարիքների պատճառ է եղել, զրպարտեց պատանի Խոսրովին, մտածելով, որ նրա միջոցով կազատվի, և իր կամքը կկատարվի՝ ստիպողաբար նա կուրանա [իր հավատը] և իրեն կնության կառնի։

Սրա համար Քրիստոսի բարեհաղթ վկան հանձնվեց դատարանին։ Դատավորը հրամայեց բանտ նետել նրան։ Մի ամիս մնաց բանտում՝ սակավապետություն ցուցաբերելով։ Այնուհետև դատավորը հրամայեց հանել նրան բանտից։ Ու սրբի ծնողներն եկան, հիշեցրին նրան իրենց ալեհեր ու ծեր լինելը, հոգեխառն սնունդը, որով սնել են։ Եվ մայրն ասում է. «Խղճա թշվառացյալ մորդ և մի մատնիր արյունարբու գազանների ձեռքը»։ Հայրը ևս ողբողորմ արտասուքով ու հառաչանքով ասում էր. «Հա՛նձն առ, որդյակ, ատյանի առաջ և ազատվիր տանջանքներից ու մահից։ Եվ քեզ կտանենք Վրաց աշխարհը, այնտեղ աներկյուղ պաշտիր Քրիստոսին»։

Իսկ նա, շրջելով երեսը, չէր ընդունում նրանց ասածը։ Եվ երբ տեսան, որ պատանու միտքը հաստատուն ու անհողդողդ է, լալով հեռացան։ Այս լսելով՝ դատավորն ասում է.

— Սրան մի քանի օրով թողնենք, միգուցե խրատվելով ուղղվի։

Ու հրամայեց վերստին բանտ տանել, մտածելով, թե ինչ անի սրբին։ Բանտում մնաց ևս ութ օր, այդ ընթացքում ոչ կերավ, ոչ խմեց։ Երբ այդ օրերը վերջացան, տարան դատավորի մոտ։

Խոսել սկսեց դատավորն ու ասում է.

— Խոսրով, մի մոլորվիր իզուր, համաձայնիր, և քեզ շատ ոսկի կտանք և այն աղջկը՝ կնության, նաև այլ պատիվներ։ Իսկ եթե չկամենաս ինձ լսել, բազում ծանր չարչարանքների կենթարկվես։

Սուրբն ասում է.

www.a-pdf.com

— Քո պարգևները քեզ լինեն, ես դավանում եմ իմ Թագավորին, որն ստեղծել է երկինքն ու երկիրը, ծովը և այն ամենը, որ կա նրանց մեջ։

— Խնայիր քո կանաչ կյանքը,— ասում է դատավորը,— արա իմ ասածը, մեզ հետ եղիր, կոչվիր իմ որդին և ապրիր, թե չէ՝ կապականեմ քո վայելուչ գեղեցկությունը։

Խոսրովը պատասխանում է.

— Քեզ ասացի և վերստին կրկնում եմ, որ չեմ անսա ձեր ստապատիր խաբեություններին, որովհետև վաղ թե ուշ մեռնելու եմ։

— Քեզ հրով կայրեն,— ասում է դատավորը,— եթե չհրաժարվես այդ համառությունից։

— Չես կարող պատրաստել այնպիսի հուր, ինչ պատրաստել է Քրիստոսը մեղավորների և նրա՛նց համար, ովքեր ձեզ նման ամբարիշտ են,— պատասխանում է Խոսրովը։

Դատավորն ասում է.

— Գոնե ընդունիր Մահմետին, որ այստեղ աշխարհս տվեց մեզ, այնտեղ՝ դրախտը։

— Ստիպում ես ինձ ուրանալ կենդանիին և երկրպագել մահկանացուներին, որ իրենք մոլորվեցին ու ձեզ էլ հանեցին ուղիղ ճանապարհից,— ասում է սուրբը։

Դատավորը բարկանալով՝ երկու զինվորի հրամայեց կապել երանելիի ձեռքերը ետևում ու երկաթե շղթա դնել պարանոցին ու շրջեցնել քաղաքում ժողովրդին ի տես։ Եվ հեթանոսներից շատերը զարմանում էին սրբի համարձակության ու անհողդողդ մտքի վրա և՝ թե ինչպես է անոտի հույսով մեռնում։ Դրանից հետո դատավորը վճիռ արձակեց, որ քարկոծեն։ Եվ ամբոխը, վերցնելով նրան, քաղաքից դուրս հանեց հյուսիսային կողմը մի քարքարոտ տեղ, ցամաքած գետի ափին մոտ։ Քրիստոնյաները ևս, որ քաղաքում էին, թաքուն դնում-վազիս էին, որ տեսնեն վկայի նահատակությունը։ Եվ երբ երանելիին բերին տեղ հասցրին, ասացին նրան. «Մի՛ համառիր երեխայի նման, այլ լսիր մեզ և կատարիր դատավորի կամքը, և մենք կխընդրենք, որ քեզ ներում շնորհվի։ Միայն ընդունիր մեր հավատը»։

Խոսրովն ասում է.

— Ո՞ւմ եք ուզում երկրպագել տալ. կախարդի՞ն, սատկած շա՞ներ։

Եվ իբրև վայրենի գազաններ մռռալով ու ատամները կրճտելով նրա վրա՝ գանահարում էին անխնա, կապելով մի թթենու։ Բայց նախքան կապելը ծնրադիր աղոթում էր նա ու ասում.

— Քրիստոս, փառք եմ տալիս քեզ՝ Հորով և ամենասուրբ Հոգովդ հանդերձ։

Եվ բարբարոսները զրգռելով միմյանց՝ քարկոծում էին սրբին։ Երանելին կարծես գառ էր՝ գայլերի մեջ. չկար մեկը, որ կարեկցեր, կամ մեկը, որ հասներ օգնության, այլ բոլորը՝ եկվոր ու բնիկ պարսիկները, շների նման կատաղած, նրա վրա հանդիմանության նետեր էին արձակում։

Եվ քարերի բազմությունից, որ տեղատարափ թափում էին Խոսրովի վրա, բոլոր ոսկորները ջախջախվեցին, հոդերն անջատվեցին իրարից և մարմնի կտորտանքները գետին էին ընկնում։ Եվ նա հոգին ավանդեց ի փառս Աստծու, ինչպես գրված է՝ «Արդարների ոգիները Աստծու ձեռքում են»։

Այնուհետև բռնավորը հրամայեց, և կապեցին երանելիի պարանոցից, քարշ տվեցին քաղաքից դուրս, քրիստոնյաների փողոցներում, այն համա-

www.a-pdf.com

քելով մեծ հաղթանակ։ Սրանից հետո սատանան մտավ բռնավորների սիրտը, որ հրով այրեն երանելիի մարմինը, բայց նա, ընկնելով կրակը, չվառվեց։

Այն գիշեր եկան վկայի ծնողները, վերցրին նշխարներն ու թաղեցին քրիստոնյաների գյուղի հասարակաց գերեզմանոցում՝ հաշվի չառնելով նրա արժանիքները, միաժամանակ երկնչելով բռնավորներից։

Երկու տարի անց նշխարները փոխադրվեցին նույն տեղի գերեզմանոցի մատուռը, և նրա փոխվելուն ականատես եղանք, տեսանք, որ ձեռքերի կապանքը չէր այրվել և գլխից ոչ մի մազ չէր պակասել, և վկայի նշխարները երկու տեղում էլ բազում բժշկություններ էին անում։

Բայց եկեք լսեցեք լույսի սքանչելի տեսիլը, որ երևաց վկայի նշխարների վրա։ Եբևաց ոչ միայն հավատացյալներին, այլև անհավատներին, ոչ թե մեկ, այլ երկու անգամ։ Եվ առաջինն այսպես եղավ։

Գյուղի պարսիկները սովոր էին իրենց պահքի օրերին աղոթակոչ բերել, որ գիշերը ձայն տա, զաբթնեցնի իրենց աղոթելու համար, ինչպես և ցերեկը հավաքի։ Եվ անօրինության մշակը, անապատի գայլը, եկավ այն գյուղը, ուր Խոսրովի հանգստաբանն էր և մի գիշեր ելնելով, կամեցավ ուրացության բարբառը հնչեցնել։ Ելնում է մի բարձր տեղ և վկայի գերեզմանի վրա տեսնում սքանչելի նշան՝ սաստիկ լույս, որ լուսավորությամբ գերազանցում էր արեգակին։ Սարսափից բռնված աղոթակոչը չէր կարողանում խոսել և կիսամեռ ընկավ, մնաց մինչև առավոտ։ Հաջորդ օրը եկան գտան նրան, որ անշունչ էր մեռածի նման։ Ապա նրան հարցնում էին պարսիկները.

— Ինչո՞ւ այս գիշեր չարթնացար ու մեզ էլ չհանեցիր. չէ՞ որ քեզ հրավիրել ենք, որ աղոթք անես ու մեզ էլ հոբդորես։

Իսկ նա հազիվ ոտքի գալով պատմեց գիշերվա տեսիլը, և նրանք շատ զարմացան ու գնացին պատմեցին դատավորին։ Դատավորը սաստեց նրանց, որ չպատմեն սքանչելի տեսիլը, որ տեսան։ Եվ ուղարկում է իր ծառաներից մեկին, թաքուն պատվիրելով, որ ոչ ոք չիմանա։

Ծառան դատավորի հրամանի համաձայն ամբողջ գիշերը հսկում էր և գիշերի մեջ տեսնում համապայծառ լույս, որ երկնքից փայլում էր վկայի հանգստաբանի վրա։ Եվ ահուդողի մեջ ընկավ. չէր կարողանում նայել լույսի ճառագայթներին, որ երևացին։ Առավոտյան ահով ու երկյուղով գնալով քաղաք, պատմեց մեծաքանչ ու զարմանալի տեսիլը։ Իսկ պիղծ ու անօրեն դատավորը կամեցավ զլանալ սքանչելի մեծությունը, որ լսեց ծառայից, իսկ ավելի առաջ՝ ուրիշներից։

Սրանից հետո մի քանի անհավատներ պատահմամբ, վառելու համար կտրեցին այն ծառը, որին կապվել էր Խոսրովը։ Մի քահանա տեսնելով՝ փոխարենը ուրիշ վառելափայտ տվեց ու վերցրեց այն փայտը։ Նրանք երկմտում էին, բայց նա համոզեց և ուրախ էր, որովհետև առաջ էլ ուզում էր, բայց չէր համարձակվում, իսկ սա Տիրոջ կամքով եղավ։ Եվ տարավ ծառը, դրեց եկեղեցու գավթում, և բազում բժշկություններ էր անում նրա կեղևը՝ կտրելուց առաջ և հետո. անհավատներից շատերը ևս բուժվում էին։

Իսկ վկային զրպարտող պիղծ կնոջը Աստված այս աշխարհում հատուցեց իր գործերին արժանիորեն. այլանդակ ծնունդ ունեցավ՝ մաքրու և գազանի խառնուրդ, և ինքն էլ սատկեց, որով Աստծու արդարադատությունը երևաց ոչ միայն բազում հավատացյալներին, այլև հեթանոսներին։ Զաբա-

www.a-pdf.com

չար պատժվեցին նաև կնոջ ազգականները. ոմանք դիվահար եղան. ուրիշները մահացան և ոչ ոք չմնաց նրանց տոհմից։

Վկան մահացավ Առան աշխարհում, մայր քաղաքում, որ կոչվում է Գանձակ, ՈԺԶ (1167) թվականին, արաց ամսի երեքին, վարդավառի պահքի հիսներյակի սկզբին, հույների կեռ Մանուելի թագավորության և հայոց Թորոսի [որը հունաց թագավորից ու վրաց Գեորգից մեծարված էր իշխանական պատվով] իշխանության օրոք, Խաչենի կողմերի՝ Վախթանգի որդի Հասանի իշխանապետության, Մեծ Հայքի տեր-Գրիգոր և Ներսես եղբայրների և Աղվանից տան տեր-Ստեփանոսի կաթողիկոսության ժամանակ և Գանձակ քաղաքի տեր-Հովհաննես եպիսկոպոսի, Արևելից Ելտկուզի իշխանապետության, եղեմացիների ու պարսիկների Ասլանշահի թագավորության ժամանակ։

www.a-pdf.com

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

(ԺԵ ԴԱՐ)

ԱՅՍ Է ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆԿՆԵՐԻ ԵՐԿՐԻ, ՈՐ ՏԵՍԵԼ Է ԵՐԶՆԿԱՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՎ ԳՐԵԼ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՏԵՍԱՎ ԻՐ ԱՉՔՈՎ, ԵՎ ԱՅՍՊԵՍ ԵՂԱՎ

Ես՝ Մարտիրոս, անվամբ միայն եպիսկոպոս, Երզնկացի, ս. Կիրակոսի անապատից, Նորգեղակ գյուղից, վաղուց փափագում էի գլխավոր սուրբ առաքյալների գերեզման[ներ]ը և սուրբ Հակոբի գերեզմանը տեսնել։ Եվ երբ ինձ՝ անարժանիս վիճակվեց արժանանալ նրանց տեսուն, քանի որ սիրտս մշտապես տենչում էր, բայց չէի կարող իմ սրտի խորհուրդը հայտնել ուրիշի,— 1489 թ. հոկտեմբերի 29-ին դուրս եկա իմ վանքից, մեղավոր [հոգով] հասա Ստամպոլ և Աստծու հաջողությամբ գտա մի նավ, մտա այնտեղ Վրթանես սարկավագի հետ։

1490-ի հուլիսի 11-ին Ստամպոլից ելանք, մի ֆռանկի նավով, հոկտեմբերի 1-ին հասանք Վենեժ, որ կոչվում է Վենետիկ, մեծ և փառավոր քաղաքը, որ ծովի մեջ է կառուցած։ 74000 տուն է և խիստ փառավոր և հարուստ քաղաք։ Եվ քաղաքի մեջ կա մի մեծ եկեղեցի, որ 10000 մարդ է տեղավորում մեջը, և ճոխ զարդարված է ոսկով։ Սուրբ Մարկոս Ավետարանչի եկեղեցին է, և երկու երգեհոն կա մեջը, և երկու թևավոր առյուծ է քանդակած ոսկուց։ Քաղաքում նաև ուրիշ շատ եկեղեցիներ կան, և քաղաքի շուրջը շատ վանքեր կան, բոլորը ծովի մեջ կառուցած։ Իսկ սուրբ Մարկոս եկեղեցու առջև մեծ հրապարակ կա։ Եվ [եկեղեցու] դռան վրա շատ բարձր 4 դեղին պղնձե ձի կա, քանդակած և կանգնեցրած՝ մեծ-մեծ և մեկական ոտքերը վեր բարձրացրած։ Հարավային, ծովահայաց կողմը հացավաճառներն են։ Եվ երկու մեծ սյուն են կանգնեցրել, մեկի վրա թևավոր առյուծի [արձան] է, իսկ մյուսին՝ սուրբ Գևորգը։

Թագավորի պալատի ամբողջ պարիսպը ոսկով է զարդարված։ Նաև շատ տեսակ-տեսակ բաներ կան, [այնքան], որ ո՞վ կարող է պատմել քաղաքի հրաշալիքները։

Եվ մնացինք 29 օր և մտանք մի նավ ու գնացինք 13-րդ օրը [հասանք] Անքոնիա, իսկ այնտեղից 30-րդ օրը գնացինք Հռոմ աստվածապահ մեծ [քաղաքը], ուր և սուրբ ու փառավորյալ ամենագովելի սուրբ մարմիններն են գլխավոր սուրբ առաքյալների՝ սուրբ Պետրոսի ու Պողոսի։ Եվ գնալով երկրպագեցինք ու մեղքերի թողություն խնդրեցինք մեզ և մեր ծնողներին, մեր երախտավորներին ու ողջերին։ Եվ մնացինք 7 ամիս ու տեսանք բոլոր տնօրինական տեղերը։ Տեսանք, որ սուրբ առաքյալների նշխարները Հռոմ քաղաքից դուրս են, հյուսիս-արևմտյան կողմը, փոքրիկ մի քաղաք. գետը անցնում է այս երկու քաղաքի միջով, [և այդ քաղաքը] կոչվում է Սանթանկելո։ Սուրբ առաքելոց եկեղեցու [գլխավոր] դուռն արևելքից է, 7 բարձր ու վիթխարի դուռ ունի, և միջին դուռը ձուլածո է, իսկ մի փեղկը սուրբ Պետրոսինն է, իսկ մյուսը՝ Պողոսինը։

www.e-pdf.com

Հռոմի արևմտակողմը, Ներոն արքայի պալատի դիմաց ս. Պետրոսի խաչելության վայրն է։ Իսկ քաղաքի մեջ նրանց բանտարկության տեղն է։

Եվ Հռոմից դուրս, շատ հեռու, ս. Պողոսի գլխատման վայրն է, հարավային կողմը, իսկ քաղաքի մոտ կա այն տեղը, ուր Քրիստոս հանդիպեց ս. Պետրոսին։ Եվ քաղաքի ծայրին Սանճուան եկեղեցին է, ուր երկուսի գլուխներն են գտնվում՝ ամբողջ մարմնով։ Եվ քաղաքի մեջ, հարավային կողմը Գրիգոր Ակռականդացու զնդանն է, այժմ եկեղեցի է։ Ավելի առաջ [գնալով]՝ քաղաքի մեջ Սանթալինա կա. այդ եկեղեցին, ուր 100 սրբերի նշխարներ են և այլ զանազան փառավորություններ։ Հռոմ քաղաքի մեջ 2774 եկեղեցի կա և 8000 սրբի գերեզման քաղաքում և դրսում։ Եվ օրական 10—20 եկեղեցի էի շրջում, մեծ ու փառավոր եկեղեցիներ, և ամեն օր այցելում էի գլխավոր սուրբ առաքյալների [եկեղեցին] և մեղքերի թողություն էի խնդրում։ Ով կարող է լեզվով պատմել սուրբ եկեղեցիների և քաղաքի փառավորությունը։ Եվ երեք անգամ ինձ տարան Պապի մոտ, որն ինձ մեծ սիրալիրություն ու հոգատարություն ցույց տվեց, մի թուղթ տվեց, որ բոլորը զարմանում էին։ Ամեն օր կանչում էր ու հետս զրուցում։

1491-ի հունիսի 9-ին ելանք Հռոմից, [նավարկեցինք] շատ օրեր և 46-րդ օրը հասանք Դուդեշք ազգի աշխարհը, որ ալամաններն են։ Գնացինք մեծն Կոստանցիա և այլ շատ քաղաքներ, անցանք Ռին գետի եզերքով, գնացինք Պազլ մեծ քաղաքը, և մեզ բռնեցին թե՝ դուք լրտես եք։ Բազում այլ քաղաքների միջով գնացինք Ֆռանկֆորթ, ուր շատ հիանալի բաներ տեսանք։ Այնտեղից շատ օրեր [ճամփորդեցինք], գնացինք Ֆրիբուլուս Ասացին, որ 300000 այգի կա այս քաղաքում, և մեզ մեծ պատվով հարգեցին։ Այնտեղից՝ Ստրազբուխ, իսկ այնտեղից շատ քաղաքներով բազում օրերում հասանք Կապլեր, ուր [նուէյնպես] շատ պատվեցին մեզ։ Իսկ այնտեղից շատ օրեր Ռին գետով գնացինք, հասանք Կոլոնիա մեծահամբավ քաղաքը, որն, ասացին, 220000 տուն է։ Շատ մեծ ու զարմանալի քաղաք էր։ Այնտեղ էր մոգերի թագավորների գերեզմանը։ Եվ երեքի գլուխները գերեզմանների վրա [քանդակած] էր։ Եվ այնտեղ կար 12000 սրբերի նշխարք, յուրաքանչյուրի գլուխը մի մեծ եկեղեցու մեջ է դրած, որ ամեն մարդ տեսնում է, իսկ մարմինները թաղած են։ Մեկ ուրիշ եկեղեցի կա, խիստ գեղեցիկ, 24 սուրբ կույսերի մարմինները արկղով դրած, և այն եկեղեցին, ուր մոգերի թագավորների գերեզմանն է, պատկերված է դիմացից. Աստվածածինը շարքից դուրս է բերված և իր սուրբ արժանիքների համեմատ զարդարած, և՝ մեր տեր Քրիստոսը գրկին։ Եվ մի թագ էր դրած գլխին՝ անգին գոհարեղենով ու մարգարտով զուգած, որ դին չունի։ Հարցրինք եկեղեցու երեցին, թե սա ինչ գին ունի, նա ասաց՝ 215000 ֆլորի է եղել ծախսը։ Եվ սուրբ Աստվածածնի սրտին մի մարգարտե խնձոր է պատկերած, մի ընկույզի չափ։ Եվ շուրջը՝ 12 մարգարիտ, ամեն մեկը փոքր գդմորի չափ։ Մեջընդմեջ՝ 4 ակ, 2 լալ և 2 հակինթ։ Ամեն քարի մեծությունը մի գդմորի [չափ]։ Եվ ավագ խորանի շուրջը 56 դեղին պղնձե գերեզման է պատրաստած և 6 գերեզման դեղին պղնձի ոսկով զարդարած եկեղեցին 365 լուսամուտ ուներ, ամեն լուսամուտի երկարությունը 3 գիրկ է։ Եկեղեցին 500 կամարի վրա է, բարձր ու ահեղ, և աշխարհում ինչ կա՝ բոլորը դռան կազմը դասավորած։ Եկեղեցու բոլոր լուսամուտները գույնզգույն ապակիով զարդարած։ Եվ զանգակատունը մի ամրոցի պես է, մեծ ու վիթխարի մի զանգ է կախած, որ 28 հոգով են քաշում։ Նաև ուրիշ շատ եկեղեցիներ ու վանքեր

www.a-pdf.com

կային, որ չկարողացա կամ քաղաքի և կամ եկեղեցու պատմությունը գրի առնել։ Եվ այդ քաղաքում մնացինք 22 օր, և մեզ խիստ պատվեցին։

Ինչքան եկեղեցի մտանք՝ մեղքերի թողություն խնդրեցինք, և ապա ելանք մեծն Կոլոնիայից հոկտեմբերի 25-ին և բազում քաղաքներով հասանք թագավորների գերեզմանատուն-քաղաքը, որ ալամանների ազգինն է։ Այնտեղից բազում օրերում հասանք Սանթամարիա տ'Աքս, ուր սուրբ Աստվածածնի ամենօրհնյալ սուրբ շապիկն է։ Եվ այնտեղ շատ տաք ջուր կա։ Իսկ այն եկեղեցին, ուր Աստվածածնի ամենօրհնյալ շապիկն է, խիստ զարմանալի շինություն է, ամբողջը ոսկով զուգած, չորս դեղին պղնձե սյուն է կանգնեցրած և ոսկած։ Եկեղեցու մեջտեղը՝ մեծամեծ դեղին սյուներ, իսկ սյուների գլուխները՝ ոսկով զաբդարած։ Եվ մարգարտաշեն մեծ ոսկեզօծ մի սնդուկ կա, իսկ մեջը՝ Աստվածամոր ամենօրհնյալ սուրբ շապիկը։ Եվ այնտեղ մնացինք 18 օր, մինչև րացին, և արժանացանք տեսնելու և մեղքերի թողություն խնդրեցինք մեզ և մեր ծնողներին ու երախտավորներին։ Դասասաց վարդապետներ կային, որ մեղ պատվեցին ու մեծարեցին մեծ հոգանքով։

Այստեղից ելնելով՝ բազում օրեր րազում քաղաքներով անցանք, գնացինք մեծն Հունվես, որտեղ նստում է ալամանների թագավորը։ Եվ այդտեղ մնացինք 11 օր։ Այնտեղ է Քրիստոսի՝ ամենազոր սուրբ թագավորի, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սուրբ դաստառակը, որ խաչելության ժամանակ կապեցին. ներկված էր Քրիստոսի սուրբ աստվածընկալ արյամբ։ Արժանացանք սրա սուրբ տեսքին և մեղքերի թողություն խնդրեցինք։

Ելնելով այնտեղից՝ բազում օրեր, բազում շարշարանքներով, բազում քաղաքներով հասանք Ֆրանտրիա աշխարհը։ Եվ լեզուն չգիտեինք հաղորդակցվելու։ Այնտեղից մեծ դժվարությամբ ելանք և բազում օրեր անց հասանք Ընկլուղաց աշխարհը. նրանց լեզուն նույնպես չգիտեինք։ Նրանք ևս ձկնակեր էին, ինչ մեծ ու ահեղ ձկներ կան այն ծովում։ Համատարած ծով է և սահման չունի։ Այնտեղից դառնալով դեպի արևմուտք՝ բազում օրերում եկանք հասանք Ֆրանցուզաց աշխարհը, Սանտոնիժ քաղաքը։ Այդ քաղաքը եպիսկոպոսների և թագավորների ու թագուհիների գերեզմանատունն է, շատ գեղեցիկ ու փառավոր քաղաք։ Եվ շատ եկեղեցի կա։ Եվ ավագ եկեղեցին ուր թագավորների շիրիմներն են։ Եկեղեցուն ձախ կողմը 4 ձկան կող է դրած, ամեն կողը՝ 5 գիրկ երկարությամբ, և 3 թիզ չափեցի լայնքը, և ասացին, թե այս ծովում վիթխարի ձուկ կա։ Մնացինք մի օր և այնտեղից մեկնելով՝ հասանք Փարիզ մեծահամբավ քաղաքը, դեկտեմբերի 19-ին և կեսօրին մտանք քաղաք։ Երեկոյան գնացինք մի հյուրատուն և հանգստացանք։ Եվ մյուս օրը վերջին ժամին հասանք Ավագ եկեղեցին՝ մեծ, գեղեցիկ ու զարմանալի, որ մարդ լեզվով չի կարող պատմել։

Ավագ եկեղեցին ունի 3 մեծ դուռ. արևմտյան կողմը և մեջտեղի դռան երկու փեղկի մեջ Քրիստոս է կանգնել, իսկ դռան վրա Քրիստոս՝ դատելու է նստել զարդարված ոսկե դառեկով։ Իսկ երկու հրեշտակ աջ ու ձախ կանգնել են։ Աջ կողմի հրեշտակը բռնել է այն սյունը, որ Քրիստոսին կապեցին, և գեղարդը, որով խոցեցին Քրիստոսի կողը։ Իսկ ձախ կողմի հրեշտակը կանգնել է՝ սուրբ խաչը բռնած։ Աջ կողմը սուրբ Աստվածածինն է՝ ծնկաչոք, իսկ ձախ կողմը՝ սուրբ Հովհաննեսը և սուրբ Ստեփանոս Նախավկան։ Առջեվում բոլոր հրեշտակապետներն են ու բոլոր սրբերը։ Հրեշտակներից մեկի ձեռքին կշեռք կա, որով մարդկանց մեղքն ու վարձքն է կշռում, իսկ ձախ կողմը փոքր-ինչ ներքև է քաշել սատանան և բոլոր դևերը՝ նրա հետ, իսկ

www.epdf.com

մեղավոր մարդկանց շղթայել, դժոխք են տանում։ Եվ դժոխքը զարհուրելի է պատկերված, որ մարդ տեսնելիս սասանում է և սոսկում։ Քրիստոսի դիմաց սուրբ առաքյալներն ու մարգարեներն են, սուրբ հայրապետներն ու բոլոր սրբերը զանազան գույներով ու ոսկով զարդարած։ Եվ պատկերված է արքայությունը, որ մարդ տեսնելով փափագում է ու փառավորվում։ Ավելի ւ'նդևում նկարված են 28 թագավոր՝ գլուխներին՝ թագ, կանգնած են [կենդանի] մարդու նման։ Ավելի բարձր՝ Տիրամայր սուրբ Աստվածածինը՝ ոսկենախշ, գունագեղ։ Աջ ու ձախ կանգնել են սուրբ հրեշտակապետներն ի սպասարկություն։ Եկեղեցու լուսամուտներն՝ ամեն մեկը մի կալի չափ։ Երբ մտնում ես եկեղեցի, ձախ կողմը մի մեծ անտաշ վեմ է, ուր պատկերված է սուրբ Քրիստափորը՝ Քրիստոսն ուսին, ներքևում՝ սուրբ Քրիստափորի նահատակությունը։ Ավագ խորանի շուրջը Քրիստոսի տնօրինականներն են և այլ բազում ու զանազան զարդանկարներ, որոնք չի կարող մարդ պատմել։

Քաղաքը խիստ զարմանալի ու մեծ է, և 2 գետ է մտնում մեջը և կեսն իսկ չի դուրս գալիս։ Եվ ո՞վ կարող է պատմել քաղաքի մեծությունն ու գեղեցկությունը։ Եվ Փարիզ մնացի 13 օր, այնտեղից մի ընկեր ևս գտնվեց Ստամպոզ քաղաքը [գնալու, այնտեղ] մնացի միայն 10 օր ու գնացի Ուռան քաղաքը՝ մեծամեծ չարչարանքներով։ Եվ գտա մի ֆռանկ սարկավագ, որ ընկերացավ մինչև Կաստիլիար քաղաքը, իսկ այնտեղից՝ մեծն Փոթեր քաղաքը։ Այնտեղ էր Քրիստոսի պատանքը, որ տեսանք։ Այլևս ընկեր չգտա, մենակ մնացի և ամենակարող Աստծուն և սուրբ Հակոբի աղոթքին ապաստանած՝ ոտքով ուղևորվեցի Փոնթ քաղաքը, և այնտեղից՝ Լուսինտա քաղաքը, այդտեղից մեծն Ռևանտ և մնացի 5 օր։ Եվ ելա գնացի, բազում քաղաքներով հասա Կասկոնիա, այնտեղից Ապավինեա, իսկ այնտեղից Կաստիլիա։ Բազում չարչարանքներով այդտեղից միայնակ, Աստծուն օգնական ունենալով, հասա Պայունա աշխարհը, ուր և քրիստոնյաները մեծ սիրով ընդունեցին ու պատվեցին չափից ավելի։ Եվ մնացի 6 օր և ընկեր չգտա, Աստծուն և սուրբ Հակոբին ապավինած՝ բազում օրեր մեծ դժվարություններով հասա Պիսկայայի աշխարհը, որ ձկնակերների երկիր է, Պիսկայա քաղաքը՝ ծովի ափին։ Այնտեղից [գնացի] Սան Սեբաստիան, որտեղ հյուրատան տերերը՝ այր և կին, անչափ սիրալիր էին, ինձ պահեցին 5 օր այն քաղաքում։ Եվ 2—3 անգամ հրավերք արեցին, և այդ քաղաքացոց նման սիրուն մարդ չտեսա [այլուր]։

Այնտեղից բազում օրեր գնացի ծովի ափերը և ուր որ գնացի՝ խիստ պատվեցին։ Եվ անցա 5—6 քաղաք, բազում օրեր գնացի, և հասա մեծն Փոռթընկալե և մնացի 4 օր, և միայնակ մեկնեցի, հասա Սանթանտեր և այնտեղից՝ Սանմաթեաս, այնտեղից՝ Սանթելանա, իսկ այդտեղից՝ Սանմիսան՝ ծովի ափին։ Եվ շատ սիրալիր էին մեր նկատմամբ։ Այնտեղից՝ Սանսալվաթոր, այնտեղից Պետաց քաղաքը, իսկ այնտեղից՝ բազում աշխարհներ։ Աստված օգնական ունեի, շատ չարչարվեցի և նվաղած հասա ամենաօրհնյալ և փառավորյալ տիեզերալույս տաճարը, և սուրբ Հակոբի գերեզմանը, ուր սուրբ մարմինն է, Կալիցիա քաղաքում։ Գնացի մտա սուրբ գերեզմանի մոտ, երեսիս վրա ընկա, երկրպագեցի և մեղքերի թողություն խնդրեցի ինձ և իմ ծնողներին ու երախտավորներին։ Բազում արտասուքով սրտիս փափաքը կատարեցի։ [Այն] դրված է սուրբ սեղանի մեջ, գեղնապղինձ տապանում և 3 կողպեքով փակած, և ինքը սուրբ սեղանի վրա քանդակված է մարդու կերպարանքով. նստել է աթոռին, թագը գլխին, իսկ գլխավերևում փայտե գմբեթ է կապած։ Եկեղեցին խաչաձև է, մեծ ու փառավոր

www.a-pdf.com

գմբեթով և երկու կողմը՝ զանգակատներ։ Եվ եկեղեցին 3 բաժին է, [հենված է] 206 կամարի վրա և 4 դուռ ունի։ Հարավակողմի դռնից դուրս շատրվան կա, և շուրջը ոսկերչանոցն է։ Հյուսիսային դռնից դուրս նույնպես շատրվան կա։ Դրամն ու փողերը այնտեղ են ներդրել և նստել են ու նշաններ, ուլունքներ, ամեն բան, ինչ որ փնտրես, վաճառում են այնտեղ։ Արևմտյան դռան առջև, ներքևում, նաև վերևը աղբյուր կա։ Եվ արևելյան դռան վերևը Քրիստոս նստած է աթոռին. Ադամից մինչև աշխարհի վերջը՝ ինչ որ եղել և լինելու է, ամբողջ նկարած է։ Եվ ուրիշ անրավ վայելչություններ [կան]. ո՞վ կարող է պատմել։

Եվ այնտեղ մնացի 84 օր, այլևս մնալ չկարողացա, որովհետև թանկություն էր։ Խնդրեցի իմ մեղքերի թողություն, և՝ ծնողներիս ու բոլոր երախտավորներիս։ Եվ որտեղ սուրբ Հակոբի մարմինն է՝ հաստ երկաթով մանր լուսամուտ է շինած։ Նաև ուրիշ բազում փառավորություններ կան սուրբ Հակոբում, բայց չկարողացա գրի առնել, առա սուրբ Հակոբի օրհնությունը և ելնելով դիմեցի աշխարհի ծայրը, սուրբ Աստվածածին, որ սուրբ Պետրոս Առաքյալը իր սուրբ ձեռքով է կառուցել, որը ֆրանկները Սանթամարիա Ֆենիստեռնա են անվանում։ Բազում չարչարանք և բազում վիշտ կրեցի ճանապարհին։

Հանդիպեցի բազում վնասակար գողտնների, հանդիպեցի նաև մի մեծ գազանի, որ ասացին, թե 20 հոգին երախից չի կարող պրծնել՝ դու ինչպես ազատվեցիր։ Եվ եկա հասա Հալանի աշխարհը, որտեղ նույնպես ձկնակերներ էին, և լեզուն չգիտեի, բայց խիստ պատվում էին և տնետուն տանում, զարմանում, թե՝ ինչպես ազատվեցիր գազաններից։

Շատ քաղաքներով եկա Համատարած ծովի ափը, և լեզու բոլորովին չէի հասկանում, բայց Պապի հանձնարարականի համար հարգում էին։ Եվ եկա մի քաղաք, որտեղ մեծ գետ է հոսում։ Ափն ի վեր, որ 68 կամար էր, կամուրջ էին կապել և անցել, հասել մեծն Վիլվադ, և այնտեղ մնացի 8 օր, այդտեղից ելա 27 օր գնացի և հասա Կենդարիա ամենօրհնյալ քաղաքը, ուր և մեծ հարգանքով պատվեցին ինձ, և այստեղ մնացի 7 օր։ Եվ գտա մի մեծ նավ, որն ինչպես ասացին, 80000 ղանթար [մոտավորապես 45 կգ. թրգմ.] բեռ ուներ, և աղաչեցի երեցներին՝ ասացեք, որ ինձ նույնպես առնեն նավի մեջ, այլևս չեմ կարող դիմանալ, ավյունս վերջացավ։ Նրանք զարմանում էին, թե «Այսքան երկրներ դու ինչպես կարողացար հետևակ անցնել»։ Եվ գնացին նավի տիրոջը խնդրեցին.

— Այս հայը հոգևորական է, առ նավդ, քանի որ հեռու աշխարհից է եկել և չի կարող ցամաքով հետ դառնալ։

Կարդացին Պապի թուղթը ու լսեցին, և նավավարն ասաց. «Կառնեմ նավս, բայց դրան ասացեք, որ գիտենա՝ ես Համատարած ծովով եմ գնում, իմ նավը վաճառական չի մտնում։ Այսքան մարդիկ որ կան՝ նավիս ծառայողներն են։ Մենք մեր կյանքից ձեռք ենք վերցրել, ապավինել ենք Աստծուն, եթե նախախնամությամբ մեր բախտը բերեց, Աստված մեզ ազատեց, շրջանցենք աշխարհը՝ լավ է, թե չէ՝ Աստված գիտե։ Այլ կողմով գնալու ճար չկա, թե դու համաձայն ես՝ շատ բարի։ Եկ նավս, հացդ ու կերակուրդ, խումդ մի հոգա, նավի վարձը նույնպես քեզ»։

Այն հոգևորականները պատասխանեցին. «Մենք ևս հոգի ունենք, դրա պաքսիմատը և այլ բաներ, որ Աստված պատրաստում է, մենք կհոգանք»։

Եվ վերադարձան քաղաք։ Ժամերգության ժամանակ բոլորին հասկաց-

www.a-pdf.com

րին, թե այս հայ հոգևորականը նավ է նստելու. ձեր երեխաների արևուն և ձեր հոգու համար նրան պաշար հավաքեցեք։

Անչափ բարիք բերին. ինչքան ուտեի՝ չէր վերջանա, և մտա նավը նոր կիրակի երեքշաբթի, և 67 օր շրջանցեցինք մայրցամաքը, եկանք աշխարհիս եզրը, Անդալուզիա, այն քաղաքը, որ ծովի մեջ էր, և մնացինք այնտեղ 19 օր, որովհետև մեծ ալեկոծության հանդիպեցինք և առագաստները պատռվեցին, եկան այնտեղ շինեցին։ Դա շատ գեղեցիկ քաղաք էր, փոքրիկ և բարելի։ Այս տեղերից մեկնեցի և գնացի Սանթամարիա Կատալուփ և այնտեղից Սիպիլիա, որտեղ տեսա թագուհուն և հետ դարձա։ Այնտեղից ելա, նավով 18 օրում հասա Մաղրպացոց աշխարհը։ Որովհետև քամին հանդիպակաց էր, փոթորիկ էր, եկանք հասանք Սալօպրինա։ Ես այլևս նավ չմտա և մնացի այնտեղ 3 օր ու միայնակ մեկնեցի Մաղրպացոց աթոռանիստ Կրանատ, որ թագուհին առել էր։ Մեծ, բարելի քաղաք է, և մնացի 10 օր ու ելա 5 օրում հասա մեծն Աճաեն, որտեղ Քրիստոսի դաստառակն էր։ Այնտեղից ելա գնացի Պախսա, իսկ այնտեղից՝ Յուվիտա, ապա՝ Սանստեֆան, այնտեղից՝ Պուրդուա և Ջնչիլիա, որտեղ սև ցավ ստացա և մնացի 10 օր։ Եվ պարոնը հանձնարարեց բուժորդին, մի քիչ բուժեցին, և այնտեղից [գնացի] Ալմանց և այնտեղից Ֆալար և Մունդեզ, և այնտեղից՝ մեծն Սադիվա, որ 45000 տուն էր։ Այնտեղ կրկին հիվանդացա և փորցավ եղա, և այնտեղ հոգևորականները մեծ սիրով ընդունեցին ու ինձ ծառայություն մատուցեցին, մինչև որ առողջացա և ելա, գնացի և 15-րդ օրը հասա մեծն Վալենցիա, որ 70000 տուն էր, մնացի 4 օր։ Այնտեղից գնացի և 21 օրում հասա Պարսալոն մեծ քաղաքը, որ 90000 տուն էր, և մնացի 5—6 օր։ Եվ այնտեղից՝ Բրբնիա և անցա Կարդալին աշխարհը, և գնացի 36 օր ու հասա Յիցիլայի աշխարհը, և անցնելով շատ օրեր, բազում քաղաքներով՝ Ֆրանցուզաց աշխարհը։ Անցա Միլանի դքսության աշխարհը և եկա աստվածապահ Ֆրկարոլ քաղաքը։ Եվ խիստ մեծ պատվով հարգեցին ինձ՝ 15 օր տնետուն մեծարելով։ Աստված շեն պահե իրենց։

Եվ ելա հասա մեծն Ալեքսանդրիա։ Այնտեղից բազում օրեր եկա, հասա Ճնվեզ քաղաքը, եկա, որ նավ նստեի և գայի իմ աշխարհը։ Բայց ծովը պղտոր էր, ալեկոծություն էր, չկարողացա նավ մտնել, ետ դարձա և շատ չարչարանքով բազում օրերում հասա Ուրվիթա, որտեղ երկու եղներ էին կանդնեցրած։ Ելա բազում քաղաքներով հասա Մոնթիֆիասկո և այնտեղից՝ Վիթերպո, և այդտեղից՝ բազում օրեր եկա, հասա դարձյալ Հռոմ քաղաք, սուրբ գլխավոր առաքյալների ոտքը, 1496 թ. փետրվարի 20-ին, Մեծ պահքին մտա մեծն Հռոմ։ Եվ ելա հասա Սանթամարիա, Տլորեթ, և եկա Անքոնիա, մտա նավ և բազում փորձանքների հանդիպեցի, հոժարեցի մահվան, միայն թե այն վիշտը չկրեի։

Փառք հավիտյանս. ամեն։

www.a-pdf.com

ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑԻ

(1584—1637)

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

(Հատվածներ)

[ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱ]

Մի օր խնդրեցի մի քաղաքացու, և միասին գնացինք բոլորին տենչալի սուրբ Սոֆիա և կաշառեցինք շեխերին՝ մեզ ներս տարան։ Եվ տեսնելով տաճարի մեծությունն ու վայելչությունը, լայնությունն ու բարձրությունը, հիանալով՝ փառք տվինք Աստծուն. չէինք տեսել երբեք այլ տեղ այդպիսի շինություն։ Նրա մեջ տեսանք նաև բազում զարմանալի մեծամեծ սյուներ զանազան՝ մարմարյա երկար ու միջակ, տեսակ-տեսակ հաստ և նուրբ, գեղեցիկ՝ աչքի տեսությանը. որը կարմիր, որը ձյան պես սպիտակ, որը կապտորակ և որը կանաչ, որը սև և որը ծիրանի, ուրիշներ՝ խայտամետ, իսկ մի մասը խայտամետ կոփած ու քանդակած ինչ-որ բարդ հյուսվածքներով, և փորվածքները լցրած ոսկով ու լաջվարդով։ Հազար աչք է հարկավոր նայելու և վայելելու գեղեցկությունն արվեստի։ Կար նաև մի մեծ սյուն տաճարի մեջ, և դա գեհենից մարդաչափ [բարձր էր], շուրջը բրոնզով պատած, օրուգիշեր վրայից քրտինք էր հոսում՝ տեսնելի բոլորին։ Եվ գրքերից դաանք, որ պատմվում է, թե այնտեղ են սուրբ Լուսավորչի և Գրիգոր Աստվածաբանի նշխարները։ Եվ հարցրի, թե ինչու է բրոնզով պատած, ոպատավորներն ասում են՝ Բազմամբոխ ժողովրդի պատճառով, որոնք գալիս են այտեղ, տաճիկներ, և քրիստոնյաներ, աչքեր և կռնաչք, և ձեռքերը պարզելով վերցնում են քրտինքը և շփում իրենց երեսին։ Ուստի բազում ձեռքերից հաշվել-մաշվել էր սյունը երկու-երեք մատնաչափ, և այն բրոնզն արել էին իբրև ձյան պահպանակ, որ խապար չմաշվի։

Խնդրեցինք, որ մեզ բարձրացնեն վերնատուն, որովհետև մինչև գմբեթը երեք հարկ էր։ Բանալով դուռը՝ ելանք վեր հարյուր աստիճան՝ մինչև միջին հարկը, իսկ այնտեղից՝ ևս հարյուր աստիճան մինչև վերինը։ Եվ ամեն հարկ այնքան մեծ էր, որ երեսուն հազար մարդ ներս մտներ՝ չէր լցվի։ Նաև արվեստի զարմանալի գործեր տեսանք, արևմտյան կողմից կար երկու մարմարե տափակ քար, որ լույս էին տալիս։ Այնտեղ տեսանք Քրիստոսի տնօրինականները նկարած, այլև ամենօրհնյալ կույս Մարիամի, նաև սուրբ առաքյալների, մարգարեների, հայրապետների և այլ սրբերի պատկերները, որոնք անօրեններն եղծել ու ավերել էին, և միայն նշմարվում էին.

Ավելի առաջ գնալով մի պատվար տեսանք և մեկը՝ սպիտակ մարմարե մի դուռ, որի վրա քանդակած էին Քրիստոսն ու տասներկու առաքյալները, որոնք քերած ու եղծած էին։ Եվ այն դռնով մտնելով ներս՝ մի գերեզման տեսանք. գիր չկար, այլ՝ միայն երկու խաչ։ Եվ հարցրի թե ո՞ւմն է, ասացին՝ Կոստանդիանոս թագավորինը, ուրիշները թե՝ Սրա կառուցողինը։ Այնտեղից հետևն աստիճան ելանք մինչև վերին առաստաղը։ Եվ չորս կողմից պատուհան կար, որոնցից քաղաքը ձվի նման էր երևում։ Տեսանք նաև բազում

www.e-pdf.com

շենքեր ու բաներ, որ չեմ կարող գրել մեկառմեկ, որ չձանձրանան ընթերցողները ու լսողները։ Եվ այս ամենը տեսնելով՝ ես գոհությամբ փառք տվի Աստծուն, որ ինձ՝ անարժան բազմամեղիս արժանացրեց սուրբ Սոֆիայի տեսուն, և ես տալիս եմ հազար երանի կառուցողներին և պատվիրատուներին. որովհետև ո՞ր բերանը կարող է գովել կամ պատմել նրա կառուցվածքը, կամ ծախսը գրի առնել, կամ գեղեցկությունը վերարտադրել։

Արդ, ես, որ հիմար և տկար եմ բոլոր կարգավորների մեջ, ի՞նչպես գովեմ, ո՞նց մեծարեմ, և կամ ի՞նչպես կամ ո՞ւմ նմանեցնեմ Այա-Սոֆիան. որովհետև կառուցվել է սուրբ թագավորներից, օրհնվել՝ սուրբ հայրապետներից, փառավորվել հրեշտակներից։ Որ և իր մեջ ընդունեց Նիկիո ՅԺԸ (318) հայրապետներին և Ճ�Ծ (150)-ին և պատվվեց նրանց սրբությունից։ Արդ, ինչպես մեծն Հռոմը պարծենում է Պետրոսով ու Պողոսով, նույնպես մեծ Կոստանդնուպոլիսը՝ տիեզերալույս և աստվածաբան վարդապետներով. Գրիգոր Աստվածաբանով և Հովհան Ոսկեբերանով։ Նաև այլ բազմահավաք, բազմախումբ նշխարներ ունի իր մեջ ամփոփած, իբրև գանձեր պատվական և մարգարիտներ անգին։

Սուրբ Սոֆիան նաև մեծամեծ սքանչելիքներ է գործում մինչև այսօր։ Ասեմ շատերից մեկը, որ իմ ժամանակ եղավ։ ՌՃԸ (1058—1609) թվականին կայսեր հրամանով վարպետները ելան նորոգություն անելու։ Եվ նրանցից մեկը, կարիք զգալով, չիջավ ներքև, այլ կրի ամանի մեջ միզեց և խառնելով կրին ուզում էր գործածել։ Իսկ սուրբ Սոֆիան չհանդուրժեց այդ անօրեն գործը, այլ իսկույն բարձրացնելով նրան՝ անոթով հանդերձ գետին նետեց՝ բոլորի աչքի առաջ։ Եվ մարմինը մաս-մաս լինելով ընկավ գետին, ինչպես Սիմոն Կախարդի գեղը։ Եվ ովքեր տեսան՝ մեծ երկյուղով վախեցան։ Համբավը հասավ թագավորին, որ հիացած՝ փառք էր տալիս Աստծուն, և հրաման արձակեց, որ այլևս ոչ ոք այդպես հանդուգն ու լիրբ չլինի, այլ եթե կարիք ուններ, վանդակով վայր իջնի, այլև սրբությամբ ու երկյուղով ծառայե նրան։ Եվ այս հրաշքը շատերին զարմացրեց, որ մենք չտեսանք, այլ լսեցինք հայ, հռոմ և տաճիկ պատվական մարդկանցից, որ այնտեղ աշխատում էին, նաև՝ քահանաներից։ Եվ սա կատարվեց ի փառս և ի պատիվ ամենասուրբ Երրորդության՝ Հոր և Որդու և սուրբ Հոգու, ի պարծանս քրիստոնեից և ի պատիժ ուրացողների և Աստծու սրբերին չպատվողների։ Բայց վա՛յ և եղուկ իմ մեղսամակարդ թշվառ անձին, որ քրիստոնյաների անարժանության և մեղքերի համար Աստված իր սրբությունները մատնեց այլազգիների ձեռքը։

[ԳԱՂԱՆԱՆՈՑ]

Եվ այնտեղից մի քանի քայլ առաջ անցնելով՝ տեսանք մի մեծ, փառավոր և գմբեթաշեն եկեղեցի։ Ներս մտնելով՝ տեսանք, որ դեռևս երևում էին սրբապատկերների [գծա]նկարները և մեծ ու լայնանիստ ավագ խորանը։ Եվ ուներ բազում մատուռներ՝ մեծ ու բարձրաբերձ, որ այժմ գաղաններ տուն են դարձրել և տաճկերեն ասլանխանա են կոչում, ուր լցրել են բազում և տեսակ-տեսակ գաղաններ, և ամեն մատուռում մի տեսակ գազան էր, նաև առյուծ, ինձ, ծովային կատու, հովազ և այլն։ Երբ ես դա տեսա, արտասուք թափելով՝ հոգոց հանեցի և ասացի. «Տե՛ր իմ, ինչո՞ւ մտան հեթանոսները քո ժառանգությունը և պղծեցին քո սուրբ տաճարը։ Ինչո՞ւ քանդեցիր սրա պարիսպը, և հայհոյում են անցորդները սրան։ Սա ապականեցին

www.a-pdf.com

քաղերն ու վայրի կենդանիները, և գիշատիչ գազաններն են արածում և կերակրվում սրա մեջ։ Եվ քո սեղանները կործանեցին, և մենք ծաղրուծաղակի առարկա դարձանք, այլև մեր դրացիների նախատինքը, և չկա մեկը, որ պատվե կամ նորոգե սա»։ Եվ դառնալով արևելակողմը՝ ասում եմ. «Տե՛ր Աստված զորութեանց, դարձիր նայիր ու տես, այցելութի՛ւն արա այս այգուս և դարմանդ, որովհետև սա քո հարսն է և մեր մայրը, որ պսակեցիր քո պատվական սուրբ արյամբ և փառքով զարդարելով պճնեցիր և կոչեցիր տուն աղոթից։ Եվ ինչո՞ւ ես չկորա կամ չմահացա, փոխանակ իմ աչքով այսպիսի դառն կսկծանքի աղետ տեսնելու։ Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. ինչո՞ւ այժմ արգելված ու քամահրված է անօրեններից, և դու ինչո՞ւ ես լռում ու համբերում»։ Եվ իմ մտքում երկրպագություն մատուցելով Աստծուն՝ սրտմոսթյամբ ելա այնտեղից։ Եվ ասացին, որ այս եկեղեցին կուսանաց վանք էր [եղել]։

[ԹԱԳԱՎՈՐԻ ԱՊԱՐԱՆՔԸ]

Եվս մեկ նետաձիգ առաջ [անցնելով], տեսանք մի յոթ մարդահասակ բարձրության սյուն՝ մեծամեծ քարերով շարած, առանց կրի. և անշարժ է՝ ի հիացումն և սքանչացումն բոլոր մարդկանց։ Եվ սրանց մոտ՝ թագավորի ապարանքը, որ քաղաքի պես մեծ էր, և երկու-երեք [շարք] պարիսպ ուներ և միայն երորդում՝ բնակատեղի։

[ՄԱԼԱԹԻԱ]

...Ապա այնտեղից վեց օրում հասանք Մալաթիա, [ուր] բնավ շենք չտեսանք, միայն իջևաններ։ Եվ կար մի գեղեցիկ իջևան, որ կոչում են Կուրճի խան։ Մալաթիան պարոպապատ է և մրգաշատ, բայց մարդ չկար, միայն պահապաններ, և ասացին, թե Աղպուս գյուղում է. և քաղաքը դատարկ է մնում Սիսի նման։ Եվ կար մեծ մի քարե եկեղեցի՝ Լուսավորիչ անունով, և երեք քահանա, հարյուր տուն հայ և՝ լիություն, էժանություն, առատություն։ Ի(40) վարունգը մեկ դրամ, Ե(5), Զ(6) ձմերուկը մեկ դրամ, Դ(4) հացը մեկ դրամ, չորս դրամ մեկ օխա միսը։ Գյուղում կար մի եկեղեցի և Լ(30) տուն հայ։ Այնտեղ երկու շաբաթ մնացի կարավանի համար։ Բայց այստեղի տաճիկները խիստ քաղցր ու մարդասեր են, բարի, նման չեն մյուս տաճիկներին՝ իժ ու օձ, որ մեզ նույնիսկ կավուր չեն ասում, այլ էսայի և յիսակուլի. և հույժ պատվում և սիրում էին մեր ազգը։

[ԽԱՐԲԵՐԴ]

Այստեղից ևս երեք օրում եկանք Շիրաք, որ է Խարբերդ, որ բարձր լեռան վրա է։ Եվ քաղաքում կար երեք հայոց եկեղեցի և հարյուր տուն հայ, իսկ տաճիկները շատ չար ու վատ և խստասիրտ են, առավել ևս ենկիչարիները, որովհետև սրանք տիրել են քաղաքին, և տները մեծամեծ են շինած՝ պալատների նման, ամենքը մի-մի պարոն են, հարստահարությունը՝ շատ. մարդ չի կարող մի բան ասել, որի համար քիչ հայ է մնացել։ Եվ սուրբ Հակոբի եկեղեցին խիստ զորավոր է, որի ահից սարսում են տաճիկները և՛ հարգանք են մատուցում, և՛ նվերներ տալիս սքանչելիքների համար։ Քաղաքում և ամբողջ գավառում, շրջակա գյուղերում կային շատ ասորիներ։

www.a-pdf.com

Եվ բերդին կից կար ասորոց մի մեծ եկեղեցի, հին, որ ասում էին, թե սա ավելի հին է, քան գմբեթը։ Եվ քաղաքի առջև մեծ դաշտավայր էր՝ ազնիվ և ջրառատ, նման Արթոխ դաշտավայրին։ Եվ այն դաշտավայրում բոլորը հայկական գյուղեր էին մինչև Եփրատ գետը։ Կային և ասորոց մեծ գյուղեր՝ Ավիոս, Ապտուհեր և այլն։ Եվ կար երեք անվանի մեծ վանք դաշտավայրում՝ մեկը Սոռսրու սուրբ Գեորգ, մեկը սուրբ Աբղլմսեհ և մեկը Կարմիր վանք. Աբղլմսեհ [վանքի համանուն] լեռան տակ է, և դեռ այն քարը կա արնաթաթախ, որի վրա հայրը սպանեց [Աբղլմսեհին]։ Եվ Կարմիր վանքում կան իմաստուն վարդապետներ և գրագիրներ, որը վկայում են պատմագիրները, և մինչև օրս գրքեր և լավ վարդապետներ են դուրս գալիս այնտեղից։ Եվ սուրբ Գեորգի առաջնորդը մի Մկրտիչ վարդապետ է, աշակերտ Ազարիա կաթողիկոսի, որն ինձ հյուրընկալել էր. սա տեսնելով ինձ՝ վերցրեց վանք, իր մոտ։

Մի մեծ գյուղ կար՝ Կասրիկ, որ մեջը հազար տուն էր. երեք քարե եկեղեցի և շատ քահանաներ, բայց քիչ է ժողովուրդը, որ եննկիչարինները հալածել էին։ Եվս մի գյուղ կար՝ Պզմշեն, հույժ բարելի, և մարդիկ փարթամ։ Այժմ այն տանուտերերից մեկն էր մնացել՝ Մարգարեի որդի Մուրատը. սա փաշային բերեց իր տունը պատվելու, բոլոր հեծյալներով և կերակրեց առանց կրակի, և երկրորդ օրը կերակրեց եփած ուտելիքով. այնքան մարդկանց, այրուձիի դարման և գարի նա միայն ինքը տվեց։

Եվ Խարբերդում ևս մեծամեծ տներ էին, ինչպես Սեաստում։ Այնտեղ տեսանք մեկ տան մեջ քառասուն օրոցք, և բոլորը՝ հորը հնազանդ։ Եվ եթե հայրը մահանար՝ մեծ եղբորն էին հնազանդում։ Եվ այսպես մեծ սեր և մեծ միաբանություն տեսանք այն երկրում, ուրիշ տեղ երկու եղբայր կամ երկու քույր չեն կարող միասին [բնակվել մի տան մեջ]։

Եվ հայերը սիրով էին ասորիների հետ. աղջիկ էին տալիս ու առնում, և թե մի հայ մեռներ՝ ասորոց երեցին էին կանչում թաղման և ասորիների [դեպքում]՝ հայոց քահանաների, և բոլորը հայոց լեզվով էին խոսում։ Նրանց մեջ կային և հույնի գյուղեր, նրանք ևս աղջիկ էին տալիս ու առնում, նրանք ևս մեծ սեր ունեին հայերի նկատմամբ և՝ միասնություն, և հայոց լեզվով էին խոսում, և չես ճանաչի՝ հայ է, թե՝ հույն, և ո՛րն ասորի, որովհետև նրանց մեջ խտրություն չկա և ոչ մի բան։

[ՄՇՈՒ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ]

Եվ երբ տեսանք Մշու սուլթան սուրբ Կարապետի գմբեթները՝ ընկանք մեր երեսների վրա և բազում խնդությամբ լցված գոհացանք Աստծուց, որ արժանի արեց մեզ սուրբ Կարապետի տեսնուն. փա՜ռք Աստծու։ Որը մեծ և փառավոր վիմաշեն կամարակապ մեծ եկեղեցի էր երկու գմբեթով, և վերը՝ արճիճ, ինչպես մզկիթների վրա, և ներս մտնելով՝ տեսանք լայնանիստ բակը՝ պարսպով, բազում խցերով և օթևաններով։ Կար մի վարդապետ ընտիր և աստվածահաճո՝ Պողոս անունով, չորս եպիսկոպոս, ժե(15) աբեղա, տնտեսներ, սարկավագներ։ Եվ բոլոր մշակները քուրդ էին և հայերեն ջրի պես էին խոսում։ Եվ ոչ միայն վանքը, այլև ամբողջ Մշո դաշտը և գավառը, հայերեն են զրուցում քրդերը և սուրբ Կարապետի անունով երդվում։

Փոքր բան տարանք, ժամ անելով տվինք և աղաչեցինք, որ մեզ տանեն [այնտեղ], ուր տապանն է։ Եվ եկեղեցու մեջ սյուները՝ գեղեցիկ մարմարե, և կա աջ կողմը մատուռ մի և գերեզմանը ս. Կարապետի, իսկ մյուսը Ան-

www.a-pdf.com

Թանագինն եպիսկոպոսի, որին երկրպագելով աղոթեցինք, մեղաց թողութիւն խնդրեցինք մեզ և մեր ծնողաց և մեր երախտավորներին: Մենք հաստանք մեր բաղձանքին. Աստված բոլորին հասցնե իրենց բաղձանքին: Եվ մեզ ավին Թանկագին հողից, որ սուրբ գերեզմանից է ելնում:

Եվ մեզ ճաշի կանչեց վարդապետը, որ երկյուղած էր և աստվածասեր, քաղցր և համեստախոս. կերանք վանքի կերակուր և ջուր խմեցինք: Վարդապետն սկսեց խոսել և ասել. «Ի՞նչ անեմ, որդյակ, նոր եմ շինել և նորոգել վանքս, որ շատ ավեր ու ամայի էր, որովհետև ամեն տարի խըզըլպաշն այրում է, այրում: Ահա երկու տարի է, որ խաղաղ ենք»:

[Վանքն] ուներ ժ(10) գոմեշ, ճ(100) ոչխար, ժե (15) եզ: Այնտեղից գնացինք մեծ անտեստունը, տեսանք մի մեծ թոնիր, որ մի հղ կմեկնվեր, և ասացին՝ «Ինչքան փոշի և աղբ լինի թոնրի մեջ՝ մենք չենք ավլում. առավոտյան ելնում՝ տեսնում ենք ավլած»: Եվ ասացին՝ մի կաղ դև կա, որ սուրբ Կարապետը այնտեղ թողել է վանքի սպասավոր:

Եվ ձախ կողմը մի մատուռ ևս տեսանք, ասացին՝ «Մի իշխանի կին է սա շինել. ուզում էր մտնել ներս, և չթողին, որովհետև կնոջն արգելվում էր, և նա բռնի մտավ ներս, և սուրբ գերեզմանից զորություն ելավ և որպես զրահավոր մի այր գեղարդով խփեց և սպանեց նրան, և թաղվեց այստեղ»: Եվ դուրս ելանք, դռան հանդեպ, արևելյան կողմը մի փոքրիկ գմբեթ կար աշտարակի նման, որ կոչում են Հարութիւն, մտնելով ներս՝ տեսանք սեղան, երկրպագելով՝ ելանք այնտեղից: Եվ ասացին, որ այդ գմբեթի տակ դևեր են աբգելված, և մենք, գետնին դնելով ականջներս, այլևայլ ահարկու ձայներ լսեցինք: Եվ նրան կից՝ Իննակյան աղբյուրը, իրար մոտիկ, ազնիվ ու գեղեցիկ ջրեր: Եվ մի գուռ մեծ էր մյուսներից, ուր, ասացին, Լուսավորվիչը մկրտութիւն է արել. և երբ խմում էինք՝ սաստիկ սառնութիւնից չկարողացանք երեք կում առնել: Եվ ավելի առաջ գնալով՝ տեսանք հազար ու ավելի թոնիր և ակուր՝ ուխտավորների համար, որ այնտեղ խարու և պիրնան են եփում. որովհետև ամբողջ աշխարհից գալիս են այստեղ՝ հնոու և օտար երկրներից, Ուռումելից և Լեհաստանից ԲՌ(2000) , ԳՌ(3000) հոգի կլինի, և ուխտը Վարդավառի օրն է:

Եվ եկեղեցու հետևում տեսանք մեծամեծ խաչարձաններ կանգնեցրած և տեսակ-տեսակ արվեստով ու նախշերով քանդակած: Եվս մի քիչ ներքև կար մի ուրիշ վանք՝ Ջորեհանգիստ են անվանում, բայց ավեր է, և ասացին, թե ջորիները, որ վերցրել էին սուրբ մարմինը, այնտեղ կանգ առան և տեղից շարժվել չկարողացան, և երբ տարակուսեցին՝ եկավ Տիրոջ հրեշտակը և ասաց. «Տերը հաճեցավ, որ այստեղ բնակվեն սրբերը», այդտեղ եկեղեցի էր կառուցված:

Անցանք եկեղեցու աջ կողմը, տեսանք Արջի գերեզմանը, բայց երկու կես էր եղած, և ասացին՝ «Ով այս քարի վրա պառկի՝ մեջքը չի ցավի»: Բայց գող քրդերի պատճառով բարձր պարիսպ էր քաշած:

Իսկ սուրբ Կարապետն անտառի մեջ է, լեռնային շատ գեղեցիկ տեղ, և ճանապարհին ամբողջ անթառամ ծաղիկ է և վայրի սմբուլ և այլ հոտավետ ծաղիկներ: Իսկ անտառում ամբողջ միրգ է՝ խնձոր, տանձ և սալոր, ընկույզը՝ շատ: Լինում է և մի տեսակ պտուղ՝ կտրմիր-սպիտակ գույնի, փոքր և կլոր՝ կեռասի չափ, թթվաշ համ ունի, կոչված են ալոճ: Եվ ընկուզենիների ճյուղերն արջերը կոտրել էին՝ վրան բարձրանալով. որովհետև անտառում շատ [արջ] կա, և շատ են սիրում ընկույզ:

Սուրբ Կարապետից երևում էին Վանա սարը և Բաղեշը և մյուս կողմը՝

www.allpdf.com

Եփրատ գետը և Մուշ քաղաքը՝ գաշտով, եվ դաշտում կա երեք անվանի սքանչելագործ մեծ վանք, և իրար կից ու մերձ են կասկարայի նման. մեկը Մատնեվանքն է, ուր Պետրոս առաքյալի մատն է և այլ բազում նշխարներ. որ սասունցի տանուտերը բերեց Հռոմից և վրան շինեց եկեղեցին և կոչեց Մատնեվանք: Երկրորդը սուրբ Աղբեր [վանքն] է, ուր շշով պահվում է Քրիստոսի պատվական արյունը, որ կողից է. եվ [երրորդը] սուրբ Առաքյալն է՝ լեռան ստորոտին, ուր Քրիստոսի բևեռներն են, որոնցով գամվեց, նաև՝ Գեղարդն ու այլ մասունքներ: Ավելի ներքև խոր անտառներ են և լեռներ, որ Սասունքն է:

Երեք օր մնացի այնտեղ, հասա բոլոր բաղձանքներիս: Այնտեղ կար տեր-Մարտիրոս անունով մի եպիսկոպոս և մի վարդապետ՝ հույժ քաղցր ձայնով, որ երգում էր՝ Մամասի նման հմտով, ոչ թե միայն մարդիկ էին զմայլվում, այլև թռչուններն էին հավաքվում նրա շուրջը: Սրան շատ էին աղաչում մնալ Ամիթում, իսկ նա չէր ուզում, որովհետև փառք չէր որոնում մարդկանց մեջ, այլ՝ Աստծու մոտ:

[ՍՈՎՔ-ԱՐՊՆԻ]

...Եվ սուրբ վայրերին և բարի, աստվածազգյաց կրոնավորներին կաթոգին սիրով հրաժեշտ տալով, մինչևիսկ արտասվելով՝ կրկին դարձանք խարբերդ: Այնտեղ լսեցինք, թե Մուրատ փաշան անթիվ-անհամար հեծելազորով գնում է շահի դեմ և Ամիթ հասնելով՝ մահանում:

Ես, ողջունելով իմ վարդապետին, վերցրի ձիս և զգեստներս և չվեցի դեպի Ամիթ, և լեռներով ու անտառներով երկու օր ու կեսում հասա Սովք. և Սովքի մեջ, կղզում կար մի հայկական գյուղ և մի քարե եկեղեցի, որտեղ մասունք կար խաչափայտից, ինչպես կոչվում է շատ գրքերում՝ Սովուց սուրբ նշան, որը բազում նշաններ ու սքանչելիքներ է ցույց տալիս մինչև օրս, որ և կարդացի գրքերումս և լսեցի շատերից: Եվ ցամաք տեղում, լեռան կողմը, ուր անտառ էր, իջևան կար. այդտեղ հանգրվանեցինք: Եվ իջևանում թողնելով մեր իրերը, ունեցվածքը և գրաստները, մի նավակ գտնելով՝ անցանք գյուղը և մտանք եկեղեցի. դեռ կատարում էին երեկոյան ժամասացությունն: Խնդրեցինք, և մեզ ցույց տվին սուրբ նշանը, որին ընկանք երկրպագեցինք և մեղքերի թողություն խնդրեցինք մեզ և մեր ննջեցյալներին:

Այնտեղից մեկ օրում հասանք Արղնի քաղաքը, որ բարձր լեռան վրա էր, գագաթին՝ մեծ վիմաշեն գմբեթահարկ եկեղեցի, որ կոչվում է Բարձր Աստվածածին: Եվս մի եկեղեցի կա լեռան ստորոտում, ինչպես Վարագինը: Կային նաև գյուղ և ժողովուրդ: Եվ ասացին, որ վերին տաճարը առաքելաշեն է և խիստ սքանչելագործ, որ կիրակնամուտին լույս է իջնում գմբեթին՝ տեսանելի բոլորին: Եվ կես օրում այնտեղից հասանք մի վայրի լեռ, որ կոչվում Նալ-ղրան: Եվ իրոք, ամբողջ քար էր, հող կամ կանաչ չէր երևում: Հազիվ անցանք, ո՛չ պայտ մնաց, ո՛չ ոտնաման, և իմ սրնակոշկի կրունկն ընկավ: Այնտեղից եկանք Տևեկեչիտ, որ խորունկ ջուր էր, և ուղտերով հազիվ անցանք: Ամիթի մերձակայքը զուտ հայկական գյուղեր են և վանքեր՝ ո՛րը շեն, ո՛րը ավեր: Եվ Ստամպուլից մինչև Ամիթ ոչ հույն տեսանք, ոչ հրեա: Բայց Թոխաթում՝ չհաշված մի քանի տուն. նրանք ևս հայերեն էին խոսում: Մինչև Սևաստ ասորիները սակավ էին, այնտեղից հետո ամբողջապես հայ ու ասորի են մինչև Մուսուլ և Պաղտատ և այլն, որ կոչվում է Ասորեստան:

www.a-pdf.com

...Բայց վայ հազար բերան, քանի որ այս տարին, որ էր ՌԿԲ(1616) թվականին չարի ազդմամբ սուրբ Երուսաղեմ եկավ մի մահմեդական իրավարար, որ կոչվում էր Աստատ էֆենդի, և տեսնելով Աստծու եկեղեցիների գեղեցիկ վայելչությունը՝ չարակնեց դառն նախանձով, վերցրեց Համբարձման մեծ եկեղեցին և նրան կից մեջիթ ու մզկիթ կանգնեցրեց, որ վաղուց ի վեր շեխերն ու քաղաքի տաճիկները նախանձում էին և չէին կարողանում առնել, որովհետև պարոնտերը դիմում էր գրում, բողոքում Ստամպոլ, այլև գնում էր Հալապ, Շամ, կաշառքով փրկում: Բայց իրավարարը բռնությամբ առավ, որովհետև աչքի ընկնող տոհմից էր, այլև սիրելի ու խորհրդակից խոնթքարին: Եվ մեծ սուգ եղավ բոլոր քրիստոնյաներին. և սա իմ ծովացյալ մեղքերի համար արեց. վա՜յ ինձ, որ տեսա այն կսկիծը: Այլև խիստ շատ տուրք ու տալիք ունի պարոնտերը. տարին ԲՒ(2000) ղուռուշ և ավելի, և մի դրամ չունի ինքը, և ոչ հայ [կա], որովհետև ամբողջ Արաբստան է. միայն Մրսըր և Հալապ կան հայեր. քսան օրվա ճանապարհ: Թե ուխտավորներ գան, դրամ լինում է, ու թե չգան՝ այլ տեղից դրամ մի չունի:

[ՍՈՒՐԲ ԼՈՒՅՍԸ: ՀԱՊԱՇՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՆՎԵՐԸ]

Եվ մեծ շարաբի օրը պարոնտերը մտնում է սուրբ Հարության՝ քահանաներով և ամենայն ուխտի մանուկներով: Նույնպես և ամեն ազգ իր առաջնորդով. և Հարության [եկեղեցու] մեջ լինում է բազում ժողովուրդ՝ եկվոր և բնիկ, հավատացյալ և անհավատ, և ամեն ազգ մտնում է իր մատուռը, և հայերը՝ Վերնատունը: Եվ ինչքան մեծ է եկեղեցին՝ պատում են կերպասով, զարդարում են նաև սուրբ Գերեզմանը: Եվ ասացին, թե այն թավիշ վարագույրները Հապաշի թագավորն է ուղարկել ի պատիվ սուրբ Հարության, և ամեն տարի է առաքում, բայց սաստիկ հեռավորության պատճառով հազարից մեկը չի հասնում, և որովհետև ճանապարհն ամայի ու անմարդաբնակ է, և տարբեր տեղերում զանազան բարբարոսներ են բնակվում, և տաճկի սահմանում՝ ասր արաբները, սրանք չեն թողնում, որ հասնեն՝ թեպետ հեծելազորով են գալիս: Եվ մի տարի ԽՒ(40.000) ոսկի էր ուղարկել, կողոպտել էին, ոսկին առել և մարդկանց սպանել. միայն երկու աբեղա ազատվելով եկան և այնտեղ մնացին, և մենք տեսանք նրանց, որ սև էին իբրև ածուխ, միայն ատամները՝ սպիտակ. նրանք պատվում էին թագավորին նրա մեծության ու փարթամության համար և Միլ ջրի համար պատիվ են ստանում տաճիկներից, որովհետև գետը նրանցից է գալիս. և եթե ուզեն՝ կարգելեն և չեն թողնի: Եվ այս սքանչելի ջուրը որքան գալիս է քրիստոնյաների աշխարհով՝ հստակ ու ջինջ է գալիս, բայց երբ մտնում է անհավատների երկրները՝ պղտորվում, խառնվում և փոխում է գույնը, փա՜ռք Աստծու:

Իսկ նրանք բնավ մուտքի հարկ չեն տալիս, և ոչ չորս ոսկի՝ դռանը, Միլի ջրի համար, այդ պատճառով նաև նրանք առաջ են ելնում, թափոր կազմում և նախ մտնում և լույս են վառում, ապա ուրիշները, շրջապատելով Քրիստոսի Գերեզմանը, բռնած ունեն վրանի պես մի բան, որով շրջում են, բամբիռ խփում, նաև ծնծղաներ, և աղաղակում են...

www.a-pdf.com

Բայց հայոց պարոնտերը կամ դասասաց մի վարդապետ ելնում է ամբիոն և սկսում քարոզել և հաղորդել լույսի բխման մասին, ապա հորդորում է ժողովրդին, երանի տալով նրանց, որ այն ժամին հանդիպեցին, որի համար պետք է ահուդողով, զղջմամբ և պաղատանքով, խոստովանությամբ և սրբությամբ արժանանալ լույսի տեսիլին և մեծ պատրաստությամբ սպասավորել նրան: Իսկ դառն աղքատները, որ մնացին դռանը, լալիս ու ողբում են և խնդրում, որ մտնեն նրա մոտ: Իսկ նրանք ասում են՝ «Ո՛չ, երեք կամ երկու ոսկի տվեք»:Երբ երդվում են՝ «Չունենք ոչինչ»,— մերկացնում են և մեկ-մեկ փնտրում ամեն տեղ, երբ չեն գտնում, ապա կանչում են թարգմանին և ասում. «Ինչ տալիս եք՝ տվեք», որ չզրկվեն լույսից: Եվ նա գնում ասում է պարոնտերին, և պարոնտերը հորդորում է խոճաներին, աղաչում և խնդրում հանուն Քրիստոսի սիրո, թե՝ «Մի թողեք նրանց դուրս մնալ, այլ ըստ ձեր կարողության տվեք, որ նրանք ևս տեսնեն լույսը»: Եվ ում ծագում է սուրբ Հոգին՝ գալիս ու ասում է. «Ես մեկին կբերեմ», մյուսն ասում է. «Ես երկուսին», և ոմն՝ «Երեք կամ չորս կամ հինգ», և այսպես շատերին մտցնում են Հարության [եկեղեցին], և եթե մնա ժ, ժե(10, 15) հոգի, թարգմանը գնում ասում է. «Սրանք կույր են, մյուսները՝ կաղ, ձեռնատ, տկար, թող Աստծու սիրուն և խոնթքարի գլխի և արևի համար լինի. մեկ-մեկ չափ կտրիր նրանց: Նրանք գոհ կմնան: Ասում են՝ «Լավ է՝ առնենք շատ թե քիչ, քան թե ոչինչ»: Որովհետև կա և նզովք՝ ով որ թույլ չտա լույսի ժամին [մտնել]: Եվ ասացին, թե մի ժամանակ այդպես մեծապատիվ աղքատներ մնացել են դրսում. չեն թողել մուտքի դրամով, թե՝ լրիվ տվեք, և նրանք այնպես անմասն են մնացել, և երբ լույսը ելել է՝ դուրս է վազել նախ աղքատների համար, և դռան երկու կողմը մարմարե երկու սյան գլուխը այրել է, որը տեսնելով՝ բազմությունը փառք էր տալիս Աստծուն: Եվ մինչև այսօր վառված տեղը երևում է հրագույն, որ տեղհկացրին խոնդքարին, և նա հիացած հրաման և՝ հրովարտակ ուղարկեց Երուսաղեմ նզովքով, որ եթե աղքատները չունենան և երդվեն, որ չունեն՝ ներս թողնեն նրանց, որ լույսից չզրկվեն: Եվ մենք մեր աչքով տեսանք այն սյուները այրված ու սևացած, և հրաշափառ լույսի վերաբերյալ այն հրամանագիրը քանդակած է քարե տախտակի վրա, Հարության [եկեղեցու] մուտքին. որովհետև գիրն արաբերեն է գրած: Դարձյալ վարդապետը հորդորում է ժողովրդին, ասելով՝ «Հանուն Աստծու սիրո և սուրբ լույսի պատվին ողորմություն տվեք, որ այն մնացած աղքատները ևս ներս մտնեն, իսկ ողորմածներն ու գթածները շատով տալիս են ըստ կարողության և վճարում նրանց համար և տանում ներս. և մեծ ուրախություն է լինում և ցնծություն: Եվ այն Ջատկի գիշերը Հարության դուռը բաց է մնում և ցերեկը, որ շատ տաճիկներ գալիս նստում են դիտելու քրիստոնյաների արարողությունները:

Իսկ Ավագ հինգշաբթի երեկոյան գալիս են մի շեխ և ղատին, այլև ջրպետը, և բոլոր կանթեղները մարում. և Քրիստոսի խորանի դռները կընքում են ղատին և ջրպետը Ե երկու շեխ, և ոստիկաններին պահնորդ են նշանակում, որ նենգություն կամ խաբեություն չլինի և մնում են մինչև շաբաթ երեկո: Եվ առհասարակ բոլոր խաչապաշտներն աղաղակում են և Քրիստոսի գերեզմանի շուրջը բոլորելով՝ երգում են իրենց լեզվով և լալով լույսին հայցում են գալ: Եվ բոլոր ազգերի կարգավորները առաջնորդներով զգեստավորվում են: Ապա մեր առաջնորդը ողորմ ձայնով ու ողբով ասում է ժո-

www.apdf.com

ղովրդին. «Զգաստ եղեք և զգույշ մնացեք մեղքերից, որովհետև մոտեցել է լույսի գալուստը, չլինի թե ձեր մեջ խոով մարդ կա կամ ոխապահ, կամ պոռնիկ, կամ թերահավատ, կամ անզեղջ, կամ չխոստովանած. իմացեք, որ մեր մեղքերի համար Քրիստոս արգելում է լույսը»: Խոսում է և ուրիշ բաներ ևս խրատ, ապա ասել տալիս երեք «Տէր, ողորմեա» ողբաձայն: Հետո երեք անգամ գոչում են այրերն ու կանայք, երկու անգամ՝ ծերերն ու մանուկները, թե՝ «Լուսավորչի փառքով ենք փառք տալիս Աստծուն», և շարական են ասում. «Լուսաւորեա՛, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո», նաև՝ «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի»: Եվ հանկարծակի լինում է որոտում և գոչումն, որից ոմանք սառչում են, ապա գալիս են աղավնիները, երթևեկ անում գմբեթի տակ, դարձյալ ժողովուրդը երկու, երեք անգամ կարդում է և աղաղակում՝ «Տէ՛ր, ողորմեա». և թե՝ «Լուսավորչի փառքով փառք ենք տալիս Աստծուն»: Վերստին գոռում և թնդում է Քրիստոսի ոսկրը գերեզմանը. [նրանք], որ պատրաստ են և զգեստավորված կարգավորները ձեռներն առնում են խաչ, Ավետարան, բուրվառ, խաչվառ, իսկ սարկավագները, դպիրները և կղերիկոսները քշոց են առնում, ծնծղա, և ուրիշներն՝ այլ բան: Եվ հրամայում է պարոնտերը հաշտվել ու համբուրել միմյանց, որովհետև Քրիստոս չի գալիս մեղավորների և ոխապահների մոտ, այլ փախչում է [նրանցից]: Եվ բարձրաձայն գոչում են երեք «Տէր, ողորմեա», հետո՝ «Լուսավորչի փառքով փառք ենք տալիս Աստծուն» և սաստիկ գոռում է սուրբ Գերեզմանը և լինում է մեծամեծ ճայթմունք, որտեղից լույս է ճառագայթում և պատուհան է բացվում դեպի դուրս, ապա տեսնելով լույսը՝ քանդում են կնիքը: Եվ նախ մտնում է հապաշը, հետո հայը, ապա հոռոմը: Եվ մեր պարոնտերը Հովհաննես կաթողիկոսին հրավիրեց, և [նա] հագավ շուրջառ, եմիփոբոն, և թագը գլխին դրեց ինչպես սուրբ պատարագի ժամին, և տեռան հայոց կանթեղը վառած, ուստի և կոչվում է Լուսավորչի կանթեղ, որ խորած է. այնտեղից են վառում պատրույգները: Եվ դուրս ելնելով՝ հերթով ամեն առաջնորդ իր ազգին լույս է տալիս, և նրանք վերցնելով շփում են երեսներին և մորուքներին, և չի այրում, որովհետև դեռ հուր չէ, այլ՝ լույս: Երեք ձեռք է անցնում, ապա այրում է: Այնուհետև սկսում են մեկառմեկ մտնել մատուռը: Եվ սուրբ Գերեզմանը կարմիր է և տաքացած, ջերմ, և ոլոռաձև քրտինք է հոսում, որը սրբում է վրայի պատանքը, և պատանքի վրա աղտի նման է քրտինքը, որ երևում է: Եվ վառում են ԺԲ(12) կանթեղները և կանգնում պատարագի՝ ինչքան մատուռ որ կա: Եվ պատարագներից հետո գիշերը մնում են բոլոր ազգերի ծոմապահները. իսկ հայերը խթում են ձկով, ձվով և պանրով, որը տեսնելով ուրիշ ազգեր ծիծաղում են և մեզ նախատում:

Այս ամենը տեսնելով՝ թուրքերը գոչում են՝ «Ալլահ, ալլա՛հ», և գնում են իրենց տները:

Բայց սքանչելիք պատմեմ ձեզ, որ այս տարի եղավ. զի լույսը երկու ժամ ուշացավ և չելավ, և պարոնտերը վարդապետներով, եպիսկոպոսներով մեծ տարակույսի մատնվեցին և արտասվախառն սգում էին, այլ հնար չիմացան, քան Աստծուն աղաչելը, և դռանն ընկնելով երեսների վրա՝ երկար աղոթեցին: Այնտեղ էր և Ամիթի մեծ վարդապետ տեր Բարսեղը: Աղաղակում էին՝ «Տե՛ր, ողորմիր մեզ, որովհետև քեզ հուսացինք, և չկա ուրիշը բացի քեզնից, ծագեցրու քո ողորմությունները, զի մեր դրացիների նախատինք եղանք, ծաղրուծանակի առարկա. հեթանոսները չասեն՝ Ո՞ւր է նրանց Աստվածը: Օգնիր մեզ, Աստված, Փրկիչ մեր, քո անվան մեծ փառքի հա-

www.a-pdf.com

մար: Ո՛չ մեզ, Տեր, ո՛չ մեզ, այլ քո սուրբ անվան համար»: Եվ առաջ գալով՝ Գրիգոր պարոնտերը ի խորոց սրտի խոստացավ Աստծուն ծածուկ ԲՌ(2000) ծնրադրություն, և տեր Բարսեղը՝ Ռ(1000), և ապա ողորմածն Աստված ողորմեց և գթաց և առաքեց լույսը՝ ուրախացնելով քրիստոնյաներին:

Եվ մի փոքր նիրհելով կեսգիշերին՝ նախ հոռոմը ժամահարեց, իսկ զանգը կուրճու պղնձից էր և շատ համեղ, մեղմ ու քաղցր ձայն էր հանում, այնքան, որ թմրելով զմայլեցինք, ապա նաև հայերինը խփեցին, փայտե՝ հնչում էր Հարության եկեղեցու զանգակի նման ահեղագոչ և ազնիվ եղանակով. և սկսեցին հսկումն ու գիշերային պաշտոներգությունը մինչև լույս: Եվ առաջնորդը պատարագ մատուցեց Ջատկի օրվա առթիվ: Պետք էր տեսնել եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների, կրոնավորների, սարկավագների բազմությունը, և զգեստներն ու զարդերը, անոթներն ու սպասքները: Եվ ինքը հագել էր շուրջառ՝ ամբողջովին ոսկեթել, Ստամպոլի բանվածք, և ասացին, որ հազար ղուռուշ արժե, որովհետև, ասացին, ծանր բան է: Նաև այլ զանազան շուրջառներ՝ ոսկեճամուկ և ոսկևման դիպակից՝ քա՜նի հարյուր: Եվ այն գիշերը հաշվեցի կանթեղներն ու ջահերը միայն սուրբ Հարությունի՝ հինգ հարյուր, սուրբ Հակոբից և մյուս վանքերից զատ: Եվ այս ամենը միայն հայերինն էր: Որովհետև այն ժամանակ հայոց ազգը պերճ ու փարթամ էր բոլոր ազգերից. կարծում եմ, որ թագավորների ժամանակ այսպես եղած կլինի:

Նույնպես [են] ժամակարգություններն ու գրքերը, որոնց մի մասը գրել է տրվել և մյուսները՝ նորոգել, չկան այլ տեղ. որովհետև ինչ գիրք ուզում ես՝ կգտնես սուրբ Երուսաղեմում: Այս ամենը իմ աչքով տեսա:

Եվ այս տարին (1617) Հռոմի պատրիարքը փախավ պարտքերի պատճառով. որովհետև ասում են, որ ԽՌ(40.000) ղուռուշ պարտք ունի: Եվ զոհություն ու փառք Աստծու, որ մենք այսպես շեն ու հաուտատ տեսանք մեր եկեղեցիները, քանի որ մի ժամանակ նաև հայերն էին այսպես...

www.a-pdf.com

ՕԳՈՍՏԻՆՈՍ ԲԱԶԵՆՑ

(ԺԷ ԴԱՐ)

ՈՒՂԻՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱ

Փառք Հորը, Որդուն և սուրբ Հոգուն. ամեն։

Օրհնյալ լինեն սուրբ Երրորդությունը և մի աստվածությունը։

Ամեն ինչի Տերը երբ կամենա՝ ցույց է տալիս իր մեղավոր ծառաներին բազում բաներ, որ և ինձ՝ տարարժան մեղավորիս ցույց տվեց այսքան, որ արժանի չեմ։

Սա է Ֆրա Օգոստինոս քահանայի վարքը, լսեցեք։

Ես՝ անարժան Ֆրա Օգոստինոս քահանաս, Մեծ Հայաստան աշխարհից էի, Երնջակ գավառից, Ապարաներ գյուղից և ազգությամբ հայ, կրոնով հնազանդ Քրիստոսի ուղղափառ հավատին։ Բարեպաշտ ծնողներս ուխտել էին Աստծուն, որ ինձ ծառա տային Ամենայն սրբոց [եկեղեցուն]։ Երբ ես եղա ութ տարեկան՝ ինձ տվին ծառա Ամենայն սրբոց [եկեղեցուն]։

Ես՝ մեղավորս ուսում առա տեր Մաթիոս քահանայից. այն ժամանակ մեր երկիրը օսմանլին հողոտում էր։ Հինգ տարի կարդացի, Ը(8) կանոն սաղմոսը, ուրիշ շատ գրքեր սերտեցի, դրանից հետո մեկ տարի ծառայեցի [եկեղեցուն]։ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղության 1604 թ. էր, որ պարսից թագավորը բազում հեծյալով եկավ օսմանլուի վրա, առավ նրանից բազում երկիր, տիրեց մեր աշխարհին։ Մեկ տարի անց օսմանլուից զորք եկավ՝ շատ հեծյալներով։

Պարսից թագավորը հեծելազոր ուղարկեց, Արզրումի սահմանից սկսած քշեց, տարագրեց [մարդկանց], տարավ իր երկիրը։ Բոլորի հետ մեր աշխարհը ևս բռնագաղթի ենթարկվեց։ Թագավորի հրամանով հեծյալներ եկան, ինչպես կայծակը երկնքից, մեզ մի ժամ հանգստություն չտվին, որ ամեն մարդ իր գույքը պահեր։ Թողինք տունն ապրանքով լի, հոտը՝ դաշտում, հայրը որդուն ուրացավ, մայրը՝ դստերը. այդպիսի ժամ Աստված չտա իր արարածներին։

Բոլոր մարդկանց հանեցին իրենց երկրից նախիրի պես, և իրենք սրով ու նիզակով քշում էին։ [Մարդիկ] իրար խառնվեցին, ինչպես գառն է ոչխարներին խառնվում։ Լացն ու հառաչանքը երկինք բարձրացավ։ Անօրենները առաջ գցեցին ժողովրդին և իրենք հետևից ընկան՝ գեղարդներով խոցոտելով։ Հայրը որդուն չէր ճանաչում, և ոչ որդին՝ հորը, մայրը դստերը չէր ճանաչում, և ոչ դուստրը՝ մորը։ Բոլորն իրար կորցրին լալով։ Ինչպես գրել է Դավիթ Մարգարեն իր սաղմոսի մեջ՝ Երթալով գնում և լալիս էին, որ բարձած տանում էին իրենց սերմերը։ Բոլորը գերեվարվեցին.

Ես՝ մեղավորս, երիտասարդ էի։

Բոլորի հետ գերի մնացին Աստծու եկեղեցիները՝ առանց քահանայի և առանց պատարագի, ամենքը միասին անհավատների առջևից հեծեծալով

www.e-pdf.com

գնում էին։ Ոչ այրը կնոջը գիտեր, և ոչ կինն՝ ամուսնուն, ոչ եղբայրը քրոջը գիտեր և ոչ քույրը եղբորը. ամենքը մոլորած էին, ինչպես ոչխար՝ երբ հովիվ չկա։ Եկանք հասանք գետին, որ կոչվում է Արաստղ. շատ մեծ, որ մարդ առանց նավի չի կարող անցնել։ Ամբողջ ժողովրդին լցրին գետը և առանց նավի ու առանց տավարի. որը անցավ, որին ջուրը տարավ, որը հայր էր կանչում, ո՛րը որդուն էր ձայնում, ո՛րը մայր էր կանչում, ո՛րը եղբորն էր ձայնում, ո՛րը քույր էր կանչում, ո՛րը քահանա աղաղակում— շատերը գետի մեջ խեղդվեցին։ Մեղավորիս նույնպես գետը տանում էր. մի գոմշի պոչ ընկավ ձեռքս. Աստծու օգնությամբ դուրս եկա, լալով, դեպի Աստված հառաչելով։ Բոլորը լալով էին անցնում։

Երբ անցանք այս Արաստղ անունով գետը, անօրենները չթողին, որ մեկը հանգստանա կամ շոր փոխի, և կամ իր որդուն գտնի. բոլորը հառաչում, լալիս էին, և անօրենները սրերով քշեցին։ Ճանապարհին, որ գնում էինք, ով հետ էր մնում՝ սպանում էին։ Գիտենք, այս ժողովուրդը տնից դուրս եկած չէր և ճանապարհ չէր տեսել։ Սրանցից շատերը ցրտից ու խորշակից, սովից ու նեղությունից բազում հիվանդություններ ստացան։ Երեկոյան որ հանգչում էինք և առավոտյան ելնում՝ բազում մահացածներ էին մնում իջևաններում և բազում հիվանդներ. մարդու չէին օգնում, որ թաղեր մեռելները. ինչպես գրված է՝ Ու չկար մեկը, որ թաղեր նրանց։ Ճանապարհին շատ կանայք տկարության պատճառով իրենց կրծկեր զավակներին վայր էին դնում ու գնում։ Այս ճանապարհին տեսնում էինք ու նայում աջ կողմն ու ձախը, և ամեն կողմ, ամեն քարի մոտ և ամեն թփի տակ երեխաներ էին լալիս, մեկը չկար, որ կերակրեր նրանց։ Բազում հիվանդներ քահանա էին կանչում՝ մեկը չկար, որ հոգար նրանց կարիքը։ Հեծեծալով, առանց խոստովանության և առանց հաղորդության դառնությամբ ավանդում էին հոգիները, ինչպես գրել է Սաղմոսերգուն. նրանց քահանաները սրով ընկան, և նրանց այրիներից ոչ ոք չկար, որ լար։ Դարձյալ՝ Արգելեց սրով իր ժողովրդին և անտես արեց ժառանգությունն իր։ Ինչ որ հին ժամանակ Իսրայելի ժողովրդի գլխով էր անցել՝ շատ ավելի եկավ մեր հայ ազգի գլուխը։ Բազմաբազում չարչարանքների հանդիպեցինք, որ ես՝ մեղավորս չպատմեցի։

Շատերի որդիներին ու դուստրերին անօրենները տարան։ Այս նեղություններից հետո Տեր Աստված ողորմած թագավորը ողորմեց այսչափ հառաչանքներիս համար, պարսից թագավորի սիրտը ողորմություն գցեց. [սա] հրաման առաքեց մեզ քշող իշխանին, թե Նախիջևանի գավառի և Երնջակի գավառի ժողովրդին վերադարձրու իր տեղը, իսկ դու գնա նրանց մեջ նստիր, կառավարիր։

Կիրակի օր էր. ամբողջ ժողովուրդը առավոտյան ելել աղոթք ու հառաչանք էր ուղղում Աստծուն։ Նայեցինք ու տեսանք, որ թագավորից մարդ եկավ, հրաման բերեց, թե Նախիջևանի ու Երնջակի գավառների [բնակիչները] դառնան հետ։ Երբ այսպիսի բարի լուր առանք՝ ամենքս ուրախությամբ գոհություն մատուցեցինք Աստծուն և ցնծացինք այսպիսի բարերարության համար, որ արեց Աստված և ողորմեց իր ժողովրդին։ Ամբողջ ժողովուրդը ելավ որպես [հպարտության] եղջյուր, թեև առաջ տկար էին, ինչպես գրել է Սաղմոսերգուն. Գալով կգան և կցնծան՝ ովքեր առած կբերեն իրենց ցորենի խուրձերը։

Եկանք հասանք մեր աշխարհը, տեսանք՝ ամբողջ գույքը կողոպտած, շատ տներ ու վանքեր կրակ տված, այրած, ժողովուրդը դափդատարկ մնաց՝ Աստծուն փառք տալով։

www.e-pdf.com

Այս չարչարանքներից հետո ես՝ մեղավորս, գնացի Խոշկաշեն գյուղը՝ Քրիստոսի սուրբ Գեղարդի վանքը։ Այդտեղ Աստծուն ծառայություն արի 8 ամիս, այնտեղից եկա մեր վանքը իմ վարդապետին տեսնելու։ Տեսա, որ մայրս վախճանվել էր, եղբայրս գլուխն առել գնացել էր։ Ես՝ մեղավորս, երիտասարդ էի այն ժամանակ. տեսա, որ հայր, մայր չունեի, աշխարհն իրա-րանցման մեջ, վախեցա անօրեններից, թե ինձ չգողանային տանեին. մտածեցի Ֆռանկըստան գնալ։

Այն ժամանակ պաբսից թագավորը Նախիջևանի մոտ նստած էր։ Լսեցի, որ պարսից բանակում ֆրանկի նվիրակ կար. Աստծուն հիշեցի, գնացի պարսից բանակը, գտա ֆրանկի նվիրակին, գնացի մոտը։ Տեսա՝ լավ քրիստոնյա է. մոտը մնացի երեք տարի. նրա անունով շատ գերիներ ազատեցի անօրենների ձեռքից, շատ լավություն տեսա նրանից։ 3 տարին որ անցավ՝ շահը արտոնեց, որ այս նվիրակը գնա իր աշխարհը։ Սպահան քաղաքից դուրս ելանք, եկանք Ղազվին քաղաքը։ Այնտեղ գտա իմ վարդապետին՝ եպիսկոպոս օծվելու համար գնում էր Հռոմ քաղաքը։ Տեսանք իրար, շատ ուրախացանք։ Նա ինձ պատմեց այն ամենը, ինչ իրենց գլուխն էր եկել ինձնից հետո, թե այնպիսի սով է եկել մեր աշխարհը, որ իմ ընկերներից շատերը սովի պատճառով ընկել գնացել են անօրենների հետ, ուրիշ բազում նեղություններ են քաշել, որ բոլորը չեմ կարող պատմել։ Հետո վարդապետիս վերցրի գնացի նվիրակի մոտ, աղաչեցի նրան, թե սա իմ վարդապետն է, գնում է Հռոմ քաղաքը՝ եպիսկոպոս օծվելու. վերցրու, [թող] մեզ հետ գա։ Նվիրակը մեր պատվին համաձայնեց հետը տանել իմ վարդապետին ու տեր Պետրոսին, Միրանշային և Ֆրա Նիկոլին՝ սրանց բոլորին պաշար, ամեն ինչ, որ պետք էր, տվեց։ Ղազվին քաղաքից դուրս ելանք, եկանք Արդավիլ քաղաքը։ Արդավիլից ելանք, եկանք Շամախի քաղաքը։ Այս Շամախի քաղաքում էինք, այնպիսի երկրաշարժ եղավ, որ շատ աշտարակ ու տուն խորտակվեց, բազում ժողովուրդ մեռավ։ Այդպիսի երկրաշարժ չէինք տեսել մինչև այսօր. քաղաքն եղավ իբրև նավ ծովի վրա։ Շարժը տևեց կես ժամ։

Այս քաղաքից ելանք, գնացինք Դամուրղաբի կոչվող քաղաքը. խիստ լավ ամուր բերդ է, որ Աղեքսանդր թագավորն է կառուցել։ Պարսպի մի եզրին ծովն է, որ կոչվում է Քասպիական, մի եզրը լեռան վրա է։ Ճանապարհը ձգվում է ամրոցի միջով, և եկող-գնացողը չի կարող անցնել, եթե բերդը չմտնի։ Խիստ շատ հնություն կա տեսնելու և զարմանալու։

Այնտեղ մեր կարիքները հոգացինք, նավ նստեցինք, նավեցինք, եկանք Հաշտարխան քաղաքը։ 30 օր ծովի վրա մնացինք, շատ նեղություն կրեցինք ծովի մեջ։ Փոքրիկ նավ էր, մարդիկ՝ շատ։ Մի անգամ գիշերը բոլորս քնած էինք, զարթնեցինք տեսանք ցամաքի մոտ գողերի բազմաթիվ նավեր։ Մովահենները ղումուղ կոչված ազգից էին։ Տեր Աստված բարի հողմ տվեց, դեպի ծով գնացինք, նրանցից փրկվեցինք, այն տեղերից ազատվեցինք։ Մովում մի տեղ հասանք, որ այնքան դժվար [անցանելի] էր՝ նավը ուզում էր ցամաքով գալ։ Մեկ էլ տեսանք՝ ամենակարողն Աստված մեզ մի դատարկ նավ հասցրեց. [մեր] նավի բեռի կեսը տեղափոխեցինք այն դատարկ նավի մեջ, այնտեղից ևս Աստված ազատեց, իսկ այդտեղ բազմաթիվ նավեր էին կորել։

Այնտեղից նավեցինք, հասանք Թարք քաղաքը, որ Մոսքովի թագավորի բերդն է, փայտաշեն, որ այժմ Ղմուղըստան կոչվող երկրում է. խիստ ամուր, որ գիշեր-ցերեկ զինվորները հսկում են թշնամիների ահից։ Այնտեղից ուրիշ նավ գտանք քրիստոնեի, նստեցինք նավը, եկանք Հաշտարխան քաղաքը, որ

պատկանում է Մոսքովի թագավորին. Թաթարացոց երկիրն է։ Մոսքովի թագավորը և իր երկիրը բոլորը հունադավան են։

Այս Հաշտարխանը լավ ամուր քաղաք է. երկու քաղաք է. մեկը՝ փայտե, իսկ մյուսը՝ գաճե և քարե։ Այնտեղ գտանք տեր Թաթիոսը՝ վախճանած։ Գնացինք գերեզմանն օրհնեցինք։ Այս քաղաքը գետի մեջ է, որ կոչվում է Էդիլ։ Քաղաքի չորս կողմը ջուր է. գետի լայնությունը 10 մղոն է. խիստ մեծ գետ է, շատ մեծ նավեր են բանում մեջը։ Այս գետով վերև գնում են մինչև Մոսքով քաղաքը, ուր թագավորի գահն է։ Այս քաղաքի իշխանը թույլ չէր տալիս, որ նվիրակը մի ճանապարհով գնար դեպի Մոսքով, որովհետև Մոսքովի թագավորի իշխանները տվել սպանել էին իրենց թագավորին, մի ուրիշ, կեղծ թագավոր եկել էր բազում հեծյալներով Մոսքով քաղաքը պաշարել՝ թե. «Ես եմ թագավորը. ուզեցին ինձ սպանել՝ փախա. այժմ թագավորությունն իմն է։ Սուտ զրույց է, թագավորը ես եմ, մեռած չեմ»։ Այս Հաշտարխան քաղաքը հնազանդվել էր այդ կեղծ թագավորին։ Այդ պատճառով մեկին թույլ չէին տալիս գնալ ճանապարհը։ Քաղաքները հնազանդ էին Մոսքովի իշխաններին։ Ի վերջո մեզ թույլ տվին գնալու անապատ վայրով։ 50 զինվոր տրամադրեցին նվիրակին։ Յուրաքանչյուրս երկու ձի ստացանք, մեկը պարեն բարձեցինք, մյուսը հեծնեցինք, Աստծուն հիշեցինք, ընկանք այդ անապատ ճանապարհը։ Գնացինք մեկ ամիս, շինություն չտեսանք, հետո հասանք շինության։ Այս անապատում շատ մեծ գետ տեսանք. ձուկն՝ առատ, պտուղը՝ շատ. խոտը՝ բազում, ծառազարդ, շատ բարեբեր աշխարհ։ Միայն մի պակասություն ունի՝ մոծակ շատ կա. շատ ձի սատկեց մոծակներից։ Երբ իջնում էինք՝ ամեն մարդ տաղավար էր պատրաստում, մեջն էր մտնում, երբ հասանք շեն տեղ՝ փառք տվինք Աստծուն, թե Տեր Աստված մեզ անջրդի ճանապարհից շեն վայր հասցրեց։ Այս բնակավայրերը կեղծ թագավորինն էին։ Մինչև Մոսքով քաղաքը գնացինք՝ բազում քաղաք ու բերդ տեսանք, բոլորն այս կեղծ թագավորին էին ենթարկվել։

Հասանք Կալոգա կոչված քաղաքը։ Նվիրակն իր գույքը տեղավորեց այնտեղ։ Իմ վարդապետ տեր Մաթիոսը, տեր Պետրոսը և Ֆրա Նիկոլը մնացին այնտեղ, նվիրակի գույքի մոտ։ Մենք գնացինք կեղծ թագավորի մոտ, որ այս քաղաքից հեռու էր 3 օրվա ճանապարհ։ Հասանք թագավորի մոտ։ Խիստ շատ հեծյալներով շրջապատել էր Մոսքով մեծ քաղաքը. մենք [բուն] քաղաքը չտեսանք, այլ տեսնողները պատմեցին մեզ, թե շատ լավ, մեծ քաղաք է, մեջը մի ղանգ կա, որով եկեղեցի էին կանչում. 100 մարդ է քաշում։ Թագավորը նվիրակին շատ լավ ընդունեց և թույլ տվեց գնալու Լեհաստան։ Վերադարձանք Հասանք Կալոգա. տեսանք Ֆրա Նիկոլը վախճանվել է։ Նվիրակի ունեցվածքը վերցրինք, գնացինք դեպի Լեհաստան։ Աստծու հաջողությամբ հասանք Լեհաստան։ Այնտեղ լեհերի թագավորը նվիրակին լավ ընդունեց։

Լեհերի աշխարհը լավ ուղղափառ քրիստոնյա է։ Այնտեղ ամեն քաղաք, որ մտնում էինք՝ մեջը վանք կար քարոզիչների կարգից։ Հոգևորականներին խիստ լավ հարգում էին։ Եկանք հասանք քաղաքը, որ կոչվում է Քարաքով. շատ մեծ քաղաք է և ամուր բերդ ունի։ Թագավորի աթոռն այնտեղ է։ Քարոզչաց կարգի մեծ վանք կա քաղաքի մեջ։ Եկեղեցին կոչվում է ս. Երրորդություն. մեջը 150 միաբան կա։ Եվ ս. Իացինթինոսի գերեզմանն այնտեղ է։ Քաղաքում 50 վանք ու եկեղեցի կա։ Խիստ լավ պատվեցին հոգևորականներին։

www.e-pdf.com

Հետո թագավորը Նվիրակին արտոնեց գնալ քրիստոնյաների արքայի մոտ, որ Ալամանցոց ու Մաջարի թագավոր է։

Նվիրակն իր գույքը թողեց Քարաքովի մի կուսանաց վանքում։ Այնպիսի մարդ չուներ, որին հանձներ իր գույքը. խնդրեց իմ վարդապետին, թե՝ «ես չունեմ այնպիսի մարդ, որ դնեմ գույքիս մոտ, Աստված սիրես, ես ձեզ այսքան լավություն եմ արել, դուք էլ Օգոստինոսին թողեք իմ գույքի վրա մնա մինչև 6 ամիս, և ես ձեր լավությունը չեմ մոռանա։ 6 ամիս հետո ուղարկեմ, գա ձեզ հանի Հռոմ քաղաքում», ապա իմ վարդապետն ինձ թույլ տվեց մնալու։ Ես մնացի այնտեղ, իսկ իրենք գնացին։ Մինչև տարիուկես մնացի Նվիրակի գույքի մոտ։ Հետո Նվիրակը մարդ ուղարկեց, իր ունեցվածքը վերցրինք տարանք մինչև Ըսպանիա։ Ճանապարհին խիստ շատ հապաղեցինք։ Երբ Քարաքով քաղաքից ելանք՝ մինչև չորրորդ օրը հասանք քրիստոնյաների արքայի երկիրը, քառասուներորդ օրը հասանք Համբուրք կոչվող քաղաքը։ Ճանապարհին բազմաթիվ բերդ, գյուղ ու քաղաք տեսանք՝ խիստ գեղեցիկ, անպատմելի գեղեցկություն. բոլորը քրիստոնեից արքայինն էին։ Շատ բարելի երկիր է. շինություն շինության վրա, լավ քրիստոնյաներ [են]։ Այս Համբուրք քաղաքը ծովափին է, խիստ բարեկարգ քաղաք։ Այնտեղ նավ ճարեցինք, մտանք նավ, նավեցինք դեպի Լիզբուա քաղաքը։ 7 շաբաթ Մեծ ծովի մեջ մնացինք, խիստ ալեկոծություն տեսանք, Աստծու հաջողությամբ հասանք այն քաղաքը, որ կոչվում է Լիզբուա. խիստ մեծ քաղաք է, գեղեցկաշեն։ Քաղաքը Ստամպոլից մեծ է, մեջը հազարից ավելի եկեղեցի ու վանք կա։ Քաղաքն Ըսպանիայի թագավորինն է։ Այնտեղ հանգըրվանեցինք 10 օր։

Այստեղից մինչև թագավորի աթոռանիստ քաղաքը 10 օրվա ճանապարհ է. ամեն ինչ, որ պետք էր՝ տեսանք, դուրս եկանք գնացինք դեպի Մատրիլ քաղաքը, որ թագավորանիստ է։ Ճանապարհին շատ բերդ, գյուղ ու քաղաք տեսանք՝ գեղեցիկ, լավ քրիստոնյաներ [են]։ Աստծու հաջողությամբ հասանք Մատրիլ քաղաքը։ Այնտեղ գտանք Նվիրակին, իր ունեցվածքը հանձնեցի իրեն, ես գնացի սուրբ Հակոբ, որ այս քաղաքից հեռու էր 20 օր։ Երբ ճանապարհ ընկա՝ առաջին օրը այնքան նեղվեցի, որ մտածեցի, թե չգնամ։ Այգ օրը հասա մի վանք, որ կոչվում է Ըսկուռեալ, որ շատ զարմանալի կառույց է՝ մեջը և դուրսը։ Ամբողջ շենքը մարմարից է։ Եկեղեցու մեջ կար բազում աշտանակ ու կանթեղ, արծաթեղեն, ոսկեղեն։ 300 միաբան կա մեջը սուրբ Ջերմանիոսի կարգից, չհաշված գնացող-եկողը, որոնց մշտապես երեք օրվա հաց են տալիս և հոգում բոլոր կարիքները։ Մեջը գրադարան կա, որ 50 գազ երկարությունն է և 25 գազ՝ լայնությունը, գրքով լի, բոլորը՝ ոսկեկազմ, և ամեն լեզվով [գրքեր] կան։ 40 ջորի մշտապես կերակուր են բերում և ըմպելիք և բոլոր անհրաժեշտ բաները։ Վանքի մոտ կառուցված է թագավորի գեղեցիկ պալատը, և թագավորն ամռանն այնտեղ է բնակվում։ Այսպիսի վանքեր և պալատներ, ավելի փոքր, կան ամբողջ երկրում։

Այնտեղից ելա հինգ օրում հասա Սալամանքա կոչվող քաղաքը. խիստ մեծ քաղաք է, կան բազմաթիվ դպրատներ, այնտեղ սովորում են ամեն տեսակ լեզուներ, և ամեն տեսակ ժողովուրդներից այնտեղ սովորող կա։ Շատ զարմանալի վանքեր ու եկեղեցիներ կան։ Մեր կարգից 200 միաբան կա և խիստ լավ վանք ու անթիվ վարդապետներ [կան] այս քաղաքում։

Այդտեղից դուրս ելա, երկու օրում հասա Սամբոր քաղաքը. շատ լավ քաղաք է, էժանություն է, խիստ լավ վանքեր ու եկեղեցիներ կան մեջը։

Այնտեղից դուրս ելա, 10 օրում հասա սուրբ Հակոբ. այն օրը Հոգեգա-

www.e-pdf.com

լըստյան նախատոնակ էր։ Հաջորդ օրը տոնը կատարեցին։ Ես՝ մեղավորս, խոստովանեցի ու հաղորդություն առա։ Այդ օրը եկեղեցին լավ զարդարել էին, գեղեցիկ թափոր արեցին։ 8 կարդինալ մշտապես այնտեղ են բնակվում։ Բոլորը եպիսկոպոսական զգեստ էին հագել և բազում ոսկի ու արծաթե խաչ ու գավազան էին վերցրել և շատ սրբոց մասունք, բոլորը ոսկով պատած, և սուրբ Հակոբոս Ալփյանի դիմապատկերը վերցրել էին թափորով, նրա պատկերը ոսկով է նկարած՝ մինչև գոտկատեղը։ Գլխին անգին թագ էին դրել, որի գինն Աստված լավ գիտե, և 4 քահանա հաճույքով բռնել էին։ Իսկ սուրբ Հակոբի գերեզմանը մեծ խորանի տակ է, դուռը՝ մեծ բեմում։ Պապի բանադրանքի համաձայն ոչ մի մարդ չի կարող դուռը բանալ և ներքև իջնել, տեսնել սրբի գերեզմանը, և գերեզմանի վրա 12 կանթեղ կա մեծամեծ և արծաթե, և այլ բազում բաներ։ [Կանթեղները] մշտապես վառվում են։ Ամեն քրիստոնյա թագավորի կանթեղ և տաճար կա այնտեղ կառուցված։ Սուրբ Հակոբի գերեզմանը եկեղեցու մեջ է և երկաթով պատած, որ գնացող-եկողները չկտրատեն։ Եւ եկեղեցին գերեզմանի մոտ մի դուռ ունի, որ անվանում են «Դուռն ողորմութեան»։ Դա յոթ տարին մի անգամ բացվում է. երանի նրանց, որ բացվելու օրը այնտեղ կլինեն։ Այս սուրբ եկեղեցին երկհարկ է. որքան վերևն է, նույնքան ներքևը։ Խիստ զարմանալի գեղեցիկ շենք, և 40 մանուկներ հանապազ երգ ու շարական են կատարում եղանակով ու խոսքով։ Եւ շատ լավ քաղաք է, և՝ էժանություն։ Նաև ուրիշ բազում գեղեցիկ վանքեր ու եկեղեցիներ կան այնտեղ կառուցած, որ մարդու բերանը չի կարող պատմել բոլորը։

Սուրբ Հակոբից մինչև Եզեր Աստվածածին 3 օրվա ճանապարհ է։ Բայց ես չգնացի՝ ընկեր չունենալու պատճառով։ Ուխտս կատարեցի այն սուրբ վայրում և ելա գնացի, կես օրում հասա Պատրոնա կոչվող քաղաքը, այնտեղ սուրբ Հակոբի շատ ուխտավայր տեսա, առավել ևս այն լեռը, որ իր աշակերտներով բնակվել է այն ժամանակ, երբ այդ երկրում կռապաշտ էին, և նավի տեղը, որ Երուսաղեմից մարմինը բերել է այստեղ։ Այնտեղից՝ ելա, հետ դարձա դեպի Մատրիլ այն ճանապարհով, որ գնացել էի։

Ճանապարհին բազում գյուղ, բերդ ու քաղաք կար։ 15 օրում հասա Մատրիլ քաղաքը։ Ուխտել էի ճանապարհին, որ եթե առողջ հասնեմ Մատրիլ, գնամ Աստվածածին, որ կոչվում է Թռչա Աստվածածին։ Խիստ հրաշալի է, որ ամբողջ աշխարհից նրա ուխտավորները չեն պակասում։ Մեջը 55 արծաթե կանթեղ կա՝ միշտ վառվում են։ Եւ զարմանալի վանք է, միաբանները մեր կարգից են։ Մեջը 80 միարան կա։

Ես որ հասա քաղաք՝ իսկույն գնացի Աստվածածին։ Այն ժամանակ, երբ ես՝ մեղավորս, ուխտս էի կատարում Աստվածամոր եկեղեցու մեջ, այն ժամանակ իշխանազունն ունեցվածքը վերցրել գնացել էր, իմ եղբայրն էլ հետը՝ դեպի Ընկլիզի աշխարհը։ Ես որ Աստվածածնից եկա նվիրակի մոտ, [իմացա], որ նոր են մեկնել։ Եւ ես տեսա, որ Աստծու կամքը չէր, որ ես նրանց հետ գնայի, մտածեցի՝ գնամ դեպի Հռոմ քաղաքը։

Այս քաղաքում մի հայ եպիսկոպոս կար, մեկ շաբաթ հետը մնացի։ Աստված իրեն բարի տա, շատ լավ ընդունեց մեզ։ Այնտեղ նախապատրաստություն արեցի և ճանապարհ ընկա դեպի Հռոմ։ 8 օրում հասա մի քաղաք, որ կոչվում է Սարագոզա, շատ մեծ քաղաք։ Այնտեղ տեսա Աստվածածին եկեղեցին, որ խիստ հրաշալի է։ Այդտեղ է, որ Աստվածածինն երևացել է սուրբ Հակոբին, և կոչվում է Պիլարա Աստվածածին։ Նաև ուրիշ բազում եկեղեցիներ ու վանքեր կան՝ հիանալի և զարմանալի։ Եւ Աստվածածնի մեջ 60

www.apdf.com

արծաթե կանթեղ միշտ վառ է: Այնտեղից դուրս եկա, 3 օրում հասա մի վանք, որ կոչվում է Փրկիչ: Այդտեղ եկեղեցու մեջ մի փոքրիկ կարաս կա, որ հանապազ ձեթ է քրտնում: Այն ձեթից գալիս տանում են աշխարհից աշխարհ: Ամեն հիվանդության դեղ է: Աստծու ողորմությամբ այնպիսի հրաշք տեսա ու զարմացա՝ գոհություն տվի Աստծու այսպիսի բարերարություններին: Այնտեղից դուրս ելա, 6 օրում հասա Մօնսարաթի Աստվածածինը: Այս Մօնսարաթը բարձր լեռ է, ինչպես Բոլան, ջրով ու ծառով, շատ լավ ճանապարհ ունի: Լեռան վրա վանք կա, որ կոչվում է Աստվածածին, խիստ զարմանալի, հիանալի և հրաշալի տեղ է. աշխարհի բոլոր կողմերից նրա ուխտավորներն անպակաս են: Եկեղեցին ամբողջապես ոսկենախշ է և 100 ոսկե ու արծաթե կանթեղ կա մշտավառ: Այնտեղ բոլոր թագավորները կանթեղ ունեն: Եկող-գնացողին տալիս են 3 օրվա կերակուր և ըմպելիք: Մեջը 200 միաբան կա, սուրբ Բենեդիկտոսի կարգից են: 40 ջորի մշտապես ուտեստ ու ըմպելիք են կրում: Ու լեռան չորս կողմը լիքը ճգնավոր է, և ամեն ճգնավոր իր առանձին եկեղեցին ու տաղավարն ունի: Այսպիսի տեղ ամբողջ աշխարհում քիչ կա: Ես՝ մեղավորս, կատարեցի իմ ուխտը, ճանապարհ ընկա, մեկ օրում հասա Բարսալոն քաղաքը: Շատ մեծ թագավորանիստ քաղաք է ծովափին: Խիստ շատ եկեղեցի ու վանք կա այնտեղ՝ զարմանալուն: Սուրբ Ռայմունդոսի գերեզմանն այդտեղ է, մեր կարգից է: Այս քաղաքը Ըսպանիայի թագավորինն է:

Մատրիլից մինչև այս քաղաքը անհամար քաղաք, բերդ և գյուղ տեսա, լավ աշխարհ է, և՝ բարի քրիստոնյաներ: Բոլորն Ըսպանիայի թագավորինն են: Այստեղ նավ տեսա և մտա մեջը, 10 օրում հասանք Ջենուա կոչված քաղաքը. ծովում խիստ ավերմունք տեսանք: Այս Ջենուա քաղաքը շատ հարուստ է և սիրուն, ու խիստ ամուր: Լավ նավերի նավահանգիստ է, և այնտեղ անթիվ եկեղեցիներ, վանքեր կան, բոլորը՝ մարմարյա և ոսկեզարդ: Անկախ թագավորություն է, և սուրբ Հովհաննես Մկրտիչի մարմինն այնտեղ է, ավազ եկեղեցու մեջ, պատվավոր:

Այնտեղից ելա, 5 օրում հասա Թուրին քաղաքը, որ շատ մեծ քաղաք է, թագավորանիստ, անկախ: Այս քաղաքի թագավորը Աստվածածին կույսի ցեղից է, և Քրիստոսի վարշամակն այս քաղաքում է. շատ պատվավոր: Եվ անթիվ եկեղեցիներ ու վանքեր կան հիանալի կառուցած, ամբողջապես մարմարյա և ոսկեզարդ: Ճանապարհին, մինչև այստեղ՝ քաղաք քաղաքի վրա է և գյուղ գյուղի:

Այստեղից ելա, 8 օրում հասա Միլան: Խիստ մեծ քաղաք է, Ըստամպոլի չափ. Ըսպանիայի թագավորինն է: Մինչև այս քաղաքը օրը երկու քաղաք էի անցնում, չհաշված գյուղերը: Այս քաղաքը ունի 1000 եկեղեցի, մեկը մյուսից պայծառ, և բազում սրբերի մասունք կա և գերեզմաններ, իմիջիայլոց՝ նաև սուրբ Ամբրոսիոս եպիսկոպոսի գերեզմանը, և սուրբ մարտիրոսներ Ջերվազիոսի և Փյոթազիոսի գերեզմանը, և սբ. Պետրոս նահատակի գերեզմանը, [որը] մեր կարգից էր, և սուրբ Կառլոս եպիսկոպոսի և կարդինալի գերեզմանը, որը նոր է սրբերի կարգը դասված, և այլ բազում սրբերի գերեզմաններ և անթիվ մասունք և Քրիստոսի մի մեխը: Այս ամենը շատ պատվով են պահում: Գիտեցողներին բավական է Մովսես Մարգարեի շինած պղնձե օձը, որ պատրաստեց անապատում:

Այստեղից ելա, 5 օրում հասա Բոնոնեա քաղաքը. խիստ մեծ և թագավորանիստ քաղաք. պապինն է: Մինչև սա՝ բազում քաղաք և անթիվ գյուղ տեսա և ամուր բերդեր, որ բերան չի կարող պատմել նրանց գեղեցկությու-

www.a-pdf.com

նը։ Բոլորը՝ բարի քրիստոնյաներ։ Այս քաղաքում է մեր հայր սուրբ Դոմիտիկոսի գերեզմանը, և շատ պայծառ ոսկեզարդ ու մարմարյա եկեղեցի է ու վանք։ 150 միաբան կա մեջը՝ մեր կարգից։ Այնտեղ կատարեցի ուխտս, դուրս եկա, 7 օրում հասա Ֆլորենցիա քաղաքը։ Խիստ մեծ, քաղցր քաղաք է և մեծ դուքսի տեղն է։ Ինքնակալ թագավոր է։ Այս քաղաքում 40 կուսանաց վանք կա և այլ բազում եկեղեցիներ, վանքեր ու սուրբ Անտոնիոս եպիսկոպոսի [մեր կարգից] գերեզմանն այնտեղ է, և այս քաղաքի ավագ եկեղեցին խիստ զարմանալի շենք է և մեծ. 300000 հոգուց ավելի է տանում, բարձրությունը 100 գազից ավելի է. մեջն ու դուրսը անգին քար ու մարմար է։ Աշտարակն այնպիսին է, որտեղ դանգակն են քաշում, երբ մարդ նայի բարձունքին՝ աչքը կսևանա։ Ամբողջը սև ու սպիտակ մարմարով է կառուցած, նաև բազում զարմանալի բաներ, որ մարդ չի կարող պատմել։

Ես այնտեղից ելա, 3 օրում հասա Սենիա կոչվոզ քաղաքը. խիստ մեծ, թագավորանիստ քաղաք, մեծ դուքսինն է, և քաղաքիս ավագ եկեղեցին խիստ գովելի է, չափազանց մեծ։ Մեջն ու դուրսը ամբողջ սև ու սպիտակ մարմարից է և անգին քարերով, և՝ մարմարյա զարմանալի աշտարակ, և ուրիշ բազում եկեղեցիներ ու վանքեր, բոլորը ոսկեզարդ ու գեղեցիկ։ Մինչև այստեղ ճանապարհին խիստ շատ քաղաք ու գյուղ անցա, մեկը մեկից գովելի, բոլորը՝ բարի քրիստոնյաներ։

Այս տեղերից ելա, 6 օրում հասա Հռոմ մեծ քաղաքը, ուր բոլոր քրիստոնյաների գլխավորն է։ Մինչև այստեղ [գալը] ճանապարհին բազում քաղաք ու գյուղ անցա. բոլորը՝ բարի քրիստոնյա։ Եւ այս սուրբ քաղաքն է զարմանալի ու հիանալի, և բազում սրբերի գերեզմաններով ու մասունքներով լի 1000-ից ավելի եկեղեցի կա, բոլորը մարմարյա և ոսկեզարդ, որ մարդ չի կարող ամեն բան պատմել։ Ուստի 7 եկեղեցու մասին կպատմենք, թե ինչպես փառքով ու պատվով կան մինչև օրս։ Ինչքան ուխտավոր է գալիս այս քաղաքը, մինչև այս 7 եկեղեցու մեջ ուխտ չանի՝ ուխտն ընդունելի չէ։

Առաջին եկեղեցին գլխավոր առաքյալներ սուրբ Պետրոսինն ու սուրբ Պողոսինն է, խիստ մեծ ու զարմանալի, որ մեջը 20 անգամ 100000 մարդ է տեղավորվում, ու դեռ շատ տեղ է մնում։ 12 գմբեթ կա վրան և բազում կամար, բոլորը ոսկեզարդ, մարմարյա և անգին քարով։ Սրբերի գերեզմանը եկեղեցու մեջ է։ Գերեզմանի վրա բազում ոսկե ու արծաթե կանթեղ է վառվում մշտապես, և եկեղեցին մեծ եկամուտներ ունի, անթիվ, անհամար հանդերձանք, խաչ, գավազան, սկիհ ու սրբոց մասունք։ Եկեղեցին օրը 100000 կարմիր ոսկեզրամ է մտնում։ Եվ բարձրությունն այնքան է, որ մեծ գմբեթի գլխի խաչի տակի խնձորի մեջ 12 մարդ կտեղավորվի, իսկ ներքևից մի խնձորի չափ է երևում։ Ողորմության մի դուռ կա՝ 12 տարին մեկ է բացվում Աստծու բարերարությամբ։ Երանի նրանց, որ այն օրն այնտեղ կլինեն։ Այս եկեղեցու զարմանալի գեղեցկությունը մարդ ի վիճակի չէ պատմելու։ Սուրբ պապի պալատը եկեղեցու մոտ է, և այս եկեղեցին երկու հարկ է։ Այսպիսի մեծ եկեղեցի և պայծառ ու գեղեցիկ շենք ամբողջ աշխարհում չկա։ Մշտապես 300 մարդ է այստեղ աշխատում և նորոգում շենքը։ Այս եկեղեցուց գնում են սուրբ Պողոս, որ քաղաքից դուրս է։ Շատ զարմանալի եկեղեցի է. մեջը 200 մարմարե սյուն կա, ամեն սյունը 3 մարդու գրկաչափ է։ Եկեղեցին այնքան մեծ է, ամբողջապես ոսկով ու անգին քարերով զարդարած, և մեջը բազմաթիվ սրբերի գերեզմաններ ու մասունքներ կան։ Այնտեղից գնում են երեք աղբյուր, ուր սուրբ Պողոսի գլուխն են հատել։ [Գլուխը] երեք անգամ թռել է ու երեք անգամ ասել՝ Հիսուս, և երեք աղբյուր է բխել։

www.a-pdf.com

Այնտեղ մի տաճար կա, ուր 51000 նահատակների մասունք կա և բազում ուրիշ սրբերի մասունք ու գերեզմաններ։ Այստեղից գնում են [այն] եկեղեցին, որ կոչվում է Ավետյաց Աստվածածին։ Լավ, պայծառ եկեղեցի է, այնտեղ ևս բազում սրբերի մասունք կա ու գերեզմաններ։ Այնտեղից գնում են սուրբ Սեբաստիանոսի եկեղեցին. տեղը կոչվում է Քաթաքումբա։ Այս եկեղեցու մեջ կան բազում անձավներ, որ կռապաշտների ժամանակ քրիստոնյաներն այնտեղ են թաքնվել։ Այստեղ ևս կա բազում սրբերի մասունք, բոլորը՝ ոսկով ու արծաթով պատած, և՝ շատ սրբերի գերեզմաններ, խիստ գեղեցիկ, պայծառ եկեղեցի, ոսկեզարդ ու մարմարե։ Այնտեղից ելնում գնում են դեպի քաղաք։ Ճանապարհին գեղեցիկ տաճար կա. այն տեղն է, ուր Քրիստոս երեվացել է Պետրոս առաքյալին ու ասել է՝ «Տեր, յո՞ երթաս»։ Իսկ Տերը [պատասխանել է]. «Հռոմ եմ գալիս դարձյալ խաչվելու»։ Այժմ Քրիստոսի ոտնատեղերն երևում են։

Այնտեղից [ճանապարհը] ելնում գալիս է քաղաք, գնում սուրբ Հովհաննես Մկրտիչ. խիստ մեծ ու պայծառ, ոսկեզարդ ու մարմարե, անգին քարերով նախշած եկեղեցի։ Հնում Կոստանդիանոս Մեծի պալատն է եղել, այժմ եկեղեցի է, որ ինքն էր կառուցել։ Բազմաբազում սրբերի մասունք ու գերեզմաններ կան մեջը։ Իմիջիայլոց՝ նաև սուրբ Պետրոսի ու սուրբ Պողոսի գլուխ[ներ]ը։ Մոտը մի տաճար կա դեռ [և այն] ավազանը, ուր Կոստանդիանոս թագավորին է մկրտել, [տաճարի] մեջ է։ Նաև ուրիշ հիանալի բաներ։ Այս եկեղեցին ևս ունի մի ողորմության դուռ. 15 տարին մեկ անգամ է բացվում Աստծու ողորմությամբ։ Այս եկեղեցու մեջ նույնպես շատ զարմանալի բաներ կան, որ մարդ չի կարող պատմել։ Մոտը մի տաճար ևս կա, որ կոչվում է սուրբ Սանդուղք. այն սանդուղքի քարերն են, որ Երուսաղեմում եղել են Պիղատոսի պալատի դռանը, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս վրայով անցել է շարշարանաց ժամին, և որտեղ որ արյունը կաթել է՝ դեռևս տեղը երևում է։ Երուսաղեմից բերել դրել են այստեղ։ Աստիճաններով ծնկաչոք գնում են։ Ամեն աստիճանի վրա մեկ «Հայր մեր, յերկինս» մեկ՝ «Ողջոյն, Մարիամ» են ասում։

Այնտեղից գնում են սուրբ Խաչի եկեղեցին՝ խիստ մեծ, պայծառ ու ոսկեզարդ և անգին քարերով շինած։ Եվ տերունական կենարար խաչափայտը, որ Կոստանդիանոսի մայր Հեղինեն Հռոմ ուղարկեց, այնտեղ է պահվում մեծ պատվով, նաև՝ ուրիշ սրբերի մասունք ու գերեզմաններ։ Այդտեղից գնում են սուրբ Լորենցիոս՝ խիստ պայծառ, մեծ ու ոսկեզարդ եկեղեցի, մեջը բազում սրբերի մասունք ու գերեզմաններ, ի թիվս որոց սուրբ Լորենցիոս նահատակի և սուրբ Ստեփանոս Նախավկայի գերեզմանները։ Կան և բազում անձավներ, որ կռապաշտների ժամանակ քրիստոնյաներն այդտեղ են թաքնվելիս եղել։ Այս տեղերից գնում են Մեծ Աստվածածին. խիստ զարմանալի, մեծ ու պայծառ, ոսկով ու անգին քարերով զարդարած եկեղեցի, որտեղ շատ սրբերի մասունք ու գերեզման կա։ Այդ բոլորի մեջ՝ Տիրոջ մսուրը և Մաթեոս Ավետարանչի գերեզմանը։ Այստեղ նույնպես Ողորմության դուռ կա, որ 22 տարին մեկ է բացվում Աստծու ողորմությամբ։

Սրանք են նախահիշյալ յոթ եկեղեցիները. առաջին՝ սուրբ Պետրոս և սուրբ Պողոս, երկրորդը նույնպես սուրբ Պողոս է կոչվում, երրորդը՝ սուրբ Սեբաստիանոս, չորրորդը՝ սուրբ Հովհաննես Մկրտիչ, հինգերորդը՝ սուրբ Խաչ, վեցերորդը՝ սուրբ Լորենցիոս, յոթերորդը՝ Մեծ Աստվածածին, այս է ամբողջը։

Այս քաղաքում ամեն ազգ առանձին հոգեւոր ունի ու եկեղեցի։ Հայոց

www.a-pdf.com

եկեղեցին կոչվում է սրբուհի Մարիամ Եգիպտացի, այնտեղ է և սուրբ Գրիգոր Լուսավորչի խորանը՝ խիստ պայծառ։ Եւ այս սուրբ քաղաքում 12000-ից ավելի քահանա կա, կարդինալի, հայրապետի, արքեպիսկոպոսի ու եպիսկոպոսի ու ամեն տեսակ քահանայի պակասություն չկա։ Անթիվ-անհամար սարկավագներ զարդարել են Աստծու եկեղեցին՝ ինչպես արքայությունը։ Ամեն ազգի դպրատուն կա և ամեն ազգի կարդացող, անթիվ-անհամար վարդապետ կա այս քաղաքում։ Եթե մարդ այստեղ երեք տարի մնա՝ դարձյալ այստեղի ամեն ինչը տեսնել չի կարող։ Նաև բազում հիվանդանոց ու որբանոց կա այստեղ ու ամբողջ քաղաքում, որ Ֆրանկստանի երկրում է։

Հիվանդանոցները, որ կան՝ այսպես են. կանայեցն առանձին և տղամարդկանցն առանձին. որտեղ որ լսեն, թե աղքատ կամ անտեր ու օտար հիվանդ կա՝ կերթան կբերեն այդտեղ։ Ամեն հիվանդանոցում 200, 300, 500 անկողին կա և բազում սպասավորներ ու բժիշկներ, որ մշտապես սպասարկում են, ինչ որ անհրաժեշտ է հիվանդներին։ Եւ այս հիվանդների համար հիվանդանոցի դիմաց խորան կա և քահանաներ, որ անընդհատ ժամ ու պատարագ են անում հիվանդների համար և կատարում բոլոր հոգևոր պետքերը։ Իսկ որբանոցն այսպես են. որ լսեն, թե ինչ տեղ որբ կա և կամ աղքատի երեխա, որ չեն կարող պահել [գնում բերում են]։ Կամ երեխան, որ պոռնկությամբ է աշխարհ եկել, գիշերով գաղտնի բերում, դնում են այս հոգետան մոտ. սրանց բոլորին հավաքում են, պահում, մեծացնում, սովորեցնում տեսակ-տեսակ մասնագիտություններ՝ կարդալ է, դերձակություն կամ խառատություն, նկարչություն կամ կանացի աշխատանք։ Տղաներն առանձին և աղջիկներն առանձին։ Երբ հասունանում են, այն ժամանակ Աստծու սիրուն փող և ամեն պիտանի բան են տալիս և ամուսնացնում։ Հիվանդների ու որբերի կյանքն այսպես է։ Եւ ամբողջ քաղաքում հոգետներ են կառուցած օտարական ճանապարհորդների համար, և տալիս են բոլոր անհրաժեշտ բանները, որքան տեղի հնարավորությունները թույլ են տալիս։ Եւ ամբողջ քաղաքով մեկ՝ 7, 17, 27, 47, 57, 67 (ըստ քաղաքի հնարավորության) աբեղաների ու կրոնավորների, ճգնավորների ու կույսերի վանք կա, որ վանքում 40 միաբան կա, որում 100 կա, մյուսում՝ 200. սրանք բոլորը ողորմությամբ են կենդանի։ Եւ ուրիշ շատ բաներ կան Աստծու անունով, որ մարդ բոլորը չի կարող պատմել։

Ֆրանկստան մի ծայրից մյուսը մեկ տարվա ճանապարհ է, բոլորը՝ քրիստոնյա, գյուղ գյուղի վրա, բերդ բերդի վրա և քաղաք՝ քաղաքի։ Ճանապարհին բոլորովին ընդհատում չկա տների միջև։ Շատ լավ բարելի աշխարհ է, և ես՝ մեղավորս, այսքան ճանապարհն ամբողջովին մենակ, առանց ընկեր եմ շրջել մինչև այս։ Առաջին անգամ, որ Հռոմ քաղաք եկա, մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղության 1610 թվին էր։ Ես՝ մեղավորս, դեռ ֆռանկների լեզուն չգիտեի, լեհերեն գիտեի։ Սիրտս Հռոմում քաղաքում չհանգստացավ, մտածեցի՝ գնամ դեպի Լեհաստան։

Այս սուրբ վայրում ուխտս կատարեցի և երկու լեհացու հետ ճանապարհ ընկա, 8 օրում հասանք Լորեթո Աստվածածին, որ ծովեզրին է։ Ճանապարհին մինչև այստեղ գյուղ գյուղի վրա է և քաղաք քաղաքի վրա, բոլորը պապական են։ Իսկ այս Աստվածածին տաճարն այն տունն է, ուր սրբուհի Կույսն ապրել է, իր Միածին որդուն այդտեղ պահել է ու մեծացրել։ Դեռևս անոթներն ու գավաթները կան և երկնակապույտ ամանը, որով սրբուհի Կույսը Քրիստոսին կերակուր է տվել։ Նաև նրա ձեռագործը և հյուսածը և ուրիշ տեսակ բաներ կան այս սուրբ տան մեջ պահած մինչև օրս։ Այս սուրբ տունը Երուսաղեմից թռել եկել է Աստծու ողորմությամբ մինչև այստեղ, և տունը

www.a-pdf.com

գրից մարմարապատ է, իսկ վրան հիասքանչ մի եկեղեցի է կառուցած։ Եւ այս սուրբ տունը եկեղեցու մեջ է, շատ հրաշալի մի տեղ, և ամեն երկրից սրա ուխտավորներն անպակաս են, և ամեն եկող-գնացողի մինչև 3 օրվա կերակուրն ու ըմպելիքը տալիս են։ Այս սուրբ տաճարը անթիվ, անհամար եկամուտ ունի. մի տուն ոսկով ու արծաթով լի է, խաչ, սկիհ, գավազան, կանթեղ և այլ բազում սրբերի մասունք, ոսկով ու արծաթով պատած և անգին, պատվական քարերով զարդարած։ Բոլոր թագավորներից նվերներ կան այնտեղ՝ կանթեղ, հանդերձ, սկիհ, խաչ, գավազան, վարագույր և այլ տեսակ բաներ, և բազում ոսկի ու արծաթե աշտանակ կա, նաև բազում պատարագի հանդերձներ, բոլորը՝ ոսկեթելով, մարգարտով ու անգին քարերով շարած և այլն։ Մարդու բերանն անկարող է պատմել։

Այստեղից դուրս եկանք, Աստծու հաջողությամբ հասանք Քարաքով քաղաքը, որ Լեհաստանի թագավորի մայրաքաղաքն է։ Ճանապարհը 40 օրում անցանք. ամեն տեղ՝ քաղաք քաղաքի վրա, գյուղ՝ գյուղի, և բոլորը՝ բարի քրիստոնյաներ։ Այս քաղաքում մեր կարգից մի մեծ վանք կա սուրբ Երրորդության անունով։ 150 միաբան կա մեջը, և սուրբ Իգնեթիոսի գերեզմանն այնտեղ է, որը մեր կարգից է։ Ես՝ մեղավորս, մտածեցի, թե գնամ մտնեմ վանքը, սպասավորություն անեմ քահանաներին՝ ինչ որ կհրամայեն, բայց քահանա չեմ օրհնվի և քահանայություն չեմ անի։

Գնացի վանահոր ոտքերն ընկա, աղերսեցի, թե՝ «Ինձ վանք ընդունեցեք, ինչ սպասարկության որ նշանակեք՝ սիրով կանեմ, բայց արժանի չեմ քահանայության»։ Վանահայրը և բոլոր միաբանները ինձ չընդունեցին, բայց ասացին. «Թե քահանա լինես, քեզ մեր վանքը կընդունենք, թե չէ՝ բարով ես եկել, ուր որ գնում ես՝ գնա»։ Իսկ ես որքան աղաչեցի, տեսա, որ ցանկություն չունեն ինձ վանքի սպասավոր գործնելու, Աստծու կամքով քահանա լինել հանձն առա, [ասելով՝] Քահանա կլինեմ։ Նոր միայն ինձ ընդունեցին վանք և քննեցին, [թե տեղյա՞կ եմ] կարգի պատվիրաններին, և կարգի զգեստը հագցրին ինձ։ Մեկ տարի փորձեցին ինձ, ինչպես և օրենքն է, այնուհետև ուխտեցի և կարգի երդումն ընդունեցի։ Երկու տարի այնտեղ մնացի, փոքր-ինչ լատիներեն ու լեհերեն և կարդալ սովորեցի և երկու անգամ վարդապետների մեջ քարոզ կարդացի. լավ ընդունեցին ինձ։ Եւ այս վանքի վարդապետներն ու միաբանները խորհրդակցեցին, թե՝ «Եկեք Ցրա Օգոստինոսին ուղարկենք Հռոմ քաղաք, սուրբ պապի մոտ, որ նրան երեց օրհնի և ուղարկի իրենց երկիրը՝ քարոզելու»։

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղության 1613 թվականին էր, ինձ՝ մեղավորիս, կանչեցին և հրահանգեցին՝ «Գնա Հռոմ քաղաք»։ Աստված հիշեցի, ելա ճանապարհ, Աստծու հաջողությամբ հասա Հռոմ քաղաքը։ Քարաքովից մինչև Հռոմ 40 օրվա ճանապարհ է, և ես՝ մեղավորս, որ հասա սուրբ առաքյալների ոտքը՝ գոհություն տվի Աստծուն, որ անարժանիս երկրորդ անգամ արժանացրեց տեսնելու այս սուրբ վայրը։ Գնացի առաջնորդի մոտ, որը բնակվում է Միներվա Աստվածածին կոչվող վանքում։ Լավ ընդունեց ինձ, նրա մոտ տեղավորվեցի և գնացի պապի մոտ, իմ վիճակը հայտնեցի սուրբ պապին։ Ինձ արտոնեց, թղթի մեջ գրելով այսպես. «Ես կամեցա, որ Ցրա Օգոստինոսը քահանա օրհնվի մեկ շաբաթվա և կամ մեկ ամսվա ընթացքում. լավ ստուգեցեք նախապես. և տեսեք՝ արժանի՞ է, նոր միայն օրհնեցեք և ուղարկեցեք իր աշխարհը, որ այնտեղ քարոզի»։ Եւ վարդապետներն ինձ կանչեցին ու քննեցին մինչև չորրորդ ամիսը, հետո օրհնեցին ինձ՝ անարժան մեղավորիս։ Այն տարին, որ ինձ օրհնեցին՝ մեր Տեր Յիսուս Քրիս-

www.a-pdf.com

տոսի մարդեղության 1614 թիվն էր։ Առաջին չորրորդ փոքր աստիճանը, որ տվին մեզավորիս, հուլիս ամսի 30-ն էր, կիրակի օրը։ Երբ կիսասարկավագություն տվին՝ հուլիս ամսի 25-ն էր, սուրբ Հակոբ առաքյալի օրը, իսկ [երբ] ավագ սարկավագություն տվին, հուլիսի 27-ն էր, կիրակի օրը, և քահանայություն որ տվին, օգոստոս ամսի 3-ն էր, կիրակի օրը։ Եւ առաջին պատարագը որ արեցի՝ գլխավոր առաքյալ սրբերի գերեզմանին՝ օգոստոս ամսի 4-ն էր, մեր հայր սուրբ Դոմինիկոսի օրը։ Եւ գոհություն մատուցեցի Աստծուն, որ անարժանիս այսպիսի փառքի արժանացրեց։

Դարձյալ գնացի սուրբ պապի մոտ և սուրբ օրհնություն ստացա, և մի նամակ վերցրի մեր առաջնորդի անունով, որ մեր երկիրը մի վարդապետ ուղարկի, որ մեր վիճակը տեսնի։ Այն ժամանակ առաջնորդը Հռոմ քաղաքում չէր, այլ՝ Բոնոնեա քաղաքն էր գնացել մեր հայր սուրբ Դոմինիկոսի գերեզմանին [այցի]։

Աստված հիշեցի, դուրս եկա մեծն Հռոմից, 8 օրում հասա Բոնոնեա քաղաքը, գնացի առաջնորդի մոտ, պապի նամակը տվի իրեն, կարդաց և մի լավ վարդապետ տվեց, անունը՝ Պողոս, և նրան իրավունք տվեց տեղապահության՝ մեր երկրի վրա։ Օրհնություն առանք առաջնորդից, ճանապարհ ընկանք, 6 օրում Աստծու հաջողությամբ հասանք Վանատիկ։ Խիստ մեծ քաղաք է, կառուցած ծովի մեջ. խիստ զարմանալի քաղաք է և հիանալի։ Այսպիսի քաղաք չկա աշխարհիս երեսին։ Սուրբ Մարկոս Ավետարանչի գերեզմանն այնտեղ է, և ինքնուրույն թագավորություն է։

www.a-pdf.com

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՎՄԱՃԱՆ

(ԾԸ ԴԱՐ)

ԹՈՎՄԱՃԱՆԻ ՎԵՐՍԱԼԻԱ ԳՆԱԼԸ ԵՎ ԼՅՈՒԴՎԻԳ ԺԵ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՆԵՐԱԿԱՅԱՆԱԼԸ, ԱՊԱ ԹԱԳԱՎՈՐԻ ԻՄԱՆԱԼԸ, ՈՐ ԹՈՎՄԱՃԱՆԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼ Է ՄԻ ԻՇԽԱՆ, ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԱՔՍՈՐՎԵԼԸ

Եվ այն օրերին, երբ հասա Փարիզ, նրա ճանապարհի պաշտպանի՝ ս. Անտոն Բատուացու միջնորդությամբ գտա կոստանդնուպոլսեցի, զալաթացի Աստվածատուր անունով բարեպաշտ մի երիտասարդի։ Քսան տարի էր, որ նա եկել էր Փարիզ և լավատեղյակ էր քաղաքին ու լեզվին։ Հենց այս ժամանակ կոստանդնուպոլսեցի տեր Մարուքեի որդի քաբուճին հայ Ստեփան կրոնավորը եկել էր Փարիզ։ Թովմաճանը կոստանդնուպոլսից մեծ ծանոթություն ուներ նրա հետ։ Ուստի, երբ պարոն Աստվածատուրը լսեց, երկուսով գնացին նրա մոտ և դնելով Մարուքեի որդուն՝ շատ ուրախացան։ Եվ Թովմաճանը խոստովանեց նրան։ Եվ նրա միջոցով ծանոթացավ տանն ու քաղաքին։ Այս պարոն Աստվածատուրի միջնորդությամբ բազում ակնեղեն, կարմիր հակինթներ վաճառեց Թովմաճանը՝ և հարյուրին երկու տոկոս էր տալիս նրան՝ ծառայության դիմաց, որի համար նա սիրով ծառայում էր իրեն։

Երբ բավական ճանաչեց Թովմաճանին, մի օր նրան ասաց.

— Ով տեր իմ, դու այսքան երկիր և թագավորություն ես շրջել և այսքան ծանոթ ես աշխարհներին։ Ես ուզում եմ քեզ հռչակել այս մեծահամբավ Փարիզ քաղաքի մեջ։ Այն, որ Հապեշ թագավորի դանձապետն ես եղել՝ մեծ պաշտոն է, և մեծ համարում կունենաս քաղաքում։

Իսկ Թովմաճանը չէր ուզում իր այդ հռչակումը, այլ միայն ուզում էր վաճառել ապրանքները։ Բայց նա պնդում էր. «Երբ ծանոթացնեմ՝ հենց այդ ժամանակ վաճառքդ առավել ևս հաջող կընթանա»։ Այս լսելով՝ Թովմաճանը համաձայնեց և ասաց.

— Արա՝ տեսնենք ինչպես կընթանան մեր գործերը։

Եվ այնժամ օրհնյալ պարոն Աստվածատուրը սկսեց թուղթ գրել ֆրանսերեն և շատ վայելուչ շարադրանքով «Բռիմօ մինիսթրօ Մյուսյու Տյուք Շուեզոլուին», որ այսպես էր. «Գիտենա քո բարձրությունը, որ կոստանդնուպոլսեցի մի մեծ վաճառական, աղգությամբ հայ և Հովհաննես Թովմաճան [անունով], եկել է [Փարիզ]։ Նա բազում թագավորություն է շրջել, ապա գնացել է Աֆրիկա՝ Հապեշիստան, և այն թագավորի գանձապետն է եղել, ունի մեծամեծ կարմիր հակինթներ և շատ պետքական նորություններ՝ հօգուտ Ձեր թագավորության։ Այժմ եկել բնակվում է այս Փարիզ քաղաքում, Տանքիրեն հյուրատանը, փողոց Շանֆիլյուր», այսինքն՝ այնինչ փողոցում և այնինչ տեղը»։

Գրելով սա՝ տարավ նամակը գցեց Տյուք Շուեզոլուի գանձանակը, որն ամեն երեկո բանալով կարդում էին Տյուք Շուեզոլուի առջև

Երբ կարդացին Թովմաճանի վերաբերյալ թուղթը՝ իսկույն պատասխան

www.a-pdf.com

գրել տվեց, [կարգադրելով]՝ թե վաղը ժամը 11-ին գնացեք իմ կառքով այն գանձապետ Թովմաճանին հրավիրեցեք, նրան տալով իմ այս գիրը և բերեք պալատ, ինձ մոտ։

Իսկ Թովմաճանը, չակնկալելով [պատասխանը], մյուս օրը սկսեց կատակով խոսել Աստվածատուրի հետ, ասելով.

— Է՛յ, մյուսյու Տիոտե, ո՞ւր է գրիդ պատասխանը, որ ուզում էիր ինձ ներկայացնել։

Ու մինչ խոսքը բերանում էր, այնտեղ հասավ Տյուք Շուեզոլ նախարարի փառահեղ կառքը, որով եկած սպասավորը փնտրում էր գանձապետ Թովմաճանին։ Եվ գտնելով նրա տունը, խոնարհաբար ողջունելով՝ նրան մատուցեց Տյուք Շուեզոլի նամակը։ Թովմաճանը պարոն Տիոտեին տվեց կարդալու այն թուղթը, որով նրան պալատ էին հրավիրում ուղարկված կառքով։

Եվ Թովմաճանը պատրաստվեց [գնալու]։ Հագավ փառավոր պարսկական զգեստը, գլխին դրեց մանիլու գլխարկ, մի թանկագին շալով փաթաթվեց, իր հետ վերցրեց պարոն Աստվածատուրին և մի սպասավորի, մտավ նախարարի կառքը և գնաց նրա պալատը։ Եվ այն նամակաբեր սպասավորը Թովմաճանին տարավ նստեցրեց մեծ սենյակը, ուր նստած էին բազում իշխաններ, որոնք նույնպես սպասում էին ընդունելության։ Եվ բերող սպասավորը ներս գնալով իր տիրոջը հայտնեց, թե Հապեշի գանձապետ Թովմաճանին բերել է։ Լսելով նրա գալը՝ [նախարարը] չուզեց տանու շորերով երեվալ՝ ի հարգանս Թովմաճանի։ Երբ դուրս ելավ, ցանկանալով անցնել մյուս սենյակը զգեստավորվելու, ընդունարանում տեսավ Թովմաճանին՝ հետին մի տեղ նստած։ Իսկ իշխանները ցուրտ եղանակի պատճառով նստած էին կրակարանի մոտ։ Սկսեց իր լեզվով հանդիմանել նրանց, ասելով.

— Այս ի՛նչպիսի տմարդություն է, որ այն ազնիվ անձնավորությանը հյուրընկալելով չեք հրավիրում նստելու կրակի մոտ։

Այս ասելով՝ նա մտավ մյուս սենյակը՝ հագնելու։ Իսկ այնտեղ եղած իշխանները եկան հավաքվեցին Թովմաճանի շուրջը և ձեռքը բռնելով, «Աւանսէ՛, մյուսյու, աւանսէ՛» ասելով՝ տարան պատվով նստեցրին կրակարանի մոտ, առաջին տեղը։ Եվ ապա Տյուք Շուեզոլը լուր տվեց, կանչեց Թովմաճանին ներս։ Թովմաճանը, իր հետ վերցնելով պարոն Աստվածատուրին, գնաց ներս։ Տյուք Շուեզոլը, տեսնելով Թիոթեին, Թովմաճանին ասաց.

— Դու իտալերեն գիտե՞ս։ Ես նույնպես գիտեմ, ուրեմն մեզ թարգմանիչ պետք չէ։ Եվ դուրս հրավիրեց նրան, ու ներսում մնացին երկուսով։ Այնժամ նախարարապետ Տյուք Շուեզոլն սկսեց մանրամասնորեն հարցնել [Թովմաճանի] շրջած տեղերի քաղաքների մասին և Հապեշի պատմությունը։

Թովմաճանը սկսեց մոտ երկու ժամ, մեկառմեկ, հերթով պատմել Հապեշի պատմությունը, նրանց կերակուր ուտելը, այսինքն ո՛չ իրենց ձեռքով ուտելը, այլ ծառայի ձեռքով կերը բերանները դնելը և նրանց մյուս անպատեհ արարքները։ Նախարար Շուեզոլը ծիծաղելով շատ հավանեց Թովմաճանի արած պատմությունը և շատ սիրեց նրան, որի համար ասաց.

— Ուզում եմ, որ երեք օր հետո ժամը 11-ին գաս այստեղ, իմ պալատը, ինձ մոտ, որ միասին գնանք Վերսալիա և տեսնես թագավորի պալատն ու պարտեզը։ Միգուցե թագավորը ևս քեզ կամենա տեսնել։ Որովհետև քո արած ամբողջ պատմությունը թագավորին պատմելու եմ։

Եվ հետո ասաց.

— Ո՞ւր են այն պատվական կարմիր հակինթները, որ քո նամակում հայտնել էիր։

www.a-pdf.com

Եվ Թովմաճանն սկսեց ցույց տալ իր [ունեցածը]։ Ապա Տյուք Շուեզոլից խնդրեց, որ նա նույնպես ցույց տա իր մատանիները։ Եվ նա բերեց ցույց տվեց նրան ամեն ինչ։ Իսկ Թովմաճանը տեսավ նրա մատանիները, որ մեծ չէին, դրա համար ասաց նախարարին.

— Ո՛վ տեր իմ, ներիր, այդ մատանիները, որ ունես՝ մեծապատիվ իշխանությանդ հարմար չեն, այլ գնիր իմոնցից մեկը, և ես հարգարժանիդ պակաս գնով կտամ։

Այնժամ նա հարցրեց երկու հակինթի գինը, որոնցից մեկը 48 կրան 5 հազար ոսկի էր, իսկ մյուսը 56 կրան [հինգ] հարյուր ոսկի։ Եվ նախարարն ասաց.

— Այն հինգ հազարանոց հակինթը ոչ ինձ է հաճո, և ոչ մեր թագավորին, բայց մյուս հինգ հարյուրանոցը եթե 200 ոսկով տաս՝ կգնեմ, առանց մեկին ցույց տալու։

Եվ Թովմաճանն իջեցրեց [գինը] մինչև 300, բայց նա չտվեց, ասելով.

— Եթե դու գիտենայիր իմ միտքը, որ հիշատակի համար է, մեծ սիրով կտայիր։

Եվ Թովմաճանը այդ խոսքի վրա 200 ոսկով տվեց։ Նա անմիջապես հաշվեց 200 ոսկին, և Տյուք Շուեզոլը վերստին նույն կառքով, որով եկել էր, Թովմաճանին տուն ուղարկեց։ Եվ Թովմաճանը 2 ոսկի ձեռաձիր տվեց կառապանին։ Այն հրավիրող ծառային նույնպես 2 ոսկի տվեց։

Եվ երկու օր անց՝ 1769 [թվականի] նոյեմբերի 18-ին Տյուք Շուեզոլի հրամանի համաձայն Թովմաճանը գնաց նրա մոտ։ Եվ նա, վերցնելով Թովմաճանին իր կառքը, միասին գնացին Վերսալիա։ Մի ապաւավոր տվեց, որ Թովմաճանին տանի շրջագայության թագավորի ամբողջ պալատն ու մեծահռչակ պարտեզը, նաև ցույց տա վախճանած թագավորների սենյակները և նրանց թանկարժեք անկողինները, և հոյաշեն թատրոնը, որի նման չկա ամբողջ Եվրոպայում, թեպետ Նարոլիում ևս կա մի պատվական թագավորական թատրոն, բայց այսքան մեծ ու բարձր չէ։

Տեսնելով այս ամենը՝ Թովմաճանը հույժ զմայլվեց մեծաշեն ու պերճաշուք պալատով, պարտեզների կարգով ու գեղեցկությամբ, որոնց մասին ասում էր.

— Չեմ կարող ձեզ գրով բացատրել, և դա ոչ ոք չի կարող գրով բավարար չափով ճանաչել և պատկերացնել, մինչև անձամբ չգնա տեսնի ամբողջը։ Որովհետև այս Վերսալիան հիանալի բան է և արժանի է, որ տեսնեն բոլոր իմաստուն ու հանճարեղ մարդիկ։ Ահա այսքան կարող եմ գովել։

Այս բոլոր տեղերը շրջագայելուց հետո Թովմաճանը դարձավ Տյուք Շուեզոլի մոտ։ Իսկ նա գնացել էր Լուդովիկոս Տասնհինգերորդ թագավորի մոտ և պատմել նրան Թովմաճանի ամբողջ պատմությունը։ Թագավորն իսկույն հրամայել էր՝ Այն Հապեղու զանձապետին բեր մոտս։

— Եվ այժմ,— ասում է Տյուք Շուեզոլը,— ճաշից հետո քեզ տանելու եմ։

Եվ ճաշի նստեց Թովմաճանի հետ և ճաշելիս խրատեց նրան՝ ասելով.

— Երբ ներկայանանք թագավորին, դու երբեք չբանաս քո գլուխը, այլ նույն սև թավիշով և շալով փաթաթած գլխարկով մտիր և ըստ ձեր օսմանյան սովորության հարգանքով ողջունիր, և ինչ որ հարցնի՝ համարձակ պատասխան տուր և մի երկնչիր։

Ապա ճաշից ելան, գնացին թագավորի պալատը և սկսեցին սենյակից սենյակ մտնել, սենյակից սենյակ՝ բոլորը թանկագին կերպասով և զարդարուն աթոռներով։ Ապա մտան ընդունարանը, և Թովմաճանին թողնելով այն-

www.a-pdf.com

տեղ, ինքը՝ Տյուք Շուեզոլը մտավ արքայի մոտ և հայտնեց նրան Հապեշի գանձապետի գալը։ Եվ նա հրամայեց նրան ներս բերել։

Եվ եկան թագավորի ներքին սպասավորները, որ կոչվում են թրինչիպէյք։ Թովմաճանի մոտ, թևը մտնելով՝ ասացին.

— Աւանսէ՛, մյուսյու Թրեզորե Հապէշու։

Եվ առան տարան ներս, և Թովմաճանը ներկայանալիս, առանց գլխարկը հանելու, ըստ նախարարի տված խորհրդի, թագավորի առջև երկրպագություն արեց երեք խոնարհումով, ինչպես անում են օսմանցիք։

Իսկ Լուդովիկոս թագավորը ժպտալով իր մոտ կանչեց Թովմաճանին և բազում հարցումներից հետո ասաց.

— Իսկապե՞ս դու Հապեշստան ես գնացել։

Եվ Տյուք Շուեզոլ նախարարը թարգման եղավ, և Թովմաճանը ցույց տվեց նրան Հապեշու թագավորի կնիքը, ինչպես այս պատմության մեջ է։ Եվ թագավորն ասաց.

— Քո Հապեշ թագավորն ինչո՞ւ քեզ տվեց իր կնիքը՝ մաքուր թղթի վրա։

Եվ նա ասաց.

— Կարծելով թե ամեն թագավորության մեջ ընդունելի է իր կնիքը, որով ես կկարողանամ գրել իմ խնդիրքը և որոշ շնորհներ ստանալ։ Ահա այս պատճառով ինձ տվեց իր կնիքը մաքուր թղթի վրա։

Այնժամ բոլորն սկսեցին ծիծաղել և ուրախանալ։ Բայց թագավորն ասաց.

— Ուրեմն մենք ևս պարտավոր ենք քեզ ինչ-որ շնորհներ անել։ Շա՛տ լավ, կանենք քո խնդրանքը։— Ապա հարցրեց.

— Սեղանի շուրջն ի՛նչպես են ճաշում այն հապեշները։

Եվ Թովմաճանն սկսեց պատմել ամեն ինչ մեկառմեկ։ Որ կերակուրը իրենց ձեռքով չեն ուտում, այլ ճաշակում են սպասավորների ձեռքով։ Եվ երբ թագավորը լսեց այս բանը, իսկույն ասաց սպասավորներին.

— Ալէ վու բօռթէ էօն փէօ տիւ փէն [գնացեք մի քիչ հաց բերեք]։

Եվ նրանք ոսկե սկուտեղով հաց բերին։

Այնժամ թագավորն ասաց Թովմաճանին.

— Հապեշներն ինչպես են անում՝ դու այդպես կերցրու Տյուք Շուեզոլին։

Իսկ Թովմաճանը չէր համարձակվում անել, որովհետև Շուեզոլը ևս հաճո չէր համարում հրամանը։ Եվ իմանալով նրանց տհաճությունը, թագավորը իսկույն բարձր ձայնով ասաց.

— Արքայի՛ հրաման։

Այնժամ Տյուք Շուեզոլը բացեց բերանը և առաջ բերելով ասաց Թովմաճանին.

— Շտապ ինձ ուտելու տուր։

Եվ Թովմաճանը ևս համարձակվելով վերցրեց մի կտոր հաց և դրեց նրա բերանը և բութ մատով ներս մղեց՝ ի հրճվանս թագավորի։ Իսկ Տյուք Շուեզոլը հետ-հետ էր ընկրկում։ Թագավորը, նույնպես և իշխանները, որ այնտեղ էին, սաստիկ ծիծաղեցին և բոլորի աչքերից արցունք էր բխում։ Եվ այսպես թագավորի առջև մեծ ուրախություն եղավ։ Ապա թագավորն ասաց Թովմաճանին.

— Դու ևՙս այդպես էիր ճաշում այնտեղ։

Եվ նա պատասխանեց.

— Ո՛չ, այլ ըստ մեր սովորության՝ ուտում էինք մեր ձեռքով։ Արդ, եթե քո բարձրության առջև շնորհի արժանացա, հրաման տուր ծառայիդ, որ խոսի։

Թագավորն ասաց.

www.a-pdf.com

— Քեզ տրված է հրաման, խոսիր։

Այնժամ Թովմաճանն սկսեց վերստին երկրպագությամբ խոսել [որի նյութը նախապես պատրաստել էր]։

— Ո՛վ տեր և թագավոր իմ ամենապատիվ, քո Բարձրությունը միայն Ֆրանսիացիների թագավորը չէ, այլև հայոց ազգինը, և դրա համար մշտապես մեր ժամերգության մեջ օրհնում և աղոթում ենք քեզ համար։ Որովհետև երբեմն-երբեմն եթե մեզ զրկանք ու դժբախտություն են պատճառում մահմեդականները Կոստանդնուպոլսում, դիմում ենք քո Բարձրության դեսպանին և նրա աջակցությամբ իսկույն բուժվում։ Ինչպես Երուսաղեմի այն դժոխության ժամանակ, երբ հույները ուզում էին մեր ձեռքից խլել սուրբ Հակոբի վանքը, բայց քո դեսպանը ձեռքը դրեց՝ հույները ամոթահար փախան, և այսպես մեզ փրկեց մեծ վտանգից։ Նույն կերպ և ես, որ գնալու եմ իմ երկիրը՝ Կոստանդնուպոլիս, որ օսմանցոց երկիրն է, խնդրում եմ Բարձրությունիդ ինձ համար մի հանձնարարագիր դեսպանիդ՝ մյուսյու Սեմբրիեսի անունով, որ մեզ իր թևերի հովանու տակ պաշտպանելով պահի։

Իսկ ամենաբարի թագավոր Լուիճին [ափսոս որ պէրաթ չխնդրեցի, որ իսկույն տար], անմիջապես հրաման տվեց Տյուք Շուազոլին, որ մի լավ հանձնարարական գրի Կոստանդնուպոլիս՝ իր դեսպանին։ Ապա թագավորն ասաց Թովմաճանին.

— Դեռ որքա՞ն ժամանակ ես մնալու Փարիզ։

Եվ նա պատասխանեց.

— Եվս երկու ամիս։

Թագավորն ասաց Տյուք Շուազոլին.

— Մենք քիչ առաջ, ի պատիվ Հապեշի թագավորի կնիքի, խոստացանք սրան որոշ շնորհներ անել։ Ուրեմն իմ թագավորական ստորագրությամբ ու կնիքով վկայական տանք, որ մինչև երեք ամիս ոչ մեկին մաքս ու այլ ծախս չտալով շրջի մեր ամբողջ երկրում՝ ուր կամենա։ Եվ ի հաստատումն խոսքիս, ահա թագավորական այդ վկայականը դնում ենք այստեղ, ով տեսնի՝ հավատա։

Եվ այսպես սիրով ու խաղաղությամբ Թովմաճանը Տյուք Շուազոլի ու իշխանների հետ դուրս եկավ։

Եվ բոլոր իշխանները հավաքվեցին Թովմաճանի գլխին, նաև ուրիշ պեսպես բաներ էին հարցնում։ Իսկ իշխաններից մեկը հարցրեց Տյուք Շուազոլին.

— Այս Հապեշի գանձապետն ի՞նչ ազգի է։— Եվ նա պատասխանեց՝ Հայ է։ Իսկ իշխանը ծաղրելով կամ կատակով հեգնեց.— Այո, այո, իմացա, այս ազգը երեկ կամ այսօր նոր է ելել։

Այնժամ Թովմաճանը բորբոքվելով՝ Տյուք Շուազոլին հարցրեց.

— Սրան պատասխանելու բան ունեմ, ասե՞մ, թե ոչ։

Տյուքն ասաց.

— Ուի՛, մյուսյո՛ւ, այսինքն՝ պատասխանիր։

Այն ժամանակ Թովմաճանը մոտեցավ այն իշխանին և ասաց Տյուք Շուազոլի թարգմանությամբ.

— Ո՞րտեղից իմացար, որ մեր հայոց ազգը երեկվա կամ այսօրվա նորելուկ է։

Եվ նա պատասխանեց.

— Գիտեմ, որ այդպես է։

Թովմաճանն ասաց.

— Դու Աստվածաշունչը կարդացե՞լ ես։— Եվ նա ասաց.

www.a-pdf.com

— Ուի՛, մյուսյո՛ւ։

Թովմաճանը նրան հարցրեց.— Նոյի տապանը ո՞ր լեռան վրա է իջել։

Եվ մյուս իշխանները պատասխանեցին.

— Արարատ լեռան վրա։

Թովմաճանն ասաց.

— Արարատ լեռն ո՞ւմ երկրի մեջ էր։— Եվ բոլորը միաբերան ու միաձայն սկսեցին ասել՝ Արմենիոյում [Հայոց]։ Իսկ Թովմաճանը սրանով չբավարարվելով, այլ ավելի մեծ պատկերացում տալու համար կրկին հարցրեց նրանց, թե այդ Արարատ լեռը Հայաստանի ո՞ր կողմում է, Մեծ Հայքում, թե Փոքր։ Նրանք չկարողացան արագ և ուղիղ պատասխան տալ, ուստի Թովմաճանն ասաց, որ Մեծ Հայքում է։

— Ահա այժմ իմացիր, ո՛վ գիտուն իշխան, ներիր, և տես, թե հայոց ազգը որ ժամանակներից է գալիս, որ Հին կտակարանում հիշատակվում է։ Իսկ քո ազգի անունը Հին կտակարանում չկա։ Ուրեմն, տես, մեր հայոց ա՞զգն է երեկ ու այսօր հայտնվել, թե՞ քո ազգը։

Եվ բոլոր իշխաններն սկսեցին ծաղրել հարց տվող իշխանին, Իսկ Տյուք Շուեզոլը գնաց մտավ թագավորի մոտ, պատմեց ամեն ինչ մեկառմեկ։ Եվ թագավորը ներս կանչել տվեց հարցնող իշխանին ու Թովմաճանին։ Եվ եկան արքունի սպասավորները Թովմաճանի մոտ. «Աւանսէ՛, մյուսյո՛ւ, աւանսէ՛, մյուսյու» ասելով՝ նորից տարան թագավորի մոտ։ Նորից թագավորի մոտ կանչվելիս Թովմաճանը մեծ երկյուղ զգաց՝ թերևս մեր ազգը հին և նրանը նոր անվանելու պատճառով կանչած լինի վերստին։ Բայց այդ մտածմունքն իզուր էր, որովհետև թագավորն ուրախ դեմքով ընդունեց Թովմաճանին և ասաց.

— Պռա՛ւօ, մյուսյու, լավ ես ջատագովել քո ազգը։

Ապա հարց տվող իշխանին ասաց.

— Դու չգիտեիր նրա ազգի հին կամ նոր լինելը, հապա ինչպես ստուգեցիր ու պնդեցիր, թե նոր է նրա ազգը։

Եվ մյուս իշխանները պատասխանեցին, թե հայոց ազգի այդքան հին լինելը չգիտեր։ Այնժամ թագավորն ասաց.

— Ուրեմն վերցրու Աստվածաշունչը, տար քո սենյակը և այնքան կարդա, մինչև սովորես ու կարգին դիտենաս, նոր միայն արի։

Եվ այսպես [նա] արտաքսվեց իր սենյակը։ Իսկ Թովմաճանն, իմանալով իր պատճառով նրա աքսորվելը, երեսնիվայր ընկած, թախանձագին աղերսեց թագավորին [արձակել նրան], բայց թագավորն ասաց.

— Ինչպես որ դու ես սովորել քո ազգի պատմությունը, նույնպես նա թող սովորի, և հետո միայն կարձակեմ։ Դու գնա խաղաղությամբ և հոգ մի անի նրա մասին։

Եվ Թովմաճանը կրկին երկրպագելով նրան օսմանցոց կարգով՝ Տյուք Շուեզոլի հետ դուրս ելավ, և երկու օր անց [թագավորը] Թովմաճանին տվեց այն հանձնարարականը՝ Կոստանդնուպոլսո դեսպանին, և մյուս թագավորական պարգևները, ինչպես վերևում ասվեց, որ բարեկամները տեսնեն ու հրճվեն։

Եվ պալատական իշխանները, որ բարեկամացան Թովմաճանին, ամեն օր անպայման գալիս էին նրա մոտ, նստեցնում նրան իրենց կառքերը, տանում այս ու այն տեղ զբոսանքի։ Եվ այսպես, ուրախությամբ մնաց Փարիզ 64 օր։ Եվ թագավորին գործակցելով՝ մեծ առևտուր արեց։ Ապա իշխան-

www.a-pdf.com

ներից նույնպես հանձնարարագիր վերցրեց այս և այն հասցեով և պատրաստվեց մեկնելու Փարիզից։ Այնժամ մի իշխան եկավ և ասաց նրան.

— Փարիզում մեր Սան Սելաստան եկեղեցում քո ազգի մի թագավորի դերեզման կա, կուզե՞ս տեսնել։

— Մեծ սիրով ուզում եմ տեսնել,— ասաց Թովմաճանը։

Եվ կարք նստած՝ գնացին Սան Սելաստան և գտան դերեզմանը, ուր Փրկչի 1393 թ. [թաղվել է] Լևոն Վեցերորդը՝ Հայոց վերջին թագավորը և ուր ֆրանսերեն գրված է այսպես. «Ռէքս Արմէնօրում Լէօ Լուզիկան»։

Արդ, այն իշխանը տարավ ցույց տվեց մեր Լևոն թագավորի գերեզմանը, և Թովմաճանը մեծապես շնորհակալ և ուրախ էր այն օրը նրա տանը։

Եվ ապա երեք օր անց Թովմաճանը 1769 [թ.] դեկտեմբեր 4-ին փոստակառքով մեկնեց Փարիզից և չորս օրում հասավ Շալոն, այնտեղից երկու օր հետո հասավ Լիոն, իսկ Լիոնից յոթ օրում նավակով հասավ Մարշիլիա։ Եվ այնտեղ մնաց հինգ օր, իսկ այնտեղից նավակով երկու օրում [հասավ] Լիվոռնո՝ դեկտեմբեր 24-ին։

www.a-pdf.com

ՍԱՐԳԻՍ ԳՐԻՉԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Արդ, հայկազյան ժամանակաշար չափով ՉԿԳ (1314), Աստծու բանի՝ առ մեզ հայտնվելուց ՌՅԺՉ 1316) և նախաստեղծների՝ վայելչական վայրից [դրախտից] ելնելուց մինչև այժմ ՅՉ և ԼԹ (6739) տարի է, որ ողորմած Աստծո շնորհներով ու պարգևաբաշխությամբ, վհատ և տառապյալ հոգու ձեռքով, գրվեց Գործք առաքելականը և աստվածական հրամանները, ի վայելումն և ի պայծառություն սուրբ եկեղեցու։

Սա գրվեց ընտիր և ստույգ օրինակից. Թեոդոպոլիս կոչվող քաղաքում, սուրբ Ստեփաննոս Նախավկայի և այլ սրբերի հովանու ներքո, ի ձեռն անարժան և մեղապարտ Սարգիս գրչի, որ ունայն է ամեն բարիքից, խորհրդից ու գործերից։

Արդ, աղաչում եմ բոլորին, ով կարդա կամ օրինակի, հիշեցեք ի տեր բարեմիտ և առաքինագործ ընտրյալ կարգավոր, կուսազարդ կրոնավորին ու նրա ծնողներին, և նրա բոլոր ազգականներին, առավել ևս՝ Մխիթար աբեղային՝ նրա հոգևոր եղբորը, որ փոխվեց ի Քրիստոս [մահացավ] այս տարի, և պատվական մարգարիտ Ստեփաննոս քահանային, և Հովհաննեսին, և նրա հորը, իրենց՝ ճշմարիտ հոգու ձեռքով նկարած և ընտրյալ ուսուցիչներին, ոլ զարդարված էին ամեն տեսակ առաքինություններով և նմանված առաջին սրբերին, որովհետև այս ամենքը ձեր աղաչանքներն ու բարերար Աստծո ողորմությունն են ակնկալում։

Դարձյալ, կրկին աղաչում եմ երեսաստղ մաղթանքով քրիստոսասեր ընթերցողներիցդ՝ հիշել ի Տեր իմ պանծալի հայր եղբայրիկին և իմ մայր Շնոֆոր տիկնոջը, և սրանց համար ևս խնդրեցեք հոգու և մարմնի թողություն։

Եվս առավել հիշեցեք ընտրյալ քահանա Գրիգորին՝ իմ պանծալի եղբորը, և հոգևոր եղբայրներիս՝ Մերին և Կարապետին, բազմաշնորհ սարկավագներին։

Սա գրվեց հայոց Օշինի թագավորության և իսմայելացոց ազգի խարապանդայի ղանության օրոք, նեղ ու դառն ժամանակներում, որ հայոց ազգս ընկավ հարկերի լծի տակ և չկա հույս ապավենի և ոչ էլ տեղ ապաստանի։ Եվ ամբողջ աշխարհը տառապանքի ու հարկապահանջության տակ էր, և իսպառ նվազել էր ազգս հայոց։ Եվ այս քաղաքում քանդեցին բազում եկեղեցիներ, և ոմանք թողնելով քրիստոսական հավատը, գնացին անօրեն իսմայելացիների հետ, ուրիշները փախան այլևայլ վայրեր, ոչ մի տեղ չգտնելով ապավեն, այլ՝ բազում վշտեր ու տառապանքներ, որ կային աշխարհիս վրա մեր մեղքերի պատճառով։

Ահա այս տարի սաստիկ մորեխ եկավ երկրի վրա. մեր օրերում ոչ ոք չէր տեսել, և ոչ էլ հնում այսքան խիստ բան պատմեցին, տասն օրվան ճա-

www.a-pdf.com

նապարհը մեկ օրում էր անցնում, և քառասունմեկ օրում այնպես խստորեն անցավ, որ լեզուն չի կարող պատմել, և ոչ ոք չի կարող գրի առնել մորեխի անթիվ բազմությունը: Ինչպես բազում հեծյալներ, որ գնում են ցերեկը և ամբողջ գիշերը հանգստանում, այդպես գալիս էր մինչև երեկո և առավոտյան, երբ շողում էր արևը, ելնում էր, և երբ ելնում էր, նրա տեսքն այնպես էր, կարծես սաստիկ ձյուն կամ անձրև լիներ: Գնում և բարձրանում էր, ոչ ոք չէր կարող տեսնել նրա բարձրությունը, և նրա խստությունից փոխվում էր արևի գույնը: Աղմկում էր գետի նման, անցնում իբրև քամի, և արար աշխարհը տարակուսանքի մեջ էր, լալիս էին դառնապես, ողբում, կոծում, մորխիրը գլխներին լցնում, ծեծում իրենց երեսները. և ոչ մի տեղից փրկություն չեղավ, ինչպես մարգարեն է ասել, աղաղակում էին, և ոչ ոք չկար, որ փրկեր նրանց, դիմում էին Աստծուն, և չլսեց նրանց, որովհետև այս ամենը մեր գլխին եկավ մեր մեղքերի պատճառով: Ահա, տեսեք, թե որչափ դառնություն ու ցասում եկավ մեզ վրա՝ մեր գործերին համապատասխան. մերթ երաշտ մերթ սաստիկ և ավերիչ անձրև, մերթ դիվական հողմեր և սաստիկ օդ, և ձյուն, և արհավիրքներ տեսակ-տեսակ, և մենք՝ անմիտ, ինչպես անասուն, չգիտենք մեր կորուստը, այլ հույս ենք դրել Հիսուս Նազովրեցու վրա, որ կոչվում է որդի Դավթի:

Այս անցավոր կյանքը կանցնի,
Համբերության է երանի,
Ապաշում եմ արտասուքի՝
Հիշման արեք ինձ արժանի,
Որ ինձ և ձեզ Տերն ազատի
Եվ մեր մեղաց գիրը չնչի:
Ամեն:

ԳՐԻՉ ՀԱԿՈԲԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

...Ես՝ ծանրամեղ ոգի Հակոբս պիտակ անվամբ կրոնավոր, որ քահանայական կարգը լոկ անունով ունեմ և գործով անչափ հեռու եմ սրանից, ինչպես արևելքն արևմուտքից, կիսակենդան եմ՝ հոգով մեռյալ և մարմնով կենդանի, ինչպես մի դիակ երկրի վրա, սա գրեցի և ավարտեցի Հիսուսի օգնությամբ, տհաս մատներով ու հողդողդ ձեռքերով, որքան իմ կարողությունն էր: [Գրեցի] ի սփոփանս ինձ և ի դարձ ու զղջումն անձիս՝ Աստծո շնորհիվ և սրբերի օգնությամբ: Եվ աշխարհից հեռանալուց հետո սա կթողնեմ եկեղեցու մանուկներին հուրախություն և ի պայծառություն: Արդ աղաչում եմ ձեզ, ո՛վ բարեսեր հոգիներ, սա կարդալով կամ օրինակելով, կամ տեսնելով, կամ որպես սեփականություն ժառանգելով՝ հիշեցեք սրտի կամոք մի Տեր-ողորմյայով ողորմելի Հակոբին՝ սրա գրողին, որ հոգուս աչքով մեր աղոթքն եմ ակնկալում:

Նաև մեր մարմնավոր ծնողներին ու նախնիներին՝ Գրիգորեսին և Թումային, Դուռմելիքին և Ավաքտիկինին, քաջահավատ որդիներին՝ Ատոմին և Ղբելին, մեր մարմնավոր ծնողներին և իմ հորեղբորը՝ Հովհաննես կրոնավորին, որոնք գնացին առ Քրիստոս, այլև ողջերին, որ այժմ կան, հարազատ եղբորս՝ Վարոսին, և քույրերիս՝ Գոհարմելիքին և Շաքարին և նրանց կյանքի ընկերներին՝ Խութլուշային ու Ատոմին և մեր մյուս արյունակիցներին՝ ձեր սուրբ աղոթքներում հիշեցեք: Դարձյալ և մեր հոգևոր երախտա-

www.a-pdf.com

վորներին ու լուսավորիչներին՝ Ըռոշտյան գավառի արի և առաքինի Սիմեոն վարդապետին, նրա լծակից և համանման երկու արեգակներին, մարմնային եղբայրներին՝ Ստեփանոսին և Հովհաննեսին, որ նուրբ փիլիսոփաներ են, և մեր հոգևոր վերակացու Սիմեոնին: Դուք, որ այս անուններս լսում եք, Աստված-ողորմին կրկնեցեք կամովին, որ դուք ևս գտնեք, որովհետև [նրանք] մեծ հոժարությամբ ցավեցին մեզ և շատերի համար՝ երաժշտական երգերով ու հոգևորական խոսքով: Առավել ևս քրիստոսակիր անձին, որ ստեղծում է և ուսուցանում, իմ ուսուցիչ Մխիթարին, որ շատ հոգատար է իմ և շատերի նկատմամբ, զի բոլորը, որ եկան սրա մոտ, բարձրանում են հավատով և պայծառանում վարքով, ուստի Հիսուսից հայցում եմ ես, բոլոր հավատացյալների հետ, թող սա մնա իմանալի դրախտում և բազում տարիներ ապրի՝ հօգուտ և ի շահ ամեն հասակի [մանուկների]: Հիշեցեք նաև մեր հոգևոր եղբայրներին՝ այս սուրբ գիրքը կազմող Հովհաննեսին, ծաղկող Կարապետին, որ ձրի ծաղկեց, առավել ևս օրհնյալ արմատի բարի շառավիղներին՝ երիտասարդ Կարապետ կրոնավորին և սրա եղբայր Մկրտիչ դպրին, որ մեր աշակերտներն են, մեզ հետ շատ ջանադիր աշխատեցին, այս սուրբ գրքի բոլոր թղթերը սրանք կոկեցին ու տողեցին, սրանց ծնողները ևս մեր մարմնավոր ծնողներից ավելի աջակցեցին և հարկավոր պիտույքներ մատակարարեցին մեզ, մեկի հազարապատիկը պարգևատուն Աստված թող հատուցի այս կյանքում և հանդերձյալում, և սրանց ցանկալի զավակներ Կարապետին ու Մկրտիչին պահե տիրական անարատ խնամքը...

Աստվածային սույն մատյանը գրվեց հայոց ՊԼԵ (1386) թվականին, դառն և լալաբեր ժամանակներում, երբ բոլորը՝ մեծից փոքրը, ձանձրացել են կյանքից, համաձայն Քրիստոսի խոսքին, թե գալու է ժամանակ, որ ասեն բլուրներին՝ ընկեք մեզ վրա և լեռներին՝ ծածկեցեք մեզ, մի բան, որ տեսանք մեր աչքով:

Իսկ մենք գրում և կարդում էինք Հայաստանի սուրբ և տիեզերահամբավ և երանաշնորհ րաբունապետ և վերադիտող տեր Հովհան Որոտնեցու համալսարանում: Այս անձուկ ու խավարյալ ժամանակներում աշխարհի վրա արեգակի նման փայլում էր սրա անունը, որովհետև բոլոր կարգի խոցերը բուժում էր և բավարարում կարիքները իշխանի ու ազատի, կաթողիկոսի ու իմաստասերի, և ազգս հայոց սրանով մեծ պարծանք ուներ բոլոր ազգերի հանդեպ: Որովհետև հավաքում էր հեռավորներին ու մերձավորներին, որբերին ու տանրնտիրներին, տանջվում և ուսուցանում էր, և բարձրացնում փառավոր աստիճանի, ոմանց՝ րարունի և քահանա, ոմանց՝ երաժիշտ և փիլիսոփա, ուրիշներին՝ ծաղկող և քարտուղար: Արհամարհում էր ծույլերին ու հետամնացներին, փառավորում արիներին, ամենքին՝ տալիս կերակուր և հագուստ, գիրք և մեկնություն, անխռով խաղաղություն, այս ամենը՝ Աստծո սիրու և իր հոգևոր գահի համար:

Եվ մինչդեռ անասելի ցնծությամբ և բերկրալից ուրախությամբ էինք լցված, րաբունին վաթսուն աշակերտով, իր հայրենի Որոտան գավառում, կարդում ու գրում էինք սուրբ մատյանը, իմ ծովացած մեղքը անօրեններուն գունդը հանեց քրիստոնյաների, մանավանդ Բուրդելի տան վրա: Եկան և գրավեցին Որոտան բերդը և հայրենազուրկ արեցին Նանիկի որդի պարոն Սմբատին: Ցանկանում էին ձերբակալել մեր սուրբ րաբունին՝ իր հայրենի ժառանգության պատճառով: Եվ սա Աստծո կամքով ազատվեց նրանցից և երկու օր զանազան տեղեր էր շրջում աշակերտների հետ՝ կարդալով և ուսուցանելով: Եվ ես ծանրաբեռնված, թուղթն ու բնօրինակը, գրիչն ու թանաքը

www.a-pdf.com

ուսին բարձած, հետները գնում էի, կարդում, և ինչքան հասցնում էի՝ գրում էի այս սուրբ մատյանը, բաղում նեղությամբ և չարչարանքով, որովհետև որտեղ սկսեցի, այնտեղ չեղավ ավարտը։

Աստված անօրենների կամքը քաղցրացրեց սուրբ վարդապետիս հանդեպ, և նա եկավ անխոով խաղաղությամբ իր վանքերը, Երնջակի գավառը, շինեց և հաստատեց սուրբ եկեղեցիները շքեղ ու փառավոր՝ անօրեն իշխանների և բերդավագների մեջ, և ցնծալից և ուրախ էինք ավելի, քան առաջ։

ԳՐԻԳՈՐ ԵՐՎԱՆՑՈՒ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

...Մեր ՌՃԻՐ (1679) թվականի հունիս ամսի չորսին, շորեքշաբթի օրը, Տիրոջ համբարձումից հետո և ժամը չորսին մոտ հանկարծակի դղրդալով շարժվեց Արարատյան երկիրը, և այնպես սաստիկ, կարծես նավը ծովի վրա ուժգին հողմից ալեկոծվում է։ Երկրաշարժի սաստկությունից փլվեց Երևան քաղաքը՝ բերդով ու պարսպով, կործանվեցին տներն ու գեղեցկաշեն ապարանքները, քանդվեցին եկեղեցիներն ու վանքերը, ցամաքեցին աղբյուրները և որոշ տեղերից սև ջրեր հոսեցին, պատռվեցին ժայռերն ու լեռները, և ժայռերի ճեղքերից ծիրանագույն բոց էր ելնում։ Մառախուղը բարձրացավ և պատեց երկիրը Գառնիի գավառից մինչև Արագած լեռը, դաշտերով ու լեռներով հանդերձ, մինչև իսկ ծածկելով արևի ճառագայթները։ Եվ թվում էր, թե աշխարհի վերջն եկել է։ Իսկ մահացածներին թիվ չկար։ Տեսնելու էր մեծ տագնապի հուրը և մնացողների անհույս վարանման անպատմելի աղետները։ Տեսնել էր պետք ծնողների ու զավակների կոծն ու կսկիծը, սիրելիների ու բարեկամների վայն ու եղուկը։ Գոչում ու հառաչում էին, և չկար մեկը, որ օգներ նրանց։ Դառնում ձեռքերով փորփրում էին այսուայնտեղ, և նրանց սրտերը չէին դիմանում։ Եվ կսկիծներից վերստին զորանալով, ձեռքով պեղում էին հողերն ու քարերը։ Հանում էին իրենց որդիներին գրկած մայրերին, եղբորը՝ եղբայրը, քույրը՝ քրոջը փաթաթված։ Եվ բազում կանայք հաց եփելիս ընկել էին թոնիր ու խորովվել։ Եվ ոտքերը հանում էին, շարքով իրար մոտ էին դնում և նրանց շուրջը պատում էին դիխաբաց և ողորմ կսկծալի։ Եվ մի գերեզման փորելով, չորս-հինգ հոգու միասին թաղում էին իրենց շորերով, առանց ծեսի ու քահանայի։ Ուրիշ դավառներից նրանց օգնության էին գալիս, և օրեր շարունակ պեղում էին, հետո գնում, փոս փորում ու թաղում։ Եվ գարձյալ շարժվում էր երկիրը գիշեր ու ցերեկ, մինչև ինն օր։ Եվ իններորդ օրը, հինգշաբթի, ժամը հինգի կողմերը, առաջին երկրաշարժի նման կրկին շարժվեց երկիրը։ Եվ ինչ որ խախուտ էր մնացել առաջին երկրաշարժից, իսպառ տապալեց սա ու կործանեց։ Եվ գարձյալ երկիրը շարժվում էր գիշեր-ցերեկ։ Եվ սեպտեմբերի ութին Կոզեռն կոչված սուրբ Հովհաննես վարդապետի դամբարանի մոտ էինք, Հրաստան գետի ափին, ուր Երևան քաղաքի ննջեցյալների հանգստարանն է. երրորդ ժամն էր, հանկարծակի դղրդալով շարժվեց երկիրը։ Եվ երկրաշարժի ուժգնությունից գերեզմանի վիմատաշ քարերը իրար բախվելով ճռնչում էին։

www.a-pdf.com

Գ

Մ Խ Ի Թ Ա Ր Գ Ո Շ

(1140—1213)

ԱՒԱԿՆԵՐ

ԱՍՏՂԵՐԸ

Մի անգամ աստղերը ժողով արեցին։ Նրանցից ծերագույնն ասաց.

— Մենք շատ ենք, ինչո՞ւ լուսնի և արեգակի փոխարեն գիշեր ու ցերեկ չենք լուսավորում։

Մեկ ուրիշը պատասխանեց.

— Որովհետև միավորված չենք։

Եվ որոշեցին միավորվելով՝ նախ հաղթել արեգակին։ Բայց հանկարծ ծագեց լուսինը, և նրանք խամրեցին։

— Սրանից որ այսպես խամրեցինք,— ասացին նրանք,— հապա ի՛նչ կլինեինք, եթե արեգակը ծագեր։

Եվ զղջալով՝ խոստովանեցին իրենց պարտությունը։

Խրատում է առակս, թե թույլերը, ինչքան էլ թվով շատ լինեն, չեն կարող հաղթել հզորին։

ՎԱԶՆ ՈՒ ՄՈՐԵՆԻՆ

Գարնանը, երբ վազը որթակոտոր էր եղել և արտասվում էր, եկան բոլոր տունկերը նրան մխիթարելու, նրանց հետ եկավ նաև մորենին։

— Մի՛ լար,— ասում են,— դարձյալ զավակներ կծնես։

Եվ նա պատասխանում է.

— Կծնեմ, և դարձյալ կկոտորեն, և դա ի՞նչ մխիթարություն է։ Մխիթարանքն այն է, որ իմ կենդանի մնացած որդիները պտուղ կտան և մարգկանց ուրախության պատճառ կդառնան։

Եվ սրանով էր վազը մխիթարում իրեն։

Իսկ մորենին ասում է.

— Նկա քեզ մխիթարելու, որ ինձանով սրբես աչքերդ։

— Շնորհակալ եմ այգեգործից, որ պոկում է քեզ իմ արմատից,— պատասխանում է վազը։

Առակս հայտնում է, որ պետք է միաժամանակ մխիթարվել կենդանի մնացածներով, քանի որ մահկանացու է մարդկային ցեղը, և իսկական մխիթարությունն այն է, որ կենդանի մնացած ժառանգները լինեն տիրոջը հաճելի։ Բայց անմիտների խոսքը, ինչպես մորենունը, ավելի զայրացնող է, քան՝ մխիթարություն սգավորին, որ շնորհակալ կլինի, եթե բոլորովին չտեսնի անմիտ մխիթարիչին։

www.a-pdf.com

ՄՈՐԵՆԻՆ ԵՎ ՎԱԶԸ

Ձի պահելով վազի դեմ՝ մորենին ասաց.

— Քեզ նման կբարձրանամ և կրկնակի պտուղ կտամ և կդերազանցեմ քեզ, որովհետև ձմռանը ես անթառամ եմ լինում։

Վազը հակաճառեց նրան.

— Քո պարծանքը կատարյալ կլինի, եթե աշնանը հավաքվես հնձանում։

Իսկ աշնանը մորենին ոտնատակ եղավ։

ՆՈՒՆԵՆԻՆ ԵՎ ԹԶԵՆԻՆ

Նունենին և թզենին կամեցան սիրով կապվել միմյանց հետ ու երդվեցին քաղցրությամբ, բայց նունենու թթվության պատճառով ձանձրացավ թզենին, և նրանց դաշինքը խախտվեց։

Առակիս իմաստն այն է, որ սիրողները նախ պետք է փորձեն միմյանց բարքերը, թե բոլոր կողմերով նմա՞ն են իրար, իսկ եթե ոչ՝ հեշտությամբ կխախտվի սերը։

ԴԵՂԶԸ ԵՎ ՍԵՐԿԵՎԻԼԸ

Առյանում մեկ անգամ դեղձը հանդիմանել սկսեց սերկևիլին՝ ասելով.

— Տեսքով դեղին ես ու մարդկանց համար դժվարուտելի։ Իսկ ես բարեհաս եմ ու դյուրաճաշակ։

Եվ նա ասում է.

— Կեղծավոր ես ամենևին և մարդկանց խաբող, ճաշակելիս քաղցր ես երևում, բայց մտնելով որովայն, շատ վնասներ ես գործում։ Իսկ ես դեղին եմ, քանի որ տեսակցության գնալով և հիվանդությունը վերացնելով, ցավակից եմ դառնում հիվանդներին, և ոչ թե քեզ պես մերժված եմ նրանցից։

Պարզ է միտքը առակիս, կեղծավորները միշտ ճշմարիտներին հանդիմանում են իբրև վարքով կոպիտների, և ներկայացնում իրենց քաղցրաբարո և վշտակից։ Սակայն ճշմարիտ խոսքերը մարդկանց դեղ են, թեև առաջին հայացքից հակառակ են երևում և ցավակցելով նրանց՝ վերացնում են հիվանդությունները։

ԱՆՄԻՏ ՄԱՐԴՆ ՈՒ ՀՈՒՆԱՊԻ ԾԱՌԸ

Մի անմիտ մարդ հունապի ծառը դժնիկ կարծելով՝ հանեց արմատից։ Ծառը զայրանալով ասաց.

— Ո՛վ անագորույն, ծառը պտղից պետք է ճանաչել և ոչ թե տեսքից։

Առակս վերաբերում է անմիտ դատողներին՝ թագավորներին, իշխաններին, դատավորներին և եկեղեցու առաջնորդներին, հանդիմանելով, որ անվարժ են դատում, որով և բազում վնաս են գործում, բարուն իբրև չարի խոշտանգելով։

ԲԱՄԲԱԿԵՆԻՆ ԵՎ ՍՈՍԻՆ

Սոսու մերձակայքում երկրագործները ոռոգում էին բամբակի արտերը և պատվիրում միմյանց զգուշանալ, որ չտրոբեն բամբակի ծառերը։ Լսելով,

www.a-pdf.com

որ բամբակենուն ծառ կոչեցին, սոսին բարկացավ ու ասաց.

— Ինչպե՞ս է դա ինձ հավասար ծառ կոչվում, քանզի ես այսքան հաստ ու բարձր եմ, մեծ էլ տեղ եմ գրավում։

Եվ բամբակենին լսելի կերպով, առանց երկմտելու պատասխան տվեց՝ ասելով.

— Բարձր ես ու հաստ, բայց օգտակար չես։ Ո՛չ շինվածքի, ո՛չ պտղաբերության և ո՛չ էլ վառելու համար ես գովելի։ Քանձր ստվեր ունենալով՝ ավելի բամբասանքի ես արժանանում, քան գովեստի։ Իսկ ես, թեպետ նվաստ ու տկար, բայց օգտակար եմ ո՛չ միայն հարուստների, այլև աղքատների համար։ Խնամելու, քաղելու, գործելու դեպքում ոչխարների բրդի, վուշի, շերամի մետաքսի նման դառնում եմ հագուստ։ Խոզակաղնից բացի, դու այլ բան բոլորովին չես տալիս։

Այսպես նախատվելով բամբակենուց՝ սոսին լռեց։

Սնոտի և պարծենկոտ մարդկանց է լռեցնում առակս, նրանց, որ ունեն տեսք ու հասակ և ապրում են անօգուտ կյանքով, մյուսներին, որ արհամարհում են տկարներին ու հասակով կարճերին, որոնք, սակայն, շատ բաներում պիտանի են ու օգտակար։

ՄԱՐԴՆ ՈՒ ԾԱՌԵՐԸ

Մի չքավոր մարդ ձմռանը գնաց այգի՝ պտուղ քաղելու։ Եվ տեսնելով, որ ծառերը փայտացած են, սկսեց թշնամանալ, տրտնջալ, հարվածել ու ասել նրանց.

— Ինչո՞ւ պտուղ չունեք, որ ուտեմ ու կշտանամ,— ու սկսեց ավելի չարանալ։

Եվ ծառերից մեկը քաղցրությամբ ու համոզող խոսքով ասաց։

— Մի՛ տրտմիր, ո՛վ մարդ, և իզուր մի՛ բամբասիր, որովհետև սխալվում ես։ Թեպետ կարիքավոր, բայց ինչո՞ւ չգիտես, որ ձմռանը հանգստանում ենք և զորացնում մեր արմատները, որպեսզի կարողանանք գարնանը ծաղկել, ամռանը սնունդ տալ պտղին և աշնանը՝ հասնել ու կերակրել։ Ինչո՞ւ չեկար այն ժամանակ, երբ մարդ, անասուն ու գազան վայելում էին մեր պտուղները։ Այժմ գնա և վերադառնալով հարմար ժամանակ, կեր որչափ կկամենաս։

Եվ գնաց մարդը այդ խոսքի հույսով։

Առակիս ծառը խրատում է հյուրերին ու աղքատներին, որ հարմար ժամի գնան մեծարանք փնտրելու, հյուրերը՝ ուտելու և հանգստանալու, իսկ աղքատները՝ կարիքները բավարարելու։ Եվ ամեն ժամ հյուրընկալողները պատրաստ չեն ընդունելու, կամ բարեգործները՝ ողորմություն տալու։ Իսկ ամբաստանելու և տրտնջալու դեպքում չպետք է չարանալ, այլ անհրաժեշտ է պատասխանել քաղցրությամբ, բացատրել անպատեհաստության պատճառները և այլ ժամի առատաձեռնությունը։

ՆՇԵՆԻՆԵՐՆ ՈՒ ՇԱԳԱՆԱԿԵՆԻՆ

Քաղցր նշենին, մոր կողմից եղբայր լինելով գառն նշենուն, նեղվեց նրա դառնությունից և շագանակենուն դարձրեց իրեն բարեկամ ու եղբայր, գտնելով, որ երկու որակով նա բարոյակից է իրեն։ Եվ շատերից մեղադրվելով՝ ասաց.

www.a-pdf.com

— Ով իմ հակումներն ունի, նա է իմ եղբայրը։

Ոչ ոք չկարողացավ հակաճառել։

Առակս հայտնում է, որ թեև եղբայրները հարազատ են և վարքով հակառակ են լինում իրար, հարկադրաբար բաժանվում են և օտար բարոյակիցներին լավ համարում։

ԽՈՀԵՄ ՄԱՐԴԸ ԵՎ ԾԱՌԵՐԸ

Մի խոհեմ մարդ հարցրեց ծառերին.

— Ի՞նչն է պատճառը, որ ինչքան բարձրանում եք, այնքան խորն եք արմատներ գցում։

Եվ նրանք պատասխանում են.

— Խոհեմ լինելով՝ ինչպե՞ս չգիտես, որ մենք չենք կարող այսքան ճյուղեր կրել և ընդդիմանալ հողմերի ճնշմանը, եթե խոր և բազմաճյուղ արմատներ չունենանք։ Տեսնում ես մեր եղբայր հաճարի և փիճի ծառերը, որ, թեև շատ ճյուղեր չունեն, չեն կարողանում դիմադրել, որովհետև չունեն նաև խոր արմատներ։

ԴԵՂՆՈՒԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Գնդածաղիկը, կորնգանը, խոլորձը, կապույտ առվույտը, սեզը և սրանց նմանները, ծաղրելով դեղնուկին, ասում էին.

— Ինչի՞ց է, որ մենք զվարճադեմ ենք, իսկ նա դեղնությամբ հյուծվել է։

Լսելով, դեղնուկը պատասխանեց.

— Որովհետև անմիտ եք և աներկյուղ։ Ձեք մտածում, որ մեզ համար գերանդի են սրում, իսկ ես մտատանջվելով, սարսափահար եղած դեղնում եմ։

ՁԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԸ

Ձկները մեղադրվեցին իրենց թագավորից.

— Ինչո՞ւ եք ուտում ձեզնից մանր ձկներին։

Համարձակություն ստանալով՝ ձկները պատասխանում են.

— Որովհետև քեզնից սովորեցինք. շատերը եկան քեզ երկրպագելու, և կլանելով՝ քեզ կերակուր դարձրիր։

Ըստ այդմ իրենք ևս ավելի հանդուգն եղան։

Առակս հանդիմանում է, որ ոչ թե խոսքով, այլ գործով պետք է խրատող լինել։

ՆՈԽԱԶՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Նոխազը՝ այծերի հետ մտավ քարանձավ։ Տեսնելով նրանց, գայլը գալիս, հարցնում է։

— Ի՞նչ եք անում այդտեղ։

Եվ ասում են.

— Քառասուն օր ճգնելու ենք այստեղ։

Հավատալով, գայլը գնաց։ Իսկ այծերը իջնելով՝ գնացին խաղաղությամբ։

Առակս ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ստությամբ ազատվել վտանգից, որ պարսավելի չէ։

www.a-pdf.com

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Առյուծը, կոտրելով ոտքը, տրտնջում էր բոլոր կենդանիների վրա.

— Իմ հպատակներն եք, քանի որ կենդանիների իշխանն եմ ես, բայց ինչո՞ւ այժմ ընծա չեք բերում, որ առողջանամ։

Պատասխանում են.

— Դու երբեք չպաշտպանեցիր մեզ ոչ արջից, ոչ գայլից և ոչ էլ ուրիշ գազանից։ Նույնիսկ դու ինքդ մեզ չխնայեցիր։ Մենք Աստծուն պիտի ընծա մատուցենք, որ այդպիսի չարիքի մեջ ես ընկել։

Առակիս միտքը հայտնի է. աշխարհիկ և եկեղեցական չար առաջնորդները, տանջելով հպատակներին, չեն պահպանում նրանց ուրիշների վտանգից։

ՃՈՎԻ ԳՈՐՏԵՐԸ

Ճովի գորտերը, խորհուրդ անելով, ասացին.

— Ինչո՞ւ ենք տոզած փորերով ու դեղնած մաշկով խեղդվում ջրերում, դուրս գանք ցամաք ու ապրենք ուրիշների պես։

Մերերից մեկն ասում է.

— Հայրս պատվեր է տվել ինձ, որ ծովի ապաստանը չթողնեմ, որովհետև բնությամբ երկչոտ ենք, գուցե դուրս գանք ու սարսափելով ետ դառնանք և ցույց տանք մեր երկչոտությունը։

Չլսեցին խորհուրդը և դուրս ելան, բայց ոտնաձայն լսելով՝ փախան ու կրկին խորասուզվեցին ծովը։

Առակիս մեջ իմաստություն կա. նախ պետք է սեփական կարողությունը ճանաչել և ապա տեղը կամ գործը փոխել։

ՈՉԽԱՐՆԵՐՆ ՈՒ ԱՅԾԵՐԸ

Հոտն ընթանալիս ոչխարների դմակները շարժվում էին։ Այծերը, նախանձից դրդված, սկսեցին բամբասել նրանց՝ ասելով.

— Ինչո՞ւ մեզ նման պարկեշտաբար չեք քայլում։

Առակս ուղղված է ընդդեմ նախանձոտների, տեսնելով ուրիշների արժանիքը, բամբասում են, իսկ իրենց, որ զուրկ են դրանից, համարում են պարկեշտ։

ԱՌՅՈՒԾԸ, ԱՐՋԸ ԵՎ ԳԱՅԼԸ

Առյուծը, արջը և գայլը ընկերանալով ասում են.

— Ինչո՞ւ լինենք հումակեր, բռնենք մի մարդ, որ իրենց սովորության համաձայն որսից մեզ համար կերակուր պատրաստի։

Եվ բռնելով մեկին՝ դարձրին իրենց խոհարար։

Մարդը սրտնեղելով մտածեց ազատվելու մասին։ Ճեղքելով մի մեծ փայտ, յուրաքանչյուր կողմում դրեց սեպեր, և առյուծին ու մյուսներին ասաց.

— Օգնեցեք ինձ կիսելու փայտը, դրեք ձեր ձեռքերը ճեղքի մեջ և ձգեցեք։

Եվ երբ դրեցին, դուրս քաշեց սեպերը, ու գազանները մնացին բռնված։ Ապա վերցնելով կացինը՝ սկսեց ջարդել նրանց՝ ասելով.

— Սկսենք առյուծից։

www.a-pdf.com

Գայլը ծերանալով գնում է ոչխարի հոտի մոտ ու ասում.

— Այժմ ապաշխարող եմ և շատ եմ ձեզ վշտացրել, ուստի ուզում եմ գալ ու ձեր տան ավլողը դառնալ, որպեսզի թողության արժանանամ և ձեր մանուկներին ուրիշ գայլերից ևս պահպանեմ։

Եվ ուրախանալով ոչխարները շներին ասում են.

— Այլևս մի նեղեք նրան։

Գայլը մնում է այդտեղ, համբերում՝ մինչև մեծանում են գառները, ապա սկսում է հոշոտել և ուտել նրանց։ Ի վերջո շատերը, նկատելով այդ, սատակեցնում են նրան։

Առակս այսպիսի խրատ է տալիս. շուտ չհավատալ չարադործին։

ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԵՔ ԵՐԱԶԸ

Մի թագավոր երազ տեսավ, որ անձրևի փոխարեն երկնքից աղվես էր տեղում։ Նա հրաման արձակեց.

— Ով երազս բացատրի, հազար դահեկան կտամ նրան։

Մի աղքատ մարդ լսելով գնում ասում է.

— Եթե երեք օր ինձ ժամանակ տաս, կմեկնեմ երազդ։

Եվ նա, գնալով անապատ, շրջում էր այնտեղ ու մտածում։ Մի վիշապ, տեսնելով տարակուսած մարդուն, ասաց.

— Ինձ ի՞նչ կտաս, եթե թագավորի երազը հայտնեմ քեզ։

Նա պատասխանում է.

— Ինչ որ խոստացավ թագավորը, կեսը քեզ կտամ։

Ասում է.

— Գնա և հայտնի՛ր, թե ժամանակն է, այսուհետև մարդիկ նենգավոր և խաբեբա կլինեն աղվեսի նման։

Եվ մարդը գնալով թագավորին ասաց։ Բացատրությունը դուր եկավ նրան, որովհետև իսկապես մարդիկ նման էին աղվեսի։ Թագավորը տվեց նրան խոստացած դահեկանները։ Եվ մարդը խաբեց վիշապին ու չվերադարձավ նրա մոտ։

Ժամանակ անց, մի ուրիշ երազ տեսավ թագավորը, որ անձրևի փոխարեն երկնքից ոչխար էր տեղում։ Հրամայեց կանչել այն մարդուն, որ, ինչպես առաջին անգամ, մեկնի երազը։ Նա թագավորից նույն բանն է խնդրում, բայց իբրև ապերախտ ամաչում է գնալ վիշապի մոտ։ Եվ այնուամենայնիվ գնալով, պաղատագին ասաց.

— Մեղա՛ քեզ, հայտնիր երկրորդ երազի միտքը, և քեզ կտամ առաջին ու երկրորդ պարտքս։

Վիշապը, առանց մարդու պարտազանցությունը հիշելու, ասաց.

— Գնա և հայտնի՛ր, թե ժամանակ է գալու, և եկել է արդեն, որ մարդիկ ոչխարի նման պարզամիտ պիտի լինեն։

Եվ գնալով մարդը մեկնեց երազը։ Այս մեկնությունը ևս հավանելով՝ թագավորը դարձյալ տվեց նրան հազար դահեկան։ Վերցնելով դրամը՝ մարդը տարավ, հանձնեց վիշապին։

Դրանից հետո թագավորը մի ուրիշ երազ ևս տեսավ, որ անձրևի փոխարեն երկնքից սուսեր էր տեղում։ Հրամայեց նորից կանչել այն մարդուն,

www.e-pdf.com

որպեսզի դա ևս մեկնի։ Եվ մարդը, խնդրելով նույն ժամանակը, գնում է վիշապի մոտ, որն անմիջապես, իբրև բարեկամի, մեկնում է երազը՝ ասելով.

— Դնա և հայտնի՛ր, թե ժամանակն է, որ մարդիկ դառնան բռնավորներ ու սուսերավորներ։

Եվ սովորելով այդ՝ մարդը մտածեց. «Ինչո՞ւ այժմ թողնեմ վիշապին հազար դահեկանը և կամ ինչո՞ւ մյուս հինգ հարյուրը ևս բերեմ, ավելի լավ է, խփեմ վիշապին ու սատկեցնեմ»։ Եվ ջանաց խփել վիշապին, բայց այդ նրան չհաջողվեց՝ վիշապը խույս տվեց նրանից։ Եվ մարդը զղջալով մտածում է. «Զարիք գործեցի. մյուս անգամ, երբ հարկ լինի, էլ ինչպե՞ս կգամ սրա մոտ»։

Տեսնելով, որ մարդը փոշմանել է, վիշապն ասաց նրան.

— Ո՛վ մարդ, դու մի տրտմիր, քանզի անձիդ թելադրանքով ոչինչ չես արել, այլ արել ես ժամանակի բերումով։ Խաբելդ կեղծավորների ժամանակ եղավ, զղջալդ ու հազար դահեկան տալդ՝ միամիտների, իսկ ինձ խփելդ՝ բռնավորների ժամանակ։

ՓՂԻ ՈՐԴԻՆ՝ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԱԿԵՐՏ

Փիղն իր որդուն հանձնեց Պլատոնին՝ իմաստասիրություն ուսանելու։ Եվ ուսուցիչը հանձնարարեց աշակերտին չոքել լսարանում, իսկ նա չկարողացավ։ Պատվիրեց նաև, որ գլուխը խոնարհի գետնին, այդ ևս չկարողացավ։ Պլատոնը այնժամ ետ վերադարձրեց նրան հորը և ասաց.

— Արժանի է, որ քո որդին թագավորի պալատում լինի՝ միշտ ոտքի կանգնած, և ոչ իմ լսարանում, քանի որ ո՛չ նստել կարող է և ո՛չ գլուխ խոնարհել։

ՈՒՂՏՆ ՈՒ ՆՐԱ ԽՆԱՄՈՂԸ

Ուղտը հարված ստացավ իր խնամողից և բարկանալով ասաց.

— Տե՛ս, երբ տրտում եմ լինում, ինձ մի խփիր, թե չէ՝ կմեռնես իմ ձեռքով։

Խնամողը հարցրեց.

— Ի՞նչ նշանով է արտահայտվում քո տրտմությունը, իմանամ, որ չխփեմ։

— Երբ տեսնես ներքին շրթունքս կախված,— ասում է ուղտը,— և քայլելուս ժամանակ լսես ոտքերիս ձայնը, ուրեմն տրտում եմ։

— Դու միշտ այդ ես,— պատասխանեց խնամողը,— էլ ինչպե՞ս իմանամ։

Ջարաբարոնների մասին է առակս, որոնք միշտ բարկացած են և երբեմն պատրվակում են, թե այդպիսին են տրտմության պատճառով.

ԱՆՀՆԱԶԱՆԴ ԶԻՆ

Հոխորտալով՝ ձին չուզեց հնազանդվել հեծյալին։ Եվ դաշտերում շրջելիս հանդիպեց առյուծի, փախչելով նրանից, հանդիպեց արջի, պրծնելով նրանից՝ գայլի ու սրանց նմանների։ Եվ հնազանդվելով խոնարհաբար վերադառնում է՝ ոչ թե դարմանի համար, այլ շար մահից ազատվելու նպատակով։

www.a-pdf.com

Անասունները տրտնջացին.

— Մեր հորթերի համար չարչարվում, կաթ ենք հավաքում, բայց մարդիկ մեզ կթում, խլում են մեր վաստակը։ Եկեք հեռանանք և այլևս չվերադառնանք նրանց մոտ։

Բայց մի իմաստուն կով ասաց.

— Այդպես չէ։ Մարդիկ միգամից վերցնում են այն ավելորդը, որ մեր հորթերին պետք չէ։ Նրանք խնամում են մեզ և մեր հորթերին։ Ուրեմն մենք նրանցից ավելի շատ ենք առնում, քան տալիս ենք։

Իմանալով այս՝ անասուններն ուրախացան։

Առակս խրատում է դժգոհ սպասավորներին, որոնք իրենց տվածն ավելի շատ են համարում, քան տերերից ստացածը։ Մինչդեռ նրանցից խելոքները գիտեն, որ իրենց տվածը ավելի քիչ է։

ԱՐՄԻՎՆ ՈՒ ԼՈՐԸ

Տեսնելով լորին բազմաթիվ ձագերով շրջապատված՝ արծիվն իր գոհությունն է հայտնում Աստծուն։

— Թեև ճշմարիտ ես գոհանում,— ասում է լորը,— երանի քեզ։

Բայց արծիվն իսկույն հարվածեց նրա ձագերից մեկին ու տարավ։

— Պարզվեց,— ասում է լորը,— որ ոչ թե հանուն Աստծու էիր գոհանում, այլ հանուն ագահության։

Առակս բացահայտում է իշխանների բարքը։ Նրանք ուրախանում են հպատակների ձեռք բերած հաջողություններով, համարելով դրանք ավելի իրենցը, քան թե ձեռք բերողներինը։

ԳՈՄԵՇԸ՝ ՆՐԿՐԱՉԱՓ

Գոմեշը կամեցավ երկրաչափություն սովորել։ Եվ ձանձրացավ դաշտերը չափելուց, գնալով ընկավ մի ճահճի մեջ։ Իբրև անընդունակ նա մեղադրվեց ուսուցչից, որին ասաց.

— Մի՞թե միայն երկիր չափել է հարկավոր, կլինեմ ես ջրաչափ։

ԳՈՄԵՇՆ ՈՒ ԻՐ ԽՆԱՄՈՂԸ

Գոմեշը կամեցավ հարվածել իր խնամողին, բայց չկարողացավ, ուստի և տրտնջաց Աստծու դեմ, թե.

— Իմ եղջյուրները ուղիղ չես ստեղծել, այլ՝ կորաձև։

Եվ խնամողը պատասխանելով ասաց.

— Աստված գիտեր քո չար կամքը և դրա համար որոշեց, որ քեզ այդպիսի եղջյուրներ բուանեն։

www.a-pdf.com

Գայլն սպասում էր, որ այծյամը ննջի, որպեսզի ինքը բռնի նրան։ Կռահելով նրա մտադրությունը՝ այծյամը չքնեց շատ օրեր, բայց հոգնելով նիրհեց գայլը։

Եվ եկավ առյուծը՝ սպանեց գայլին։

ՋԱՅԼԱՄՆ ՈՒ ՄԻՏԸ

Միտը, տեսնելով, որ ջայլամը մեծ-մեծ ձվեր է ածում, գայթակղվեց և ուսանելու նպատակով հարցրեց գաղտնիքը։

Ջայլամն ասաց.

— Կրակ եմ ուտում և այդ պատճառով էլ խոշոր ձվեր եմ ածում։

Կարծելով թե ճիշտ է ասածը՝ միտը կրակ կերավ ու մեռավ։ Չմտածեց, որ ոչ թե դա է պատճառը, այլ՝ հասակի մեծությունը։

Առակս հանդիմանում է ունայն ցանկությունները, որ փոքրերը, տեսնելով հզորների գործը, իրենք ևս ցանկանում են գործել՝ չմտածելով իրենց տկարության մասին։

ԲՈՒՆ ԵՎ ԱՐՄԻՎԸ

Բուն միջնորդ ուղարկեց արծվի մոտ և հարս խնդրեց նրա դստերը՝ ասելով.

— Դու ցերեկվա քաջամարտիկ ես, իսկ ես՝ գիշերվա, արժանի ենք խնամիության։

Բազում խնդրանքներից հետո արծիվը համաձայնեց տալ դստերը։

Հարսանիքն սկսեցին ցերեկով։ Ոչինչ չէր կարողանում տեսնել փեսան, և հարսանքավորները ծաղրում էին նրան։ Երբ գիշեր եղավ, ոչինչ չտեսավ հարսը։ Ծաղրուծանակն ավելացավ։ Եվ այս պատճառով հարսանիքն իսկույն խափանվեց։

ՃԱՅԸ ԵՎ ՍԱԳԸ

Ճայը գնացել սագի մոտ, աղաչում էր՝ ասելով.

— Լինելով սևադեմ, ես վատաբանվում եմ բոլորից, դու այդքան սպիտակ ու պայծառ ես, խնդրում եմ սովորեցնես ինձ սպիտականալ քեղ նման։

Կարեկցելով նրան՝ սագն ասաց.

— Ինձ նման միշտ լվացվիր ջրով։

Բայց լվացվելիս ընկնում էր ճայի սև փետուրը և դարձյալ նույն գույնով գալիս էր մեկ ուրիշը։ Ու ճայը նորից աղաչեց, որ սովորեցնի։ Սագն ասաց.

— Լվացվելուդ հետ մեկտեղ, պիտի սովորես իմ լեզուն, որ կարողանաս ինձ նման լինել։

Բայց ճայը հանձն չառավ մոռանալ սեփական լեզուն և մնաց նույն սևադեմը։

ԱՐՋԸ ԵՎ ՄՐՋՅՈՒՆԸ

Արջը փորում էր մրջյունի բույնը և լեզվով հավաքում նրանց ու ուտում։ Մրջյունը նրան սպանելու հնարը գտավ։ Գնալով պիծակի, իշամեղվի, մժեղի,

www.a-pdf.com

շնաճանճի, կրետի և սրանց նմանների մոտ, խնդրում է, որ իրեն ազատական-ներ, օգնեն իրեն։ Սրանք կարեկցելով հարվածում են արջի աչքերին ու ականջներին։ Արջը քարին է խփում գլուխը, որը նեխվում է, և որդեր են ծըն-վում մեջը։ Ցավի սաստկությունից արջը, բերանը բանալով, գոռում է։ Իսկ միջատները, մտնելով փորը, ծակծկում են նրա աղիքները։ Արջը նեղվելով դիմում է հոսող ջրին և, չափից ավելի սուզվելով մեջը, խեղդվում։

Առակիս իմաստն այն է, որ հզորները տկարներին արհամարհում են և չեն վախենում, բայց փոքրերը ուժեղանում են իմաստությամբ և հաղթում հզորներին։

ՈՍԿԻՆ ԵՎ ՑՈՐԵՆԸ

Թագավորելու ժամանակ ոսկին պահանջում էր, որ բոլոր նյութերը գան երկրպագեն իրեն։ Նա իր անձը թագավոր էր կոչում, որովհետև թագավորի պատկեր կար վրան, ու դրանով գոռոզամտում էր արծաթագործների և ուրիշ-ների վրա ևս։

Եվ բոլորն եկան, չեկավ միայն ցորենը՝ ասելով.

— Ո՛ղ նախ ինքը գա ինձ երկրպագելու։

Առակս ցույց է տալիս, որ բոլոր նյութերը միաժամանակ մեծարանքի չեն արժանանում։ Սովի վտանգի պատճառով բոլորը խոնարհվում են ցորենի առջև։

ՄԱՐԴԸ ԵՎ ԳԱԼԻԱՆՈՍԸ

Մի անգամ Գալիանոսը բանախոսություն էր կարդում մարմնի առողջու-թյան մասին՝ ասելով.

— Եթե մարդ զգույշ լինի ուտելու և խմելու մեջ, մեր բժշկության կա-րիքը չի զգա։

Այս լսելով՝ մի մարդ ո՛չ ուտում էր և ո՛չ խմում։ Դրանից նա ծանր հի-վանդանում է և թշնամանում Գալիանոսին։ Իմանալով այդ՝ Գալիանոսն ասաց.

— Ո՛վ անմիտ մա՛րդ, չգիտե՞ս դու, որ մենք բնության արաքիչը չենք. այլ՝ օգնականը։ Ինչո՞ւ չհասկացար խոսքիս իմաստը, որ ճիշտ վարվեիր։

Այս օրինակից սովորում ենք, որ ուշադրությամբ պետք է լսել իմաս-տունների ու բժիշկների խոսքը և խուսափել ծայրահեղություններից՝ և՛ առա-վելից, և՛ նվազից, որովհետև երկու դեպքում էլ չարիք կա։

ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ԱՎԱԶԱԿԸ

Ավազակը, բռնելով մի քահանայի, ուզում էր սպանել։ Քահանայի վրա հզորության ոգի իջավ, նա հաղթեց ավազակին ու սկսեց ինչպես հարկն է տանջել նրան։

Ավազակը աղաչում էր ու ասում.

— Չէ որ քահանա ես, միշտ ասում ես՝ «Խաղաղություն ընդ ամենեսեան» և սրա նման այլ բաներ։

— Ո՛վ չարագործ,— պատասխանում է քահանան,— հենց խաղաղությու-նը անվտանգ պահելու նպատակով եմ տանջում քեզ՝ խաղաղությունը չխի-զողից։

Առակս հայտնի է դարձնում, որ միշտ խռովասիրության պատճառով չի հարկ լինում կռվել, այլ նաև՝ խաղաղությունը անվտանգ պահելու։

www.a-pdf.com

ՎԱՐԴԱՆ ԱՃԳԵԿՑԻ

(1170—1235)

ԱՌԱԿՆԵՐ

ԳԱՐՈՒ ՀԱՇԻՎԸ

Մի մարդ կալից գրաստով գարի էր կրում տուն։ Եվ քուռակը մոր հետ գնում էր և ետ դառնում։ Իսկ տանը, ուր կրում էին գարին, մի խոզ կար կապած, որին գիրացնում էին։ Եվ գարին անպակաս էր նրանից, որպեսզի ուտի և գիրանա։

Եվ քուռակն ասաց մորը.

— Ինչո՞ւ այն խոզն առանց աշխատանքի ուտում է գարին, որ մենք կրում ենք մեծ դժվարությամբ, և մեզ, որ չարչարվում ենք, օրը մի անգամ են գարի տալիս։

Մայրն ասաց.

— Լսի՛ր, որդյակ, մի շաբաթ ևս համբերիր, և ապա ես քեզ պատասխան կտամ, և քո աչքով կտեսնես։

Եվ մի շաբաթ հետո էշը և քուռակը բեռով տուն էին գալիս. քուռակը մորից առաջ էր գնում և լսեց խոնչոցի ահագին ձայն, որովհետև խոզը մորթում էին։ Եվ խրտնեց քուռակը և ետ փախավ դեպի մայրը, և մայրն ասաց.

— Ի՞նչ եղավ քեզ, որդյա՛կ, որ սոսկում ես. մի վախենար խոզից, որովհետև նրանից գարու հաշիվն են պահանջում։

Եվ դարձյալ եկան կալը՝ գարի կրելու։ Եվ երբ բարձած վերադարձան տուն, քուռակը, բարձրացնելով ոտքի սմբակը, մորն ասաց.

— Ո՛վ մայր, տես թե ոտքիս չի՞ կպել գարու մի հատ, որ ինձնից էլ հաշիվ չուզեն, ինչպես խոզից։

ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՎ ՈՐԴԻՆ

Մի այրի կին ուներ տասը այծ և մի որդի։ Եվ ամեն օր որդին այծերը տանում էր արոտ, և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ և փոխ էր տալիս հարևաններին։ Եվ որդին մորն ասաց.

— Ինչո՞ւ ես այդպես ջուր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարևաններին։

Մայրն ասաց.

— Որդի, մեր կաթը քիչ է, դրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմեռը մեզ թացան լինի։

Իսկ մի օր, երբ որդին այծերին արոտ էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր ամպ, և անձրև եկավ, և հեղեղ եղավ, և այծերը սրբեց լցրեց գետը։ Որդին տուն եկավ արևով և դատարկ և ձեռքին միայն փայտը։ Մայրն ասաց.

— Որդի, ո՞ւր են այծերը, և ինչո՞ւ դու այսօր արևով եկար։

Որդին ասաց.

www.a-pdf.com

— Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին և փոխ տալիս հարևաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և եկավ մեր այծերը տարավ լցրեց գետը։

ՄԻԱՅՆԱԿՅԱՑԸ ԵՎ ԳԱՄՓՈ ՇՈՒՆԸ

Մի միայնակյաց բնակվում էր մի գյուղի մոտ և գյուղում նա սիրեց մի աղչկա և բազում ժամանակ նրա հետ շնանում էր։ Եվ գյուղի տանուտերն ուներ մի գամփռ շուն, որ խիստ պահող շուն էր և ամբողջ գյուղը պահում էր։

Մի գիշեր միայնակյացը եկավ, որ շնանա այն կնոջ հետ, և գյուղի եզրին նրան հանդիպեց տանուտերի շունը և գամփռեց նրա վրա և նրան կծեց, և արյունը ճապաղ արեց և շատ վերքեր արեց և նեղելով նրան քշեց։ Եվ միայնակյացը լալով ու արյունաթաթախ մտավ խուցը և դուռը փակեց, զղջաց և չոքեց աղոթքի, լաց եղավ և կուրծքը ծեծելով՝ ասաց.

— Աստված, բազում ժամանակ է, որ շնացա և չվախեցա քո դատաստանից և ոչ դառն դժոխքից զարհուրեցի, բայց այս գիշեր զարհուրեցի մի գամփռ շնից և չկարողացա շնություն անել։

ԱՅԾԵՐԸ ԵՎ ԳԱՅԼԵՐԸ

Հավաքվեցին այծերը միասին և պատգամ ուղարկեցին գայլերի ազգին և ասացին, թե ինչո՞ւ մեր մեջ լինի անհաշտ խռովություն, այլ ոչ թե խաղաղություն։

Եվ հավաքվեցին գայլերը և ուրախացան մեծ ուրախությամբ և նամակով պատգամ ուղարկեցին այծերի ազգին, նաև անթիվ ընծաներ։ Եվ գրեցին այծերին. «Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհ ենք Աստծուց, որովհետև մեզ համար մեծ խնդություն է և խաղաղություն. նաև իմացնում ենք ձերդ իմաստության, որ հովիվն ու շներն են պատճառ և սկիզբ մեր խռովության և կռվի. և եթե նրանց վերացնենք մեջտեղից, շուտով խաղաղություն կլինի»։

Եվ այս լսեցին այծերը, հաստատեցին և ասացին.

— Իրավացի են գայլերը, որ մեզ սպանում են, որովհետև շները և հովիվը նրանց հալածում են մեզնից։

Եվ այծերը վտարեցին շներին ու հովվին և երդվեցին, որ հարյուր տարի մնան անխախտելի սիրով։ Եվ այծերը ցրվեցին լեռները և դաշտերը և սկսեցին ուրախ լինել և ցնծալ և խաղալ, որովհետև արածում էին լավ արոտներում, ուտում էին համեղ խոտեր, խմում էին պաղ ջուր և ուրախանում էին և վազվզում էին, փառք տալով, որ հասան բարի ժամանակի։

Եվ գայլերը համբերեցին հարյուր օր, ապա հավաքվեցին, դաս-դաս ընկան այծերի վրա և կերան։

ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻՉ

Մի թագավոր շինեց գեղեցիկ ապարանք և կամեցավ զարդարել այնպիսի նկարներով, որոնց նման ոչ մի տեղ չէր եղել։ Եվ ընտրեց երկու նկարիչների և մեկին տվեց մի պատը, մյուսին՝ մյուս պատը և նրանց միջև վարագույր քաշեց։

Եվ երբ նկարիչներն ավարտեցին իրենց գործը, թագավորը եկավ, որ տեսնի նրանց գործը և տեսավ, որ մեկը նկարել էր գեղեցիկ պատկեր, և շատ

www.a-pdf.com

հավանեց։ Իսկ մյուսը բնավ ոչինչ չէր նկարել. նա պատը շատ գեղեցիկ ներկել էր և կոկել հայելուց ավելի լավ։

Երբ թագավորը տեսավ, որ չէր նկարել, այլ միայն կոկել էր, զարմացավ և ասաց.

— Դու ի՞նչ ես արել։

Նա ասաց.

— Ես ցույց կտամ իմ գործը։

Եվ ապա վեր քաշեց միջի վարագույրը և, երբ լույսը ծագեց, և լուսավորեց կոկած պատը, այն ժամանակ մթնեց նկարազարդ պատը, որովհետև հայելու մեջ երևում էին այն բոլոր պատկերները, որ նկարված էին մյուս պատի վրա։

Եվ թագավորն ասաց.

— Սա մյուսից գեղեցիկ է։

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Մի առյուծ կորյուն ծնեց, և հավաքվեցին կենդանիները՝ կորյունին տեսնելու և ուրախանալու։

Աղվեսն եկավ և հանդեսի ժամանակ, բազմության մեջ առյուծին նախատեց բարձրաձայն և անարգեց, թե՞ դ է քո զորությունը, որ ծնում ես միայն մի կորյուն և ոչ բազմաթիվ։

Առյուծը հանդարտաբար պատասխանեց և ասաց.

— Այո, ես ծնում եմ մի կորյուն, բայց առյուծ եմ ծնում և ոչ քեզ նման աղվես։

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱՎՈՐԸ

Մի մարդ ուներ չար կին, և կինը կռվեց նրա հետ և ասաց.

— Կարծում ես, թե քո երեք որդիները քեզնի՞ց են։ Մեկն է քեզնից, իսկ երկուսը բիճ են։

Եվ նա հարցրեց, թե ո՞րն է իմը, և կինը չասաց։

Եվ երբ հայրը մեռնում էր, ասաց.

— Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ որդուն։

Եվ եղբայրները կռվում էին իրար հետ, մեկն ասում էր՝ ես եմ հարազատ որդին և մյուսը՝ թե ես եմ։ Եվ գնացին մի իմաստուն դատավորի մոտ։ Եվ դատավորը հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից և նետ արձակել նրա վրա։ Ով հորը խփեր նետով, և նետը ծակեր հոր մարմինը, նա էր հարազատ որդին։

Եվ երկու որդիները խփեցին հորը, իսկ ճշմարիտ որդին դանակը քաշեց, որ սպանի եղբայրներին և լաց եղավ դառն արտասուքով և թաղեց հոր մարմինը։

Եվ իմացան, որ նա էր հարազատ որդին, և նրան տվեցին հայրենի կայքը։

ԱՌՅՈՒԾԸ, ԳԱՅԼԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Առյուծը, գայլը և աղվեսն եղբայր եղան և որսի ելան և գտան մի խոյ, մի ոչխար, որ է մաքի, և մի գառ։ Ճաշի ժամին առյուծն ասաց գայլին՝ բաժանիր մեր մեջ այդ որսը։

www.a-pdf.com

Եվ գայլն ասաց.

— Ո՛վ թագավոր, Աստված արդեն բաժանել է՝ խոյը քեզ, մաքին ինձ և գառն աղվեսին։

Եվ առյուծը բարկանալով ապտակ զարկեց գայլի ծնոտին, և դուրս թռան գայլի աչքերը, և նա նստեց և դառն լաց եղավ։

Եվ դարձյալ ասաց առյուծն աղվեսին. բաժանիր ոչխարները մեր մեջ։

Եվ աղվեսն ասաց.

— Ո՛վ թագավոր, Աստված արդեն բաժանել է՝ խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրամենքին և գառը քեզ՝ ընթրիքին։

Եվ առյուծն ասաց.

— Ո՛վ խորամանկ աղվես, քեզ ո՞վ սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել։

Եվ աղվեսն ասաց.

— Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան։

ՄԻԱՄԻՏ ԳՈՂԵՐԸ

Երկու գող բարձրացան մի մեծատան կտուրը և կամեցան երդով վայր իջնել և գողություն անել։ Եվ լուսնկա էր։ Եվ մեծատուն մարդն իմացավ, որ գողերը երդիկի մոտ են։ Եվ կինը մարդուն ասաց, թե.

— Այս ամեն զանձերը և ոսկին և կերպասը քեզ որտեղի՞ց են։

Եվ մեծատուն մարդն ասաց.

— Գնում էի գողության, մեծատուն մարդկանց երդիկով իջնում էի, և լուսնկա էր, ինչպես այժմ, և լուսնի շողերը երդիկից ներս էին ընկնում, ինչպես այժմ, և ես գրկում էի շողերի սյունը և վայր էի իջնում և այնպիսի մի բան էի ասում, որ ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը, երևում էր ինձ և կապում էի լուսնի շողերին և վեր բարձրանում։ Եվ այս ամենն այդպես եմ վաստակել։

Երբ գողերն այդ բանը լսեցին, խիստ ուրախացան և հավատացին այդ ցնորամիտ խոսքին և, լուսնի շողերը գրկելով, երդիկից վայր ընկան և չարդվեցին։

ԵՂԵԳՆԸ ԵՎ ԾԱՌԵՐԸ

Մի թագավոր զբոսանքի ելավ շրջելու լեռներում և հովիտներում։ Եվ տեսավ, որ մեծամեծ ծառեր կային կոտրտված և փշրված, և միայն մի եղեգ կար՝ կանգուն, անարատ։ Եվ թագավորն ասաց.

— Ո՛վ եղեգն, ասա ինձ, թե ինչպես հաստատուն ես մնացել, երբ մեծամեծ ծառերը փշրվել են։

Եվ եղեգնն ասաց.

— Ո՛վ թագավոր, երբ սաստիկ հողմ բարձրացավ, ծառերը հպարտությամբ հակառակ կանգնեցին հողմի դեմ, և հողմը նրանց փշրեց, իսկ ես խոնարհվեցի հողմի կամքով և ահա կանգուն եմ։

ԻՇԽԱՆԸ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ

Մի իշխան կար խիստ չար ու անիրավ։ Եվ նույն քաղաքում ապրում էր մի այրի կին, և իշխանը, հարկ պահանջելով, նեղում էր նրան, և այրի կինն աղոթում էր, որ իշխանն ունենա խաղաղ ու երկար կյանք։

www.a-pdf.com

Գնացին, ասացին իշխանին՝ քո չարության համար աղոթում է այրին։ Եվ իշխանը եկավ և ասաց.

— Ես քեզ բարիք չեմ արել, ո՞վ կին, դու ինձ համար ինչո՞ւ ես աղոթում։

Այրի կինն ասաց.

— Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի, և նա մեռավ։ Դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ չար։ Եվ այժմ վախենում եմ, որ մեռնես, և քո որդին քեզնից ավելի չար լինի։

ԻՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՎՈՐԸ

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում և նա երկու ոտքով կաղ էր։ Եվ զինվորներից մեկը նրան ասաց.

— Ով ողորմելի, ո՞ւր ես գնում։ Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող։

Եվ նա ասաց.

— Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, և կռվելու և հաղթելու։

ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ՕՁԸ

Կար մի թագավոր և ուներ նա մի սիրելի օձ, որ նրան ամեն օր բերում էր մի կարմիր դահեկան։ Եվ թագավորն ունեցավ մի մանուկ, որին սնուցում էր գահի վրա, և օձը նետում էր մանկան պարանոցով, և այդպես խաղում էին օձն ու մանուկը։ Եվ երբ մանուկը մեծացավ, մի անգամ խաղի ժամանակ սուրը հանեց և կտրեց օձի պոչը և գետին գցեց։ Եվ զայրացավ օձը, թույնով զարկեց մանուկին, և մանուկը իսկույն մեռավ, և օձը գնաց օտար երկիր։

Եվ երբ թագավորը եկավ և մանուկին օձի թույնից սևացած և մեռած տեսավ և օձի պոչը գետնին ընկած, իմացավ, որ յուր մանուկն է թրով կտրել օձի պոչը։ Եվ սգաց որդուն, տարավ թաղեց գերեզմանոցում։

Եվ անցավ մի ժամանակ, և թագավորը նվիրակներ ուղարկեց այն օձի մոտ և ասաց.

— Գիտեմ, որ առաջ իմ որդին է ծռությունն արել. նա կտրել է քո պոչը, ապա դու կծել ես նրան։ Ինչ որ եղավ՝ եղավ, և իզուր գնացիր։ Արի, և մենք կլինենք առաջվա նման իրար սիրելի և միասին կապրենք։

Իսկ օձը պատասխան տվեց և ասաց.

— Այդպես չէ. քանի որ ես պիտի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու քո որդու գերեզմանին, ուրեմն մեր միջից թշնամությունը չի վերանա։ Լավն այն է, որ դու և ես իրարից հեռանանք, որպեսզի ուրիշ մեծագույն չարիք չծնվի մեր մեջ։

ԷՇԻՆ ԹՈՌ ԾՆՎԵՑ

Էշին ավետիս տվին, թե.

— Ցնծա և ուրախ եղիր և մեծ ընծա պարգևիր, որովհետև քեզ թոռ ծնվեց։

Եվ էշն ասաց.

— Վա՛յ ինձ, բարեկամներ, եթե հարյուր թոռ էլ ծնվի, չեն թեթևացնի ծանրությունն իմ մեջքի բեռան։

www.a-pdf.com

Առյուծը հիվանդացավ, և բոլոր կենդանիները եկան նրան տեսության, միայն աղվեսն ուշացավ։ Արջը չարախոսեց նրան, և աղվեսը դռնամոտից լսեց և, ներս ընկնելով, թավալվեց առյուծի առաջ։

Առյուծն ասաց աղվեսին.

— Բարի ժամի չեկար, գարշելի, ասա ինձ, ինչո՞ւ ուշացար։

Աղվեսն ասաց.

— Մի՛ բարկանար, բարի թագավոր, երդվում եմ քո գլխով, որ քո առողջության համար այցելեցի շատ բժշկապետների և մեծ չարչարանք քաշեցի, բայց իմացա դեղը քո բժշկության։

Եվ առյուծն ասաց.

— Բարի եկար, իմաստուն կենդանի, ի՞նչն է այդ դեղը։

Աղվեսն ասաց.

— Խիստ պիտանի է և դյուրին. բժշկապետներն ասացին, թե կենդանի հանեք արջի մորթին և տաք-տաք գցեք առյուծի վրա, իսկույն մորթին ցավը կհանի հիվանդից։

Առյուծը հրամայեց. արջին բռնեցին և սկսեցին հանել մորթին։ Իսկ նա վայում էր և արձակում մեծամեծ ոռնոց։

Եվ աղվեսն ասաց.

— Այդ ամենը քեզ և նրան, ով, արքունիք մտնելով, կչարախոսի մեկին։

ԿՏԱԿ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Մի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծույլ որդիներ։ Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց.

— Ո՛վ զավակներ, իմ նախնիները շատ դանձ են թաղել մեր այդում, և ես ձեզ ցույց չեմ տա նրա տեղը։ Այդ գանձը կգտնի նա, ով շատ աշխատի և խոր փորի։

Եվ հոր մահից հետո որդիներն սկսեցին աշխատել մեծ եռանդով և խորագույն էին վարում, որովհետև յուրաքանչյուրն աշխատում էր, որ ինքը գտնի գանձը։

Եվ այգին սկսեց աճել և ղորանալ և առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով։

ՈՒՂՏԸ, ԳԱՅԼԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Ուղտը, գայլը և աղվեսը եղբայր եղան և ճանապարհ ընկան և ճանապարհին գտան մի նկանակ հաց և միմյանց ասացին, թե ով ավագ է, թող նա ուտի։ Եվ սկսեցին ասել իրենց տարիքը։ Աղվեսն ասաց.

— Ես այն աղվեսն եմ, որի անունը Ադամը դրեց։

Գայլն ասաց.

— Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ։

Եվ ուղտը, տեսնելով, որ նրանք իրենից ավագ դուրս եկան և հացը պիտի առնեն, հացը բերանն առավ, բարձրացնելով ասաց.

— Մի՞թե ես երեկվա տղան եմ, որ այսչափ մեծացրել եմ իմ սրունքները։

Եվ սկսեց հացն ուտել։ Իսկ աղվեսը և գայլը, ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկարողացան անել և փախան։

www.a-pdf.com

Նզը և ձին խոսեցին միմյանց հետ։ Նզն ասաց.

— Դու ո՞վ ես կամ ինչի՞ պետք ես։

Ձին ասաց.

— Ես ձի եմ, և ինձ թագավորները և իշխանները և պարոնները զարդարում են ոսկով և արծաթով և բազմում են ինձ վրա։

Նզն ասաց.

— Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում և չարչարվում և հոգնում, և ապա դու և քո թագավորն ուտում եք։ Եվ բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը, և եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնեք։ Եվ դու երախտամոռ մի լինիր։

ՀԻՄԱՐԸ ԵՎ ԶԱՄԲՈՒԿԸ

Մի հիմար և միամիտ մարդ ուներ մի գահեկան և, առնելով գահեկանը, գնաց քաղաք մի էշ գնելու և շրջեց քաղաքում և շուկայում և չգտավ մի գահեկանի էշ, ապա կրկին եկավ շուկա և տեսավ մի մեծ ձմերուկ և հիացմամբ հարցրեց.

— Այս ի՞նչ է։

Եվ վաճառականներն իմացան, որ նա հիմար է և ասացին, թե հնդու էշի ձու է և կհանի հնդու մեծ էշ։ Եվ ուրախանալով մարդը տվեց գահեկանը և առավ հնդու էշի ձուն։ Եվ վաճառականները նրան պատվիրեցին, թե.

— Ձեռքիդ զգույշ տար, թե չէ կկոտրվի, և էշը միջից կփախչի։

Եվ ձմերուկը ձեռքին մարդն սկսեց գնալ զառիվայր ճանապարհով, և նրա ոտքը սայթաքեց, ձմերուկը ձեռքից դուրս պրծավ և գլորվեց խիտ անտառի մեջ, և անտառից մի նապաստակ վազեց և սկսեց փախչել, իսկ մարդը կարծեց, թե ձուն կոտրվել է, և ահա էշը ելել և փախչում է։ Եվ հետևից վազելով՝ կանչում էր նապաստակին և ձայն էր տալիս.

— Ա՛յ հնդու էշ... վա՛յ ինձ, մի փախչիր. քուռի՛, քուռի՛, խնայիր ինձ և վերադարձիր։

ԱՂՔԱՏԸ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մի աղքատ մի գյուղ եկավ և մտավ գյուղի եկեղեցին, որ խարխուլ էր և անձրևակեզ։ Եվ այն աղքատը անձրևաթաց էր և քաղցած և հագել էր պատառոտուն զգեստ և դողում էր և հոգնել էր ճանապարհից։

Եվ ներս մտավ քահանան, սկսեց ժամ ասել։ Առավ Ավետարանը և կարդաց այն էջը, ուր գրված էր. «Օտարական էի՝ ընդունեցիք ինձ, մերկ էի՝ հագցրիք ինձ, քաղցած էի՝ կերակրեցիք ինձ, ծարավ էի՝ հագրիք ինձ»։

Այն աղքատը լսեց և ուրախացավ.

— Այս ինձ համար է ասված, և ահա շուտով կկատարեն իմ կամքը։

Իսկ քահանան ժամն արձակեց և գնաց տուն և աղքատին թողեց եկեղեցու մեջ և հոգ չտարավ նրա մասին։

Եվ աղքատն ասաց.

— Այն գիրը, որ կարդաց, սուտ էր։

Եվ առավ Ավետարանը, վրան քար դրեց և սուզեց ջրի մեջ։ Եվ քահանան, գալով, Ավետարանը չգտավ և աղքատին ասաց.

www.a-pdf.com

— Մ՞ւր է Ավետարանը։

Եվ աղքատն ասաց քահանային.

— Ի՞նչ ես անում սուտ Ավետարանը, և ես տարա ջուրը գցեցի։

Եվ քահանան բարկանալով սկսեց ծեծել աղքատին, և աղքատն ասաց.

— Ինչո՞ւ ես ծեծում ինձ, անիրավ. եթե հավատում ես, թե Ավետարանն Աստծու ճշմարիտ խոսքն է, ապա ինչո՞ւ չես կատարում նրա կտակը։ Որովհետև ես օտարական եմ, և ինձ չեք ընդունում, մերկ եմ, և ինձ չեք հագցնում, քաղցած եմ, և չեք կերակրում ինձ, ծարավ եմ, ջուր չեք տալիս։ Մի՞թե Աստված այդ բաների պակասությունն ուներ և այդ ամենն իր համար ասաց։

ՄԱՐԴԸ, ԸՆԿՈՒՅԶԸ ԵՎ ՁՄԵՌՈՒԿԸ

Մի մարդ ընկույզի ծառի տակ ձմերուկ էր ցանել։ Եվ պտուղի ժամանակ եկավ տեսավ մեծամեծ ձմերուկներ և ծառին նայեց, տեսավ, որ ընկույզը մանր էր։ Մարդն ասաց.

— Տեր Աստված, ինչ որ ստեղծել ես՝ ամենը կարգին է և մի բանի նման։ Իսկ այս երկու պտուղը անկարգ են, բանի նման չեն։

Մարդն ասում էր, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին և ընկույզը՝ ձմերուկի թփի վրա։

Եվ նա պառկեց ծառի տակ և նայեց ծառին, և հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից և ուժգին դիպավ նրա ճակատին և ճակատը պատռեց, և արյունը եկավ։ Եվ մարդը վեր կացավ տեղից և աղաղակեց.

— Տեր Աստված, ինչ որ ստեղծել ես, ամենը կարգին է և կատարյալ, և ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը իմից վատ լինի, որովհետև եթե ընկույզի տեղ ձմերուկ լիներ, պիտի սպաներ ինձ։

ԱՂՎԵՍԸ ԵՎ ԹՂԹԱՏԱՐ ԳԱՅԼԸ

Աղվեսը մի գրած թուղթ գտավ, տարավ գայլին և ասաց.

— Այսչափ ժամանակ աշխատեցի և բարեխոս մարդիկ մեջ գցեցի և իշխանից քեզ համար թուղթ հանեցի, որ ամեն գյուղ՝ ուր հանդիպես, քեզ պիտի տա մի ոչխար։

Եվ այդպես խաբեց գայլին, և միասին գնացին մի գյուղ, և աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը տվեց գայլին։ Երբ գայլը գյուղի մեջ մտավ, վրա թափվեցին շները և մարդիկ, նրան գզեցին և գանահարեցին։ Եվ արյունաթաթավ գայլը, հազիվ ազատվելով, հասավ աղվեսին։

Եվ աղվեսն ասաց.

— Ինչո՞ւ թուղթը ցույց չտվիր։

Եվ գայլն ասաց.

— Ցույց տվի, բայց գյուղում հազար շուն կար, որ գիր չգիտեր։

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՋՐԱՂԱՑԸ

Եկեղեցին պարծեցավ յուր արքայությամբ և ասաց.

— Ես եմ տաճար Աստծու, և գեղի ինձ են գալիս քահանաները և ժողովուրդը աղոթք մատուցանելու Աստծուն և պատարագ, և հաշտվում է Աստված աշխարհի հետ և մեղքերին թողություն է լինում։

Այն ժամանակ ջրաղացն ասաց եկեղեցուն.

www.e-pdf.com

— Ինչ որ դու ասում ես, արդար է և ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի մոռանա, որ դիշեր-ցերեկ աշխատում եմ և դատում այն, ինչ որ ուտում են քահանաները և ժողովուրդը և ապա քեզ են գալիս ազոթելու և երկրպագելու Աստծուն։

ԱՂՎԵՍԸ ԵՎ ՈՐՍՈՐԴԸ

Որսորդը շներով տանջում և նեղում էր աղվեսին։ Եվ աղվեսը դարձավ և ասաց.

— Աղաչում եմ քեզ, ասա թե ինչի՞ համար ես ինձ նեղում։

Եվ որսորդն ասաց.

— Որպեսզի հանեմ քո մորթին։

Աղվեսը կանգնեց և ասաց.

— Տե՛ր Աստված, փառք քեզ, որ սրա ուզածն այս է։ Իսկ ես կարծում էի, թե ինձ ուզում են նշանակել մեր գավառի հավարած կամ թուչնոցի վանահայր։

ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՎ ԽՈՐԹ ՈՐԴԻՆ

Մի այրի կին ուներ մի կով, և նրա խորթ որդին ուներ մի էշ։ Եվ խորթ որդին գողանում էր կովի կերը, տալիս էշին։ Եվ այրի կինն Աստծուն աղաչեց, որ Աստված էշին մեռցնի։ Բայց կովը մեռավ, և այրին լաց եղավ, և ասաց.

— Ո՛վ Աստված, մի՞թե չկարեցար էշը կովից տարբերել։

ԱՄԵՆԱՏԳԵՏ ՄԱՐԴԸ

Մի թագավոր կամեցավ աշտարակ շինել, և աշտարակը քանի ցերեկը շինում էին, գիշերը փուլ էր գալիս։ Եվ նա հավաքեց յուր գիտուններին և պատճառը հարցրեց։ Նրանք ասացին.

— Եթե կամենում ես, որ այլևս չփլչի, դու գտիր մի տգետ մարդ, որից ավելի տգետ մարդ չլինի և նրան կենդանի դիր պատի մեջ, և պատը թող շարեն. և այլևս չի փլչի։

Եվ թագավորն ասաց.

— Այդ քանի ընտրությունը ևս դուք արեք և գտեք մի տգետ մարդ, որին կենդանի թաղեն պատի մեջ։

Եվ գիտունները նստեցին միասին որոշելու, թե ի՞նչ տեղ կարող են գտնել տգետ մարդ, և մեկն ասաց.

— Ջկնորսն է տգետ, քանի որ նրա առն ու տալը մարդու հետ չէ, այլ ջրի և ձկների։

Իսկ ոմանք ասացին՝ իշապանը, որ իշու հետ է լինում և իր ողջ կյանքն անց է կացնում գրաստի հետ՝ շրջելով լեռ և անտառ։ Ոմանք ծուլարարին ասացին, իսկ ոմանք՝ հովվին, որ ամառ-ձմեռ ոչխարների հետ շրջում է լեռներում, չի մտնում գյուղ կամ քաղաք։ Եվ հավանություն արին և կամեցան հովվին բերել։

Այն ժամանակ գիտուններից մեկն ասաց.

— Մեր թագավորը մի հովիվ ունի, որ ծնվել է սարում ոչխարների մեջ և անվել է այնտեղ և յուր կյանքում ոչ գյուղ է մտել, ոչ քաղաք։

www.a-pdf.com

Եվ ուղարկեցին տասը ձիավոր, որպեսզի մարդուն բերեն։ Եվ ձիավորները գնացին գտան Հովվին, որ կթում էր ոչխարը և ողջունելով ասացին.

— Թագավորը քեզ կանչում է։

Հովիվն ասաց.

— Ես իմ կյանքում ո՛չ քաղաք եմ գնացել, ո՛չ էլ գյուղ. ինձ ինչո՞ւ է կանչում։

Նրանք խորամանկությամբ ասացին.

— Չենք իմանում։

Իսկ հովիվը պատվեց նրանց, գառ մորթեց և պանիր բերեց և ուրախացրեց նրանց և երդմամբ հարցրեց կանչելու պատճառը։ Եվ նրանք ասացին, թե այս պատճառով է քեզ կանչում, որովհետև թագավորի գիտունները ասել են, որ մի տգետ մարդու պետք է դնել պատի մեջ, որպեսզի պատը շեն մնա։

Եվ մի ոչխար բերելով՝ ասաց.

— Հիմարը և տգետն այն գիտուններն են, որ այդպիսի ընտրություն են արել։

Եվ մի ոչխար բերելով՝ ասաց.

— Ես ձեզ ցույց կտամ իմ տգիտությունը։

Եվ ասաց.

— Այս ոչխարը երկու գառ ունի փորում, մեկը էգ է, և մյուսը՝ որձ, մեկի գլուխը սև է և մյուսինը՝ սպիտակ։

Եվ ոչխարը մորթեց և գառները փորից հանեց, և այնպես էր, ինչպես ասաց։ Եվ մի այլ ոչխար բերելով՝ առաց.

— Այս ոչխարը մեկ գառ ունի փորում. մարմինը ուռ է, գլուխն՝ սպիտակ և ինքը՝ որձ։

Եվ մորթեցին՝ տեսան այնպես։ Եվ Հովիվն ասաց.

— Ոչխարի այս երկու հոտը, որ կա ձեր առաջ, ամենին գիտեմ, թե որն է ծնելու և որն է ատերջ և որն է որձ ծնելու և որը՝ էգ և որը՝ սև կամ սպիտակ և որը՝ սև ու սպիտակ պուտերով։ Ձեր գիտունները կարո՞ղ են այդ իմանալ։

Ձիավորներն ասացին.

— Ոչ ամենևին։

Հովիվն ասաց.

— Ուրեմն իմացեք, որ ես չեմ այն հիմարն ու տգետը, որին դուք փընտրում եք։ Իսկ եթե կամենաք, ես ցույց կտամ տգետ մարդուն։ Թագավորը թող յուր փոխարքային բռնի թալանի և ինչ ունի ամենն առնի և քաղաքի հրապարակում նրան կախի և չարաչար տանջի, որպեսզի բոլոր քաղաքացիները տեսնեն, ապա փոխարքային թող տանեն թաքցնեն և ասեն, թե սպանեցին։ Եվ երեք օր քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ որ կգա և հանձն կառնի նրա գործը, նրա ամեն ապրանքն այդ մարդուն կտանք և իրեն կնշանակենք փոխարքա։ Այդ մարդը, որ կտեսնի այդ խաղը և կլսի ինչ որ արին փոխարքայի գլխին և առաջանալով կասի՝ ես եմ ուզում լինել փոխարքա, այն մարդն է հիմար և տգետ, նրան բռնեցեք և կենդանի դրեք պատի մեջ, որպեսզի այլևս չփլչի և շեն մնա։

Իսկ նրանք եկան և թագավորին պատմեցին, և թագավորն արեց այնպես, ինչպես Հովիվն ասել էր և մինչդեռ քաղաքում կանչում էին, թե ով գա և հանձն առնի փոխարքայի գործը և իշխանությունը, նա կստանա նրա ապրանքը և հողը, այն ժամանակ մոտ վազեց մի ջրմի և թոնի մարդ և ասաց.

— Ես հանձն կառնեմ այդ գործը։

Եվ նրան հարցրին.

www.a-pdf.com

— Տեսա՞ր ինչ արին փոխարքայի դլխին։

Նա ասաց.

— Այո՛, տեսա։

Եվ իսկույն առան նրան և տարան, կենդանի դրին պատի մեջ, և պատը հաստատուն մնաց։

ԻՇԽԱՆԱՎՈՐԸ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Կար մի աշխարհակալ իշխանավոր և նա ուներ մի խիստ դեղեցիկ տղա։ Եվ իշխանավորն ասաց, թե դեղեցիկ աղչիկ կառնեմ, որ կին լինի իմ որդուն, և ունենամ դեղեցիկ թոռներ՝ ժառանգ իմ գահի։ Եվ գնաց բերեց մի դեղեցիկ հարս և դեռ թոռ չէր ունեցել, երբ որդին մեռավ, և հարսը մնաց։ Եվ ինքը կամեցավ հարսին առնել և հարցրեց իմաստուններին, թե.

— Կա՞ իրավունք։

Եվ նրանք ասացին.

— Չկա՛ իրավունք, որ հայրն առնի հարսին։

Եվ չկամեցավ լսել նրանց և գտավ մի այլ իմաստուն, որ նրա սիրելին էր, և այդ իմաստունն ասաց իշխանավորին.

— Աշխարհում յոթանասուներկու ազգ կա և նրանցից ոչ մեկին չի հանում այդ, բայց քեզ կհասնի։

Եվ իշխանավորն ասաց.

— Ինչո՞ւ աշխարհի յոթանասուներկու ազգին չի հասնում, իսկ ինձ կհասնի։

Եվ իմաստունն ասաց.

— Վախենում եմ պատճառն ասել, որովհետև կսպանես ինձ։

Եվ նա երդվեց չպատժել նրան, եթե պատճառն ասի։

Այն ժամանակ իմաստունն ասաց.

— Որովհետև դու ամեն ազգից դուրս ես, անօրեն, և քեզ վրա չկա իշխանություն և ինչ կամենաս՝ կարող ես անել։

ԱՐԴԱՐ ՄԱՐԴԸ

Մի երիտասարդ ուխտել էր անիրավ բան ամենևին չուտել և մի օր նա գնաց գետի եզրը և տեսավ, որ ջուրը մի խնձոր էր բերում։ Երիտասարդն առավ խնձորը, կերավ անոթի, ապա միտն ընկավ իր ուխտը և խղճմտանքով գնաց գետն ի վեր, գտավ մի այգի և իմացավ, որ խնձորն այդ այգուց էր։ Երիտասարդն ասաց այգեպիրոջը.

— Ողորմիր ինձ և առ խնձորի գինը կամ հալալ արա, որովհետև ես հարամ բան ամենևին չեմ կերել։

Եվ բուրաստանի տերն ասաց.

— Կեսը, որ իմն է, հալալ քեզ և կեսը՝ իմ եղբորն է, նրան տեր չեմ։ Եվ իմ եղբայրը հեռու է, այստեղից վեց օրվա ճանապարհ։

Եվ երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն մարդուն, ասաց.

— Կամ առ քո կես խնձորի գինը և կամ հալալ արա ինձ։

Եվ մարդն ասաց.

— Ո՛չ դինը կառնեմ և ո՛չ հալալ կանեմ։ Թե կուզես, որ հալալ անեմ, ես մի աղչիկ ունեմ, որ ո՛չ ականջ ունի և ո՛չ էլ լեզու, և ո՛չ ձեռք, և ո՛չ ոտք, նրան կին առ, որ հալալ անեմ։

Երիտասարդն անճարացած առավ այդ աղջկան, և երբ առաջասա մտան, տեսավ, որ աղջիկը ամենևին առողջ էր։ Եվ երիտասարդն աներոջն ասաց.

— Ինչո՞ւ էիր ծաղրում քո աղջկան։

Եվ նա ասաց.

— Ես ճշմարիտ էի, որովհետև ծնված օրից իմ աղջիկը արեգակի լույսը երդիկից է տեսել և օտար մարդու ձայն չի լսել և օտարի հետ չի խոսել, և ձեռքով մեղք չի շոշափել, և ոտքը դռնից դուրս չի դրել։ Եվ ես քեզ նման արդար մարդ էի ուզում, և ահա դու եկար։

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ՄԱՐԴԸ

Մի զորավոր առյուծ նստել էր ճանապարհին, և տեսակ-տեսակ գազաններ այդ ճանապարհով գալիս էին դողալով և անցնում։ Առյուծը հարցրեց նրանց.

— Ինչո՞ւ եք փախչում և ո՞ւմ ահից եք զարհուրած փախչում։

Եվ նրանք ասացին.

— Փախի՛ր և դու, որովհետև ահա գալիս է մարդը։

Եվ առյուծն ասաց.

— Ո՞վ է մարդը և ի՞նչ է նա և ի՞նչ է նրա ուժը և նրա կերպարանքը, որ փախչում եք նրանից։

Եվ նրանք ասացին.

— Կգա, կտեսնի քեզ և քեզ վա՜յ կլինի։

Եվ ահա յուր հանդից եկավ մի հողագործ մարդ։ Եվ առյուծն ասաց.

— Մի՞թե դու ես այն մարդը, որ փախցնում է գազաններին։

Եվ նա ասաց.

— Այո՛, ես եմ։

Առյուծն ասաց.

— Արի կռվենք։

Մարդն ասաց.

— Այո՛, բայց քո զենքերը քեզ հետ են, իսկ իմը՝ տանն են։ Եկ, նախ քեզ կապեմ, որպեսզի չփախչես, մինչև ես գնամ առնեմ իմ զենքը, և ապա կռվենք։

Առյուծն ասաց.

— Երդվի՛ր, որ կգաս, և ես կլսեմ քեզ։

Մարդն երդվեց, և առյուծն ասաց.

Հիմա կապիր ինձ և գնա, շուտ դարձիր։

Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապով կապեց կաղնու ծառին և ծառից կտրեց մի բիր և սկսեց հարվածել առյուծին։

Եվ առյուծը գոչեց.

— Եթե դու մարդ ես, ավելի խիստ և անխնա խփիր իմ կողերին, որովհետև այս խելքին այդպես է վայել։

ՄՈՒԿԸ ԵՎ ՈՒՂՏԸ

Մի մուկ հպարտացավ։ Կորավ նրա իմաստությունը, և նրա սիրտը լցվեց հպարտությամբ։ Մուկը գնաց ուղտի մոտ և ասաց ուղտին.

— Ինձ հրաման տուր քո կճղակի մեջ բույն դնեմ և այնտեղ բնակվեմ։

www.a-pdf.com

Եվ ուղտն ասաց.

— Քեզ վնաս կլինի, որովհետև հանկարծ կոխ կտամ քեզ և կմեռնես։

Մուկն ասաց.

— Քո սմբակը կակուղ է և ինձ վնաս չի լինի։

Ուղտն ասաց.

— Քո արյունը քո գլուխը։

Եվ մուկն ուղտի կճղակի մեջ շինեց իր բույնը։ Մի անգամ ուղտը ծանր բեռան տակ քայլեց և հանկարծակի կոխ տվեց մկանը։ Եվ մուկը ճչաց, և նրա փորից դուրս եկավ ճրագուն, որովհետև մուկը գեր էր։

Այդ տեսնելով՝ ուղտն ասաց.

— Ահա, եղբա՛յր, հենց այդ էր նեղում քեզ, որ դուրս ելավ քո փորից։

ԳՈՂ ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ

Մի քահանա գողացավ այրի կնոջ կովը և ախոռը կապեց։ Եվ կինն իմացավ և քահանային ասաց.

— Տեր հայր, հասավ իմ մահվան ժամը. գնանք ախոռ, որ խոստովանեմ մեղքերս։

Եվ այն ժամանակ քահանան կովը տարավ ներսի տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից եկեղեցի։ Եվ կինն ասաց.

— Տեր հայր, վերջին խոստովանությունը մահից առաջ պետք է անել եկեղեցում։

Եվ քահանան կովը բեմ բարձրացրեց և վարագույրը քաշեց նրա վրա։ Երբ նրանք եկեղեցի մտան և նստեցին, այն ժամանակ կինը բարձրացրեց վարագույրը և կովին ասաց.

— Ո՛վ գարշելի, ես քեզ կով գիտեի, և այժմ քեզ ո՛վ արեց պատարա-գիչ, ասա՛ ինձ։

ԳԱՅԼԸ, ԱՂՎԵՍԸ ԵՎ ՋՈՐԻՆ

Գայլը, աղվեսը և ջորին եղբայր եղան և գնացին. երբ սովեցին և որսի չհանդիպեցին, ասացին.

— Եկեք ուտենք նրան, ով տարիքով փոքր է։

Այսպես ասացին գայլը և աղվեսը, որովհետև կամենում էին ջորուն ուտել։ Եվ գայլին հարցրին, թե ո՞ր տարվա գայլն է, և նա ասաց.

— Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ։

Եվ աղվեսն առաջ եկավ և ասաց.

— Օ՜, դու տասը ազգով ինձանից փոքր ես, և ես այն աղվեսն եմ, որին Աստված ստեղծեց։

Եվ ջորին եկավ և ասաց.

— Իմ ծննդյան թվականը դրված է սմբակիս վրա. եկեք, կարդացեք, տեսեք՝ քանի տարեկան եմ։

Եվ ոտքը բարձրացրեց։

Աղվեսն ասաց գայլին.

— Գիտեմ, որ դու դպրոցում եղել ես, արի գիրը կարդա։

Եվ գայլը հավատաց և դնաց կարդալու։ Եվ ջորին ասաց.

— Առա՛ջ արի, որովհետև գիրս մանր է։

www.a-pdf.com

Եվ նա առաջ գնաց, և ջորին սաստիկ ուժով զարկեց գայլի ճակատին և ջախջախեց, և գայլը գնաց կաղկանձելով։ Եվ աղվեսն ասաց գայլին.

— Արի՛, մի տող էլ կա, այն էլ կարդա։

Գայլն ասաց.

— Ես ի՞նչ գիտեի գիրը. մենք ազգե ազգ մսագործ ենք և մսագործի որդի։

ԱՆՋԳԱՄ ԿԻՆԸ

Մի մարդ տրտում նստել էր ժայռի տակ և քնեց մի պահ և զարթնեց և չէր ուզում տուն գնալ։ Եվ հանկարծ եկան երկու ճնճղուկ, նստեցին քարին և մարդուն հարցրին, թե ինչո՞ւ նա տրտում է։ Եվ մարդն ասաց, որ տրտում է, որովհետև աղքատ է։ Ճնճղուկներն ասացին.

— Կխոստանա՞ս երբեք չասել ոչ ոքի, եթե քեզ ոսկու տեղ ցույց տանք։

Եվ մարդը խոստացավ և երդվեց, և նրանք ասացին.

— Այդ քարի տակ յոթ կարաս ոսկի կա թաղած, հանիր և տուն տար և եթե ասես մեկին, թե որտեղից է ոսկին, իսկույն կմեռնես։

Եվ մարդն ուրախացավ, գնաց յուր տուն, բրիչն առավ և գիշերով եկավ՝ գաղտնի հանեց ոսկին և տարավ տուն, սկսեց փարթամանալ և շքեղ տներ շինել, ունեցավ ձիեր և ջորիներ և եզներ և ոչխարի հոտեր և այլ ամենայն ինչ, որ վայել է աշխարհ սիրողին։

Եվ մի օր եզն ասաց մյուս եզան, թե.

— Ես ի՞նչ անեմ, ամեն օր անխնա լծում են ինձ։

Էշը, որ նրան մոտիկ էր, ասաց.

— Վաղը սուտ հիվանդ եղիր և հազա։ Երբ այդ տեսնեն, կխղճան և այլևս քեզ չեն լծի։

Եվ այս լսելով՝ մարդը ծիծաղեց և մշակներին ասաց, թե այսօր չէ, վաղը, այսինչ նշան էշը հիվանդ եզան տեղ կլծեք։ Մշակն առավոտյան էշը տարավ և լծեց մինչև իրիկուն և երբ տուն եկավ, էշն ասաց հիվանդ եզանը.

— Ողորմելի եզնուկ, դու չգիտես, թե արտում ինչ էին ասում. ասում էին, թե այն հիվանդ եզը վաղը մորթենք, որ չսատկի։ Լսիր ինձ և ոտքի կաց և առողջ եղիր, գնա լուծդ քաշիր, որ քեզ չմորթեն։ Քեզ համար ավելի լավ է բանել, քան կյանքից զրկվել։

Այսպես ասաց էշը, որպեսզի այլևս իրեն չտանեն լծելու, որովհետև այդ օրը շատ էր աշխատել։ Եվ այս լսելով՝ մարդը նորից ծիծաղեց։

Այն ժամանակ նրա կինն ասաց.

— Ո՛վ մարդ, մենք աղքատ էինք և հանկարծ հարստացանք և այսչափ ապրանքի և բարիքի տեր եղանք և ժամ առ ժամ կենում և ինքդ քեզ ծիծաղում ես, ինձ ինչո՞ւ չես ասում, թե որտեղից է այս ամենը և դու ինչո՞ւ ես ծիծաղում։

Մարդն ասաց.

— Ո՛վ դու կին, եթե ասեմ, իսկույն կմեռնեմ, դրա համար չեմ ասում։

Իսկ կինը հանդգնեց և ասաց.

— Ճար չկա, պետք է ասես։

Իսկ նա չէր ուզում ասել, բայց կինը նրան խիստ նեղեց և ասաց.

— Պետք է ասես, եթե մեռնես էլ։ Եթե ոչ՝ ես ինձ կսպանեմ։

Եվ մարդն անճարացավ և ասաց.

— Ո՛վ կին, հավատա ինձ, որ առանց տարակուսանքի կմեռնեմ, եթե

www.a-pdf.com

ասեմ. երբ թույլ չես տալիս, երեք օր սպասիր, մատաղ անեմ, քահանաներին և աղքատներին կերակրեմ, ապա քեզ ասեմ և մեռնեմ։

Եվ շար կինը հազիվ հանձն առավ երեք օր սպասել։ Եվ մարդը մորթեց շատ ոչխարներ և գառներ և կանչեց քահանաներին, կարգավորներին և աղքատներին, և նստեցին ճաշի և մինչդեռ ուտում էին և ըմպում, այն մարդն սպասում էր։

Եվ մարդն ուներ շան լակոտ, որ տան մեջ նստել էր լի տրտմությամբ, սգով, նույնիսկ արտասուք էր թափվում նրա աչքերից։ Եվ հանկարծ եկավ աքլորը հպարտ և խրոխտալով և ներս մտավ, և նրա հետ կային քսան-երեսուն հավ աջից և ձախից։ Շան լակոտն սկսեց աքլորին ասել.

— Ո՛վ լիրբ անաղուհաց, ի՞նչ ես խրոխտացել և տեսակ-տեսակ ձայն ես հանում. չգիտես, որ մեր տերը վաղը յուր գաղտնիքը պիտի կնոջն ասի և մեռնի։ Իսկ դու լալու փոխարեն, ուրախ ես։

Աքլորն ասաց.

— Ինձ ինչ, թե կմեռնի. ես, որ նրա ծառան եմ, քսան-երեսուն կին ունեմ և նրանց զսպել եմ, իսկ նա չի՞ կարող մեկին իր հրամանքով պահել։

Շան լակոտն ասաց.

— Ի՞նչ անի անզգամ կնոջը։

Աքլորն ասաց.

— Երբ ամենքը վեր կենան մատաղից, թող առնի երեք-չորս փայտ, դուրը փակի և կնոջն ասի՝ արի քեզ ասեմ գաղտնիքը, և նրան բռնի մերկացնի և կապի մի այունից և այնքան ծեծի նրա կողերին և այլ տեղերին, որ ողջ տեղ չմնա, ամենը կապուտկի և ասի, թե՝ շար կին, լավ է, որ դու մեռնես, քան թե ես և, դռնից հանելով, նրան դուրս վարի, ասելով՝ գնա կորիր, ես այլ կին կառնեմ և քեզ չեմ ուզում։

Եվ աքլորից լսելով այդ բարի խրատը՝ այն մարդը դարձյալ ծիծաղեց։ Եվ անզգամ կինը, տեսնելով այդ, ամբոխի մեջ մոտեցավ նրան, չամաչելով ոչ մարդկանցից և ոչ քահանաներից և մարդուն ասաց.

— Այժմ ինչո՞ւ ծիծաղեցիր, ասա ինձ և պատմիր, թե ինչպես հարբուտացար։

Եվ մարդն աղաչեց.

— Մի քիչ համբերիր, թող հյուրերը գնան, և ես քեզ ասեմ, այժմ ամոթ է նրանց առաջ բան ասել։

Եվ երբ ամենքը գնացին, ընտանիքը դուրս հանեց և դուռն ամուր փակեց և ըստ աքլորի խրատի՝ ձեռքն առավ կնոջը, չարդեց ամեն ոսկորները և դուրս արեց, Իսկ կինը ղղջալով նրա ոտքն ընկավ և լալով աղաչում էր, ասում.

— Աստծու սիրուն, ինձ բան մի ասա և ամեն օր այսպես ծեծիր, միայն ինձ դուրս մի անի և քեզնից մի հեռացրու, որպեսզի աշխարհում խաղք չլինեմ։

Եվ այսպես մահից ազատվեց մարդը աքլորի խրատով։

ԴՐԱԽՏԸ ԵՎ ԳԵՂՋՈՒԿ ՄԱՐԴԸ

Մի գեղջուկ մարդ աղը շալակին բարձրանում էր դժվար սարով, և տոթ ժամանակ էր։ Եվ շատ հոգնեց մարդը և, բեռը վայր դնելով, սկսեց բամբասել Ադամին և Եվային, թե ինչո՞ւ նրանք անհամբերությամբ դուրս եկան դրախտից։ Եվ իսկույն երևաց հրեշտակը և նրան ասաց.

— Եթե քեզ դրախտ տանեմ, դու կհամբերե՞ս։

www.a-pdf.com

Եվ գեղջուկն ասաց.

— Ե՞րբ կլինի այդ։

Եվ հանկարծ քուն իջավ նրա վրա, և տեսավ, որ դրախտն է ընկել, և շատ ուրախացավ։ Եվ ապա տեսավ, որ դրախտի մեջ մարդիկ կտրատում էին դեռաբույս ծառերը և չհամբերելով ասաց.

— Այդ ի՞նչ մարդիկ եք, որ չոր ծառերը թողած՝ կտրատում եք կանաչ ծառերը։

Եվ աչքերը բաց արեց, տեսավ, որ դարձյալ նստել է աղի բեռան մոտ և սկսեց դառն արտասվել։ Եվ գեղջուկ մարդը նորից տեսավ հրեշտակին և ասաց.

— Այլևս չե՛մ խոսի։

Եվ նա նորից դրախտ ընկավ և տեսավ, որ մարդիկ կտրած ճյուղերը և փայտը շալակ են կապել և չեն կարողանում շալակել, բայց դեռ դարսում են ճյուղ և փայտ։ Եվ չհամբերեց և ասաց.

— Ո՛վ անխելքներ, թեթևացրեք ձեր բեռը, որ կարողանաք շալակել։

Եվ գեղջուկ մարդը նորից զարթնեց դժվար սարի վրա և սկսեց արտասվել, և հրեշտակը երրորդ անգամ նրան դրախտ տարավ։ Եվ նա տեսավ մի մեծ քար, որից կապել էին տասներկու լուծ եզ, և ամեն մեկը յուր կողմն էր քաշում, և քարը չէր շարժվում։ Եվ մարդը դարձյալ չհամբերեց և կանչեց.

— Ո՛վ հիմարներ, մի ուղղությամբ ձգեցեք և միասին, որ քարը տեղից շարժեք...

Եվ գեղջուկ մարդն ասաց. «Լավ է, ես իմ աղը շալակեմ»։ Եվ բարձրացավ դժվար ճարով։

ԱՌՅՈՒԾԸ, ԷՇԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Առյուծը հիվանդացավ և բժիշկները խորհուրդ տվեցին.

— Եթե ավանակի սիրտն ու ականջները ուտեն, շուրջ տան առյուծին խմելու, կապաքինվի։

Կանչեցին աղվեսին ու ասացին.

— Հնար արա, մի էշ բեր։

— Այո՛,— պատասխանում է աղվեսը,— մի ծանոթ լավ էշ կա այսինչ հովտում, հիմա կբերեմ։

Գնաց աղվեսը, գտավ ավանակին և ասում է.

— Ո՛վ եղբայր, երանի քեզ, գտել եմ քո ավագ եղբորը, որն ուզում է քեզ տեսնել։ Նա գազանների թագավորն է, և դու նրա հետ պիտի թագավորես։

Հավատաց ավանակն ու գնաց առյուծի մոտ։ Առյուծը կամեցավ խեղդել նրան, բայց ավանակը փախավ։ Հասնելով նրա ետևից՝ աղվեսը հարցնում է.

— Ինչո՞ւ ես փախչում։

— Համբուրելիս ցավեցրեց կոկորդս,— պատասխանում է ավանակը։

— Սաստիկ սիրուց է այդ,— ասում է աղվեսը,— եթե դու էլ նրան համբուրես, շատ կուրախանա։

Եվ ավանակը վերադարձավ համբուրելու առյուծին։ Սա, բռնելով ավանակի կոկորդից, սպանեց նրան ու ինքը պառկեց հանգստանալու։ Աղվեսն անմիջապես հանեց ավանակի սիրտը, կտրեց ականջները և կերավ, ասելով. «Եթե սա դեղ է, ուրեմն ինձ ավելի է հարկավոր, քան առյուծին»։ Ապա մոտեցավ բժշկին և առյուծին, ասաց.

www.a-pdf.com

— Զարմանալի բան. էշը ոչ սիրտ ունի և ոչ ականջ։

Երբ եկան մոտ, տեսան, որ իսկապես չուներ, շատ զարմացան։

— Մի զարմացեք,— ասում է աղվեսը,— եթե նա սիրտ կամ ականջ ունենար, քո մռնչյունը լսելուց և քեզնից ազատվելուց հետո այլևս չէր վերադառնա ու չէր ընկնի քո ձեռքը՝ մեռնելու։

Եվ լսողները գտան, որ աղվեսը իրավացի է։

ԳԱՅԼԱԳՈՒԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Գայլագուավը մահու չափ սոված էր։ Նա գնաց գողացավ հողագործից մի կտոր պանիր և գալով նստեց մի բարձր պատի վրա, որ ուտի։ Պատի տակ կար մի աղվես, որը, տեսնելով ագռավին՝ պանիրը բերանը, սկսեց գովել նրան ու ասել.

— Փառք քեզ, Աստված, որտեղի՞ց հայտնվեց այս պայծառ արեգակը, որ գեղեցիկ է և նման լուսնին, անձով սուրբ է, իսկ փետուրները փայլում են արևի նման։ Եթե ձայնն էլ հզոր լիներ, տիեզերքի վրա ես նրան թագավոր կկարգեի։

Ագռավի խելքը գնաց, հպարտացավ նա սուտ գովեստից, մոռացավ պանիրը և ասաց մտքում. «Այսպես գեղեցիկ եմ ես, ու ձայնս էլ հզոր է»։ Եվ տարածելով իր թևերը՝ ագռավը բարձր ձայնեց։ Պանիրը պոկվեց նրա բերանից, ընկավ աղվեսի առջև։

— Այո՛, ձայնդ լավ է,— ասաց աղվեսն ագռավին,— բայց խելք բոլորովին չունես։ Դու մի շերտ պանիր չկարողացար պահել, ինչպես պիտի պահես թագավորությունը։

ԲԱԶՄԱՀՆԱՐ ԱՂՎԵՍԸ

Աղվեսին հարցրին.

— Քանի՞ տեսակ հնարք գիտես։

Ասաց.

— Միայն պոչովս շան առաջ հարյուր հնարք եմ բանեցնում։ Բայց մեծագույն հնարքս այն է, որ ո՛չ ես եմ շանը հանդիպում, ո՛չ շունը՝ ինձ։

ԱՂՎԵՍԸ ԵՎ ԳԱՅԼԸ

Աղվեսը տեսավ մի հոր՝ վրան թակարդ, թակարդի վրա՝ մի կտոր պանիր։ Վերցնելով մի փոքրիկ քար՝ աղվեսը նստեց փոսից քիչ հեռու և ձևացրեց, թե ինչ-որ բան է ուտում։

Նկավ գայլը և հարցրեց.

— Ի՞նչ ես անում։

— Մի հոր լիքը պանիր գտա,— ասաց աղվեսը,— մի կտոր վերցրել, ուտում եմ։

Գայլն առաջ նետվեց, թե.

— Ես էլ կվերցնեմ։

Եվ ընկավ հորը, իսկ պանիրը թռավ մի կողմ։ Աղվեսն առավ պանիրը և շարժվեց սարն ի վեր։

www.a-pdf.com

Գայլը ողբաց.

— Վա՜յ անտերիս։

— Անտերը ես եմ, որ թափառում եմ սարն ի վեր,— ասաց աղվեսը,— թե չէ քեզ համար հիմա հազար տեր կճարվի։

ԳԱՅԼԸ ԵՎ ԲՐՈՒՏԻ ՇՈՒՆԸ

Գայլը հափշտակեց մի անասուն։ Գյուղի շներն ընկան ետևից և հալածեցին գայլին։ Վրա հասավ նաև բրուտի շունը և սաստիկ նեղեց նրան։ Գայլը դարձավ նրա կողմը և ասաց,

— Բրուտի անիծյալ շո՛ւն, ասա ինձ, քեզանից ի՞նչ եմ տանում, տիրոջդ դո՞ւրը, քերի՞չը, թե՞ հղկիչը, որոնցով պուտուկներն է կոկում։

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԽԵՑԳԵՏԻՆԸ

Աղվեսն ու խեցգետինը բարեկամացան, միասին ցանեցին և հնձեցին արտերը, կալսեցին ու շեղջեցին ցորենը.

— Ելնենք բլրի կատարը և վազելով գանք,— առաջարկեց աղվեսը,— ով շուտ հասնի կալը, ցորենը նրան լինենն։

Երբ ելան բլուրը, խեցգետինն ասաց աղվեսին.

— Խնդրում եմ, երբ վազել ուզենաս, պոչովդ հարվածիր ինձ, որ իմանամ ու գամ քեզ հետ։

Եվ խեցգետինը բացեց իր մկրատը։ Աղվեսն իր պոչով խփեց ու վազեց, իսկ խեցգետինը, փակելով մկրատը, կպավ նրա պոչին։ Երբ աղվեսը հասավ ցորենի շեղջին, ետ շրջվեց՝ տեսնելու, թե որտեղ է խեցգետինը։ Իսկ խեցգետինը, ընկնելով շեղջի վրա, ասաց.

— Հանուն Աստծու, այս ամենը իմն է։

Աղվեսը զարմացավ.

— Ով դու չար, ե՞րբ հասար այստեղ։

ՎԱՐԱԶՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Վարազը մեծ ջանք ու եռանդով սրում էր իր ատամները։ Գալիս է աղվեսն ու հարցնում.

— Այդ ի՞նչ ես անում, չէ որ հիմա կռվի ու պատերազմի վտանգ չկա։

— Լռի՛ր, գարշելի ազվե՛ս,— պատասխանում է նրան վարազը,— դու ի՞նչ ես հասկանում պատերազմից։ Այն ժամանակ ո՞վ կարող է զբաղվել զենք սրելով։ Զենքն այնժամ պետք է սրել, երբ պարապ ես։

ԱՔԱՂԱՂԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Աքաղաղը թառել էր մի ծառի վրա քնելու։ Գիշերվա կեսին նա կանչում է բարձր ձայնով։ Աղվեսը լսում է նրա կանչը և, մոտ գալով, ասում.

— Տեր հայր, այսօր սուրբ Կարապետի տոնն է և քարոզիչ չունենք, որ կատարենք տոնը։ Ծառից իջիր, միասին տոնենք։

— Մի քիչ համբերիր,— ասում է աքաղաղը,— մինչև քեռիս գա, որ հանդիսավոր տոն անենք։

www.a-pdf.com

Լույսը բացվելուն պես, հանկարծակի գալիս է մի քերծե ու բռնում աղվեսի կոկորդից։ Աղվեսն սկսում է տհաճ ձայնով գոռալ։

— Վա՜յ ինձ,— ասում է աքաղաղը,— այդպիսի գարշելի ձայնո՞վ պիտի կատարեիր մեծ Կարապետի տոնը։

ԱՎԱՆԱԿԻ ՄԵԾԱՐՈՒՄԸ

Էշին պատվի արժանացրին և հրավիրեցին թագավորի որդու հարսանիքին։

— Վա՜յ ինձ,— ասում է էշը,— ես ոչ շեփորահար եմ և ոչ պարող, դիտեմ, որ հարսանիքին ինձ վիճակված է ծանր բեռ կա՛մ ջուր կրել։

ԱՌՅՈՒԾԻՆ ՆՄԱՆՎՈՂ ԱՂՎԵՍՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Առյուծը սպասավոր վերցրեց աղվեսին և պատվիրեց նրան.

— Երբ տեսնես, որ արյունը տվել է աչքս, ինձ իմաց արա, դա որսն սկսելու իմ նշանն է։

Աղվեսը պիտի նշանն ասեր։

Եվ առյուծը որս էր անում այդպես։ Ուրախանում էին նրանք ու երկուսով ուտում որսը։

Հպարտացավ աղվեսը, դուրս եկավ առյուծի ծառայությունից և, գայլին դարձնելով իր սպասավորը, ասում է նրան.

— Երբ հարցնեմ քեզ, թե աչքերիս մեջ արյուն կա՞, դու կասես՝ այո՛, աչքերիդ մեջ շատ արյուն կա։

Քիչ անց աղվեսը գայլին հարցնում է.

— Նայիր աչքերիս, արյուն կա՞ մեջը։

— Այո՛,— պատասխանում է գայլը,— աչքերիդ մեջ շատ արյուն կա և թանձրացույն է։

Ուրախացավ աղվեսն ու գնաց նստեց եղնիկների ճանապարհին։ Երբ եղնիկներն եկան, աղվեսը վազեց նրանց ընդառաջ, ինչպես սովորել էր առյուծից։ Բայց եղնիկները հարվածեցին իրենց սմբակներով աղվեսի գլխին, նա ջախջախվելով ընկավ ուշագնաց։

Մոտեցավ նրան գայլն ու ասաց.

— Վե՛ր կաց, այժմ ավելի թանձրացավ արյունը քո աչքերի մեջ։

ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԿԱՔԱՎԸ

Որսորդը մի կաքավ բռնեց և կամեցավ մորթել նրան։

— Մի՛ մորթիր ինձ,— լացով աղաչեց կաքավը,— ես շատ կաքավներ, խելքահան անելով, կբերեմ քեզ, որ բռնես։

— Այժմ կմեռնես իմ ձեռքով,— առաց որսորդը,— որովհետև քո սիրելիներին ու ազգականներին մահվան ես մատնում։

ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐՏԵՐԸ

Հավաքվելով նապաստակներն իրար ասում են.

— Եկեք գնանք, ծովն ընկնենք, մեռնենք բոլորս, որովհետև թույլ ենք ու անզեն, և բոլոր կենդանիներն էլ հալածում են մեզ։

www.a-pdf.com

Ու գնացին։

Ճանապարհին հանդիպեցին գորտերի, որոնք, տեսնելով նրանց, ճիչ արձակեցին ու փախան, թաքնվեցին ներանցից։

Նապաստակները մխիթարվեցին, փառք տվեցին Աստծուն, որ իրենցից տկարներն էլ կան, ու վերադարձան ետ։

ՄԱՐԴՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Մի մարդ բռնել էր գայլին, ատքերը կապել, և, րարձելով էշին, տանում էր տուն։

Մարդիկ, տեսնելով նրան, հարցնում են.

— Այդ ի՞նչ է, որ բարձել ես էշիդ։

— Տանում եմ տուն,— ասում է մարդը,— որ կթեն, և երեխաներս մի քիչ կշտանան։

— Ո՛վ տխմար,— ասում են մարդիկ,— դա ամբողջ աշխարհի կթանն է կտրել, դու դրան կթա՞ն ես տանում։

ԿԱՇԱՌԱՏՈՒ ԴԱՏԱՎՈՐՆ ՈՒ ԲՂՈՒՂՈՎ ՅՈՒՂԸ

Մի մարդ գնաց քաղաքի դատավորի մոտ և խոստացավ.

— Քեզ մի բղուղ յուղ կտամ, եթե վաղը, երբ հակառակորդիս հետ գամ դատի, ինձ արդարացնես։

Նվ մյուս օրը, երբ եկան դատարան, դատավորն արդարացրեց յուղ խոստացողին և դատավճիռը դրելով՝ հանձնեց նրան։

Յուղ խոստացած մարդը բղուղի մեջ՝ մինչև բունը, հարդ լցրեց, հարդի վրա դրեց երկու-երեք շերեփ յուղ, բղուղի բերանը սերեկեց ու տարավ հանձնեց դատավորին։ Մի քանի օր հետո դատավորն ասում է իր սպասավորին։

— Սիրտս յուղով բրինձ է ուզում, քեր այն մարդու բերած յուղը և բրինձ եփիր։

Սպասավորը կրակ է վառում, թավան դնում վրան, բերում է բղուղն առաջ, բաց է անում և հենց որ դդալը խփում է մեջը, հարդ է դուրս գալիս։ Դատավորը պխի է ընկնում, որ մարդը իրեն խաբել է։ Ասում է.

— Ոչի՛նչ, տեղը կհանեմ։

Մի օր այդ մարդը անցնում էր դատավորի դռան մոտով։ Տեսնելով նրան՝ դատավորը կանչում է, ասում.

— Ո՛վ մարդ, քո դատավճռի մեջ, որ այն օրը հանձնեցի քեզ, մի բան պակաս եմ գրել, խեղճ մարդ ես, քեր ներս, ավելացնեմ, որպեսզի հետո քո հակառակորդը այլևս քեզ դատարան քարշ չտա։

— Դատավո՛ր,— ասում է մարդը,— թե պակաս բան կա, բղուղի մեջ է պակաս, թե չէ իմ թղթում պակաս չկա։

ԱՍՈՐԻ ԵՐԵՑՆ ՈՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Մի ասորի երեց՝ բարի ու «իմաստուն», և մի հայ ինչ-որ բանի համար կռվեցին։ Երիտասարդ հայն ասաց քահանային.

— Քոթով այնպես կխփեմ, որ երեսուներկու ատամներդ բերանդ կլցվեն։

Զարմացավ քահանան այդ խոսքի վրա և շտապ գնալով տուն՝ կնոջն ասաց.

www.a-pdf.com

— Երեցկին, Աստված սիրես, մի մոմ վառիր և արի տես, թե քանի ատամ կա բերանս։

Երեցկինը լույս վառեց և, հաշվելով քահանայի ատամները, ասաց.

— Երեսուներ կու, ո՛չ ավել, ո՛չ պակաս։

Քահանան շտապ վերադարձավ հայ երիտասարդի մոտ ու հարցրեց.

— Ո՞րտեղից գիտեիր իմ ատամների թիվը, ո՞վ էր քեզ ասել։

— Գիտենալով իմը, քոնն էլ իմացա,— պատասխանեց նա։

ՀԱՐՈՒՍՏ ԽՆԱՄԱԽՈՍՆ ՈՒ ԿՈՒՅՍԸ

Մի հարուստ մարդ իր որդու համար մարդկանց սովորության համաձայն խնամախոսության գնաց։ Եվ կույսը, որին գնացել էին ուզելու, գալիս, նրստում է նրա մոտ ու ասում.

— Ո՛վ Հայր, օրհնյալ է քո գալուստը։ Բարի վարված կլինես, եթե մյուս անգամ գաս, գնանք Հռոմ, այնտեղից թեքվենք Երուսաղեմ և ապա մեկնենք Նոր Վիրապ։

— Որդյա՛կ,— ասում է մարդը,— ես եկա, որ քեզ իմ տուն տանեմ, դու ուզում ես զրկե՞լ ինձ իմ տնից։

ՃԳՆԱՎՈՐՆ ՈՒ ԻՇԽԱՆԸ

Մի քաղցած ճգնավոր մտավ մի գյուղ և ուտելու համար հաց չճարեց։ Ելնելով գյուղից, նա գտավ տաճիկ իշխանի ձին, որ արածում էր գյուղի եզրին։ Առավ ձին, տարավ մյուս գյուղը, վաճառեց մի հացով։ Հասավ իշխանը նրա ետևից ու հարցրեց.

— Ո՛վ ճգնավոր, իմ մեծագին ձին ինչպե՞ս հիմարաբար վաճառեցիր ընդամենը մեկ հացով։

— Բարի իշխա՛ն,— պատասխանեց ճգնավորը,— շատ մի խոսիր։ Այդպես վարվեցի, որովհետև Քրիստոսն ասել է, թե ձրի առեք և ձրի տվեք։

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՐՊԵՏԸ

Երկու մարդ ճանապարհ էին գնում։ Նրանք երկու դահեկան արժողությամբ մի կարպետ գտան։ Մեկը աչքածակ էր, մտածեց, ի՞նչ անի, որ կարպետը ինքը վերցնի։ Ընկերոջն ասաց.

— Համաձա՞յն ես կարպետը բաժանել երկուսիս։

— Այո՛, համաձայն եմ,— պատասխանեց ընկերը։

— Տո՛ւր ինձ երկու դահեկան և կարպետն ա՛ռ, հաշիվը ճիշտ կլինի։

Եվ ընկերը նախ արգար համարեց վճիռը, ապա մտածեց, զգաստացավ ու ասաց.

— Ո՛վ եղբայր, քանի դեռ կարպետը չէինք գտել, ես քեզ ի՞նչ էի պարտք։

ՊԱՐՏԱՊԱՆԸ

Մի մարդ շատ պարտքեր ուներ, բայց չէր կարողանում վճարել, խիստ մտահոգվում էր ու նեղվում պարտատերերից։ Մի օր նրանցից մեկը ասաց.

— Քեզ այնպիսի խրատ տամ, որ բոլոր պարտքատերերից ազատվես, միայն թե իմ պարտքը վերադարձրո՛ւ։

www.a-pdf.com

— Թող Աստված վկա լինի,— խոստացավ պարտապանը,— որ քոնը կվճարեմ, մենակ մի ճար արա՝ մյուսներից ազատվեմ։

— Ով որ գա քեզանից պարտքը ուզի,— խրատեց նրան,— դու ասա՝ «խա՛մ», ուրիշ բան մի ասա։ Այդ ժամանակ պիտի քեզ բռնեն, դատավորի մոտ տանեն։ Դու դատավորի առաջ էլ ուրիշ ոչինչ մի ասա, միայն կասես՝ «խա՛մ»։ Իսկ դատավորը պիտի ասի, թե այս մարդը գիժ է, հիմարի մեկը, ումի՞ց եք բան պահանջում, թողեք գնա իր գործին։

Այդ եղանակով մարդն ազատվեց պարտքերից։

Իսկ խրատատուն, գալով նրա մոտ, ասաց.

— Քանի որ ազատվեցիր իմ խորհրդով, դե բեր, իմ պարտքը տուր։

— Խա՛մ,— պատասխանեց պարտապանը։

Այն ժամանակ պարտքատերը, վերցնելով նրան, գնաց քաղաքի դատավորի մոտ։ Դատավորն սկսեց հարցնել.

— Այս մարդն ասում է, թե իրեն պարտք ես հինուն հակ լվացած մետաքս, դրան ի՞նչ կասես։

— Խա՛մ,— բացականչեց նա առաջվա նման։

— Չա՛մ,— իսկույն համաձայնեց պարտատերը,— եթե լվացած չկա, թող խամ լինի։

Եվ այսպիսի հմտությամբ վերցրեց նրանից իր պարտքը։

www.a-pdf.com

Պ

ՔԱՐԻ ԳՈՐԾԸ

Գայլը մոտեցավ դրախտի դռանը, թե.

— Ներս դամ։ Գիտեմ, որ Աստված արդար դատաստան կանի. եթե մեղք գործել եմ, բարութիւն էլ եմ արել։

Հարցնում են.

— Ի՞նչ բարի գործ ես արել։

— Մի զառամյալ գուսան եմ կերել և մի զղիր։

ԷՇԸ ԵՎ ԱՐՈՐ ԹՈՒՉՈՒՆԸ

Թագավորը հարցնում է իմաստասերին.

— Եթե մեկին վերուստ մի բան տրված չէ, և նա ձգտում է հասնել, կկարողանա՞, թե՞ ոչ։

— Կկորչի՛, ինչպես էշն արորից,— պատասխանում է իմաստասերը։

— Ինչպե՞ս կորավ էշը։

— Լինում է մի սուտլիկ և քաղցրախոս արոր։ Էշը, լսելով նրա ձայնը, մոտենում է նրան ու հարցնում.

— Ինչի՞ց է քո ձայնը այդքան քաղցրալուր, ասա ինձ գաղտնիքը, որպեսզի ես էլ լավ ձայն ունենամ։ Չափազանց տհաճ և դժվարալուր է բոլորի ականջների համար իմ ձայնը։

— Ես երկնքի ցոզն եմ ըմպում,— պատասխանում է արորը,— եթե անձրև չի գալիս, ջուր չեմ խմում։

Գնում է էշը մի անջրդի տեղ և մի քանի օր աչքերը չռած երկնքին, բերանը բաց արած՝ սպասում է ու սատկում ծարավից։

Այսպես, ուրեմն, ով ձգտում է ստանալ այն, ինչ չի տրված իրեն, շարաչար կերպով կկորչի, ինչպես ավանակը։

ԱՂՎԵՍԸ ԵՎ ՍԱԳԵՐԸ

Աղվեսը մտավ սագերի բույնը։ Իսկ սրանց բնութիւնն այնպիսին է, որ սվսվոց են արձակում՝ ասելով.

— Սո՛ւտ՛ս։

— Եթե դուք սուս եք,— ասում է աղվեսը,— ես ավելի սուս եմ ու սուս։

www.a-pdf.com

Գարսավում էր բազեն հավին ու ասում նրան.

— Ինչո՞ւ այդպես անշնորհակալ ես քո տիրոջ նկատմամբ, ինչո՞ւ ես զգուշանում նրանից: Չե՞ս տեսնում ինձ, վայրենի լինելով հանդերձ, հենց որ տերս սուլում և կամ ձեռքի շարժումով կանչում է, անմիջապես մոտենում եմ նրան: Իսկ դու թեև ազգուտակով ծնվել ու սնվել ես նրա տան մեջ, բայց խուսափում ես նրանից:

— Շամփուրն եմ հիշում, որովհետև մեզանից շատերին խորովեցին, իսկ բազեներից և ոչ մեկին: Որքան որ ես հավ եմ տեսել շամփուրի վրա, ո՛վ թռչունների արքա, եթե դու գեթ մի բազե տեսներիր, կարծում եմ, որ անդարձ կհեռանայիր մարդուց, և եթե հազար անգամ համոզեին ու բազում պարգևներ խոստանային, դարձյալ չէիր համաձայնի ենթարկվել նրա կանչին:

ՇԻՆԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ՝ ԹԱԳԱՎՈՐ

Մի երկրի թագավորը վախճանվել էր: Եվ երբ իշխաններն ու նախարարները իրենցից մեկին թագավոր ընտրելու համար միաբանության չէին գալիս, մի շինականի որդու կարգեցին թագավոր:

Իսկ նրա հայրը, գալով պալատ և տեսնելով իր որդուն թագավորական հանդերձների մեջ, հարցնում է նրան.

— Որդյա՛կ, ճանաչո՞ւմ ես ինձ:

— Ինչպե՞ս կարող եմ ճանաչել,— պատասխանում է որդին,— երբ ինձ չեմ ճանաչում:

ԱՐԾԱԹԱՍԵՐԻ ԱՂՈՔՔԸ

Մի արծաթասեր ու ագահ մարդ ասում էր.

— Է՛, Աստված, ինչ բան որ ձեռքս ընկնի, ոսկի և արծաթ դառնա:

Եվ Աստված կատարեց նրա խնդիրքը: Ինչ որ ձեռքն էր ընկնում, անմիջապես ոսկի և արծաթ էր դառնում՝ թե՛ հաց, թե՛ ջուր, թե՛ այլ բան: Ժամանակ անց սովից սատկեց:

ԻՇԱՏԵՐԸ ԵՎ ԳԱՅԼԸ

Մի մարդ կորցրել էր էշը: Նա մորմոքալով այս ու այն կողմ էր շրջում, փնտրում ու չէր գտնում: Հանդիպում է նա մի գայլի:

— Ով եղբա՛յր,— հարցնում է մարդը,— կորցրել եմ իմ իշուկը, չե՞ս գտել:

— Եղբա՛յր, քո էշը ես եմ գտել,— պատասխանում է գայլը:

— Բե՛ր, որ քո գտնելու վարձը տամ:

— Ով մա՛րդ,— ասում է գայլը,— քո էշը տիղմի մեջ էր խրվել: Ես երեք օր չարչարվեցի, հազիվ կարողացա հանել: Գիտեի, որ աղքատ մարդ ես, ինձ վարձահատույց լինել չէիր կարող, և վարձի տեղը էշդ կերա:

ՀՈՂԱԳՈՐԾՆ ՈՒ ԱՐԱԳԻԼԸ

Հողագործը բակլա ու սիսեռ ցանեց գետի եզերքին: Մոտիկ եղեգնուտից դուրս էին գալիս սագեր ու կռունկներ, հավաքում սերմերը: Հողագործն ակ-

www.apdf.com

նատներ պատրաստեց ու դրեց ցանքի եզրին։ Առավոտյան դեմ վերցրեց կաղնե մահակը ու գնաց նայելու ակնատները։ Սագերն ու կռունկները եկել էին, ընկել թակարդների մեջ, նրանց հետ էլ՝ մի արագիլ։ Հողագործն իր մահակով սկսեց ջարդել սագերի ու կռունկների պարանոցները։

— Ո՛վ բարեսեր հողագործ,— դիմում է նրան արագիլը պաղատագին ձայնով,— դու լավ գիտես, որ ես ոչ բակլա եմ ուտում և ոչ սիսեռ, քո էլ լավ բարեկամն եմ, վերացնում եմ քո հանդերից օձերին, մկներին ու ճիճուներին, թեթևացնում քո հոգսը։ Եվ արդ, խնայիր ինձ ու մի պատժիր։

— Այդ ճիշտ է,— ասում է հողագործը,— բայց քանի որ միաբանել ես իմ թշնամիների հետ, նրանց հետ դու էլ կատակես։

ՄԵՌՆԵԼՆ ՈՒ ԱՅԳԵԳՈՐԾԸ

Մի օր մարդիկ մեռել էին տանում թաղելու։ Գերեզմանոցի մոտ այգի կար, ուր մի մարդ էր աշխատում։ Նրան ասացին.

— Ե՛կ մեզ հետ մեռելը թաղելու։

— Ժամանակ չունեմ,— պատասխանեց այգեգործը։

Մեռելը գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Ես էլ շատ բան ունեի անելու, բայց մահը վրա հասավ, ամեն ինչ թողի ու գնում եմ։ Ե՛կ իմ ետևից, որ մեկն էլ քո ետևից գա։

ԱՂՔԱՏՆ ՈՒ ԱՐԾԻՎԸ

Ոմն աղքատ մարդ մի կտոր միս էր խորովում անմարդաբնակ վայրում։ Եվ ահա մի արծիվ հանկարծակի սլացավ վերևից, հափշտակեց միսն ու բարձրացնելով՝ տարավ։ Աղքատը, գետնին երեսի վրա ընկած, լաց եղավ՝ ասելով.

— Չվայելե՛ս։

Արծիվը տարավ միսն իր բույնը, դրեց ձագերի առջև ու ինքը գնաց։ Մի կայծ, որ կպած էր մնացել մսին, այրեց արծվի բույնն ու ձագերին։

ՓՈՐՁՈՒԹՅԱՆԸ ԴԻՄԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մի թագավոր սովորություն ուներ. որ ամեն օր գնում էր որսի, և եթե որս չէր պատահում՝ մարդու էր խփում։ Մի օր ոսկե գնդակով խփեց մի մարդու, ու մինչ ցավից նեղված՝ նա երեսը շրջեց ու տրտում նայեց թագավորին, իսկույն դեմքին ժպիտ փայլեց, և ասաց.

— Թագավո՛րն է խփել ինձ, ոսկով։

Եթե դիմանաս՝ այսպես ամեն փորձություն պատվաբեր է թվում։

ԱՍՏՎՈՒՅ ՄԱՐՄՆԱՎՈՐ ԲԱՆ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԽՆԴՐԵԼ

Մի թագավոր զբոսանքի գնաց և ճանապարհին տեսավ մի գեղեցիկ պարտեզ, ուր աշխատում էր պարտիզպանը։ Թագավորին դուր եկավ տեսածը, և պարտիզպանին ասաց.

— Ինչ ուզում ես՝ խնդրիր ինձնից, որ տամ։

Պարտիզպանը աղբ խնդրեց, և թագավորի հրամանով շատ սայլերով աղբ բերին նրան։

Նախարարները շատ զարմացան և հարցրին պարտիզպանին.

www.e-pdf.com

— Ի՜նչ խելագար խնդրանքով դիմեցիր թագավորին. ոչ քաղաք խնդրեցիր, ոչ՝ ագարակ, ոչ՝ նախարարություն, այլ՝ աղբ։

Թագավորն իմանալով ասաց.

— Թողեք նրան, որովհետև այդ է վայել իրեն։

Այսպես՝ ով Աստծուց մարմնավոր բան է խնդրում՝ դա նման է աղբի։

ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի սուրբ հայր ուներ բարեպաշտ խոստովանաորդի, որ հիվանդ կին էր։ Սրա ամբողջ մարմինը խոցոտված էր որդերով, և երկար տարիներ դամված էր անկողնուն։ Ու սուրբը միշտ գնում էր նրա մոտ և հոգևոր խոսքերով մխիթարում։ Մի օր հայրը գնում է նրան խոստովանեցնելու և խոստովանությունից հետո կինն ասում է.

— Հայր սուրբ, սարսափելի նեղվում եմ այս որդերից։

Եվ հայրն ասում է.

— Տեսնե՛մ այդ որդերը։— Ու երբ ձեռքն է վերցնում՝ որդերը մարդարիտ են դառնում՝ սպիտակ ու պատվական։ Յույց է տալիս կնոջը՝ ասելով.

— Որդյակ, սա պատվական մարգարիտ է, իսկ դու որդ ես անվանում։

Երբ կինը տեսնում է՝ ուզում է սրբի ձեռքից վերցնել և ասում է.

— Վերադարձրո՛ւ իմ պատվական մարգարիտը։

Այսպես է, երբ մարդ դիմանում է նեղություններին։

ՀՐԵՇՏԱԿՆ ՈՒ ԱՂՔԱՏԸ

Հրեշտակն ասաց մի աղքատի.

— Բժիշկ եմ դարձնում քեզ, այդ դործն արա ու ապրիր, ես քեզ օգնական կլինեմ։

— Ինչպե՞ս իմանամ օդնելդ,— հարցնում է աղքատը։

— Երբ գնաս հիվանդի մոտ,— խրատում է հրեշտակը,— ես քեզ կերեվամ։ Եթե հիվանդի ոտքերի կողմից երևամ, ուրեմն պիտի ապրի, իսկ եթե գլխի կողմից՝ կմեռնի։ Դու այդ ասա հարազատներին և վարձդ առ։

Եվ շատ օրեր աղքատն այդպես վարվեց ու հարստացավ։

Պատահեց, որ ինքը հիվանդացավ։ Հրեշտակն երևաց գլխի կողմից. պիտի մեռներ։

— Շրջեցե՛ք անարս,— ասում է նա իր հարազատներին։

Շրջեցին։ Բայց դարձյալ երևաց հրեշտակն այն կողմից։

— Նորից շրջեցեք,— ասում է հիվանդը։

Եվ կրկին դրեցին նախկին դիրքով։ Դարձյալ հրեշտակը երևաց գլխի կողմից։

— Ամեն անգամ երևալդ հարստացնում էր ինձ,— դիմում է նա հրեշտակին,— իսկ այս մեկ երևալդ լավ չէր։

Եվ մեռավ։

«ՃՇՄԱՐՏԱԽՈՍ» ԱՂՔԱՏԸ

Մի ծեր մարդ նստած էր իր տանը, երբ անսպասելի կերպով մի աղքատ ներս մտավ։ Տերունին սիրով ընդունեց նրան, հյուրասիրեց և հարցրեց.

— Ո՞վ ես դու, խեղճ մարդ։

www.a-pdf.com

— Ես ճշմարտախոս մարդ եմ,— պատասխանեց նա,— ուր որ գնում եմ, ինձ նախատում են բոլորը և հանգիստ չեն տալիս։

— Ի՞նչ է արածդ,— հարցրեց ծերունին։

— Բոլորի պակասությունը երեսներին եմ ասում, չեմ թաքցնում, չեմ կարողանում համբերել։ Այս իսկ պատճառով ինձ հալածում են, քշում։ Այսպես աննպատակ թափառում եմ։

Հաց ուտելուց հետո գնացին քնելու։ Առավոտյան շորերն հագնելիս, աղքատը ծերունուն մի բան ասելու պահանջ զգաց։ Նա տեսավ, որ տանտերը միաչքանի է և նրա երեսին ասաց պակասությունը։

Անմիջապես բարկացավ ծերունին, դուրս արեց նրան տանից՝ ասելով.

— Հենց դրա համար տեղ չես գտնում, բոլորին ատելի ես, քանի որ բոլորի պակասությունները երեսներին ես տալիս, արժանի է քեզ այդպես լինելդ։

ԱՂՔԱՏԻ ԱՂՈՒՔԸ

Մի աղքատ մարդ հիվանդանում է ճանապարհին։ Եվ նա աղաչում է Աստծուն տուն հասնելու համար մի գրաստ ուղարկել։ Բայց գալիս է մի շարաբարո հեծյալ, ծեծում աղքատին ու ասում.

— Վեր կա՛ց, շալակիր այս քուռակին, որովհետև չի կարողանում գալ իր մոր հետ։

Եվ բարձրանալով տեղից՝ աղքատը լալիս է դառնագին, որովհետև չէր կարողանում ոտքի վրա մնալ։ Իսկ շար մարդը շարունակ հարվածում էր։

— Վա՛յ ինձ, Աստված իմ,— բացականչում է աղքատը,— փոխանակ թեթևացնելու, ծանրացրիր վիճակս։

Առակս ցույց է տալիս, որ աղքատները տառապում են չքավորությունից և Աստծուց խնդրում են ինչք և ունեցվածք, իսկ թագավորներն ու բռնավորները, ինչ գտնում են նրանց մոտ, կողոպտում են։

ԱՐԴԱՐ ՎԱՍՏԱԿԸ

Մի աղքատ վարձկան պահանջեց իր վարձը։ Տանուտերն ասաց.

— Եթե արդարն ես պահանջում, մեկն եմ տալիս, եթե անարդար կերպով ավելին՝ չորսը։

Իսկ նա իր արդար վաստակը պահանջեց ու պակաս ստացավ վարձը։

Եվ այս դեպքն եղել է Ֆրանկների երկրում։

Մի մեծ իշխանի հետ աղքատը նավ բարձրացավ՝ կամենալով վերադառնալ տուն։ Նա ստացած վարձով իր երեխաների համար նուռ էր գնել։ Նավի վրա մեծ իշխանը հիվանդացավ։ Ասացին, թե բուժիչ դեղը նուռն է։ Եվ աղքատ վարձկանը վաճառեց այն՝ յուրաքանչյուրը տասը դահեկանով, հարստացավ, դարձավ մեծ վաճառական։ Նախկին ծառան տան ու կնոջ համար գնեց ընտիր ապրանքներ, ապա գնաց իր տունը։

Եվ այսպես է, արդար վաստակը բազմանում ու շենացնում է տունը։

«ԲԺԻՇԿ» ԳՈՐՏԸ

Եզան մեծությամբ մի գորտ մեր աշխարհն է գալիս Պարսից երկրից, որ մոտ է Բաբելոնին։ Նա բարձրանում է մի լեռան վրա, ուժեղ ձայնով գոչում է ու ասում.

www.a-pdf.com

— Տեղյակ եմ Արկլիպի բժշկական դեղերին, Արիստոտելին, Պիղատոնին և Դիմոնիդայի զավակին, Բագրատին և մյուս հայրապետների չտեսնված արվեստներին։ Եկեք ինձ մոտ, և ես կապաքինեմ բոլոր ցավատերերին ու քոստոնեքին, ուռուցքավորներին և անդամալույծներին, կույրերին ու կաղերին, երակների քննությամբ մեկ օրվա մեռածներին հարություն կտամ։

Լսելով այս՝ արարածներն շտապեցին ելնել լեռն ի վեր՝ նրան տեսնելու։ Քանի որ հաճելի էր նրա խոսքը, և ուզում էին բժշկվել, պատկերացնում էին, թե նա չափազանց գեղեցիկ կլինի։ Եվ երբ մեծ չարշարանքներով ելան լեռան կատարը և տեսան, որ նա սաստիկ բորոտ է, քոսոտ, տձև ու կույր, ամբողջովին թարախակալ է ու զազրահոտ, բարկանալով ասացին.

— Ո՛վ դու չարյաց ծնունդ, ինչո՞ւ քեզ չես բուժում և ուրիշներին ես խոստանում ապաքինել։

Եվ այսպես նախատեցին և սատկեցրին նրան։

ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՏԻՎ

Մի թագավոր իր զորքով ճանապարհ էր գնում։ Նա երկու սուրբ հայրերի տեսավ զարշելի հագուստով։ Թագավորը իջավ նժույգից և խոնարհվելով համբուրեց նրանց։ Զորավարները սկսեցին տրտնջալ, թե այս թագավորը իր մեծամեծներին պատիվ չի տալիս, չնչին մարդկանց մեծարում է։

Թագավորն իմանալով հրամայեց չորս անդուկ սարքել. երկուսը՝ արտաքուստ դեղեցիկ ու քանդակազարդ՝ լի աղբով ու ավազով, իսկ մյուս երկուսը՝ արտաքուստ տհաճ, կղրտոտ, մեջը լի ոսկով ու մարգարտով։ Եվ կանչելով բամբասող իշխաններին՝ թագավորն ասաց.

— Գնահատեցե՛ք և ընտրեցե՛ք չորս կնքած արկղերից որն ուզում եք։

Նրանք ընտրեցին գեղեցիկները և բանալով տեսան, որ լցված են աղբով ու ավազով, ղռչացին։

Թագավորն ասաց.

— Այդպես եք նայում երեսին և պայծառ հագուստին այն մարդու, որ ներքուստ լի է աղտեղությամբ։ Իսկ այս սուրբ հայրերը, որոնց հանդիպեցի, արտաքուստ էին ազաուղի, իսկ ներքուստ՝ լի հոգու շնորհով։

ԹԱԳԱՎՈՐԻ ՆԱԽԱՆՁՈՏ ԻՇԽԱՆՆԵՐԸ

Թագավորի պալատում ծառայող երկու իշխան ատելով ատում էին միմյանց։ Մի անգամ, կամենալով փորձել նրանց, թագավորն ասաց.

— Խնդրեցե՛ք ինձանից ինչ որ ուզում եք։ Բայց իմացե՛ք, մեկի խընդրածի դիմաց մյուսին կրկնակի պիտի տամ։

— Թագավո՛ր,— հարցնում է մեծ իշխանը,— ինչ որ խնդրեմ, իմ պաշտոնակից իշխանին երկո՞ւսը կտաս։

— Այո՛, ինչ որ խնդրես, կանեմ,— ասում է թագավորը։

Մեծ իշխանը մտածում է. «Եթե ես մի քաղաք ուզեմ, կտա։ Բայց իմ ընկերոջը երկուսը կհասնի, սիրտս կպայթի»։

— Թագավո՛ր,— դիմում է նա,— քեզանից խնդրում եմ, որ իմ մեկ աչքը հանես։

Թագավորը հրամայեց հանել մեծ իշխանի աչքերից մեկը։

Պարզ է, որ նախանձոտն իր անձին ավելի թշնամի է, քան՝ ուրիշներին։

www.a-pdf.com

Թագավորն ուներ մի մինուճար տղա։ Հրամայեց իր նախարարներին.

— Ամեն օր ձեզանից յուրաքանչյուրն իմ որդուն թող տանի պատվելու։

Մի օր նախարարներից մեկը թագավորի որդուն տարավ պատիվ տվեց և երեկոյան առաջնորդեց մինչև պալատի դուռը ու ինքը գնաց։

Իսկ թագավորի որդին խիստ հարբած էր։ Նա բարձրացավ կտուրն ու ընկավ վայր։ Հաջորդ օրը նրան գտան աղբանոցում մեռած։ Եվ թագավորն հրաման արձակեց.

Քանդեցե՛ք բոլոր այգիները, կոտրեցե՛ք գինու կարասները, որովհետև գինին դարձավ իմ որդու կորստյան պատճառը։

Եվ հրամանը կատարվեց։

Մի այրի կին, որ մեկ որդի ուներ, իր հնձանը քանդեց կարասների վրա և գինին պահեց։ Ամեն օր առավոտյան և երեկոյան հացից հետո նա մի բաժակ գինի էր տալիս որդուն խմելու։

Եվ մի գիշեր նրա որդին դուրս եկավ տնից և սպանեց թագավորի առյուծին։ Հաջորդ առավոտյան թագավորը հայտարարեց.

— Ով առյուծին սպանել է, թո՛ղ ներկայանա, որպեսզի պարգևատրեմ։

Եկան մայր ու որդի։

— Ինչպե՞ս կարողացար հաղթել առյուծին,— հարցրեց թագավորը։

— Գինով եմ մնել իմ որդուն, թագավոր,— ասաց մայրն ու պատմեց բոլորը։

Եվ թագավորը նոր հրաման արձակեց.

— Այգի տնկեցե՛ք, բայց գինին այնպե՛ս խմեցեք, որ առյուծ սպանեք և ոչ թե մեռնեք աղբանոցում, ինչպես՝ իմ որդին։

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Իշխանի ու հարուստի որդիներն իրար հետ մտերմացան, դարձան եղբայր ու ելան աշխարհ շրջելու։ Գնացին հասան մի բերդի դռան։ Տեսան, որ դարպասից շատ մարդու գլուխ էր կախված։ Վախենալով մտան ներս։ Թագավորի ծառան մեծարեց նրանց ու տարավ պալատ։

Թագավորը երկու հյուրերին իր մոտ նստեցրեց, սեզան բացեց և հյուրասիրեց նրանց անուշահամ գինով։ Երբ հարուստի որդին դուրս ելավ, թագավորն իշխանորդուն ասաց.

— Դու թագավորի նա նման, իսկ այդ ընկերդ պեղ և ստոր մարդ է երեվում, դու այդպիսի անարժան ընկերոջ հետ ինչո՞ւ ես մտերմություն անում։

— Թագավո՛ր,— պատասխանեց իշխանազունը,— ի՞նչ ստորություն ու պակասություն ասես, ես ունեմ, բայց իմ ընկերը լավ մարդ է, ես նրա հնազանդ ծառան եմ։

Երբ հարուստի տղան վերադառնալով նստեց, գուրս ելավ իշխանի որդին։ Եվ թագավորը, փորձելով հարստի որդուն, ասաց.

— Դու իմաստուն, բարի մարդ ես երևում։ Երբ դուրս գնացիր, ընկերդ հազար ու մի խայտառակ բան ասաց քո հասցեին։

— Թագավո՛ր,— պատասխանեց հարստի տղան,— ես նրա անարժան ծառան եմ։

Տեսնելով նրանց ընկերասիրությունը՝ թագավորը շատ ընծաներ տվեց և խաղաղությամբ ճանապարհ դրեց։

www.e-pdf.com

— Թագավո՛ր,— հարցրին նրան նախարարները,— քեզ մոտ եկած բոլոր հյուրերին մեծարեցիր և երեք օր հետո, կտրելով գլուխները, կախել տվեցիր պարսպից: Պատճառն ի՞նչ է, որ այս երկու հյուրերին նվերներ տվեցիր և առանց գլխատելու՝ փառք ու պատվով ճանապարհեցիր:

— Հայտնի բան է. ով ատում է իր մերձավորին, մարդասպան է,— պատասխանեց թագավորը,— և իրավունք է տրված թագավորներին՝ գլխատել մարդասպաններին: Օրենքն ասում է, որ օտարական հյուրին երեք օր պետք է մեծարել: Մեզ հյուր եկածներին ես պատվեցի, բայց երբ քննելով՝ նրանց մեջ միմյանց նկատմամբ ատելություն նկատեցի, կտրել տվեցի նրանց գլուխները: Այս երկու հյուրերը միմյանց մասին լավ խոսեցին, ուստի և՝ նվերներով ու փառքով ճանապարհ դրեցի:

ԵՐԵՔ ՃՇՄԱՐԻՏ ԽՈՍՔ

Թագավորն ու թագուհին, որ երկար ժամանակ զավակ չէին ունենում, Աստծուն ու սրբերին բազում խոստումներ անելով, ունեցան մի արու զավակ: Բայց երեխան ո՛չ աչքեր ուներ, ո՛չ լեզու և ո՛չ ոտքեր: Հավաքվեցին բազմաթիվ մարդիկ, եպիսկոպոսներ, քահանաներ. թագավորն ու թագուհին ասացին.

— **Մի խրատ տվեք մեզ, ի՞նչ անենք:**

— **Եթե թագավորն ինձ լսի,— ասաց մի ճգնավոր,— ես մի խրատ կտամ, և երեխան կառողջանա:**

Կանչեցին ասաջ:

— **Թագավորը, թագուհին և մեծ իշխանը՝ յուրաքանչյուրը մի-մի ճշմարիտ խոսք ասի,— խոսեց ճգնավորը,— տղան կլավանա:**

— **Թեև տասնեկու թագավորների վրա իշխանություն ունեմ,— ասաց աքլան,— բայց երբ մարդ է դալիս մոտս, դարձյալ ձեռքին եմ նայում, թե ինչ նվեր է բերում:**

Երբ թագավորն այս ասաց, երեխայի աչքերը բացվեցին:

— **Ես մի ազքատ մարդու աղջիկ էի,— խոսեց թագուհին,— դարձա թագուհի ու հասա այս իշխանությանը: Բայց երբ մի սիրուն երիտասարդ եմ տեսնում, մտածում եմ՝ ճար լիներ, թագավորիս թունավորեի, հետը ամուսնանայի:**

Տղան անմիջապես սկսեց խոսել:

— **Թագավորության երկրորդ դեմքն եմ,— ասաց մեծ իշխանը:— Ես ազքատ մարդ էի, և գրագիտությանս պատճառով թագավորը տվեց ինձ այս իշխանությունը: Բայց երբ նա մի փոքր բարկանում է վրաս, մտածում եմ՝ ճար լիներ, թագավորիս սպանեի, նրա կինն ու թագավորությունը առնեի ինձ:**

Երբ իշխանն ավարտեց խոսքը, տղան վազեց և գնդակ ու մահակ ուզեց, սբ խազա:

ԽԱԲԵԲԱ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Մի վաճառական բարի անուն էր վաստակել, որովհետև ուրիշ մարդկանց ապրանքը, որ պահ էր տրվում նրան, հավատարմությամբ պահում և ետ էր վերադարձնում ժամանակին: Բայց հենց որ առիթ էր լինում գողանալու, չէր հապաղում:

Մի օտարական, լսելով նրա բարի համբավը, ահագին գանձ տվեց նրան

www.e-pdf.com

պահելու։ Երեք տարի հետո այդ մարդը վաճառականից պահանջեց իր ունեցվածքը։ Իսկ վաճառականը, գիտենալով, որ ո՛չ վկա կա, ո՛չ մուրհակ, ուրացավ։

— Ո՛չ քո ունեցվածքն եմ տեսել, ո՛չ էլ ճանաչում եմ քեզ։

Լսելով այս ամենը՝ մարդը տրտմեց։

Մի պառավ կին, տեսնելով նրան այդպես խիստ տրտում, հարցնում է պատճառը։

— Ով կի՛ն,— ասում է նա,— դու չես կարող ինձ օգնել, ինչո՞ւ ես իզուր հարցնում։

— Աղաչում եմ, ասա՛, ի՞նչ է պատահել, թերևս կարողանամ բարի խրատ տալ։

Մարդը պառավին պատմում է իրեն պատահած դժբախտությունը։

— Ունե՞ս այս քաղաքում հավատարիմ բարեկամ մեկը։

— Շատ բարեկամներ ունեմ,— պատասխանում է մարդը։

— Գնա նրանց մոտ,— խրատում է պառավը,— ասա, թող շատ գեղեցիկ կողովներ գնեն, լցնեն անպետք իրերով, իբրև թե շատ մարգարիտներ, տեսակ-տեսակ ոսկեղեն գանձեր են լցրել մեջը։ Տանելով վաճառականի մոտ՝ թող ասեն, թե՝ «Լսել ենք քո բարի համբավը, ուզում ենք այս գանձերը քեզ մոտ թողնել, որովհետև օտար աշխարհ ենք գնալու»։ Եվ երբ նրանք այդ մասին խոսելիս կլինեն, այն ժամանակ դու, մոտենալով վաճառականին, կխնդրես նրանից քո գանձերը, որ նրա մոտ թողել ես։ Հուսով եմ, որ, ակընկալելով ավելի մեծ շահ և ամաչելով քո բարեկամներից, որպեսզի նրանց աչքում արդար երևա, նա անմիջապես քո ամբողջ ունեցվածքը ետ կվերադարձնի։

Մարդն արեց այնպես, ինչպես խրատել էր պառավը։ Եվ երբ նրա բարեկամները վաճառականի հետ խոսում էին մտացածին գանձերի մասին, իբր թե կամենում են նրա մոտ թողնել, գալիս է մարդը վաճառականի մոտ և պահանջում իր ունեցվածքը։

— Շատ լավ եմ ճանաչում քեզ,— ասում է վաճառականը,— դու այսինչ մարդն ես և այսինչ օրն ես բերել ունեցվածքդ։ Ինչ որ ինձ պահ ես թողել, ահա հավատարմությամբ վերադարձնում եմ քեզ։

Եվ գանձը ետ վերադարձրեց նրան։ Իսկ օտարականը, վերցնելով գանձը, ուրախությամբ գնաց իր տունը։

Այն եղկելի վաճառականը, խաբվելով իր ագահությունից, մնաց դատարկաձեռն։

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ՝ ԿԻՆ

Պատմեմ ձեզ Ֆռանկների մասին մի արտառոց պատմություն՝ իմ ականջով մի Ֆռանկից լսած, որ երդմամբ պատմեց նա Տրապիզոնում քառասուն մարդու ներկայությամբ։

— Գրված է մեր կաթողիկոսների պատմության մեջ, թե մի իշխան իր դստերը ուսումի տվեց։ Եվ նա այնքան արագ առաջադիմեց ուսումնառության մեջ, որ ամբողջ Իտալիայով մեկ տարածվեց նրա համբավը։ Չգիտեին, որ նա աղջիկ է։ Եվ նա, մեծանալով, դնաց մտավ իմաստասերների շրջապատը։ Այնպես վարժ և կիրթ պահեց իրեն իմաստունների և ուսուցչապետների շրջանում, որ բոլորը միաբերան արժանի համարեցին նրան դառնալու եպիս-

www.e-pdf.com

կոպոս ու մտնելու կարդինալների կարգը։ Եվ իբրև եպիսկոպոս ու կարդինալ նա որոշ ժամանակ մնաց պապի վեհարանում։

Ժամանակ անց՝ մեռնում է պապը։ Կարդինալները, որոնք այլ կերպ ասած՝ արքեպիսկոպոսներ են և մեկ աստիճանով են ցածր պապից, իրենց ընտրությամբ ու ցանկությամբ նշանակում են նրան պապ և նստեցնում գահին, այսինքն՝ դարձնում են ամբողջ ազգի հայրապետ կամ կաթողիկոս։ Այսպես նա մնաց շատ ժամանակ և ոչ-ոք գլխի չէր ընկնում, որ նա կին է։

Մի օր, մենակ մնալով եկեղեցու սարկավագի հետ, նա դիմում է նրան՝ ասելով.

— Ո՛վ մարդ, դու կարո՞ղ ես պահել մի գաղտնիք, որ քեզ խոստովանել եմ ուզում։

— Ինչպե՞ս կհամարձակվեմ ես՝ ծառաս ու հողս, խոսել տիրոջս մասին։

— Իմացած եղիր, որ ես կին եմ, և ոչ ոք չգիտե այդ։ Այն օրվանից, որ եկել ես դու իմ դուռը, ցանկացել եմ քեզ, բայց չեմ կարողացել, որովհետև հնարավորություն չի եղել։ Այժմ մենք մենակ ենք, պիտի կատարես իմ կամքը։

Համաձայնելով սարկավագը ապականեց կարծեցյալ պապին։

Դրանից հետո հղիանալով՝ պապը թաքցնում էր իրեն, չէր երևում մարդկանց աչքին, որպեսզի չիմանան։

Իսկ հռոմեացիները սովորություն ունեն տարին երկու կամ երեք անգամ եպիսկոպոսներով, կարդինալներով հավաքվել պապի մոտ կամ գնալ մի ապահով տեղ քաբիթ, այսինքն՝ ժողով անելու։ Մինչ եպիսկոպոսները ողջ ժողովրդի հետ մեկտեղ պապի առջև հավաքված պատրաստվում էին քաբիթն ոկսելու, կարծեցյալ պապի ծննդաբերության ժամանակը հասավ, և նա ծնեց մի արու մանուկ։ Այդ ժամանակ եպիսկոպոսներն ու կարդինալները չկարողացան թաքցնել խայտառակությունը։ Բազմախուռն ամբոխը հարձակվեց, քարկոծեց պապին ու նորածին մանկանը։

Եվ այնուհետև, ապահովության համար սահմանեցին նոր կարգ. կառուցել մի բարձր տախտակամած, որ նոր պապ ընտրելիս, թեկնածուն մերկացած նստի նրա վրա բացված անցքին, որպեսզի բոլորը, ովքեր հավաքվում են տախտակամածի տակ, տեսնեն նրան և ձայն տան միմյանց. «Արո՜ւ է, արո՜ւ է, արո՜ւ է...», և այնուհետև հաստատեն հայրապետական գահին։

Այս սովորությունը պահպանվում է մինչև այսօր։

Եվրոպացիների հոգևորականները՝ ամենքը, սովորություն ունեն նաև սափրել մորուքները։ Այս օրենքը նրանց համար սահմանել է այն ծննդկան պապը, որպեսզի բոլորն անմորուս լինեն իր նման...

Բայց ոչ ոք թող չկարծի, թե սրանք ստեր են և դրված են նախանձից դրդված, որովհետև լսել եմ հենց ֆռանկի բերանից, որը ո՛չ հայերեն գիտեր և ո՛չ պարսկերեն, այլ պատմեց իտալերեն և ինքն էլ կարդացել էր պատմությունը։ Նա մեզ պատմեց չկասկածելով, և մենք գրի առանք, հավատալով նրա վկայությանը։

ԿՆՈՋ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի մարդ երկրից երկիր էր շրջում՝ գրի առնելով կանանց խորամանկությունները։ Այսպես կազմեց երեք մեծ հակ ու դեռ շարունակեց հավաքելը։ Նա գնաց, մտավ մի քաղաք ու հանդիպեց մի շատ խորամանկ կնոջ։

— Բարի՛ եկար,— ասաց կինը նրան ու առաջնորդեց իր տունը՝ մտա-

www.a-pdf.com

ծելով, թե բեռների մեջ կերպաս, ոսկի ու արծաթ շատ կա։ Երեկոյան կինը դիմեց հյուրին։

— Բեռներդ ի՞նչ են, ուզում եմ ինձ անհրաժեշտ բաներ գնել։

— Ծախու ոչինչ չունեմ,— պատասխանեց մարդը։

— Հապա ունեցածդ ի՞նչ է։

— Կնոջ խորամանկություններն են,— ասաց հյուրը,— շրջել եմ երկրից երկիր, գրի առել։ Եկա այստեղ, որ էլի գրեմ։

Եվ կինը որոշեց վառել նրա բեռները։ Հնարը գտավ։ Տան մեջ կար մի մեծ փուռ, որ երեք բեռ թուղթ էր տեղավորում։ Կինը փուռը վառեց ու վերադառնալով ձուկ տապակեց։ Նա տապակած ձուկը դրեց հյուրի առջև ու փակեց տան երեք դռները։ Հյուրն սկսեց ձուկն ուտել։ Իսկ ինքը, օգնություն կանչելով, սկսեց ճչալ բարձր ձայնով։ Հարևանները սրեր ու բահեր առած՝ եկան բախեցին դուռը։

— Վառի՛ր թղթերդ, թե չէ սպանել կտամ քեզ,— ասաց կինը հյուրին։

Մարդն ստիպված վառվող փռի մեջ նետեց բոլոր թղթերը։ Կինը գնաց. րացեց դուռը և ասաց հավաքված հարևաններին.

— Այս քանի տարի է, չէի տեսել իմ միակ հորեղբորորդուն։ Նա եկավ իմ տուն, ու ես հյուրասիրեցի ձկով։ Փուշը մտավ կոկորդը, և նա մեռնելուց հազիվ ազատվեց։

Հարևանները ներս մտան, տեսան, որ, իսկապես, ձուկ կար դրված սեղանին։ Հավատացին ու գնացին։

ԲԱՐԻ ՄԱՐԴՆ ՈՒ ՆՐԱ ԷՇԸ

Մի բարի մարդ ամբողջ ունեցվածքը բաժանեց աղքատներին, բայց իրեն պահեց միայն մի էշ, որով տեղ-մեղ էր գնում։ Մի օր գնաց եկեղեցի աղոթելու և էշը կապեց եկեղեցու դռանը։ Երբ սկսեց ասել. «Հայր մեր, որ հերկինս», միտքն ընկավ, որ էշը դռանն է։ «Սուրբ եղիցի անուն» ասելուն պես մտածեց, որ մեկը կարող է գողանալ էշը։ Եվ երբ մրմնջաց՝ «եկեսցե արքայությունն», եզրակացրեց, որ եթե էշը գողանան, ինքը կդժվարանա ոտքով մանգալ։ Իսկ երբ ասաց. «եղիցին կամք քո», հիշեց, որ էշը քաղցած է։

Դուրս ելնելով եկեղեցուց՝ ասաց.

— Է՛, իմ պարոն էշ, դու ավելի շատ հիշվեցիր աղոթքիս մեջ, քան Աստված։ Ով որ էշ ունի, ծառա է իշուն։

Եվ էշը տալով հիվանդ աղքատներին՝ ինքն ազատվեց հոգսից։

ԿՈՂՈՊՏՎԱԾ ԿՈՒՅՐԸ

Երզնկայում ապրում էր մի կույր մարդ, որն ուներ վաթսուն հազար դեկան ու միշտ ուրախանում էր իր ունեցվածքով։ Մի թուրք գողացավ նրա հարստությունը։ Կույրն աղաղակ բարձրացրեց։ Մարդիկ եկան նրան մխիթարելու։ Անօրեն գողը նույնպես եկավ մխիթարելու, բերելով մի հաց։ Կույրը սկսեց հացն ուտել, ապա բռնելով նրան՝ գոչեց.

— Սա է գողացել իմ փողը։

— Ինչի՞ց իմացար,— հարցրին մարդիկ։

— Հացը դառնացավ կոկորդումս,— պատասխանեց կույրը։

Եվ Երզնկայի իշխան Թաղրաթանը, թուրքից վերցնելով քառասուն հազարը, վերադարձրեց տիրոջը։

www.a-pdf.com

Ոմն թագավոր, մի օր որոշելով բարեգործություն անել ու ազատել քրեական հանցագործներից մեկին, գնում է բանտ, սկսում մեկ առ մեկ հարցաքննել կալանավորներին։ Իսկ նրանք, բոլորը չքմեղ լինելով, պատմում են, որ իրենք անմեղ ու համեստ մարդիկ են, անարդար կերպով են բանտ ընկել։

Մի երիտասարդ կալանավոր, անկեղծորեն պատմելով իր գործած հանցանքների մասին, նշեց, որ ինքը արժանի էր մահվան, բայց իշխանությունը, խղճալով, կյանք էր շնորհել ու դատապարտել ցմահ բանտարկության։

Թագավորը կեղծ բարկությամբ հրամայում է բանտի վերակացուին.

— Այսքան համեստ ու անմեղ մարդկանց միջից անմիջապես դուրս արեք այս գայլին, որպեսզի չմնա նրանց հետ ու իր վատ վարքով չապականի բոլորին։

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԾԵՐՈՒՆԻՆ

Բաբելոնի թագավորը մեծ զորաբանակով քաղաք մտնելիս տեսավ մի ծերունու, որ արմավենի էր տնկում։

— Ով ծերունի,— ասում է թագավորը,— ինչո՞ւ ես տնկում։ Չէ՞ որ դա քառասուն տարի հետո պիտի պտուղ տա, իսկ դու այսօր-վաղը գնալու ես։

— Թագավո՛ր,— պատասխանում է ծերունին,— մի մարդ տնկել էր արմավենի, ես վայելեցի պտուղը, ես էլ տնկում եմ, որ մեկը ուրիշը վայելի։

— Տվեք նրան հազար դրամ,— հրամայում է թագավորն իր ենթականերին,— որովհետև բարի ու լավախոհ մարդ է։

Վերցնելով դրամը՝ ծերունին գոհ եղավ ճակատագրից։

— Ինչո՞ւ գոհ եղար,— հարցնում է թագավորը։

— Որովհետև,— պատասխանում է ծերունին,— ամեն ծառ տնկող քառասուն տարին լրանալուց հետո է վայելում, իսկ ես այսօր վայելեցի։

— Դարձյալ տվեք նրան հազար դրամ,— հրամայում է թագավորը։

Ծերունին նորից արտահայտեց իր գոհունակությունը։

— Ինչո՞ւ կրկին հայտնեցիր գոհունակություն,— հարցնում է արքան։

— Գոհ եղա ճակատագրից, որովհետև ամեն տունկ տարին մի անգամ է պտուղ տալիս, իսկ իմ ծառը այսօր երկու անգամ պտուղ տվեց։

Թագավորին հաճելի թվաց ծերունու պատասխանը։

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՆՐԱ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մի թագավոր, վեճ ունենալով սահմանակից երկրի թագավորի հետ, որոշեց մի համարձակ ու հմուտ դեսպան ուղարկել նրա մոտ, որպեսզի իր կողմից հանդիմանություն ու սպառնալիք կարդա նրան։ Ընտրությունը կանգ առավ մի իմաստուն մարդու վրա, որն իր ուսուցիչն էր եղել ու հավատարիմ մարդը։ Թագավորը հայտնեց նրան իր դիտավորությունը և այն բոլոր հոխորտանքները, որ պիտի հաղորդվեր։

Ուսուցիչը, որ շատ լավ գիտեր հակառակորդ թագավորի ցասկոտ բնավորությունը և անզուսպ վարքը, հրաժարվեց։

— Խնդրում եմ, արքա, ազատիր ինձ այդ դեսպանությունից, հակառակ դեպքում նա գլուխս կտրել կտա։

— Բոլորովին մի՛ վախեցիր,— քաջալերելով նրան՝ ասում է թագավո-

www.a-pdf.com

րը,— եթե նա քո գլուխը կարի, ես խոստանում եմ, այստեղ իմ ներքյան մեջ գտնել նրա բոլոր հպատակներին և գլխատել։

— Ճիշտն ասած, արքա, հավատում եմ քեզ, որ կարող ես անել այն, ինչ ասում ես,— պատասխանում է ուսուցիչը,— բայց աղաչում եմ հավատալ, որ նրա հպատակների այդքան կտրած գլուխների մեջ չես կարող գտնել մի այնպիսի գլուխ, որ այնքան հարմար լինի իմ անձին, ինչպես իմ գլուխը։

ԻՄԱՍՏԱՍԵՐՆ ՈՒ ԳԻՆԻՆ

Մի իմաստասերի հրավիրեցին թագավորական խնջույքի։ Նա իշխանների հետ սեղան նստեց, և մատուցողը ոսկե բաժակով գինի մատուցեց նրան։

— Ո՛վ բարի թագավոր,— ասաց նա՝ ոտքի կանգնելով,— խմում եմ այս գինին հանուն քո փառքի։— Ու գինին թափեց գետնին։

— Հիմարացա՞ր, ով իմաստասեր,— ծիծաղելով հարցնում են իշխանները։

— Դուք եք ծիծաղելի,— ասաց իմաստասերը,— ես գետնին թափեցի գինին, եթե խմեի՝ գինի՛ն պիտի ինձ գետներ։

Եթե խմեմ գինին, և՛ նա է թափվելու, և՛ ես, ուստի լավ է, որ միայն գինին թափվի։

ԳԻՆՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

Երեք ճգնավոր մի անապատում աղոթում էին։ Մանկությունից էին նրանք տարվել անապատ և չգիտեին աշխարհի ինչ լինելը։ Եվ մի օր թողին աղոթելն ու ճգնությունը և միասին նստած հարցրին իրար, թե ինչ է փառքը աշխարհի։ Առաջինն ասաց, թե գինին են գովում, որովհետև նա սիրո օրինակն է։ Մյուսն ասաց, թե միսն են գովում բոլոր կերակուրների մեջ։ Երրորդն ասաց, թե պոռնկությունն են գովում։

Եվ թողնելով հոգևոր մշակությունը՝ առաջինն ասաց՝ գնում եմ գինի խմելու, տեսնեմ, թե գինին ինչ հաճույք կամ բնույթ ունի։ Երկրորդն ասաց. միս ուտեմ և իմանամ նրա համն ու բնույթը։ Մյուսն ասաց՝ ես գնամ կնոջ մոտ և մեղքի համն առնեմ։

Եկան քաղաք։ Նա, որ ասաց միս ուտեմ, գնաց խոհակերանոց և հոտած մսի գարշ հոտն առավ, ասաց.

— Թե սա է միսը, որ գովում են, սա ինձ համար չէ,— ու վերադարձավ անապատ։

Նա, որ գնաց կնոջ մոտ, տեսավ, որ կանայք ու տղամարդիկ առանց ամոթի ու պատկառանքի շար գործ են անում, ասաց.

— Վայ ձեր կյանքին, որ անցավոր կյանքի համար զրկվում եք անանց փառքից,— և դժոխքի հոտն առնելով՝ փախավ։

Այն, որ ասաց գինի խմեմ, գնաց գինետան դուռը, տեսավ՝ շատ գեղեցիկ երիտասարդներ նստած մեղաց գինին են ըմպում։ Սիրով մեծարեցին նրան, և երբ գինով հարբեց, միս կերավ, և երբ փորը լցրեց մսով ու գինով, գնաց շնացավ։

Այսպես այն երկուսն ազատվեցին, իսկ գինեխումը կործանվեց։ Պարզ է, որ գինին է բոլոր մեղքերի մայրը և բոլոր մեղքերը գինին է գործել տալիս։

www.a-pdf.com

Առաքինի մի կրոնավոր հիվանդացավ։ Անհրաժեշտ եղավ որոշ ժամանակ մնալ հիվանդանոցում։ Երբ մոտեցավ վանք վերադառնալու օրը, և տեսնելով, որ նեղսրտություն է գալիս վրան՝ ասում է ծիծաղելով.

— Այնքան դժվար է թվում ինձ վանք վերադառնալը, ինչպես առաջին անգամ, երբ թողնելով աշխարհը՝ կուսակրոնություն ընտրեցի։

ԱԲԵՂԱՆ ԵՎ ԹՈՒՅՆԸ

Մի աբեղա ցանկանում էր դառնալ վանքի առաջնորդ, բայց գիտեր, որ վանահոր կենդանության դեպքում չի կարող հասնել դրան։ Հնարը գտավ։ Մի մանուկ կրոնավորի, որին վանահայրը հաճախ էր ծեծում, տվեց մի քիչ մահացու դեղ՝ թույն, ասելով.

— Եթե այս փոշին ցանես վանահոր կերակրի մեջ, միշտ կսիրի քեզ և այլևս չի ծեծի։

Անմեղ մանուկը, առնելով փոշին, մտածում է ինքն իրեն.

— Կեսը միայն կցանեմ, իսկ եթե կրկին փոքր-ինչ բարկանա, մնացածն էլ կլցնեմ։

Մանուկը լցրեց փոշին վանահոր կերակրի մեջ, ու նա մահացավ։ Այն ժամանակ մարդասպան աբեղան, հասնելով առաջնորդության, սկսեց նախորդ վանահոր նման նույն մանկանը ծեծել։

Եվ նա ասում է ինքն իրեն.

— Ճիշտ վարվեցի, որ փոշու կեսը պահեցի։

ՔԱՂՑԱԾ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԱՐԻՔԸ

Տիրատուր վարդապետին տարան ծառայության և մոռացան այդ օրը հաց տալ։ Երեկոյան ուղեկցեցին տուն։

— Վարդապետ, քանի՞ տարեկան ես,— հարցնում է պարոնը։

— Քառասուն տարեկան, բայց մի օրը հանած։

— Մեկ օրն ինչո՞ւ է հանած,— զարմանում է պարոնը։

— Այս օրը, որ քաղցած պահեցիր, ժամանակից դուրս է։

ՀՐԵԱՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ

Մի հրեա հորն էր ընկել։ Օրը շաբաթ էր, եկավ մի քրիստոնյա, տեսնելով նրան, ասաց.

— Պարան բերեմ, քեզ հորից դուրս հանեմ։

— Չեմ ուզում,— ասաց հրեան,— որովհետև օրը շաբաթ է։

Հաջորդ օրը քրիստոնյան դարձյալ եկավ հորի մոտ։

— Հանիր ինձ,— խնդրեց հրեան։

— Չեմ ուզում,— պատասխանեց քրիստոնյան,— որովհետև օրը կիրակի է։

www.a-pdf.com

Խաչատուր անունով մի չրաղացպան հիվանդացավ, հրեշտակն եկավ հոգին առնելու։ Իսկ նա աղաչեց հրեշտակին.

— Մեղավոր եմ, ապաշխարելու ժամանակ տուր։

Հրեշտակը Աստծու հրամանով նրան տասնհինգ տարի ժամանակ տվեց՝ ասելով.

— Լա՛վ, աղոթիր ու ապաշխարիր։

Եվ նա, առողջանալով մտածում է. «Տասնհինգ տարին շատ է ապաշխարելու համար. տասը ուտեմ-խմեմ, հինգն ապաշխարեմ»։

Երբ տասը տարին անցավ, մտածեց. «Չորսն ուտեմ, մեկն ապաշխարեմ»։ Երբ սա ևս լրացավ, ասաց. «Տասնմեկ ամիսն ուտեմ-խմեմ, մեկ ամիսը բավական է»։ Իսկ հետո ասաց. «Քսանհինգ օրն ուտեմ, հինգ օր ապաշխարեմ»։

Տասնհինգ տարի բոլորովին չապաշխարեց և մտքում ասում է. «Ինչ որ ասաց հրեշտակը, չկատարեցի։ Փախչեմ հաբեշների աշխարհը գնամ, երեսս սևեմ և լեզուս փոխեմ, որ երբ հրեշտակը գա՝ չճանաչի ինձ»։

Եվ հագնելով արաբ կնոջ շորեր, մրով սևացնելով երեսը՝ ճանապարհ էր գնում արաբ կանանց հետ։ Երբ տասն օրը լրացավ, հրեշտակն եկավ ու ասաց.

— Ո՞ւր ես գնում, չրաղացպան։

Նա սկսեց արաբերեն խոսել.

— Քեզ չեմ ճանաչում, աշտա, խալ սադի։

Եվ ասում է հրեշտակին.

— Ի՞նչ ես ասում, պարոն։

Հրեշտակն ասում է.

— Ո՛վ ողորմելի, այն ժամանակ սպիտակ երեսով չեկար արքայություն, հիմա արի սև երեսով դժոխք տանեմ։

Հոգին առավ և տարավ դժոխք։

ԳՈՂ ԿՐՈՆԱՎՈՐԸ

Մի կրոնավոր, գալով խոստովանահոր մոտ, ասում է.

— Հա՛յր, թողություն արա ինձ և աղոթիր ինձ համար, քանի որ գողանում ու թաքուն ուտում եմ։

— Ինչո՞ւ ես այդ անում, սովա՞ծ ես մնում։

— Այո, այդպես է. չեմ բավարարվում տրված կերակրով և չեմ համարձակվում նորից խնդրել։

Խոստովանահայրն ասում է.

— Ինչո՞ւ չես գնում վանահոր մոտ, որ պատմես նրան կարիքներդ։

— Ամոթը չի թողնում ինձ,— ասում է նա։

Խոստովանահայրը հարցնում է.

— Ուզո՞ւմ ես, ես կասեմ վանահորը քո կարիքների մասին։

— Արա՝ ինչպես կամենաս,— պատասխանում է կրոնավորը։

Խոստովանահայրը գնաց առաջնորդի մոտ և պատմեց նրան։ Իսկ նա ասում է.

— Ինչպես քեզ լավ է թվում, արա։

Այն ժամանակ խոստովանահայրը, առնելով կրոնավորին, գնաց մառանապետի մոտ և ասաց.

www.a-pdf.com

— Այս եղբայրը ինչքան գա քեզ մոտ, կերակրիր՝ որքան կամենա և երբեք մի արգելիր։

Նվ նա այդպես էր անում։

Դարձյալ մի քանի օր հետո կրոնավորն եկավ խոստովանահոր մոտ և ասում է.

— Թողություն արա ինձ, հայր, դարձյալ գողանում ու թաքուն ուտում եմ։

Խոստովանահայրը հարցրեց նրան.

— Ինչո՞ւ ես այդ անում, տնտեսը մերժո՞ւմ է՝ ինչ որ ուզում ես։

— Ո՛չ,— ասում է նա,— ընդհակառակն, ինչ որ ուզում եմ սիրով տալիս է, բայց ես ամաչում եմ։

Այնժամ խոստովանահայրն ասում է.

— Թե՞ ես քեզ տայի, կամաչե՞իր։

Պատասխանում է.

— Ո՛չ։

Նվ նա ասում է.

— Ուրեմն արի ինձ մոտ և առ, ինչ կամենում ես և մի գողանա։

Ու նա գալիս էր նրա մոտ և ուզածն առնում։

Շուտով կրկին սկսեց գողանալ և գալով խոստովանահոր մոտ՝ տխուր ու վշտագին ասում է.

— Հայր, ես նորից գողանում եմ։

Նվ նա ասում է.

— Ինչո՞ւ, սիրելիս, քո ո՞ր ուզածը չեմ տալիս։

— Ոչինչ,— ասում է նա։

Խոստովանահայրն ասում է.

— Բա ինչո՞ւ ես գողանում։

Պատասխանում է.

— Թողություն արա, չգիտեմ, թե ինչու եմ գողանում։

Իսկ նա հարցնում է.

— Ասա ինձ, ի՞նչ ես անում այն, որ գողանում ես։

— Ավանակներին եմ տալիս,— պատասխանում է նա։

Պարզվեց, որ գողանում էր բակլա, սիսեռ, սոխ, թուզ, չամիչ և սրանց նման այլ բաներ, ինչ պատահեր, և այդ ամենի կեսը ուրիշ տեղ պահում էր և երբ չգիտեր, թե ինչ անի, ավանակի և այլ անասունների առաջ էր դնում։

Եղբայրներ, տեսեք, թե ինչպիսի թշվառություն է վատ սովորությը, որ եթե մեկը որևէ ախտի հետևի, անպայման մեղքերին գերի կդառնա։

ՄԵԾԱԽՈՍ ՃԳՆԱՎՈՐԸ

Մի ճգնավոր ուներ փոքրիկ մի աշակերտ և ամեն օր ուղարկում էր աղբյուրը ջրի։ Տղան գնում, փաթչը լցնում էր ջրով և երբ ուզում էր գալ, մի սատանա, պատանու կերպարանքով ելնում էր աղբյուրից, աշակերտի ձեռքից վերցնում էր ջուրը և խաղ անելով՝ թափում։ Ինչքան նա լցնում էր, սատանան թափում էր և ուշացնում տղային, որ ճգնավորը բարկանա կամ հայհոյի կամ մեծ-մեծ խոսի։ Այդպես էլ եղավ։

Մի օր ճգնավորը հարցրեց աշակերտին.

— Երբ գնում ես աղբյուրը, ինչո՞ւ ես ուշանում։

Աշակերտն ասում է.

www.e-pdf.com

— Աղբյուրից մի տղա է դուրս գալիս և խաղալով ջուրս թափում։ Քանի ես լցնում եմ, որ գամ, նա չի թողնում, դրա համար ուշանում եմ։

Ու մի օր էլ աշակերտը շատ ուշացավ, իսկ ճգնավորը խիստ ծարավեց և զայրացավ։ Երբ աշակերտն եկավ, ասաց նրան.

— Որդյակ, եթե մի անգամ էլ աղբյուրը գնաս և այն տղան գա հետդ խաղալու, դու ասա նրան՝ թե լավ մարդ ես, գնա վարդապետիս հետ խաղա։

Մյուս անգամ աշակերտը գնաց աղբյուրը ջրի, սատանան ելավ աղբյուրից, որ հետը խաղ անի։ Աշակերտն ասաց.

— Թե լավ խաղացող ես, գնա իմ վարդապետի հետ խաղա։

Սատանան հարցրեց.

— Այդ խոսքը քեզնի՞ց ես ասում, թե վարդապետդ է ասել։

— Վարդապետս ասաց,— պատասխանում է աշակերտը։

— Ջուրն առ ու գնա,— ասաց սատանան,— դու ինձնից ազատվեցիր, ես գնամ վարդապետիդ հետ խաղամ։

Սատանան, որ նախ պատանու կերպարանքով էր, գնաց, հակառակվեց ճգնավորին, մինչև նրան հասցրեց շնության, հարբեցողության, գողության և այլ չարագործությունների։

Եվ մի օր քաղաքացիները հավաքվեցին ու գնացին դատավորի մոտ, պատմեցին ճգնավորի բոլոր չարագործությունները։ Դատավորը հրամայեց կախել նրան։ Առան-տարան կախելու։ Վերջին պահին հայտնվեց սատանան ու ասաց.

— Ճգնավո՛ր աբեղա, քեզ հետ էլի՞ խաղամ, թե՞ բավական է։

Այստեղ աբեղան հասկացավ, որ պատճառը այն օրվա հպարտ խոսքն էր, որ ասաց աշակերտին՝ «Գնա ասա, թե լավ խաղացող է, թող գա ինձ հետ խաղա»։

Երբ աբեղան լսեց սատանայի խոսքը, երեսի վրա ընկավ և աղաչեց դահիճներին՝ չկախել իրեն, այլ տանել դատավորի մոտ։ Տարան։ Աբեղան, սկզբից ինչ որ եղել էր, բոլորը պատմեց՝ խոստովանելով իր մեղքերի պատճառը, սատանային պարտվելը։ Այն ժամանակ դատավորը ազատեց աբեղային ու ասաց.

— Այլևս մեծ-մեծ չխոսես, որ փորձանքի չհանդիպես։

Ճշմարիտ է սա. մարդ բոլորովին չպիտի մեծախոսի կամ պարծենա, թե ես այս կանեմ։ Ասացվածք կա՝ «Մի բան արա, հետո պարծեցիր»։

ՄԻ ԱՌԱԿ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մի վարդապետ աշակերտին համբերություն սովորեցնելու համար, նրան ուղարկում է գերեզմանատուն՝ շիրմաքարերը գովելու։ Մյուս օրը ուղարկում է նախատելու և հայհոյելու, իսկ հետո հարցնում է.

— Քո գովելուց քարերը հպարտացա՞ն։

— Ասում է՝ ոչ։

— Իսկ հայհոյելուդ դժգոհեցի՞ն արդյոք և որևէ բան ասացի՞ն։

— Ամենևին ոչ։

— Դու ևս գնա,— ասում է վարդապետը,— այդպես արա։ Գովեստից մի փքվիր և անարգելուց մի տրտմիր։

www.a-pdf.com

Ալեքսանդրը տեսավ մի իմաստուն, որ ննջում էր կարասում և ասաց.

— Ո՛վ կարաս, լի՛ իմաստությամբ:

— Թող մի կաթիլ բախտ ունենայի և ոչ թե մի կարաս իմաստություն,— արթնանալով ասաց իմաստունը:

— Ես կուզեի մի կաթիլ խելք և ո՛չ մի կարաս լիքը բախտ,— ասում է արքան:

Իմաստունն ասում է.

— Տեսնում եմ իմաստուններին, որ շրջում են բախտավորների դռներում:

Արքան ասում է.

— Խնդրիր ինձնից ինչ որ քեզ պետք է՝ կտամ:

— Դու չես կարող տալ ինչ որ ինձ պետք է,— ասում է իմաստունը:

— Ես ամբողջ աշխարհի թագավորն եմ և քեզ պետք եղածը չե՞մ կարող տալ,— զարմացավ արքան:

— Ինձ անմահությո՛ւն տուր,— ասում է իմաստունը:

— Անմահություն տվողն Աստված է միայն,— պատասխանում է արքան:

Եվ իմաստունն ասում է.

— Իսկ ինչ որ դու կարող ես տալ, ինձ պետք չէ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԸ ԵՎ ՄԵՐԿ ԻՄԱՍՏԱՍԵՐՆԵՐԸ

Ալեքսանդրի պատմության մեջ գրված է այսպես. երբ նա սպանեց հնդիկների Պորրաս թագավորին և գնաց առաջ, հանդիպեց մերկ իմաստասերների, բազում բաներ հարցրեց նրանց, ու նրանք պատասխանեցին:

Առաջին հարցն այս էր.

— Ի՞նչն է դառն աշխարհում:

Նրանք պատասխանեցին.

— Նախանձը և ատելությունը ամեն ինչից դառն են, ավելի՝ քան օճառն ու լեղին:

— Իսկ ի՞նչն է քաղցր:

— Ընկերասիրությունն ու միաբանությունն ավելի քաղցր են, քան մեղրն ու շաքարը:

Եվ հարցրեց.

— Ի՞նչն է աշխարհում ծանր:

— Ջարախոսությունն ու զրպարտությունը, երբ մարդ անմեղ է լինում և իզուր դատապարտում են, տուգանում կամ չարչարում: Դա ծանր է, քան արճիճն ու երկաթը:

— Իսկ թեթև ի՞նչն է:

— Խոնարհությունն ու հնազանդությունը:

— Աշխարհիս ո՞ր կողմն է լավ,— հարցրեց Ալեքսանդրը:

— Արևելքը, որ լույս է ծագում և առողջարար օդ ուղարկում բոլոր կողմերը:

— Իսկ մարդու ո՞ր կողմն է լավ, ա՞ջը, թե՞ ձախը,— հարցրեց նա:

Պատասխանեցին.

— Տղամարդու ձախը, կնոջ աջն է լավ՝ որդեծնության համար:

— Որ այդպես իմաստուն եք,— ասաց թագավորը,— խնդրեցեք՝ ինչ կամենաք, և ես ձեզ կտամ:

www.a-pdf.com

Եվ նրանք միաբերան ասում են.

— Մեզ անմահություն տուր:

Թագավորն ասաց.

— Ինքս եմ մահկանացու, ինչպե՞ս կարող եմ ձեզ տալ անմահություն:

Իմաստուններն ասում են.

— Գիտե՞ս, որ մահկանացու ես:

Ասում է՝ Այո:

— Բա ինչո՞ւ չես հանգստանում և խաղաղություն հաստատում աշխարհում: Մի՛ շրջիր,— ասում են,— այլ գնա՛, նստիր գահիդ և խաղաղություն տուր աշխարհին:

ԱԼԵՔՍԱՆԴՐԸ ԵՎ ՀՆԴԻԿ ԱՂԵՂՆԱՎՈՐԸ

Ալեքսանդրը մի հնդիկ աղեղնավորից լսեց, թե կարող է մատանու ակից անցկացնել նետը: Հրամայեց՝ խփել մատանուն: Իսկ նա հրաժարվեց, որի համար արքան բարկացավ, կարգադրեց սպանել նրան: Եվ դահիճը, հանդիմանելով աղեղնավորին, ասաց.

— Ինչո՞ւ չխփեցիր, որ կենդանի մնայիր, իսկ հիմա մեռնում ես իզուր:

Եվ նա պատասխանեց.

— Շատ ժամանակ է, որ աղեղը ձեռքս չեմ առել, վախեցա, թե փառքս կորցնեմ:

Սա անմիջապես հայտնեցին թագավորին: Եվ նա շատ զարմացավ, ազատեց մարդուն, բազմաթիվ նվերներ տվեց այն բանի համար, որ մահն հանձն առավ, որպեսզի հանկարծ իր փառքին անարժան չերևա:

ԲԱՄԲԱՍԿՈՏ ԿԻՆԸ

Հովհաննես Կարճին հարցրեցին, թե արատավոր մարդն ինչպե՞ս կարող է իրեն թողած՝ ուրիշներին բամբասել:

— Լսիր այս առակը:

Մի մարդ կամեցավ մի աղքատ կնոջ հետ ամուսնանալ, որովհետև ինքն աղքատ էր: Մի այլ կին ցանկացավ նրան. սա ևս աղքատ էր: Եվ մարդը երկուսին էլ տարավ իր տունը, երկուսն էլ մերկ էին: Երեկոյան կանանցից մեկն ելավ՝ աղբանոցներից ու փողոցներից թափված հնոտիներ հավաքեց, դրանք կցմցելով՝ ամոթանքը ծածկեց:

Երբ մյուս կինը տեսավ, ասաց մարդուն.

— Տեսնո՞ւմ ես այս անպատկառին, որ շրջում է մերկ ու չի ամաչում:

Մարդն ասաց.

— Դու բոլորովին մերկ ես, չես ամաչում և նրա՞ն ես բամբասում:

ՏԳԵՂ ԿԻՆԸ

Մի մարդ տգեղ կին ուներ: Մի օր տեսնելով կնոջը անտրամադիր՝ հարցնում է.

— Ինչո՞ւ ես տրտմել:

— Այսօր հայելուն նայեցի,— պատասխանում է կինը,— տգեղությանս պատճառով անտրամադիր դարձա:

— Դու մեկ անգամ նայելով ես այդչափ տրտմել,— չի համբերում ամուսինը,— ես ամեն օր եմ տխուր, որովհետև ամեն օր եմ երեսդ տեսնում:

www.a-pdf.com

Մի մարդ իր կնոջ հետ անցնում էր հնձած արտի մոտով։

— Տեսնո՞ւմ ես, որքան գեղեցիկ ու լավ է հնձած արտը,— ասում է նա կնոջը։

— Ոչ թե հնձած է, այլ խուզած,— հակաճառում է կինը ամուսնուն։

Քանի ամուսինն ասում է՝ հնձած է, կինը թե՝ չէ, խուզած է։

Բարկանալով՝ ամուսինը կնոջը նետում է ջուրը։

Եվ քանի որ կինն այլևս չէր կարող խոսել, ուստի հանեց ձեռքը ջրից դուրս ու, երկու մատները մկրատի կերպ շարժելով, մինչև մեռնելը պնդեց, թե արտը խուզած է։

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՐԴԸ

Մի մարդ տուն էր շինում։ Փորում է տան հիմքը, շարում աղյուսով, իսկ աղյուսի վրա շարում է քար։

— Ի՞նչ ես տեսում, եղբայր,— առում է մեկը,— պետք է ներքևում քարը շարել, վերևում՝ աղյուսը։

— Պատրաստվում եմ ամուսնանալու,— ծիծաղելով պատասխանում է տանտերը,— կինս եկավ, միևնույն է, շուտ է տալու տունը, պատերը կուղղվեն։

ԱԼԵՔՍԱՆԴՐԸ, ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԱՆԱՅՔ ԵՎ ԱՐԻՍՏՈՏԵԼԸ

Առում են, Ալեքսանդր Մեծն ուներ տասներկու կին և Արիստոտելի խորհրդով բացի մեկից բոլորին արձակեց։ Կանանցից մեկը Արիստոտելի տան ճանապարհին բնակարան վարձեց, և ինչքան Արիստոտելն անցնում էր, ամեն զարդարված կանգնում էր դռանը։ Նրան տեսնելով՝ Արիստոտելն սկսեց ցանկանալ։ Կինն իմացավ, կանչեց նրան իր մոտ և խոստացավ այսինչ օրը նրա կամքը կատարել, բայց նախ լուր ուղարկեց, կանչեց Ալեքսանդրին։

Պայմանավորված օրը Արիստոտելն եկավ։ Նա ծեր էր և երկայնամորուս։ Կինն ասաց.

— Ջե՛մ կարող կատարել քո իղձը, եթե ինձ չառնես ուսիդ և յոթն անգամ պտույտ չտաս շենքի գավթում։

Ծերունին համաձայնեց և մինչ կատարեց պայմանը և ուզում էին գնալ ժամանցին, Ալեքսանդրը չհամբերեց, մերկացրեց սուրը, վազեց սպանելու Արիստոտելին՝ ասելով.

— Մ՛ավ չար ծերունի, դրան ինձնից հեռացրիր, որ դո՛ւ վայելես։

Արիստոտելն ասաց.

— Համբերի՛ր, ով թագավոր, ես քեզ կասեմ։ Ես որ փիլիսոփա և իմաստասեր էի, մանավանդ ծեր ու երկայնամորուս, այս աղջիկն ինձ այսպես խեղճացրեց. դու երիտասարդ ու փափկասուն ես, քեզ համար ի՞նչ որոգայթ էր լաթելու։

Այս ասելով՝ մեղմեց Ալեքսանդրի բարկությունն ու ազատվեց մահից։

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՄԵՐՈՍԸ ԵՎ ՁԿՆՈՐՍՆԵՐԸ

Բանաստեղծ Հոմերոսը արկադացիների գավառում ձկնորսների հանդիպեց, որ իրենց վրայից միջատներ էին հանում, և այսպես հարցրեց նրանց։

www.a-pdf.com

— Ո՛վ արկադացի ձկնորսներ, արդյոք մի բան ձեր ձեռքն ընկե՞լ է:

Հարցի իմաստն այս էր. «Ով մարդիկ՝ արհեստով ձկնորս, արդյոք որևէ բան որսացե՞լ եք»:

Նրանք պատասխանում են այսպիսի հանելուկով.

— Այն, որ բռնեցինք, դրան չէինք հետապնդում, իսկ որ չենք բռնել՝ մոտներս ունենք:

Դա նշանակում էր. «Միջատներից որը բռնեցինք՝ սպանեցինք, և որոնք չենք բռնել, մեզ վրա են»:

Եվ քանի որ Հոմերոսը չհասկացավ այս առեղծվածը, շուտով վշտից մահացավ:

ՀԱՅԸ ՍՈՒՏ ՉԻ ԽՈՍԻ

Մի հայ սպանել էր մի ադրբեջանցի մարդու: Ձերբակալելով նրան՝ հանձնեցին Շահ-Աբբասի գատին:

— Դո՞ւ ես սպանել այդ մարդուն, թե՞ ոչ,— հարցրել էր նրան Շահ-Աբբասը: «Թե՞ ոչ» ասելով, թագավորը կամեցել էր ազդել նրա վրա, որ ասի՝ ոչ:

Հայը խոստովանել էր, թե՝ այո, ինքն է սպանողը:

Թագավորը հրամայել է այդ օրը հետաձգել դատը՝ ասելով.

— Հարբած է:

Հետևյալ օրը արքան կրկնել է նույն հարցը, բայց հայը դարձյալ նույնն է պատասխանել:

— Հարբածության թմրությունը վրան է,— ասելով, այս անգամ ևս թագավորը հետաձգել է դատը:

Եվ երրորդ օրը իր հարցի դիմաց հայից լսելով նույն խոստովանությունը՝ Շահ-Աբբասը բողոքարկուին առաջարկել է.

— Ես յուրաքանչյուր հայի վրա ծախսել եմ հազար թուման, մինչև որ հասցրել եմ այստեղ: Տուր ինձ հազար թուման, և ես քեզ կհանձնեմ մահապարտ հային, որ սպանես:

Երբ բողոքարկուն հրաժարվել է արքայի առաջարկությունից, արքան հային ազատ է արձակել:

Այն մահապարտ հայի ճշմարիտ խոստովանությունից սկսած՝ մինչև այսօր էլ պարսիկները ասացվածք ունեն, թե «Հայը սուտ չի խոսի»:

ՇԱՀ-ԱԲԲԱՍԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Շահ-Աբբասը ոչ միայն կառուցում էր բազմաթիվ շենքեր, այլև տնկում էր այգիներ ու պարտեզներ: Մերերի պատմելով, հայերը գաղտնի հանում էին Շահ-Աբբասի տնկած ծառերը ու տանում: Իմացավ այդ մասին Շահ-Աբբասը և պատվիրեց ծառաներին հետևել ու տեսնել, թե ի՞նչ են անում հայերը գողացած տնկիները:

Եվ երբ տեղեկացավ, որ այդ ծառերը նրանք տնկում են իրենց տների շուրջը ու այգիներում, ուրախությամբ հրամայեց այգեպաններին ավելի շատ տնկիներ դնել ու, չտեսնելու տալով, թույլատրել հայերին տանել՝ որքան ուզում են:

www.a-pdf.com

Մի անգամ, երբ Շահ-Աբբասը անցնելիս է լինում, մի հարբած հայ մոտենալով բռնում է նրա նժույգի սանձից ու ասում.

— Քանիսո՞վ ես վաճառում այս ձին, ես առնել եմ ուզում։

Շահ-Աբբասը հրամայում է ծառաներին նրան տուն տանել և հաջորդ օրը բերել իր մոտ։ Ծառաները հային տանում են տուն։ Սթափվելով հարբածությունից՝ նա իրազեկ է դառնում եղելությանը ու ահը սրտում՝ մնում տարակուսած։ Կինը նրան խրատում է՝ Շահ-Աբբասի մոտ գնալիս հետը գինի վերցնել և սովորեցնում, թե ինչ պիտի ասի։

Ծառաները տանում են նրան արքայի մոտ։

— Քանիսո՞վ ես ուզում գնել իմ ձին,— հարցնում է Շահ-Աբբասը։

Հայը հանում է գինին, դնում թագավորի առջև ու ասում.

— Տե՛ր իմ, սա է նժույգդ գնողը, ձերդ վեհափառությունը վաճառողն է, իսկ ես լոկ միջնորդ եմ այդ առևտրի մեջ։ Դուք միասին վերջնականապես որոշեցեք ձիու գինը և եթե միջնորդիս էլ մի բան նվիրեք, այն էլ ձեր բարեշնորհությունը կլինի։

Շահ-Աբբասը, հավանելով հայի պատասխանը, պարգևատրում է նրան ու ազատ արձակում։

ՄՈՐ ԱՆԵՔՔԸ

Մարդ ու կին ունեին մի որդի։ Տվեցին նրան ուսման, շատ իմաստուն մարդ դարձավ, հասավ այն գիտակցության, որ աշխարհը, ամեն ինչ, որ կա աշխարհում, անցավոր են ու գնացական, վերջը մահն է, մեռնելը և սիրելիներից բաժանվելը։

Ելավ նա գաղտնաբար մի լեռան վրա և քառասուն տարի ճգնեց այնտեղ։ Եվ քառասուն տարի մայրը, գիշեր-ցերեկ լալով, փնտրեց նրան, մինչև որ գտավ։ Իսկ որդին, երբ տեսավ մորը, մտավ քարայրը, դուռը պինդ փակեց ու սկսեց աղոթել։

— Ո՛վ քաղցրիկ ու անուշ մինուճար որդյակ,— բախելով դուռը, լալով աղերսեց մայրը,— ով իմ ծերության նեցուկ ու գավազան, խղճա մորդ ու եկ, որ տեսնեմ դեմքդ, քանզի քառասուն տարի է, որ կարոտ եմ քեզ և քեզնից բացի ուրիշ սիրելի ու հարազատ չունեմ։

— Մա՛յր իմ,— պատասխանեց որդին,— այս աշխարհում իրար տեսնելու հնար չկա, գնա առտվածային օրենքներն ու պատվիրանները բարի գործով կատարիր, որ երկուսս էլ, երբ այս աշխարհից մահվամբ հեռանանք ու արժանանանք հավիտենական կյանքին, ուրախությամբ տեսնենք իրար։

Շատ աղաչեց մայրը որդուն։ Սրտակոտոր, աղերսախառն ու ողբալի բաներ շատ ասաց, բայց որդին ականջ չդրեց։ Այն ժամանակ մայրը, բանալով գլուխը և կուրծքը ծեծելով, անիծեց որդուն։

— Որդյա՛կ, դու չլսեցիր իմ աղաչանքները, հաշվի չառար ծերությունս ու չարչարանքներս, կարոտս ու փափագներս, չխղճացիր ինձ։ Խնդրում եմ Աստծուց, որ անօրեն ու դաժան մարդկանց ձեռքն ընկնես, գլուխդ բաց, աչքերդ թաց, վզիդ՝ շղթա ու ձեռքդ կապած, ցիցն ուսիդ, դահիճը՝ մոտդ, դատավորների ու թագավորների առջև հրապարակում կանգնած խայտառակվես։

Թողեց մայրը որդուն քարայրում և թաց աչքերով գնաց տուն։

Երկու օր անց քարայրի մոտի ճանապարհով վաճառականներ էին անց-

www.a-pdf.com

նում։ Ավազակները հարձակվեցին նրանց վրա, բոլորին կոտորեցին և թալանելով նրանց ունեցվածքը՝ ապրանքն ու գանձը, հեռացան։

Հաջորդ օրը, տեսնելով սպանված ու կողոպտված մարդկանց, եկան բռնեցին ճգնավորին՝ ասելով.

— Դու ես արել, կամ ընկեր ես ավազակներին։

Ձեռքերնետևը կապեցին, պլուխը՝ բաց, ցիցը՝ մեջքին, առան տանելու։ Այդ ժամանակ ճգնավորը, նայելով քարաչղի մոտի բազմաթիվ ծառերին ասաց.

— Աստծու հրամանով թող երկու ծառ ելնեն իրենց տեղից, գան ինձ հետ և թագավորի առջև ճիշտ վկայություն տան։

Երկու ծառ ելան արմատներով և ճգնավորի հետ գնացին։

Թագավորը տեսավ ծառերն ու զարմացավ։ Այնժամ ծառերը լեզու առան և առաջին, թե ովքեր են մարգասպանները։ Ճգնավորն ազատվեց։

— Եթե դու այդպիսի հրաշագործ մարդ ես,— դիմեց նրան թագավորը։— ինչո՞ւ իմ ծառաներից չազատվեցիր, որ այդպես խայտառակ կերպով բերեցին քեզ։

— Իմ մայրն ինձ այսպես անիծեց,— ասաց ճգնավորը,— Աստված լսեց մորս և անեծքը կատարեց։

Լսելով այս՝ թագավորը դիմեց հավաքվածներին.

շագործ ճգնավորը խայտառակ եղավ, ապա հազա՞ր վայ այն զավակներին, որոնք ամեն օր քրքրում են իրենց ծնողներին, կամ դուրս են անում կամ անարգում են՝ ժառանգելով նրանց անեծքը։ Որդին, եթե անիծվում է ծնողից, անիծվում է նաև Աստծուց, օրհնվում է ծնողից՝ օրհնվում է և Աստծուց։

ՈՐՍՈՐԴԸ ԵՎ ՀԱՅՐ ԱՆՏՈՆԸ

Մի առավոտ տեսավ Անտոնին, որ զվարճանում էր եղբոր հետ, և տկարություն եկավ վրան։ Եվ Անտոնն ասում է նրան.

— Քաշի՛ր ազեղդ։

Քաշեց։ Եվ ասում է.

— Ավելի՛ ձգիր։

Եվ նա առում է.

— Հայր, եթե ավելի ձգեմ՝ իմ աղեղը կկոտրի։

Եվ Անտոնն առում է.

— Այդպես է, որդյակ, և մենք երբեմն պիտի զիջող լինենք մարմնի պարագային, որպեսզի մեր տկար մարմինը չապականենք։

ԿԻՆՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Մի երիտասարդ տենչում էր մի կնոջ և ցանկանում էր տեսնել։ Որի համար փութով վազում էր տանիքում, որտեղ նստած էր կինը։ Եվ տանիքի շարժվելուց կինը հետ նայեց ու խրատեց երիտասարդին.

— Մի՛ հպարտացիր, որովհետև ոչ թե դու, այլ աստվածներն ինձ շարժեցին։

www.a-pdf.com

ԱՆԱՆՈՒՆ ԶՐՈՒՅԱԳՐԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Ծ ԴԱՐ)

(Հատված)

Եվ Աշոտն ունեցավ երեք որդի և ավագին կոչեց Գրիգոր Դերենն, մյուսին՝ Գագիկ, երրորդին՝ Համազասպ։ Եվ Վասպուրական երկիրը երեք եղբայրները բաժանեցին. Վանը, որ Տոսպի գավառում է, բաժին ընկավ Գրիգոր Դերենին, իսկ Կայան և Սոտոր ամրոցները և Ճվաշի գավառը՝ մյուս եղբորը՝ Գագիկին, Հաղբակի տունը՝ Համազասպին՝ կրտսերին։

Գրիգոր Դերենը առատաձեռն էր ու զվարթ, նրա նման մարդ չկար աշխարհում, ոչ մեծերի, ոչ փոքրերի մեջ։ Նա Գնունյաց տնից մի ծառա ուներ. որի անունը Գորդ Զաֆրան էր։ Դերենը Վանի արքունիքից ճաշի ժամին իջնում էր հրապարակը և այնտեղ սեղան նստում ու անցնող ճանապարհորդներին ու սեղացիներին կանչել էր տալիս, նոսեցնում, ուտում-ըմպում նրանց հետ։ Մարդիկ սովոր էին գալ, սեղան նստել, և կերուխումին չափ չկար։

Եվ նա սկսեց աղքատանալ, իսկ եղբայրները ծաղրում էին, որ պակասեց նրա ունեցվածքը, որ հայրերն էին հավաքել, նույնպես և՝ նախիրներն ու հոտերը։ Այնուհետև սկսեց ունեցած հոզերը վաճառել իր եղբայրներին, բերդերի և ամրոցների գինն առնել և շռայլել։ Նա իր սովորույթը չթողեց, և հերթը հասավ իր քաղաքին, որ կոչվում էր Վան։

Ու մի օր եկավ նրա Գագիկ եղբայրը, գանձեր ու պայծառ հանդերձներ, ձիեր, ջորիներ տվեց և գնեց Վան քաղաքը և նրա ապարանքներից մեկն էլ չթողեց, որ բնակվեր այնտեղ Դերենը։

Երբ բացվում էր առավոտը, առաքականի նման գալիս էին փողհարներն ու քնարահարները, ատվզահարներն ու պարոզները, կաքավում էին նրա առաջ։ Նա իր նախնիների նման ավազուքյան ձգտում չուներ, միայն խրախճանք էր ուրում։

Ապա նրան լքեցին իր ազատների գնդերը և գնացին մի մասը Գագիկի, մյուսները՝ Համազասպի մոտ և ամենուր ծաղրում էին նրան։ Նրա զորքերից ու ազատներից ոչ ոք չմնաց մոտը, բացի Զաֆրան ծառայից, որ Գնունյաց տնից էր։

Դերենը ունեզրկվեց, և ոչինչ չմնաց նրան, բացի երկու ձիուց. մեկը՝ իր, մյուսը՝ Զաֆրան ծառայինը։

Եվ մի կիրակի օր Դերենը Գորգ Զաֆրանին ասում է.

— Այսօր ոչինչ չունենք վայելելու, ինչ պիտի անենք։ Ի՞նչ անենք։

Եվ նա պատասխանում է.

— Ա՛ռ այսօր իմ ձին, հանդերձանքս, զրահս ու սաղավարտս և վաճառիր, թող չպակասի քո սովորական սեղանը, իսկ վաղը, Աստված ինչ հրամայի, այն կանենք։

Այն օրը ևս ճաշ տվեցին իրենց սովորության համաձայն և ուրախացան մինչև իրիկուն, և ամեն մարդ իր տունը գնաց, մնացին Դերենն ու Զաֆրան ծառան։

Եվ Դերենն ու նրա Զաֆրան ծառան նստած մտածում էին, թե մյուս օրը Դերենի ձին ու հագուստները կվաճառեն, վաղվա խրախճանքի համար։

www.a-pdf.com

Մինչդեռ նրանք այդ մասին էին մտածում, ճանապարհից մի մարդ է գալիս, տեսնելով մոմի լույսերը՝ գալիս նստում է վրանի դռանը։ Դերենը նրան ասում է.

— Ո՞վ ես և ինչու ես եկել։

Նա չէր կարողանում խոսել, որովհետև արաբ էր։

Զաֆրանը գնաց բռնեց ու բերեց նրան Դերենի վրանը։ Եվ Դերենը խոսեց նրա հետ արաբերեն, որովհետև սովորել էր այդ լեզուն, և ասաց.

— Ո՞րտեղից ես գալիս։

Պատասխանում է.

— Գալիս եմ Ասորեստանից և չեմ կարող խոսել, քանի որ շատ տեղերից խոցված եմ, եթե ճար կա՝ սպեղանի դրեք խոցերիս։

Այնժամ Դերենը բացեց նրա գլխի, ձեռքի վերքերը, դեղ դրեց խոցերին, հմուտ լինելով բժշկական արվեստին, և այնպես հարցուփորձ չարեց հյուրին։

Նրա առաջ սեղան բացեց և հույժ մեծարեց։ Սա զարմացավ նրա բարեմտության վրա, որովհետև բաժակը նրան տալով՝ Դերենը քնարը ձեռքն առավ և սկսեց ուրախացնել նրան։ Եվ նա անչափ սիրեց Դերենին իբրև զվարթ, սիրունատես, բարեխոհ, հմայիչ մարդու։

Երբ առավոտը բացվեց, վեր կենալով՝ օտարականն ասաց.

— Ո՛վ բարի մարդ, դու այնքան բարեխոհ ես, որ չեմ տեսել մեկ ուրիշին մարդկանց մեջ։ Դու չհարցրիր, թե որտեղից եմ գալիս, ուր եմ գնում։ Ես,— ասում է,— բաբելացոց արքան եմ։ Մեր Բաղդադ քաղաքը արևմուտքից եկան այլազգիները, և ես պատերազմի ելա նրանց դեմ, իմ զորքերն ինձ դավաճանեցին և նենգեցին, և ես այստեղ եկա հալածական, որովհետև հնար չունեի գնալու Բաղդադ։ Որոշեցի գնալ Խորասան աշխարհը։ Քույրս Խորասանի Գնգաց աշխարհի արքա Ապուհուրիշա թագավորի կինն է։ Ճանապարհին իմ ծառաներն ինձ լքեցին և ես դիմեցի Դերեն իշխանի մոտ. ասում են՝ նա է այս քաղաքի տերը։ Երբ ես իմ քաղաքում էի, պատմում էին ծառաներս նրա առատաձեռնության մասին, ուստի ես նրա մոտ եկա, միգուցե ինձ ձի և մարդիկ տա և ճանապարհի արևելք, որ գնամ իմ փեսայի մոտ, նրանից զորք ու գանձեր վերցնեմ, երթամ պատերազմեմ թշնամիներիս դեմ, ազատեմ իմ Բաղդադ քաղաքը։ Եվ քեզ աղաչում եմ, ո՛վ բարի մարդ, տար ինձ Դերենի առաջ, որ հոգա իմ ճանապարհի համար։ Թող քեզ բարի հայացքով նայի Աստվածը, որին պաշտում ես։

Դերենը նայում էր Զաֆրանին ու ծիծաղում։ Եվ նա տրտմելով ասաց.

— Մի՛ ծիծաղիր, խնդրում եմ քեզ, տար ինձ նրա մոտ։

Այնժամ Դերենն ասաց.

— Այստեղ չէ Դերենը, ես կհոգամ քո ճանապարհի համար։

Եվ նա ասում է.

— Մի՛ խաբիր, լսել եմ, որ այստեղ է։

— Այստեղ չէ,— ասում է Դերենը։

Այնժամ օտարականը, բռնելով նրա ձեռքը, համբուրեց նրան և ասաց.

— Երդվիր, որ այստեղ չէ Դերենը։

Եվ նա ասում է.

— Ինչո՞ւ երդվեմ, ես եմ Դերենը, որին փնտրում ես։

Նա զարմացավ և ասաց.

www.a-pdf.com

— Ապա ինչո՞ւ ես նստել քաղաքի դարպասի մոտ, եթե այս քաղաքը քոնն է, այստեղ ի՞նչ ես անում:

Ու Դերենը պատմեց նրան այն ամենը, որ արել էր: Նա զարմացավ: Եվ Դերենն ասաց.

— Ո՛վ մեծ արքա բաբելացոց, երեկ իմ ծառայի ձին վաճառեցինք ու վայելեցինք, իսկ այսօր կամենում էինք իմը վաճառել: Արի դու նստիր իմ ձին, հագիր հանդերձս և վերցրու սուրս:

Եվ կանչեց մի մարդու, որ գիտեր Պարսկաստանի ճանապարհը և դրամով վարձատրելով՝ նրա հետ ուղարկեց մինչև Խորասան:

Երբ նա գնաց, Դերենն ասաց Զաֆրանին.

— Մենք չպիտի մնանք այս քաղաքում, որովհետև ծիծաղում են մեղ վրա ու ծաղրում: Արի գնանք Ասորեստան, որ լինենք անծանոթ վայրում, կարողանանք ծառայել մեկին ու ապրել:

Նախ ելան գնացին Մոսլ քաղաքը: Երեք հոգի նստել էին քաղաքի դարպասի մոտ, հարբած էին ու դարձյալ ըմպում էին: Իրիկնանում էր, և Դերենը հոգնել էր ճանապարհին: Ինքն ու Զաֆրանը եկան նստեցին նրանց մոտ: Նրանցից մեկը հարցնում է՝ առելով.

— Ո՞րտեղից եք գալիս:

Նրանք պատասխանեցին.

— Հեռավոր Հայոց աշխարհից, Վանից:

Եվ երբ լսեցին, ասում են.

— Ինչպե՞ս է բարիանուն իշխանը, որին Դերեն են անվանում:

— Լավ,— պատասխանում է նա:

Եվ երդվեցնելով նրանց՝ հարցնում են.

— Ճի՞շտ է, ինչ որ ասում են նրա մասին:

— Ի՞նչ են ասում:

Եվ մոսլեցիները ասում են.

— Մեր վաճառականները գալիս, ասում են, թե այդ Դերենը մի սովորություն ունի, իր վրանը խփել է ճանապարհի վրա, որ քաղաքի պողոտան է, այնտեղ իր սեղանը բանալով՝ առավոտից նստեցնում է բոլոր անցորդներին՝ լավ ու վատ, քաղաքի բնակիչներին, ամեն օր, և բազմաթիվ երգիչներ ու գուսաններ հնչեցնում են իրենց նվագը մինչև երեկո: Ոչ մեկին չի թողնում տուն գնալու. այսպես է նրա սովորությունը:

— Ճիշտ է, ինչ որ ասում են այդ մարդու մասին,— հաստատում է Դերենը:

— Ամեն օ՞ր է անում,— հարցնում են նրանք:

Եվ նա պատասխանում է.

— Այո՛, ճշմարիտ է, որ ասում են:

Զարմացան նրանք և ասացին.

— Ինչպե՞ս է հասցնում այդքան:

Զաֆրանն ասաց.

— Սա է Դերենը:

Եվ նրան վերցնելով՝ տարան այն տունը, ուր նրանց ճաշն էր այն օրը: Նրանք երեք պատվական ու արժանավոր մարդիկ էին. սովորություն ունեին. մի օր երեքով մեկի տանն էին լինում ճաշի, հաջորդ օրը՝ մյուսի, և ում տանը լինում էին, իր կարողության չափով ընծաներ էր տալիս նրանց: Այսպես էր նրանց ամենօրյա սովորությը:

www.e-pdf.com

...Եվ նա [Ջաֆրանի հետ] գնաց Բաղդադ քաղաքը։ Երբ հասան Բաղդադ, մտան ներս, գնացին քաղաքի հրապարակը։ Իսկ Բաղդադի արքան, որ եկել էր Վան, այստեղից գնացել Խորասան և բազում զորքեր վերցնելով՝ եկել, կոտորել իր թշնամիներին, տիրացել Բաղդադ քաղաքին, ձի հեծած՝ շրջում էր քաղաքի հրապարակում, ուրիշներն էլ պարում էին նրա առջև։

Եվ արքան տեսավ Դերենին ու Ջաֆրանին, ճանաչեց, կանչեց իր ծառաներից մեկին ու ասաց.

— Այն երկուսին տեսնո՞ւմ ես, գնա նրանց մոտ և տար արքունի բազնիքը։

Եվ ինքը գնաց իր ապարանքը և տունը հարդարել տվեց և կանչեց իր մեծամեծներին և զարդարեց իր բարձրագույն գահը։ Եվ Դերենին ուղարկեց ոսկեհյուս պատվական հագուստներ և ձի՝ սպրդով։ Եվ իր մեծամեծներից խնդիրք առաքեց Դերենին։ Ու երբ բերին նրան արքունիք, ելավ ինքը՝ արքան ընդառաջ, եկավ գրկեց ու համբուրեց նրան։ Եվ ասաց իր բոլոր մեծամեծներին.

— Երկրպագեցեք սրան։

Ապա բռնեց նրա ձեռքից, բարձրացրեց, իր գահի վրա նստեցրեց և ինքը նստեց նրա առջև ու չասաց նրան, թե՝ ով է ինքը։ Դերենն էլ չճանաչեց նրան։ Եվ ութ օր այսպես արեց և ամեն օր պատվական հանդերձներ, ձիեր, ջորիներ ու բազում գանձեր, մարգարիտներ ու ակնեղեն էր տալիս։

Ութ օր անց հավաքեց բոլոր քաղաքացիներին, բոլորին՝ մեծամեծներից մինչև փոքրերը կանչեց։ Երբ նստեցին արքունիքում, ոմանք էլ կանգնած մնացին, արքան վեր կացավ, բաժակը ձեռքն առավ ու ասաց.

— Լսեցեք Բաղդադ քաղաքի այրեր, իմ իշխաններ ու մեծավորներ, գիտեմ, որ զարմացած եք այս մարդու համար, որ բազմել է իմ գահին։ Ամենքդ մտածում էիք, թե ինչ կարիք կա այդպես մեծարելու մի օտարական մարդու։ Ինքը ևս խիստ զարմացած էր, որովհետև Դերենը չէր ճանաչել, թե ես ով եմ։

Եվ երբ այս ասաց, հարցրեց Դերենին.

— Ես ո՞վ եմ։

Դերենն ասաց.

— Դու բաբելացոց արքան ես, բայց անունդ չգիտեմ։

Արքան նրա առջև ոտքի էր կանգնած, իսկ նրան չէր թողնում վեր կենալ։ Եվ բաբելացիների արքան ասաց.

— Երդվեցնում եմ քեզ Վարագա խաչով, ասա, ինձ չե՞ս ճանաչել։

Դերենն ասում է.

— Աստված գիտե ու իմ սուրբ նշանը, որ չեմ ճանաչել, թե դու ով ես։

— Դու Դերենն ես, որ Վան էիր նստում,— ասում է արքան,— իսկ սա քո ծառա Ջաֆրանն է։

Դերենն ասում է.

— Աղաչում եմ քեզ, արքա, ասա՝ որտեղ ես ինձ տեսել։

— Ես այն եմ, որ եկա քեզ մոտ, վրանդ, և դու այնպես ընդունեցիր ինձ, որ մարդկանցից ոչ ոք չէր կարող։ Եվ զարմացած են բոլորը Բաղդադում և ասում են, թե քեզ մեծարեցի, բայց լսեցեք, իմ մեծամեծներ ու փոքրեր. չեմ կարող հատուցել սրա երախտիքի դիմաց։ Ու եթե իմ արյունը հեղեմ կամ մեռնեմ նրա համար, դարձյալ չեմ կարող հատուցել։

Եվ պատմեց այն ամենը, որ արել էր Դերենը, ու ասաց.

— Ժամանակին եթե սա չլիներ, չէի կարող ապրել, նա ինձ սատարեց,

www.a-pdf.com

և նրա շնորհիվ ես տիրացա Բաղդադին ու համայն Բաբելոնին։ Եվ քեզ ասում եմ, Դերենն, այս բաբելացիների աշխարհս և քաղաքս Բաղդադ՝ քեզ ծառա, և իմ բոլոր գանձերը, ձիերը, ջորիները և բոլոր ուղտերամակները նույնպես։

Ապա արքան ասում է իր մեծամեծներին ու վաճառականներին.

— Բոլորդ նրան նվերներ տվեք։

Սկսեցին բերել, ամեն մեկը իր կարողության համաձայն, ոսկի-արծաթ, գանձեր և պատվական հանդերձներ։ Թագավորն էլ նրան տվեց բազում գանձեր և մեծարեց նրան՝ ասելով.

— Գնա և առ քո աշխարհը, և սիրած իմ գավառներից ո՛րը կուզի՝ գըիր ինձ, և ես քեզ կտամ։

Եվ նրան ճամփու դրեց մեծ պատվով։ Եվ ծառաներ տվեց, որ նրա ճանապարհի համար հոգան, մինչև Վասպուրական հասնելը։ Երբ հասան Արզուն, որ Միջագետքում է, Դերենի եղբայրներին լուր հասավ նրա այդ մեծարանքի մասին, որ արեց Բաբելոնի արքան, և շատ վախեցան։ Եվ ամբացրին Շամիրամի ամրոցները Վանում և մյուս բոլոր բերդերն ու ամրոցները։ Երկու եղբայրը՝ Գագիկն ու Համազասպը, միաբանեցին, հավաքեցին իրենց զորքերը և ուզում էին պատերազմել Դերենի դեմ։

Դերենն էլ ուղարկեց, հավաքել տվեց Ասորեստանի ու Միջագետքի բոլոր զորքերը, մոտ երեք հարյուր հազար մարդ, որովհետև լսեց, որ իր եղբայրներին օգնում են Հերի, Մարանդի ու Սալմաստի պարսիկները, որ Գագիկի ու Համազասպի հետ եկան բռնակեցին էգիս կոչված դաշտում։

Դերենը իր զորքի բազմությամբ գալիս հառնում է Գատվանի դաշտը և կամենում անցնել Թխաջուրը։ Գագիկն ու Համազասպը նրան ընդառաջ ուղարկեցին երեք եպիսկոպոս՝ խնդրելու, որ Հայոց աշխարհի վրա չբերի այլազգի զորքերի բազմությունը։ Սրանք եկան աղաչեցին Դերենին, և նա լսեց նրան։ Եվ երդում տալով՝ իր մոտ կանչեց նա իր եղբայրներին, և նրանք վստահելով եկան Դերենի մոտ և տեսան իրենց եղբորը՝ մեծարված ամբողջ երկրից ու արքայից Բաբելոնի։

Եվ Դերենն ասաց եղբայրներին.

— Նստեցեք այստեղ, մինչև կտաք ինձ բոլոր բերդերը՝ իմը և ձերը, ապա, եթե իմ սրտին հաճո լինի, ձեզ կտամ որը կամենամ, իսկ եթե նենգություն գտնեմ ձեր մեջ՝ իմ ձեռքից չեք ազատվի։

Նա ուղարկեց իր հնազանդ ծառա Ջաֆրանին.

— Դու գնա,— ասաց,— և տեր կանգնիր իմ բերդերին ու վանին և քո որդուն նստեցրու Վարդեվանում և ինձ տեղեկացրու, այն ժամանակ ես այս զորքերի բազմությունը կվերադարձնեմ Ասորեստան։

Գնաց Ջաֆրանը և մտավ Վան, առավ բերդերը և տվեց իր որդի Վարդանին, Սևանի բերդը նույն կերպ առավ և տվեց իր քեռորդուն, Նկան ամբոցը՝ իր հոբելբորը, Մարանդակը՝ իր փեսային, Շիմավոնի ու Խոտորի ձորերը, որ Անձախաւմ են՝ քեռուն։ Այս ամենն այսպես արեց և ապա տեղեկացրեց իր պարոնին՝ Դերենին։

Դերենն ընտրեց քառասուն հազար զինակիր, իսկ մնացած բոլորին մեծարեց ու վերադարձրեց Ասորեստան։ Ինքն եկավ մտավ Վան, ապա այս քաջ զորքով հարձակվեց պարսիկների վրա, մեծամեծ ավար առավ ու դարձավ Ճահուկ։ Այստեղ եկավ մի մարդ, Ամատունի, անունը՝ Սարի, որ Ճահուկի բերդի տերն էր, եկավ ու բերդը հանձնեց Դերենին։ Դերենն ուրախա-

www.e-pdf.com

ցավ, գանձ, ձիեր, ջորիներ, հանդերձներ տվեց և շատ մեծարեց նրան։ Երբ լսեցին այս մյուս բերդերի տերերը, բոլոր ամրոցները տվեցին նրա առաջնորդության ու զվարթամտության համար։

ԿԱՂՋՎԱՆՑԻ ՍԱՐԳՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հունաց թագավորության ժամանակները եկավ Թշնամյաց բազմությունը, ասպատակեց Ստամբուլ կայսերական քաղաքը։ Դրանք ավելի քան քառասուն հազար հոգի էին։ Իսկ Հունաց թագավորը այնքան հեծելազոր չուներ, որ կարողանար հաղթել այլազգիներին, և մեծ վշտի մեջ էր։ Մտածեց խնդրակներ ուղարկել Հայոց թագավորի մոտ, որի անունը Հովհաննես էր, որ իրեն քառասուն հազար հոգի ուղարկի, որպեսզի կարողանան ընդդիմանալ Թշնամուն, ասելով՝ «Որովհետև եթե այժմ մեզ հաղթեն, հետո նույնը ձեզ պիտի անեն»։

Այնժամ Հայոց արքան նրա խնդրանքով իր զորքերից հավաքեց ընտիր ու քաջ, ուժեղ ու տոհմիկ հակաների։ Եվ գտավ քառասուն դյուցազուն, որ ամեն մեկը կարող էր դիմագրավել հազարի։ Ոչ թե նա չուներ քառասուն հազար զորք, այլ նրանց առաքեց այն բանի համար, որպեսզի արագ հասնեն օգնության, և քաղաքը չընկնի այլազգիների ձեռքը։ Եվ այս քառասունի գլուխն ու առաջնորդը Սարգիսն էր։ Եվ երկրորդի անունը Վարդ Պատրիկ էր։

Եվ նրանք շտապ գնացին՝ զինված ու հեծած իրենց ձիերը՝ սովորության համաձայն։

Գնացին հասան Հոռոմոց երկիրը, բայց չներկայացան արքային։ Իսկ Հունաց թագավորը պատրաստում էր զորքը։ Հունաց զորքերը, երբ լսեցին, թե Հայոց արքան քառասուն հազարի փոխարեն քառասուն հոգի է ուղարկել, գնացին արքայի մոտ չարախոսեցին, թե Հայոց թագավորը ծաղրուծանակ է արել. ուղարկել է քառասուն հոգի, որովհետև նա մեր կորուստն է կամենում։

Այս խմանալով՝ քառասուն քաջերը, բոլորն սկսեցին հորդորել իրար և ասել.

— Ո՛վ եղբայրներ, եկեք միասին միաբան մարտնչենք Հունաց թշնամիների դեմ՝ Աստծուն օգնության կանչելով։— Որովհետև թագավորը բարկանալով՝ հրամայեց առջևից նրանց ուղարկել։

Ու գնալով՝ Աստծու հույսով, միայն իրենք, առանց Հոռոմոց զորքի, քառասունով քառասուն հազարին կոտորեցին և մեծ հաղթությամբ դարձան Հոռոմոց թագավորի մոտ ու ասացին.

— Մենք կոտորեցինք Թշնամու զորքերը՝ առանց քո բանակի։

Իսկ նա չէր հավատում։ Երբ ստուգեցին և իմացան Հայոց հաղթությունը, ոխակալեցին նրանց սրտերը, շատ տրտմեցին, ասես մեկը թքել էր իրենց երեսին։ Ապա թագավորն իշխանների ու մեծամեծների հետ, քաղաքացիների, ռամիկների հետ խորհրդակցեց, թե ինչպես կործանեն նրանց։ Երախտիքի ու մեծ բարիքի փոխարեն ա՛յդ հատուցեցին։ Նրանք կոտորեցին Հունաց Թշնամիներին, բայց սրանց ձեռքով սպանվեցին։

Եվ այսպես նենգաբար պատրաստվեցին գլխատել և կորցնել քառասունին՝ ըստ իրենց նախկին ատելության։ Այնուհետև զորագլուխը պատվիրեց զորավար իշխաններին ու հազարապետներին.

— Գիտե՞ք հայերին ինչ արդյունք ու նենգություն անենք. նրանց մեկ-մեկ ընդունենք մեր տները ճաշի և մատնենք կորստյան։

www.e-pdf.com

Եվ իրենցից ընտրեցին քսան իշխանի, որոնք երկուական հոգու իրենց տները տարան ճաշի։ Եվ երբ սկսեցին ուտել ու ըմպել, ուրախանալ՝ գինովցան։ Ապա անօրեն ու անողորմ հոռոմները անմեղ ու անպարտ դյուցազուններին սկսեցին գլխատել։

Եվ այսպես խողխողեցին բոլորին, բայց մնացին երկու գլխավորները՝ Սարգիսն ու Վարդ Պատրիկը, և չիմացան մյուսներին պատահածը։ Այն զորագլուխը մի շատ գեղեցիկ դուստր ուներ, որ հավանել էր Սարգսին ու սիրում էր նրան, որովհետև նրա անձը գեղեցիկ էր և հասակը՝ վայելուչ։ Այդ պատճառով աղջիկը խնայեց նրան և գնաց նրա ականջին ծածկաբար ասաց.

— Ո՛վ պատանի, տեսնում եմ, որ հավատարիմ ու բարի տղամարդ ես, այլև ազնվագեղ, դրա համար ափսոսում եմ։ Այժմ շտապեցեք և ելեք փախեք այստեղից, որովհետև այս գիշեր հայրս գլխատելու է ձեզ։ Ուստի գինի չխմեք և փրկեցեք ձեզ, թե չէ կկորչեք ձեր երեսունութ ընկերների նման։

Բայց սա Աստծու կամքով էր, որ այն աղջկա շնորհիվ փրկվեցին երկու քաջը։ Լսելով նրանք զարմացան շատ և արագ ելնելով սեղանից՝ կապեցին սրերը, նետերն ու կապարճները և մյուս զենքերը վերցրին, ձի նստեցին, աղջկան ևս առան ձիու գավակին, քանի որ սիրահարվել էր նրան, այլև միմյանց երդմամբ խոսք էին տվել։ Եվ գիշերով ելնելով քաղաքից՝ հասան դարպասներին։ Դռնապաններն սկսեցին փախչել՝ փակելով դռները։

Ասում են.

— Բացեք դռները, թե չէ կսպանենք ձեզ։

Եվ քաջերը հարվածելով սպանեցին դարպասի պահապաններին ու կողպեքները խորտակեցին և գնացին ծավափ։ Գտնելով նավեր ու նավավարներ՝ ասում են.

— Մեզ այն կողմ անցկացրեք, եթե ոչ՝ կմեռնեք մեր ձեռքից։

Իսկ նրանք ասում են.

— Չենք կարող այդ անել, որովհետև երկնչում ենք Թագավորից։ Ո՞վ եք դուք կամ ի՞նչ մարդիկ, որ գիշերով փախչում եք մահապարտների ու վնասակարների նման։

Իսկ նրանք դրանց սպանեցին, նստեցին նավակներն ու անցան ծովի մյուս կողմը։ Բայց ուբիշ պատմագրողներ ասում են, թե ձիով լողալով անցան, գնացին իրենց երկիրը՝ Հայաստան, պատմեցին իրենց Թագավորին բոլոր ապետալի անցքերը և թե ինչպես կոտորեցին Թշնամիներին։ Բայց Հունաց ապերախտ ազգը բարիքների ու երախտիքի փոխարեն՝ չարաչար սպանեց նրանց։ Այդ լսելով՝ Հայոց արքան հույժ բարկացավ և ասաց.

— Ա՛յս էր իմ հատուցումը։ Ես ուղարկեցի իմ քաջազուններին օգնելու նրանց իրենց խնդրանքի համաձայն, իսկ նրանք իրենց չար սովորությամբ կորստյան մատնեցին իմ ամենաընտիր զորականներին։ Ահա ես ձեզ տալիս եմ բազում զորքեր. գնացեք, կոտորելով կոտորեցեք նրանց և մի՛ խնայեք ծերի ու երիտասարդի, մանկան ու կույսի, տղամարդկանց ու կանանց. նաև նրանց քահանաներին կոտորեցեք։ Օտարների ծաղրուծանակ դարձրեք նրանց։

Եվ ելան նրանք Հայոց աշխարհից, մտան Հունաց երկիրը՝ ըստ Թագավորի հրամանի, կատաղի, մեծ զայրույթով հասան մինչև Ստամբուլ։ Պաշարեցին բազմամարդ քաղաքը, բայց չկարողացան գրավել և քաղաքի շուրջն ու գավառներում բազում նախճիր գործեցին, վնաս ու կոտորած անելով՝ գարձան անթիվ գերիներով, ոչ միայն աշխարհականով, այլև եպիսկոպոսներով, քահանաներով, խառնամբոխ ժողովրդով։

www.e-pdf.com

Եվ Հայոց թագավորը մեծ ուրախություն ու ցնծություն արեց իր աշխարհում և այն փրկարար աղբյան տվեց Սարգսին կնության և յոթ օր ու յոթ գիշեր մեծ հարսանիք արեց։ Եվ ժամանակ անց նրան պալատական պաշտոնյա դարձրեց։

Եվ չարերին այսպես հատուցվեց չար, այստեղ, այս աշխարհում, իբրև առհավատչյա, իսկ հետո արդար դատավորից ստանալու են պատիժ և պատուհաս բոլոր մեղավորներն ու չարագործները։ Դրանից թող փրկի Աստված իր բոլոր հավատացյալներին, առավել ևս սուրբ գրքիս ստացողին, կարդացողներին ու լսողներին։

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԻ ՍԱՏԱՆԱ ՆԱԲԵՑ ԿՐՈՆԱՎՈՐԻՆ

Մենախցում մի կրոնավոր կար, որ աղաչում էր Աստծուն և ասում.

— Տե՛ր, արժանի անես ինձ հասնելու Իսահակ նախահոր տարիքին։

Եվ երբ բազում օրեր աղաչեց, երկնքից ձայն հասավ նրան, որ ասում էր. «Դու չես կարող հասնել Իսահակ նահապետի հասակին»։

Իսկ կրոնավորն ասում է. «Թե չեմ կարող հասնել Իսահակի հասակին, գոնե Հոբի տարիքին հասցնես ինձ, Տեր»։

Դարձյալ աստվածային ձայնն ասում է կրոնավորին. «Եթե դու ևս պատերազմես և հաղթես թշնամուն, ինչպես Հոբը, ապա կլինես նրա չափ»։

Իսկ կրոնավորը խոստացավ ամեն ինչ անել ու մարտնչել սատանայի դեմ։ Այնժամ դարձյալ երկնքից լսեց ձայնը, որ ասում էր. «Այժմ գնա քո սենյակը և արիությամբ պատրաստվիր»։

Եվ գնաց պատրաստվելու պատերազմի։ Բայց օրեր անց մոռացավ, որ խոստացել է դիմագրավել սատանայի փորձանքներին։ Եվ ահա, մի քանի օր հետո սատանան, զինվորի կերպարանք մտած, եկավ ծերի մոտ ու ասում է.

— Աղաչում եմ քեզ, հա՛յր, ողորմիր ինձ՝ թագավորից հալածվածիս, և առ ինձնից այս երկու հարյուր լիտր դահեկան ոսկին, այս աղչիկը և պատանին, սրանց պահիր ծածուկ տեղ, իսկ ես փախչեմ, գնամ հեռու աշխարհ և որոշ ժամանակ այնտեղ թաքնվեմ։

— Որդյա՛կ,— ասում է նրան ծերը,— ես չեմ կարող պահել, որովհետև աղքատ մարդ եմ։ Եվ ինչո՞ւ պիտի պահեմ կամ թաքցնեմ այս ամենը։

Իսկ զինվորը բազում պաղատանքներով ստիպում է ծերին պահել։ Վերն ասում է նրան.

— Գնա՛, որդյա՛կ, և ոսկիդ թող այն քարերի մեջ։

Չգիտեր, թե դա դևերի խաբեություն է։

Իսկ երբ զինվորը ուզեց գնալ, թաղել ոսկին քարերի մեջ, ծերը ձայնեց նրա ետևից.

— Բեր այստեղ ինձ մոտ, որդյա՛կ, թե՛ր մոտս։

Եվ զինվորը ոսկին բերեց ու տվեց կրոնավորին։ Նա վերցրեց ոսկին, աղչիկն ու տղան՝ պահելու, որովհետև խաբվեց դևից։

Օրեր անց սաստիկ խռովություն ընկավ կրոնավորի սիրտը, հարձակվեց աղչկա վրա ու ապականեց նրան։ Հետո նեղվեց իրա արածից ու չարիքի վրա նոր չարիք ավելացնելով՝ ասաց մտքում. «Սպանեմ մանկանը, որ ինձ չմատնի»։ Եվ հարձակվեց ու սպանեց տղային։ Իսկ մի քանի օր հետո ինքն իրեն ասում է. «Ահա, ահա կգա զինվորը, չի գտնի տղային ու կսպանի ինձ նրա պատճառով։ Ավելի լավ չէ՝ սպանեմ նաև աղչկան և այն գանձն առնելով՝ փախչեմ օտար երկիր ու չընկնեմ զինվորի ձեռքը»։

www.a-pdf.com

Այդպես էլ արեց։ Սպանեց նաև աղջկան, թաքցրեց հողի տակ, ինչպես տղային։ Եվ վերցնելով գանձը՝ գնաց հեռու երկիր, այն հարստությամբ եկեղեցի շինեց և տուն՝ ապրելու համար։ Երբ վերջացրեց այդ գործը, եկավ այն դև զինվորը և սկսեց ձայնել ու բարձրաձայն ասել.

— Ա՛յ քեզ պատիժ, վա՛յ ինձ, օգնեցեք ինձ, մարդի՛կ, ախար այս ծերը իմ գանձերով շինեց այս ամենը։

Մարդիկ հարձակվեցին նենգ զինվորի վրա և նրան վտարեցին այնտեղից։ Իսկ նա ասում է կրոնավորին.

— Կրոնավո՛ր, այնպիսի չարիք կբերեմ գլխիդ, որ ոչ մեկի մտքով չի անցել։— Եվ հեռացավ։

Իսկ կրոնավորը հանգիստ չուներ, միշտ մտազբաղ էր գիշեր-ցերեկ ու մեղադրում էր իրեն, մինչև որոշեց հեռանալ այդ տեղից։ Եվ ասում է ինքն իրեն. «Քո գործերը հայտնի են նաև այստեղ, վերցրու գանձի մնացորդը և գնա հեռու աշխարհ, ուր չի կարողանա գալ զինվորը»։

Նա վեր կացավ գնաց մի հեռու քաղաք, որ ինքը հարմար էր համարում։ Այնտեղ նա հանդիպեց մի աղջկա, որ դահճապետի դուստր էր։ Եվ խոսելով աղջկա հետ՝ նրան կնության առավ։

Մի քանի օր անց մահացավ աղջկա հայրը։ Այն ժամանակ իշխանը դահճապետի փեսային նշանակեց նրա փոխարեն, որովհետև այդ երկրի կարգն էր՝ երբ զինվորական դասերից կամ պատվավորներից մարդ էր մեռնում, հանգուցյալի փոխարեն նշանակում էին նրան, ով ամուսնանում էր մեռածի կնոջ հետ և կամ ով նրա դստեր ամուսինն էր։

Եվ երբ նրան դահճապետ կարգեցին [այստեղ չեմ կարող առանց արտասուքի պատմել նրա չարությունը], ամբողջ երկրից նրանց, ում տանջանքների պատժաչափ էր վիճակվում, նա էր չարչարողն ու սպանողը։ Բազում անգամ հրամայում էր իշխանը ոմանց գցել եռացող կաթսան և ուրիշներին խորովել թավայով, կամ քերող գործիքով տանջել կամ մեխել և այլ բազմակերպ տանջանքներով պատժել։ Բոլոր պատիժներից նա ընտրում էր խստագույնը, որովհետև նոր էր նշանակվել այդ գործին և ցանկանում էր աչքի ընկնել։

Եվ ահա սատանան զինվորի տեսքով եկավ ու սկսեց բարձրաձայն ասել.

— Վա՛յ ինձ, եղկելիիս, օգնեցեք ինձ։

Եվ նրա ձայնի սաստկությունից մեծ բազմություն հավաքվեց այնտեղ։ Նա խնդրում էր դատավորից պատժել իր թշնամուն։ Իսկ դատավորը, նայելով զինվորին, ասում է.

— Հանդարտվի՛ր, ուշքի եկ և հանգիստ պատմիր մեզ ամեն ինչ։ Ինչո՞ւ ես աղմկում կատաղած շան նման։

— Այս դահիճը, ո՛վ իշխան, կրոնավոր էր,— պատասխանեց զինվորը,— իսկ ես թշնամիներից հետապնդված եկա սրա մոտ և սրան տվեցի պահելու երկու հարյուր լիտր ոսկի, իմ պատանի ծառան և նաժիշտս՝ կույս աղջիկ։ Այժմ հրամայիր իմ պահուստը վերադարձնել։

Իմանալով ոսկու չափը՝ իշխանն ուրախությամբ էր լսում՝ շահի հույսով, և սկսեց եռանդով հարցաքննել ծեր դահճին, թե արդյոք ճշմարի՞տ են զինվորի խոսքերը։

Եվ նա ասում է.

— Այդպես էր բոլորը. բերեց այդ ամենն ինձ մոտ, բայց շուտով եկավ տանելու, և ես ամեն ինչ վերադարձրի իրեն անպակաս։

www.e-pdf.com

— Որ քեզ է տվել, դու էլ ես վկայում,— ասում է նրան իշխանը։— Հիմա ունե՞ս նրա ստորագրությունը և վկա, որ դարձյալ տարել է քեզնից։

Եվ նա պապանձվեց։ Իսկ երբ ստիպված եղավ, խոստովանեց աղջկա և տղայի սպանումն իր ձեռքով և գանձը իսպառ ծախսելը։ Իշխանը տեսավ, որ այդ գործից ոչինչ չի շահելու, հրամայեց սպանել դահճին։ Երբ տանում էին սպանելու, նրան մատնող զինվորը ընդառաջ եկավ փողոցում ու հարցրեց.

— Ճանաչո՞ւմ ես ինձ, կրոնավոր, թե ով եմ ես։

— Կարծեմ դու այն զինվորն ես,— ասում է նա,— որ շար ժամի ծանոթացա, որ ինձ մոտ բերիր աղջկան, այն տղային ու գանձը՝ պահ տալու։

Զինվորը նրան ասում է.

— Ես բանսարկու սատանան եմ, որ խաբեցի նախաստեղծ Ադամին ու հիմա մարդկանցից ոչ մեկին չեմ թողնում ապրելու, չեմ թողնում, որ Իսահակի, Հակոբի կամ Հոբի չափ լինեն, այլ շտապում եմ բոլորին Զակիտոբելի և Հուդա Իսկարովտացու, Կայենի, Բաբելոնի ծերերի և մյուսների օրը գցել։ Գնա՛ այժմ դու ևս նրանց ետևից, քանի որ չհասկացար, որ մենք հյուսեցինք նենգության ու խաբեության շղթաները, տառապի՛ր նրանց հետ, քանի որ չիմացար մեր աներևույթ պատերազմը, և թող ոչ ոք չհպարտանա ավելի, քան իր կարողությունն է և չհանդգնի փնտրել ավելի բարձր բաներ ու նմանվել սուրբ այրերին։ Դու հետևեցիր այն բոլոր չարիքներին, որ ես արեցի քեզ ու ամբողջ մարդկային ցեղին։ Եվ ահա դու, որ պատրաստ էիր իմ դեմ պատերազմելու, տեսար քո զորության չափը, քո արժանիքներին համապատասխան վարձատրվեցի՛ր՝ այստեղ և այնտեղ նույնպես։

Հենց որ սա ասաց, անհայտացավ մարդկանց թշնամին։ Եվ եղկելի կրոնավորը, որ, խաբվելով դևերից, հայտատակվել էր իր ամբարտավանության ու անափառության պատճառով, դարձել դահիճ, չարաչար տանջանքների մատնվեց։

ԵՐԵՔ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Մի թագավոր ուներ երեք որդի և մի թանկագին քար, որն իր արժողությամբ կազմում էր նրա ողջ թագավորության քառորդ մասը։ Չգիտեր որդիներից որին տար քարը, որ մյուսները չնեղանային։ Երբ թագավորը մահամերձ հիվանդացավ, կանչեց որդիներից մեկին, քարը տվեց նրան։ Սա թաքցրեց ու եղբայրներին բան չասաց։ Թագավորի մահից հետո եղբայրների միջև կռիվ ընկավ։

— Դու ես վերցրել քարը,— միմյանց հետ չէին հաշտվում նրանք։

Լսեցին, որ մի հեռու քաղաքում մի ճարտար ու իմաստուն դատավոր կա, և միայն նա կարող է լուծել իրենց վեճը։ Գնան միասին, գնացին դատավորի մոտ։ Ճանապարհին նրանց հանդիպեց այդ դատավորի ուղտապանը։

— Ի՞նչ մարդ ես և ո՞ւր ես գնում,— հարցնում են նրան։

— Ուղտապան եմ,— պատասխանում է նա,— ուղտ եմ կորցրել, փընտրում եմ։

— Քո ուղտը կա՞ղ է,— հարցնում է եղբայրներից մեկը։

— Այո՛։

— Գնա ճանապարհով ու կգտնես։

— Քո ուղտը միաչքանի՞ է,— հարցնում է երկրորդը։

— Այո՛։

www.a-pdf.com

— Գնա ճանապարհովդ ու կգտնես։

— Քո ուղտի մեկ ատամը կոտրվա՞ծ է,— հարցնում է երրորդ եղբայրը։

— Այո՛։

— Գնա ճանապարհովդ ու կգտնես։

— Ինչպե՞ս իմացաք իմ ուղտի թերությունները,— հարցրեց ուղտապանը։ Եղբայրներից առաջինը պատասխանեց.

— Նկատեցի, որ երեք ոտքերը ուժեղ էր դրել գետնին ու հետքը երեվում էր։ Չորրորդ ոտքի հետքը չկար։ Դրանից իմացա, որ կաղ է։

— Տեսա,— պատասխանեց մյուսը,— որ նա արածել էր մի կողմի խոտը, իսկ մյուս կողմի խոտը տեղն էր մնացել։ Դրանից հասկացա, որ աչքի մեկը կույր է։

— Նկատեցի,— պատասխանեց երրորդը,— որ արածած տեղը մի ատամի չափ խոտ էր մնացել։ Դրանից իմացա, որ քո ուղտի ատամի մեկը չկա։

Զարմանալով այդ մարդկանց իմաստությունից՝ ուղտապանը գնաց նրանց ցույց տված ճանապարհով, գտավ ուղտը, վերադարձավ տուն ու դատավորին պատմեց.

— Երեք հարտար տղամարդ են գալիս քեզ մոտ դատի։ Մեր ուղտը չտեսած՝ նրա նշաններն իմացան, պատրաստ եղիր, որ սխալ չդատես և ծաղրատեղի չդառնաս։

Լսեց այս ամենը դատավորը և, երբ եղբայրները եկան, նրանց ասաց.

— Այս գիշեր մնացեք իմ տանը, վաղը ձեր դատը կանեմ։

Ու սպասավորներին հրամայեց կերակրել նրանց շուկայի հացով, տալ խսրոված ու գինի։

Տեսնելով ուտելիքը՝ եղբայրներից մեկն ասաց սպասավորին.

— Ձեր դատավորը հացագործի որդի է։

— Այս խորովածից,— ասաց մյուսը,— շան հոտ է գալիս։

— Այս գինին,— ասում է երրորդը,— արյունահամություն ունի։

Եվ հրաժարվեցին ուտել։

Սպասավորները եղբայրների ասածները հայտնեցին դատավորին։ Իսկ նա պայքանալով կանչեց մորը ու հարցրեց.

— Ես ո՞ւմ որդին եմ, ճիշտն ասա, թե չէ՝ կսպանեմ քեզ։

— Մի տարի,— պատմեց մայրը,— քո հայրը արշավանքի էր գնացել։ Մի հացագործ տղա միշտ գալիս, հաց էր բերում տուն։ Դու նրա որդին ես։

Մոավաճառն ասաց.

— Ուրի մայրը սատկեց։ Մի սև շուն կար, ուրը նրա կաթը ծծեց, կարծելով, թե իր մայրն է։

Գինեվաճառն ասաց.

— Գինին պատրաստելուց առաջ, խաղողի մեջ մի դանակ կորավ, ու մարդիկ չգտան։ Խաղողը ճզմելիս այն մտավ ճզմողի ոտքը, և շատ արյուն հոսեց, խոնվեց հյութին։

— Ինչի՞ համար, որ դատավորը հացագործի որդի է,— հարցրին եղբայրներից առաջինին։

— Ամեն մեկիս մի հաց էր ուղարկել։

— Իսկ դու ի՞նչ իմացար, որ խորովածից շան հոտ է գալիս։

— Եթե ուրը իր մոր կաթը կերած լիներ, միսը խորովելիս պիտի քրքրվեր, բայց քանի որ շան կաթ էր կերել, նրա միսը շան մսի նման կոշտացել ու պնգացել էր։

— Դու ինչպե՞ս իմացար, որ գինին արյունախառն է։

www.a-pdf.com

— Գինին ամանը լցնելիս, փրփուրը, որ երեսն է բռնում, ճերմակ է լինում, իսկ այս գինու փրփուրը կարմիր կտրեց։

Դատավորը գիշերը չքնեց ու մի սուտ պատմություն հորինեց։ Հաջորդ օրն առավոտյան երեք եղբայրները հայտնեցին նրան իրենց գանգատը թանկարժեք քարի մասին։

— Քարի գործը հեշտ է,— ասում է դատավորը,— թողեք դա իր տեղը մնա։ Մեր քաղաքում մի դեպք է տեղի ունեցել, զրուցենք այդ մասին։ Մի աղջիկ կար, որին ծնողները խոստացել էին ամուսնացնել մի մարդու հետ, բայց հետո փոշմանելով՝ տվեցին մի ուրիշի։ Աղջիկը, գնալով ամուսնու տուն, պատմում է նրան, թե՝ «Նախապես ինձ խոստացել էին տալ այսինչ մարդուն, բայց ծնողներս փոշմանեցին և տվեցին քեզ»։ Նորապսակ ամուսինը կնոջը արդուզարդով միջնորդների հետ ուղարկում է այդ մարդու տուն՝ լուր տալով. «Քանի որ նախապես քեզ էին խոստացել կնության տալ, կինը քոնն է, թող քեզ լինի»։ Իսկ սա, տեսնելով նորապսակի վեհանձնությունը, անմիջապես նվերներ տալով աղջկան, ասում է. «Քանի որ ամուսինդ այդպես արդարամիտ ու վեհանձն է, որ անտեսելով իր երջանկությունը՝ քեզ իմ տուն է ուղարկել, ուստի այսուհետև դու ինձ քույր եղիր, ես քեզ՝ եղբայր։ Այն սերը, որ ամուսնական սեր պիտի լիներ մեր մեջ, թող քույր ու եղբոր սեր դառնա»։ Եվ նա նորահարսին ետ է դարձնում ամուսնու մոտ։

Այժմ երեք եղբայրներիդ հարց եմ տալիս, յուրաքանչյուրդ առանձին-առանձին ասացեք, թե այս երկու մարդկանցից ո՞րն է ավելի արդար վարվել։

— Այն մարդը, որ մի խոսքի համար կնոջը ուղարկել է մյուսի տուն,— պատասխանում է եղբայրներից մեկը։

— Այն մյուսը,— պատասխանում է երկրորդը,— որ մեծահոգություն է ցուցաբերել, նվերներ տվել աղջկան ու, իրեն քույր դարձնելով, ետ է ուղարկել ամուսնու տուն։

— Մեծ հաջողություն է,— ասում է երրորդ եղբայրը,— որ այդպես շքեղ զարդարված, նորահարսը կեսգիշերով թաղից թաղ է գնացել ու ետ եկել, բայց գիշերապահ կամ գող չի ելել դեմը։ Ըստ երևույթին, քաղաքում գիշերապահ կամ գող չկա։

— Քարը դու ես վերցրել,— ասաց դատավորը վերջինիս,— տո՛ւր եղբայրներիդ և գնացեք խաղաղությամբ։

Առակս ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մարդ դատողություն է անում՝ ըստ իր բնավորության։

ՍՈՒՏ ԵՎ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Եփեսոս քաղաքում բնակվող մի իմաստուն ու հարուստ ծերունի ուներ մի երիտասարդ տղա, որն ընկերանալով իր մի քանի հասակակիցների հետ, ժամանակը շարունակ խնջույքների մեջ էր անցկացնում և, հարազատ բարեկամներ համարելով, ոչինչ չէր խնայում նրանցից։ Հայրը մշտապես խրատում էր.

— Զգույշ եղի՛ր, մի՛ հավատա նրանց։ Նրանք՝ բոլորը, սեղանի բարեկամներ են։ Ճշմարիտ բարեկամը նեղ օրն է երևում։

— Ներիր ինձ, հա՛յր, բայց ես հիմար չեմ, հաստատ գիտեմ, որ նրանք իմ հավատարիմ ու ճշմարիտ բարեկամներն են։

www.a-pdf.com

— Երջանիկ ես դու,— հեգնում էր հայրը,— որ կարճ ժամկետում կարողացել ես այդքան հավատարիմ բարեկամներ ճարել։

Մի օր հայրը պատվիրեց որդուն գնել մի մեծ ոչխար ու բերել տուն։ Որդուց գաղտնի մորթել տվեց ոչխարը, մի սպիտակ սավան թաթախելով արյան մեջ։ Այնուհետև խորովել տվեց ոչխարը, ամբողջովին այն ծածկեց լավաշով, վրան սեղանի հաստ սփռոց փաթաթեց, իսկ հետո՝ արյունաթաթախ սավանը, ու տեղավորեց պարկի մեջ։ Գիշերվա կեսին պարկը տվեց որդու շալակը ու, գնալով՝ բախեցին որդու տասներկու բարեկամներից մեկի դուռը, դուրս կանչեցին։

— Բարեկա՛մ,— ասաց շշուկով,— մոտակա գյուղից այսինչ մարդը երեկոյան հյուր եկավ մեր տուն։ Հարբելով, նա աղմուկ բարձրացրեց, խիստ բարկացա, խփեցի՝ սրով սպանեցի։ Խնդրում եմ քեզ, թաքցրու այստեղ նրա դիակը, որպեսզի առավոտյան մեր տունը խուզարկելիս, չգտնեն ու չդատեն մեզ։

— Անօրեն սրիկանե՛ր,— լսելով նրանց՝ մերժեց բարեկամը,— բավական չէ, որ սպանել եք մարդուն, ուզում եք ի՞նձ էլ մասնակից դարձնել ձեր չարագործությանը, փորձանքի մեջ գցել։ Կորե՛ք այստեղից,— ու փակեց դուռը նրանց երեսին։

Գնացին մյուս բարեկամների տները։ Բոլորն էլ նույն կերպ պատասխանեցին ծերունուն ու որդուն։

— Որդյա՛կ, տեսա՞ր այժմ քո հավատարիմ բարեկամներին,— ասում է հայրը որդուն,— ե՛կ, ուրեմն, գնանք իմ միակ բարեկամի մոտ։

Հառնելով տեղ՝ բախեցին դուռը։ Երբ տանտերը դուրս եկավ, ուզեցին ասել նույնը։ Չքողնելով խոսել՝ տանտերը նրանց շտապ ներս տարավ, փակեց դուռը և ասաց.

— Յածրաձայն խոսեցեք, որպեսզի մերոնցից մեկն ու մեկը չիմանա։

Հայր ու որդի պատմեցին ձախորդ դիպվածի մասին։ Տանտերն իսկույն տարավ նրանց պարտեզ, անկյուններից մեկում փոս փորելով՝ թաքցրեց պարկը հողի մեջ ու պատվիրեց նրանց շտապ վերադառնալ իրենց տուն։

Առավոտյան վաղ որդու տասներկու բարեկամները, հավաքվելով, սկսեցին խոսել գիշերվա դեպքի մասին։ Լուրն անմիջապես բերնեբերան տարածվեց, հասավ քաղաքապետին ու դատավորին։

Քաղաքապետը, որ լավ էր ճանաչում իմաստուն ծերունուն և գիտեր, որ նա պարկեշտ ու առաքինի մարդ է, չհավատաց, բայց հետաքրքրվեց, թե ովքե՞ր են տարածել լուրը։ Կծիկի ծայրը հասավ ծերունու որդու բարեկամներին։ Քաղաքապետը, կանչելով նրանց, հարցաքննեց։ Նրանք պատմեցին բոլորը։ Քաղաքապետը բանտարկեց նրանց, ապա կանչեց ծերունուն։ Վերջինս սկզբում ուրացավ։ Իսկ այնուհետև խոստովանեց մեղքը։

— Ի՞նչ եք արել դիակը,— հարցրեց քաղաքապետը։

— Տարանք այսինչ բարեկամին տվինք։

Կանչեցին այդ մարդուն։ Նա հրաժարվեց՝ ասելով, թե ինքը տեղյակ չէ։ Սաստիկ տանջեցին, բայց դարձյալ հանձն չառավ։ Երբ հրամայեցին կախել, ծերունին արգելեց՝ դիմելով քաղաքապետին.

— Տե՛ր իմ, երևում է, որ նա կամակոր մարդ է, եկեք ինձ հետ դատավորով ու վկաներով, ես ցույց կտամ ձեզ, թե մեր աչքի առջև որտեղ է թաղել նա սպանվածի դիակը։

Քաղաքապետը, դատավորն ու վկաները, որոնք ծերունու որդու ընկերներն էին, նաև ուրիշներ, գնացին նրա հետ։ Տանտերը, նորից չքմեղանալով,

www.a-pdf.com

մեղադրում էր ծերունուն, թե զրպարտում է իրեն: Բայց նա առանց վարանելու ցույց տվեց տեղը: Պեղելով հողը՝ դուրս քաշեցին պարկը և շտապ բացեցին, տեսան արյունաթաթախ սավանը:

— Ո՛վ եղկելի,— ասացին քաղաքապետն ու դատավորը տանտիրոջը,— ահա սպանողները խոստովանում են, սպանվածի արյունը հաստատում է այդ, իսկ դու շարունակ համառում ես, թե՝ «ես չեմ տեսել, ես ոչինչ չգիտեմ», սրանց փոխարեն քեզ պետք է պատժել:

Եվ այսպես սպառնալով՝ բաց արեցին արյունաներկ սավանը ու տեսան մի ուրիշ մաքուր ծածկոց: Եվ երբ այն էլ արձակեցին, գտան լավաշ հացը, մեջը ամբողջ ոչխարը՝ խորոված: Ներկանները զարմանքից ապշեցին:

— Ո՛վ պատվական ու իմաստուն մարդ,— դիմեց քաղաքապետը ծերունուն,— գիտենք, որ մի նպատակ կա թաքնված այս արարքիդ տակ, խընդրում ենք պատմել մեզ:

— Հարգարժան մարդիկ,— ասաց նա,— իմ այս թերամիտ որդին, այդ վկաներին համարելով հավատարիմ ընկերներ, ոչինչ չէր խնայում ու շռայլաբար նրանց հյուրասիրում էր խնջույքներով, հաճախ էլ օգնում էր նյութապես, որքան որ կարողանում էր: Ես միշտ խրատում էի որդուս, թե նրա ընկերները նենգ ու անհարազատ մարդիկ են, սեղանի ու իրենց օգուտի համար են բարեկամ ձևանում, չպետք է հավատալ նրանց: Բայց որդիս չէր լսում ինձ ու պնդում էր, որ նրանք հավատարիմ, ճշմարիտ բարեկամներ են: Որդուս փորձով խելքի բերելու նպատակով սարքեցի այս խաղը, որ այժմ տեսնում եք, որպեսզի զգաստացնեմ նրան, իմանա, որ դժվար բան է հավատարիմ բարեկամ գտնելը և անհնարին է բարեկամների բազմություն ունենալը, քանզի ես իմ ողջ կյանքի ընթացքում շատ փորձություններով հազիվհազ կարողացա գտնել այս միակ, հարազատ ու ճշմարիտ բարեկամիս, որ, ինչպես տեսաք, մատնեց իր անձը մահվան վտանգի ու քաջությամբ տարավ տանջանքները, բայց չդավաճանեց ինձ: Այժմ, խնդրում եմ ձեզ նստեցնեք այստեղ ու ճաշակեցնեք խորոված ոչխարը այն բազմազան ուտելիքների ու անուշահամ խմիչքների հետ, որ նախապես պատրաստել եմ տվել այս հաճելի տեսարանի համար:

Ընդունելով հրավերը՝ քաղաքապետը պատվիրեց իսկույն պարգևատրել ծերունու հավատարիմ բարեկամին, որի պարտեզում պահվել էր ոչխարը, նախատինքով վռնդել տվեց որդու սուտ ընկերներին: Ներկաները ուրախությամբ կերուխումի նստեցին, գովելով ծերունու իմաստությունն ու նրա բարեկամի հավատարմությունը:

Իսկ ծերունու որդին, ընդունելով իր սխալը, այնուհետև հրաժարվեց հացկատակ ու սուտ ընկերներից: Եվ լրջորի հավանությամբ գրվեց այս պատմությունը՝ ի խրատ հետագա սերունդների:

ՊԱՏԱՆԻՆ ՈՒ ԱՆԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՈՐԸ

Մի պատանի հոր մահից հետո վատնեց նրանից մնացած ողջ ժառանգությունը, որովհետև հարբեցող էր, սիրում էր ուտել-խմել, բայց գործ բոլորովին չէր անում: Մի օր էլ ծախսեց քսակում եղած վերջին դրամը, հարբած գնաց տուն: Հաջորդ օրն առավոտյան անկողնուց ելնել չէր կարողանում, որովհետև բերանը սաստիկ չորացել, գլուխը ցավում էր, ինչպես սովորաբար լինում է հարբեցողներին, որ խումար են ասում: Տանը մնացել էր միայն մի մոզի:

www.a-pdf.com

— Ի՞նչ անեմ, մայր իմ, ահա մեռնում եմ,— ասում է նա մորը։— Ուզում եմ մոզին տանել շուկա վաճառելու։ Ստացածս դրամը տամ գինու, խմեմ, որ ազատվեմ թմրութ յունից։

— Որդյակ,— պատասխանեց մայրը,— քո հոր ունեցվածքից այդ հորթն է մնացել մեր տանը, ա՞յդ էլ ես ուզում ոչ ու փուչ անել։ Դու գիտես, ինչ ուզում ես, արա։

Տղան հորթը տարավ շուկա։

Այդ քաղաքում մի դատավոր կար, որ տեղացի չէր։ Դատավորի երկու ծառաները իրենց տիրոջ պետքերը հոգալու նպատակով շրջում էին շուկայում։ Նրանք տեսան պատանուն։

— Ինչո՞ւ ես մանն ածում այդ այծը,— հարցնում են նրանք։

— Վաճառում եմ,— պատասխանում է տղան։

Նրանք տղային տանում են դատավորի մոտ։

— Այս պատանին այծ է վաճառում։ Եթե ուզում ես՝ գնիր։

— Որքա՞ն է այծիդ գինը,— դիմում է պատանուն դատավորը։

— Ով դատավոր,— ասում է տղան,— ա՞յծ է սա, թե՞ մոզի։

— Մեզ հիմա՞ր ես կարծում, որ ցանկանում ես քո այծը վաճառել մոզու գնով,— բարկանում է դատավորը։

— Քո ասածը թող լինի, ով դատավոր,— համաձայնում է պատանին,— որքան ուզում ես, տուր։

Եվ պատանուն տալով հիսուն դրամ՝ նա ասում է.

— Գնա, այդ է գինը։

Մտքի մեջ ուրախանալով, որ էժան է գնել, դատավորը ծառաներին հրամայում է.

— Մորթեցե՛ք, որ ուտենք։

— Ո՛վ դատավոր,— դիմում է նրան պատանին,— խնդրում եմ քեզնից, որ թույլ տաս վերցնել պոչը։

Դատավորը կարգադրում է՝ տալ պատանուն հորթի պոչը։ Վերցնելով ուզածը՝ ազան շտապ գնում է դարբնի մոտ, պատրաստել է տալիս երկաթե փշեր ու անցկացնում մոզու պոչին։ Մի սարսափելի ու ահավոր բան՝ տեսնողների համար։ Բայց մի փոքր տեղ մազերն ազատ է թողնում, որպեսզի ճանաչվի, որ մոզու պոչ է։ Վերադառնալով տուն՝ մորն ասում է.

— Տո՛ւր ինձ քո բոլոր շորերը, որ պահած ունես։

— Որդյա՛կ, ինչո՞ւ ես այդպես անում,— լացով բողոքում է մայրը,— քո հոր ունեցվածքը ծախեցիր, կերար, այժմ սկսեցիր շորե՞րս վաճառել։

— Մի՛ վախեցիր,— հանգստացնում է նրան որդին,— ուրիշ բան եմ անելու...

Մայրը հավատաց։ Վերցնելով մոր շորերը՝ տղան հագնում է ու գնում կանգնում դատավորի դռան առջև։ Ծառաները, տեսնելով նրան, չեն ճանաչում։

— Ո՛վ կին,— հարցնում են նրան,— ինչո՞ւ ես այստեղ մանգալիս, ի՞նչ ես ուզում։

— Ձեզ նման գեղեցիկ երիտասարդների համար եմ եկել,— կանացի քնքշություն տալով ձայնին՝ պատասխանում է տղան։

— Երանի՛ քեզ, ո՛վ կին, այսօր բախտդ բերեց,— ասում են ծառաները։— Այստեղ է ապրում քաղաքի դատավորը, նա կին չունի։ Ե՛կ, տանենք քեզ նրա մոտ, դարձիր նրա կինը ու երջանիկ կլինես։

Տղան համաձայնում է ու նրանց հետ մտնում դատավորի մոտ։

www.apdf.com

Դատավորը շատ է ուրախանում կնոջ գալու համար, ընտիր ու համեղ կերակուրներ է պատրաստել տալիս, ուտում-խմում են։ Ապա նա ծառաներին դուրս է անում տնից, որովհետև այրվում էր սիրո ցանկությունից։ Երբ առանձին են մնում, դատավորն սկսում է շշուկով խոսել աղջկա հետ։

— Սա ի՞նչ է,— հարցնում է կինը դատավորին։

— Օրենսգիրք է,— պատասխանում է դատավորը,— սրանով արդար դատաստան ենք անում խեղճերի օգտին։

Այնտեղ կար նաև մի երկաթե մամլիչ, որով պատժում էին չարագործներին։

— Սա ի՞նչ է, ով դատավոր,— մատնացույց անելով մամլիչը՝ հարցնում է կարծեցյալ կինը։

— Դա չարագործների համար է, եթե մեկը արժանի է ծեծի ու չարչարանքների, օրենսգրքի հիման վրա տանջում ենք նրան։

— Ինչպե՞ս է լինում, բոլորովին տեսած չկամ,— հարցնում է կինը և մեկնում իր ոտքը, իբր թե ուզում է դնել մամլիչի տակ։

— Քեզ չի կարելի,— մերժում է դատավորը,— եթե տեսնել ես ուզում, ես կդնեմ իմ ոտքերը, իսկ դու նայիր՝ լավ է թե ոչ։

Տղան ամրացնում է դատավորի ոտքերը կոճղերի մեջ ու ձգելով շղթան՝ նրան ոտքերից բարձրացնում է վեր, ինչպես անում են ավազակներին։ Այնուհետև գրպանից հանելով մոզու պոչը՝ հարցնում է դատավորին.

— Ճանաչո՞ւմ ես, ո՛վ դատավոր։ Սա մոզո՞ւ պոչ է, թե՞ այծի։

— Մոզու պոչ է,— սարսափով ասում է դատավորը։

— Իսկ ինչո՞ւ պնդեցիր, թե այծի է։ Այդպե՞ս ես դու դատաստան անում։

Ու տղան այնքան է հարվածում դատավորին, մինչև ամբողջ մարմինը կակղեցնում է։ Ապա նրան թողնում է այդ վիճակում ու հեռանում։

Հաջորդ օրն առավոտյան դատավորի դուռը դեռ փակ էր։ Ծառաները մտածեցին. «Այսօր լավ քնեց մեր դատավորը իր տիկնոջ հետ»։ Ու չուզեցին խանգարել։

Դատի համար հավաքված ամբոխն սկսեց բողոքել.

— Ո՞ւր է դատավորը, ինչո՞ւ մեզ ներս չեք թողնում։

Ծառաներն ստիպված բացեցին դուռը, մտան ներս, տեսան ոչ ոք չկա, միայն մամլիչի վրա՝ մեկը գլուխն ի վայր կախված էր։ Երբ մոտեցան, տեսան, որ դատավորն էր։

— Վա՜յ մեզ, քեզ ի՞նչ է պատահել,— **երկյուղած** հարցրին ծառաները։

— Ո՛վ չար սադայելներ,— նզովելով **ծառաներին**՝ լացակումած ասում է նա,— այդ ի՞նչ արեցիք ինձ՝ մոտս բերելով մոզու տիրոջը։

Ու պատմեց պատահածը։

Եվ քանի որ դատավորի շորերն ամբողջովին արյան մեջ կպել էին մարմնին, ու չէին կարողանում նրան մերկացնել, որոշեցին տանել բաղնիք։

Պատանին մի ուրիշ հնար է մտածում։ Վերցնելով դեղորայքի մանր ամաններ ու սրվակներ, իբր թե բժիշկ է, գնում է բաղնիքի դուռը։ Ծառաները դատավորին բաղնիք բերելիս տեսնում են հիվանդների բազմությամբ շրջապատված մի բժշկի։

— Ո՛վ բժիշկ,— դիմում են նրան,— շուտ արի բաղնիք և բուժիր դատավորին, քեզ մեծ հարստություն կտանք։

«Հարստությունը թող ձեզ մնա, ես գիտեմ անելիքս»,— մտածում է տղան ու գնալով տեսնում, որ դատավորը պառկած է արնաշաղախ։

www.a-pdf.com

— Ուշադիր եղիր, որ մարդ ներս չմտնի,— ասում է նա բաղնիքի տիրոջը,— մինչև որ ավարտեմ բուժումը։

Մենակ մնալով դատավորի հետ՝ տղան գրպանից հանում է հորթի պոչը ու հարցնում.

— Ով դատավոր, ճանաչո՞ւմ ես, սա մոզո՞ւ պոչ է, թե՞ այծի։

Դատավորը հենց որ տեսնում է պոչը, սարսափահար է լինում ու սկսում գթություն աղերսել։ Տղան, ուշադրություն չդարձնելով նրա աղաչանքներին, ուղածի չափ ծեծում է։

— Ո՛վ դատավոր,— ասում է նա,— իմացի՛ր, որ մահդ իմ ձեռքով է լինելու։

— Դատավորի մոտ կմտնեք երեք ժամից հետո,— ելնելով դուրս՝ կարգադրում է նա բաղնեպանին,— բուժիչ դեղեր եմ դրել մարմնի վրա, թողեք մի քիչ հանգիստ քնի, որ լավանա։

Տղան գնում է տուն։

Երեք ժամ հետո բաղնեպանն ու ծառաները մտնում են ներս՝ իմանալու, թե ինչպես է դատավորը։ Տեսնում են, որ բաղնիքը լցված է արյամբ, իսկ դատավորը մորթված անասունի նման ընկած է հատակին։ Վերցնելով նրան՝ հանում են դուրս։

— Քեզ ի՞նչ պատահեց,— հարցնում են դատավորին։

— Հորթի տիրոջ պատճառով այլևս չեմ կարող մնալ այս քաղաքում,— ասում է նա ծառաներին։

Տղան, մտածելով մի ուրիշ հնար, գնում է մի ուղտապանի մոտ։

— Տո՛ւր, ինձ քո ուղտը, որպեսզի այսինչ քաղաքը գնամ,— առաջարկում է նրան։— Որքան ուզում ես, կվճարեմ քեզ։

Առնելով ուղտը՝ տղան գնում է շուկա ու սպասում այնտեղ։ Տեսնելով նրան՝ դատավորի ծառաները ասում են.

— Կգնա՞ս այսինչ քաղաքը։ Մեր դատավորը հիվանդ է, պետք է նրան տանենք այնտեղ։

— Կգնա՛մ,— պատասխանում է տղան,— բայց ուղտի վարձը նախապես պիտի վճարեք։

Ծառաները վճարում են վարձը, դատավորին նստեցնում ուղտի վրա ու գնում, որպեսզի վերցնեն նաև ճանապարհի պաշար։ Ծառաների հեռանալուն պես, տղան սկսում է հարվածել ուղտին։ Եվ նա ճանապարհ ընկավ այնպիսի արագությամբ, որ թռչունն անգամ չէր կարող հասնել նրա ետևից։ Գյուղին գնում հասնում է երկու կողմերից լեռներով շրջապատված մի անտառի, իջեցնում է դատավորին ուղտի վրայից, ցույց տալիս պոչը ու հարցնում.

— Ո՛վ դատավոր, ճանաչո՞ւմ ես, սա մոզո՞ւ պոչ է, թե՞ այծի։

— Մեղա՛, որդյա՛կ,— ասում է դատավորը,— ների՛ր հանցանքներս։

— Ես քեզ ուզում եմ դատաստան անել սովորեցնել,— ասում է տղան ու ծեծում ուժգին՝ հասցնելով մահվան դուռը։ Այնուհետև թողնում է դատավորին ընկած, գնում է ինքը մոտակա նավահանգիստ քաղաքը։ Այնտեղ ծանոթանում է մի նավապետի հետ ու, ծովային զգեստ հագնելով, դառնում նավավար։

Դատավորի ծառաները, ժամադրված վայրում չգտնելով ուղտապանին ու դատավորին, ուղտի հետքերով առաջ են ընթանում ու միայն հաջորդ օրը կարողանում են գտնել դատավորին։

— Քեզ ի՞նչ պատահեց։

www.a-pdf.com

Իսկ դատավորը այլևս չգիտեր, թե ի՞նչ է պատահել, որովհետև ապրա-փելի տանջանքներից ցնորվել էր։ Միայն կարողացավ ասել.

— Աստված ձեր դատաստանն անի, որովհետև դուք զարձաք իմ մահվան պատճառը։ Է՛լ չեմ մնա այս երկրում, որ չմեռնեմ մոզու տիրոջ ձեռքով։

Ծառաները մի ուրիշ ուղտ են գտնում ու, դատավորին նստեցնելով վրան, տանում են այն մոտակա քաղաքը, ուր գնացել էր նաև տղան։ Քաղաքում դատավորին իջեցնելով մի տեղ՝ նրանք մեկնում են նավահանգիստ, որպես-զի նավ վարձեն ու տղայի ահից դատավորին տեղափոխեն ուրիշ երկիր։ Իսկ տղան նավահանգստում է լինում, բայց ծառաները նրան չեն ճանաչում, որովհետև կերպարանափոխված էր։ Սակարկելով տղայի հետ՝ ծառաները վճարում են վարձը ու դատավորին տեղավորում նավի վրա։

Ծառաները որոշում են գիշերել ծովափին, որովհետև նավաստիները ևս քնում էին այնտեղ։ Այդպես էլ անում են։ Իսկ նավի վրա մնում են միայն դատավորն ու մոզու տերը։ Գիշերվա կեսին մի հաջողակ քամի է ելնում, տեսնելով այդ՝ տղան բարձրացնում է առագաստները, ու նավն սկսում է շարժվել։ Լուսաբացին նավն արդեն ծովի կենտրոնում էր։ Տղան, գրպանից հանելով պոչը, գիմում է դատավորին.

— Ո՛վ դատավոր, ի՞նչ է սա, ճանաչո՞ւմ ես, մոզո՞ւ պոչ է, թե՞ այծի։

— Մեղա՛, մեղա՛, որդյա՛կ,— ասում է դատավորը,— ներիր հանցանք-ներս, ողջ ունեցվածքս քեզ կտամ, միայն թե մի սպանիր։

— Հիշի՛ր այն օրը, ով դատավոր,— ասում է տղան,— երբ հորս ժա-ռանգությունից միայն մոզին էր մնացել, ու ծանր էր վիճակս չքավորության պատճառով, բայց դո՛ւ ինձ հետ արդար չվարվեցիր։ Դրա համար դարձա քո մահաբեր թշնամին։

Ու նորից հարվածելով դատավորին՝ տղան նետում է նրան ծովը։

— Այսուհետև, թե դատավոր լինես, արդար գատիր։

ԲԱՐԻՆ ՈՒ ՉԱՐԸ

Մի մարդ կար, անունը՝ Բարի, ուներ մի կացին, մի թի և մի փաբչ։ Նվ սրա գործն այն էր, որ ճանապարհներ էր պատրաստում, որի դիմաց հաց էին տալիս, ուտում ապրում էր։ Մի ուրիշ մարդ, անունը՝ Չար, եկավ Բարու մոտ և ասաց.

— Ապրենք միասին։

— Դու գիտես, եղբա՛յր,— պատասխանեց Բարին։

Սա մի քանի օր մնաց Բարու մոտ։ Մի օր Չարը գողացավ թին ու կա-ցինը, ջրամանը կոտրեց։ Երբ ծարավեցին, գնացին ջրհորը՝ ջուր խմելու։ Չարը Բարուն նետեց ջրհորը, թողեց այնտեղ ու ինքը հեռացավ։

Եկան երկու քաջեր, նստեցին հորի բերանն ու սկսեցին խոսել.

— Երեք տարի է, որ թագավորի աղջիկը գիվահար է եղել։ Մի հեշտ դեղ կա, որ ոչ ոք չգիտե։ Եթե մեկը երեք մազ պոկի իր գլխից և թագավորի աղջկա առջև ծխացնի, նա կլավանա։

— Յոթ կարաս ոսկի կա այսինչ տեղը պահած,— ասում է մյուսը,— մարդ որ հանի, լավ կհարստանա։

Բարին լսեց այս խոսակցությունը և մտքում պահեց։ Եկան ճանապար-հորդներ ու նրան հանեցին հորից։

Բարին նախ գնաց և լավացրեց թագավորի աղջկան։ Թագավորը դստերը

www.a-pdf.com

տվեց նրան կնության, և նա դարձավ թագավորի փեսա։ Ապա գնաց, հանեց յոթ կարաս ոսկին։ Մի օր էլ զբոսանքի ժամանակ հանդիպեց Ջարին։

— Ինչպե՞ս հասար այս հաջողությանը,— հարցրեց Ջարը։

— Հորն ընկնելով,— պատասխանեց Բարին։

Եվ գնաց Ջարն ընկավ ջրհորը։ Կրկին եկան այն երկու քաջքերը և նստեցին հորի բերանը։

— Այն օրը, որ գրուցեցինք այստեղ, հորի մեջ մարդ է եղել, որը գնալով՝ բուժել է թագավորի աղջկան և յոթ կարաս ոսկին էլ տարել։

Եվ ջրհորը քարով լցրին։

Այսպիսով, Ջարը չարով կորավ, իսկ Բարին բարությամբ լցվեց։ Ով ուրիշին հոր փորի, ինքը կընկնի մեջը։

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՐԱՏԸ

— Ի՞նչ գաղտնիք կարելի է վստահել մարդուն,— հարցնում է թագավորը։

— Ոչինչ չի կարելի վստահել,— պատասխանում է իմաստասերը։

— Բացատրիր միտքդ։

— Մի ճանապարհի վրա խոր ջրհոր կար փորված։ Այդ ջրհորի մեջ մի կապիկ է լինում, մի վագր և մի օձ։ Հետո ջրհորն է ընկնում նաև մի մարդ, որ արհեստով ոսկերիչ էր։ Եվ կենդանիները ոսկերչին չվնասեցին։

Մի օր ճանապարհով անցնում է մի բարի, առաքինի մարդ և հորի մեջ տեսնում սրանց։ Մաածում է ինքն իրեն. «Բարություն անեմ, դուրս հանեմ սրանց հորից»։

Կախում է պարանը, և դուրս է գալիս կապիկը։ Նորից է կախում, դուրս է գալիս օձը, հետո՝ վագրը։ Եվ երբ կրկին է կախում, որպեսզի հանի ոսկերչին, կենդանիներն ասում են.

— Մի՛ հանիր դրան, որովհետև չար մարդ է և քո բարությունը չարով կհատուցի։

Նա, չլսելով գազաններին, դուրս հանեց ոսկերչին։

— Մեր բնակության վայրը այսինչ քաղաքն է,— ասացին գազանները մարդուն,— երբ գաս այդ քաղաքը՝ քո լավության տակից դուրս կգանք։

— Ես էլ նույն քաղաքից եմ,— ասաց ոսկերիչը,— երբ գաս, քո լավությանը կփոխհատուցեմ։

Որոշ ժամանակ անց այն բարի մարդը գնաց այդ քաղաքը։ Հանդիպեց նրան կապիկը և ասաց.

— Բարի եկար, ապրեցուցիչ իմ։

Եվ տարավ մարդուն իր օթևանը, հյուրասիրեց ընտիր ու համեղ մրգերով։ Եկավ վագրը և տեսնելով մարդուն՝ ասաց նույնը։ Այնուհետև գնաց, թագավորի պալատից գողացավ ոսկի ու ակնեղեն, նվիրեց մարդուն։

Սա մտածում է. «Եթե գազաններն այսքան լավություն արեցին, հապա ոսկերիչը որքա՞ն պիտի անի։ Հիմա գնամ մոտը, նրան տամ ոսկին և ակնեղենը, որ իր իմացածով վաճառի»։

Գնաց ոսկերչի մոտ, ցույց տվեց նրան բոլորը։ Ոսկերիչը մտածեց. «Գնամ հայտնեմ թագավորին ու պարգևի արժանանամ»։ Եվ նա սեղան գցելով հյուրի առջև՝ ասաց.

— Դու կեր ու խմիր, ուրախացիր իմ հարկի տակ, իսկ ես գնամ՝ քո գործը գլուխ բերելու։

Ոսկերիչը, գնալով թագավորի մոտ, ասաց.

www.a-pdf.com

— Ահա գտել եմ քո ոսկին ու ակնեղենը գողացողին։

Թագավորն ուղարկեց զորականներ, որոնք մարդու ձեռք ու ոտքը կապած բերին պալատ, եվ թագավորը հրամայեց տանջել նրան պես-պես տանջանքներով ու սպանել։ Բարի մարդն իր մտքում ասաց. «Ծթե չսեի ես քաղաններին և չհանեի ոսկերչին հորից, այս ամբողջ չարիքը չէր գա իմ գլխին»։

Տեսավ վագրը մարդու տանջանքները և շտապ գնաց պատմեց օձին։ Եկավ օձը մարդու մոտ և ասաց նրան.

— Հոգ մի արա։ Աև այս տերևը քեզ մոտ։ Ես կգնամ, կխայթեմ թագավորի աղջկան, իսկ դու ասա, թե կարող ես բժշկել։ Եվ տար դիր տերևը վերքին ու մի կտոր էլ տուր թող ուտի։ Արագ կլավանա։

Այդպես արեցին, և աղջիկը առողջացավ։ Թագավորն ազատեց այն բարի մարդուն՝ ընծայելով նրան շատ ոսկի ու արծաթ։

Եվ նա պատմեց թագավորին ստույգ եղելությունը։ Թագավորը հրամայեց չարաչար մահով սպանել ոսկերչին։

Ամեն ննջգավոր մարդու վերջն այս է, քանզի ով բարուն չարով փոխհատուցի, ինքը կկորչի չարությամբ։

ԲԱՐԻ ԴԻՊՎԱԾԸ ԱՄԵՆԻՑ ԼԱՎ Է

Չորս մարդ ճանապարհի ընկեր դարձան ու օտարություն գնացին։ Մեկը թագավորի տղա էր, մյուսը՝ վաճառական՝ իմաստուն ու խելոք, երրորդը գեղեցկատես էր, իսկ չորրորդը՝ հողագործ շինական։ Նրանք բոլորն էլ վտարված էին իրենց երկրից, զուրկ ամեն ինչից ու գրեթե մերկ։ Վեճ բացվեց մարդկային երջանկության ու գժբախտության մասին։

— Ժամանակն է որոշում մարդկանց գլխովն եկած փորձանքը,— ասում է թագավորի որդին։

— Իմաստությունն ու խելքը բարձր են ամեն ինչից,— ասում է վաճառականը։

— Պատկերն ու գեղեցկությունը ամեն ինչից վեր է,— ասում է գեղեցկատեսը։

— Վաստակն ու աշխատանքը բարձր են ամեն ինչից,— ասում է հողագործը։

Եվ չորսը հասան մի քաղաք, հոգնած ու քաղցած նստեցին քաղաքի դռան առջև։

— Գնա,— դիմեցին հողագործին,— վաստակ արա և մեզ ուտելիք բեր։

Գնաց հողագործը և հարցուփորձ արեց քաղաքացիներին.

— Ի՞նչ գործ անեմ այսօր, որ ստացած վարձով կարողանամ չորս մարդու համար ուտելիք գնել։

— Գնա, անտառից փայտ բեր,— ասացին,— և ծախիր։

Գնաց շինականը, փայտ բերեց, վաճառեց մեկ դեկանով և չորս հոգու համար ուտելիք գնեց։ Քաղաքի դռան վրա գրեց. «Մի օրվա աշխատանքավ չորս հոգու կերակրեցի»։

Ընկերները հաջորդ օրը դիմում են գեղեցկատեսին.

— Գնա քո գեղեցկությամբ, որով պարծեցար, մեզ համար ուտեստ բեր։

Գնաց գեղեցկատեսը՝ տարակուսած մտածելով. «Ի՞նչ անեմ, աշխատել չգիտեմ, չեմ կարող; մուրալ՝ ամաչում եմ»։ Եվ սրտաբեկ նստեց մի ծառի տակ ու քնեց։ Այդ կողմով անցնում էր մի գեղեցիկ ու հարուստ կին։ Կինը արթնացրեց նրան, տարավ իր տունը, զվարճացան, ու տվեց նրան հինգ հա-

www.a-pdf.com

յուր դեկան։ Գեղեցկատեսը ուտելիք գնեց ու տարավ ընկերներին։ Քաղաքի դռան վրա գրեց. «Մի օրում իմ գեղեցկությամբ այս քաղաքից առա հինգ հարյուր դեկան»։

Երբ լույսը բացվեց, դիմեցին վաճառականին.

— Գնա, քո խելքով ու իմաստությամբ մեզ համար այսօր ուտելիք ճարիր։

Գնաց նա և երբ մոտեցավ քաղաքին, տեսավ առևտրական նավեր, որ գալիս էին Հնդկաստանից և լի էին ամեն տեսակ ապրանքներով։ Քաղաքի վաճառականները հավաքված ասում էին միմյանց.

— Այնպես անենք, որ կերպասի ու գործվածքեղենի գները իջնեն, մեզանից բացի քաղաքում ուրիշ գնող չկա, մեզ ինչ հարկավոր է՝ էժան գնենք։

Այս ամենը լսեց վաճառականը, գնաց դեպի նավերը, հայտնեց քաղաքացիների որոշումը։ Եվ ինքը մի դատարկ խոսքով գնեց այն ամենը, ինչ կար նավերի մեջ։

— Եկեք ինձ հետ այսինչ քաղաքը և ձեզ ավելին կվճարեմ,— ասաց նավապետին։

— Վայ մեզ,— լսելով լուրը՝ վշտացան քաղաքացիները,— կորանք մենք և կորցրինք մեր շահը։

Եվ եկան իմաստուն վաճառականի մոտ, ազաչանք-պաղատանքով նրան տվեցին հարյուր հազար դեկան, գնեցին ապրանքները։ Վերցրեց վաճառականը հարյուր հազարը և բազմատեսակ ուտելիքներով գնաց ընկերների մոտ։ Քաղաքի դռան վրա գրեց. «Մեկ օրվա աշխատանքով այս քաղաքից առա հարյուր հազար դեկան»։

Հաջորդ օրը թագավորի որդուն ասացին.

— Գնա, մեզ համար ուտելիք բեր։

Թագավորազնը գնաց տրտում ու չգիտեր, թե ինչ է անելու։ Նստեց քաղաքի դռան առջև։ Այդ օրը մեռել էր քաղաքի թագավորը, որին այդ դռնով տանում էին թաղելու։ Թագավորազնը չբարձրացավ նստած տեղից և պատիվ չտվեց։ Դռնապանը նախատեց նրան և դուրս վտարեց, իսկ նա կրկին նստեց իր տեղը։ Երբ մարդիկ, վերադառնալով թագավորի թաղումից, տեսան նրան դռան առջև նստած, մոտեցին, թե լրտես է և բանտ նետեցին։

Հաջորդ օրը ամբողջ քաղաքը՝ ծերերը, երիտասարդները և զորապետները, հավաքվեցին միասին և մտածում էին թագավոր ընտրելու մասին, քանի որ իրենց թագավորը ժառանգ չուներ։ Վեճ ու անհամաձայնություններ ծագեցին նրանց մեջ, ամեն մեկն ուզում էր ինքը թագավոր դառնալ։

— Մի՛ կռվեք,— ասաց դռնապանը,— այստեղ մի լրտես կա, որին բանտարկել եմ։ Թող նա լսի ձեր վեճը և փախչելով՝ զորք բերի մեր դեմ, ի՞նչ կլինի մեր վիճակը։

— Բե՛ր այդ մարդուն մեզ մոտ,— հրամայում են իշխանները։

— Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես,— հարցրին նրան։

— Այսինչ թագավորի որդին եմ,— պատասխանեց նա,— փախել եմ իմ եղբայրների հալածանքից։

Շատերը ճանաչեցին նրան, հավատացին, որ ճիշտ է ասում։ Եվ բոլորը, միաբերան մխիթարելով, նրան թագավոր ընտրեցին, բազմեցրին իրենց գահին ու խոնարհվեցին առջևը։ Երկու օր անց, հեծավ թագավորը ձին ու պտտեց քաղաքի շրջակայքը։ Նայեց դռան վրայի գրերին, հրամայեց բանել-բերել գրագիրներին ու մաքրել ավեց իր ընկերների գրածը։ Եվ թագավորը գրեց. «Բարի գիտվածն ավելի լավ է, համբերությունը՝ ավելի պատվաբեր, ես ասա-

www.e-pdf.com

ցի, և կատարվեց իմ խոսքը, քան դեմքի գեղեցկությունը, քան մտքի իմաստությունը և քան երկրադործությունը։ Անարգվեցի, բայց հետո մեծարվեցի»։ Իմաստուն վաճառականին կարգեց պալատական իշխան, հողագործին դարձրեց իր պալատի տնտես, իսկ գեղեցկատեսին ապականության համար վտարեց քաղաքից։

ԵՐԵՔ ԽՈՐՀՈՒՐԴ

— Երբ հայրս վախճանվում էր,— ասաց թագավորն ի լուր ամենի,— ինձ երեք խրատ տվեց և ասաց. «Հիշիր խոսքս, որ լավ ապրես։ Որդյա՛կ, ինչ վատ բան տեսնես, չտեսնելու տուր, ինչ քեզ չեն հարցնում, մի ասա, և լավ օրդ վատով մի փոխիր»։ Մի թագավորի մոտ գանձապահ էի։ Մի օր թագավորը գնաց որսի՝ դեղքափ մատանին մոռանալով գահին դրված բարձի վրա։ Ով երբ նստեցին ճաշելու, ուղարկեց ինձ պալատ՝ հրամայելով. «Գնա՝ շտապ բեր մատանիս»։

Մտնելով պալատ՝ տեսա, որ թագավորի մեծ իշխաններից մեկը շնանում էր թագուհու հետ։ Ես շտապ վերցրի մատանին, նրանց չտեսնելու տվի և դուրս ելա։ Իսկ թագավորը չհարցրեց ինձ, թե տանը ինչ տեսա, ես էլ չասացի։

Երբ թագավորը վերադարձավ տուն, թագուհին պատառոտեց շորերը, ճանգռոտեց դեմքը և ճչալով ասաց.

— Թագավոր, քո սիրելի երիտասարդը ուզեց բռնությամբ անպատվել ինձ։

Իսկ թագավորն ինձ շատ էր սիրում, ուստի և դժվարացավ անմիջապես սպանել։ Բացի դրանից, թագավորը մի բերդ ուներ, որտեղ էլ սպանել էր տալիս մահապարտներին։ Ով նա նամակ դրեց բերդավագին, կնքեց ու տվեց ձեռքս, թե «Տար, բերդավագին հանձնիր»։ Իսկ նամակի մեջ գրել էր. «Բերդավագ, այս մարդուն, որ թուղթս քեզ է բերել, գլխատիր, գլուխը դիր մի արկղի մեջ և կնքած ետ ուղարկիր ինձ»։

Նամակն առած ճանապարհ ընկա։ Ես պիտի անցնեի թագուհու հետ շնացող իշխանի գյուղով։ Երբ իշխանը տեսավ ինձ, շատ վախեցավ, կարծեց, թե թագավորն իրեն է կանչում պատժելու նպատակով։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց ինձ իշխանը։

— Նամակ եմ տանում այսինչ բերդը,— պատասխանեցի։

— Օրը ցուրտ է,— ասաց ինձ,— դու մնա իմ տանը, կեր և խմիր, ես կտանեմ թուղթը։

— Թագավորն,— ասացի,— ինձ է հրամայել, թե՝ տար։ Ես վախենում եմ։

— Մի՛ մտածիր, դու կաց իմ տանը, ես կտանեմ։

Դրսում խիստ ձյուն էր ու բուք։ Ով ես մտածեցի. «Սա իմ հոր խրատն է, թե լավ օրդ վատով մի փոխիր»։

Ես մնացի իշխանի տանը, իսկ նամակը տարավ նա։ Երբ բերդավագը ընթերցում է նամակը, բռնությամբ կտրում է իշխանի գլուխը, դնում արկղի մեջ, կնքում ու տալիս ծառային, թե՝ տար թագավորին։

Ճանապարհին հանդիպելով ծառային՝ ասացի.

— Տուր ինձ, ես պիտի տանեմ։

www.a-pdf.com

Վերցրի արկղն ու տարա։ Երբ թագավորը բացեց այն, զարմացած տեսավ, որ իր սիրելի իշխանի գլուխն էր մեջը։ Ասաց ինձ.

— Այս ի՞նչ բան է, ճիշտն ասա, թե չէ կսպանեմ քեզ։

Մեկ առ մեկ պատմեցի իսկությունը, ինչպես եղել էր։

Երբ լսեց թագավորը, չարաչար մահով սպանել տվեց կնոջը։

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂԸ

Կար մի թագավոր, որի կյանքի օրերն ու տարիները անցել էին, բայց իրենից հետո չուներ որդի ու ժառանգ թագավորությանը։ Որդի ունենալու համար շատ աղոթեց, աղքատներին ու կարիքավորներին տվեց առատ նվերներ։ Աստված դթաց նրան, և վերջապես ծնվեց տղա՝ թագավորական գահի համար ժառանգ։

Մանկան ծննդյան առթիվ մեծ խրախճանքներ կազմակերպեց թագավորը, անթիվ քանակով ոչխարներ, եզներ և այլ անասուններ մորթել տվեց, կերակրեց քահանաներին ու ժողովրդին, շատ աղքատների զգեստներ նվիրեց, հորդորելով աղոթել, որպեսզի Աստված կենդանություն պարգևի իր նորածին զավակին։ Իր սրտին գոհացում և խնդություն տալու նպատակով, թագավորը հրավիրեց նաև իր աշխարհի բոլոր իմաստուններին ու աստղագետներին, որպեսզի նրանք գուշակեն տղայի ճակատագիրը, խելքն ու ապագան։ Իմաստունները, հմուտ ու ճարտար աստղագետները, հավաքվելով՝ քննեցին և իմացան մանկան ճակատագիրը։

— Ո՛վ թագավոր,— ասացին նրանք,— քո որդին Աստծու պտուղ է և պտուղ է ողորմության։ Նա շատ խելացի է լինելու, բայց պիտի խայթվի օձից։ Թե մինչև տասնհինգ տարեկան հասակը օձը նրան չկծի, շատ կապրի և իր կյանքն ու ժամանակը կանցկացնի երկար տարիներով։

Լսելով այս՝ հայր թագավորը խիստ վախեցավ ու սկսեց մտածել, թե ինչ հնարքով փրկի որդուն օձից։ Նա կառուցել տվեց մի բարձր ու քանկարժեք ապակեպատ աշտարակ, դրեց այնտեղ մանկանը՝ մոր հետ և, նրանց սպասավորելու համար՝ շատ ծառաներ։ Իսկ ծառաները, մանկան մոտ մտնելիս, մերկանում էին բոլոր հանդերձներից ու միայն հատուկ զգեստներով էին ծածկվում։ Նրանք ելումուտ էին անում ահուդողով, զգուշությամբ, որ օձը չթաքնվի մեկնումեկի շորերի մեջ և հանկարծակի չվնասի մանկանը։

Տղային կրծքից կտրելուց հետո մայրը թողեց որդուն պալատում և, գոհանալով Աստծուց, գնաց տուն իր ամուսնու մոտ, բարի լուր տալով նրան տղայի աճի ու փարթամության մասին։ Որդու համար թագավորը պատրաստել տվեց ոսկեղեն քանդակներով, մարգարիտներով ու ընտիր ակնեղենով զարդարված մի աման՝ ջուր ու գինի խմելու համար, ամեն առավոտ ուղարկում էր նրան անուշահամ ուտեստներ և քառատուն հատ կարմիր ոսկեդրամ, որպեսզի նա իր ձեռքով՝ հանուն իր կյանքի ու արևշատության, բաժանի աղքատներին։

Եվ ըստ սովորության՝ ամեն օր գալիս էին աղքատները։ Երբ առավոտները ելնում էր թագավորի որդին՝ նայելու պատուհանից դուրս և տեսնում էր պատուհանի տակ հավաքված աղքատներին, առատորեն տալիս էր նրանց ողորմության տուրքը։ Իսկ նրանք ուրախ սրտով վերադառնում էին իրենց տները՝ մաղթելով իրենց թագավորին՝ երկար կյանք, արքայորդուն՝ կենդանություն։

www.e-pdf.com

Երբ լրացավ տղայի տասնչորս տարին, մի օր նրա հոր մատանապետը, քաղելով այգուց մի քանի վաղահաս ու քաղցրահամ ողկույզ, դրեց կողովի մեջ, որ տանի թագավորին։ Հանկարծակի ելավ իր բնից մի թունավոր օձ և մատանապետից աննկատ սողաց կողովի մեջ։ Մատանապետը խաղողը տարավ ու ամանով դրեց թագավորի առջև։ Իսկ նա վերցրեց ընդամենը մի ողկույզ ու հրամայեց մնացածը տանել որդուն։ Երբ մատանապետը տարավ խաղողը թագավորի որդու պալատը, տղան հանգիստ քնած էր, ուստի ծառաները կողովը դրեցին մի անկյունում ու գնացին։ Այդ ժամանակ ելավ օձը իր թաքստոցից և մտավ տղայի անկողնու տակ։

Եվ այնժամ մի անճար ու խեղճ աղքատ, որ կանգնել էր տղայի պատուհանի մոտ, ներքևից բարձրաձայն դիմեց թագավորի որդուն՝ ասելով.

— Ով բարի պատանի, հանուն քո հոր գահի և հանուն քո կյանքի, ողորմություն տուր ինձ, որովհետև դառն կարիքի մեջ եմ։

Լսելով աղքատի ձայնը՝ անմիջապես արթնացավ քնից բարի տղան ու քաղցրությամբ պատասխանեց նրան։

— Ով բարի աղքատ, մի քիչ համբերիր, եկ ճաշի ժամին, որ տամ խրնդրածդ, որովհետև այժմ մոտս դրամ չկա։

— Բարի պատանի, դառն սովամահության մեջ եմ իմ որդիներով հանդերձ, ուստի և աղաչում եմ հենց այժմ կատարես իմ խնդիրքը։

Տղան՝ շուրջն աչք ածելով, ոչինչ չգտավ, աննման հորինվածքով, ակնեղենով ու մարգարիտներով զարդարված ոսկե ամանից բացի։ Այն տվեց աղքատ մարդուն, որը վերցնելով ասաց.

— Քանի որ ազատեցիր ինձ դառն աղքատությունից, դու ևս ազատվես պատուհասից։

Իսկ թագավորի տղան, որ մենակ էր մնացել, մի ողկույզ խաղող վերցրեց կողովից և կամեցավ ուտել։ Հանկարծ մի քանի հատիկ, պոկվելով ողկույզից, ընկան անկողնին։ Տղան սկսեց բարկությամբ դանակով հարվածել հատիկներին ու անկողնին։ Այդպիսով նա մահճի տակ թաքնված օձի գլուխը գամեց գետնին։ Իսկ երբ ցավից գալարվելով՝ օձը հանեց իր պոչը, տղան տեսավ նրան և ուշագնաց եղավ։

Ներս մտան ծառաները, տեսան, որ տղան մեռածի պես ընկած է հատակին՝ կողքին սատկած օձը։ Կարծեցին, թե օձը նրան սպանել է։ Երբ ջուր ցանեցին տղայի երեսին, անմիջապես ուշքը տեղն եկավ, և նա ասաց.

— Մի՛ վախեցեք, ես սպանեցի օձին։

Թագավորն ուրախացավ՝ տարավ որդուն իր պալատը։ Շարունակելով լավություն անել աղքատներին՝ պատանին բարի համբավ ձեռք բերեց երկրում և հոր մահից հետո ժառանգեց թագն ու գահը։

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

Կար մի թագավոր, որ ժառանգ չուներ՝ ոչ աղջիկ, ոչ տղա։ Քրոջ որդի միայն ուներ և կամեցավ նրան թագաժառանգ կարգել, որովհետև շատ էր սիրում նրան։ Թագավորի քեռորդին խելացի էր ու խիստ բարեպաշտ։

Մի ազդեցիկ իշխան նախանձեց նրա փառքին ու ապագային։ Մտածեց շարախոսել նրան թագավորի առջև, որպեսզի ինքը դառնա ժառանգ։ Մի օր նա թագավորի քեռորդուն ասում է.

— Ով պատանի, բերանիցդ հոտ է գալիս, ու դու չգիտես։ Եվ երբ նրսասում ես թագավորի մոտ, նա բարկանում է քեզ վրա։

— Ես այլևս չեմ նստի քեռուս՝ թագավորի մոտ,— ասում է նա,— իսկ եթե նստեմ, դեմքս կշրջեմ նրանից, որ հոտ չառնի։

Լսելով այդ՝ իշխանը գնում է թագավորի մոտ և չարախոսելով ասում.

— Քրոջդ որդին չարություն է տածում քո նկատմամբ և մտածում խլել քեզանից թագավորությունդ քո կենդանության օրոք։

— Ի՞նչ գիտես,— հարցնում է թագավորը։

— Երբ քեզ հետ է լինում, մոտ չի նստում, իսկ եթե նստում է, քո կողմը չի նայում, այլ շրջում է դեմքը քեզնից։

Եվ թագավորը, ըստ սովորության, քրոջ որդուն կանչեց մոտը, բայց նա չմոտեցավ։ Կրկին կանչեց թագավորը նրան և ստիպեց մոտ նստել, որպեսզի ստուգի իշխանի խոսքը։ Եվ պատանին նստեց թագավորի մոտ, բայց դեմքը շրջեց նրանից։

Այն ժամանակ թագավորի կասկածը հաստատվեց, և որոշեց սպանել պատանուն, բայց ոչ բոլորի ներկայությամբ, այլ՝ ծածուկ, որովհետև իր ազգականն էր։ Ջուլարանի վերակացուին ուղարկեց մի նամակ, որի մեջ գրել էր. «Առաջին մարդը, որ կգա քեզ մոտ, գցիր կրակի մեջ, որ այրվի։ Եվ եթե ասի, թե ինքը թագավորի քրոջ որդին է, կամ իշխանը, ուշադրություն չդարձնես»։

Հաջորդ օրը վաղ առավոտյան թագավորն ուղարկեց իր քրոջ որդուն ձուլարան։ Եվ երբ գնում էր նա, լսեց եկեղեցու զանգերի ձայնը։ Որոշեց մտնել եկեղեցի՝ մտածելով, թե «Աստված է թագավորների թագավորը։ Նախ Աստծու հրամանը պետք է կատարել, և ապա թագավոր քեռուս»։ Եվ նա մտավ եկեղեցի ու մի քանի ժամ մնաց ներսում։

Իսկ չարախոս իշխանը, ձի հեծած, շտապեց ձուլարան՝ մտածելով, որ եթե թագավորի քրոջ որդուն կրակի մեջ նետած չլինեն, ինքը նետել կտա։ Երբ տեղ հասավ, բռնեցին նրան և գցեցին կրակը և այրեցին։

Հետո ձուլարան հասավ պատանին։

— Գնա հայտնիր թագավորին,— ասաց վերակացուն,— որ հրամանն ի կատար է ածվել, ձեր թշնամուն այրել ենք։

ԱՆՀՆԱԶԱՆԴ ԵՎ ԻՆՔՆԱՀԱՎԱՆ ԾԱՌԱՆ

Մի տանուտեր ուներ հավատարիմ ու գործունյա ծառա, որին վստահել էր իր ամբողջ ունեցվածքը։ Մի օր երկուսի մեջ խոսք բացվեց Ադամի անհնազանդության, արգելված պտուղը ճաշակելու մասին։ Ծառան, զայրացած Ադամի անկայուն մտքի վրա, ասում է տիրոջը.

— Աստծու մասին խոսք չունեմ ասելու, իսկ եթե դու սաստիկ հրաման տայիր ինձ, երբեք չէի խախտի։

Տերը լռեց։ Օրեր հետո, երբ ծառան անուշադիր էր և Ադամի մասին ասածները չէր հիշում, տերը նրան տվեց մի փոքրիկ սափոր, ծածկած, բայց չփակած՝ ասելով.

— Սա տալիս եմ քեզ պահելու, բայց եթե բանաս, քո ամբողջ վարձը, որ ինձ մոտ է, և իմ հոգատարությունը, հավիտյանս կկորցնես։

Ծառան գնաց սենյակ։ Երբ մենակ մնաց, ցանկացավ իմանալ, թե ինչ կա սափորում։ Շատ անգամ նայելով ու շրջելով՝ ասում է իր մտքում. «Ի՞նչ կա, եթե բանամ. այստեղ մենակ եմ, ոչ ոք ինձ չի տեսնի։ Եթե մեկն ինձ հարցնի, կասեմ՝ չգիտեմ, քանի որ վկա չկա, որ ինձ դատապարտի»։ Հետո բացեց սափորը, և թռչունը, որ այնտեղ էր, թռավ։ Այն ժամանակ սրտնեց,

www.a-pdf.com

www.a-pdf.com

որ իմացավ գաղտնիքը։ Եվ երբ տերը նրան հարցրեց ամանի մասին, նրա ոտքերն ընկավ, ներողություն խնդրեց, բայց անօգուտ։ Տերը նրան ասում է.

— Ո՛վ չար ու ինքնահավան ծառա, դու մեր նախահորը դատապարտում էիր անհնազանդության համար, գովելով քո հաստատամտությունը՝ քեզ հանցանքի մեջ գցեցիր։ Իսկ հիմա հեռացիր ինձնից, որ այլևս երեսդ չտեսնեմ։

ՀՊԱՐՏ ԹԱԳԱՎՈՐԸ

Մի թագավոր, գահին նստած, տեսավ, որ ի՛նչ խոսք բերանից դուրս է գալիս, ծառաներն իսկույն կատարում են։ Մտքում հպարտացավ. «Ես Աստծու նման եմ, որ իմ բերանից ելած խոսքը կատարվում է»։ Աստված չհանդուրժեց այդ հպարտությունը։ Երբ թագավորը պառկեց քնելու, Աստված վրան կրակացավ ձգեց։ Թագավորը զարթնեց, մերկացավ և գետնին թավալվելով՝ ասաց.

— Այրվեցի, կործանվեցի, փրկեցե՛ք ինձ։

— Վե՛ր կաց, գնանք գետի մոտ, մտիր ջուրը, գուցե մի քիչ հովանաս,— խորհուրդ տվեցին ծառաները։

Եվ վերցրին զորքը, գնացին գետափ։ Թագավորը մերկացավ, մտավ ջուրը։ Այնժամ մարդկանցից աննկատելի, Աստծու հրամանով, երկնքից մի հրեշտակ իջավ, թագավորին ընկղմեց ջրի մեջ, իսկ ինքը թագավորի կերպարանքն առած՝ դուրս եկավ ջրից։ Զորականները հագցրին նրան շորերը, կարծելով, թե իրենց թագավորն է, տարան բազմեցրին գահին։

Թագավորը մեկ ժամ մնաց ջրի մեջ, հետո դուրս ելավ, տեսավ՝ ոչ զորք կար, ոչ ծառա, ոչ շոր։ Իր կերպարանքը փոխվել էր այլ մարդու պատկերի, այնպես, որ իրեն չէին ճանաչի։

Նա գնաց մի իշխանի դուռը և ասաց դռնապաններին.

— Գնացեք իշխանին ասացեք՝ «Քո թագավորն եկել է դուռդ, քեզ է կանչում»։

Գնացին ասացին իշխանին.

— Մի մորեմերկ մարդ ասում է՝ «Իշխանին ասացեք դուրս գա»։

— Ներս բերեք,— ասում է իշխանը։

Գնացին ներս բերին, և իշխանն ասում է.

— Տկլոր, ի՞նչ մարդ ես։

Ասում է.

— Ես քո թագավորն եմ, դու իմ ծառան ես։

Այս ասելուն պես՝ իշխանը բարկացավ և դուրս վտարել տվեց նրան։

— Գնա կորիր, խե՛նթ։

Հետո գնաց իր պալատի դուռը, դռնապաններին ասաց.

— Ինձ տարեք թագավորի մոտ։

Եվ նրանք տարան։ Թագավորն ասում է.

— Ի՞նչ մարդ ես, որ այդպես մերկ ու խայտառակ շրջում ես։

Ասում է.

— Ես այդ գահի տերն եմ, սրանք, որ քեզ մոտ են, իմ որդիներն են։

Այն ժամանակ որդիները ծեծելով դուրս գցեցին նրան, և նա լալով գնաց վանք, եպիսկոպոսին ասաց.

— Ես քո թագավորն եմ, քեզ այդքան իշխանություն եմ տվել, իսկ դու ինձ չես օգնում։

Եպիսկոպոսն ասում է.

www.a-pdf.com

— Ո՛վ անիծված խայտառակ, գնա դուրս, կորիր, որ թագավորը չիմանա՝ քեզ սպանի։

Եվ աբեղաները ծիծաղելով դուրս տարան նրան։

Այնժամ թագավորը հասկացավ, որ իր հպարտությունն իրեն այդպիսի չարիք բերեց, դարձավ ընկավ կաթողիկոսի ոտքերը և խոստովանեց, որ իր հպարտությունն էր պատճառը, և խոնարհություն որդեգրեց։

Երբ կաթողիկոսը մեղքի թողության համար աղոթեց, թագավորը վերստին նախկին կերպարանքն առավ։ Եպիսկոպոսը ճանաչեց, նրա ոտքերն ընկավ, բերեց շորեր հագցրեց ու տարավ պալատ։ Տեսավ, որ ուրիշ թագավոր չկար գահին, զարմանալով փառք տվեց Աստծուն։

Այս է հպարտության պատուհասը և խոնարհության փառքը։

ԹԱԳԱՎՈՐԻ ՋՐՊԱՐՏԻՉ ԴՍՏԵՐ ՀԱՄԲԱՆԱԼԸ

Անաստաս կայսեր դուստրը՝ Փարազնյան, Ամոն անունով մի պատանու գեղեցկությանը սիրահարված՝ ցանկանում էր իր իղձը կատարել, իսկ նա չէր համարձակվում կայսեր ահից։ Ջայրացած էր Փարազնյան նրա դեմ և մի օր, երբ Ամոնը նրա սենյակի դռնով էր անցնում, աղաղակեց՝ ասելով.

— Օգնեցե՛ք ինձ, Ամոնն ուզում է բռնանալ ինձ վրա։

Իսկույն պալատականները հասան, բռնեցին պատանուն ու տարան կայսեր մոտ։

Կայսրը նրան հարցրեց.

— Ճի՞շտ է, որ ասում են քո մասին։

— Ո՛չ, տեր իմ,— ասաց Ամոնը։

Այն ժամանակ կայսրը կանչել տվեց Փարազնյային և ասաց.

— Ինչպե՞ս եղավ դեպքը, պատմի՛ր ինձ։

Եվ նա չպատասխանեց։ Կայսրը կրկին ասաց.

— Քե՛զ, քեզ եմ ասում, ինչո՞ւ չես պատասխանում։

Ու նա դեռ լռում էր։

Եվ նախարարներից մեկը, տեսնելով որ ոչինչ չի խոսում, մտածեց՝ գուցե լեզուն բռնվել է։ Նայեցին բերանը, իսկապես տեսան, որ նրա լեզուն չորացել է վրեժխնդրությունից ու զրպարտությունից։

Կայսրը, տեսնելով այդ, շատ զարմացավ և ազատեց Ամոնին։ Եվ իսկույն բացվեց դստեր լեզուն։ Նա խոստովանեց ճշմարտությունը և զղջալով մտավ կուսանոց և իր ամբողջ կյանքն անցկացրեց այնտեղ։

ՎԱՃԱՌԱԿԱՆԸ ԵՎ ԹԱՆԿԱԳԻՆ ԱԿԸ

Մի վաճառական ուներ մի փոքրիկ ակ, տարավ թե ծախի թագավորին։

Թագավորը տեսավ և հարցրեց գինը։

— Իմ ակի գինն այն է,— ասաց վաճառականը,— որ կշեռքի մի կողմը իմ ակը դնեն, մյուսը ոսկի լցնեն, երբ հավասարվի, դու ակը վերցնես, ես՝ ոսկին։

Թագավորը բերեց ակը, դրեց կշեռքի մի նժարին և մյուսին ոսկին լցրեց՝ հիսունով ու հարյուրով, հազարով և հիսուն հազարով, հարյուր հազարով, և ակի թաթը տեղից չշարժվեց։ Թագավորը զարմացավ, չգիտեր՝ ինչ անել։

Այդ թագավորն ուներ երեք լումայափոխ. մեկը՝ մարդու, մեկը՝ ձիու, մեկը՝ ակի։ Կանչել տվեց ակի լումայափոխին։ Սա, տեսնելով ակը, ասում է.

www.a-pdf.com

— Թագավոր, դրան ակն են ասում, ակն գրական լեզվով աչք է նշանակում, ես դրա գինը գիտեմ։

Լումայափոխը եկավ գնաց դուրս, վերցնելով մի ափ հող՝ բերեց լցրեց ոսկու կողմը։ Այնժամ ակի նժարը բարձրացավ, և հողը մնաց անշարժ։

Ճշմարիտ է առակս. աշխարհում ինչ ոսկի ու արծաթ, ակ ու մարգարիտ կա, եթե ագահ մարդուն տան, ոչ կատի բավական է, ոչ էլ կկշտանա։ Ագահությունը աղի ջրի նման է. մարդ ինչքան խմի, կծարավի, իսկ երբ մեռնի, մի ափ հողով կլցվի աչքը։

ՈՒԽՏԱՋԱՆՑ ԿԻՆԸ

Մի մեծահարուստ ազնվատոհմ մարդ արժանապատիվ ու շատ սիրելի մի կին ուներ։ Մի օր, երբ խոսում էին Եվայի մասին, կինը, ինչպես կանանց սովորությունն է, պարսավում է Եվային, մեղադրում նրան, թե մի պտղի համար իր ցանկությունը կատարելով, ամբողջ մարդկությանը այսպիսի տառապանքի ու թշվառության մատնեց։ Ամուսինն ասում է.

— Մի պարսավիր նրան, դու ևս այդպիսի իրադրության մեջ նույնը կանեիր։ Ես կամենում եմ քեզ ավելի հեշտ պատվիրան տալ, և դու չես կարող այն պահել։

— Ո՞րն է պատվիրանն այդ,— հարցնում է կինը։

Պատասխանում է.

— Այն օրը, երբ բաղնիք գնաս, ոտաբոբիկ չմտնես այն տիղմի մեջ, որ մեր գավթի մոտ է։

Գավթի մոտ ժահահոտ ջուր կար, ուր հավաքում էին տան ամբողջ աղբը։

Մինչ կինը ծաղրում էր պատվիրանազանցությունը, ամուսինն ասում է.

— Արի ուխտ դնենք մեր միջև. եթե դու հնազանդ լինես, ես քեզ քառասուն լիտր արծաթ տամ, եթե ոչ՝ դու նույնքան ինձ պարտական լինես։

Այս բանը շատ դուր եկավ կնոջը։ Եվ ամուսինը կնոջից թաքուն լրտես նշանակեց տիղմի մոտ։

Զարմանալի բան. այն պատվական ու համեստ կինը այդ օրվանից այն տեղով չէր անցնում, որ չնայի տղմին, բայց ինչքան բաղնիք էր գնում, միտքը խռովում էր ու տատանվում տղմոտ տեղի պատճառով։ Մի օր էլ, բաղնիքից ելնելով, ասում է աղախնին.

— Եթե այդ տիղմը չմտնեմ, կմեռնեմ։

Եվ իսկույն բարձրացնելով շորերը՝ կատարեց իր ցանկությունը։ Անմիջապես լուրը հասավ ամուսնուն։ Եվ նա, ուրախացած, տեսնելով նրան՝ ասում է.

— Ինչպե՞ս է, տիկին, այսօր լավ լողացա՞ր։

— Շատ լավ,— պատասխանում է կինը։

Ապա ամուսինն ասում է.

— Իսկ մեկնումեկը մտե՞լ է տղմոտ ջրի մեջ։

Այս խոսքի վրա կինը ամոթահար լռեց՝ տեսնելով, որ իր հանցանքը հայտնի է դարձել։ Այնժամ ամուսինն ասում է կնոջը.

— Ո՞ւր է քո անսխալական միտքը, քո հնազանդությունը, որ դու պարծենում էիր։ Եվայի հետ համեմատած քո խնդիրն ավելի դյուրին էր, բայց չկարողացար դիմանալ։ Ուրեմն, տուր պարտքդ։

Եվ քանի որ կինը փող չուներ, ամուսինը նրանից առավ բոլոր մեծագին զարդերը և բաժանեց ուրիշների, որպեսզի կինը որոշ ժամանակ ինքն իրեն տանջի։

www.a-pdf.com

Մի օր սատանան մտածեց ամուսնանալ և ծնել յոթ աղջիկ. նրանց ուրիշների հետ ամուսնացնելու և փեսաներին իր տունը, այսինքն՝ դժոխք, տանելու։

Ամուսնացավ և կին առավ մեկին, որ կոչվում էր Անիրավություն, որից ծնվեցին յոթ աղջիկ՝ նրա փափագի համաձայն։ Առաջինին անվանեց Հպարտություն և ամուսնացրեց ոստիկանների հետ, երկրորդին կոչեց Ագահություն և հարսնացրեց մեծամեծներին, երրորդին հորջորջեց Խաբեություն և կնության տվեց գռեհիկներին, չորրորդին անվանակոչեց Նախանձ և տվեց արվեստագետներին, հինգերորդի անունը դրեց Կեղծավորություն և պսակեց կրոնավորների հետ, վեցերորդին Սնափառություն կոչեց և հանձնեց կանանց, յոթերորդին, որի անունը Բղջախոհություն կնքեց, չկամեցավ հարսնացնել ո՛չ մեկին, թողեց նրան շրջելու անհայրենիք, իբրև անբարոյական, որպեսզի յուրաքանչյուրը նրանով զմայլվի։

ԽՈՀԵՄ ԿԻՆԸ

Երկու վաճառական ընկեր կային, շրջում էին միասին օտար երկրներում և առևտուր անում։ Մեկը անհաշիվ հարստության տեր էր, մյուսը՝ չափավոր։ Մեծատունը շատ գեղեցիկ կին ուներ, ինչպես կերևա իմ հետագա խոսքից էլ։

Այդ գեղեցիկ կնոջ ամուսինը մահացավ և երկրորդ վաճառականը, որ մեծատան ընկերն էր, սիրեց ընկերոջ կնոջը՝ գեղեցկության, խոհեմության ու հարստության համար։ Եվ ցանկանում էր նրան կնության առնել, բայց անհարմար էր զգում ասել։

Իսկ համեստ կինը, որ իմաստուն էր, գլխի ընկավ և ասում է նրան.

— Պարոն Սիմեոն,— այսպես էր նրա անունը,— տեսնում եմ՝ միտքդ շփոթված է։ Ինձ ասա քո մտքինը, ես կքեթևացնեմ հոգուդ։

Իսկ նա առաջ վախեցավ, հետո խոստովանեց.

— Տիկին, ուզում եմ քեզ չծակից լինել, հետևել քո կամքին և իմաստությանը։

Կինն ասում է.

— Եթե անես՝ ինչ որ պատվիրեմ, կկատարեմ քո կամքը։

Նա պատասխանում է.

— Ամեն ինչ, որ հրամայես, անհապաղ կկատարեմ։

Կինն ասում է.

— Գնա քո խանութը և ոչինչ չուտես, մինչև քեզ կանչեմ։ Աստված վկա, ես էլ ոչինչ չեմ ուտի մինչև քո գալը։

Սիմեոնը երդումով խոստացավ կատարել, կարծում էր նույն օրն է կանչելու իրեն։

Անցավ մի օր, երկու օր, երեք, և կինը չէր կանչում։ Իսկ նա համբերում էր երդման և սիրո պատճառով։

Չորրորդ օրը, երբ սովից վհատ ու նվաղած էր, տիկինը կանչեց Սիմեոնին, որ ոտքով գնալ չէր կարող, այլ նստեցրին ձիու վրա ու տարան։

Տիկինը խորտիկներով լի սեղան էր բացել և անկողին էր պատրաստել նրա գալուց առաջ։ Երբ Սիմեոնը տուն մտավ, տիկինը մեկուսի ծածուկ ասում է նրան.

www.a-pdf.com

— Արի և տես, պատրաստել եմ սեղան և անկողին։

Այդ տեսնելով՝ Սիմեոնը շատ ուրախացավ։

Իմաստուն կինը ասում է նրան.

— Այս սեղանը, այս էլ մահիճը՝ քո կամքի համաձայն։ Ո՞րն ես նախընտրում։

Սիմեոնն ասում է.

— Խնդրում եմ քեզ, կերակուր տուր ինձ, որովհետև ուժասպառ եմ լինում. սաստիկ սովածությունից և ուժասպառությունից չեմ հիշում, թե ինչ է կինը։

Այնժամ կինն ասում է.

— Մինչ սովեցիր, կերակուրն ավելի ախորժեցիր, քան իմ և բոլոր կանանց սերը։ Այսուհետև, երբ այդպիսի մտքերը քեզ նեղեն, այդ դեղն օգտագործիր և կազատվես բոլոր ախտավոր խորհուրդներից։ Եվ հավատա, որ իմ ամուսնու մահից հետո ոչ քեզ, ոչ այլ մարդուս չեմ ցանկանա։

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ ԵՎ ՉԱՐ ՊԱՌԱՎԸ

Մի պառավ տեսավ տխրադեմ մի երիտասարդի, որ նստել էր ծառի տակ, դրամով լի քսակը ձեռքը։ Հարցրեց նրան, թե ինչ է պատահել։

Պատասխանեց.

— Ես սատանան եմ և մեծ ցանկություն ունեմ այսինչ մարդու և նրա կնոջ մեջ խռովություն գցելու, բայց չունեմ ճարտար լեզու, դրա համար չեմ կատարում ցանկությունս։ Քանի որ դու ճարտարախոս ես, այս դրամը քեզ եմ տալիս, որ անես։

Պառավը գնաց կնոջ մոտ և ասաց.

— Ամուսինդ, օրենքներին հակառակ քեզ դավաճանեց։ Կտեսնես, մի աղչիկ կգա ամուսնուդ մոտ, որ հանդերձանք տանի անպատշաճ գործերի համար։

Հետո գնաց ամուսնու մոտ, ասաց.

— Քո կինը մի քահանայի հետ ծանոթություն ունի։ Երբ իրար հետ խոսում էին, ես սյան մոտ աղոթք էի անում և լսեցի, որ վաղը միասին են լինելու։

Տես չար պառավի որոգայթը։ Այն, որ ոտտանան իր գտած չարիքները երկար ժամանակ իրագործել չկարողացավ, սա կարճ ժամանակում կատարեց։

Այնուհետև պառավը աղչկան ուղարկեց, վերցնելու հանդերձանքը, որ ինքը գնել էր, երբ այս բանն ասում էր այն մարդուն։ Կինը երբ տեսավ, կարծում էր չար մտքով է եկել աղչիկը։

Երբ իրիկնացավ, խեղճ մարդու ախորժակը փակված էր. մտածում էր քահանայի մասին։ Դրանից հետո, պառավի խորհրդով, քահանան և կինը խոսեցին իրար հետ։ Ամուսինը տեսավ ու վատ կարծիք կազմեց կնոջ մասին։ Հետո պառավը խրատ տվեց կնոջը, որ ամուսնու մորուքի մազերը կտրի և տա իրեն՝ դեղ պատրաստելու, որով ամուսինը բոլոր կանանց կատի։

Գնալով ամուսնու մոտ՝ պառավն ասում է.

— Քո կինը քահանային խոստացել է քեզ այս գիշեր սպանել, զգուշացիր։

Ամուսինը լուրջ դեմքով տուն է գնում, հաց ուտում և սուտ քուն մտնում։

Երբ կինն ածելիով ցանկանում էր մորուքից մի քիչ մազ կտրել, ամուսինը բռնեց ձեռքը և աղաղակեց.

www.a-pdf.com

— Ծրագ բերեք։

Բարեկամները հավաքվեցին, մեծ աղմուկ ու իրարանցում եղավ։ Այդ տեսնելով՝ սատանան պառավին ասում է.

— Երեսուն տարի աշխատում էի այս խռովությունն առաջացնել, չէր հաջողվում։ Իսկ դու երեք օրում կատարեցիր, քանզի ունես ազնիվ դժոխային լեզու և արժանի ես դժոխքին ավելի, քան ես։ Ու նրան վերցրեց տարավ իր հետ։

ՄԱՃԿԱԼՆ ՈՒ ՕՁԸ

Գնում էր մաճկալը վար անելու և տեսավ ճանապարհին մի սառած օձ։ Վերցրեց, գցեց ծոցը՝ ասելով.

— Երբ տաքանա, ազատ կարձակեմ և լավություն արած կլինեմ։

Երբ տաքացավ, օձը փաթաթվեց մաճկալի մեջքին ու ասաց.

— Խայթելու եմ քեզ, որ մեռնես։

— Ինչ եմ արել քեզ,— հարցրեց մարդը։

— Լավությանը լավություն չկա,— պատասխանեց օձը։

— Անաստված բան մի՛ արա,— հորդորեց մաճկալը,— մեկ անգամ արեցիր այդ Ադամին և արժանացար Աստծո անեծքին։ Այլևս մի՛ անիր, իսկ եթե անելու ես, երկու վկայի հարցնենք, հետո ինչ ուզես՝ արա։

— Բեր վկա։

— Ա՛յ եզ,— դիմում է մարդը եզանը,— այս քանի տարի է դու իմ տանն ես, միասին աղ ու հաց ենք կերել, մեզ դատաստան արա։

— Թե լավությանը լավություն լիներ,— ասում է եզը,— լավ եզանը դանակի չէին տա։ Այս քանի տարի է, որ վարում եմ և վաստակում, բայց երբ այլևս չկարողանամ, պիտի մորթես և միսս ուտես։ Խայթի՛ր, օձ։

— Մի վկա էլ է հարկավոր,— ասում է մաճկալը։

Հանդիպում են մի աղվեսի։

— Արա մեզ դատաստան, և քեզ մի տիկ պանիր կտամ,— գաղտնաբար ասում է մաճկալը աղվեսին։

— Եթե ուզում ես, որ դատաստան անեմ, թող օձը դուրս գա ծոցիցդ։ Հավասար կանգնեցեք, որպեսզի արդար դատեմ։

Եվ երբ օձն ելավ մարդու ծոցից, աղվեսն ասաց հողագործին.

— Խփի՛ր ձեռքիդ մահակով և սպանիր օձին։

Հողագործը խփեց և սպանեց օձին։ Ապա աղվեսը դիմեց նրան.

— Գնա, բեր պանիրը, որովհետև ազատեցի քեզ։

Գնաց մարդը և փոխանակ պանրի, երկու շուն բերեց, որոնք հարձակվեցին աղվեսի վրա և բզկտեցին նրան։

Փրկվելով, հեռու է փախչում աղվեսն ու զղջալով ասում է.

— Դու՝ ո՛վ և դատավորն՝ ո՛վ, միթե չգիտեիր, որ լավությանը լավություն չկա։

ԵՐԿՈՒ ԱՐԴԱՐ ՄԱՐԴԻԿ

Ղալաթայում ապրող մի մարդ աղքատացավ։ Նա մի արտ ուներ, որը վաճառեց ոմն հարուստի։ Սա եզներով արտը վարելիս գտավ երեք կարաս ոսկի։ Մարդ ուղարկեց արտի տիրոջ մոտ՝ ասելով.

www.a-pdf.com

— Ես ինձ մոտ, քո արտի մեջ գտել եմ երեք կարաս ոսկի։ Վերցրու, որովհետև քոնն է։

— Արտը քեզ եմ վաճառել, դինն առել եմ,— պատասխանում է արտատերը,— գտածդ էլ քոնն է։

— Ես արտն եմ գնել երեսուն դահեկանով,— ասում է արտը գնողը,— և ոչ թե՝ ոսկին, ե՛կ քո ոսկուն տեր կանգնիր։

Եվ այսպես վիճում էին ու կռվում իրար հետ բարության կռվով։ Դիմեցին թագավորին։ Թագավորը, պատրիարքն ու քաղաքի իշխանները հավաքվեցին մի տեղ՝ ասելով.

— Տեսնենք, ինչ ճշմարիտ վճիռ պիտի հանենք այս արդարների վերաբերյալ։

Եվ պատրիարքը հրամայեց.

— Տվեք մեկ կարաս ոսկին արքունիքին, մյուսը՝ եկեղեցուն։

Իսկ երրորդ կարասի ոսկին բաժանեցին երկուսին։ Արտ գնողի դստերն ամուսնացրին արտատիրոջ որդու հետ և հաշտեցրին նրանց։

Արտ գնողը ցորեն ցանեց իր արտում և երբ եկավ հնձելու ժամանակը, ցորենն ափի մեջ ճզմելիս տեսնում է, որ մարգարիտ են կտրել հատիկները։ Լցվեց իր ափը մարգարտով, հիացավ, փառք տվեց Աստծուն և գնալով պատմեց թագավորին։ Ծկան, քաղեցին մի փունջ, տարան Կոստանդնուպոլիս, հիշատակի համար դրեցին թագավորի ապարանքում։

Անցան շատ տարիներ, վախճանվեց թագավորը, հետո որդին թագավորեց և գնաց մի օր պալատում շրջելու։ Երբ տեսավ, որ մի փունջ ցորեն կա պահած, զարմացավ. «Հայրս կարծել է, թե թանկություն պիտի լինի, որ սերմը գանձարանում է պահել»։ Հետո ձեռքն առավ ցորենը և փշրեց։ Երբ տեսավ, որ մարգարիտ է թափվում, հիացավ, զարմացավ, փառք տվեց Աստծուն և հրամայեց.

— Հայտնեցեք երկրով մեկ, գուցե գտնվի տեղյակ մեկը, որ պատմի մեզ։

Եվ գտան մի ալևոր ծերունու, որ գալով պատմեց այս բոլորը մեկ առ մեկ։

ԱՍԱՆԵԹ

Պատահեց, որ առաջին տարին, ամսի յոթերորդ օրը, Փարավոնը Հովսեփին ուղարկեց Եգիպտացոց ամբողջ երկիրը շրջելու։ Եվ տասնութերորդ օրը նա եկավ հասավ Արեգ քաղաքի սահմանները, և այն երկրում ցորեն էին հավաքում՝ ծովի ավազի նման։ Եվ այն քաղաքում մի մարդ կար, որ Փարավոնի նախարար էր և իմաստությամբ մեծագույնը Փարավոնի բոլոր մեծամեծներից, և նրա անունը Պետափրես էր՝ քուրմը Արեգ քաղաքի։ Եվ նա մի դուստր ուներ, տասնութամյա մի կույս, մեծ ու գեղեցկատեսիլ ավելի, քան երկրի երեսին բոլոր կույսերը։ Նա ոչինչ չուներ Եգիպտացոց դուստրերից, այլ ամեն ինչով նման էր Եբրայեցոց դուստրերին, պարթև էր Սառայի նման, գեղեցիկ՝ Հռեբեկայի պես և վայելուչ՝ քան Հռաքելը։ Եվ նրա անունը Ասանեթ էր։

Եվ նրա գեղեցկության հռչակը տարածվեց ամբողջ երկրում, և բոլոր նախարարների որդիները, և մեծամեծների ու թագավորների որդիները, բոլոր երիտասարդները և զորականները խնդրում էին նրա ձեռքը։ Եվ նրանց միջև նախանձ ու հակառակություն կար Ասանեթի պատճառով, պատրաստ էին իրար դեմ պատերազմելու նրա համար։

www.apdf.com

Իսկ Ասանեթ անարգում և արհամարհում էր բոլոր տղամարդկանց, և բոլորի հանդեպ հպարտ էր ու չմահավան։ Եվ ոչ ոք նրանցից չէր տեսել Ասանեթին ոչ մի տեղ, որովհետև Պետափրեսի աշտարակը մոտ էր նրա ապարանքին, և նա այնտեղ վերնատուն էր հարդարել, ուր բնակվում էր Ասանեթ՝ մարդկանցից անտես, և այն վերնատունը շատ բարձր ու մեծ էր, վայելուչ խեցեղենով և ծիրանիներով զարդարուն, և որմերը թանկագին շողարձակ քարերով պաճուճած, և սենյակի անկյուններում դրված էին եգիպտացոց չաստվածները՝ ոսկյա ու արծաթյա, որոնց թիվ չկար։ Եվ այդ բոլորին պաշտում էր Ասանեթ, և երկնչում էր նրանցից, և ողջակեզ ու խունկ էր մատուցում նրանց օրնիբուն։ Եվ երկրորդ սենյակում Ասանեթի զարդերի զամբյուղն էր, որի մեջ կային ոսկի ու արծաթ, և ոսկեհուռ հանդերձներ, և ընտիր ու պատվական ակնեղեն, և նրա կուսության բոլոր զարդերը։ Եվ երրորդ սենյակում շտեմարանն էր Ասանեթի։ Եվ յոթ կույսեր կային՝ Ասանեթի սննդակից, և բոլորը հավատարիմ էին, Ասանեթի հետ նույն գիշերը ծնված։ Եվ բոլորը գեղեցիկ էին երկնի աստղերի նման, և նրանց հետ ամենևին այր մարդ չէր խոսում, ոչ իսկ արու մանուկ։

Եվ երեք մեծ պատուհան ուներ Ասանեթի սենյակը, որտեղ նրա կուսությունն էր խնամվում։ Եվ առաջին պատուհանը շատ էր մեծ, որ նայում էր դեպի արևելք՝ գավթին, և երկրորդը նայում էր հարավ, և երրորդը՝ հյուսիս՝ ուղիղ ձգվող ճանապարհներին։ Եվ սենյակում մահճակալ էր դրած, որ նայում էր արևելյան պատուհանի դիմաց, և մահճակալը զարդարված էր ծիրանի և ոսկեթել, ակն, ծիրանի ու բեհեզ։ Եվ այն մահճակալին ննջում էր Ասանեթ, և այր կամ կին երբեք չէր նստել դյա վրա։ Եվ ապարանքի շուրջը մեծ գավիթ էր, և գավթի որմերը հույժ մեծ էին՝ չորեքանկյուն մեծամեծ քարերով շարած, և գավիթն ուներ երեք դուռ երկաթյա։ Եվ դրանց հսկում էին ութ զորեղ ու զինավառ այրեր։ Եվ գավթի ներքո տեսակ-տեսակ պտուղների այգի էր գեղեցիկ, և նրա բոլոր ծառերին հասել էին մրգերը կթելու, և գավթի մեջ, աջ կողմում աղբյուր էր մեծաշուք։ Աղբյուրից ներքև մեծ հնձանն էր, որ ընդունում էր աղբյուրի ջրերը, որ այնտեղից գալիս էին գավիթ և ոռոգում բոլոր ծառերը, որ կային գավթի մեջ։

Եվ լիության յոթերորդ տարին էր, և ամսի տասնութերորդ օրը, երբ եկավ Հովսեփ Արեգ քաղաքի սահմանները։

Եվ հավաքում էին ժամանակների լիության ցորյանը։ Եվ երբ Հովսեփ մոտեցավ այն քաղաքին, լրաբեր ուղարկեց Պետափրես քուրմի մոտ և ասում է.

— Կիջևանեմ քեզ մոտ, քանի որ միջօրե, ճաշի ժամ է, և արևի ջերմությունը՝ սաստիկ։ Գամ իջնեմ և զովանամ, և հանգստանամ քո հարկի տակ։

Երբ լսեց Պետափրես, մեծ խնդություն ապրեց և ասում է.

— Օրհնյալ է Աստվածը Հովսեփի, որ այսօր հաճեց մեզ այցելել։

Եվ կանչեց Պետափրես իր տան վերակացուին, ու ասում է նրան.

— Շտապիր և կարգի բեր տունը, և փառահեղ ճաշկերույթ կազմակերպիր, որովհետև Աստծու զորավոր Հովսեփ գալիս է այսօր մեզ մոտ։

Եվ լսեց Ասանեթ, որ հայրենական կալվածներից եկան իր հայրն ու մայրը, ուրախացավ և ասում է.

— Երթամ տեսնեմ իմ հորն ու մորը, որ եկան մեր ժառանգական հանդից։— Որովհետև հունձի ժամանակ էր։

Եվ փութաց Ասանեթ, և հագավ բեհեզ պատմուճանը ոսկեպաճույճ, և կապեց մեջքին ոսկե գոտին և ապարանջան՝ ձեռքերին ու ոտքերին, և իր

www.a-pdf.com

պարանոցից կախեց պատվական մանյակներ, և ոսկեզօծ կոշիկներ հագավ ոտքերին։ Եվ ամեն կողմից զարդարված էր ակնեղենով, Եգիպտացոց չաստվածների անուններն էին դրոշմված բոլոր զարդերին, ապարանջաններին, ու պատվական քարերի վրա կուռքերի նկարներ էին, և նրա գլխին վարշամակներ էին, և թագ էր կապած ծամկալներով, Եվ ամառային գլխադրով ծածկեց Ասաներէ գլուխն իր։ Եվ վերնատնից աստիճաններով փութաց իր հորն ու մորը տեսութեան։ Եվ երկրպագեց նրանց, և ողջունեց։ Ուրախացան Պետափրես և իր կինը իրենց դստեր վրա մեծ ուրախութեամբ, որովհետև տեսնում էին նրան զարդարված իբրև հարս։ Եվ հանեցին բոլոր բարիքները, որ բերել էին իրենց ժառանգական ագարակից։ Եվ ուրախացավ Ասաներէ բոլոր մրգերի համար, և խաղողի, և թզի, և մյուս մրգերի, որ բերին նրանք։ Եվ ասում է Պետափրես իր դուստր Ասաներէին.

— Որդյակ իմ։

Եվ ասում է Ասաներէ.

— Ահա ես, տեր։

Եվ ասում է Պետափրես.

— Եկ նստիր մեր մեջ, և քեզ հետ կխոսեմ իմ բանը։

Եվ նստեց Ասաներէ հոր և մոր միջև, և Պետափրես առավ իր դստեր աջ ձեռը և համբուրեց նրան, և ասում է.

— Որդյակ իմ, Ասաներէ։

Եվ ասում է Ասաներէ.

— Ահավասիկ ես, տեր իմ հայր։

Եվ ասում է Պետափրես.

— Աստծո, զորավոր Հովսեփն այսօր գալիս է մեզ այցի։ Եվ նա Եգիպտացոց երկրի իշխանն է, որովհետև Փարաւոնը նրան կարգեց իր ամբողջ ունեցվածքի վրա. և նա է փրկիչը համայն աշխարհի, որովհետև նա է տալիս ցորեն աշխարհին. կփրկի մարդկանց առաջիկա սովից, Եվ Հովսեփ աստվածապաշտ և ողջախոհ մարդ է, լի իմաստութեամբ, պարկեշտ ու արժանավոր։ Արի այժմ, որդյակ, քեզ կնութեան տանք նրան և թող փեսան քեզ պատիվ ու հարստութեուն լինի հավիտյանս հավիտենից։

Եվ երբ լսեց Ասաներէ հոր խոսքը, այլագունեց երեսը նրա, և հույժ տրտմեց բարկութեամբ և նայում էր խեթ հայացքով։ Խոսեց Ասաներէ և ասում է.

— Տեր իմ հայր, այս խոսքերից երևում է, որ ինձ տալիս ես իբրև գերի՝ վաճառելով այլազգի և փախստական մարդու. նա Քանանացոց երկրի հսվիվների զավակ չէ՞, և հանդիմանութեուն ստացավ՝ իր տիրուհու հետ ննջելով։ Եվ նրա տերը նրան խավար բանտ նետեց, որովհետև մեկնեց նրա երազը, ինչպես մեկնում են Եգիպտացոց պատավ կանայք։ Թող այդպես չլինի, այլ կամուսնանամ Փարաւոնի անդրանիկ որդու հետ, որովհետև նա է ամբողջ Եգիպտոսի թագավորը։

Եվ Պետափրես անհարմար զգաց այնուհետև, դստեր հետ Հովսեփի մասին խոսել, քանի որ նա հանդգնաբար և բարկութեամբ պատասխանեց։

Եվ մի ծառա եկավ Պետափրեսի մոտ՝ և ասում է.

— Ահավասիկ Հովսեփ զավթի դռների մոտ է։

Եվ Ասաներէ, երբ լսեց այդ բանը, փախավ հոր և մոր մոտից, և ելավ վերնատուն, և մտավ իր սենյակը։ Եվ կանգնեց իր մեծ պատուհանի մոտ, որ արևելք էր նայում, որպեսզի տեսնի Հովսեփին՝ իր հոր տունը մտնելիս։

www.a-pdf.com

Եվ ելան Հովսեփին ընդառաջ՝ Պետափրես և իր կինը, և նրա բոլոր ծառաները, և տան բոլոր սպասավորները, և բացին գավթի դռները, որ արևելք են նայում։ Եվ մտավ Հովսեփ՝ Փարավոնի կառքը նստած, և կառքին լծած էին չորս ձյունաճերմակ ձի՝ բոլորը ոսկեսանձ։ Եվ կառքը՝ ամբողջապես ոսկուց։ Եվ Հովսեփ հագած էր սպիտակ հանդերձ և ծիրանի բեհեզ՝ ոսկով ընդելուզված, և ոսկե պսակ կար նրա գլխին, և պսակի շուրջը՝ տասներկու պատվական ակ, և ակների վրա կային տասներկու ճառագայթատարած կերպարանք։ Եվ գավազան կար նրա ձախ ձեռքին, և նրա աջ ձեռքին՝ ձիթենու բարձր ոստեր, որ պտղառատ էին, պտուղը՝ նույնպես սաստիկ պարարտ։ Եվ մտավ Հովսեփ գավիթ, և փակվեցին բոլոր դռները, և այր ու կին մնացին գավթից դուրս, որովհետև պահապանները դռներն ախեցին և ոչ մեկին ներս չթողին։

Եվ եկան Պետափրես և իր կինը, և նրա բոլոր ազգականները, բացի նրանց դուստր Ասանեթից, և խոնարհվեցին Հովսեփին։ Եվ Հովսեփ իջավ իր կառքից, և նրան իրենց գիրկն առան։

Եվ տեսավ Ասանեթ Հովսեփին, և սիրեց նրան մեծ սիրով, և թալկեց նրա անձը, ծնկները ծալվեցին, և դողում էր ամբողջ մարմնով։ Եվ մեծ ահ ընկավ նրա վրա, և սաստիկ երկյուղով համակվեց Ասանեթ, հոգոց հանեց սրտից և ասում է.

— Ի՞նչ անեմ այժմ թշվառականս։ Նոր չէ՞ր, որ իմ հայրն ու մայրը քամահրանքով էին խոսում ինձ հետ՝ ասելով, թե Քանանացոց երկրից հովվի որդին գալիս է մեզ մոտ, չէի՞ն պատմում Հովսեփի մասին։ Իսկ սա եկավ մեզ մոտ իբրև արեգակ և մտավ մեր տաճարը։ Եվ ես՝ անզգամս ու հանդուգնս, արհամարհեցի նրան անարգելով և չար բաներ խոսեցի նրա մասին։ Եվ չգիտեի, որ Հովսեփ նման է Աստծու որդու, քանի որ մարդկանցից ո՞վ է ծնվում այսպես գեղեցիկ, և ինչպիսի՞ արգանդից է երկնում այսպիսի լուսավոր մարդ։ Եվ ես՝ թշվառականս ու անզգամս, իմ հորը չար բաներ ասացի նրա մասին։ Իսկ այժմ ո՞ւր գնամ ու թաքնվեմ նրա երեսից, որ Աստծու սիրելի Հովսեփ ինձ չտեսնի։ Ինձ այսպես է թվում՝ նա տեսնում է ամեն ծածուկ բան, և ոչինչ չի վրիպի հայացքից՝ մեծ լույսի պատճառով, որ նրանից է ճառագում։ Եվ այժմ քավություն տուր ինձ, Տեր, քանի որ անգիտությամբ չար բաներ խոսեցի նրա հասցեին։ Եվ հայրս թող ինձ աղախնության և սպասավորության տա, և լինեմ նրան ծառա հավիտյանս հավիտենից։

Եվ մտավ Հովսեփ Պետափրեսի տաճարը, և նստեց աթոռին։ Եվ լվացին նրա ոտքերը, և նրան սեղան դրին առանձին, քանի որ Հովսեփ չէր ուտում եգիպտացիների հետ՝ պղծություն էր համարում նրանց հետ ուտելը։ Եվ ասում է Հովսեփ Պետափրեսին և նրա բոլոր ազգականներին.

— Ո՞վ է այն կինը, որ վերնատանն է, պատուհանի մոտ, թող հեռանա այս ապարանքից։— Որովհետև Հովսեփ երկյուղով մտածում էր՝ «Ինձ հանկարծ հոգս չպատճառի», քանի որ նրան ձանձրացնում էին եգիպտոսի մեծամեծների կանայք և դուստրերը, երբ տեսնում էին Հովսեփին, չարաչար ախտահարվում էին նրա գեղեցկությունից։ Բայց Հովսեփ արհամարհում էր նրանց, և նվիրակներին, որ ուղարկում էին եգիպտացոց կանայք ոսկով ու արծաթով, մեծամեծ ընծաներով հանգերձ, հետ էր դարձնում սպառնալով ու թշնամանքով, և իր հայր Հակոբի կերպարանքն էր աչքի առաջ միշտ հառնում։ Որովհետև Հակոբ ասում էր Հովսեփին և մյուս որդիներին.

www.a-pdf.com

— Պահեցեք ձեր անձերը, որդյակներ, օտար կանանցից, որ չհավասարվեք նրանց։ Նրանց հավասարվելը կորուստ է և ապականություն։

Պատասխանում է Պետափրես Հովսեփին.

— Նա, որին տեսար վերնատանը, օտար կին չէ, այլ մեր դուստրը և քո ծառան։ Եվ ոչ մի այր չի տեսել նրան, այլ միայն դու՝ այսօր։ Թե կամիս՝ գա քեզ երկրպագի, որովհետև մեր դուստրը քույր է քեզ։

Եվ մեծ ուրախությամբ ուրախացավ Հովսեփ Պետափրեսի խոսքից, թե կույս է և ատում է ամեն մարդու երևալը։ Եվ Հովսեփ խորհեց իր մտքում, և ասաց. «Եթե կույս է և ատում է ամեն տղամարդու, ինձ հոգս չի պատճառի»։ Եվ Հովսեփ Պետափրեսին և նրա ամբողջ ազգատոհմին ասում է.

— Եթե քո դուստրն է և կույս, թող գա, և այսուհետև կսիրեմ նրան իբրև քրոջ։

Նրա մայրը ելավ վերնատուն և բերեց Ասաներթին և կանգնեցրեց նրան Հովսեփի առջև։ Եվ ասում է Պետափրես իր դուստր Ասաներթին.

— Ողջունիր քո եղբորը։ Նա ևս քեզ նման կույս է մինչև օրս և ատում է բոլոր կանանց, ինչպես դու՝ բոլոր օտար տղամարդկանց։

Եվ ասում է Ասաներթ Հովսեփին.

— Ուրախ եղիր, ով Տեր, օրհնյալդ Աստծու։

Եվ ասում է Հովսեփ Ասաներթին.

— Քեզ օրհնե Թող Տերը, որ կենդանություն է տալիս ամեն ինչի։

Եվ ասում է Պետափրես դստերը.

— Մոտեցիր և համբուրիր քո եղբորը։

Եվ երբ մոտեցավ Ասաներթ համբուրելու Հովսեփին, Հովսեփ մեկնեց իր ձեռքը, դրեց նրա կրծքին և ասում է.

— Վայել չէ աստվածապաշտին, որ կենդանի Աստծուն է օրհնում և ճաշակում է օրհնյալ ու կենդանարար հաց, ըմպում օրհնյալ բաժակ անմահության, օծվում անապականության օծմամբ՝ համբուրել օտար կնոջ, որն իր բերանով օրհնում է մեռյալ ու համր կուռքերի և ճաշակել է նրանց սեղանից հեղձուցիկ կերակուրներ, և նրանց սեղանից բաժակով ըմպում է գինի նենգության, և օծվում կորստյան օծմամբ։ Այլ աստվածապաշտ մարդը պարտավոր է համբուրել իր բարեկամ և բարեպաշտ մորն ու քրոջը և բոլորին, որ իր ցեղից են ու ազգից, և իր անկողնակից կնոջը, և իր բերանով խոստովանի կենդանի Աստծուն։ Բարեպաշտ կնոջը նույնպես վայել չէ համբուրել օտար տղամարդու, որովհետև պղծություն է Տեր Աստծու առջև։

Եվ երբ լսեց Ասաներթ Հովսեփի խոսքը, ղջաց հույժ և մեծապես տրտմեց։ Հոգոց էր հանում և հառաչում։ Աչքերը հառել էր հեզ, ողորմած և Աստծու երկյուղած Հովսեփի վրա։ Եվ նայում էր, և նրա աչքերը լցվեցին արցունքով։ Եվ տեսավ նրան Հովսեփ, ու ողորմեց նրան, և Հովսեփ բարձրացրեց իր աջ ձեռքը և դրեց Ասաներթի գլխին, և ասաց.

— Տեր Աստված մեր հայրերի, օգնիր այս կույսին և նորոգիր սրան քո հոգով ու քո ստեղծմամբ, վերստին կենդանացրու սրան քո անտես ձեռքով։ Եվ թող ուտի կենաց հացը և խմի կենդանության բաժակը։ Եվ սրան ընդունիր քո ժողովրդի մեջ, որ ընտրեցիր ամեն ինչի լինելուց առաջ, և նա թող վայելի հանգիստը, որ քո սիրեցյալներին ես պարգևում։

Եվ Հովսեփի օրհնությունից ուրախ եղավ Ասաներթ մեծ ուրախությամբ։ Եվ դարձյալ գնաց վերնատուն, ընկավ իր մահճի վրա հառաչելով։ Որովհետև նրա համար ուրախություն ու տրտմություն էր, և երկյուղ ու դող, և սաստիկ տառապանք։ Երբ լսեց Հովսեփի բոլոր խոսքերը, դառնապես լացեց մեծ

www.a-pdf.com

լացով, սառեց նրա սիրտը աստվածներից, որ պաշտում էր, և ատեց իր բոլոր կուռքերին։ Եվ մնաց մինչև երեկոյի մոտենալը։

Եվ Հովսեփ կերավ և ըմպեց, և ասում է պարմաններին, որ լծեն ձիերն ու պատրաստեն կառքը, որ մեկնի։

Եվ ասում է Պետափրես Հովսեփին.

— Իմ տերն այսօր թող այստեղ հանգստանա, իսկ վաղը գնա իր ճանապարհը։

Եվ Հովսեփ ասում է.

— Ոչ այդպես, այլ այսօր կգնամ, որովհետև սա այն օրն է, երբ Տերն սկսեց ստեղծել իր բոլոր արարածներին։ Եվ յոթերորդ օրը, երբ փոխվի այս օրվան, ես ետ կդառնամ և կհանգրվանեմ ձեզ մոտ։

Եվ գնաց Հովսեփ իր ճանապարհը, և Պետափրես իր ընտանյոք գնաց իրենց կալվածը։ Եվ Ասանեթ մենակ մնաց յոթ կույսերի հետ, և ծանրանում էր ու լալիս մինչև արևի մուտը, և հաց չկերավ, և ջուր չըմպեց։ Եվ երբ մոտեցավ գիշերը, և ննջում էին բոլորը, որ տանն էին, Ասանեթ էր միայն արթուն, և մտածում էր Հովսեփի մասին, և լալիս ու կոծում էր սաստկապես, և մեծ երկյուղով երկնչում էր ու դողում սաստիկ դողմամբ։ Եվ երբ բոլորը հանդարտվեցին, ելավ Ասանեթ իր թախտից և հուշիկ իջավ աստիճաններով, և եկավ դռների վրայից քանդեց վարագույրները, լցրեց հնոցի մոխրով։ Եվ տանելով վերնատուն՝ դրեց գետնին, և ելավ դուռը փակեց դռնափակով, և հառաչեց մեծ հառաչմամբ ու արտասուքով։ Եվ լսեցին դայակն ու կույսերը, որոնց շատ էր սիրում Ասանեթ։ Եկան նրա դուռը և ասում էին փակ դռան հետևից.

— Քեզ ի՞նչ պատահեց, մեր տիրուհի Ասանեթ, և ի՞նչն է, որ վշտացնում է քեզ։ Բա՛ց դուռը մեր առջև, և տեսնենք՝ քեզ ի՞նչ եղավ։

Եվ չբացեց դուռը Ասանեթ։ Բայց ներսից ասում է նրանց.

— Գլուխս ծանրացավ, և չեմ հանգստանում իմ անկողնու մեջ, և ելնել ու բանալ չեմ կարող։ Որովհետև տկարացան բոլոր անդամներս։ Դուք գնացեք ձեր սենյակները և հանգստացեք, թողեք ինձ ևս, որ փոքր-ինչ հանգիստ առնեմ։

Եվ կույսերը լսելով նրան՝ յուրաքանչյուրն իր սենյակը գնաց։ Այնժամ ելավ Ասանեթ և լուռ բացեց դուռը, գնաց երկրորդ սենյակ, ուր նրա զարդատուփերն էին, և բացեց արկղը, հանեց սև ու թյուրաթուխ-մթնագույն հագուստները։ Դա նրա սգո հանդերձն էր։ Եվ հագավ Ասանեթ իր սև շորերը, և բերեց իր սենյակը, և դուռը փակեց դռնափակով։ Եվ շտապ հանեց Ասանեթ արքունական հանդերձները և բեհեզը, և ոսկով ընդելուզյալ ծիրանիները, և ոսկի գոտին, և գլխի թագը, և ապարանջանները՝ ձեռքերից ու ոտքերից, և բոլորը նետեց պատուհանից, որ հյուսիս էր նայում, և փութաց Ասանեթ և առավ նույնպես բոլոր ոսկեղեն ու արծաթյա չաստվածները, որոնց թիվ ու համար չկար, վերնատան պատուհանից նետեց, և առավ Ասանեթ իր արքունական ընթրիքը՝ հացն ու ձուկը, և երնջի միսը, և իր չաստվածների բոլոր ողջակեզները, և գինու գավը, որի մեջ ողջակեզ էր անում, և գցեց պատուհանից, և ամեն ինչ տվեց օտար շներին կերակուր, որովհետև ասաց Ասանեթ.

— Թող իմ շները չուտեն այս ընթրիքից ու կուռքերի գառան ողջակեզներից, այլ օտարների շները թող ուտեն։

Եվ արձակեց Ասանեթ մազերի հյուսքերը, և իր գլխին մոխիր լցրեց, և ձեռքով բախեց կուրծքը, և լացեց մեծ լացով դառնապես՝ կոծելով գիշերը

մինչև լույս։ Եվ երբ առավոտացավ, Ասանեթ տեսավ պատուհանից կավացած մոխիրը, որ հատակին էր։ Եվ կրկին երեսնիվայր ընկավ մինչև երեկո՝ արևամուտի կողմերը, և այսպես արեց Ասանեթ մինչև յոթերորդ օրը, չարչարում ու տառապեցնում էր ինքն իրեն յոթ օր, հաց չէր ուտում և ջուր չէր խմում։ Ութերորդ օրը լուսադեմին, երբ սկսեցին հավքերի գեղգեղանքն ու շների հաչոցը ճանապարհների վրա, վեր բարձրացրեց գլուխը, որովհետև ձեռուոտ ծյուլացած էին ներակուրի յոթնօրյա կարոտությունից։ Ծունկի գալով՝ ձեռքը դրեց գետնին ու գլուխը կախեց։

Եվ գլխի մազերը թափվել և փտել էին մոխրի սաստկությունից։ Եվ Ասանեթ ծեծում էր կուրծքը, հոգոց էր հանում ու հառաչում, պոկում էր գլխի մազերը և մոխիր լցնում վրան։ Այսպես չարչարվեց Ասանեթ ու նեղսրտեց, ավելի տկարացավ և նստեց արևելահայաց պատուհանին, գլուխը ծնկին դրեց և ձեռքերը կցեց ծնկների վրա։ Եվ խոսքերը սպառվել էին, և Ասանեթ չբացեց բերանը յոթ օրվա իր նեղության մեջ և ասաց Ասանեթ իր սրտում, թե.

— Ի՞նչ անեմ կամ ո՞ւմ ապավինեմ, կամ ո՞ր կողմ գնամ՝ որբ ու անօգնական։ Թույլ տվի, որ բոլորը երես դարձնեն ինձնից, իմ հորն ատելի եղա, վիրավորեցի բոլոր մարդկանց, և սրա համար ինձ ատեցին իմ հայրն ու մայրը և բոլոր ազգականները, և իմ հայրն ասաց. «Այլևս Ասանեթ մեր դուստրը չէ, որովհետև կործանեց մեր ոսկեղեն ու արծաթյա չաստվածներին»։ Եվ հիմա ընկա բոլորի աչքից, և իմ այս նեղության մեջ ո՞վ ձեռք կմեկնի աղհամաղհվածքս. Գալց ուրախ նրա նեղությանս համար։— Այս էր լռել խորհում ու ասում։

— Տեր Աստված բարձրյալդ Հովսեփի, որ ատում ես մեռյալ և համր ու անշունչ կուռքեր պաշտողներին, քանի որ վրեժխնդիր Աստված ես և ահավոր՝ օտար աստվածների դեմ։ Աստված նաև այն բանի համար ինձ ատեց, որ ես պաշտեցի անմռունչ և համր ու անշունչ կուռքերին, և օրհնեցի նրանց, և կերա նրանց մատաղից, և իմ բերանը պղծվեց։ Իսկ այժմ լսեցի ոմանցից, թե Եբրայեցոց Աստվածն է ճշմարիտ, և կենդանիների Աստված է, ողորմած Աստված է, երկայնամիտ է ու բազումողորմ, և չի հաշվում մարդու մեղքերը, հանդուրժում է ապաշխարողին և չի հանդիմանում մարդուս նեղության ժամին։ Եվ այժմ կհամարձակվեմ և կդառնամ դեպի նա, կապավինեմ նրան, և կխոստովանեմ նրան իմ բոլոր մեղքերը, և կհեղեմ նրա առաջ պաղատանքներս, և նա ինձ կողորմի։ Ով գիտե, գուցե կնայի իմ տառապանքին։ Կնայի ամայությանս և կգթա։ Ով գիտե, գուցե տեսնի իմ ողբումն ու օգնի ինձ։ Որովհետև նա որբերի հայր և նեղյալների օգնող է։ Կհամարձակվեմ և կաղաղակեմ առ նա, որ թերևս թողություն տա ինձ։

Եվ ելավ Ասանեթ այն որմից, և կանգնեց իր ծնկների վրա, և բարձրացնելով իր ձեռքը՝ նայեց երկնքին, բացեց իր բերանը Աստծու հանդեպ և ասաց.

— Տեր Աստված հավիտենից, որ ստեղծեցիր ամեն ինչ և կենդանություն շնորհեցիր՝ քո բոլոր արարածների կենդանությունը, որ աներևույթ բաները լույսին հանեցիր, որ աներևույթից և անէությունից ստեղծեցիր քո երևելի արարածներին... Խնայիր ինձ, Տեր, զի մեղք ու հանցանք գործեցի քո առջև, Տեր, բազմապատիկ մեղա և անօրինեցի, ամբարշտեցի, և խոսեցի չար ու անասելի բաներ, պղծվեց իմ բերանը կուռքերի զոհերից։ Որի համար բազմիցս պղծվեցի անօրինությամբ և պաշտեցի մեռյալ ու համր կուռքերին։ Իսկ այժմ արժանի չեմ բանալու իմ բերանը բազում մեղքերիս պատճառով։ Ես՝ Ասանեթ, դշխո դուստրը քուրմ Պետափրեսի, երբեմն ամբարտավան և

www.a-pdf.com

անբարհավաճ դժոխք, այժմ որբացա և ամայացա՝ բոլորից լքված, միայն քեզնից ունեմ ակնկալություն, Տեր, և առ քեզ եմ աղաղակում. դու փրկիր ինձ նախքան վերահաս հալածանքներս: Որովհետև ինչպես մանուկը զարհուրած փախչում է իր հոր մոտ, և հայրը ձեռքը մեկնելով՝ բարձրացնում է նրան, և մանուկը ձեռքերով կախվում է հոր պարանոցից ու ապահով զգում, հանգըստանում հոր գրկում, նույնպես և ես խոռվել եմ ամեն կողմից և, Տեր իմ հայր, դեպի քեզ եմ փախչում: Արդ, մեկնիր դու ձեռքդ և խլիր ինձ երկրից: Որովհետև ահա վայրենի ու ծերացած առյուծն ինձ փախստական է դարձնում, քանի որ նա է եգիպտացոց աստվածների հայրը: Չէ՞ որ հեթանոսների բոլոր կուռքերը առյուծի զավակ են: Իսկ ես բոլոր աստվածներին ի բաց մերժեցի և կորցրի նրանց, և առյուծը՝ նրանց հայրը, սրտմտած հալածում է ինձ: Տեր իմ, ազատիր ինձ նրա ձեռքից և նրա բերանից փրկիր, որ չհափշտակե ինձ ու հոշոտե՝ գցելով հնոցի հրի մեջ, հետո՝ մրրկի: Մրրիկը չպատե ինձ ու խավարեցնե, հետո նետե ինձ անդնդի խորերը, և կուլ տա մեծ կետը, և կորչեմ հավիտյանս ժամանակաց: Փրկիր ինձ, Տեր, այս բոլորից առաջ: Փրկիր և զորացրու խորթացածիս, որովհետև իմ մայրն ու հայրն ուրացան ինձ՝ ասելով. «Մեր դուստրը չէ Ասաներթ, որովհետև կորցրեց մեր աստվածներին և ատեց նրանց»: Այդ պատճառով ատելի եղա նրանց և ամայի, և որբ, և հույս՝ քեզ վրա, Տեր: Ողորմյա ինձ՝ կույսիս ու տառապյալիս. չէ՞ որ դու ես բարի և քաղցր հայր ու մայր: Ո՞ր հայրն է, Տեր, քաղցր քեզանից, և ո՞ր մայրը՝ գթած քեզ նման, և ո՞վ է ներողամիտ մեղուցյալների նկատմամբ՝ քեզ պես: Ահավասիկ փախստական եմ դարձել և քեզ, Տեր, ինձ ապավեն ճանաչել: Ահա երկրի բոլոր բարիքները թողի և քեզ ճանաչեցի ինձ հույս, Եվ հիմա հող ու մոխրով աշխարում եմ առ քեզ, լալիս իմ մեղքերը: Ահա ինձնից հեռացրի թագավորական զգեստը, բեհեզ, ակնազարդ ու ոսկեհուռ, և սգո հանդերձներ հագա: Ահա քանդեցի իմ ոսկե գոտին և քուրձ հագա: Ահա իմ թագն ու պսակը գցեցի իմ գլխից և մոխիր հագա: Ահա իմ արցունքից մոխիրս կավացավ և եղավ ճամփաների կավի նման: Իմ արքունական ընթրիքը օտարների շներին բաշխեցի և ես յոթ գիշեր հաց չճաշակեցի և ջուր չըմպեցի, և լեզուս եղավ եղյուրի պես չոր, և շրթունքներս՝ իբրև խեցի: Իմ դեմքը վայր խոնարհվեց, և աչքերս ուռեցին սաստիկ արտասուքից, և ինձնից պակասեց իմ ամբողջ զորությունը: Այժմ չաստվածներին, որոնց նախապես պաշտում էի անգիտությամբ, ճանաչեցի և իմացա, որ անմռունչ ու խուլ կուռք էին. ես ոտնատակ տվի նրանց, գողերը հափշտակեցին ոսկին ու արծաթը, և բոլորը կորցրի իմ աչքից: Որովհետև քեզ ապավինեցի, Տեր Աստված Հովսեփի, դու ապրեցրու ինձ, Տեր, և թողություն տուր ինձ, որ մոլորվեցի և իմ տեր Հովսեփի մասին հայհոյական բաներ բարբառեցի. չգիտեի, որ նա քո սիրելին է իբրև որդի: Կարծեցյալ պարզամտությամբ մարդիկ ինձ ասացին, թե Հովսեփ Քանանացոց երկրից մի հովվի որդի է, և ես հավատացի նրանց, մոլորվեցի. արհամարհեցի և չարախոսեցի նրան: Չգիտեի, որ Հովսեփ որգու նման սիրելի է քեզ, մարդկանցից ո՞րը կծնվի այսպիսի գեղեցկությամբ, այսքան իմաստուն և առաքինի: Պահիր նրան, Տեր, քո շնորհի իմաստությամբ և ինձ հանձնարարիր որպես աղախին Հովսեփի և սպասավոր: Եվ ես հարդարեմ նրա անկողինը, լվանամ նրա ոտքերը, ծառայեմ նրան:

Եվ երբ Ասաներթ դադարեց Տիրոջ առջև խոսելուց, և ծագեց Արուսյակը, Ասաներթ տեսավ աստղը, ուրախացավ հույժ և ասաց. «Երևի Աստված լսեց իմ աղոթքները, քանի որ ահա Աստծու հրաշեկ աստղը բարենշան՝ ծագեց»:

www.e-pdf.com

Եվ դառնալով՝ Ասանեթ տեսավ մեծ ու անճառելի լույսը և երեսնիվայր ընկավ մոխիրների վրա։ Եվ տղամարդու կերպարանքով մեկն իջավ երկնքից, և կանգնելով ասաց.

— Ասանեթ։

Եվ նա պատասխանեց.

— Ո՞վ էր, որ կանչեց ինձ. չէ՞ որ սենյակիս դռները փակ են, և աշտարակս բարձր է, արդյոք, ինչպե՞ս կարողացավ մտնել իմ սենյակը։

Եվ այրը երկրորդ անգամ կանչեց նրան.

— Ասանեթ։

Եվ Ասանեթ պատասխանում է.

— Ո՞վ ես դու, պատմիր ինձ։

Եվ ասում է այրը.

— Ես Իսրայելի իշխանն եմ և զորավոր, քան բարձրյալի բոլոր որդիները։ Արի կանգնիր և մնա քո ոտքերի վրա, և ասեմ քեզ իմ խոսքը։

Եվ բարձրացրեց Ասանեթ գլուխը, և տեսավ, և ահա այրն ամբողջապես նման էր Հովսեփին՝ պատմուճանով և պսակով, և թագավորական զավազանով։ Բայց նրա դեմքը փայլակի պես էր, և նրա աչքերը՝ որպես արևի ճաճագայթներ, և նրա գլխի մազերը՝ բոցի նման, և նրա ձեռքերը՝ ինչպես երկաթ հրաշեկ, և կայծակներ էին արձակում նրա ձեռներն ու ոտները՝ իբրև եռացած հոսր, որոնք տեսնելով՝ Ասանեթ երեսնիվայր ընկավ գետնին և համակվեց մեծ երկյուղով, և դողով բռնվեցին նրա ոսկորների բոլոր հատվածները։ Եվ այրն ասում է նրան.

— Քաջալերվիր, Ասանեթ, և մի՛ երկնչիր, այլ արիաբար մնա ոտքի վրա, և քեզ ասեմ իմ խոսքերը։

Եվ ելավ Ասանեթ, և կանգնեց ոտքի։ Եվ այրն ասում է.

— Գնա և հանիր քո այդ սև ու սուգի պատմուճանը, որ հագար, հողը, որ մեջքիդ է՝ իջեցրու, թոփիր մոխիրը քո գլխից, և լվա քեզ կենդանության ջրով, և հագիր ազնիվ ու փառավոր պատմուճան, և ոսկի գոտի կապիր, որ քո կուսությունն է, և արի՛, որ ասեմ քեզ իմ խոսքերը։

Եվ շտապեց Ասանեթ, մտավ իր երկրորդ սենյակը, ուր նրա զարդատուփերն էին, և բացեց արկղը, այնտեղից առավ կտավե ու երևելի զգեստները, որ երբեք ձեռք տված չէին։ Եվ հանեց վրայից սև ու սուգի պատմուճանը, և թոթափեց մեջքի փոշին, և հագավ երևելի հանդերձները, և կապեց երկու գոտիները, որ իր կուսությանն էին. մեկը կապեց մեջքին ու մյուսով՝ ամփոփեց ստինքները։ Եվ թոթափեց մոխիրն իր գլխից, և լվաց ձեռներն ու երեսը, և առավ կտավե վարշամակը՝ նոր ու պայծառ, և ծածկեց իր գլուխը, եկավ առաջին սենյակը, ուր այն այրն էր, կանգնեց նրա առաջ։ Եվ ասում է նրան այրը.

— Հանիր գլխիդ վարշամակը. ինչո՞ւ դա արեցիր այսօր։ Դու ուրբ ու պարկեշտ կույս ես՝ մինչև օրս. և քո գլուխը երիտասարդ տղամարդու գլխի նման է։

Եվ հանեց Ասանեթ վարշամակը գլխից, և ասում է նրան այրը.

— Գոտեպնդվիր, Ասանեթ, կույսդ սուրբ, ահա լսեցի քո խոսքերը խոստովանության ու աղոթքի, ահա տեսա քո յոթնօրյա կարոտի տառապանքը։ Ահավասիկ իմ աչքերի առաջ տեսնում եմ կավը՝ մոխրով և արտասուքով հունցած։ Գոտեպնդվիր, Ասանեթ, կույս սուրբ, ահա քո անունը Աստծու մատով գրված է երկնքի կենդանության գրքում՝ գրվելու ակզբից իսկ, և, նախքան շատերինը, գրվեց քո անունը՝ անչինչ հավիտյանս հավիտենից։ Ահա

www.a-pdf.com

այսուհետև կնորոգվես, վերստին կկենդանանաս և կուտես օրհնության կենարար հացը, և անապականության օծում կստանաս։ Քաջալերվիր, Ասանեթ, կույս սուրբ, ահա քեզ հարս եմ դարձնում Հովսեփին հավիտենապես։ Եվ քո անունն այլևս չկոչվի Ասանեթ, այլ՝ Քաղաք ապավենի։ Որովհետև բազում ազգեր քեզնով կապավինեն երկնքի Տեր Աստծուն։ Եվ քո հովանու տակ Տեր Աստծուն հուսացողները կծածկվեն։ Նա է բոլոր պարգևները բաշխողը և բոլոր կույսերի գորացնողը, և կուսությունն է խնդրում, և սիրում հույժ, և բոլորին, եթե ապաշխարում են, իր մոտ, իր հարկում է ընդունելու, և նրանց հանգստության տեղ է պատրաստում երկնքում, և հանգստացնում է բոլոր ապաշխարողներին, և նա կխնայի նրանց։ Իսկ ես ահա գնում եմ Հովսեփի մոտ և կխոսեմ նրա հետ քո մասին ամեն ինչ։ Եվ կմտնի այսօր Հովսեփ քեզ մոտ, և ուրախալի կլինի այսօր քեզ համար, և կսիրի քեզ, և քեզ փեսա կլինի, և դու նրան հարս կլինես հավիտյանս։ Եվ այժմ լսիր ինձ, Ասանեթ կույս, և զգեցիր քո հարսնության պատմուճանը, որ սկզբից ևեթ պատրաստված է քեզ համար, և ամենայն զարդով կարգած։ Եվ դու կելնես կերթաս Հովսեփին ընդառաջ, որովհետև նա ահա այսօր կգա քեզ մոտ։

Եվ երբ այրն ավարտեց խոսքը, Ասանեթ մեծ խնդությամբ խնդաց նրա բոլոր խոսքերից, և ընկնելով նրա ոտքերը՝ երկրպագեց նրան և ասաց.

— Օրհնյալ է բարձրյալն Աստված, որ առաքեց քեզ և փրկեց ինձ այս խավարից, և բարձրացրեց անդունդի խորքերից, և օրհնյալ է քո անունը հավիտյան։ Եվ ասա՝ ի՞նչ է քո անունը, տեր, պատմիր, որ օրհնեմ քեզ մինչև իմ օրերի վերջը։

Ասում է նրան այրը.

— Իմ անունը երկնքում է գրված առհավետ, Բարձրյալի մատյանում, Աստծու մատով, գրված է առաջ, քան բոլոր մյուսներինը։ Բոլոր անունները, որ գրված են Բարձրյալի գրքում՝ անքննելի են, և մարդուն լսելի չեն, և տեսանելի չեն այս աշխարհում։ Քանի որ մեծ են նրանց անունները և սքանչելի, և զովելի հույժ։

Եվ առում է Ասանեթ.

— Շնորհներ գտա քո առաջ և գիտեմ ամեն ինչ, որ ասացիր ինձ, և սակայն թող խոսեմ քո առաջ։

Եվ նա առում է.

— Խոսիր։

Եվ ասում է Ասանեթ.

— Աղաչում եմ քեզ, Տեր։— Եվ ասելիս՝ նրա ձեռքերը մոտենում են նրա ծնկներին, և ասում է նրան պաղատելով.

— Մի քիչ նստիր այս թախտին, որովհետև թախտս մաքուր է և առանց պղծության, և այր կամ կին երբեք չի նստել սրա վրա, և քո առջև սեղան փռեմ և շտեմարաններիցս հին և անուշ հաց ու գինի բերեմ, և դու ուտես ու ըմպես, և ապա գնաս քո ճանապարհը։

Եվ ասում է նրան այրը.

— Շտապիր։

Եվ Ասանեթ շտապեց, և նրա առաջ բերեց դատարկ սեղան, և ինքը գնաց նրա մոտից, և կամենում էր մտնել իր շտեմարանը, որ բերի և նրա առաջ հաց դնի։ Ասում է նրան այրը.

— Բեր ինձ մեղրի խորիսխ։

Եվ տեղի տալով՝ տրտմեց Ասանեթ, քանի որ մեղրի խորիսխ չուներ իր շտեմարանում։

www.a-pdf.com

Ասում է այրը.

— Ինչո՞ւ տրտմեցիր։

Եվ Ասանեթ պատասխանում է.

— Մի երեխայի ուղարկեմ քաղաքից դուրս, այստեղից հեռու չէ մեր ժառանգական կալվածը, այնտեղից շտապ բերի մեղրի խորիսխ, և դնեմ սեղանին։

Ասում է նրան այրը.

— Գնա մտիր քո շտեմարանները և սեղանի վրա կգտնես մեղրի խորիսխ, որ վերցնելով՝ կբերես այստեղ։

Եվ մտավ Ասանեթ շտեմարանը և գտավ մեղվի մաղեր՝ սեղանին, և մաղը մեծ ու սպիտակ էր ձյան նման, լի մեղրով, և մաղը երկնի ցողի նման էր, և նրա բույրը՝ իբրև հոտ կենդանության։ Եվ զարմացավ Ասանեթ, և մտածում էր, թե այս այրի բերանի՞ց է արդյոք ելել այս խորիսխը։ Որովհետև սրա հոտը նման է այս այրի հոտին։ Եվ առավ Ասանեթ այն խորիսխը, և բերից, այրի առջև դրեց դատարկ սեղանին։

— Ինչո՞ւ ասացիր՝ մեղրի խորիսխ չկա հմ շտեմարանում, բայց հիմա այնտեղից բերիր սքանչելի խորիսխ։

Եվ զարհուրած Ասանեթ պատասխանեց.

— Ես, Տեր իմ, շտեմարանում մեղրի խորիսխ չունեի, բայց դու խոսեցիր, և եղավ։ Դուցե քեզնից է ելել սա, որովհետև սրա հոտը քոնն է։

Եվ ժպտաց այրը՝ մտածում էր Ասանեթի զգաստության մասին։ Եվ կանչեց նրան իր մոտ, և աջ ձեռքը մոտեցրեց նրա գլխին, և երկնչեց Ասանեթ նրա ձեռքից, որովհետև կայծակներ էին թափվում նրա բերանից։ Եվ զարհուրելով՝ Ասանեթ ապշահար նայում էր այրի ձեռքերին։ Իսկ նա ժպտում էր՝ ասելով.

— Երանի քեզ, Ասանեթ, քանի որ քեզ հայտնի դարձան բարձրյալ Աստծու խորհուրդները։ Եվ երանի բոլոր նրանց, ովքեր Տիրոջ առաջ կկանգնեն ապաշխարությամբ, որովհետև այս խորսխից են ուտելու։ Չէ՞ որ այս խորիսխը կենդանության շունչ է, և սա Աստծու փափկության դրախտի մեղուների գործն է՝ պատրաստած Աստծու կենդանության վարդենիների ցողից։ Սա է Աստծու բոլոր հրեշտակների կերակուրը, ընտրյալների կերակուրը։ Ամեն ոք, որ ճաշակում է կենդանության խորիսխ՝ չի մեռնի հավիտյան ժամանակներում։

Եվ այրը մեկնեց ձեռքը, վերցրեց խորսխից մի փոքր, և կերավ ինքը և մնացորդը դրեց նրա բերանը, և ասաց.

— Ասանեթ, ահա կերար հացը կենաց և ըմպեցիր բաժակ անմահության, օծվեցիր անապական օծումով։ Այսուհետև քո մարմինը կրողջոզի որպես ծաղիկ, և քո ոսկորները կպարարտանան ինչպես Աստծու փափկության դրախտի անտառները, և քո երիտասարդությունը ծերություն չի ճանաչի, և քո գեղեցկությունը չի պակասի հավիտյան, և բոլորի համար կլինես պարզապատում քաղաք՝ հանուն հավիտենից թագավոր Տեր Աստծու։

Եվ այրն իր ձեռքը մոտեցրեց այն տեղին, որտեղից վերցրել էր, և իսկույն պակասը լրացավ, եղավ ամբողջ՝ ինչպես առաջ էր։ Դարձյալ մեկնեց իր աջը և ցուցամատը մոտեցրեց խորսխի եզրին, որ արևելք էր նայում, և տարավ այն կողմը, որ արևմուտք էր նայում, և նրա մատը արնանման էր, և ձգեց երկրորդ անգամ, և ձեռքը մոտեցրեց խորսխի եզրին, որ հյուսիս էր նայում, և քաշեց հարավ նայող կողմը. և նրա մատը արնանման էր։

www.a-pdf.com

Եվ Ասանեթ նայում ու տեսնում էր՝ ինչ էր անում նա։ Եվ այրն ասում է մեղուների խորսխին.

— Եկ այստեղ։

Եվ ելան մեղուները այն մաղի բջիջներից՝ բյուր-բյուրով և հազար-հազարով։ Մեղուները ձյան պես սպիտակ էին, մեղրով բեռնավոր։ Եվ նրանց ծիրանիները՝ որդան կարմրի նման, և ոմանք կարծես ընդելուզված բեհեզներով, և գլուխները շրջանակված՝ ոսկեղեն պսակով։ Պատվական էին կերպարանքով, և նրանց խայթոցները սուր էին, և ոչ մեկին չէին վնասում։ Եվ բոլոր մեղուները շրջապատեցին Ասանեթին՝ ոտից գլուխ։ Եվ այս մեղուներն ընտիր էին ու մեծամեծ՝ որպես թագուհիներ։ Եվ ելնելով մաղից՝ պատեցին երեսն Ասանեթի և գործ գործեցին երեսի շուրջը, և խորսխի շրթունքը Ասանեթի բերանում էր։ Եվ այրն ասում է մեղուներին.

— Յուրաքանչյուրդ ձեր տեղը գնացեք։

Եվ բոլոր մեղուները թռան և իջան երկնքի հանդեպ, իսկ որոնք կամեցան վնասել Ասանեթին՝ մահացան։ Եվ այրը գավազանը մեկնեց մեռած մեղուներին, և ասում է նրանց.

— Եկեք դուք ևս գնացեք ձեր տեղերը։

Եվ ելան մեռյալ մեղուները, և իջան Ասանեթի ապարանքի հանդեպ, և նստեցին պտղաբեր ծառերի վրա։ Եվ այրն ասում է Ասանեթին.

— Իմացա՞ր այս տեսիլքը։

Եվ նա ասում է.

— Իմացա։

Եվ ասում է այրը.

— Այսպես թող լինի իմ խոսքը քեզ այսօր։

Եվ երրորդ անգամ մեկնեց աչը, հասցրեց խորսխին, և կերավ խորխխը, և սեղանից բան չպակասեց, բայց խորսխի բույրը բռնեց սենյակը։ Եվ բույրը շատ ախորժ էր։

Եվ ասում է Ասանեթ այրին.

— Ինձ հետ են իմ աննդակից յոթ կույս. նույն գիշերն ենք ծնվել ես և նրանք։ Ես սիրում եմ նրանց իբրև քույր։ Կանչեմ այստեղ, որ օրհնես նրանց, ինչպես ինձ օրհնեցիր։

Եվ այրն ասում է.

— Կանչիր։

Եվ կանչեց. և այրն ասում է նրանց.

— Բարձրյալն Աստված թող օրհնե ձեզ, այուն լինեք յոթ քաղաքի, և ձեզ վրա իշնի Տիրոջ օրհնությունը։

Եվ ասում է դառնալով Ասանեթին.

— Հավաքիր այս սեղանը։

Եվ Ասանեթ վերցրեց սեղանը տեղից, և դարձավ մյուս կողմը, որ սեղանը տեղը դնի. և այրը աներևութացավ նրա աչքից։ Եվ տեսավ Ասանեթ՝ կառքի նման մի բան երկինք էր սլանում արևելյան ուղղությամբ։ Եվ կառքը հրի էր նման, և նրա ձիերը՝ փայլակի, և այրն այն կառքի վրա էր։ Եվ ասում է Ասանեթ.

— Անմիտ եմ և հանդուգն, որ համարձակ խոսեցի և ասացի՝ մարդ եկավ սենյակս, չհասկացա, որ Տիրոջ հրեշտակն էր եկել ինձ մոտ։ Եվ ահա գնաց իր տեղը։— Եվ ասում է.

— Քավիր մեղքերս, Տեր իմ, և խնայիր քո աղախնին, որովհետև քո առաջ հանգուցն անզգամությամբ խոսեցի։

www.e-pdf.com

Ու մինչդեռ Ասաներթ մտածում էր այս մասին, եկավ մի մանուկ Պետափրեսի սպասավորներից և ասում է.

— Ահա Հովսեփ զորավորն Աստծու գալիս է մեզ մոտ. կառքն այս գավթի առաջ է։

Եվ փութաց Ասաներթ, և կանչեց իր դայակին, որ ամբողջ ունեցվածքն էր տնօրինում, և ասում է.

— Շտապ կարգի բեր տաճարը և ազնիվ ընթրիք պատրաստիր Աստծու զորավոր Հովսեփի համար, որ այսօր գալու է այստեղ։

Եվ տեսավ իր դայակը նրան՝ կերակուրների յոթնօրյա կարոտից թուլացած, և հույժ տրտմեց, և բռնեց նրա աջ ձեռքը, և համբուրեց նրան, և ասում է.

— Որդյակ։ Ինչո՞ւ այսպես դժգունած ես։

Ասում է Ասաներթ.

— Իմ գլխին ծանր ցավ եկավ, և քունը փախավ իմ աչքերից, այդ պատճառով գունատ է իմ դեմքը։

Եվ գնաց նրա դայակը և պատրաստեց տաճարը, և ընթրիք դրեց։ Եվ հիշեց Ասաներթ այրին ու նրա պատվիրանները, և փութով մտավ իր սենյակը, ուր զարդատուփերն էին, և բացեց մեծ արկղը, և հանեց իր հարսնության հագուստները՝ առաջինն ու ընտիրը, որ փայլակի էր նման, հագավ և կապեց գոտին՝ ոսկյա ու թագավորական, որ հորինված էր տեսակ-տեսակ գամերով, և ձեռքերին ու ոտքերին դրեց ոսկի ապարանջաններ, և զարդարեց իր պարանոցը պատվական զարդերով, որ կորած էր անգին քարերի մեջ՝ բյուր ու անհամար, և ոսկի պսակ դրեց գլխին։ Եվ պսակի աջ կողմից՝ ճակատի մոտ այս ու այնտեղ մեծ ակներ էին. վեց պատվական ու մեծագին ակ դրեց գլխին՝ իբրև հարս և վերցրեց թագավորական զավազանն իր ձեռքը։ Եվ հիշեց Ասաներթ իր դայակի խոսքերը, թե տրտմած է երեսդ. հոգոց հանեց և ասաց.

— Եթե դեմքս այլայլած է, և ինձ տեսնի Հովսեփ՝ կարհամարհե ինձ։

Եվ ասում է մի աննդակցի.

— Աղբյուրից ինձ մաքուր ջուր բեր՝ լվանամ երեսս։

Եվ բերեց ոսկենախշ դաշխուրանը, լցրեց ջուրը, և խոնարհվեց Ասաներթ, որ լվանա երեսը, և տեսավ իր դեմքը՝ արեգակի նման, և աչքերը՝ արուսյակի, որ ծագում է, և նրա ոտքերի գնացքը՝ հարթ ու գեղեցկախոս, և այտերը՝ կարմիր, որպես նռան հատ, և շրթունքները փթթած վարդի նման, և ատամները՝ աշտարակի պես գեղեցիկ։

Եվ այսպես տեսավ Ասաներթ իրեն ջրի մեջ, և ուրախացավ մեծ ուրախությամբ ու այլևս չլվաց երեսը։ Իսկ դայակը եկավ նրան պատմելու ամեն ինչի մասին, որ հրամայված էր իրեն, և երբ տեսավ նրան՝ հիացավ և հափշտակված մնաց մոտ երկու ժամ, և մեծ երկյուղ ապրեց նրա տեսքից, և խոնարհվեց նրա ոտքերին ու ասում է.

— Այդ ի՞նչ է, տիրուհիդ իմ, և կամ ո՛րտեղից է այդ մեծ գեղեցկությունը քո, սքանչելի ու հիահրաշ։ Կարծեմ թե երկնքի Տերն Աստված ընտրեց քեզ Հովսեփին հարսնության։

Ու մինչդեռ խոսում էին՝ ահա եկավ հասավ մի մանուկ և ասում է Ասաներթին.

— Ահավասիկ Հովսեփ գավթի դռանն է։

Եվ Ասաներթ շտապ իջավ սանդուղներով՝ յոթ կույսերի հետ, դիմավորելու Հովսեփին, և կանգնեց ապարանքի միջանցքում։ Եվ Հովսեփ մտավ գավթի,

www.a-pdf.com

և փակվեցին դռները, և դրսում մնացին բոլոր օտարականները։ Ասանեթ եկավ փողոց՝ հանդիպելու Հովսեփին։ Եվ տեսավ նրան Հովսեփ՝ և զարհուրեց գեզեցկությունից և ասում է.

— Ո՞վ ես դու, պատմիր ինձ վաղվաղակի։

Եվ նա ասում է.

— Ես քո աղախին Ասանեթն եմ, որ քո հրամանով կուռքերը դուրս նետեցի ու մատնեցի կորստյան։ Եվ մի այր եկավ ինձ կենաց հաց տվեց այսօր, և կերա, և բաժակ օրհնության ըմպեցի, և ինձ ասում է՝ ահա քեզ հարսնության տվեցի Հովսեփին, և նա թող լինի քեզ փեսա հավիտյանս ժամանակաց։ Եվ ասաց ինձ՝ կերթամ Հովսեփի մոտ և կխոսեմ նրա ականջին իմ խոսքը քո մասին։ Եվ այժմ կհիշես, Տեր իմ, որ այրն այն եկել է քեզ մոտ և խոսել իմ մասին։

Եվ ասում է Հովսեփ Ասանեթին.

— Օրհնված ես դու Աստծուց, որովհետև Աստված ամրացրեց քո ադամանդյա պարիսպը՝ կենդանության պարիսպը։ Այրն այն այսօր եկավ ինձ մոտ և խոսեց քո մասին։ Այժմ եկ ինձ մոտ, կույս սուրբ։ Եվ ինչո՞ւ ինձնից հեռու կանգնեցիր։

Եվ բարձրացրեց իր ձեռքը և կանչեց Ասանեթին։ Եվ եկավ Հովսեփի մոտ, և ընկավ նրա ձեռքերի վրա, և կենդանացան նրանց հոգիները, և լցվեցին ուրախությամբ։ Եվ Հովսեփ, ողջունելով Ասանեթին, կենդանության ոգի տվեց նրան, և ոգի ճշմարտության, և միմյանց շաղապատված՝ բազում ժամեր զվարճանում էին իրար հետ։

Եվ տսում է Ասանեթ.

— Արի, տեր իմ, մտի՛ր մեր տունը, որովհետև ես պատրաստեցի մեր տաճարը և մեծաշուք ընթրիք պատրաստեցի.

Եվ բռնելով նրա ձեռքից՝ տարավ տուն և նստեցրեց իր հոր աթոռին, և ջուր բերեց, որ լվանա նրա ոտքերը։ Եվ ասաց Հովսեփ.

— Կույսերից մեկը գա և լվանա իմ ոտքերը։

Ասանեթ առարկում է.

— Ո՛չ այդպես, տեր իմ։ Այսուհետև ես քո աղախինն եմ։ Եվ ի՞նչ պետք է քեզ, որ ուրիշ մեկը լվանա քո ոտքերը։ Քանի որ քո ոտքերն իմ ոտքերն են, և անձը քո՝ անձն իմ։

Եվ ստիպողաբար լվաց նրա ոտքերը։ Եվ Հովսեփ տեսնում էր, որ նրա ձեռքերը կենդանության ձեռքերի են նման, և նրա մատները՝ արագագիր գրչի։ Եվ սրանից հետո Հովսեփ բռնեց նրա աջ ձեռքը, և համբուրեց նրան, և Ասանեթ համբուրեց նրա գլուխը, և նստեց նրա աջ կողմը։ Եվ եկան նրա հայրն ու մայրն իրենց ագարակից, և նրա բոլոր ազգականները, և տեսան Ասանեթին լույս երազի նման, և նրա գեղեցկությունը երկնային էր, և տեսան նրան, որ նստել է Հովսեփի հետ, և հագած էր հարսանյաց հանդերձ, և զարհուրանքով սքանչացան նրա գեղեցկությունից , և փառք տվին Աստծուն, որ ամեն ինչի կենդանություն է հաղորդում, Այնուհետև կերան ու ըմպեցին և ուրախացան։

Եվ Փետափրես ասում է Հովսեփին.

— Վաղը կանչիր Եգիպտացոց նախարարներին ու մեծամեծներին, և ձեզ հարսանիք անենք, և իմ դուստր Ասանեթին քեզ կնության առնես։

Եվ ասում է Հովսեփ.

— Ոչ այդպես, այլ վաղը կգնամ Փարաւոն արքայի մոտ, որովհետև նա

www.a-pdf.com

ինձ հոր նման է և ինձ իշխան կարգեց երկրի վրա, նրան կասեմ Ասանեթի մասին, և նա Ասանեթին ինձ կնության թող տա։

Եվ ասում է Պետափրես.

— Գնա խաղաղությամբ։

Եվ Հովսեփ այն օրը մնաց Պետափրեսի մոտ, բայց չննջեց Ասանեթի հետ, որովհետև ասում էր, թե վայել չէ աստվածապաշտ մարդուն հարսանիքից առաջ ննջել ամուսնու հետ։

Եվ ելավ առավոտյան Հովսեփ, և գնաց Փարաւոնի մոտ, և ասում է նրան.

— Արեգ քաղաքի Պետափրես քրմի դուստր Ասանեթին ինձ կնության տուր։

Եվ Փարաւոն մարդ ուղարկեց և կանչեց Պետափրեսին։ Եվ նա Ասանեթին բերեց Փարաւոնի առաջ, և հիացավ Փարաւոն նրա գեղեցկությամբ և ասում է.

— Հովսեփի Աստծու օրհնությունը քեզ, որդյակ, և մնա քո գեղեցկությունը հավիտյանս հավիտենից։ Հիրավի Տերն ընտրեց քեզ հարս Հովսեփի հավիտյանս ժամանակաց։

Եվ առավ Փարաւոն Հովսեփին ու Ասանեթին, և նրանց զարդարեց ոսկի պսակներով, որ գանձերի տանն էին։ Կանգնեցրեց Ասանեթին Հովսեփի աջ կողմը և ձախ ձեռքը դրեց նրա գլխին, իսկ աջը՝ Ասանեթի գլխին, և ասում է.

— Բարձրյալն Աստված քեզ օրհնե և փառավորե հավիտյան։

Եվ դարձրեց նրանց իրար դեմ, և մոտեցրեց նրանց, և համբուրեցին միմյանց։ Եվ սրանից հետո Փարաւոնը հարսանիք արեց, և մեծամեծ ընթրիքներ, և բազում ուրախություններ՝ յոթ օր ու յոթ գիշեր։ Եվ եգիպտացոց բոլոր իշխաններին և ազգերի թագավորներին, քարոզ կարդաց եգիպտացոց ամբողջ երկրին, և ասում է.

— Ամեն ոք, ով աշխատի Հովսեփի և Ասանեթի հարսանյաց յոթ օրերին՝ մահով կմահանա։

Եվ սրանից հետո Հովսեփ մտավ Ասանեթի մոտ։

ԱՂՋԿԱ ԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի քաղաքում կար դիրքի ու հաբստության տեր մի մարդ, որ ուներ բազում գանձեր, ոսկի, մարգարիտ, թանկագին ակներ։ Այն քաղաքում չկար նրանից հարուստ մեկը։ Նա ծերացել էր ու զավակ չուներ և զավակի համար ամեն օր աղաչում էր Աստծուն, որ տվեց նրան որդի աննման ու գեղեցիկ։ Երբ մեծացավ տղան, հայրը նրան ուսման տվեց։ Սա սովորեց ամեն տեսակ իմաստասիրական բաներ և անհաղթ բանավիճող էր, բայց հետո զեխանալով սպառեց ծնողների գանձերը և սնանկացրեց։

Որդին ասաց հորն ու մորը։

— Ուզո՞ւմ եք հեռանալ այս երկրից, գնալ օտար աշխարհ, ուր մեզ չեն ճանաչի, այնտեղ ամոթը թողած կմուրանք և կապրենք, ո՛չ մենք կտրտմենք, ոչ չարկամը կուրախանա։

— Դու գիտես, որդյակ,— ասացին ծնողները։

Հորն ու մորը վերցրեց պատանին, գնաց Հռոմ քաղաքը, որտեղ կար իմաստուն ու բարի մի թագավոր։ Այն օրը թագավորը որսի էր ելել։ Երբ որ-

www.a-pdf.com

սից վերադարձավ, պատանին մտավ նրա մոտ, ծունկի եկավ ու մնաց։ Թագավորն սկսեց խոսել նրա հետ և ասաց.

— Ի՞նչ ես խնդրում, որ քեզ տամ։

Մանուկն ասաց.

— Թագավորն ապրած կենա, ես երկու ծառա ունեմ՝ այր և կին, ցանկանում եմ վաճառել, խնդրում եմ նրանց գնես։

Թագավորը համաձայնեց։

Գնաց տղան հոր և մոր մոտ, ասաց.

— Ինչպես ինձ հարմար է, այնպես եմ անում. դուք առանձին կապրեք, ես՝ առանձին։

— Դու գիտես, որդյակ,— ասացին ծնողները։

Մանուկն ասաց.

— Ուզում եմ ձեզ վաճառել այս թագավորին, որ ձեզ համար բարի լինի, ինձ՝ նույնպես, բայց կաշխատեմ շուտով ձեզ ազատել։ Այժմ ի՞նչ եք հրամայում։

— Դու գիտես, որդյակ,— ասացին նրանք։

Մանուկն առավ հորն ու մորը, գնաց թագավորի մոտ։

Թագավորը հարցրեց, թե քանիսով է վաճառում։ Մանուկն ասաց.

— Այս կին ծառայիս դիմաց ինձ տուր մի լավ ձի, զեն ու զարդ։ Տղամարդու գիմաց տուր պատվական հանդերձ և զգեստ։

Թագավորը հրամայեց, և տվեցին նրա խնդրանքը ամբողջապես, և մի սուր՝ ոսկե դոտիով։ Ապա ասաց թագավորը.

— Ուրի՞շ ինչ կուզեիր խնդրել ինձնից, խնդրիր, և կտամ։

Տղան պատասխանեց.

— Ինձ տուր նաև հարյուր ֆլորին ճանապարհի ծախս։

Այդ էլ տվեցին թագավորի հրամանով։

Թագավորը դարձյալ հարցրեց.

— Ուրիշ ի՞նչ ես ուզում։

— Թույլ տուր ինձ, որ խոսեմ քո ծառաների հետ, որ գնեցիր ինձնից, և նրանց օրհնություննն ստանամ։

Այնժամ թագավորը գլխի ընկավ, որ այն ծառաները նրա ծնողներն էին, հրաման տվեց մանկանը, և նա գնաց ընկավ ծնողների ոտքերն ու ասաց.

— Անհոգ եղեք, ձեզ շուտով կազատեմ։

Եվ ծնողներն օրհնեցին իրենց զավակին։

Տղան լալով բաժանվեց ծնողներից։ Եվ երեք օր, երեք գիշեր գնաց, հասավ մի դաշտ։ Ճանապարհին հանդիպեց մի լավ տղայի, բարևեցին միմյանց ու դարձան ճանապարհի ընկեր։ Երբ ընկերացան, մյուս պատանին իմացավ, որ մանուկը վաճառել էր հորն ու մորը, ասաց.

— Գիտցիր, եղբայր, որ իմ թագավորը ինձ շատ է սիրում, որի համար հրովարտակը տվել է ինձ, որ տանեմ կղզիների թագավորին ու նրանից մեծամեծ պարգևներ ստանամ։ Հիմա տեսնում եմ, որ դու խոհեմ տղա ես, ավելի լավ ձիավոր, քան ես։ Վերցրու թուղթը, դու տար այն թագավորին, որ քեզ շատ բարիքներ պարգևի։ Եվ ինչի որ Աստված արժանի է արել՝ քեզ լինի։ Իսկ ես այստեղ կսպասեմ, մինչև վերադառնաս։

Մանուկն առավ թուղթը, դրեց կաշվեհյուս քսակի մեջ ու գնաց։ Հանկարծ հիշեց ծնողներին ու լաց եղավ և շատ հառաչելուց հետո քնեց ձիու վրա։ Ձին շեշվելով կորցրեց ճանապարհը։ Երբ արթնացավ, ծարավ էին ինքն էլ, ձին էլ, իսկ ջուր չկար։ Մոլոր շրջում էին։ Գտնվեց մի հնօրյա ջրհոր, ու

www.e-pdf.com

ծարավից տղան ուզում էր մեջն ընկնել: Հետո հանեց սեկահյուս քսակը, որի մեջ թուղթն էր, պարանով կապեց ու դրանով ջուր հանեց, խմեց ու խմեցրեց ձիուն, հետո սկսեց կարդալ այն նամակը, որ գրված էր այսպես.

«Այսինչ կղզիների թագավորին ողջույն սիրո.

Գիտցիր, եղբայր, որ այս նամակաբերը անհավատ մարդ է ու նենգավոր: Այստեղ դա մեծ դիրք ուներ և սպառում էր բոլոր գանձերը: Մերձեցավ իմ դստերը և վնաս պատճառեց նրան, և ես կամեցա նրան կործանել, ուղարկեցի քեզ, որ ոչ ոք այստեղ չիմանա մեր խայտառակությունը: Դրա համար ուղարկեցի քեզ. կորցրու սրան ի սեր մեր եղբայրության»:

Երբ մանուկն այս իմացավ, պատռեց թուղթը, օրհնեց իր ծնողներին, որ իրեն ուսում են տվել, և իր գիտությամբ ազատվեց մահից, և աղաչեց Աստծուն՝ իրեն ճանապարհ ցույց տալ, որովհետև մոլոր ընկած էր ցերեկ ու գիշեր, փնտրում էր այն քաղաքը, ուր գնալու էր: Աստված ցույց տվեց ճանապարհը, և նա մտավ այն քաղաքը:

Քաղաքի թագավորը մեծ էր, քաղաքը՝ բարելի: Մանուկն իջևանեց մի պառավի տանը: Փոքր-ինչ հանգստանալուց հետո պառավից հետաքրքրվեց թագավորի ու քաղաքի որպիսության մասին: Պառավն ասաց, որ թագավորը մի դուստր ունի՝ խիստ աննման և գեղեցիկ, իմաստուն, որ նրա նմանը չկա, բայց մանկությունից մինչև այսօր սպանել է տվել ինսունինը թագավորազնի:

Մանուկը հարցրեց, թե ինչի համար է սպանել տալիս:

— Որդյակ,— ասաց պառավը,— այդ աղջիկն ասում է՝ ով ինձ հաղթեց իմաստությամբ, ինձ ամուսին կդարձնեմ, իսկ եթե ես հաղթեմ նրան, սպանել կտամ: Եվ հաղթում է թագավորների որդիներին ու գլխատում: Նրանց գլուխներն էլ իր աշտարակի վրա ցցել է տալիս: Իսկ դա ամբողջ քաղաքից երևում է: Նա ունի ոսկե աթոռ՝ ակնեղենով ու մարգարտով զարդարած, այնտեղ նստում և նայում է մարդկանց: Իրեն ոչ ոք չի կարող տեսնել: Մի ծեր թարգման ունի. նա է խոսում իր մոտ գնացող մարդկանց հետ:

Մանուկն, այս լսելով պառավից, ամբողջ գիշեր չքնեց, երբ լուսացավ, գնաց քաղնիք, հագավ իր ոսկեկար հանդերձը, օծվեց անուշահոտ մշկով ու բուրկենով, գնաց թագավորի դստեր պալատը, իրավունք խնդրեց՝ ներս մտնելու: Մարդիկ, որ դռանն էին, խորհուրդ տվեցին զգուշանալ:

Եվ երբ մանուկը ներս մտավ, բարևեց աղջկան: Սա հրամայեց սպասավորներին, ոսկեղեն աթոռ դրեցին, որի վրա նստեց մանուկը: Աղջիկը հասկացավ, որ պատանին իր հարցմունքին պատասխանելու է եկել: Ուստի աղջիկն իմաց տվեց իր հորն ու մորը և քաղաքի իմաստուններին ու իշխաններին, որոնք եկան հավաքվեցին այնտեղ: Եվ աղջիկն ասաց ծեր թարգմանին.

— Ասա այդ մանկտանը՝ կկամենա՞ լսել մահու բաժակ այն գավաթից, որից խմել եմ տվել իր նմաններին:

Եվ մանուկը թարգմանին ասաց.

— Օրհնյալ լինի Տիրոջ կամքը, Տերն ինչպես կամենում է, այնպես է անում:

Այնժամ աղջիկն ասաց հոր և մոր, քաղաքի իմաստունների ու իշխանների ներկայությամբ:

— Եթե այս պատանին պատասխան տա իմ հարցումին, ինձ կնության կառնի, իսկ եթե ոչ՝ սպանել կտամ նրան, դրա համար բոլորդ վկա եղեք խոսքերիս: Պատանին ևս համաձայնեց աղջկա առաջարկությանը:

www.a-pdf.com

Աղջիկն ասում է. .

— Ո՞վ է քո հայրը։

Մանուկը պատասխանում է.

— Հողմը և հուրը։

Աղջիկը հարցնում է.

— Ո՞վ է քո մայրը։

Մանուկն ասում է.

— Հողը և ջուրը։

Աղջիկը.

— Ո՞ր կենդանակերպի տակ ես ծնվել։

Մանուկը.

— Խոյի։

Աղջիկը.

— Ո՞վ է դայակդ։

Մանուկը.

— Նա, որ տեսնում է ինձ, իսկ ես նրան՝ ոչ։ Նա լսում է իմ ձայնը, ես նրանը՝ ոչ։

Եվ աղջիկն ասաց.

— Այս հարց-պատասխանիքը մանկական զբաղմունք են, թողնենք դրանք և սկսենք նորից։

Աղջիկն ասում է.

— Ո՞ւմ արյունն է այն, որ անմեղ սպանությամբ թափվեց երկրի վրա։

Մանուկն ասում է.

— Աբելի արյունն էր, որին իր եղբայր Կայենը սպանեց։

Աղջիկը.

— Ովքե՞ր էին, որ չծնվեցին մորից, բայց ապրեցին երկրի վրա, և հետո մեռան։

Մանուկը.

— Ադամն ու Եվան էին և այն խոյը, որ կախեց Սաբեկը ծառից, և որը վերցնելով՝ Աբրահամն իր որդի Իսահակի փոխարեն ողջակիզեց։

Աղջիկը.

— Ովքե՞ր էին, որ ծնվեցին հորից ու մորից և չմեռան։

Մանուկը.

— Ենովքն ու Եղիան, որ մարմնով վերացան երկինք։

Աղջիկը.

— Այն ի՞նչ ծառ էր, որ ուներ ճյուղ և տերև, հետո միս ու արյուն դարձավ։

Մանուկը.

— Դա Մովսես մարգարեի գավազանն էր՝ ուներ ճյուղ ու տերև, իսկ երբ օձ դարձավ, միս ու արյան վերածվեց։

Աղջիկը.

— Ո՞վ էր այն, որին Աստված դեսպան ուղարկեց Ադամի մոտ, որ ոչ հրեշտակ էր, ոչ մարդ։

Մանուկը.

— Երբ Կայենն սպանեց իր եղբայր Աբելին, նրա հայր Ադամը չգիտեր, թե ինչ անի մահացածի մարմինը։ Դրա համար Աստված իբրև դեսպան երկու

www.e-pdf.com

ագռավ ուղարկեց։ Գալով Ադամի մոտ՝ մեկը մյուսին սպանեց և հողում թաղեց, Ադամը, սովորելով նրանից, փորեց գետինը և թաղեց իր որդի Աբելի մարմինը։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ մեռավ և իր մարմինը չթաղվեց հողում, հոգին չգնաց Աստծո մոտ։

Մանուկը.

— Դա Նովտի կինն էր, որ սոդոմացվոց երկրից ելնելիս հակառակվեց Աստծո հրամանին և ետ նայեց ու աղե արձան դարձավ։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ երբ տարան գազաններին կերակուր դարձնելու, գազանները նրան թողին, տանողին կերան։

Մանուկը.

— Դանիել մարգարեն էր, որին տարան առյուծներին կերակուր դարձնելու, գազանները տանողին կերան։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ գերեզմանում թաղվեց, բայց ողջ մնաց։

Մանուկը.

— Այդ Հովնան մարգարեն էր, որին ձուկը կուլ տվեց, և ինքը ձկան փորում ողջ մնաց։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ երբ կենդանի էր՝ հարդ և գարի էր ուտում, ջուր խմում, երբ մահացավ, մարդու միս ու արյուն կերավ և ըմպեց։

— Դա այն ավանակի ծնոտն էր, որ մանուկ Սամփսոնն առավ ձեռքը և նրանով հազար մարդ սպանեց։

Աղջիկը.

— Ո՞ւմ մարմինն էր, որ հողը դրին, հողն առաց՝ ես կույս եմ։

Մանուկը.

— Աբելի մարմինն էր, որ հողը մտնելու սկիզբը դրեց։

Աղջիկը.

— Ո՞վ է, որ ոչ հրեշտակ է, ոչ մարդ և ոչ կենդանի, բայց տասնհինգ տարի թագավորում է և տասնվեցերորդ տարում հիվանդանում, երեսուներորդին մահանում ու վերստին կենդանանում։

Մանուկը.

— Լուսինն է, որ ամսի տասնհինգերորդ օրը լրումն առնում, տասնվեցերորդից սկսում է սակավ առ սակավ նվազել մինչև քսաներեքերորդ օրը, և երեսուն օրը լրանալիս՝ նրա պայծառ լույսը չի երևում առաջվա նման. կարծես մեռնում է, ապա վերստին սկսում կենդանանալ։

Աղջիկը.

— Այն ի՞նչ ծառ է, որ տասներկու ճյուղ ունի, դրանցից յուրաքանչյուրը՝ երեսուն տերև, իսկ պտուղը սև ու սպիտակ է։

Մանուկը.

— Այդ ծառը տարին է ցույց տալիս, տասներկու ճյուղերը տարվա ամիսներն են, իսկ սև ու սպիտակ պտուղը՝ գիշերն ու ցերեկը։

Աղջիկը.

— Ի՞նչ երկու բան են միմյանց հակառակ և իրար ետևից են գնում, չեն կարող մեկը մյուսին բռնել։

Մանուկը.

www.a-pdf.com

— Ցերեկն ու գիշերը, որ միշտ ներհակ են միմյանց. մեկը մյուսին վտարում է իրենից՝ կամ արևի ծագմամբ լուսավորելով ամբողջ տիեզերքի ոլորտները, կամ խավարով պատելով երկրի երեսը։

Աղջիկը.

— Ի՞նչ թռչուն է, որ ուտում է բույսերը՝ ցորենի հարդը, գարին սպառում։

Մանուկը.

— Մորեխն է այդ, որ փոքրիկ թևավոր կենդանի է, թռչում, ոստոստում է, ուտելով ծակում է բույսերը, թռչելով ծածկում երկնի դեմքը բազում մղոններով։

Աղջիկը, տեսնելով մանկան համարձակությունը, որ աներկյուղ տալիս է իր հարցերի պատասխանները, ասաց նրան.

— Գնա այստեղից, պատանի, որովհետև թեպետ այսօր իմ ձեռքից ազատվեցիր, վաղը տեսանենք, թե ինչպես կարող ես ազատվել։

Եվ մանուկը պատասխանեց նրան.

— Նույն Աստվածը, որ ինձ այսօր փրկեց քո ձեռքից, կարող է վաղը ևս փրկել։

Այս ասելով՝ ուրախադեմ գնաց իր իջևանը՝ պատավի մոտ, որ լալիս ու կոծում էր՝ մտածելով, թե մանուկը մեռել է։ Երբ նրան ողջ տեսավ, ուրախացավ և ասաց.

— Բարի եկար, որդյակ, այսօր նոր ծնվեցիր քո մորից։

Եվ բոլորը, որ տեսան մանկանը ողջ՝ խիստ զարմացան, որովհետև մինչ այդ ոչ ոք չէր ազատվել արքայադստեր ձեռքից։

Առավոտյան տղան գնաց արքայադստեր պալատը, բարևեց, և նա հրամայեց սպասավորներին, բերին նույն ոսկեղեն աթոռը, տղան նստեց։

Եվ աղջիկն ասաց.

— Բարով եկար, պատանի։ Այսօր էլ կարո՞ղ ես պատասխան տալ իմ հարցերին։

Եվ նա ասաց.

— Մեծ է Աստծո զորությունն ու կարողությունը, որովհետև ինչ որ մարդու համար անհնարին է, հնարավոր է նրա համար։ Ուստի, արքայադուստր, հարցրու՝ ինչ կամենաս։

ՀԱՐՑՄՈՒՆՔ Բ.

Աղջիկն ասաց.

— Ո՞վ էր այն էգը, որ ծնվեց որձից։

Մանուկը պատասխանեց.

— Եվան էր, որ Աստծո հրամանով ծնվեց Ադամի կողից։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ մարդ սպանեց, իր հոգին արքայություն գնաց, մեռնողինը՝ դժոխք։

Մանուկը.

— Ղաբեղը, որ սպանեց Կայենին. իր հոգին արքայություն գնաց, Կայենինը՝ դժոխք, որովհետև սա անմեղ տեղը սպանել էր իր եղբայր Աբելին։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որին գցեցին փոսը՝ դազաններին կերակուր դառնալու, իսկ դրանք չկերան։

www.a-pdf.com

Մանուկը.

— Հովսեփ Գեղեցիկը, որին եղբայրները տարան գցեցին հորը, որ կերակուր լինի գազաններին, բայց գազանները չկերան նրան, և նա ողջ մնաց։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ հոր մերկությունը հայտնեց իր եղբայրներին և հետո հորից անեծք ստացավ։

Մանուկը.

— Այդ Քամն էր, որ տեսավ իր հայր Նոյին գինուց հարբած՝ մերկ ննջելիս տանը և չծածկեց մերկությունը, այլ հայտնեց իր եղբայրներին։ Դրա համար նա իր հորից անեծք ստացավ, իսկ եղբայրները՝ օրհնություն, որովհետև նրանք, իրենց երեսները շրջելով, ծածկեցին իրենց հոր մերկությունը։

Աղջիկը.

— Ո՞վ էր այն մանուկը, որին իր մայրը դնելով տապանակի մեջ, գետը գցեց, և նա ողջ մնաց։

Մանուկը.

— Մովսես մարգարեն էր, որին չորս տարեկան ժամանակ մայրը Փարաւոնի ահից դրեց արկղի մեջ, կպրածյութով ծեփեց, նետեց գետը։ Փարաւոնի դուստրը տեսնելով հանեց գետից, բացեց տապանակը և նրա միջից հանեց մանկանը։

Աղջիկը.

— Ո՞վ էր՝ փոքր մարմնով, մանուկ հասակով, և իրենից մեծ ու զորեղ մեկին մի քարով սպանեց։

Մանուկը.

— Դավիթ մարգարեն. փոքր էր իր եղբայրներից, ընդդիմացավ զորավոր ու հսկա Գողիաթին և մի պարսաքարով խփեց նրա ճակատին, վրա հասնելով խլեց նրա սուսերը և կտրեց գլուխը։

Աղջիկը.

— Այն ի՞նչ ցածր տեղ է, որ աշխարհի ստեղծումից ի վեր արևի լույս չի տեսել։

Մանուկը.

— Դա ծովի հատակն է։

Աղջիկը.

— Այն ի՞նչն է.

Օրորվելով գնում-գալիս,
Իր հետ պարան է քարշ տալիս,
Բազմում բարձի վրա բեհեզ,
Որս է անում բազեի պես։

Մանուկը.

— Կատուն։

Աղջիկը.

— Ի՞նչ երկու բան են, որ քանի ապրեն՝ այնքան մեծանում են, այնպես, որ չի լինի նրանցից մեծ։

Մանուկը.

— Մեկը ձուկն է, մյուսը՝ օձը։ Ձուկը որքան անվում է ջրում, այնքան մեծանում է, և չի լինի ավելի մեծ, քան նա։ Օձը նույնպես՝ քանի սկսում է սողալ երկրի վրա, այնքան շատ աճում է և մեծանում, ու չի լինի ավելի մեծը՝ քան նա։

Աղջիկը.

www.a-pdf.com

— Այն ի՞նչ երկու սիրելի են, որ ատում են միմյանց։

Մանուկը.

— Հոգին ու մարմինն են մարդու. մինչ միավորյալ են իրար հետ, սիրում են միմյանց, բայց երբ բաժանվում են՝ ատում են իրար։

Աղջիկը.

— Ի՞նչ երկու բան կա, որ երբեմն մարդուն աղքատացնում են ու վերըստին դարձնում հարուստ ու փարթամ։

Մանուկը.

— Մետաքսի որդը և մարդու խելքը։ Որդը երբեմն քիչ մետաքս է տալիս, և տերն աղքատ է լինում, երբեմն էլ առատ է տալիս ավելի, քան ակնկալում էին, և հարստացնում է։ Նույնպես և մարդու խելքը, երբեմն առևտրի մեջ սխալվելով՝ բազում վնաս է բերում, անանկացնում մարդուն կամ հակառակը՝ հարուստ ու փարթամ է դարձնում։

Աղջիկը.

— Այն ի՞նչ տուն է, որի մեջը լի է ոսկով, ու նրա դուռը շրջապատված է արծաթով, բայց երբ իր որմի մի կողմը արատավորվում ու քանդվում է, չեն կարող շինել, թեկուզ ամբողջ աշխարհի ճարտարներն ի իմի հավաքվեն։

Մանուկը.

— Դա ձուն է, որի մեջ դեղնուցը նման է ոսկու և նրա կեղևը նման է արծաթի։ Երբ այն կոտրվի, մարդկանցից ոչ ոք չի կարող շինել։

Աղջիկը, տեսնելով մանկան համարձակ և աներկյուղ պատասխանները, ասաց նրան.

— Վեր կաց, գնա այստեղից, պատանի։ Թեպետ այսօր ազատվեցիր իմ ձեռքից, բայց վաղը քեզ ըմպել կտամ մահու բաժակը, ինչպես տվեցի քո նախորդներին։

Այսպիսով ուզում էր վախեցնել նրան։

Եվ պատանին առաջվա նման ասաց և այնտեղից ծիծաղելով գնաց իր տեղը։

Առավոտյան, երբ արևը երկրի վրա փռեց իր լույսը, մանուկը գնաց արքայադստեր պալատը, բարևեց նրան ու ասաց.

— Գիշերս բարով լուսացավ քեզ վրա։

Աղջիկը հրամայեց, և դրին ոսկեղեն աթոռը։ Մանուկը նստեց։ Աղջիկն ասաց.

— Ափսոսում ու ցավում եմ քո դեզեցիկ մանկության համար, որովհետև եթե այսօր չկարողանաս պատասխանել հարցերիս, իսկույն պարանոցիդ սուր շարժել կտամ։ Եվ տղան ավելի համարձակ ու աներկյուղ ասաց.

— Հրամայիր, արքայադուստր, ինչ ուզում ես հարցրու։

ՀԱՐՑՄՈՒՆՔ Գ.

Աղջիկն ասաց.

— Ովքե՞ր էին, որ անվնաս անցան ծովի միջով, որպես ցամաքով, իսկ նրանցից հետո եկողներն ընկղմվեցին ծովի խորքը, ու սրանցից ոչ մեկը ողջ չմնաց։

Մանուկը պատասխանեց.

— Իսրայելացիք էին, որոնց իր հետ առած Մովսես մարգարեն ձգեց իր գավազանը կարմիր ծովի վրա, և ջուրը կիսվեց, ցամաք գոյացավ։ Նրանցից

www.a-pdf.com

հետո եգիպտացիք մտան, սրանց ծածկեց ծովի ջուրը, և բոլորը կապարի նման ընկղմվեցին խոր ջրի մեջ։

Աղջիկը.

— Ովքե՞ր էին, որ գցվեցին քեժ կրակի մեջ և հուրը նրանց չմերձեցավ, ու կենդանի մնացին։

Մանուկը.

— Երեք մանկունքը՝ Սեդրակը, Միսակը և Աբեդնագովը, որ չերկրպագեցին ոսկու պատկերին, որի համար Նաբուգոդոնոսորը կապեց նրանց ձեռքերն ու ոտքերը և գցեց բորբոք հնոցի մեջ, որտեղ նրանք օրհնում ու փառաբանում էին Աստծուն, որը փրկեց նրանց այն հնոցից։

Աղջիկը.

— Ո՞ւմ էր, որ Աստված սատանայի միջոցով փորձեց խիստ, և նա համբերությամբ դիմանում էր անըմբռնելի արկածներին սատանայի և երբեք չմեղանչեց Աստծու կամքի դեմ։

Մանուկը.

— Հոբ երանելին էր, որի մոտ Աստծու թույլտվությամբ եկավ սատանան և քանիցս փորձեց պես-պես մահաբեր վնասներով. զրկեց նրան ինչքից ու ստացվածքից, որդիներից ու դուստրերից և մերկ ու կաղապատված, չարաչար վերքերով նստեցրեց քաղաքից դուրս, աղբանոցում, և չկարողացավ ստիպել մեղանչելու Աստծու օրենքների դեմ։ Որովհետև երանելին ասում էր. «Այն ամենը, որ ունեի՝ Տերն է տվել ինձ և այժմ էլ վերցնում է. թող օրհնյալ լինի Տիրոջ կամքը»։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ ոչ հրեշտակ էր, ոչ մարդ և խրատ տվեց մարդուն։

Մանուկը.

— Բաղաամի էշն էր դա։ Երբ Բաղաամը գնում էր անիծելու Իսրայելին, Աստծու հրեշտակին տեսավ ավանակը և հակառակվեց Բաղաամին։ Իսկ նա իր գավազանով խփեց ավանակին, որ սկսեց խրատել և ասել Բաղաամին. «Ե՞տ դարձիր, մի գնա անիծելու Իսրայելին»։

Աղջիկը.

— Ովքե՞ր էին, որ ոչ հրեշտակ էին, ոչ մարդ, մարդու նման ուղարկվեցին՝ աշխարհից ավետյաց լուր բերելու։

Մանուկը.

— Ագռավն ու աղավնին, որոնց Նոյը իր տապանից արձակեց, տեսնելու՝ չրհեղեղի ջուրը չի՞ իջել. բայց աղավնի՞ն միայն, ձիթենու շյուղ բերանում բռնած, դարձավ Նոյի մոտ՝ ավետիս տալով, թե նվազել է ջուրը երկրի երեսից։

Աղջիկը.

— Ո՞վ էր, որ մեծ էր և անդրանիկ, մի ոսպապուրով իր անդրանկությունը վաճառեց կրտսեր եղբորը։

Մանուկը.

— Դա Իսահակի որդի Եսավն էր, որ դաշտից սոված եկավ, ասաց Հակոբին՝ կրտսեր եղբորը, որ թան էր եփել. «Տո՛ւր ուտեմ դրանից»։ Եվ նա պատասխանեց. «Քեզ քո անդրանկությունն ինձ չվաճառես, չես կարող ուտել»։ Եվ Եսավը, չհամբերելով, վաճառեց մի ոսպապուրով իր անդրանիկությունը Հակոբ եղբորը։

Աղջիկը.

— Ովքե՞ր էին՝ երբ մտան Եգիպտոս, յոթանասունհինգ հոգի էին, երբ այնտեղից գնացին՝ վեց հարյուր հազար դարձան։

www.a-pdf.com

Մանուկը.

— Հակոբ նահապետը և նրա բոլոր որդիներն ու դուստրերը՝ իրենց ընտանիքներով. երբ քառասունչորս երկրից ելան գնացին Եգիպտոս, յոթանասունհինգ հոգի էին, երբ այնտեղից մեկնեցին Սոկքովթ անապատ, եղան վեց հարյուր հազար այր:

Աղջիկը.

— Անբույսը դրին անծնի վրա և անդադարի երդիքով անցկացրին:

Մանուկը.

— Անբույսը աղն է, անծինը՝ ջորին, անդադարը՝ ջուրը, երդիքը՝ կամուրջը: Որովհետև երբ աղը բառնում են ջորիի վրա, եթե ճանապարհին գետ կա, ջորին անցկացնում են կամրջով:

Աղջիկը.

— Ի՞նչ երեք բան են, որոնցից մեկը խուփ չունի, երկրորդը՝ այուն, երրորդը՝ կաթ:

Մանուկը.

— Սրանք են այդ երեքը. առաջինը ծովն է, որ իր վրա կափարիչ չունի, այսինքն՝ ծածկոց, երկրորդը երկինքն է, որ առանց սյան մնում է, երրորդը հավն է, որ կաթ չունի: Բայց սրանց հետ մի բան ևս կա՝ մարդու բուռը, ուր ամենևին մազ չի բուսնում:

Աղջիկը մանկան այս պատասխաններից վախեցավ և ասաց նրան.

— Դու մեկն ավելի ասացիր: Ես երեք բան եմ հարցրել, այսօր ևս ազատվեցիր իմ ձեռքից, բայց վաղը մահապատիժ կտամ քեզ, ինչպես տվեցի ընկերներիդ:

Մանուկն ասաց.

— Ես միայն երկնի ու երկրի արարչին եմ ապավինել և ոչ թե հուսացել մարդու: Ինչպես Տերը կամենում է, թող այնպես էլ անի:

Այս ասելով՝ ելավ այնտեղից և ուրախ գնաց իր իջևանը:

Առավոտյան մանուկն եկավ արքայազուտեր պալատը, բարևեց, և նա հրամայեց դնել ոսկեղեն աթոռը: Մանուկը նստեց և ասաց աղջկան.

— Հրամանքդ, արքայազուստր, էլ ինչ ես ուզում հարցնել:

Եվ նա պատասխանեց.

— Ո՛վ պատանի, այժմ հարցման հերթը քոնն է. հարցրու ինչ կամենաս, և ես քեզ կպատասխանեմ:

Մանուկը հարցրեց.

— Ո՞վ էր, որ հարուստ էր, աղքատացավ և իր հորն իբրև զգեստ հագավ, հեծավ մորն իբրև ձիու և գնաց գտնելու իր կորցրած ինչքն ու ապրանքը: Մահը վրա հասավ, և նա մահն էլ բարձեց ձիու վրա, նրանով ջուր առավ, ձիուն էլ խմեցրեց, բայց ինքը և ձին՝ երկուսն էլ, ողջ մնացին.

Աղջիկը չկարողացավ պատասխանել պատանու այս հարցումին, ասաց.

— Այսօր գնա, վաղը կպատասխանեմ, որովհետև այդ հարցը դժվարին է:

Մանուկը դուրս ելավ, գնաց իր օթևանը:

Ապա աղջիկն ասաց իր ծեր թարգմանին.

— Առ երկու կամ երեք հոգի հավատարիմ ծառաներիցս և գնա շուկա, գնիր սպիտակ հաց, մի գեր սագ և մի քանի պարարտ հավ: Սագը բրնձով ու շաքարով լցրու, հավերը խորովիր: Առ երկու մաքուր ամաններ և լցնել տուր նրանց մեջ քաղցր անապակ գինի: Սա ծածուկ պատրաստիր:

www.a-pdf.com

Թարգմանը կատարեց թագավորի աղջկա հրամանը.

Եվ երբ բոլորը խոր քուն էին մտել, աղջիկը հագավ իր պատվական ոսկեկար հանդերձը, օծվեց մշկով, բուրկենով ու վարդերով։ Իր հետ առավ երկու գեղեցիկ աղջիկ, կարգադրեց ծառաներին բառնալ ինչ որ հրամայված էր նրանց, եկան մանկան իջևանը և բախեցին դուռը։

Մանուկն ասաց.

— Ո՞վ եք, որ բախում եք դուռը։

Նրանք պատասխանեցին.

— Մենք աղջիկներ ենք՝ թագավորի պալատից, և ինչպես լուսինը արեգակի սիրո տերն է, նույնպես մենք՝ քո սիրու։ Դրա համար կամենում ենք քեզ տեսնել։

Մանուկն ասաց.

— Հեռացեք։

Իսկ նրանք աղաչանքով պնդացրին իրենց երեսները, ասացին, որ չեն գնա, մինչև չտեսնեն նրա երեսը։ Եվ մանուկը չկարողացավ համբերել նրանց ողորմագին աղերսանքներին, թույլ տվեց ներս մտնելու։

Այնժամ աղջիկը հանեց գլխից վարշամակները, բացեց իր երեսը, որ տեսնելով՝ մանուկը սիրահարվեց։

Աղջիկը նստեց ու նստեցրեց իր հետ մանկանը և ասաց.

— Կերակուր ունե՞ս և գինի, բեր ուտենք, խմենք և ուրախանանք։

— Աստված գիտե, որ այս ժամին պատրաստի չունեմ, որովհետև չգիտեի, որ կգաք։

Աղջիկն ասաց իր ծառաներին.

— Բերեք ինչ որ դուք ունեք։

Սրանք բերին, ինչ որ առել էին իրենց հետ։ Սեղան պատրաստեցին։ Օրկուսով նստեցին ու սկսեցին ուտել ու ըմպել, ուրախանալ։ Բայց աղջիկը տղային ավելի շատ խմեցրեց անապակ գինին և նրա հետ քաղցրամեղր զրուցում էր, բորբոքելով ցանկության հուրը, մինչև որ չկարողանալով այլևս համբերել, ասաց. «Հրամայիր, որ ննջենք միասին»։

Այնժամ աղջիկն ասաց.

— Թե ինձ սիրում ես, պատմիր ինձ այն բանը, որ երեկ ասացիր արքայադստերը։

Եվ նա պատասխանեց.

— Այժմ անկարող եմ բացատրել քեզ այդ բանը, մանավանդ վախենում էլ եմ, որովհետև եթե ասեմ, կսպանեն ինձ, դրա փոխարեն ուրիշ բաներ հարցրու՝ պատասխանեմ։

Աղջիկն Աստծով երդվեց, թե մինչև չլսի այդ բանը, չի կատարի նրա կամքը, և սկսեց հոգու հետ խաղալ։ Պատանին առավել ևս սիրավառվեց և գինուց հարբած՝ պարտվեց, սկսեց ասել իր հարցումի պատասխանը և ապա ասաց՝ արի քնենք։

Աղջիկը հանեց չարեշապիկը, որ դրեց բարձի տակ, սկսեց խաղալ նրա հետ։ Մանուկը, սիրուց ու գինուց թմրած, քնեց։ Եվ աղջիկը ծիծաղելով սահեց անկողնուց, վերցնելով իր ծառաներին, ուրախ վերադարձավ պալատ։ Բայց սաստիկ ուրախությունից այնտեղ մոռացավ չարեշապիկը։ Որովհետև մտքում ասում էր. «Ես հաղթեցի նրան՝ իրենից սովորելով այս բանը, և նա ոչինչ չկարողացավ ինձ անել, որի համար առավոտյան նրան սպանել կտամ»։

www.e-pdf.com

Երբ մանուկը, քնից ուշքի գալով ու աթափվելով գինուց, զարթնեց, իմացավ, որ այն աղջիկը թագավորի դուստրն էր, որ հնարքով եկել էր իր մոտ։ Առավոտյան գնաց արքայադստեր մոտ, բարևեց ու նստեց այն աթոռին։

Աղջիկը կանչեց հորն ու մորը, քաղաքի իմաստուններին ու իշխաններին, որոնք միաբան եկան հավաքվեցին։

Մանուկը, ոտքի ելնելով, խոնարհվեց թագավորի առջև ու դարձյալ նստեց իր աթոռին։

Եվ աղջիկը սկսեց հերթով պատասխանել մանկան երեկվա հարցումին, քանի որ խաբեությամբ սովորել էր նրանից այն գիշեր։ Եվ բոլորը, որ լսեցին, զարմացան աղջկա գիտության վրա, որովհետև այն հարցը շատ դժվարին էր։

Այնժամ մանուկն ասաց թագավորին.

— Ո՛վ տիեզերակալ արքա, քո դուստրը երեք օր ինձ հարցեր էր տալիս, որ ես պատասխանում էի։ Այժմ ես հարցնեմ նրան մի բան ևս. եթե գիտենա՝ ինքն է ինձ հաղթել, թե ոչ, ես՝ նրան։

Թագավորն ասաց.

— Այդ խոսքիդ բոլորս վկա ենք. որ այլևս զրույցը չերկարի երկուսիդ միջև։

Մանուկն ասում է աղջկան.

— Ի՞նչ թռչուն էր այն, որ ուներ իր հետ այլ տեսակ թռչուններ, և իր փետուրը գեղեցիկ էր ոսկու նման։ Եվ ես բռնեցի նրան, մորթեցի և փետուրը պահեցի ինձ մոտ, և մինչև նրա միսը խորոված դրեցի իմ առջև ուտելու, նա հանկարծակի թռավ ու փախավ ինձնից։ Եթե չեք հավատում խոսքիս, այն փետուրը կբերեմ բոլորիդ առաջ, որ տեսնեք։

Երբ աղջիկը լսեց այս խոսքերը, շատ վախեցավ, կարծեց, թե բոլորի առաջ հայտնելու է իր գնալը նրա մոտ այն գիշեր։ Ուստի շտապելով ասաց նրան.

— Դա չափազանց դժվար հարց է, չեմ կարող պատասխանել։ Այժմ ինձ հաղթեցիր դու. խնդրիր՝ ինչ կամենաս։

Մանուկն առաց.

— Քեզնից բացի բան չեմ խնդրում քեզանից։

Այնժամ բոլորը վկայեցին ու հավանություն տվին մանկան խնդրանքին և պսակեցին նրանց, և յոթ օր հարսանիք արին։

Թագավորը իր գանձերի, ունեցվածքի ու թագավորության կեսը տվեց նրանց։

Ապա մանուկը բազում գանձերով մարդիկ ուղարկեց այն թագավորի մոտ, որին վաճառել էր իր հորն ու մորը։ Նրանք գնացին ու բերին նրա ծնողներին իր մոտ։ Իրար տեսնելով՝ ուրախացան։ Իսկ հյուրընկալ պատավին իր հետ տարավ պալատ, նշանակեց նաժիշտների ավագ։

Թագավորը նրան կարգեց տեր ու իշխան իր բոլոր գանձերի ու քաղաքների, որ իր մահից հետո իշխեն նրանց վրա և նստի իր փոխարեն թագավորական աթոռին։

www.a-pdf.com

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ԱՋՆՎԱԿԱՆԸ

Մի գյուղացի, էշն առաջն արած, անցնում էր փողոցով։ Եվ մի խումբ ազնվականների ներկայությամբ գավազանով ուժգին հարվածեց իշուն, որպեսզի արագացնի ընթացքը։ Նկատելով այդ՝ մի ազնվական ասում է.

— Ինչո՞ւ ես անգթորեն ծեծում խեղճ անասունին։

Այդ ժամանակ գյուղացին, խոնարհաբար հանելով իր գլխարկը, ասում է իշուն.

— Ների՛ր ինձ, էշ ջան, քանզի չգիտեի, թե այստեղ դու բարեկամներ ու ազնվական ընկերներ ունես։

ԺԼԱՏ ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՆՐԱ ԱՐՋԱՆԸ

Մի շատ ժլատ ու հարուստ մարդ մարմար քարից պատրաստել է տալիս իր աբձանը։ Ցույց տալով քանդակը բարեկամներից մեկին՝ նա հարցնում է.

— Ինչպե՞ս է քանդակված, նմա՞ն է արդյոք ինձ։

— Եվ հոգով, և մարմնով շատ նման է քեզ,— պատասխանում է բարեկամը։

ԳԵՐ ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ՍՐԱՄԻՏ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Մի գեր ու հաստափոր քահանա գնում էր դեպի Ֆլորենցիա։ Օրն արդեն մթնում էր, և քահանան չգիտեր՝ կհասցնի՞ մտնել քաղաք, թե՝ ոչ։ Իր կասկածները փարատելու նպատակով մի գյուղացու հարցնում է.

— Կարո՞ղ եմ հասնել քաղաք ու մտնել դարպասից ներս։

— Այո՛, իհարկե,— պատասխանում է գյուղացին։— Մի խոտադեզ սայլ կարող է մտնել, դու ինչո՞ւ պիտի չկարողանաս։

ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի մարդու հարցրեցին.

— Կա՞ արդյոք տարբերություն իմաստունների ու հիմարների միջև։

— Այո,— պատասխանեց նա,— հատկապես այնքան, որքան բժշկի ու հիվանդի միջև։

ԱՎԱԶԱԿՆ ՈՒ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐԸ

Մի ավազակի տարան կախելու։ Խոստովանահայր քահանան, հաշտեցնելով նրան մահվան գաղափարին, ասում է.

— Որքան երջանիկ ես դու, սիրելի եղբայր, որ այսօր Աստծու և հրեշտակների ընկերակցությամբ դրախտում պիտի սեղան բազմես։

— Սիրելի հայր,— պատասխանում է ավազակը,— մեծ լավություն արած կլինես, եթե դու գնաս իմ փոխարեն, ես դեռ քաղցած չեմ։

www.a-pdf.com

ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍՐՆ ՈՒ ՕՏԱՐԱԿԱՆԸ

Մի օր Օգոստոս կայսրն իմացավ, որ Հռոմ է ժամանել մի օտարական մարդ, որն ամեն ինչով շատ է նման իրեն։ Կայսրը կանչեց նրան իր մոտ ու, տեսնելով, շատ ուրախացավ։ Նրանք մի քիչ զրուցեցին, այնուհետև կայսրը հարցրեց.

— Հորս ժամանակներում արդյոք մայրդ երբևէ եկե՞լ է Հռոմ։

— Մայրս՝ ոչ,— պատասխանեց օտարականը,— բայց հայրս շատ անգամներ է Հռոմ եկել։

ԵՐԿՈՒ ԱՆՑՈՐԴ ԵՎ ԿԱՆԵՓԻ ԱՐՏԸ

Երկու ընկեր անցնում էին արտի միջով, ուր կանեփ էր ցանած։ Անցորդներից մեկն ասում է.

— Արագ անցնենք այստեղով, թե չէ կանեփը խիստ վտանգավոր է կյանքի համար։

— Ի՞նչ գիտես,— հարցնում է մյուսը։

— Հայրս կանեփի թոկով է կախվել։

ԳՅՈՒՂԱՑԻՆ, ԱՆՑՈՐԴԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԸ

Մի գյուղացի շալակով փայտ էր տանում վաճառելու։ Փողոցում, ամբոխի միջով անցնելիս, նա բարձրաձայն գոչում էր.

— Ճանապա՛րհ տվեք, ճանապա՛րհ։

Մի կոպիտ ու անտաշ մարդ չկամեցավ հեռանալ ճանապարհից։ Գյուղացին միամտաբար դիպավ նրան և պատուհաս վերարկուն։ Կամենալով տուգանել տալ գյուղացուն՝ անցորդը տարավ նրան դատավորի մոտ և հայտնեց իր բողոքը։ Իսկ գյուղացին ոչ մի խոսք չասաց, մնաց լուռ ու անձայն։

Դատավորը, դիմելով վերարկուի տիրոջը, հարցրեց.

— Ի՞նչ ես պահանջում, ինչպե՞ս վարվեմ այս համրի հետ։

— Նա համր չէ,— ասաց բողոքականը,— որովհետև փողոցում բարձրաձայն գոչում էր՝ «Ճանապա՛րհ տվեք, ճանապա՛րհ»։

— Ո՛վ անմիտ,— բարկացավ դատավորը,— եթե նա այդպես էր գոչում, ուրեմն պարտավոր էիր մի կողմ քաշվել, որպեսզի չդիպչեիր նրան ու չպատռեիր քո վերարկուն։

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՆ ՈՒ ԴԱՏԱՎՈՐԸ

Մի որմնադիր աշխատելիս բարձր պարսպի գլխից ընկավ ներքևում նրստած մարդու վրա։ Ինքն այնքան էլ չվնասվեց, բայց պատի տակ նստած մարդը մեռավ։ Մեռնողի որդին գործը տվեց դատարան՝ պահանջելով լուծել իր հոր մահվան վրեժը։

Դատավորը վճիռ արձակեց. որմնադրին նստեցնել մեռածի տեղը, իսկ հանգուցյալի որդին, բևեռով բարձր պարսպի գլուխը, թող իրեն նետի ցած, որմնադրի վրա ու սպանի նրան, ինչպես սպանվեց հայրը։

Լսելով որոշումը՝ հայցվորը վախեցավ ու հրաժարվեց իր գանգատից։

www.a-pdf.com

ՋՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԻՐ ԱՄԵՆԱԾԱՆՐ ԲԵՌԸ

Ոմն ղորական, իր կնոջ հետ գտնվելով ծովում, մի մեծ ալեկոծության ժամանակ նկատում է, որ նավավարներն ամբողջ եռանդով ծովն են նետում այն ամենը, ինչ ընկնում էր ձեռքերը։ Ոմանք աղաղակում էին, թե՝ «Նախապես դուրս նետենք ամենածանր բեռները, որպեսզի փրկենք կյանքերս ու աղատվենք ծովից, թե չէ իրերի հետ բոլորս էլ կսուզվենք»։

Երբ ղորականը լսեց այս, իսկույն բռնեց իր կնոջն ու նետեց ծովը՝ բացականչելով.

— Կնոջիցս ավելի ծանր ու անտանելի բեռ ես չունեմ աշխարհում։

www.a-pdf.com

Ե

ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

~ Նիկողիասը մի բժշկի բախտավոր ու հաջողակ էր անվանում՝ ասելով. «Քո հաջողությունները տեսնում է արեգակը, իսկ սխալներն ու վնասը ծածկում է երկիրը»։

ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ

~ Խիկարն ասում է. «Մեղմ խոսքը ջուր է. հանգցնում-հանգստացնում է մարդու բորբոք, գազանաբարո միտքը»։

~ Որդյակ, կերա դառնիճ և լեղի, ավելի դառն չէր, քան աղքատությունն ու պանդխտությունը։

~ Ով ընկերոջ խոսքին չի հավատում, նրա համար հեշտ է սուտ խոսելը։

~ Դեմոսթենեսն ասում է. «Մարդկային արատները չեն բուժվի ո՛չ գովելով և ո՛չ էլ թաքցնելով, այլ՝ պատմելով բժիշկներին»։

~ Պլուտարքոսն ասում է. «Ճանապարհորդները ճգտում են դեպի տուն ու հայրենիք, իսկ իմաստունները՝ խելքի և իմաստության»։

ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

~ Մենանդրոսն ասում է. «Ճանաչիր կանանց և իմացիր նրանց չարությունը. Ագամեմնոն արքան, որին ամբողջ աշխարհը սիրում էր, երբ պատերազմից վերադարձավ տուն, սպանվեց կնոջ ձեռքով»։

~ Թեև տարագիրը կնոջ ձեռք է ընկնում, կրկնակի է կորչում. մեկ՝ պանդխտության, մեկ էլ կնոջ պատճառով։

ԽԵԼՔԻ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~ Տեսնելով կորնթացիների զորքերը, որ խելակորույս փախչում էին, Սոկրատն ասաց.

— Մի՞թե այստեղ կանայք են բնակվել։

~ Չորությունը, որ միտք և իմաստություն չունի, կկործանի իր տիրոջը։

~ Ալեքսանդրին բարեկամներն համոզում էին, որ գիշերով հարձակվի թշնամու վրա։ Եվ նա ասում է.

— Թագավորներին վայել չէ հաղթություն գողանալը։

www.a-pdf.com

~ Դեմոկրիտեան ասում է. «Ավելի լավ է կյանքում լինել ցանկալի, քան թե ահեղ»։

~ Ովքեր մտածում են իշխել ուրիշներին, պարտավոր են նախ իրենց վրա իշխել։

~ Պլատոնն ասում է. «Ինքնիրեն հաղթելը ամեն հաղթությունից վեր է»։

~ Պլուտարքոսն ասում է. «Ավելի լավ է անմիտների իշխանության տակ լինել, քան իշխել այդպիսիներին»։

~ Իշխանը և դատավորը չպետք է ոչ արդարների համար խնդրեն և ոչ անիրավների համար բարեխոսեն։

~ Դիոգենեսն ասում է. «Իշխանի նկատմամբ պետք է լինել՝ ինչպես կրակի հետ. ոչ այնքան մոտիկ, որ այրի և ոչ այնքան հեռու, որ մրսես»։

~ Իսկական իշխանն այն է, որ իրեն իշխան չի համարում։

~ Ագաթոնն ասում է. «Իշխանը պետք է այս երեք բանը հիշի. նախ՝ որ մարդկանց է իշխում, երկրորդ՝ որ օրինավոր իշխան է, երրորդ՝ որ միշտ չի իշխելու»։

~ Նպասթիոն Թեղեացին, տեսնելով բազում և գեղեցիկ զորքեր, որ առանց հրամանատարի էին, ասում է. «Այսպիսի գազան է և գլուխ չունի»։

— Դիոգենեսն ասում է. «Մեծ չար է, եթե վատթարները լավերին են իշխում, առավել չար է, որ անմիտներին են կարգում իմաստունների վրա»։

~ Լակեդեմնացիների Կուտ թագավորին հարցրին, թե ում է թողնելու թագավորությունը, ասաց.

— Կարեցողին։

ԽՐԱՏԻ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

~ Սիմոնիդեսն ասում է. «Պետք է պիտանի մտքերը հավաքել և պահել գանձի նման և առավել, քան ունեցվածքը»։

~ Սոկրատեսին հարցրին, թե կենդանիներից ո՞րն է գեղեցիկ, պատասխանեց.

— Խրատով զարդարված մարդը։

~ Սոկրատեսը աշակերտներին խրատում էր ծնողներից ավելի հարգել ու մեծարել ուսուցիչներին, որովհետև առաջինները ապրելուն եղան պատճառ, իսկ սրանք՝ գեղեցիկ ապրելուն։

~ Փիլիստոսն ասում է. «Իմաստությանն ավելի հոգ տարեք, քան ունեցվածքին, որովհետև նրանո՛վ է ձեռք բերվում ունեցվածքը, իսկ հարստությամբ իմաստություն ձեռք չի բերվում»։

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

— Սելևկոս քերթողը անիրավ օրենքները սարդի ոստայնի է նմանեցնում, որովհետև երբ ճանճ կամ մժեղ կամ ուրիշ տկարագույններ ընկնեն, բռնվում են, իսկ եթե պիծակ կամ մեղու կամ սրանց նմաններից ընկնեն, խզույն կտրում են ոստայնը և թռչում։ Այսպես և օրենքները՝ երբ սրևէ աղքատի են բռնում, համազիր կերպով ցույց են տալիս իրենց ուժը, իսկ երբ մեծամեծներ կամ զորավորներ են ընկնում, անմիջապես կտրում ու դուրս են գալիս։

www.a-pdf.com

~ Սոկրատեսն ասում է. «Օրենքները ցանկանում են բարելավել կյանքը, բայց չեն կարողանում, որովհետև ուժը գործադրում են միայն ստորադրյալի վրա»։

~ Արիստոտելն ասում է. «Հարուստները և անկուշտները ջրգողի են նման, որովհետև ինչպես սա, ջրով լցվելով, ծարավ է մնում, այնպես էլ նրանք հարստանալուց չեն հագենում»։

~ Սիմոնիդեսին մեկը հարցրել է. «Հարստությո՞ւնն է լավ, թե՞ իմաստությունը»։

Եվ նա ասում է. «Գիտեմ, միայն իմաստուններին տեսնում եմ մեծամեծների դռներին»։

ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

~ Իմաստուն խորհուրդն ավելի բարձր է, քան հզորների ձեռքը։

~ Ալեքսանդրը, տեսնելով, որ իր մի անվանակիցը երկչոտ էր պատերազմի գաշտում, ասում է նրան. «Երիտասարդ, դու կամ անունդ փոխիր, կամ սիրտդ»։

~ Ալեքսանդրին բարեկամները համոզում էին որդիներ ունենալ։ Եվ նա ասում է. «Ինչու եք մտածում, չէ որ իմ գնալուց հետո ձեզ է մնալու և՛ իմաստությունս, և՛ արիությունս»։

~ Երբ գեռահաս Ալեքսանդրը պատրաստվում էր պատերազմի, Արիստոտելն ասում է նրան. «Համբերիր մինչև հասուն տարեկան դառնաս»։

Եվ նա պատասխանում է. «Վախենում եմ, հանկարծ կորցնեմ երիտասարդական համարձակությունս»։

~ Մի փիլիսոփա երկու աշակերտ ուներ, որոնցից մեկը խելացի էր և ծույլ՝ ուսման մեջ, իսկ մյուսը՝ շատ անընդունակ էր ու ջանասեր։ Նրանք չեն սովորում, և ուսուցիչն առում է. «Կորեք երկուսդ էլ, քանզի մեկդ կամենում է և չի կարող, մյուսդ կարող է և չի կամենում»։

~ Թե ազնիվ փեսացի հանդիպես, որգի ես գտնում, իսկ եթե ոչ՝ կորցնում ես դուստրդ։

~ Ինչպես հոգուց զրկված մարմինը մեռած է, այնպես էլ քաղաքը, ուր չկա օրենք, ավերակ է։

~ Դիոգենեսը մի ողբացողի, որ օտարության մեջ էր մահանում, ասում է. «Ինչո՞ւ ես ողբում, ով դատարկամիտ, ամեն տեղից դժոխքի ճանապարհը նույնն է»։

~ Սոկրատեսին նախատեցին, թե աննշան ծնողներից ես։ Եվ նա պատասխանում է. «Դա իմ արժանիքն է, որովհետև իմ ցեղն ինձնից է սկսվում»։

~ Բարի անունն ավելի լավ է, քան բարեհեսությունը, որովհետև տեսքը մահվամբ ապականվում է, իսկ բարի անունը մնում է հավերժորեն։

~ Պարզերես մեռնելը ավելի լավ է, քան սևերես ապրելը։

~ Թե մարդ համբերություն չունի, ինչ գործ բռնի՝ կիսատ կմնա։

~ Որ ամբողջ աշխարհը քամի լինի, իմաստուն մարդու ճրագը չի կարող հանգցնել։

~ Եթե ամբողջ աշխարհը ծով ու ջուր լինի և լեռները՝ օճառ, անմիտ մարդու շատիկը լվանալ չեն կարող։

www.a-pdf.com

~ Որդյա՛կ, Աստված գինին ստեղծեց ուրախության համար, բայց որոշ տեղեր ավելի լավ է թույն ըմպել, քան գինի, որովհետև լինում է ժամանակ, որ գինին փառավորում է ադամորդուն, իսկ երբեմն ծաղրելի ու ամոթալի է դարձնում։

~ Որդյա՛կ, լավ է կռվել գինավատ մարդու հետ, քան՝ անզգամ, լեզվանի և ջղային կնոջ։

~ Որդյա՛կ, լեռները սառնության շտեմարանն են, իսկ նենգավորի սիրտը չարիքի բնակատեղի է։

~ Որդյա՛կ, նենգավորի լեզուն արագագիր դպրի գրչի նման խաղաղությունից է խոսում, բայց սիրտը չարիք է նյութում։

~ Որդյա՛կ, դատարկաբան և հարբեցող մարդը իր ստոր խոսքով մարդկանց մեջ հաճախ հարգանք է նվաճում, բայց ինչ ասում է, չի կատարվում։ Նա նման է փշած ակի՝ իրեն ցույց է տալիս իբրև լիքը, իսկ երբ արձակում են կապը, նրանից ուրախություն չեն ստանում, նա ծաղրելի և այպանելի է լինում։

~ Որդյա՛կ, մարտի ժամանակ քնկերակցիր քաջասիրտ և զորավոր մարդուն, որովհետև երբ հաղթում է թշնամուն, դու նրա հետ կգովվես ու կփառաբանվես թագավորների առաջ, իսկ եթե ընկնես թշնամու ձեռքով, նա իր քաջությամբ քեզ կպաշտպանե։

~ Որդյա՛կ, անմիտ մարդը պատերազմից առաջ պարծենում, գովում է ինքնիրեն և իր բազկի զորությունը, իսկ պատերազմի ժամանակ արժանանում է ընկերների պարսավանքին։

~ Որդյա՛կ, երբ կհարբես, փակիր բերանդ և մի շատախոսիր, որովհետև քեզ զսպել չես կարող։ Ինչպես երկիրը բույսերի մայրն է, նույնպես և հարբեցողությունը ամեն տեսակ չարիքների մայրն է։

~ Որդյա՛կ, եթե տեղյակ ես իմաստությանը և չես կատարում՝ անմիտ ես։

~ Որդյա՛կ, առանց կարդալու և մտածելու օր չանցկացնես, որովհետև իմաստությունը փայլեցնում և ավելացնում է հանճարը։

~ Որդյա՛կ, տգետի հետ ամենևին մի՛ խոսիր, որ անխելքը քեզ չծաղրի։

~ Որդյա՛կ, ով խելքին փչածը ասում է, մի՛ խոսիր նրա հետ։

~ Որդյա՛կ, երբ քեզ տեսնում եմ թագավորների աչքում փառավոր ու սիրված, որքան էլ շատ են թշնամիներդ, բոլորը իբրև սիրելիի՝ քեզ մտերմություն են անում։

~ Որդյա՛կ, խոզամիտ մարդը սիրելի չի ունենում երբեք, որովհետև սիրում է ինչքը և ոչ՝ սիրելիին։

~ Որդյա՛կ, քո ընկերոջը չխոստանաս այն, որ չես կարող տալ, որպեսզի բարեկամությունըատելության չվերածվի։

~ Որդյա՛կ, զվարթ և առատամիտ մարդը սիրելի է Աստծուն և մարդկանց՝ պայծառացնում է իր կյանքը իր զվարթությամբ։

~ Որդյա՛կ, եթե աշխարհի և մարդկանց իշխող ես, անձդ պահպանիր զեխությունից, որովհետև պարտավոր ես հոգալ երկրավորների ու երկնավորների մասին։

~ Որդյա՛կ, ոչ թե գիտենալն է իմաստություն, այլ ստեղծելն ու կատարելը։

www.a-pdf.com

ՕԳՏԱՎԵՏ ԽՐԱՏ ՄԱՐԴԿԱՆՑ, ՈՐ ԱՍԵԼ Է ԻՄԱՍՏՈՒՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԸ

~ Անմիտ, անզգամ մարդու հետ գինի խմելուց լավ է իմաստուն բարեկամի հետ քար կրելը։

~ Թագավորներին ու մեծամեծներին մոտ լինելուց լավ է հեռու մնալը։

~ Ուր որ ձեռքդ չի հասնում, մի՛ մեկնիր։

~ Մատնիչ լինելուց լավ է ծովն ընկնելը։

~ Սովածության պատճառով գողություն անելուց լավ է սոված մեռնելը։

~ Լավ է մուրալով հաց ուտել, քան հարբեցող ու զազրախոս մարդկանց ընկեր լինել։

~ Լավ է աղքատ պատանի, քան ծեր ու անմիտ թագավոր։

~ Վայ նրանց, որ բարուն՝ չար և չարին բարի են ասում, քաղցրին՝ դառն, լույսին՝ խավար և խավարին՝ լույս։

ՀԻՊՈԿՐԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բժշկապետ Հիպոկրատը գնաց նվագել սովորեց. և աշակերտները նրան մեղադրեցին, թե՝ բժշկության ուսուցիչ ես դու, և սա քեզ վայել զբաղմունք չէ, ինչու ես սովորում։ Ով Հիպոկրատը նրանց պատասխանեց.

— Ուսումը լավ է անգիտությունից, գիտությունը լավ է, քան տգիտությունը։ Սա ևս մի արվեստ է. սովորելը լավ է, պատվաբեր և հարկավոր։

ՆՃՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ԱՍՈՒՅԹՆԵՐԻՑ

· Ով գարնանը հանգստանում է, ձմռանը սատկում է սովից ու ցրտից։

· Անգործ մեղուն ավելի լավ է, քան ժրաջան պիծակը։

· Եթե անարժանին ինչպես հարկն է չես հանդիմանում, ուսուցիչ մի լինիր։

· Ուսուցչին սուրբ վարքն է քաջասիրտ դարձնում։

· Մեղրը քաղցր է, բայց ախտավոր մարմնին վնասում է. խրատն ու կշտամբանքը օգտակար են, բայց անօգուտ են անխոհեմի համար։

ՆՈՒՇԻՐՎԱՆԻ ԽՐԱՏՆԵՐԻՑ

· Փորձածը մի անգամ ևս փորձեցեք։

· Նորքսակ մարդուց փոխ մի վերցրեք։

· Երիտասարդ օրերին ծերությունը հիշեցեք։

· Առատության ժամանակ օգնությունը մտաբերեցեք։

· Ամենևին մի երդվիր, ոչ ճշմարիտ և ոչ սուտ։

· Ստախոս մարդկանցից զգույշ մնացեք։

· Ով խրատը ճանաչում և սիրում է, նրան տվեք։

· Ով անամոթ և աներկյուղ է, նրանից հեռու մնացեք։

· Անընկեր ճանապարհ մի երթաք։

www.a-pdf.com

· Անարժաններին մի խոնարհվիր։
· Այնտեղ, ուր համբերել է պետք, մի շտապիր։
· Ճշմարտությունը ձեզ արհեստ դարձրեք։
· Ամեն բան, և կտավը, տասն անգամ չափեցեք և նոր կտրեցեք։

ԽՐԱՏՆԵՐ

~ Գիտնականներն իմացությամբ չորս կարգի են. նախ, որ գիտե, ու թեպետ գիտե, որ գիտե, ասում է՝ չեմ կարող ասել. սա իմաստուն է և հեզ, սովորիր սրանից. երկրորդ, գիտե, որ չգիտե և խոստովանում է իր անտեղյակությունը, թե՝ չգիտեմ. սա ևս բարի է, սովորիր այդ. երրորդ, չգիտե և անտեղյակ է, թե չգիտե և խոսում է տգիտաբար. սա հիմար է և չգիտե իր պակասությունը, ինչպես շար հիվանդը, արթնացրու սրան. չորրորդ, չգիտե և գիտե, որ չգիտե, բայց դատարկամիտ հպարտությամբ ձևացնում է, թե գիտե. այսպիսին ամբարտավան է, խուսափիր նրանից։

~ Չորս բան են տապալում թագավորությունը՝ բացքերանությունը, շարակամներից չզգուշանալը, չարագործներին հանդուրժելը և սեփական ժողովրդին զրկելը։

~ Չորս պատճառ կա, որ կործանում է թագավորությունը, նախ՝ խելքի պակասություն և տգիտություն, երկրորդ՝ ագահություն և կաշառակերություն, երրորդ՝ անառակություն և բղջախոհություն, չորրորդ՝ կծծիություն. սա ամենից ավելի ատելի է ծառաների ու ամիկների աչքում։

~ Չորս բան նշան է անբախտության. անառակներին սիրելը, քսու մարդկանց լսելը, անգետներին մտերմանալը և չարկամներից խորհուրդ հարցնելը։

~ Չորս տեսակ մարդուց պետք է հեռու մնալ, որ իր թերին չի տեսնում և ուրիշին է բամբասում, որ ուրիշների բարուն չարով է պատասխանում, որ չի վստահում ընկերոջը և, վերջապես, ստախոս է և մատնիչ։

~ Չորս բան կա, որ ցրում է տրտմությունը և աչքերի լույսը զորացնում. կանաչ տեսնելը, ջրի մոտ նստելը, երկնքի լույսը տեսնելը և լավ բանի հանդիպելը։

~ Չորս բան կա, որ պակասեցնում է աչքի լույսը. բոբիկ ճանապարհ գնալը, թշնամի տեսնելը, շատ լալը, բարակ բաների նայելը։

~ Չորս բան գիրացնում են մարմինը. բազնիք մտնելը, ախորժելի կերակուրներ ուտելը, փափուկ շորեր հագնելը և հաճելի բաներ լսելը։

~ Չորս բան առողջացնում են հիվանդին. կանոնավոր սնվելը, անուշ բույրեր հոտոտելը, գուսանի ձայնն ու անուշ քամին։

~ Չորս բանից է լինում հանկարծամահությունը. մեծ ուրախությունից ու շատ տրտմությունից, ուժեղ բարկությունից և խիստ վախենալուց։

~ Չորս տեղ են փորձում մարդուն. պաշտոնի ու առևտրի մեջ, գինի խմելիս և ճանապարհին։

~ Չորս բանի չի կարելի հավատալ. թշնամու սիրուն, ագահ մարդու երդմանը, անհավատի դաշինքին և անառակ կնոջ սիրուն։

~ Չորս տեսակ մարդիկ չեն կարող հարստանալ. առաջինն այն է, որ խոյ է կռվեցում, երկրորդ՝ այն, որ աղավնի է պահում, երրորդը, որ խա-

www.a-pdf.com

ղաժոլ է, որ դրամով գումար է խաղում, չորրորդն այն է, որ փողոցներում առուծախ է անում։ Սրանք ամեն ինչով դժբախտ են։

~ Չորս բան կա մարդու օգտակար՝ թե հոգուն, թե մարմնին. քիչ ուտելն ու քիչ խմելը, քիչ խոսելն ու քիչ քնելը։ Քիչ ուտելն ու քիչ խմելը մարմնին օգուտ է. անձը թեթև է պահում և զգայությունները՝ հստակ ու մաքուր, մարմինը՝ առողջ։ Քիչ խոսելն ու քիչ քնելը հոգուն է օգուտ, որովհետև եթե շատ քնի՝ կկուրանա միտքը, կխափանվեն հանճարը և զգայությունները, իսկ շատ խոսելը չորացնում է ուղեղը և պատվազրկում մարդուն։ Եթե տասն բան գիտես, մեկն ասա և ինը պահիր. խոսքը գոհարի է նման. անտեղի մի խոսիր, որ չկորցնես. շտապով մի խոսիր, բարկությամբ ու լալկան դեմքով մի խոսիր, այլ, եթե ուզում ես, որ խոսքդ անցնի, մեղմորեն ու ժպտուն դեմքով խոսիր։

www.a-pdf.com

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ոսկեփորիկի» առաջին տպագրությունը եղել է երկու տասնամյակ առաջ («Ոսկեփորիկ», Նմուշներ հայ հին և միջնադարյան արձակից», կազմեցին՝ Ա. Մադոյան և Վ. Ներսիսյան, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1977)։ Սույն՝ երկրորդ հրատարակությունը զգալիորեն լրացվել ու բարեփոխվել է աշխարհաբար նոր թարգմանությունների ընդգրկմամբ։ Ծանոթագրություններում նշվում են այն աղբյուրները, որոնցից օգտվել են կազմողները։ Առաջին հրատարակության նյութերի մեծագույն մասը թարգմանել են իրենք՝ կազմողները։ Այս գեպքում իբրև աղբյուր նշվում է պարզապես հիշյալ Ա տպագրությունը հակիրճ ձևով՝ «Ոսկեփորիկ»։

Հասկանալի է, տարիների հետ թարգմանությունները ինչ-որ չափով հնանում են, և կարիք է զգացվում «նորացման»։ Կազմողները աշխատել են հնարավորին չափ քիչ կատարել խմբագրական միջամտություն, որպեսզի չկորչի յուրաքանչյուր թարգմանչի «դեմքը»։ Իսկ դա միաժամանակ նաև գարաշրջանի «դեմքն» է։

Ա

ԿՈՐՅՈՒՆ— Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտներից է, իր երկը գրել է դարաւոկզբին. հայ և հարևան ժողովուրդների գրերի գյուտի պատմության հիմնական սկզբնաղբյուրն է։ Իր գրական տեսակով այն սրբախոսություն է, բայց քանի որ Կորյունը ե գարի դասական մատենագիրներից է, «Վարքի» հատվածները ներկայացվում են առաջին բաժնում և ոչ վարքերի ու վկայաբանությունների հետ։

ԿՈՐՅՈՒՆ, Վարք Մաշտոցի, Բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մ. Աբեղյանի, Երևան, 1941։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ— Գ—Դ դարերի հայոց պատմության, հատկապես հայոց հեթանոսական հավատքի, քրիստոնեության տարածման, հայ նախարարական տների վերաբերյալ հարուստ տեղեկություններ պարունակող մեծարժեք աղբյուր է։ Գիրքը լայն տարածում է գտել միջնադարում, թարգմանվել հունարեն, արաբերեն, եթովպերեն, լատիներեն, վրացերեն, սլավոներեն և այլն։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ— Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983։

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ— Գիրքը հայտնի է նաև «Բուզանդական պատմություն» խորագրով։ Ընդգրկում է Խոսրով Կոտակի ժամանակներից (322 թ.) մինչև 387 թ. Հայաստանի բաժանումը։

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ, Պատմություն Հայոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակագ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947։

ԵՂԻՇԵ— Պատմության նյութը 451 թ. Վարդանանց հերոսամարտն է։ Եղիշեն, ինչպես վկայում է կենսագիրը, Վարդան Մամիկոնյանի զինվորն էր, ծնվել է մոտավորապես ե դարի երկրորդ տասնամյակին, մահացել 70-ական թվականներին։ Մամիկոնյան Դավիթ երեցի հորդորանքով գրված այս գիրքը գեղարվեստական բարձր արժանիքներ ունի։

ԵՂԻՇԵ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1971։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ— ե գարի պատմագրության պսակն է Քերթողահայր կամ Պատմահայր Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, որ մեկուկես հազարամյակ հայ գրպ-

www.a-pdf.com

րոցի դասագիրք է եղել։ Մովսես Խորենացին ծնվել է 6 դարի երկրորդ տասնամյակում։ Պատմությունը, որ գրել է Սահակ Բագրատունի իշխանի հորդորով, հասցնում է մինչև վերջինիս մահվան տարին՝ 482։ Խորենացին ինքը մահացել է 90-ականների սկզբին։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակագ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968։*

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ— *Ծնվել է մոտավորապես 441—443 թթ. Մեծ Հայքի Արագածոտն գավառի Փարպի գյուղում։ 490-ական թթ. սկզբին գրել է «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», իսկ քիչ անց, գարավերջին՝ Պատմությունը։*

«Ղազար Փարպեցու Հայոց պատմությունը և Վահան Մամիկոնյանին գրած թուղթը», Թարգմանեց Մ. Ք. Տեր-Պետրոսյան, Ալեքսանդրապոլ, 1895։

ՍԵԲԵՈՍ— *է դարի ամենանշանավոր գեմքն է իբրև մատենագիր։ Ծնվել է 7 դարի վերջին։ Առաջին պատմիչն է, որ արձանագրել է Մահմեդի ասպարեզ իջնելը։ Սեբեոսի երկը Բյուղանդիայի է գարի պատմության կարևորագույն աղբյուր է։*

Պատմութիւն Սեբեոսի, Աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, «Ոսկեփորիկ»։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ— *Հայոց Արևելից Կողմերի պատմության կարևորագույն սկզբնաղբյուր է, որ ժ գարի վերջերին մի այլ Մովսես՝ Դասխուրանցին համալրել է նոր նյութերով, որոնք վերաբերում են Ը—ժ գարերին, հասնում է մինչև 986 թ.։ Պատմության երրորդ գիրքը պատկանում է Դասխուրանցուն։*

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, *Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1969։*

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ— *է դարի մատենագիր, վանահայր Գլակա վանքի։ Գիրքն ընդգրկում է Դ դարից մինչև իր օրերի Տարոնի պատմությունը, հասնում մինչև Տիրան Մամիկոնյանի մահը՝ 639 թ.։ Ոմանք գրքի առաջին մասի հեղինակ են ճանաչում Ջենոբ Գլակ պատմիչին։ Հովհան Մամիկոնյան եպիսկոպոսն իր մատյանը գրել է Ներսես Դ Իշխանցի կաթողիկոսի հորդորանքով։ Առանձնապես հետաքրքրական է Պատմության լեզուն, որ մոտ է խոսակցականին։*

ՀՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, *Տարոնի պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Վարդան Վաբդանյանի, Երևան, 1989։*

ՂԵՎՈՆԴ— *Հեղինակն ապրել է Ը գարում, իր աշխատանքն ավարտել է գարավերջին. հարուստ տեղեկություններ է հաղորդում արաբական արշավանքների վերաբերյալ։*

ՂԵՎՈՆԴ, *Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982։*

ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ— *Թովման ապրել է Թ դարի երկրորդ կեսին և հաջորդ դարի սկզբին։ Պատմությունը գրել է Թ դարի 80-ական թվականներից մինչև ժ հարյուրամյակի սկիզբը, Վասպուրականի իշխան Գրիգոր-Դեբենի պատվերով։ Նրա պատմությունը շարունակել է մի այլ Արծրունի մատենագիր՝ Անանունը։*

ԹՈՎՄԱ ԱՐՏՐՈՒՆԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ, *Պատմություն Արծրունյաց տան, թարգմանությունը և ծանոթագրությունները Վրեժ Վաբդանյանի, Երևան, 1985։*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՈՒՑԻ— *ծնվել է 845—850 թթ. Այրարատի Դրասխանակերտ գաստակերտում, մահացել է 929-ին։ 899—929 թթ. եղել է Հայոց կաթողիկոս։ Պատմությունը հասցրել է մինչև 924 թ.։*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՈՒՑԻ, *Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996։*

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՈՒՑԻ— *Լաստիվերտցին իր Պատմությունն ավարտել է 1087-ից առաջ։ Գիրքն աչքի է ընկնում բարձր գեղարվեստականությամբ։*

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՈՒՑԻ, *Պատմություն, Թարգմանությունը Վ. Գևորգյանի, Երևան, 1971։*

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՑՈՒՑԻ— *ծնվել է Թ դարի երկրորդ կեսին Ուռհա (Եդեսիա) քաղաքում։ Ժամանակագրությունն ընդգրկում է 952—1137 թթ. գեպքերը։ Մատթեոս Ուռհայեցին վախճանվել է իր ծննգավայրում, 1138—1144 թթ. միջև։*

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՑՈՒՑԻ, *Ժամանակագրություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հր. Բարթիկյանի, Երևան, 1991։*

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ— *ծնվել է 1202 թ. Մեծ Հայքի «Գանձակայ» աշխարհում։ Մահացել է 1271-ին։*

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, *Հայոց պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1982։*

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ— ծնվել է Արճեշի Ագի գյուղում: «Պատմութիւն Լանկթամուրայ և յաջորդաց իւրոյ» աշխատությունը գրել է [illegible] թթ.:

Ա. ՄԱՏՈՑԵԱՆ, Խորհուրգ մեծ և սքանչելի, Երուսաղեմ, 1995:

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ— ծնվել է ԺԶ գ. վերջերին, մահացել 1670-ին: Պատմությունն սկսել է գրել 1651 թ.: Առաջին հայ պատմիչն է, որի երկը տպագրվել է իր (հեղինակի) կենդանության:

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ, Պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1988:

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ— Մխիթար Սեբաստացու աշակերտներից էր, վախճանվել է 1752-ին: «Դաւիթ բէկ կամ Ղափանւոց Պատմութիւն» աշխատությունը գրել է ազատագրական շարժումների մասնակիցների (Ստեփանոս Շահումյան, տեր Ավետիս) պատմածից: «Ոսկեփորիկ»:

Բ

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ աղանդոց— Հայ տեսական մտքի ամենանշանավոր հուշարձաններից է: Հեղինակը ծնվել է Դ դարի 80-ական թվականներին Այրարատի Ճակատք գավառի Կողբ գյուղում: Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1994:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Թուղթ Վահան Մամիկոնյանին. Ստախոս աբեղաների մեղադրությունը— տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց. Թուղթ Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1972:

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, Ճառ անօրեն գիվական թատերախաղերի մասին— աշխարհաբար թարգմ. Ա. Մագոյան, «Երևանի համալսարան», 1981, թիվ 1: Ճառի հեղինակային պատկանելության մասին տե՛ս Հ. Քենդերյան, Հովհան Մայրագոմեցի, Երևան, 1973:

«Դիզափայտ»— տե՛ս «Ոսկեփորիկ»:

«Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը»— թարգմ. Ե. Մելքոնյան. «Էջմիածին», 1982, Դ:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, Խոսք երիցս երանելի ուսուցիչ Անանիա Շիրակացու՝ իր կյանքի որպիսության մասին— Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979:

ԱՐՏԱՎԱԶԴ, Ողբ 703 թվականին Իսմայելի հարավային ազգից Հայոց աշխարհին հասած չարիքների մասին և վկայաբանությունը սուրբ Վահանի, որ որդին էր Գողթնի տեր Խոսրովի— «Ոսկեփորիկ»:

«Աստծու երանյալ այր Սարկավագի կյանքի և մահվան մասին»— Հեղինակը Հովհաննես Սարկավագ Իմաստասերի աշակերտներից է, որ ուսուցչի մահից (1129) հետո գրել է նրա կենսագրությունը: Թարգմ. Ա. Մագոյան. տե՛ս «Վարքեր և վկայաբանություններ», Երևան, 1998:

«Հայոց սուրբ Ներսես կաթողիկոսի և տիեզերալույս իմաստասերի վարքի պատմությունը՝ նրա նախնիներից սկսած»— «Վարքեր և վկայաբանություններ». թարգմ. Ա. Մագոյան:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, Խոսրով Գանձակեցի— «Ոսկեփորիկ»:

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ, Այս է պատմությունը Ֆռանկների երկրի... Տե՛ս «Արաքս», 1995, թիվ 1: Թարգմ. Ա. Մագոյան:

ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑԻ, Ուղեգրություն. տե՛ս Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Թարգմանությունը Ա. Մագոյանի, Եր., 1997:

ՕԳՈՍՏԻՆՈՍ ԲԱՋԵՆՑ, Ուղևորություն Եվրոպա: Թարգմ. Ա. Մագոյան, տե՛ս «Արաքս», 1996, թիվ 2:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՎՄԱՃԱՆ, Թովմաճանի Վերսալիա գնալը և Լյուդովիգ ԺԵ թագավորին ներկայանալը... թարգմ. Ա. Մագոյան: Բնագիրը տպագրվել է՝ «Բազմավէպ» 1941, էջ 46—53:

«Սարգիս Գրչի հիշատակարանը»— «Ոսկեփորիկ»:

«Գրիչ Հակոբի հիշատակարանը»— «Ոսկեփորիկ»:

«Գրիգոր Երևանցու հիշատակարանը»— «Ոսկեփորիկ»:

Գ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ— «Աստղերը», «Անասունների բողոքը», «Արծիվն ու լորը», Թարգմ. Վ. Ներսիսյան: Մյուսները տե՛ս «Ոսկեփորիկ»:

www.a-pdf.com

www.a-pdf.com

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ— «Առյուծը, էշը և աղվեսը», «Գայլագռավն ու աղվեսը», «Աղվեսն ու շունը», «Ավանակի մեծարումը», «Առյուծին նմանվող աղվեսն ու գայլը», «Որսորդն ու կաքավը», «Նապաստակներն ու դորտերը», «Մարդն ու գայլը», «Կաշառառու դատավորն ու բղուղով յուղը», «Ասորի երեցն ու հայ երիտասարդը», «Հարուստ խնամախոսն ու կույսը», «Ճգնավորն ու իշխանը», «Երկու ընկերն ու կարպետը» առակները թարգմանել են «Ոսկեփորիկի» կազմողները։ Երկրորդ հրատարակության մեջ մուծված «Այծերը և դայլը», «Բազմահնար աղվեսը», «Աղվեսը և դայլը», «Գայլը և բրուտի շունը», «Պարտապանը» թարգմ. Վ. Ներսիսյան։ Մնացած երեսունչորսը վերցրել ենք բակունցյան «Աղվեսադրքից» (Երևան, 1955)՝ կատարելով անհրաժեշտ փոփոխություններ։

Դ

«Փորձությանը դիմանալու մասին», «Աստծուց մարմնավոր բան չի կարելի խնդրել», «Համբերության մասին» առակները (տե՛ս «Բարի լույս», 1997, թիվ 41), «Կաղղվանցի Սարգսի պատմությունը» (տե՛ս «Դպրություն», 1991, թիվ 40), «Ասաններ» (տե՛ս «Նորք», 1991, թիվ 2) թարգմ. Ա. Մադոյանը։ Բաժնի մնացած նյութերը արտատպվում են «Ոսկեփորիկի» առաջին հրատարակությունից. թարգմանությունը կազմողներինն է։

Ե

Խմաստախոսությունները՝ «Ոսկեփորիկից»։

www.a-pdf.com

ԲԱՌԱՑԱՆԿ

Ա

Ազատ — *ազնվական, բարձր գասակարգի ցեղից*
Աթաբեկ — *թագավորի (բեկի) հայր*
Ակումիտ — *ճգնող*
Աղաճդեր — *մրգեղեն, քաղցրեղեն, գեսերտ*
Աղխ — *տոհմի մեջ ապրող արյունակից և ոչ արյունակից մարդկանց ամբողջությունը*
Աղոթակոչ — *աղոթքի կանչող, հրավիրող*
Ամիճ — *որսի փափուկ մսից, ծուծից պատրաստած խորտիկ*
Ամենաբույս — *տեղ, ուր ամեն ինչ աճում է*
Ամենաբուխ — *ամեն ինչ, ամեն բարիք ունեցող*
Ամենալիառատ — *ամեն ինչով հարուստ*
Ամիրա — *արաբական խալիֆայության պաշտոնյա, նահանգի կառավարիչ*
Այրուձի — *հեծելազոր*
Անագորույն — *անողորմ, դաժան*
Անապատ — *մենաստան, վանական համալիր*
Անխալամ գես — *սաղավարտին կամ վահանին ամրացված մաղերը*
Անծին — *չծնող, ծնելու անընդունակ*
Անհավատ — *ոչ քրիստոնյա, մահմեդական*
Անուր — *շղթա*
Անսալ — *լսել, հնազանդել*
Ապաշխարել — *մեղքերը քավել*
Ապրեցնել — *ազատել, փրկել*
Ապրեցուցիչ — *փրկարար*
Ասր — *արաբական ցեղ*
Ասպարակիր — *վահանակիր*
Ատիլ — *ծանրության չափ (արաբական)*
Ատուշան — *հեթանոսական կրակարան*
Արիներ և անարիներ — *իրանցիներ և ոչ իրանցիներ*
Աֆար — *վայրի թռչուն*

Բ

Բաժ — *վարձ, մաս, բաժին*
Բառնալ — *այստեղ՝ վերացնել*
Բարսմունք — *շյուղերի փունջ, որ մոգերը բռնում էին աղոթելիս*
Բերդավագ — *բերդապահների, ամրոցի պահապանների հրամանատար, այստեղ՝ բանտապետ*
Բուրկեն — *անուշահոտություն, բուրումնավետ ծխանելիք*

Գ

Գավիթ — *պալատի, տաճարի առջև պարսպապատ բակ կամ նախասրահ*
Գոհաբանություն — *գոհության խոսք, աղոթք առ Աստված*

Դ

Դաճեկան — *ոսկե կամ արծաթե գրամ*
Դաշխուրան — *կոնք, տաշտակ*
Դառնիճ — *գառն խոտ, թունավոր հաղար, գառն պտուղ*
Դելմիկճեր — *ձարպաճաճակաձի բնիկներըը, վռշվել են նաև գալլանգցիներ*
Դեղթափ — *հակաթույն, որ կանխում է թույնի ազգեցությունը*
Դեկան — *մետաղագրամ, գահեկան*
Դժնիկ — *գեղնորակ, մանր ծաղիկներով փշի թուփ*
Դռախտ — *այգի*
Դրանիկ գունդ — *պալատական ղորագունդ*
Դուռ — *պալատ*

Ե

Ելեխտոր — *Հր. Բարթիկյանը համարում է հունարեն ելեխտոս կամ ելեխմոն (ողորմած) բառի գրչական աղավաղումը*
Եղբայր — *(կրոն.) հոգևոր միաբանության միևնույն աստիճանի անդամներ*
Եկեղչարի — *քրքական ղորաուսակ, աչքի է ընկել գաժանությամբ*
Երեսասող — *գետնասող, այստեղ՝ խոնարհաբար*

Ջ

Ջավթ անել — *դսպել*
Ջեխանալ — *շվայտանալ, լպիրշանալ*

www.a-pdf.com

Է

Էսայի և յիսակուլի— *Հիսուսին հավատացող*
Էֆենդի— *պարոն, պատվատիտղոս*

Ը

Ընդոծին— *տվյալ տոհմում ծնված, բայց ոչ տերերի, այլ ճորտի, աղախնի զավակ*

Թ

Թանձր— *հավալուսն, սպիտակ մեծ թռչուն*
Թրեզորիե— *գանձապետ (ֆրանս.)*
Թոնի— *տգետ, բռի, գռեհիկ*
Թուման— *պարսկական դրամական միավո*

Լ

Լիտր— *ծանրության չափի միավոր. մոտավորապես 12 ֆունտ, լիդր*
Լոդիկ— *վերարկու, թիկնոց*

Խ

Խալատ— *սխալ, արատ*
Խալիֆա— *արաբական թագավոր, արքա, պարսիկներն այդպես են կոչել նաև հայոց կաթողիկոսներին*
Խամ— *անլվա, չլվացած գործվածք*
Խաղան, խաքան— *արքայից արքա, կայսր*
Խըզըլ պաշ— *կոչվել են նաև* **կարմիր գլուխ**, *պարսկական ցեղ*
Խթում— *նավակատիք, նաև՝ ծոմը ուտելով խախտելը*
Խոհակերանոց— *ճաշարան*
Խոջա— *մեծատուն, մեծահարուստ*
Խոնքար— *տեր, տիրակալ, թագավոր*
Խոտանարակ— *բուսակեր*
Խորան— *կամարաձև դահլիճ, սրահ*
Խորս և պիրեան— *ճաշատեսակներ*
Խտրոց— *տարբերություն, միջանկյալ արգելք, խտրություն, զանազանություն*

Ծ

Ծովավար— *ծովային, նավազ, նավաստի*

Կ

Կառապան— *կառավարիչ, կուսակալ, իշխան*
Կարգազուրկ լինել— *կարգալուծվել, հոգևոր աստիճանից, կոչումից, պաշտոնից զրկվել*
Կարգավոր— *հոգևորական*
Կարդինալ— *կաթոլիկ եկեղեցու բարձրագույն պաշտոնյա (պապից հետո), ծիրանավոր*
Կեմ— *խոտից պատրաստած պարան*
Կղերիկոս— *կղերական, հոգևորական*
Կյունիկ— *(հուն.) կրկես, ուր գազանների հետ մենամարտում են*
Կրծապան— *ըստ Ստ. Մալխասյանցի՝ պարըսպի ճակատամարտը պաշտպանող զորախումբ*

Հ

Համաբարո— *բարոյապես նման, բարոյակից*
Համամայր— *նույն մորից ծնված*
Հացկատակ— *ծրիակեր, պնակալեզ*
Հեսկ— *խոտից կամ փոկերից պատրաստած փաթաթան*
Հետնաքող— *ծնողների մահից հետո մնացած զավակները*
Հրամենք— *նախընթրիք*
Հողդողդ— *երերուն, դողդոջ*
Հոռոմ— *բյուզանդացի, քաղկեդոնական*
Հոռոմոց երկիր — *Հռոմեական արևելյան կայսրություն*
Հունապի— *ունաբի, զսպենի, դժնկի թուփ*

Ղ

Ղանություն— *իշխանություն*
Ղասում գյունի— *թուրքերի զատիկը, որ տոնվում էր հոկտեմբերի վերջին*
Ղատի— *մահմեդական դատավոր*
Ղուռուշ— *թրքական դրամանիշ*

Մ

Մանիլու գլխարկ— *օսմանցու գլխարկ*
Մանուկ— *երիտասարդ, պատանի, կտրիճ*
Մառյան գունդ— *ընտիր զինվորներից կազմըված հեծելազունդ պարսից բանակում*
Մեկնել— *բացատրել, պարզաբանել*
Մելիք— *իշխան, տեր, թագավոր*
Մեջիթ— *մզկիթ, մահմեդականների ժողովատեղի*
Միայնակյաց— *ճգնավոր*
Մյուսյու— *պարոն (ֆրանս.)*
Մնև— *ընդեղենի տեսակ*
Մուղրի— *աղոթակոչ, գրակարդաց, մահմեդական հոգևորական*

Ն

Նալ-դռան— *պայտ մաշող*
Նայիպ— *տեղակալ, փոխարքա*
Նորֆսակ— *հանկարծակի հարստացած, նորահարուստ, բախտագյուտ*
Նրան— *սրի տեսակ*

Շ

Շաղապատված— *գրկախառն*
Շեխ, շեյխ— *մահմեդական կրոնապետ, համայնքի առաջնորդ*

www.a-pdf.com

Ո

Որթակոսոր— *որթը կտրած խաղող*
Ոտումել— *Արևելահռոմեական կայսրություն*

Պ

Պածիճակ— *պեչենեգ, ժողովուրդ, որ հեռացել է պատմության թատերաբեմից 11-րդ դարի վերջին*
Պասեք— *Զատիկ*
Պատոնատեր— *մեծավոր, եպիսկոպոս, որ վերահսկում էր վանքի տնտեսական գործունեությունը ուշ միջնադարում*
Պատույկ— *ոլորակ, առոգանության նշան*
Պերաթ— *մուրհակ, պարտավորագիր, պայմանագիր*
Պիտակ— *սոսկ, միայն անվամբ*
Պրինց— *արքայազն*

Ջ

Ջհուա— *հրեա*
Ջրմի— *ժլատ, գծուծ*

Ս

Սակր— *տապաբ, կացնաձև զենք*
Սալամբ— *գահուճ, անտառահավերի ցեղից*
Սաղմոս— *աստվածաշնչյան օրհներգ*
Սեկաճյուս— *կաշվեհյուս*
Սերեկել— *ամանի բերանը կաշվով (սերեկով) փակել, կապել*
Սիզոբա— *վանկ, հնչյուն, տառ*

Վ

Վայֆաբովք— *անփառունակ, թշվառ*
Վաղվաղակի— *շտապ, արագորեն*
Վարշամակ— *գլխաշոր, քող, ծածկոց, թաշկինակ*

Տ

Տիպա— *դիպակ, մետաքսե գործվածք՝ ոսկեկար նախշերով*

Փ

Փաթաղիկես— *ծուռ, մոլոր, խանգարված*
Փինի— *փիճուկ, թուփ*
Փոր— *թռչուն*

Ք

Քաբուճին— *վեղարակիրների կաթոլիկ միաբանության անդամ*
Քաթաֆոմբա— *ստորգետնյա՝ բնական կամ արհեստական շինություններ, անձավներ, որոնք առաջին քրիստոնյաներին ծառայել են ապաստարան, պաշտոներգության վայր, նաև՝ թաղման*
Քավդյա— *բաբելական կրոնի քուրմ, աստղերով գուշակություն անող*
Քարտես— *թուղթ*
Քեշ— *կրոն, աղանդ*
Քերծե— *որսաշուն*
Քրձազգյաց— *քուրձ հագնող, ճգնակենցաղ*
Քուշաճներ— *հոնական ցեղեր, որ ապրում էին Պարսկաստանի հյուսիսարևելյան սահմաններում*

Ֆ

Ֆլորին— *արծաթե գրամ*
Ֆրանկ— *միջնադարյան Հայաստանում այսպես էին անվանում կաթոլիկ եվրոպացիներին, նաև՝ գրամական միավոր*

www.a-pdf.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

Ա

Կորյուն, *Վարք Մաշտոցի** 19
Ագաթանգեղոս, *Պատմություն Հայոց** 24
Փավստոս Բուզանդ, *Պատմություն Հայոց** 36
Եղիշե, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին** 47
Մովսես Խորենացի, *Պատմություն Հայոց** 60
Ղազար Փարպեցի, *Հայոց պատմություն** 68
Սեբեոս, *Պատմություն** 73
Մովսես Կաղանկատվացի, *Պատմություն Աղվանից աշխարհի** 74
Հովհան Մամիկոնյան, *Տարոնի պատմություն** 84
Ղևոնդ, *Պատմություն** 95
Թովմա Արծրունի, *Արծրունյաց տան պատմություն** 100
Հովհաննես Դրասխանակերտցի, *Պատմություն Հայոց** 112
Անանուն Արծրունի, *Արծրունյաց տան պատմություն** 117
Արիստակես Լաստիվերտցի, *Պատմություն** 123
Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն** 128
Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց** 136
Թովմա Մեծոփեցի, *Լենկթեմուրի և նրա հաջորդների պատմությունը** 146
Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմությանց** 147
Ղուկաս Սեբաստացի, *Դավիթ Բեկի պատմություն** 163

Բ

Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց** 169
Ղազար Փարպեցի, *Թուղթ Վահան Մամիկոնյանին. Ստախոս աբեղաների մեղադրությունը** 176
Հովհան Մաճղակունի, *Ճառ անօրեն դիվական թատերախաղերի մասին* 184
Դիղափայտ 188
Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը 190
Անանիա Շիրակացի, *Խոսք երիցս երանելի ուսուցիչ Անանիա Շիրակացու՝ իր կյանքի որ-պիսության մասին* 201
Առաքելոց, *Ողբ... և վկայաբանությունը սուրբ Վահանի, որ որդին էր Գողթնի տեր Խոսրովի* 204
Աստծու երանյալ այր Սարկավագի կյանքի և մահվան մասին 214

---

* *Հատվածներ*

Հայոց սուրբ Ներսես կաթողիկոսի և տիեզերալույս իմաստասերի վարքի պատմությունը՝ նրա նախնիներից սկսած 219
Մխիթար Գոշ, Խոսրով Գանձակեցի 238
Մարտիրոս Երզնկացի, Այս է պատմությունը Ֆռանկների երկրի, որ տեսել է Երզնկացի Մարտիրոս եպիսկոպոսը և գրել քաղաքների մասին 243
Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն 249
Օգոստինոս Բաջենց, Ուղևորություն Եվրոպա 259
Հովհաննես Թովմաճան, Թովմաճանի Վերսալիա գնալը և Լյուդվիգ ԺԵ թագավորին ներկայանալը 271
Սարգիս Գրիչի Հիշատակարանը 278
Գրիչ Հակոբի Հիշատակարանը 279
Գրիգոր Երևանցու Հիշատակարանից 281

Գ

Մխիթար Գոշ, Առակներ 282
Վարդան Այգեկցի, Առակներ 292

Դ

Բարի գործը 314
Էշը և արոր թռչունը 314
Աղվեսը և սագերը 314
Բազեն և ընտանի հավը 315
Շինականի որդին՝ թագավոր 315
Արծաթասերի աղոթքը 315
Իշատերը և գայլը 315
Հողագործն ու արագիլը 315
Մեռելն ու այգեգործը 316
Աղքատն ու արծիվը 316
Փորձությանը դիմանալու մասին 316
Աստծուց մարմնավոր բան չի կարելի խնդրել 316
Համբերության մասին 317
Հրեշտակն ու աղքատը 317
«Ճշմարտախոս» աղքատը 317
Աղքատի աղոթքը 318
Արդար վաստակը 318
«Բժիշկ» գորտը 318
Հագուստի պատիվ 319
Թագավորի նախանձոտ իշխանները 319
Գինի 320
Երկու ընկեր 320
Երեք ճշմարիտ խոսք 321
Խաբեբա վաճառականը 321
Հռոմի պապը՝ կին 322
Կնոջ խորամանկությունը 323
Բարի մարդն ու նրա էշը 324
Կողոպտված կույրը 324
Թագավորն ու երիտասարդ կալանավորը 325
Թագավորն ու ծերունին 325

www.a-pdf.com

www.a-pdf.com

Թագավորն ու նրա ուսուցիչը 325
Իմաստասերն ու դինին 326
Գինու վնասները 326
Դժվարությամբ վանք վերադարձող կրոնավորը 327
Աբեղան և թուլնը 327
Քաղցած վարդապետի տարիքը 327
Հրեան ու քրիստոնյան 327
Ջղջացած մեղավորը 328
Գող կրոնավորը 328
Մեծախոս ճգնավորը 329
Մի առակ համբերության մասին 330
Ալեքսանդրը և կարասում նստած իմաստունը 331
Ալեքսանդրը և մերկ իմաստասերները 331
Ալեքսանդրը և հնդիկ աղեղնավորը 332
Բամբասկոտ կինը 332
Տգեղ կինը 332
Կամակոր կինը 333
Ամուսնության պատրաստվող մարդը 333
Ալեքսանդրը, տասներկու կանայք և Արիստոտելը 333
Բանաստեղծ Հոմերոսը և ձկնորսները 333
Հայը սուտ չի խոսի 334
Շահ-Աբասը և հայերը 334
Շահ-Աբասն ու հարբած հայը 335
Մոր աննծքը 335
Որսորդը և հայր Անտոնը 336
Կինն ու երիտասարդը 336
Անանուն Զրուցագրի պատմությունից 337
Կաղզվանցի Սարգսի պատմությունը 342
Թե ինչպես մի սատանա խաբեց կրոնավորին 344
Երեք եղբայրները 346
Սուտ և ճշմարիտ բարեկամություն 348
Պատանին ու անարգար դատավորը 350
Բարին ու չարը 354
Իմաստուն խրատը 355
Բարի դիպվածը ամենից լավ է 356
Երեք խորհուրդ 358
Բարեգործության պտուղը 359
Արդար դատաստան 360
Անհնազանդ և ինքնահավան ծառան 361
Հպարտ թագավորը 362
Թագավորի զրպարտիչ գաստեր համրանալը 363
Վաճառականը և թանկագին ակը 363
Ուխտազանց կինը 364
Սատանան և յոթ դուստրերը 365
Խոհեմ կինը 365
Հավատարիմ կինը և չար պառավը 366
Մաճկալն ու օձը 367
Երկու արդար մարդիկ 367

www.a-pdf.com

Ասանեթ 368
Աղջկա և մանկան պատմությունը 382
Ծիծաղական պատմություններ 394

Ե

Բժիշկների մասին 397
Խոսքի մասին 397
Կանանց մասին 397
Խելքի և իմաստության մասին 397
Իշխանությունների մասին 398
Խրատի և իմաստության շուրջը 398
Օրենքների և մեծատունների մասին 398
Ամեն ինչի մասին 399
Իմաստասերների խոսքերը՝ խրատ հասարակությանը 400
Օգտավետ խրատ մարդկանց, որ ասել է իմաստուն Արիստոտելը 401
Հիպոկրատի խորհուրդը 401
Եզնիկ Կողբացու ասույթներից 401
Նուշիրվանի խրատներից 401
Խրատներ 402

Ծանոթագրություններ 404

Բառացանկ 408

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Հայ հին և միջնադարյան արձակի ժողովածու

www.a-pdf.com

СБОРНИК
древней и средневековой армянской прозы

Խմբագիր՝
Ե. Մ. Պետրոսյան
Նկարիչ և գեղ. խմբագիր՝
Գ. Վ. Մարիկյան
Տեխ. խմբագիր՝
Է. Հ. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝
Ս. Մ. Բուլաթյան

Հանձնված է շարվածքի՝ 13. 01. 98։ Ստորագրված է տպագրության՝ 24. 06. 98։ Չափսը՝ 70×108 1/16։ Թուղթ՝ ապագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 36,4 պայմ. ապ. մամ., 29,5 հրատ. մամ.։ Պատվեր՝ 69։ Գինը՝ պայմանագրային։
«Նաիրի» հրատարակչության, Երևան-9, Տերյան, 91։
Издательство «Наири», Ереван-9, ул. Терьяна. 91.
«Նաիրի» հրատարակչության տպագրատուն, Երևան-9, Տերյան, 89։
Типография издательства «Наири». Ереван-9, ул. Терьяна. 89.

www.a-pdf.com